3147

28
Ц-52

1908

B 2001

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Ամեն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք։
Ա. Թես. Ե. 21։

Ուեսաբանն է միմիայն բարի ամուրը։

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԾ

ՀԱՅՐ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑ

ՎԱՌՆԱ

Գ. Գրիգոր Նիկոլոյի

1910

28
Ч-49

28
Ա-52

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԾԱԳՈՒՄ

ԱՄԵՆ ԲԱՆ ՓՈՐՁԵՑԷՔ, ԲԱՐԻՆ ԸՆԴՈՒՆԵՑԷՔ
(Ա. Թես. Ե. 21)

4035

ՎԱՌՆԱ
1909



11239

3713
41

Բ[illegible]երի վրայ ԹԵԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ [illegible]ԳՈՒՄԸ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ

Իբր տասնեւութ դար առաջ Հռոմայեցի կայսրն
ը իրենց իշխանութիւնը տարածեցին բոլոր քաղա
քակրթեալ աշխարհի վրայ, այնպէս որ նրանց տէ
րութիւնը հասաւ իր զօրութեան վերջին ծայրը։ Այ
ժամանակ, որի վրայ խօսում ենք, մտաւորակա
զարգացման կողմանէ նշանաւոր էր։ Կիկերոնը ա
սումէ, թէ ուրիշ որեւիցէ ժամանակում այնչա
երեւելի անձինք երեւեցած չեն, որչափ երեւեցան է
դարում։ Արդարեւ այն ժամանակը Հռոմայակա
մատենագրութեան ոսկեղէն դարն էր, բայց նաեւ բ
րուց ազականութեան կողմանէ նշանաւոր դար էր
Նոյն իսկ այն դարու մատենագիրները յայտնի նկա
բագրում են իրենց ժամանակի բարուց ազականու
թիւնը։ Հռչնաղը ասում է, թէ այն դարու մարդկան
մոլութիւններն եւ ոճիրներն այնչափ շատ էին, թ
ազագայ սերունդները չէին կարող նոր մոլութիւն
նոր ոճիր աւելացնել նրանց վրայ։ Արդի պատմիչնե
ը հաստատումեն սա։ Ըէնան ասումէ. «Մոլեգնո
թիւնը եւ անզթութիւնը տիրումէին, եւ Հռոմը ճը
մարիտ դժոխք էին արել։»

Հռոմայական պետութ՝ [illegible] առաց , մտաւորական առաջադիմութեան և բարոյական ապականութեան ին դարում պետութեան մի աննշան գիւղում մի մանուկ ծնուեց , որ Յիսուս կոչուեցաւ : Այս մանկան այրը նրա ծննդեան պարագաների նկատմամբ զարմանալի բաներ էր պատմում , բայց մարդիկ առհասարակ նրան հիւսնի որդի էին համարում :

Այս մանուկն իր երիտասարդութիւնում հիւսնուեամբ էր պարապվում , եւ , ինչպէս վկայումեն նրա ոացիք , անուս էր (Մարկ. Զ. 3, Յովհ . Է . 15) : Երբ) տարեկան եղաւ , սկսեց այցելութիւն անել իր այրենեաց գիւղերը , եւ ժողովուրդը կրթել : Զարմանալի բաներ էր ասում իր անձի եւ իր գործի վրայ : Ոմանք հաճութեամբ մոտիկ էին անում նրա օսքը , ուրիշները արհամարհանքով էին վարվում ա հետ . ոմանք էլ մահու չափ հալածում էին նրան: ոա քարոզութեան ժամանակն այնչափ կարճ եղաւ , ; ըստ մարդկային տեսութեան կարելի չէր մեծ գործ ատարել այնչափ կարճ միջոցի մէջ , վասն զի երեք արի եւ մի քանի ամիս միայն ժամանակ ունեցաւ ողովուրդը կրթելու , եւ այնուհետեւ խաչի վրայ ըանուեցաւ: Արդ , ի՞նչ կարողացաւ անել այն մարդն , ի ծագումն այնպէս խոնարհ էր , որի արտաքին պաոգաներն այսպէս աննպաստ էին եւ որի կեանքն ինչափ կարճ եղաւ : Այս խոնարհ աննշան մարդն ի՞նչ ղեցութիւն արաւ այն մեծ տէրութեան վրայ , որ , փառքովը լցրեց բոլոր աշխարհ . եւ որին դէմ դըելու կարող զօրութիւն չկար երկրի վրայ : Նաղովցի Յիսուսի կեանքն եւ քարոզութիւններն ի՞նչ պաւորութիւն արին այն ընդարձակ պետութեան ա-

պականուած բնակիչների վրայ : Անաչառ պատմութիւնը թող պատասխան տայ այս հարցերին :

Հռոմայեցի կայսրը Յուլիանոս , որ իր թագաւորութեան բոլոր ժամանակն ի զուր ջանաց կործանել Քրիստոնէական հաւատքը , մեռնելիս աչքերը դէպի երկինք բարձրացնելով ասաց . «Յաղթեցիր , ո՛վ Գալիլեացի :» Անուանի Գաղղիացի պատմագիրը Գիզոն ցոյց է տալիս , թէ Քրիստոսի Աւետարանը «տիրեց Յունաստանի , Հռոմի եւ բարբարոս Եւրոպայի վրայ : Քրիստոնէութիւնը , իբրեւ թռմբ , կանգնեցրեց մոլութեանց սոսկալի հեղեղը , որ ողողումէր քաղաքակրթեալ աշխարհը : Հանեց աշխարհս բարուց այն ապականութիւնից , որը յիշել իսկ ամօթ է : Երբ Հռոմայական պետութիւնն իւր ապականութեամբ տկարացած ընկաւ հիւսիսային երկիրների բարբարոս ցեղերի արշաւանաց եւ յարձակմանց ներքեւ , Քրիստոնէութիւնը միայն կարող եղաւ ընկերութեան չէնքը պահել անկործան եւ նախնի քաղաքակրթութեան պտուղները պահպանել : Շելլինգ անուն Գերմանացի փիլիսոփային պէս Քրիստոսի աստուածութիւնն ուրացողներն անգամ ընդունում են , թէ անցեալ պատմութեան մէջ նշանաւորագոյն եւ աշխարհիս առաւելագոյն աղդեցութիւն անող դէպքը Քրիստոսի աշխարհ գալն է :

Յիսուսի ապրելից եւ մեռնելից յետոյ տասնեւութ դար անցաւ : Այն ժամանակից մինչեւ այժմս ի՛նչ զարմանալի բաներ պատահեցան : Այն ժամանակից ի՛վեր աշխարհը մտաւորական , ընկերական եւ ազգային ի՛նչ մեծ յեղափոխութիւններ կրեց : Յոյն փիլիսոփաների հռչակաւոր դպրոցները չատուց փակուե-

ցան։ Հռոմայեցոց տէրութեան փառքը չատուց հան-
գուեց, բայց Քրիստոնէութիւնը տեւեց այս տասն-
ամեակներ դարերում։ Այնչափ զարմանալի փոփոխու-
թիւն թիւններում Քրիստոնէութիւնը միայն մնաց ան-
ուկխախտ։ Հին տէրութիւնների եւ կրօնքների աւե-
այրակներում Քրիստոնէութիւնը միայն անկործան մնաց։
անՔրիստոնէութեան ծագման ժամանակ աշխարհի տիրող
ակ մեծամեծ տէրութիւններն անցան գնացին եւ Քրիս-
ոնէութիւնը միայն, իբրեւ կենդանի զօրութիւն,
եւարունակում է իր ազդեցութիւնը ազգերի եւ ան-
հատների վրայ։ Քրիստոնէութիւնը տեսաւ բուսնելը
) ու աճելն այն մեծամեծ թագաւորութիւնների, որ
այրիայ գրեթէ բոլոր աշխարհը կառավարում են։ Քը-
ոնիստոսի կրօնքն այս տէրութիւնների սովորութիւն-
այ ների, օրէնքների եւ սահմանադրութիւնների վրայ
ոչպէս ազդեցութիւն արած է, որ արդի նշանաւոր
ա պատմիչներից չատերը, ինչպէս Գիզոյ եւ Ֆրաուդ
ահոստավանում են թէ արդի քաղաքակրթութիւնը
Քրիստոնէութեան արդիւնք է։ Քրիստոնէութիւնը
ոդեռ այսօր կայ։ Քրիստոնէութիւնը դեռ այսօր ան-
արկարտելի զօրութիւն է միլիոնաւոր անձանց սրտերի
ղու վարքի մէջ։ Քրիստոնէութիւնը մինչեւ այսօր աղ-
անիւր է, որից առնում է սրտի քաղաքակրթութիւնը
ի՛ր բարձր գաղափարներն ու իր մարդասիրական վը-
ոգեմ սկզբունքները։ Քրիստոնէութիւնը մինչեւ այսօր
նպաղբիւր է, այստեղից առնում են միլիոնաւոր մար-
ազիկ հոգեւոր զօրութիւն կենաց պատերազմի մէջ ան-
ինկճելի լինելու, մխիթարութիւն՝ վշտերի մէջ եւ
լոյս՝ մահուան ժամին։

Երբ այս բաները նկատումենք, հարկ է լինում

մեզ հարցնել, թէ ո՞վ էր Նազովրեցի Յիսուսն։ Ոչ
ոք կարողէ ուրանալ, թէ Յիսուս առանց հարս-
տութեան, առանց պատուի եւ աստիճանի, առանց
զօր բարեկամների եւ դաշնակիցների յեղափոխեց
աշխարհը իր թագաւորութիւնը հաստատելով միլիո-
նաւոր մարդկանց սրտերի մէջ եւ, թէ չատ դա-
ներից հետէ, ամենից աւելի լուսաւորուած եւ քա-
աքակրթուած ազգեր եւ ժողովուրդներ նրան հետե-
ող եղան։ . . . .

Ուրեմն, ո՞վ էր Յիսուս Քրիստոս։ Եթէ ընդու-
նենք, թէ Յիսուս արդարեւ որդի Աստուծոյ էր,
ինչպէս ինքն ասաց, անցեալի եւ ներկայի մէջ նրա
զարմանալի ազդեցութիւնը տարօրինակ չի թուիլ
մեզ։ Իսկ եթէ, ընդհակառակն, ուրանանք ինչոր
Յիսուս ասաց իրեն համար, անկարելի է բացատրել
նրա ազդեցութիւնը ազգերի եւ անհատների վրայ,
եւ, անցեալ տասնեւութ դարերի քաղաքակրթեալ աշ-
խարհի պատմութիւնը կլինի մի առեղծուած, որը
չ ոք կարող է լուծել։

Արդ, Քրիստոս, ինչպէս ինքն ասում էր, արդարեւ որդի Աստուծո՞յ էր թէ ոչ։ Քրիստոնէութիւնը, որը Յիսուս հիմնեց, Աստուծո՞յ գործ է թէ մարդու։

Այս խնդիրը շատ կարեւոր է։ Առողջ մտքի տէր մարդ չէ կարող ուրանալ, թէ այս խնդիրն իբրեւ սուկ պատմական խնդիր զգուշութեամբ քննուելու արժանի է, վասն զի Քրիստոնէութիւնը դարերից ի վեր պատմութեան մէջ մեծագոյն զօրութիւններից միանգամ է եղած։ Քրիստոնէութիւնը, ինչպէս ասացինք, մեծ ազդեցութիւն արած է ոչ միայն անհատների

բարուց վրայ , այլ եւ ազգերի աճման եւ բարգաւաճման վրայ ։

Հիւմ , Անգղիացի պատմիչը , թէպէտ անհաւատ էր , ստիպուեցաւ խոստովանել , թէ Անգղիա իր ազատ հաստատութիւնների եւ օրէնքների համար պարտական է այն մարդկանց , որոնց բարքը ուղղուած էր Քրիստոսի Աւետարանով ։ Մակօլէ , ուրիշ համբաւաւոր Անգղիացի պատմիչ , միջին դարերի վրայ խօսելով , եկեղեցին նմանացնում է մի սապանի , որ խաւարի եւ մրրկալից ժամանակ պահեց այն սերմերը , որոնցից բուսաւ մի աւելի մեծ եւ աւելի վեհեմ քաղաքակրթութիւն ։

Բանքրոֆտ , ամենից երեւելի Ամերիկացի պատմիչը , բացայայտ ցուցնում է թէ Ամերիկա իր ազգային հաստատութիւնների եւ օրէնքների համար պարտական է Քրիստոսի Աւետարանին ։ Նոյն բանը կարելի է ասել նաեւ ուրիշ լուսաւորեալ եւ քաղաքակրթեալ ազգերի համար ։

Ուստի , Քրիստոնէութեան ծագումը մեծապէս կարեւոր խնդիր է նրանց համար , որ ուզում են քննել թէ ինչ պատճառների ազդեցութեամբ յառաջ եկաւ արդի քաղաքակրթութիւնը ։ Ամեն խոհական պատմիչ հարկաւ պիտի քննէ Քրիստոնէութեան ծագումը ։

Բայց Քրիստոնէութեան ծագումը լոկ պատմական խնդիր չէ , այլ կարեւոր խնդիր է մանաւանդ այս դարուս մէջ , վասն զի Քրիստոնէութիւնը ոչ միայն անցեալ դարերի պատմութեան մէջ յիշելու արժանի դէպք է , այլ այժմ էլ կայ , իր ազդեցութիւնովը արժանի է վստահութեան եւ ընդունելութեան այս դարուս մարդկանց ։

Քրիստոնէութեան ծագման խնդիրը նտեւ ոչ միայն ընդհանուր ուշադրութեան եւ հետազօտութեան արժանի է , այլ եւ մանաւանդ իւրաքանչիւր անձի վերաբերեալ խնդիր է , որովհետեւ Քրիստոսի Աւետարանը , որ հիմն է Քրիստոնէական հաւատոյ , խօսում է ոչ այնչափ ազգերին , որչափ իւրաքանչիւր մարդու ։ Քրիստոնէականդլխաւոր նպատակն է ազատել իւրաքանչիւր մարդ մեղքից ապականութենից եւ արդար Աստուծոյ դատապարտութենից ։ Քրիստոնէութիւնը յայտնում է , թէ որտեղից է մարդու ծագումը , իւրաքանչիւր անհատ ինչ պարտականութիւններ ունի եւ ինչ բանի համար սահմանուած է ։ Քարոզում է մարդուս հոգոյ անմահութիւնը , հաստատում է թէ որեւեցէ մարդու հանդերձեալ բաժինը պիտի լինի կամ յաւիտենական երանութիւն կամ յաւիտենական թշուառութիւն ։ Իբր Աստուծոյ ձայն խօսում է մեզ հետ , թէ ինչ անել պարտ ենք յաւիտենական թլսաւորութենից ազատուելու եւ անվախճան երանութիւնը ժառանգելու համար ։ Ցայտնում է աշխարհի Քրիստոս իբրեւ միմիայն եւ ամենաբաւական Փրկիչ մեղաւորների ։ Հաստատում է թէ այս Փրկիչը բոլորովին կարող է ազատեցնել բոլոր նրանց , որ ընդունումեն նրան հաւատով , եւ թէ չկայ մի ուրիշը որի ձեռքով մեղքից փրկուիլ հնար է ։

Ուստի , յայտնի է որ եթէ Քրիստոս արդարեւ որդի Աստուծոյ եւ յաստուածուստ ուղարկուած Փրկիչ է , ինչպէս ինքն ասում էր , ամեն մարդու համար մեծապէս կարեւոր է գիտենալ այս բանը , եթէ Քրիստոնէութիւնը ստուգիւ Աստուծանից է , այն ժամանակ մեզ համար վտանգաւոր է երկբայել նրա Աս-

տուածանից ծագած լինելու վրայ եւ յաւիտենական մահ է մերժել նրա աստուածային վարդապետութիւնները։

Արդ, Քրիստոնութիւնն Աստուածանի՞ց է։

Ահա այս է ամենից կարեւոր խնդիրը, որ պարտ ենք զգուշութեամբ քննել։

Երանի թէ ամենքս էլ կարող լինէինք Աստուծոյ օգնութեամբն ուղիղ լուծել այս խնդիրը։

Գլուխ Բ.

Այս խնդիրն ինչպէս պէտք է լուծուի։

Աշխարհիս վրայ կան շատ կրօնքներ, որ պնդում են թէ Աստուածանից են։ Միթէ կարելի՞է սրանց բոլորն էլ իրրեւ ճշմարիտ ընդունել։ Անկարելի է, որովհետեւ այս այլ եւ այլ կրօնների հիմնական վարդապետութիւնները բոլորովին հակառակ են իրար։ Սրանց մէջ կան տարբերութիւններ, որ ոչ թէ երկրորդա՛ն այլ հիմնական են, ուստի եւ անհնար է որ իրանցից այսպէս տարբեր վարդապետութիւններ յառաջ եկած լինին միեւնոյն աղբիւրից, այլ՝ մի՛միայն ճշմարիտ Աստուածանից։ Եթէ այս կրօնքերից մէկն Աստուածանից է, միւսները չեն կարող Աստուածանից յառաջ եկած լինել։ Եթէ բուդդայականութիւնը ճշմարիտ է, ապա Քրիստոնէութիւնը սուտ է. իսկ եթէ Քրիստոնէութիւնը ճշմարիտ է, ապա բուդդայականութիւնն եւ բրահմինականութիւնն եւ ուրիշ կրօնները սուտ են։

Պէտք չէ կարծել թէ, եթէ շատ կրօնքերից միայն մինն է ճշմարիտ, միւս կրօնների մէջ ինչ-եւ իցէ ուղիղ վարդապետութիւն եւ օգտակար բարոյական սկզբունք չի գտնուիլ. ընդհակառակն, ընդունում ենք թէ բոլոր կրօնքների մէջ կան թէ քիչ թէ շատ բարոյական եւ օգտակար վարդապետութիւններ եւ սկզբունք։ Բայց եւ այնպէս այլ եւ այլ կրօնների մէջ-ասեղ կայ այնպիսի մեծ եւ հիմնական տարբերութիւն եւ հակասութիւն, որ եթէ նրանցից մինը Աստուածանից է, միւսները չեն կարող Աստուածանից ծա-

գում առած լինել, ապա յայտնի է, որ աշխարհիս վրայ շատ սուտ կրօնքներ կան։

Որովհետեւ այս այսպէս է, պէ՞տք է ուրեմն որ բոլորն էլ իբրեւ սուտ մերժենք, որովհետեւ այսչափ կրօններ յանիրաւի պնդում են թէ Աստուածանից ծագում առած են, մի՞թէ սրանից հետեւում է թէ Աստուածանից ծագում առած կրօնք բնաւ չկայ։ Մի այսպիսի հետեւութիւն բոլորովին ընդդէմ է բանականութեան։ Որովհետեւ աշխարհի վրայ շատ կեղծ դրամներ են գտնվում, դրանից չի հետեւիլ թէ ճշմարիտ դրամ ամենեւին չկայ։ Որովհետեւ փիլիսոփայական սխալ դրութիւններ շատ են գտնվում, չի հետեւիլ թէ ճշմարիտ փիլիսոփայական դրութիւն ամենեւին չկայ։ Այս օրինակիս պէս էլ ոչ ոք կարող չէ ուղղութեամբ հետեւացնել թէ, որովհետեւ շատ կրօններ ստութեամբ պնդում են թէ Աստուածանից են տրուած, ապա եւ ոչ մինը Աստուածանից տրուած չէ։

Բայց որովհետեւ այդչափ շատ սուտ կրօններ կան աշխարհում, պարտ ենք զգոյշ լինել, երբ նրանցից մինը պիտի ընդունենք իբրեւ ճշմարիտ։ Պէտք է հարցնենք, թէ արդեօք բոլոր կրօնքները տալիս են աստուածազարդեւ լինելու ապացոյցներ, այս ապացոյցները խնամով եւ անաչառ, քննելուց յետոյ պարտ ենք մերժել այն կրօնները որոնց աստուածատուր լինելուն բաւական փաստ չկայ, եւ ընդունել այն կրօնքը միայն՝ որ աստուածազարդեւ լինելու անժխտելի ապացոյցներ է ընծայում։ Այս կերպով միայն կարող ենք ազատ լինել թէ անոսի եւ յիմարական նախապաշարումից եւ թէ յամառ եւ անմիտ անհաւատութենից։

Քրիստոնէութիւնը չունի իրաւունք քննութենից բացառութիւն պահանջելու։ Արդարեւ Քրիստոնէութիւնը պնդում է, թէ աստուածատուր կրօնք է, բայց միւս բոլոր կրօնները էլ են պնդում։ Արդարեւ մենք մեր նախահայրերից ընդունել ենք, Քրիստոնէութիւնը իբրեւ ճշմարիտ կրօնք, եւ մեր երախայութենից յարգել ենք նրան իբրեւ աստուածային կրօնք, բայց բուդդայականները եւ բրահմենականներն էլ նոյնն են ասում իրենց կրօնքի համար։ Ուրեմն պարտ ենք Քրիստոնէութիւնը եւս անաչառ քննումի տակ դնել եւ նրա աստուածային ծագման վերաբերեալ փաստերը մանրամասն քննութեան ենթարկել։ Եթէ անբաւական կը գտնենք նրա փաստերը, պարտ ենք իբրեւ բանական մարդիկ մերժել նրան, բայց եթէ այն փաստերը բաւական կը գտնենք, պարտ ենք ընդունել նրան իբրեւ աստուածային կրօնք։

Եթէ մինը առարկէ ասելով թէ, որովհետեւ շատ դարեր անցած են Քրիստոնէութիւնը հաստատուելուց ի վեր, այլ եւս կարելի չէ քննել նրա ծագումը, եւ ստուգել թէ արդարեւ Քրիստոնէութիւնը աստուածատուր կրօնք է. այս առաջարկութեան պատասխանելով կասենք թէ, Քրիստոնէութեան ծագման, տարածման եւ ներկայ վիճակի պարագաներն այնպէս են, որ հարկաւ պէտք է բաւական ապացոյցներ գտնուէին Քրիստոնէութեան աստուածային ծագումը հաստատելու կամ հերքելու համար։

Քրիստոնէութիւնը ուրիշ կրօնների պէս չհաստատուեցաւ նախապատմական եւ առասպելական դարերի մէջ, որ հիմա անթափանցելի մթութեան մէջ

են, այլ Քրիստոնէութիւնը հաստատուեցաւ աշխարհիս լուսաւորեալ եւ քաղաքակրթեալ մէկ դարու մէջ։ Նաեւ Քրիստոնէութիւնը նախ չքարոզուեցաւ բարբարոս եւ վայրենի ժողովուրդի, որ նրա ծագման հետքերը եւ պարագաները պահանջելու անփոյթ գըտնուէր, այլ Քրիստոնէութիւնը նախ հաստատուեցաւ աշխարհիս հռչակաւորագոյն քաղաքներից մինին մէջ այն է Երուսաղէմի մէջ, եւ մի քանի տարի յետոյ քարոզուեցաւ Հռոմում, Կորնթոսում, Աթէնքում եւ ուրիշ երեւելի քաղաքներում։

Քրիստոնէութիւնը պնդում է, թէ հաստատուեցաւ նորանշան եւ զարմանալի դէպքերով, որ կատարուեցան ոչ թէ ծածուկ տեղ կամ մի քանի բարեկամների առաջեւ, եւ մի քանի տարիների միջոցում։

Որովհետեւ այս այսպէս է, ուրեմն կարող ենք քննել այն պատմական հիմը, որի վրայ կենում է Քրիստոնէութիւնը։ Կարող ենք քննադատութեան բովից անցկացնել Աւետարաններն, որ պատմում են այն զարմանալի դէպքերը։ Կարող ենք եւ պարտ ենք ուրիշ պատմական գիրքերի պէս անաչառ քննել Աւետարաններն, եւ այսպէս կարող ենք որոշել, թէ կա՞ն բաւական պատմական ապացոյցներ որ հաստատում են Քրիստոնէութեան աստուածային ծագումը։

Աւետարանները քննելով կարող ենք որոշել, թէ նրանց վարդապետութիւնների մէջ կա՞յ արդեօք մի բան, որ հակառական լինի ապացուցած եւ ընդհանուր ընդունուած որ եւ իցէ ճշմարտութեան։

Աւետարանները քննելով կարող ենք հասկանալ,

թէ արդեօք նրանք մարդկանցից յօրինուած հասարա՞կ գրքեր են, թէ Աստուծոյ ներշնչութեամբ գրուած լինելու նշաններ ունին։ Մենք կարող ենք քննել, թէ Աւետարաններն որպիսի եւ որչափ ընդարձակ ազդեցութիւն ունեցած են տասնեւութ դարերի մէջ։ Աւետարանների աշխարհի վրայ թողած ազդեցութիւնն հետազօտելով մենք կարող ենք որոշել, թէ արդարեւ այն գրքերը գերբնական ծագում ունի՞ն թէ ոչ։ Նաեւ կարող ենք մեր անձնում ստուգել Աւետարանի աստուածային ծագումը նրան սրտանց ընդունելուց յետոյ, եւ այսպէս կարող ենք համոզուիլ, թէ Քրիստոնէութիւնը արդեօք մի սնոտի նախապաշարո՞ւմ է թէ աստուածային զօրութիւն ազատելու մարդիկ մեղաց գերութիւնից եւ ապականութիւնից։

Քրիստոնէութեան Հիմնադիրն իսկ չպահանջեց մարդկանցից հաւատք առանց քննութեան։ «Թէեւ ինձ չէք հաւատում,» ասաց, «գոնէ գործքերին հաւատացէք» (Յովհ. Ժ. 38)։ Եւ Պօղոս առաքեալը ասում է. «Ամէն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք» (Ա. Թես. Ե. 21)։ Արդ, Քրիստոնէութիւնը չէ պահանջում մինակ ընդունել նրան առանց ապացոյցներ տեսնելու, թէ իրաւ յաստուածատ ծագուած է։ Եթէ Քրիստոնէութեան ապացոյցներն անբաւական են, մերժենք նրան իբրեւ սնապաշտութիւն, իսկ եթէ այն ապացոյցները բաւական համոզիչ են, սրտանց եւ շնորհակալութեամբ ընդունինք Քրիստոնէութիւնն իբրեւ աստուածային յայտնութիւն։ Սորանից յայտնի է, թէ այս խնդիրը, թէ Քրիստոնէութիւնն Աստուածանից է, պէտք է որոշուի ապացոյցներով։

Բայց մինչեւ որ սկսենք քննել ապացոյցները, հարկ է յիշեցնել ընթերցողներին թէ, այս քննութիւնը արժան է ուղիղ ճանապարհով եւ վայելուչ ոգւով սկսել։ Ով որ պատուհանի ապակու ետեւից նայում է, կարող է ամեն բան տեսնել ինչպէս է, եթէ մաքուր եւ ջինջ է ապակին։ Այսպէս միայն անկեղծ եւ անաչառ միտքը կարող է ուղիղ դատել Քրիստոնէութեան ապացոյցները։

Միջի դարերի երեւելի պատմիչը Հալամ իր ընթերցողների մասնաւոր ուշադրութիւնը հրաւիրում է այն կամակոր յամառութեան վրա որով մարդիկ երբեմն ընդդիմանումեն ամենից զօրեղ ապացոյցների, երբ այս ապացոյցները հակառակ են իրենց կրքերին կամ նախապաշարումներին։ Պատմութեան մէջ այսպիսի շատ օրինակներ կան։

Կարող է լինել որ բաւական զօրեղ ապացոյցներ գտնուին Քրիստոնէութիւնը հաստատելու, բայց եւ այնպէս մարդիկ չհամոզուին նրա ճշմարտութեանը, վասնզի խնդիրը չեն քննում վայելուչ ոգւով։ Կարելի է սխալուիլ, երբ մարդ հարեւանցի ոգւով մի կողմ թողնի խնդիրն իբրեւ անկարեւոր եւ հետաքրքրութեան անարժան, կամ ամբարտաւան ոգւով ուզէ հասկանալ Քրիստոնէութեան խորհուրդներն որ մարդկային միտքից վեր են, եւ կամ նախապաշարուած ոգւով չուզելով քննութեան առնել բոլոր ապացոյցները։

Որպէս զի կարող լինինք այս կարեւոր խնդիրը ճշգիւ լուծել, պարտենք ամենից առաջ քննել նրան ուշադիր ոգւով։ Պարտենք ճանաչել նրա կարեւորութիւնը եւ պատրաստ լինել տալ նրան ինչ ուշադրութիւն որ պէտք է խնդրոյն ճշգիւ լուծմանը համար։

Պարտենք փութով եւ ուշի ուշով ջանալ գիտենալ ճշմարտութիւնը, եւ պատրաստ լինել իգործ դնել ինչ ջանք որ պէտք է ճշմարտութիւնը գտնելու համար։

Պարտենք նաեւ այս խնդիրը քննել խոնարհ ոգւով։ Արարիչը մարդկանց պարգեւած է մտաւորական կարողութիւններ, եւ պէտք է որ այս կարողութիւնները գործածուին այս խնդրոյն քննութեան համար։ Սակայն մարդկանց մտաւորական կարողութիւնները սահմանաւոր են, եւ բաւական չեն կատարելապէս հասկանալու եւ բացատրելու բոլոր ճշմարտութիւնները։ Անցեալ դարերի մէջ Սոկրատի, Պղատոնի, Բակոնի, Պասկալի եւ Նիւտոնի պէս նշանաւոր մարդիկ հասկացան եւ զգացին իրենց մտաւորական ակարութիւնը։ Սոկրատը սովոր էր ասել. սա միայն գիտեմ ասել, որ բան չգիտեմ։ Բակոնը, որ արդի փիլիսոփայութեան հայր է կոչվում, ասում է թէ մարդիկ պէտք է գիտութեան թագաւորութիւն մտնեն այնպէս՝ ինչպէս Քրիստոս ասեց թէ պիտի մտնեն երկնքի թագաւորութիւնը, այսինքն փոքր երեխաների պէս։ Բնական աշխարհի օրինաց երեւելի հետազօտիչը՝ Նիւտոն, նմանեցնում է իրան մի փոքր աղջի որ քանի մի խիճ է ժողոված ծովի եզերքում, քանի որ նրա առաջեւ կայ գիտութեան անսահման մի ծով, որ դեռ ճանաչուած եւ քննուած չէ։

Քրիստոնէութեան ծագման խնդիրը քննելու ժամանակ պարտենք ունենալ Սոկրատի եւ Բակոնի խոնարհ ոգին։ Աշխարհս ուր ապրում ենք՝ լի է գաղտնիքներով, որոնց կատարելապէս մեկնելու անկարող են եղած մարդկանց մէջ ամենից հանճարեղները։

հակառակ առնկերի, անաստուններն եւ մարդկանց կեանքը. Ո՞վ կարող է հակառակ թէ հոգին ինչպէս է միացած մարմնի հետ։ Ոչ ոք։ Ուստի եթէ բնական աշխարհի մէջ այսչափ անխմանալի գաղտնիք կան, զարմանալու չենք, երբ բարոյական եւ հոգեւոր աշխարհի մէջ եւս գաղտնիք են դուրս գալիս մեր առաջեւ։

Սրդ, որովհետեւ կարող չենք լուծել նոյն իսկ բնութեան բոլոր գաղտնիքը, չմտաբերենք քննել Քրիստոնէութիւնը այս ամուսի յուսով, թէ պիտի կարող լինենք բոլոր դժուարութիւնները փարատել եւ ամեն գաղտնիք լուծել։ Մանաւանդ պարտ ենք խորհել թէ աստուածային յայտնութեան մէջ գտնուելու են շատ բաներ, որոնց չեն կարող հասու լինել մեր սահմանափակ կարողութիւններով։ Ուստի պարտ ենք քննել այս խնդիրն այն խոնարհ ոգւով որ ամեն ճշմարիտ կրօնքի ոգին է։

Պարտ ենք քննել այս խնդիրն անկեղծ եւ անաչառ ոգւով։ Կան մարդիկ որ ուշադրութեամբ մատիկ են անում ինչ որ կարելի է ասել Քրիստոնէութեան դէմ գրուած գրքերումը, եւ իրենց միտքում պահում են ամեն առարկութիւն որ կարելի է յարուցանել Քրիստոնէութեան դէմ։

Արդարեւ լաւ է որ խոհական մարդիկ ուշադրութեամբ քննեն այն փաստերը, որ թշնամիք մէջ են բերում Քրիստոնէութեան աստուածային ծագումն հերքելու։ Սակայն կան շատերը որ ուզում են միայն Քրիստոնէութեան թշնամիների առարկութիւնները կարդալ եւ լսել, եւ չեն քննում թէ արդեւ՞օք այն առարկութիւններն արդէն հերքուած են թէ ոչ. չեն

ուզում նկատել այն ապացոյցներն որ ի նպաստ են Քրիստոնէութեան։ Ի՞նչպէս կարելի է այսպիսի մարդկանց ուղիղ որոշել ու լուծել Քրիստոնէութեան ծագման խնդիրը։ Սորանք անկեղծ եւ անաչառ չեն իրենց քննութեան մէջ, չեն ուզում երկու կողմն էլ նայել։ Մենք պէտք է զգուշանանք այսպիսի նախապաշարմունքներից, եւ պէտք է քննենք խնդիրն անկեղծ եւ անաչառ ոգւով, այսինքն Քրիստոնէութեան թէ ինը պատ եւ թէ ընդդէմ բոլոր փաստերն եւ ապացոյցները լսելու պատրաստ եւ յօժար ոգւով։

Քրիստոնէութեան ծագման խնդիրը քննելու ժամանակ պարտենք ունենալ մանաւանդ բարեպաշտ ոգի. քանզի այս խնդիրը ոչ թէ տեսական, այլ գործնական խնդիր է. մեր ներկայ պարտականութիւնների վերաբերեալ խնդիր է։

Կան մարդիկ որ իրենց ուղղամիտ են կարծում, բայց իրենց կրքերի բռնութեան ներքեւ են. այսպիսի մարդիկ որչափ ուսեալ եւ սրամիտ լինեն, չեն կարող անաչառ քննութիւն անել այս խնդրի վրայ։ Քրիստոնէութիւնը խստիւ դատապարտում է այդպիսիներ ընթացքը, ուստի եւ նրանք յամառութեամբ հակառակում են Քրիստոնէութեան։ Քրիստոնէութեան դէմ են, վասնզի Քրիստոնէութիւնը նորանց դէմ է։ Սմենջանք ի գործ են դնում ապացուցանելու թէ Քրիստոնէութիւնը սուտ է. ուստի եւ որչափ հզօր փաստեր բերուին, դարձեալ կարելի չէ համոզել նրանց Քրիստոնէութեան ճշմարտութեան վրայ։ Լաւ միտ դնենք հարկաւոր է Յիսուսի այս խօսքին. «Ամեն ով որ չարիք է գործում՝ նա լոյսը ատում է, եւ լոյսին մօտ չէ գալիս որ իր գործերը չ'յանդիմանուին» (Յովհ. 17. 20.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գրադ. Библиотека
ՀԱՅԿ-ՍՍՀ
L1035
37/3
41

Ապականեալ բարքը եւ մոլի սովորութիւնները ահաւոր զօրութիւն ունին մարդկային միտքը կուրացնելու։ Այն մարդը որ դալիս է քննել Սուրբ գիրքը եւ միտքին մէջ գնում է թէ շարունակելու է անել ինչ որ գիտէ թէ ուղիղ է, եւ չէ ուզելու անել ինչ որ գիտէ թէ ուղիղ չէ, անտարակոյս ճշմարտութիւնից պիտի վրիպի այն մարդը, քանզի այնպիսոյն միտքը ճշմարտութիւնը սիրելու եւ ընդունելու յարմար չէ։

Ընթերցողը պիտի յիշէ նաեւ թէ միայն մեծ ոճիրներ եւ խոշոր յանցանքները չեն որ խաւարեցնում են մարդուս միտքը եւ հեռացնում են սիրտը ճշմարտութիւնից. ամբարտաւանութիւն, փառասիրութիւն, ագահութիւն, միով բանիւ անձնասիրութիւն եւ ուրիշ կիրքեր, որ արմատ են դատած մարդուս սրտի մէջ։ Դրանք եւս արգիլում են մարդուս՝ ճշմարտութիւնը տանելու. Այս կիրքերը մէկ կողմանէ հակեցնում են աւատալ այն անձանց որ շողոքորթում են նրանց եւ թոյլ տալիս նրանց շարունակել իրանց մեղանչական սովորութիւնները, միւս կողմանէ նախապաշարում են դրանց միտքերն Աւետարանին դէմ որ խստիւ դատապարտում է նրանց. Մի անդղիացի ազնուական, որ տաջ անհաւատ էր, եւ սպա զղջալով հաւատաց Քրիստոսին, սովոր էր ասել. «Ա պ ա կ ա ն ո ւ ա ծ ի ր ա ը , ա պ ա կ ա ն ո ւ ա ծ ս ի ր ա ը եւ առարկութիւն է Սուրբ գրոց դէմ։»

Այս կարեւոր խնդիրը քննելու ժամանակ բոլոր դանց ընդունենք Քրիստոսի այս խօսքը. «Թէ որ ինը ուզում է Նրա կամքը անել, «այսինքն Աստուծոյ կամքը, «պիտի գիտենայ այս վարդապետութեանս համար թէ արդեօք Աստուածանէ՞ց է՝ թէ ես ինձանից եմ խօսում» (Յովհ. Է. 17.)։ Որչափ որ արդէն գիտենք ճշմարտութիւնը, ընդունենք նրան, նրա համեմատ գործենք եւ նրա համեմատ վարուինք։ Եթէ այսպէս անենք, Աստուած աւելի պիտի լուսաւորէ մեզ, եւ աւելի պիտի յայտնէ մեզ ճշմարտութիւնը։ Աստուած սիրում է ճշմարտութիւնը, սիրում է նաեւ նրանց որ որոնում են ճշմարտութիւնը։ Աստուած մոլորութեան եւ խաւարի մէջ կը թողէ միայն նրանց, որ անօրէնութեան յօժարելով սիրում են ստութիւնը առաւել քան ճշմարտութիւնը, քանզի ախորժում են անիրաւութիւնից։

ԳԼՈՒԽ Գ.

ՄԻԹԷ ԱՆԿԱՐԵԼԻ ԿԱՄ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԿԱՄ ԱՆՀԱՒԱՆԱԿԱՆ Է ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ ԼԻՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ։

Այս խնդրի վրայ փիլիսոփայական շատ տեսութիւններ եղած են, եւ թէ՛ բանաւոր թէ՛ անտեղի առարկութիւններ հրատարակուած են։

Ոմանք պնդած են թէ անհնար է որ Աստուած մասնաւոր յայտնութիւն տուած լինի մարդկանց։

Այլք ընդունելով թէ Աստուած կարողէ մասնաւոր յայտնութիւն տալ մարդկանց, ասած են թէ կարելի է որ այսպիսի յայտնութիւն տրուած լինելը հաստատելու համար բաւական զօրաւոր փաստեր գտնուին, եւ թէ՝ թէ եւ Աստուած այսպիսի յայտնութիւն տրուած լինի, մարդիկ չեն կարող ստուգիւ գիտենալ եւ ամրողջուել թէ այն յայտնութիւնն արդարեւ Աստուածանից տրուած է։

Այլք ընդունելով թէ աստուածային յայտնութիւն աստատելու բաւական զօրաւոր ապացոյցներ կարող տրուիլ, պնդած են թէ հաւանական չէ թէ այնպիսի յայտնութիւն արդարեւ տրուած է, ուստի շատ կասածանքով են ընդունում ինչ փաստ որ մէջ է բերվում աստուածային յայտնութիւն հաստատելու համար։

Կան սակայն ուրիշ շատ հանճարեղ մարդիկ որ ընդունում են թէ կարելի եւ հաւատալի է որ Աստուած

մասնաւոր յայտնութիւն տուած լինի մարդկանց, եւ մարդկային ազգին բոլոր պարագաները քննութեան առնելով ասում են, թէ անհաւանական չէ թէ այսպիսի յայտնութիւն արդէն Աստուածանից տրուած է մարդկանց։ Այսպէս ասողները պատրաստ են անաչառ քննել Քրիստոնէութեան աստուածային ծագման ապացոյցները։

Հարկ չէր այսպիսի փիլիսոփայական տեսութիւններով ժամանակ կորցնել, վասնզի այսպիսի տեսութիւնք խնդիրը չեն կարող լուծել։ Լաւագոյն էր մի ըստ միոջէ սկսել քննելու այս պատմական խնդիրը, թէ արդարեւ տրուած է այնպիսի յայտնութիւն։ Սակայն մարդիկ պատրաստ եւ յօժար չեն եղած Քրիստոնէութեան ծագումը քննելու սկսել այս պատմական խնդիրը քննելով։ Ոմանք ջանացած են Քրիստոնէութեան աստուածային ծագման խնդիրը լուծել ոչ ըստ վկայութեան պատմութեան որը քննութեան առնել չեն ուզում, այլ իրանց անհիմն կարծիքների եւ խորհուրդների համեմատ։ Բայց այս մարդիկ էլ համաձայն չեն իրանց մէջ։ Ոմանք հաստատում են ինչ որ այլք ժխտում են, բայց ամենքն էլ միաբան են, սրանով ուզում են սահման դնել Աստուծոյ իմաստութեան յայտնութեանը, եւ նրա զօրութեան ներգործութեանը։ Ամբարտաւանութիւնը որով սխալական մարդիկ երբեմն խօսում են կամ վարդապետում են այս նիւթին վրայ՝ արդարեւ զարմանալի է։ Ոմանք որպէս թէ ուզում են խորհրդական լինել Աստուծոյն եւ նրան ճանապարհ ցոյց տալ թէ նա ինչպէս պիտի գործէ։ Որպէսզի մեր միաքը փիլիսոփայական կոչուած այսպիսի անհիմն փաստաբա-

նութիւններով եւ խօսքերով չնախապաշարուի Քրիստոնէական հաւատոյ ապացոյցների դէմ, հարկ է հարմառօտիւ քննել փիլիսոփաների առարկութիւններից ոմանք, հասկանալու համար թէ որչափ անհիմն են նրանք։

Ոմանք ասում են թէ անհնար է որ Աստուած մասնաւոր յայտնութիւն տուած լինի մարդկանց։ Ինչո՞ւ համար անհնար է։ Այսպէս ասողներից իրաւունք ունինք ապացոյց պահանջելու ի հաստատութիւն իրանց խօսքերին, վասնզի «Անհնար է» ասել միայն բաւական չէ, պէտք է ապացուցանել անհնարութիւնը։ Ապացոյց ունի՞ն։ Ապացուցանելու համար թէ մասնաւոր աստուածային յայտնութիւն անհնար է, հարկ է նախ ցոյց տալ թէ Աստուած անկարող է տալ այնպիսի յայտնութիւն, կամ թէ մարդիկ անկարող են այնպիսի յայտնութիւն ընդունել Աստուածանից։

Կա՞յ փաստ թէ Աստուած անկարող է մասնաւոր յայտնութիւն տալ մարդկանց։ Այսպիսի փաստ չկայ։ Երկրաւոր ծնողները կարող են իրանց կամքը յայտնել իրանց զաւակներին, եւ ո՞վ կարող է պնդել թէ երկնաւոր Հայրը չունի այն կարողութիւնը որը երկրաւոր հայրերը ունին։ Ոչ ոք։ Երկրաւոր թագաւորները կարող են իրանց հրամանները հրատարակել իրանց հպատակներին, եւ կարող են իրանց կամքը յայտնել նրանց, եւ ո՞վ կարող է ցոյց տալ թէ թագաւորաց թագաւորի կարողութիւնը նուազ է քան նրանցը։ Ո՞վ կարող է ասել թէ ամենակարողն Աստուած, թէեւ ուզէ չէ կարող իր կամքը յայտնել իր հպատակներին։ Ոչ ոք, որ հաւատում է թէ կայ ամենակարող եւ ամենիմաստ Աստուած։

Նաեւ ո՞վ կարող է ցոյց տալ թէ մարդիկ անկարող են յայտնութիւն ընդունել Աստուածանից։ Ի՞նչ ապացոյց կայ այսպէս կարծելու։ Եթէ մարդիկ փայտի եւ քարի պէս անշունչ կամ անասունների պէս անբան լինէին, անկարող կը լինէին այսպիսի յայտնութիւն ընդունել Աստուածանից։ Բայց մարդիկ ոչ անշունչ են, եւ ոչ անբան. ընդհակառակն, զարդարուած են մտաւոր եւ բարոյական կարողութիւններով։ Ուրեմն ո՞վ կարող է հաստատել թէ մարդիկ անկարող են ընդունել եւ հասկանալ բարոյական եւ հոգեւոր ճշմարտութիւններ, որ նրանց հաղորդուած են աստուածային յայտնութեամբ։ Ո՞վ կարող է ապացուցանել թէ մարդիկ որ այնպէս հանճարեղ են արարածների վերաբերեալ բաներ սովորելու՝ կարող չեն սովորել Արարչին վերաբերեալ բաներ։ Մարդիկ որ այնչափ զարմանալի հմտութիւններ են ստանում բնական աշխարհի օրինաց վրայ, միթէ անկարո՞ղ են նաեւ հոգեւոր աշխարհի օրինաց վրայ հմտութիւններ ըստանալու։ Վերջապէս, ո՞վ կարող է ասել թէ մարդիկ որ կարող են իրանց հեռաւոր բարեկամներից եւ ծանօթներից տեղեկութիւն ստանալ, անկարող են հրաման կամ պատուէր ընդունել իրանց երկնաւոր Հօրից։ Փիլիսոփաները որ բոլոր այս բաներն ապացուցանել են խորհում արդարեւ մի շատ դժուարին գործ են ձեռնարկում։

Ճշմարիտ է որ Աստուած անսահման է, եւ մարդիկ՝ սահմանաւոր. եւ անտարակոյս սահմանաւոր մարդկանց անհնար է բովանդակ հասու լինել Աստուծոյն կամ գիտենալ նորան վերաբերեալ ամեն բան։ Բայց ուրիշ բան է կատարելապէս ճանաչել Աստուած,

բոլորովին ուրիշ բան է նրա վրայով ճշմարիտ տեղեկութիւն ունենալ։ Սմենեբին փասա չ'կայ թէ Աստուած չէ կարող հաղորդել մարդկանց այնչափ տեղեկութիւն որչափ պատշաճ կը թուի Նրա կատարեալ իմաստութեանը. չկայ նաեւ փաստ թէ մտաւոր եւ բարոյական կարողութիւններով զարդարուած մարդը կարող չէ աստուածային յայտնութիւն ընդունել եւ օգուտ քաղել նրանից։

Սակայն այլք ասում են թէ անհաւատալի է որ մասնաւոր յայտնութիւն տրուած լինի մարդկանց։ Ի՞նչպէս անհաւատալի է, եւ ինչո՞ւ համար անհաւատալի է։ Ոմանք ասում են. Այսպիսի յայտնութիւն բնութեան հակառակ է, ուստի եւ անհաւատալի։ Բայց կը հարցնենք՝ ո՞ր բնութեան հակառակ է։ Աստուծո՞յ բնութեանը։ Ինչից գիտենք այս։ Այս փիլիսոփաներից ոմանք ասում են թէ մենք չենք կարող գիտենալ Աստուծոյ բնութիւնը։ Եթէ ճշմարիտ է որ չենք կարող մի բան գիտենալ Աստուծոյ բնութեան վրա, ապա ի՞նչպէս կարող ենք որոշել թէ ինչ բան հակառակ է Աստուծոյ բնութեանը։ Բայց ի՞նչպէս կարող է Աստուծոյ բնութեան հակառակ լինել մասնաւոր յայտնութիւն տալ մարդկանց։ Աստուծոյ ստորոգելեաց որի՞ն հակառակ է այս։ Աստուծոյ կարողութեա՞նը։ Ո՛չ։ Աստուած մանաւանդ իր զարմանալի կարողութիւնը ցոյց տուած կը լինի այնպիսի յայտնութիւն տալով։ Աստուծոյ անփոփոխութե՞անը հակառակ է մասնաւոր յայտնութիւն տալ մարդկանց։ Ո՛չ, եթէ այնպիսի յայտնութիւն տալու խորհուրդը կար ի յաւիտենից Աստուծոյ նպատակին մէջ։ Աստուծոյ իմաստութե՞անը հակառակ է։ Ո՛չ, եթէ

յայտնութիւնը պիտի տրուէր յարմար կերպով եւ բարիք յառաջ բերելու համար։ Աստուծոյ բնութե՞անը հակառակ է։ Ո՛չ, եթէ յայտնութիւնը պիտի տրուէր մարդկային ազգին ժամանակաւոր եւ յաւիտենական երջանկութեան համար։

Արդարեւ դիւրին է ասել, բայց դժուարին է ցոյց տալ թէ մասնաւոր յայտնութիւն հակառակ է Աստուծոյ կատարելութիւններին։

Անկատար մարդիկ աւելի լաւ կանեն եթէ այս խնդրի լուծումը նոյն իսկ Աստուծոյն թողեն։ Փոխանակ ջանալու որոշել թէ ինչ բան անել վայելուչ է Աստուծոյն, աւելի՝ պատշաճ է խոնարհութեամբ քննել թէ Աստուած ինչ արած է իւր կատարեալ իմաստութեամբը։

Միթէ մարդո՞ւս բնութեանը հակառակ է աստուածային յայտնութիւն ընդունել։ Ընդունում ենք թէ կարող են այնպիսի յայտնութիւններ լինել որ պնդեն թէ Աստուածանից ծագում առած են, մինչ այնպէս հակառակ են մարդուս մտաւոր եւ բարոյական բնութեանը որ բոլորովին անհաւատալի են։ Այսպիսի պարագայի մէջ մարդիկ կարող են չհաւատալ այն յայտնութիւնների աստուածային ծագմանը, բայց ո՞վ կարող է ապացուցանել թէ մարդուս բնութեանը հակառակ է ճշմարիտ յայտնութիւն ընդունել Աստուածանից։ Այնպիսի յայտնութիւն մարդուս ոչ բնական եւ ոչ բարոյական բնութեանը դէմ կգայ, քանզի յայտնութիւնը տրուած է մարդուս վասն զի բանականութեան տէր եւ բարոյականութեան ընդունակ է, եւ իր մտաւոր եւ բարոյական կարողութիւնները գործածելով քննում է այն։ Ո՞վ կարող է ապացու-

ցանել թէ մարդուս բնութեանը հակառակ է յայտնութիւն որի թէ նիւթը եւ թէ տրուելու եղանակը համաձայն է մարդկային բնութեան։

Դարձեալ հարցնում ենք. Այսպիսի մասնաւոր յայտնութիւն միթէ հակառա՞կ է նիւթական աշխարհի օրէնքներին։ Ցայտնի է թէ նիւթական աշխարհը կենդանիների համար է, եւ թէ անբան արարածները բանաւոր արարածներին հպատակած են։ Երկիրը իր բնական օրէնքներովը ոչ թէ իրան համար է, այլ մարդուս համար։ Բնական օրէնքների անփոփոխ եւ համաձայն գործողութիւնները մարդուս օգտին համար են։ Ապա ինչպէս կարող է ասուել թէ, մարդկային ազգին ժամանակաւոր եւ յաւիտենական օգտին համար մասնաւոր յայտնութիւն հակառակ է այն բնական օրէնքներին։ Ոչ տիեզերաց ընդհանուր կարգը կ'չփոթուի այնպիսի յայտնութեան տրուելովը, ոչ էլ բնութեան օրէնքներից մինը կ'եղծուի։ Գերագոյ զօրութիւն կարող է ինքն իրան յայտնել մեծ նպատակի համար առանց խանգարում գործելու նիւթական աշխարհի բնական կարգին։ Ուրեմն, ո՞վ կարող է ցոյց տալ թէ այսպիսի յայտնութիւն հակառակ է նիւթական աշխարհի բնութեանը։

Բայց եւ այնպէս ոմանք տակաւին պնդում են թէ մարդկային մտաց բնութեանը հակառակ է հաւատալ աստուծային մասնաւոր յայտնութեան։ Այս առարկութեան պատասխանը շատ դիւրին է։ Մարդուս մտքին բնութեանը հակառակ չէ աստուծային մասնաւոր յայտնութեան հաւատալ, եւ սրա ապացոյցը այն է որ մարդիկ ի սկզբանէ անտի հաւատացած են այսպիսի յայտնութիւն-

ներ։ Նոյն իսկ սխալ եւ սուտ յայտնութիւններին մարդկանց կողմանէ հաւատք ընծայուած լինելը ցոյց է տալիս թէ մարդկային մտքին օրէնքներին հակառակ չէ աստուծային յայտնութիւններին հաւատալ։ Մարդկային ազգի պատմութիւնը ցոյց է տալիս թէ մարդ այնպէս կազմուած է որ պատրաստ է հաւատալ այնպիսի յայտնութիւններին։ Թէ կրթուած եւ թէ անկիրթ ազգաց պատմութիւնը բացայայտ ցոյց է տալիս թէ Աստուածանից մասնաւոր յայտնութիւն տրուած լինելն անհաւատալի չէ։ Արդարեւ այսպիսի յայտնութիւն չէ կարող առանց ապացոյցի ընդունուել, եւ աստուածային յայտնութիւն հաստատելու համար պէտք են աւելի զօրաւոր փաստեր քան թէ պէտք են հասարակ դէպքեր հաստատելու համար։ Բայց, եթէ բաւական զօրաւոր փաստ կայ, կարող ենք հաւատալ թէ Աստուածանից մասնաւոր յայտնութիւն տրուած է։

Հիմայ մնում է քննել մի ուրիշ խնդիր, այսինքն թէ հաւանակա՞ն է արդեօք որ Աստուծոյ կողմէն այնպիսի յայտնութիւն տրուած լինի մարդկանց։ Այս հարցման համառօտիւ կը պատասխանենք թէ, եթէ մարդիկ կարօտ չեն աստուածային մասնաւոր յայտնութեան, ապա հաւանական չէ թէ Աստուած տուած է մարդկանց մի այնպիսի յայտնութիւն քանզի Աստուած չէ անում ինչ որ հարկաւոր չէ։ Եթէ մարդիկ բնութիւնից կարող են սովորել ինչ որ հարկաւոր է իրանց ժամանակաւոր եւ յաւիտենական երջանկութեան համար, ապա հաւանական չէ որ մասնաւոր յայտնութիւն առած լինեն երկնքից։ Եթէ մարդիկ իրանց կարողութիւնները հաւատարմութեամբ եւ համբերութեամբ գործածելով կարող են սովորել ինչ որ հարկաւոր է

իրանց ծագման, պարտուց եւ վախճանին նկատմամբ ապա հաւանական չէ որ Աստուած մասնաւոր յայտնութեամբ օգնած է նրանց։

Բայց, ընդհակառակն եթէ բնութեան լոյսը բաւական չէ լուսաւորելու մարդկանց, ապա անհաւանական չէ որ նրանց երկնաւոր Հայրն երկնաւոր լոյս է ուղարկած նրանց։ Եթէ մարդիկ իրանց կարողութիւնների միջոցով չեն կարող ճշմարտութեան գիտութեանը հասնել, ապա հաւանական է որ Աստուած իր մարդասիրութեամբն օգնած է նրանց։ Եթէ մարդկային ազգը ճշմարիտ Աստուծոյ գիտութիւնը կորցնելով կուրաբար ընթանում էր մահու եւ կորստեան ճանապարհի մէջ, ապա հաւանական է թէ Աստուած նրանց յայտնած է յաւիտենական կենաց ճանապարհը։

Ուրեմն, մարդկային ազգն Աստուածանից մասնաւոր յայտնութեան կարօ՞տ է։ Քննենք այս խնդիրն ուշադրութեամբ եւ անաչառութեամբ, եւ այն ժամանակ պատրաստ կ'լինենք պատասխանելու այս առարկութեան թէ անհաւանական է որ Աստուած մասնաւոր յայտնութիւն տուած լինի մարդկանց։

ԳԼՈՒԽ Դ.

ՄԱՐԴԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՆԻՑ ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԿԱՐՕ՞Տ ԵՆ

Եթէ մարդիկ կարող չեն իրանք ստանալ իրանց ներկայ յաւիտենական երջանկութեան համար հարկաւոր գիտութիւնը, ապա կարօտ են աստուածային մասնաւոր յայտնութեան։ Ուրեմն կա՞յ մարդկանց ներկայ եւ յաւիտենական երջանկութեան համար հարկաւոր գիտութիւն որը մարդիկ կարող չեն ստանալ իրանց բնական կարողութիւնները գործածելով միայն։

Մարդիկ կարօտ են ստանալ ճշմարիտ գիտութիւն գերագոյն Էակին վրայ, որի կամքից բոլորովին կախում ունի նրանց ներկայ եւ հանդերձեալ երջանկութիւնը։

Մարդիկ կարօտ են ճշմարիտ գիտութիւն ունենալ այն բարոյական կառավարութեան վրայ՝ որին հպատակ են, եւ որի օրինաց համաձայն պիտի որոշուին նրանց ներկայ պարագիրն եւ հանդերձեալ վիճակը։

Մարդիկ կարօտ են գիտենալ թէ արդեօք իրանց հոգին պիտի պահէ իւր գոյութիւնը մարմնի մեռնելուց ետքը. եւ եթէ պիտի պահէ, իւրաքանչիւր մարդու հանդերձեալ վիճակը մարդուն այս աշխարհի մէջ գործելու եղանակից կախում պիտի ունենա՞յ. եւ եթէ պիտի ունենայ, մարդ այստեղ ի՞նչպէս պիտի գործէ եւ ինչպէս պիտի ապրի որ յարմար լինի հանդերձեալ կեանքի մէջ երանութեան հասնելու։ Մարդիկ կարօտ են նաեւ ստուգիւ գիտենալու թէ իրանց

մեղքերը կարող են ներուել, եւ եթէ կարող են ներուել, ի՞նչ անել պէտք է մարդկանց իրանց մեղաց թողութիւն ընդունելու համար։

Վերոյիշեալ խնդիրները լոկ հետաքրքրական խընդիրներ չեն, այլ վերջին աստիճանի կարեւոր եւ գործնական խնդիրներ են։ Բաւական չէ որ մարդ այս խնդիրների վրայ լոկ մակաբերութիւններ ունենայ թէ եւ սուր կարծիքներ՝ թէ եւ հանճարեղ ենթադրութիւններ՝ թէ եւ հաւանական։ Այս խնդիրների վրայ մարդկանց մակաբերութիւններն որչափ հանճարեղ, եւ նրանց փիլիսոփայական տեսութիւններն որչափ գեղեցիկ լինեն, մարդկանց կարօտութիւնները չեն կարող լեցնել։ Մարդիկ կարօտ են լիուլի, հաւատի, որոշ եւ հաստատուն տեղեկութիւն ունենալու։ Արդ, միթէ մարդիկ կարո՞ղ են այսպիսի գիտութիւն ստանալ այս խնդրի վրայ առանց աստուածային յայտնութեան։

Այս խնդիրն որոշելու համար հարկ չէ փիլիսոփայական նուրբ քննութիւնների դիմել մարդուս բնական կարողութիւնների մասին։ Կարող ենք շատ լաւ հասկանալ թէ մարդիկ ինչ բան անել կարող են այս մասին, եթէ նկատենք թէ մարդիկ ի՞նչ արած են մինչեւ հիմայ։ Անցեալում մարդիկ իրանց բոլոր կարողութիւններովը չ՚նացին գիտենալ ինչ որ հնար էր Աստուծոյ եւ մարդկային հոգու վրայ։ Այս ջանքերը ոչ թէ մի քանի տարի միայն, այլ դարեր տեւեցին, ոչ թէ բարբարոս ցեղեր միայն, այլ իրանց հանճարի եւ փիլիսոփայութեան կողմանէ նշանաւոր ազգեր արին այս ջանքերը։ Նրանք որ այս մեծ խնդիրների քննութեամբն զբաղուեցան, ոչ թէ տկարամիտ,

նախապաշարուած եւ անկարող մարդիկ էին, այլ իրանց մտաւորական ձիրքերի եւ փիլիսոփայական կարողութիւնների կողմանէ արդարեւ նշանաւոր եւ անուանի մարդիկ էին։ Այս անդուլ աշխատութիւնների եւ անխոնջ հետազօտութիւնների հետեւանքն ի՞նչ եղաւ։ Աշխարհիս փիլիսոփաներն ի՞նչ բան կարողացան սովորել այս խնդրի վրայ մինչեւ Քրիստոսի աշխարհ գալը։

Փիլիսոփաները անկարող էն եղած ոտոյգ տեղեկութիւն ստանալ, կամ հաստատուն համոզման հասնել այս խնդրի վրայ, եւ ինչպէս բնական էր, նրանցից շատերն ընդհանուր տարակուսանաց եւ յերկուսանաց մէջ մնացին։ Նոյն իսկ Սոկրատի ժամանակ իմաստակ կոչուած փիլիսոփաները հին աւանդութիւնները ծաղրեցին, եւ իբր չնչին բան՝ արհամարեցին ճշմարտութիւնը։ Եպիկուրեանները կարծում էին թէ ամեն բան դիպուած է եւ մարդու կամքից է յառաջ գալիս։ Սրանք ուրացան հոգու անմահութիւնը, եւ աշխարհի հեշտութիւններին անձնատուր եղան։ Նոր Ակադիմիա կոչուած փիլիսոփայական աղանդի վարդապետութիւններին նայելով (244 տարի Քրիստոսից առաջ) մարդիկ կարող չէին հաւատալ որ եւ իցէ ճշմարտութեան։ Մինչեւ Քրիստոսի ծնունդը Հռովմայեցոց մէջ շատ գիտուն մարդիկ չէին հաւատում հանդերձեալ կեանքին։ Կատոն եւ Կեսար Հռոմէական ծերակոյտին մէջ յայտնապէս ասացին թէ, խաբուած են նրանք որ հաւատում են թէ հոգին մարդուս մահից յետոյ էլ ապրում է։

Եղան սակայն գիտունների մէջ ոմանք, որ սրտի մտօք խորհեցին եւ խնամով ջանացին լուծել մարդուս գոյութեան եւ ապագայ կեանքի խնդիրը։ Բայց

ցաւով խոստովանեցին թէ, որչափ եւ ջանացին անկարող չեղան հասնել ճշմարտութեան եւ ճշմարտութեան նկատմամբ յերկուանաց եւ անստուգութեան մէջ մնալու ստիպուած եղան։

Սոկրատ հին հեթանոսութեան ամենից երեւելի անձն էր, իր դարին նայելով չատ բարձր եւ իր առաքինութեամբն արդարեւ նշանաւոր էր։ Սոկրատ փիլիսոփաների խմաստակութիւնները հերքեց եւ իր ազգին մոլութիւնները խստիւ դատապարտեց։ Բայց եւ այնպէս Սոկրատ անկարող էր ազատուել ժողովրդեան մնապաշտութիւններից, հաւատում էր ազգային աստուածներին, եւ երբ մեռնելու վրայ էր, խնդրեց իր բարեկամներից իրան համար մի աքաղաղ զոհել Ասկղեպիոսին։ Նոյն իսկ Սոկրատ որ այնչափ բարեմասնութեամբ եւ մեծ հանճարով զարդարուած էր՝ իր անմահութեանը վրայ տարակուսանօք մեռաւ։

Պղատոն, Սոկրատի աշակերտն եւ նախնի փիլիսոփաներից ամենից բանիրունը, ցաւով խոստովանում էր իր տգիտութիւնն Աստուծոյ եւ մարդուս հոգու վրայ։ Երբ կամենում էր աստուածների վրայ խօսել, իր աշակերտներին ասում էր թէ այս մասին իրանից ուրիշ բան չսպասեն բաց ի կարծիքից։ Երբ նա խօսում էր հոգու եւ նրա վախճանին վրայ, ասում էր «Ինձ թւում է թէ կամ անկարելի եւ կամ չատ դժուարին է այս բաները լաւ գիտենալ աշխարհս մէջ, բայց եւ այնպէս տկարամիտ մարդս գործ է ամեն կերպով չփորձել եւ չքննել ինչ որ ասուած է նրանց վրայ։»

Դարձեալ Պղատոն իր Աղկիբիադէս անուն գրքին մէջ ասում է. «Պիտի համբերութեամբ սպասենք մինչեւ որ մինը՝ Աստուած կամ մի մարդարէ մեզ սովորեցնէ մեր բարոյական եւ կրօնական պարտականութիւնները, եւ մեր աչքերից մութը փարատէ։»

Աստուծոյ եւ մարդկային հոգու վրայ ստոյգ տեղեկութիւն ստանալու համար նախնի մեծ փիլիսոփաների ջանքը դատապարտում են արդի փիլիսոփաների չատերի ընթացքը։ Մեծանուն Պղատոնի խոնարհ խոստովանութիւնը թէ մարդկային միտքը տկար է եւ կարօտ է աստուածային մասնաւոր յայտնութեան, դատապարտում է նրանց որ ամբարտաւանութեամբ ապաւինում են իրանց կարողութիւններին եւ Աստուածանից օգնութիւն չեն խնդրում։

Յամբլիղիկոս անուն մի ուրիշ հին փիլիսոփայ ասում է. «Ցայտնի է թէ մարդիկ պէտք է անեն ինչ որ հաճոյ է աստուածներին, բայց թէ ի՛նչ են այն բաները որ հաճոյ են աստուածներին՝ դիւրին չէ գիտենալ, եթէ մարդ չսովորի նոյն իսկ Աստուածանից, եւ կամ այնպիսի անձից որ Աստուածանից սովորած է։»

Մի ուրիշ հին փիլիսոփայ՝ Բսենոփանէս, «Բնութիւն» անուն գրքին մէջ ասում է. «Ոչ ոք ստոյգ գիտութիւն չունեցաւ կամ պիտի չունենայ աստուածների վրայ, քանզի թէ եւ ճշմարիտ լինի ինչ որ ասում է մարդս, չէ կարող վստահ լինել թէ արդարեւ ճշմարիտ ասաց։ Ամեն տեղ տիրում են տարակոյս եւ յերկուանք։»

Կիկերոնը՝ «Աստուածների մասին» կոչուած ճառին մէջ ասում է. «Բոլոր այս բաները խորին խաւարով պատուած են։ Նրանք որ ասում են թէ աստուածներ կան, իրանց կարծիքների մէջ այնպիսի տարբերութիւններ եւ հակասութիւններ են ցոյց տալիս որ անչեւ որ մինը՝ Աստուած կամ մի մարդարէ մեզ սովորեցնէ մեր բարոյական եւ կրօնական պարտականութիւնները, եւ մեր աչքերից մութը փարատէ։»

հնար է այն կարծիքները մէջ տեղ բերելով նորանցից ուսում կամ գիտութիւն չինել։ Եթէ աշխարհ եկած լինէինք այնպիսի պարագաների ներքեւ որ կարողանայինք ստուգիւ եւ բացայայտ ճանաչել բնութիւնը, եւ բոլոր մեր կեանքում հետեւել նրա ճշմարիտ եւ անարատ վարդապետութիւններին, թերեւս կարելի կ'լինէր բաւական լոյս առնել բնութիւնից, բայց բնութիւնը տուած է մեզ ուղիղ բանի փոքր կայծեր միայն, որոնք մենք ապականուած խորհուրդներով եւ չար գործերով այնպէս արագ հանգցնում ենք որ բնութեան լոյսը բնաւ լաւ չէ տեսնվում։» Նոյն հեղինակը հոգու անմահութեան նկատմամբ փիլիսոփաների կարծիքների վրայ խօսելով ասում է. «Թէ նրանց կարծիքներից որը ճշմարտութեան աւելի մօտ է, մեծ խնդիր է. եւ թէ նրանցից որը ճշմարիտ է՝ Աստուած պէտք է ասէ մեզ։»

Մի ուրիշ Հռոմայեցի հեղինակ, Պլինիոս, խոստովանում է թէ իր հոգին քաղցած է ճշմարտութեան, եւ ողբում է թէ կարելի չէր իր հոգու քաղցը յագեցնել։ Հետեւցնում է թէ մարդ ճշմարտութեան հասնելու անկարող լինելուն համար արարարածների թըշուառագոյնն է, եւ թէ Աստուծոյ մեծ պարգեւն է որ մարդ կարողանայ անձնասպան լինել։

Նախնի փիլիսոփաների ամենից երեւելիների խոստովանութիւնները եւ հառաչանքը լաւագոյն պատասխան են վերոյիշեալ հարցման, թէ արդեօք մարդիկ կարո՞ղ են աստուածային մասնաւոր յայտնութեան։ Այս փիլիսոփաները ցոյց են տալիս թէ ո՛րչափ հարկաւոր է մարդոց ստոյգ տեղեկութիւն ստանալ Աստուծոյ եւ հոգու մասին։ Այս փիլիսոփաները

մեծ փութով ջանացին ստանալ այսպիսի գիտութիւն, բայց անկեղծութեամբ խոստովանեցին իրանց անյաջողութիւնը եւ ապիկարութիւնը, եւ ինչպէս նրանց գրուածներից երեւում է, ապրեցին եւ մեռան առանց գիտենալու կարեւոր ճշմարտութիւններ։ Ստոյգ է թէ նրանցից ոմանք ժամանակ ժամանակ բարձր եւ զերազանց գաղափարներ յայտնեցին Աստուծոյ եւ մարդկային հոգու վրայ, բայց սրանք էլ լոկ կարծիքներ էին, եւ այն գաղափարները յայտնող անձինք իսկ չէին կարող վստահել նրանց։

Որովհետեւ ամենից բանիբուն եւ հանճարեղ հին փիլիսոփաները կարող չեղան մարդկանց ճանաչեցնել ճշմարիտ Աստուածը, մարդիկ ընկան կռապաշտութեան եւ սնապաշտութիւնների, մոլութիւնների եւ խայտառակ զեղխութիւնների մէջ։ Բազմացրին իրանց արու եւ էգ աստուածների թիւը, եւ պաշտեցին նրանց՝ խայտառակ եւ անարգ ծէսերով։ Նրանց վերագրում են ոչ միայն մի քանի առաքինութիւններ այլ եւ մարդկային անարդ կիրքեր, ինչպէս վրէժխնդրութիւն, անգթութիւն, արբեցութիւն եւ անառակութիւն, եւ այսպիսի աստուածներին երկրպագողները չուտով նմանեցին նրանց որոնց պաշտում էին։ Յոյները Հռոմայեցիները սկզբից շատ առաքինութիւններ ունէին, բայց յետոյ բոլորովին ապականուեցան։

Կուինտիլիանոս ասում է թէ նոյն իսկ փիլիսոփաները ընդհանուր ապականութիւնից զերծ չէին, ամենից մոլի գործերը ծածկում էին համեստ հանդերձի եւ խիստ ձեւերի ներքեւ։ Ցունաց կրօնական տօներն եւ խորհուրդները. զորօրինակ Դիոնիսեան եւ Բագոս-

եան տօներն, ամենից գարշելի պղծութեամբ էին կատարվում։ Ս.ինպիսի երգեր էին երգվում եւ ներկայացումներ լինում, որ գրգռում էին մարդկանց ցած կիրքերը։ Յետոյ Հռոմայ մէջ էլ նմանօրինակ պիղծ եւ գարշելի արարողութիւններ էին կատարվում։ Զազրագոյն պղծութիւններ էին վերագրում այդ աստուածներին։ Ոչ միայն բանաստեղծներն էին երգերով գովում նրանց ամօթալի գործերն, այլ եւ պատկերահանները եւ արձանագործները անպարկեշտ պատկերներով եւ արձաններով ցոյց էին տալիս նրանց։ Կորընթոսի մէջ, քաղաքին ամենից ծաղկեալ ժամանակը, Աստղկան նուիրուած խառնաղնաց կիներ սրբազան անձինք էին համարվում։ Կորնթոս իր եկամտից մէկ մեծ մասը այն խառնաղնաց կիներից էր առնում։ Ուստի զարմանալի չէ որ Կորնթոսի բնակիչները նշանաւոր եղան իրանց անառակութեան եւ պղծագործութեան կողմանէ։

Յոյն եւ Հռոմայեցի մատենագիրներից շատերը զօրաւոր կերպով ցոյց են տալիս կռապաշտութեան ապականիչ ազդեցութիւնը։ Պղատոն «Հանրապետութիւն» կոչուած գրքին երկրորդ մասումը խօսում է աստուածներին տրուած յատկութիւնների վնասակար ազդեցութեան վրայ, եւ խրատ է տալիս այնպիսի պատմութիւններ հրապարակաւ չկարդալ, որպէսզի վատ ազդեցութիւն չունենան երիտասարդաց վրայ եւ չքաջալերեն նրանց ոճիրներ գործելու։ Արիստոտել խրատ է տալիս աստուածների անհամեստ արձաններն ու պատկերները հեշտասիրութեան պաշտպան կարծուած աստուածներ-

ին նուիրուած մեհեաններում չմիայն պահել։

Պետրոնիոսի պատմութիւնը լի է վկայութեամբ թէ մեհեանները լցվում էին բազմութեամբ, բազիններ ծածկվում էին նուէրներով, եւ աղօթքներ էին մատուցանվում աստուածներին խնդրելով հաճելի անեն անընական հեշտութիւնները եւ յաջողութիւն տան մարդկանց գողութիւն եւ մարդասպանութիւն անելու։ Սենեկա այս պղծագործութիւնների վրայ նայելով գոչեց. «Բաէ՛, ո՛րչափ մեծ է մարդկանց յիմարութիւնը։ Ս.ինպիսի գարշելի աղօթքներ են անում որ եթէ գիտենան թէ մարդ լսում է նրանց, խսկոյն կլռեն։ Ամօթ չեն համարում ասել աստուածների ինչ որ մարդուն ասել անգամ ամօթ է։» Ասում է նոյն հեղինակը. «Ճշմարիտ չէ ասել թէ անմեղութիւնքիչ տեղ է գտնվում, որովհետեւ բնաւ չէ գտնվում։

Ժողովուրդն անձնատուր եղաւ, ոչ միայն անամօթ անառակութեան այլ եւ սոսկալի անգթութեան։ Հռոմայ մէջ լոկ զուարճութեան համար մարդիկ էին ըսպանվում, բանադատուելով որ ամենի գազանների հետ կռուեն։

Այս տեսակ արիւնահեղ խաղերի առաջին ներկայացումը եղաւ Հռոմում Քրիստոսից 264 տարի առաջ որ ժողովուրդը զուարճանայ մի յուղարկաւորութեան ժամանակ, երբ երեք զոյգ սուսերամարտներ իրար հետ կռուեցին։ Ս.յսպիսի խաղերի անոյշը գնալով աւելացաւ, եւ մարդիկ եղան արեան ծարաւ։ Յուլիոս Կեսար սովորեց որ երեք հարիւր զոյգ սուսերամարտներ իրար հետ կռուեն ժողովրդի զբօսանքի համար։ Նոյնպէս Տրայանոս կայսեր հրամանաւ տասն հազա-

զոյգ սուսերամարտներ կռուեցին որ ժողովուրդը զուարճանայ։

Ամենից վայրագ եւ անգութ գերութիւնը տիրում էր Ցունաստանի եւ Հռոմայ մէջ։ Գերիների տէրերը կատարեալ իշխանութիւն ունէին տանջել եւ մինչեւ իսկ սպանել իրանց գերիներին, եւ շատ անգամ գերիներն ամենաչնչին բանի համար սպանվում էին ամենանգութ կերպով։

Այլեւայլ պարագաների մէջ երեխաներ սպանելն էլ ոճիր չէր համարվում։ Այն ժամանակի քաղաքակրթեալ ազգերի ոմանց մէջ իմաստութիւն էր համարվում հիւանդոտ եւ խեղճ երեխաների սպանելը։

Թէ մարդիկ կարօտ էին աստուածային մասնաւոր յայտնութեան, սրա ի՛նչ աւելի զօրաւոր ապացոյց կարող է լինել քան այն սոսկալի վիճակը որի մէջ գտնվում էին թէ քաղաքակրթեալ եւ թէ բարբարոս ազգեր Քրիստոսի գալստեան ժամանակ։ Աշխարհը իր իմաստութեամբը չճանաչեց Աստուծոյն։ Մարդկային փիլիսոփայութիւնը չկարողացաւ ուրիշ բան անել, բայց եթէ յայտնել մի քանի վերացեալ սկզբունք, որ բաւական չէին զոհ անելու նոյն իսկ փիլիսոփաներին։ Բարձր աստիճանի քաղաքակրթութեան հասած ազգերը անգամ կարող չեղան լուծել Աստուծոյ եւ մարդուս հոգուն վերաբերեալ մեծամեծ խնդիրները։ Թէեւ գրականութիւնն եւ գեղարուեստները զարմանալի յառաջադիմութիւն արին, սակայն մարդիկ մնացին տարակուսի եւ անստուգութեան մէջ մեծամեծ բարոյական եւ հոգեւոր ճշմարտութիւնների վերաբերմամբ եւ բարուց անհնարին ապականութիւնը իբրեւ անխուսափելի արդիւնք այս բարոյական տգիտութեան, տի-

բեց ազգաց մէջ, նոյն իսկ փիլիսոփաները ազատ չը մնացին բարուց ապականութենից։ Փիլիսոփայութիւնը կարողացրեց իր աշակերտներին տեսնել անհնարին չարիքն եւ նրանց վրայ խօսել, բայց չկարողացաւ ցոյց տալ մի հնար որով մարդիկ կարող լինէին ազատուել այն չարիքից, եւ որով մարդկային ընկերութիւնը կարող լինէր մաքրուել։ Մտքի զարգացումը բաւական չեղաւ պահելու մարդկանց՝ բարոյական ապականութենից, եւ ժողովուրդները կրօնական տգիտութեան մէջ մնալով անձնատուր եղան անարգ կռապաշտութեան, որ յառաջ բերաւ ամեն տեսակ զեղծում, անգթութիւն եւ ապականութիւն։ Եւ այսպէս, ինչպէս նախնի փիլիսոփաների մէջ իմաստնագոյների եւ զգաստագոյների, զորօրինակ Սոկրատի, Պղատոնի, Կիկերոնի եւ Սենեկայի վկայութիւններից էլ յայտնի է, այն դարերի մարդիկը կարօտ էին աստուածային մասնաւոր յայտնութեան։

Գրէթէ 2,000 տարի անցաւ նրանից 'ի վեր, եւ այսչափ երկար ժամանակում աշխարհը արագ եւ մեծ յառաջադիմութիւն է արել արուեստների եւ գիտութիւնների մէջ։ Արդարեւ աշխարհը մեծ յառաջադիմութիւն է արել դէպի բարձր աստիճանի քաղաքակրթութիւն, եւ բաց 'ի ճարտարապետութենից եւ անդրիագործութենից, ուրիշ բաների մէջ արդի աշխարհս աւելի բարձր է քան զնախնին։ Ուստի թերեւս գտնուեն մարդիկ որ ասեն թէ աշխարհը Քրիստոսի գալստեան ժամանակ կարօտ էր աստուածային մասնաւոր յայտնութեան, բայց հիմայ կարօտ չէ։

Կարող են թերեւս ասել թէ՝ մարդիկ հիմայ փիլիսոփայութեան եւ բնական գիտութիւնների մէջ այն-

ամի յառաջ են գնացել, որ այսուհետեւ պէտք չունին հանուր յայտնութեան։ Բայց այսպէ՞ս է։

Արդարեւ աշխարհը զարմանալի յառաջադիմութիւն է արել գիտութիւնների շատ ճիւղերում։ Բայց ամենից կարեւոր ճիւղին մէջ ամենեւին յառաջադիմութիւն տրած չէ։ Ասոյդ է որ մարդիկ անխոնջ ջանքով եւ դանդաղելի յաջողակութեամբ մեծամեծ գտնձեր են հասցրել աստեղաբանական, երկրաբանական եւ քիմիական գիտութիւնների մէջ, բայց եթէ Սուրբ Գիրքը մի կողմ թողնենք, պիտի տեսնենք որ այժմ եւս մարդիկ բարոյական եւ հոգեւոր ճշմարտութիւնների մէջ այնպէս ոգէտ են, ինչպէս առաջ էին։ Գիտունք հշմարիտ որ արարածների վերաբերեալ շատ բաներ են գտել, բայց Արարիչը գտնելու համար անկարող են եղել, նամանաւանդ վերջին դարում ոմանք ասել են նոյն իսկ թէ Արարիչը գտնել անհնար է։ Արդի գիտունները յայտնել են նիւթական աշխարհի վերաբերեալ օրէնքներից շատերը, բայց մարդկանց մեծ ոգիտութեան մէջ են թողում մարդուս բարոյական մնութեանը վերաբերեալ հոգեւոր օրէնքների մասին, որոնցից կախուած է ամեն մարդկանց յաւիտենական վիճակը։ Մարդկային իմաստութիւնն անկարող է եղել լուծել Աստուծոյ եւ մարդուս հոգուն վերաբերեալ այն մեծ խնդիրներն որ յուզում են ամեն առողջ միտք։ Վերջին տասնեւութ դարերի բոլոր քննութիւններն անկարող են եղել պատասխան տալ այն խնդիրներին որ սարակուսի եւ վարանոյ մէջ թողուցին հին փիլիսոփաներին, նաեւ անկարող են եղել հաստատի առնել մարդկանց իրանց անմահութեան նկատմամբ։ Այս նիւթերի վրայ արդի փիլիսոփայութիւնը նախնի փի-

լիսոփաների վարդապետութիւններից աւելի լոյս չէ տալիս։ Եթէ Սուրբ գիրքը մի կողմ թողուի, հոգեւոր ճշմարտութեանց վրայ արդի փիլիսոփաները աւելի բան չգիտեն քան նախնիները։

Մենք մեծապէս յարգում ենք բնական գիտութիւններն, եւ ուրախութեամբ ընդունում ենք նրանց միջոցով ճանաչուած ճշմարտութիւնները, բայց եւ այնպէս ասում ենք թէ գիտունների գիտերը, թէեւ օգտակար եւ զարմանալի են, բայց չեն կարող տալ մարդկանց այն տեղեկութիւնները որոնց ամեն բանից առաւել կարօտ են մարդիկ։

Աստեղագէտը, դարձնելով իր դիտակը դէպի երկինք, գտնում է աշխարհներ եւ աշխարհների դրութիւններ, որը լոկ աչքով տեսնել կարելի չէ. բայց միթէ կարո՞ղ է գտնել նաեւ բոլոր այն աշխարհների Արարիչը։ Միթէ աստեղագէտը կարո՞ղ է ասել մեզ՝ ո՞վ է Արարիչը, ո՞ւր է, ի՞նչ է, եւ ի՞նչ է նրա կամքը մարդկային ազգին համար։ Ո՛չ երբէ՛ք։

Նիւթեղէն մարմինների բաղադրութեան վերաբերեալ քիմիական գիտերն իրաւ հիանալի են, բայց մի քիմիագէտ կարո՞ղ է լուծել մարդուս հոգին եւ ասել մեզ թէ ի՞նչ է նրա էութիւնը, անեղծանելի՞ է արդեօք հոգին, եւ կամ ի՞նչ պիտի լինի հոգու վիճակը մարմնի մահից յետոյ։ Ո՛չ երբէ՛ք։

Բնագէտը կարող է քննել նիւթական աշխարհիս օրէնքները, եւ ցոյց տալ բոյսերի եւ անասունների, նաեւ մարդուս մարմնի աճման եւ զարգացման օրէնքները, բայց երբ բնագէտից կպահանջուի ցոյց տալ թէ ի՞նչ է կենդանութեան պատճառն եւ սկիզբը, անկարող է պատասխանելու։ Արդի

փիլիսոփաներն աւելի ձեռնհաս չեն քան թէ նախ-
նիք ճշտիւ պատասխանելու այս հարցմանց. «ի՞նչ
եմ,» «ո՞րտեղից եմ դալիս,» «ո՞ւր եմ գնում,» «վախ-
ճանս ի՞նչ պիտի լինի:» Ոչ մանրացուցով կարող է
տեսնուիլ մարդուս ծագումը, ոչ դիտակով նրա վախ-
ճանը, ոչ էլ քիմիական վերլուծութեամբ կարող է
գիտենալ թէ մեղքը կարելի՞ է որ թողուի, եւ թէ ի՞նչ-
պէս կարող է սուրբ լինել մարդկային սիրտը: Այս
հարցմանց պատասխանելու համար մենք էլ այնպէս
կարօտ ենք աստուածային մասնաւոր յայտնութեան,
ինչպէս էին նախնի Յոյները եւ Հռոմայեցիք:

Թող չկարծուի թէ, եթէ մենք այս խնդիրների
վրայ հիներին պէս տգէտ լինէինք, նրանց բարոյա-
կան ապականութեանը մասնակից չէինք լինիլ: Մար-
դիկ բարոյական սոսկալի ապականութիւնից եւ զեղ-
ծումից այն ժամանակ միայն պահուեցան, երբ գիտա-
ցին այն կարեւոր ճշմարտութիւններն որ վերաբե-
րում էին ճշմարիտ Աստուծոյն, մարդուս առ Աստուած
ունեցած պատասխանատուութեանը, վերջին դատաս-
տանին եւ աստուածային Փրկչի միջոցով եղած փըր-
կութեան: Մարդիկ, ազգեր եւ ժողովուրդներ, այն
ժամանակ են զեղծանում երբ չեն խմում կամ մեր-
ժում են կամ սխալ են հասկանում Սուրբ գրքերի մէջ
յայտնուած մեծամեծ ճշմարտութիւնները: Աշխարհի
պատմութեան հմուտ մարդիկ գիտեն հեթանոս ազգե-
րի այժմեան զեղծ վիճակը. գիտեն թէ անզթութիւն,
մոլութիւն եւ ընդհանուր ապականութիւն ողողած են
նրանց, եւ թէ արդի քաղաքակրթութիւնը չուտով
պիտի փտէր, ինչպէս փտեց հին Յունաց եւ Հռոմա-

յեցոց քաղաքակրթութիւնը, եթէ Աւետարանին սըր-
բարար ազդեցութիւնը չլինէր:

Իբր մի դար առաջ Եւրոպայի ամենից քաղաքա-
կրթեալ ազգաց մինը մերժեց Քրիստոնէութիւնը,
այս ազգին մէջ ուսմունք եւ դիտութիւնք յառաջա-
դիմութեան բարձր աստիճանին էին հասած, եւ փիլի-
սոփայութիւնը պարծենում էր թէ կատարելութեան
մօտեցաւ: Արդարեւ, եթէ մի ազգ կրթութեան մի-
ջոցով, առանց աստուածային մասնաւոր յայտնու-
թեան, երբէք կարող էր ինքն իրան բարոյապէս ուղ-
ղել, Գաղղիա արած պիտի լինէր այս բանն անցեալ
դարու վերջը: Բայց Գաղղիան Աւետարանը մերժելով
ի՞նչ տեսաւ: Աշխարհի վրայ թերեւս երբէք մի տեղ չը
տեսնուեցաւ այնչափ անզթութիւն, չարութիւն եւ բա-
ռուց անմաքրութիւն որչափ Գաղղիոյ հռչակաւոր
մայրաքաղաքում: Արդարեւ Գաղղիոյ մեծ յեղափոխու-
թեան (1792—93) բոլոր սոսկալի անկարգութիւննե-
ը Փարիզի մէջ հրատարակուած անհաւատութեան
չպիտի վերագրենք. բայց եւ այնպէս յայտնի է որ,
երբ այն քաղաքը մերժեց Յիսուս Քրիստոսի Աւետա-
րանը, ինքը իրան պատրաստեց որ մարդկային սրտի
բոլոր կիրքերին մատնուի: Փարիզ քաղաքի քանի մի
տարի առաջ Գերմանացիներից պաշարուելուց յետոյ,
հասարակականաց (քոմիւնարների) կողմից այնտեղ
գործուած ոճիրները հաստատում են այս ճշմարտու-
թիւնը:

Արժան է որ ամեն մարդ կչռէ Գաղղիացի քաղա-
քագէտ եւ պատմաբան Գիզոյի այս խօսքը. «Եր-
բէք երեւակայա՞ծ էք թէ ի՞նչ կլինէր մարդը, մարդ-
կային ազգը, մարդկային ընկերութիւնը, եթէ կրօն-

քը ջնջուէր։ Զեմ վարանիլ ասելու թէ մարդուս եբեւակայութիւնը չէ կարող իր առջեւը բերել թէ ի՞նչ բաներ տեղի պիտի ունենային մեր մէջ եւ մեր շուրջը, եթէ Քրիստոնէական հաւատքը վերանար։ Ոչ ոք կարող է ասել թէ ի՞նչ աստիճան տնկարդութեան եւ վատթարութեան մէջ կընկնէր մարդկութիւնը։»

Հին եւ նոր պատմութիւնը ցոյց է տալիս ուրեմն թէ մարդիկ յետին կարօտութիւն ունին աստուածային մասնաւոր յայտնութեան։

ԳԼՈՒԽ Ե.

ԻՆՉ ՏԵՍԱԿ ԱՊԱՑՈՑՑՆԵՐ ԿԱՆ ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է ՄԱՐԴԿԱՆՑ

Առաջին գլխի մէջ ցոյց տուինք թէ մարդիկ վերջին աստիճանի կարօտութիւն ունին աստուածային մասնաւոր յայտնութեան։ Ճշմարիտ է որ իրաւունք չունինք այս կարօտութիւնից միայն հետեւցնել թէ այնպիսի յայտնութիւն իրօք տրուած է մարդկանց։ Սակայն երբ համոզվում ենք թէ մարդիկ վերջին աստիճանի կարօտութիւն ունին այնպիսի յայտնութեան, պատրաստ կլինենք անաչառապէս քննելու թէ արդարեւ այնպիսի յայտնութիւն տրուա՞ծ է մարդկանց, եւ թէ Քրիստոնէութիւնն աստուածային յայտնութի՞ւն է։

Քրիստոնէութիւնը հիմնուած է Յիսուս Քրիստոսի Աւետարանին վրայ, եւ պնդում է թէ այս Աւետարանը մասնաւոր յայտնութիւն է Աստուծանից, եւ Աւետարանի սովորցրած կրօնքն ուրիշ բոլոր կրօնքներից տարբերվում է նրանով որ նրա ապացոյցները, թէ ըստ որպիսութեան եւ թէ ըստ քանակութեան գերազանց են քան միւս կրօնքների ապացոյցները։

Նախ Քրիստոնէութիւնը ընծայում է պատմական ապացոյցներ։ Բայց ի Քրիստոնէութեան հիմնադրից ուրիշ ոչ եւ իցէ կրօնքի հիմնադիրն ասած չէ, ինչպէս ասաց Քրիստոս. «Եթէ ինձ չէք հաւատում,

զոնէ գործքերին հաւատացէք։» (Յովհ. Ժ. 38) Քրիստոս չպահանջեց առանց ապացոյցի հաւատալ իր խօսքերին միայն։ Իր խօսքերին հետ ցոյց տուաւ նաեւ գործքեր որ այն խօսքերին ճշմարտութիւնը հաստատեցին։ Հրէական կրօնից յետոյ (որ արդարեւ Քրիստոնէութեան մէկ մասն է,) Քրիստոնէութիւնն է միայն որ կանգնած է պատմական հիման վրայ, ուստի եւ նրա փաստերը կարելի է պատմական խիստ եւ անաչառ քննադատութեան տակ դնել։

Ճշմարիտ է թէ Քրիստոնէութեան ծագման վերաբերեալ պատմական դէպքերը տեղի ունեցան շատ դարեր առաջ, եւ այնպիսի ժամանակ երբ ձեռագիր գրքեր միայն կային, որոնց շատերը հիմայ կորած կամ ջնջուած են, բայց եւ այնպէս կան տակաւին բաւական ապացոյցներ, որոնց նայելով կարող ենք բանաւոր հետեւութեան հասնել յիշեալ դէպքերի նկատմամբ։ Երբ նկատում ենք թէ ուրիշ պատմական դէպքերի վերաբերեալ որչափ ապացոյցներ կորած են, արդարեւ սքանչանում ենք աստուածային նախախնամութեան վրայ որ տանեւութ դարեր պահեց Քրիստոնէութեան ծագման վերաբերեալ այնչափ ապացոյցներ։

Երկրորդ՝ Քրիստոնէութիւնը, բաց ի պատմական ապացոյցներից, ընծայում է նաեւ ուրիշ ապացոյցներ, որ յառաջ են գալիս նոյն Աւետարանների պարունակութենից։ Այս երկու տեսակ ապացոյցները քննելուց առաջ համառօտ նայուածք գցենք նրանց վրայ։

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ.

1, Պատմական ապացոյց կայ, որ Յիսուս Քրիս-

տոս կոչուած մարդը արդարեւ ապրել է Պաղեստինում իբր տասնեւութ դար առաջ, եւ իրան համար ասել է թէ Աստուծոյ Որդի է եւ Աստուածանից ուղարկուած է մարդկանց իրանց մեղքերից փրկելու համար։

2, Պատմական ապացոյց կայ, որ Յիսուս Քրիստոսի ծնվելուց շատ դարեր առաջ Հին Կտակարանի մարգարէները աստուածային Փրկչի գալստեան վերաբերեալ շատ դուշակութիւններ են արել։ Թերեւս ոմանք ուրանան մարգարէների Աստուածանից ներշնչեալ լինելը, բայց չեն կարող ուրանալ թէ մարգարէները այն դուշակութիւններն արին Քրիստոսի աշխարհ գալուց դարեր առաջ։ Մարգարէները Փրկչի ծննդեան ժամանակին, տեղին եւ եղանակին, նրա թէ՛ կենաց եւ թէ՛ մահուանը վերաբերեալ պարագաների նկատմամբ շատ մանրամասն կանխասացութիւններ արին, եւ կան շատ պատմական ապացոյցներ, թէ բոլոր այս մանրամասն կանխասացութիւններն իրօք կատարուեցան Յիսուս Քրիստոսի ծննդեան, կենաց եւ մահուան ժամանակը։

3, Կան պատմական ապացոյցներ, թէ Յիսուս աշխարհիս վրայ երեւացող երեւելի մարդկանց մէջ ամենից նշանաւորն էր, թէ ուրիշ բոլոր մարդկանցից որոշվում էր իր վարուց բարոյական կատարելութեան, իր վարդապետութիւնների երկնային խմաստութեան, իր հրաշագործութիւնների, յարութեան եւ երկինք համբառնալու կողմանէ։

4, Պատմական ապացոյցներ կան թէ Յիսուս Քրիստոս արաւ այնպիսի ազդեցութիւն որ, թէ՛ որակութեան եւ թէ՛ տարածութեան կողմանէ, աշխարհիս

վրայ գործուած ազդեցութիւնների ամենից նշանաւորն է։

Պատմութիւնը վկայում է թէ Յիսուս Քրիստոսի ազդեցութիւնը իր ազգի մէջ միայն չամփոփուելով, ուրիշ թէ բարբարոս եւ թէ քաղաքակիրթ ազգաց վրայ էլ տարածուեցաւ, թէ այն ազդեցութիւնը Քրիստոսի ժամանակին միայն յառուկ չէր, այլ երկարացաւ մինչեւ այսօր, եւ թէ այն ազդեցութիւնը ոչ միայն ազգերի բարուց, սովորութիւնների եւ օրինաց մէջ արտաքին բարեկարգութիւն յառաջ բերաւ, այլ եւ հոգեւոր յեղափոխութիւն գործեց մարդկանց սիրտերի մէջ։

Եթէ այս կէտերն ապացուցանելու բաւական պատմական փաստեր կան, ապա Քրիստոնէութիւնը կանգնած է պատմական անխախտ հիման վրայ։

Բ. ՆՈՅՆ ԻՍԿ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԻՑ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ։

1, Եթէ Յիսուս Քրիստոսի յատկութիւններն, ինչպէս որ Աւետարանների մէջ ցոյց են տրուած, լաւ քննուին, առողջ մտքի տէր եւ անաչառ մարդիկ պիտի համոզուին, թէ մաքսաւոր Մատթէոսի եւ ձկնորս Յովհաննէսի նման մարդիկ պիտի չկարողանային այնպիսի յատկութիւնների տէր մէկ անձն ներկայացնել, եթէ այսպիսի անձն իրօք ապրած չլինէր. թէ Աւետարանիչներն անուս մարդիկ լինելով պիտի չկարողանային գրել Աւետարանների մէջ գտնուած վարդապետութիւնները, եթէ Յիսուս Քրիստոս այն վարդապետութիւններն իրօք սովորցրած չլինէր, նաեւ

թէ, Յիսուս, որ Բեթլեհէմ ծնուած, բնակիչների տխմարութեանը կողմանէ նշանաւոր Նազարէթ գիւղին մէջ սնուած, եւ մանկութիւնից Հրէից բոլոր նախապաշարումները լսած էր, եթէ արդարեւ էր այնպիսի անձ ինչպէս նկարագրում են աւետարանիչները, եւ եթէ իրօք սովորեցրեց այն վարդապետութիւնները որը աւետարանիչները վերագրում են նրան, ապա նրա ծագումը բարձր էր՝ քան թէ լոկ մահկանացու մարդու ծագումը։ Միով բանիւ, անկարելի էր որ այսպիսի իմաստութիւն բղխէր Նազարէթից, եւ մի այսպիսի կատարելութիւն՝ մարդկային ապականութենից։

2, Սմեն անաչառ մարդ ուշադրութեամբ բաղդատելով Աւետարանների վարդապետութիւններն այն բաների հետ որ բնութիւնը սովորեցնում է, պիտի համոզուի թէ այն երկուսի մէջ այնպիսի զարմանալի համաձայնութիւն կայ, որ ցոյց է տալիս թէ Աւետարաններն եւ բնութիւնը միեւնոյն աստուածային աղբիւրից են բղխած։

Աւետարանի կատարելութիւնը ցոյց է տալիս թէ Աւետարանն արդարեւ պիտի Աստուածանից բղխած լինի։ Աւետարանն աստուածային յատկութիւններ ունի, ուստի եւ Աստուածանից ծագած պիտի լինի։

Հիմայ համառօտիւ քննենք ապացոյցները։

Ա. Կան պատմական փաստեր որ հաստատում են թէ արդարեւ Յիսուս Քրիստոս կոչուած մի անձ եկաւ աշխարհք, ապրեց Պաղեստինի մէջ աւելի քան տասնեւութ դար առաջ։ Այս պատմական փաստերը հետեւեալներն են։

1, Այն մարդկանց գրաւոր վկայութիւնը որ Յի-

սուս Քրիստոսին անձամբ տեսան, նրա վարդապետութիւնները լսեցին, նրա հետ խօսեցին եւ քաջ ծանօթ էին նրա հետ։ Այս անձինքը հաստատութեամբ վկայում են թէ արդարեւ Յիսուս Քրիստոս ապրեց աշխարհի վրայ։ Այս վկայութիւնը ուսող անձանց արժանահաւատութեանը վրայ յետոյ կխօսենք։

2, Անուանի Հրէայ պատմիչ Յովսեփոսի վկայութիւնը, որ ծնուեց Քրիստոսի թուականին 37ին, եւ ապրեց Երուսաղէմումը։ Նրա պատմութեան տասներորդ գրքի երրորդ գլխի մէջ, համաձայն բոլոր ձեռագիր օրինակաց, գտնվում է հետեւեալ վկայութիւնը. «Յիսուս կոչուած մի իմաստուն մարդ կար այն ժամանակը, եթէ արժան է մարդ անուանել նորան, քանզի այս անձը հրաշագործ էր եւ վարդապետ այն մարդկանց որ ճշմարտութիւնը սիրով ընդունում էին։» Նոյն գլխի մէջ վկայում է նաեւ թէ Յիսուս սպանուեցաւ, եւ իր մահից երեք օր յետոյ աշակերտներին երեւեցաւ։ Շատ վէճ է եղած Յովսեփոսի այս նշանաւոր վկայութեան վրայ, բայց որովհետեւ այն վկայութիւնը գտնվում է նրա պատմութեան բոլոր հին օրինակների մէջ, ինչո՞ւ չընդունենք այն իբրեւ հարազատ։

3, Երեւելի Հռոմայեցիների վկայութիւնը։ Տակիտոս, որի իբրեւ պատմագիր արժանահաւատութիւնը ծանօթ է, վկայում է թէ Յիսուս Քրիստոս ապրեց Պաղեստինում, եւ ի մահ դատապարտուեցաւ Պոնտացի Պիղատոսից։ Մի ուրիշ վկայութիւն գտնվում է մի նամակի մէջ, որը Պլինիոս Հռոմայեցի կուսակալը գրեց Տրայիանոս կայսերին։

4, Քրիստոնէութեան թշնամիների վկայութիւնը։

Քրիստոնէութեան թուականի երկրորդ դարում, Կելսոս Դուկիանոս եւ այլք յարձակուեցան Քրիստոնէութեան դէմ, բայց սրանց եւ ոչ մէկը չուրացաւ թէ Յիսուս Քրիստոս անուանով կոչուած մի անձ իրօք ապրեց Պաղեստինում։

5, Նոյն իսկ Քրիստոնէական եկեղեցու գոյութիւնից ծագած վկայութիւնը։ Եթէ դարէ դար յետ գնանք, այս եկեղեցու սկիզբը կգտնենք այն դարու մէջ, որում ասվում է թէ ապրեց Յիսուս Քրիստոս, եւ եթէ Քրիստոս իրօք ապրած չլինէր, Քրիստոնէական եկեղեցին որ բաց ի Քրիստոսից ուրիշ հիմ չունի՝ ինչպէս կարող էր հաստատուել, եւ խսկոյն ձեւանալ եւ զարգանալ վարդապետութիւններով եւ կարգերով, որոնց բոլորն էլ Քրիստոսին են յիշեցնում։

Արդարեւ այնպէս անթերի են վկայութիւնները որ հաստատում են թէ Յիսուս Քրիստոս իրօք ապրեց աշխարհի վրայ, որ անհաւատներն իսկ չեն ուրանում այս իրողութիւնը։ Արդի անհաւատների ամենից նշանաւորները ընդունում են թէ Յիսուս իրօք ապրեց աշխարհի վրայ, եւ հիմնադիր եղաւ Քրիստոնէութեան։ Շտրաուս, որ այս դարուս Աւետարանի հակառակորդների մէջ ամենից յաջողակն էր, եւ Աւետարանները շատ խստիւ քննադատեց, ընդունում է թէ Յիսուս Նազովրեցի իրօք ապրեց։

Ուրիշ անհաւատներ ընդունում են թէ Աւետարանները հին դիցաբանութիւնների կարգը չեն կարող դատել։ Ռենան ստուգիւ չէր գրել Յիսուսի վարքը, եթէ չհաւատար թէ այնպիսի անձ իրօք ապրեց։ Ռենան ուրանում է Յիսուս Քրիստոսի աստուածութիւնը, բայց ընդունում է թէ Յիսուս կոչուած մի անձ

իրօք ապրեց աշխարհի վրայ։ Հռովմէական պետութեան անկման պատմութիւնը գրող Անդղիացի անուանի պատմիչը՝ Գիբբըն ընդունում է նոյնպէս թէ Յիսուս Քրիստոս ոչ թէ դիցաբանական, այլ պատմական մի անձ է, այսինքն թէ Յիսուս Քրիստոս ապրեց աշխարհի վրայ։

Մարդիկ որչափ եւ տարբեր կարծիք ունենան Յիսուս Քրիստոսի յատկութիւնների եւ գործերի վրայ ամենքն էլ, թէ անհաւատ թէ Քրիստոնեայ, միաբան են սրանում թէ Յիսուս Քրիստոս կոչուած անձ իրօք ապրել է աշխարհի վրայ։ Չկայ անցեալ դէպք որ պատմական աւելի զօրեղ ապացոյցներով հաստատուած լինի։

Բ. Կան Յիսուս Քրիստոսի միջոցով աշխարհի վրայ եղած ազդեցութեան նկատմամբ պատմական փաստեր որ բերվում են անցեալ տասնեւութ դարերից։

1, Հազարաւոր, ուսեալ եւ անուս արժանահաւատ անձինք վկայում են թէ, Յիսուս Քրիստոս արտաքոյ կարգի ազդեցութիւն է գործած իրանց սրտերի եւ վարուց վրայ։

2, Անաչառ պատմիչներ վկայում են թէ Յիսուս Քրիստոս ընդհանուր ազդեցութիւն ունեց հասարակութիւնների եւ ազգաց վրայ։

Այս պատմիչների վկայութեան վրայ կխօսենք յետոյ։

Գ. Կան Յիսուս Քրիստոսի գերբնական յատկութեանը, սքանչելագործութիւնների, բարոյական կատարելութիւնների, երկնային իմաստութեանն, հրաշալի կարողութեանը եւ յարութեանը նկատմամբ տեսակ տեսակ վկայութիւններ, որոնց մեծ մասը գտնվում են Աւետարան կոչուած պատմական գրքերի մէջ։ Եթէ

այս գրքերն իրրեւ արժանահաւատ ընդունենք, նրանց վկայութիւնը բաւական եւ համոզիչ է, եւ այլեւս տեղի չէ մնում տարակուսելու թէ Յիսուս Քրիստոս հրաշքներ գործեց, մեռելներից յարութիւն առաւ, եւ թէ, ինչպէս ինքը վկայեց իրան համար, էր արդարեւ Որդի Աստուծոյ։ Բայց այս գրքերը զուտ պատմա՞կան են, արժանի՞ են կատարեալ վստահութեան, ունի՞նք արդեօք նաեւ ուրիշ այնպիսի պատմական վկայութիւններ, որ կարենանք նրանց վարդապետութիւնները ընդունել երրեւ զուտ ճշմարտութիւն։ Որպէսզի կարենանք այս գրքերը կատարեալ վստահութեամբ ընդունել, պէտք է որ բաւական ապացոյց ունենանք հաստատելու նրանց նկատմամբ հետեւեալ երեք կէտերը.

1, թէ Աւետարան կոչուած այս պատմական գրքերը ստուգիւ գրուած են առաջին դարում, եւ են արդարեւ գրուածք Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի.

2, Թէ այս գրքերը հասած են մեզ ճիշտ այնպէս, ինչպէս որ գրուեցան աւետարանիչներից, առանց ամենեւին նրանց մէջ մի բան աւելացրուած լինելու։

3, Թէ այս գրքերը հաւատալի են այսինքն թէ, նրանց հեղինակներն արժանահաւատ վկաներ էին այն բաներին որը յիշում են իրանց գրուածքների մէջ։

Եթէ բաւական պատմական ապացոյցներ կան հաստատելու վերոյիշեալ երեք կէտերը, ապա Քրիստոնէութեան աստուածային ծագումը պատմաբանօրէն կհաստատուի։

ԳԼՈՒԽ Զ.

ԿԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ ԹԷ ՁՈՐՍ ԱՌԵՏԱՐԱՆՆԵՐՆ ԱՐԴԱՐԵՒ ԳՐՈՒԱԾ ԵՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒՍ ՄԱՏԹԷՈՍ, ՄԱՐԿՈՍ, ՂՈՒԿԱՍ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆՈՒՆ ԱՌԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻՑ։

Ոչով չէ ասում թէ Աւետարանները վերջին դարերի մէջ գրուած են, ոչ ոք չէ ուրանում նրանց հնութիւնը։ Թէ Աւետարանները կային Քրիստոնէութեան չորրորդ դարում եւ ընդհանուր ընդունուած էին իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք, այս մասին պատմական փաստերն այնչափ շատ եւ այնպէս բացայայտ են որ հարկ չենք համարում մի բառ մխոջէ մէջ բերել նրանց։ Չորրորդ դարուց առաջ Աւետարաններն ուրիշ լեզուների թարգմանուած, Նոր Կտակարանի գրոց ցանկեր հրատարակուած, այն գրոց վրայ մեկնութիւններ գրուած, Աւետարանների դէմ հերետիկոսաց եւ անհաւատների կողմանէ յարձակումներ եղած էին, ուստի եւ յայտնի է թէ այն ժամանակ Աւետարանները կային։ Չորրորդ դարու մատենագրաց գործերից աւելի քան հարիւր գրութիւններ պահուած են մինչեւ հիմայ, որոնք քիչ թէ շատ բան յիշում են Աւետարանների վրայ, ուստի եւ յայտնի է թէ այն դարու մէջ Աւետարաններն ընդհանուր ընդունուած էին իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք։

Եթէ ուրիշ մարդիկ գրեցին Աւետարանները, եւ ոչ աւետարանիչք, հարկ է որ այն գրքերը չորրորդ դարուց առաջ գրուած լինին։

Բայց ի՞նչ ապացոյց կայ որ Աւետարաններն երկրորդ, երրորդ կամ չորրորդ դարու մէջ խարերայ մարդկանց ձեռքով չգրուեցան։ Այս մասին երկու տեսակ ապացոյցներ կան։

Ա. Առաջին տեսակ ապացոյցները նոյն իսկ Աւետարաններին մէջ են գտնվում։

Նախ, բուն լեզուն որով Աւետարանները գրուած են՝ զօրաւոր ապացոյց է թէ այն գրքերը գրուեցան Հրէաներից որ Պաղեստինում էին բնակվում առաջին դարու մէջ։ Լեզուագէտներին ծանօթ է թէ բոլոր լեզուների մէջ դարէ դար փոփոխութիւններ են տեղի ունենում։ Հին եւ նոր Յունարէնի մէջ, ինչպէս նաեւ հին եւ նոր Հայերէնի մէջ, մեծ տարբերութիւն կայ։ Այս տարբերութիւնները ոչ թէ միանգամից այլ դարէ դար սակաւ սակաւ են տեղի ունեցած։ Ուստի լեզուագէտները որ մի լեզուի պատմութիւնը քաջ ասորած եւ բոլոր փոփոխութիւնները հետազօտած են, մի գրքի լեզուից կարող են որոշել այն դարը որում գրուած է այն գիրքը։

Նաեւ ծանօթ է լեզուագէտներին թէ հին Յունարէն լեզուն ունէր այլ եւ այլ գաւառական բարբառներ։ Ամեն գաւառի մէջ միեւնոյն կերպով չէր խօսվում եւ չէր գրվում։ Յունագէտք հին Յունարէնը բաժանած են չորս գլխաւոր ճիւղերի, բայց նաեւ իւրաքանչիւր գաւառ ունէր իրան յատուկ ոճերն եւ ձեւերն, այնպէս որ մի լեզուագէտ մի գրքի ոճերից

եւ ձեւերից կարող է հաւատի դիտենալ թէ այն գիրքն որ դաւառի մէջ է գրուած։

Աւետարանները Յունարէն լեզուով են գրուած, բայց այս լեզուն մաքուր Յունարէն չէ ինչպէս խօսում էին Յունաստանի մէջ, այլ այն Յունարէնն է որ խօսում էին Պաղեստինում բնակուող Հրէայք։ Այս Յունարէնի մէջ շատ Եբրայական եւ Ասորական ոճեր կան։

Լեզուագէտները կարող են որոշել ոչ միայն տեղը ուր գրուած են Աւետարանները, այլ եւ ժամանակը՝ երբ նրանք գրուեցան։ Լեզուագէտք մանր հետազօտութեամբ հաստատած են թէ Աւետարանների յատուկ լեզուն դադարեց խօսելուց Երուսաղէմի աւերումից եւ Հրէից ցրուելուց յետոյ, իբր 70 – 71ին յետ Քրիստոսի։ Լեզուագէտներից ոմանք ասում են թէ Յովհաննէս առաքեալի մահուանից յետոյ աշխարհիս վրայ մարդ չկար որ կարող լինէր Եբրայաբնակական լեզուով, այսինքն Աւետարանների լեզուով գիրք գրել։ Ուստի նոյն իսկ Աւետարանների լեզուից յայտնի է թէ նրանք գրուեցան Երուսաղէմի կործանումից առաջ կամ քիչ յետոյ։

Երկրորդ, ամեն դար եւ ամեն ազգ ոչ միայն իրան լեզու, այլ եւ իրան յատուկ դաղափարներ, զգացումներ եւ նախապաշարումներ ունի, եւ որ եւ իցէ մատենագիր բոլորովին ազատ չէ իր դարու եւ ազգի ազդեցութիւնից։ Աւետարաններից յայտնի է որ նրանց հեղինակները Հրէայ էին, քանզի աւետարանիչները յաճախ ցոյց են տալիս թէ Հրէական դաղափարներ եւ նախապաշարումներ ունէին։ Նրանք պատմում են ոչ միայն Յիսուսի վարդապետութիւններն, որոնք

բոլորովին ազատ էին Հրէական նախապաշարումների ազդեցութիւնից, այլ եւ նկարագրում են այն եղանակն որով ընդունեցին այն վարդապետութիւնները, եւ նկարագրութեան եղանակից յայտնի է թէ Աւետարանները գրողներն Հրէայ էին։

Երկրորդ. Աւետարանները շատ անգամ քաղաքական, եկեղեցական եւ ընկերական դէպքերի վերաբերեալ ակնարկութիւններ են անում։ Այս ակնարկութիւնները համաձայն են ճիշտ այն դարին որում ասվում է թէ գրուած են Աւետարանները։ Մարդիկ խիստ քննութիւններ են արել, բայց չեն կարողացել գտնել Աւետարանների մէջ որ եւ իցէ հետք կամ նշան որ ցոյց տայ թէ նրանք աւելի յետին դարում են գրուած։

Եթէ աւետարանիչներն աւելի յետին ժամանակների մէջ ապրած լինէին, անկարելի էր նրանց այնպէս մանրամասն կերպով խօսել այլ եւ այլ դէպքերի վրայ առանց սխալուելու։ Մի ճշմարտախօս եւ անկեղծ պատմագիր կարող է ճշտիւ եւ համարձակութեամբ յիշել ժամանակակից դէպքերը, բայց ամենից հանճարեղ պատմագիրք իսկ չեն կարող յաճախ յիշել մի անցեալ դարի վերաբերեալ դէպքերն առանց երբեմն սխալուելու։ Ամենից զգոյշ եւ կարող պատմագիրք անցեալ դէպքերի նկարագրութեան ժամանակ սխալներ են անում։ Սակայն ժամանակակից դէպքերի նկատմամբ ամենեւին սխալ չգտնուիլ Աւետարանների մէջ, ուստի եւ շատ հաւանական է թէ նրանց հեղինակներն ապրեցին առաջին դարում որին վերաբերվում են այն դէպքերը որ յիշվում են նրանց գրուածների մէջ։

Ուրեմն, նոյն իսկ Աւետարանների լեզուից, ոճից եւ պարունակութիւնից զօրաւոր ապացոյց կայ թէ նրանք գրուած են Հրէաների ձեռքով որ ապրում էին Պաղեստինում Երուսաղեմի կործանումից (70—71 յետ Քրիստոսի) առաջ կամ մի փոքր յետոյ. եւ եթէ այն ժամանակ գրուեցան, բոլորովին անհաւատալի է կարծել թէ աւետարանիչներից գրուած չեն, վասն զի ի՞նչպէս կարելի է որ խաբեբաներ գրքեր հրատարակէին իբրեւ աւետարանիչներից գրուած, քանի որ սրանցից ոմանք կենդանի էին, եւ կարող էին երեւան հանել նրանց խաբէութիւնը։

Բ. Երկրորդ տեսակ ապացոյցները պ ա տ մ ա կ ա ն ապացոյցներ են։

Հարկ չէ մեզ մեր դարից մինչեւ չորրորդ դարը քայլ առ քայլ ետ գնալ ցոյց տալու համար թէ այն դարում կային Աւետարանները, քանզի ուսեալ մարդկանցից ոչ ոք չէ ուրանում թէ Աւետարանները չորրորդ դարու սկիզբումը կային եւ առհասարակ իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ընդունուած եւ յարգուած էին, եւ չորրորդ դարից սկսելով կարող ենք հետազօտել Աւետարանները դէպի երրորդ եւ երկրորդ դարն եւ մինչեւ այն ժամանակն երբ աւետարանիչներից ոմանք եւ նրանց աշակերտներից շատերը դեռ ողջ էին, եւ բաց ի դմանէ, կան նաեւ համոզիչ ապացոյցներ թէ բոլոր այս ժամանակի մէջ Աւետարանները իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ընդունուած եւ յարգուած էին այնպիսի մարդկանցից որ լաւագոյն պատեհութիւն ունէին քննելու թէ այն գրքերն իսկապէս նրանց գրուածքնե-

ըն էին թէ ոչ։ Այս ապացոյցների գլխաւորները հետեւեալներն են։

1։ Նոր Կտակարանի գրոց հին ցանկերը, 2. Հին թարգմանութիւնները, 3. Հին ձեռագիրները, 4. Հին հեղինակների գրութեանց մէջ Աւետարաններից բերուած վկայութիւնները, 2. Քրիստոնէութեան առաջին դարերի մէջ հերետիկոսների եւ անհաւատների կողմանէ Աւետարանները իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ճանաչուած լինելը։

Այս ապացոյցները մի առ մի յիշելու համար հատորներ պէտք է, սակայն մենք այստեղ համառօտիւ միայն մէջ պիտի բերենք նրանք։

1. Ն ո ր Կ տ ա կ ա ր ա ն ի գ ր ո ց հ ի ն ց ա ն կ ե ր ը։

Երրորդ եւ չորրորդ դարում աւետարանիչների եւ առաքելոց իբրեւ հարազատ գրուածք ընդունուած եւ յարգուած գրքերի ցանկերը հրատարակուած էին։ Այս ցանկերից ոմանք դեռ կան։ Այս ցանկերը պատրաստել են իրանց հմտութեան կողմանէ նշանաւոր մարդիկ, ինչպէս Որոգինէս, Եւսեբիոս, Աթանաս, Հերոնիմոս, Օգոստինոս եւ այլք. եւ որովհետեւ այս մարդիկ իրարից շատ հեռու տեղեր էին ապրում, նոքանց ցանկերից կարող ենք իմանալ թէ այն ժամանակ մարդկանց ընդհանուր զաղափարն ի՞նչ էր Նոր Կտակարանի գրոց հեղինակների վրայ։ Սուրբ գրոց այս ցանկերից յայտնի է թէ Քրիստոնեայ եկեղեցիք գիտակցութեամբ չէին ընդունած այն գրքերն իբրեւ աւետարանիչների եւ առաքելոց հարազատ գրուածք, այլ պահանջում էին զօրաւոր ապացոյց թէ այն գրքերը գրուած էին այն անձանց կողմանէ ո-

բոնց վերագրում էին։ Այս ցանկերից յայտնի է թէ եկեղեցիներից ոմանք մի ժամանակ տարակուսուած էին այլեւայլ թղթոց առաքեալների կողմանէ գրուած լինելուն վերայ, բայց Աւետարանները նոյն իսկ աւետարանիչների կողմանէ գրուած լինելուն մասին բնաւ տարակոյս չէր եղած։ Բոլոր ցանկերի մէջ Աւետարանները յիշուած են իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների։ Եթէ բայց ի այս ցանկերից ուրիշ ապացոյց չունենայինք, Աւետարանների անուանց այս հին յիշատակութիւնը միայն բաւական էր ցոյց տալու թէ առաքելոց մահուանից ոչ աւելի 200 տարի յետոյ չորս աւետարանները առհասարակ ընդունուած եւ յարգուած էին իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք։ Սակայն կան նաեւ ուրիշ ապացոյցներ։

2. Աւետարանների հին թարգմանութիւնները։

Քննադատները ընդունում են թէ մի գրքի հնութեանը համար չկան ապացոյցներ այնպէս անժխտելի ինչպէս այն գրքի հին թարգմանութիւնները։ Արդ, Աւետարանների հնութեան եւ հարազատութեան համար այս ապացոյցը կայ։ Աւետարանները, իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք, այլ եւ այլ լեզուների էին թարգմանուած Քրիստոնէական թուականի առաջին դարումը։ Աւետարանների հնութիւնը եւ հարազատութիւնը ցոյց տուող կարեւոր թարգմանութիւնները հետեւեալներն են։

Ա. Հին Ասորէերէն թարգմանութիւնը։

Այս թարգմանութիւնը ընդհանուր ընդունուած է իբրեւ շատ հին, եւ նորա հնութեան մէկ ապացոյցը սա է, որ այն թարգմանութեան մէջ չեն գտնվում

Նոր կտակարանի այն գրքերն որոնց առաքեալներից գրուած լինելուն տարակոյս կար Քրիստոնէական թուականի սկիզբումը։ Նաեւ գիտունք Ասորերէն թարգմանութեան ոճերն եւ ձեւերը մանր քննելով համոզուած են թէ երկրորդ դարում է եղած այս թարգմանութիւնը։ Ոմանք ասում են թէ Նոր կտակարանն Ասորերէնի թարգմանուեցաւ երկրորդ դարի վերջերը, այլք ասում են թէ երկրորդ դարի կիսում, իսկ այլք ասում են թէ երկրորդ դարի սկիզբի մօտ, այսինքն Յովհաննէս առաքեալի մահուանից քանի մի տարի յետոյ միայն։

Նոր կտակարանի այն գրքերն որ Ասորերէն թարգմանութեան մէջ չեն գտնվում, են Պետրոս առաքեալի երկրորդ թուղթը, Յովհաննէս առաքեալի երկրորդ եւ երրորդ թուղթերը, Յուդա առաքեալի թուղթը եւ Յայտնութեան գիրքը։ Ուրեմն այս թարգմանութիւնը ցոյց է տալիս թէ աւետարանները կային եւ իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ընդունուած էին այն ժամանակ երբ այն թարգմանութիւնը եղաւ, եւ նրանից առաջ իսկ, վասնզի կարող ենք հետեւցնել թէ բաւական ժամանակ անցաւ մինչեւ որ Նոր կտակարանի գիրքերն իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ճանաչուեցան եւ ընդունուեցան եկեղեցիներից եւ մէկ գրքի մէջ ժողովուելով թարգմանուեցան օտար լեզուների։

Բ. Հին Իտալական թարգմանութիւնը։

Պէտք է զանազանել այս թարգմանութիւնը Վուլկատա կոչուած թարգմանութիւնից որ եղաւ չորրորդ դարում։ Հին Իտալական թարգմանութեան բոլոր պարագաները ցոյց են տալիս նրա մեծ հնութիւնը,

եւ այս հնութեան նշանները կան Լատին Քրիստոնեաների առաջին գրուածքների մէջ։ Որովհետեւ այն թարգմանութիւնն ընդհանուր գործ էր ածւում հիւսիսային Աֆրիկայում Տերտուղիանոսի ժամանակ, որ իբր 160ին ծնուեց Կարքեդոնում, հարկ է որ այն թարգմանութիւնն 150ին կամ աւելի առաջ եղած լինէր։ Այս թարգմանութիւնն ամբողջապէս պահուած չէ, բայց Աւետարանների թարգմանութիւնը հասած է մինչեւ մեր ժամանակ, եւ ցոյց է տալիս թէ Աւետարանները կային իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ընդունուած, եւ յարգուած էին քրիստոնէական 150 թուականի ժամանակները։

Գ. Մուրատորեան հատուած։

Այս անունը տրվում է մի ձեռագիր կտորի որ վերաբերում է Նոր կտակարանի գրքերին, եւ որը գտաւ Մուրատորի անուն իտալացի մի բանասէր Միլանի Ամբրոսեան գրատանը։ Այս ձեռագրի մէջ մեծ հնութեան նշաններ են տեսնվում։ Ժամանակը որում գրուած է այս ձեռագիրը՝ որոշվում է նրանով, որ այն ձեռագրում յիշվում է Հերմասի Հովիւ անուանուած մի ուրիշ գրուածքը, որ «Հերմաս մօտերս մեր օրով գրեց,» ասում է ձեռագիրը, «մինչ նրա եղբայրը՝ Պիոս, Հռոմի մէջ եկեղեցոյ աթոռի վրայ էր։» Պատմութենից գիտենք թէ Պիոս վախճանուեց 157ին, ուստի եւ այս հատուածը յիշեալ թուականից փոքր յետոյ գրուած պիտի լինի։

Այս ձեռագրի մէկ մասը կորած է, բայց մնացեալ մասերը բաւական ցոյց տալու թէ այն ժամանակ Աւետարանները կային եւ ընդհանուր ընդունուած եւ

յարգուած էին իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք։

3. Աւետարանների հին ձեռագիրներն որ տակաւին կան։

Շատ պատճառներ կան, թէ ինչու համար մինչեւ հիմայ չեն պահուած շատ դարեր առաջ գրուած գրքերից շատ օրինակներ։

Նախ, այն ժամանակ տպագրութիւն չկար, եւ բոլոր հին գրքերը ձեռագիր էին։ Գրքեր օրինակել դժուարին էր եւ շատ ծախք էր պահանջում, ուստի առաջին դարերի գրքերի օրինակները ներկայ դարիս տպագրուած գրոց հետ բաղդատելով շատ քիչ էին։

Երկրորդ, հին ձեռագիրներից շատերը գրուած էին պապիրոսից չինուած թղթի վրայ, որ շատ չէր դիմանում։ Պապիրոսի վրայ գրուած մի ձեռագիր որ միշտ գործ էր ածվում՝ չէր կարող դիմանալ աւելի քան քառասուն կամ յիսուն տարի։ Պապիրոսի վրայ գրուած բոլոր հին գրքերից միայն մի քանի հատ են պահուած Եգիպտոսի գերեզմանների եւ Հերգուլանում քաղաքի աւերակներումը։ Նոր կտակարանի ամենից հին երեք ձեռագիրները, որ տակաւին պահուած են՝ գրուած են ոչ պապիրոսի, այլ մագաղաթի վրայ, որ չինվում էր ոչխարի կամ այծի մորթուց եւ թանդ էր։ Սինայեան կոչուած հռչակաւոր ձեռագիրը որը Տիշենդորֆի մի քանի տարի առաջ գտաւ Սինա լեռան Սուրբ Կատարինէի վանքումը՝ գրուած էր վայրի այծի մորթուց չինուած մագաղաթի վրայ, եւ ամեն երկու թերթի համար գնացել էր մէկ այծի ամբողջ մորթ։ Բայց շատ քիչ ձեռագիրներ այսչափ սուղ նրութի վրայ գրուած են։

Երրորդ, առաջին դարում հասարակաց գրատուններ կամ գիւաններ չկային որոնց մէջ պահուէին ձեռագիրները։ Ուստի, զարմանալի չէ որ շատ քիչ ձեռագիրներ են պահուած մինչեւ այսօր։

Հիմա չկայ Հոմերոսի գրքից մի ամբողջ օրինակ որ երեքհարիւրերորդ դարուց առաջ գրուած է։ Հերոդոտոսի պատմութիւնից, որ շատ կարեւոր գիրք է, տասնեւվեց օրինակներ միայն կան։ Նշանաւոր հեղինակների շատերի գործերից մէկ մէկ հատ օրինակ է միայն պահուած մինչեւ ցարդ։ Հին երեւելի հեղինակների բոլոր գործերից վեց կամ եօթը ձեռագիր միայն կան, որ վեցերրորդ դարուց առաջ գրուած են։

Սակայն Նոր կտակարանի ձեռագիր օրինակներն որ տակաւին շատ կան՝ եւ շատ են գերազանցում բոլոր ուրիշ հին գրքերը թէ՛ իրանց թուոյն եւ թէ՛ հնութեան կողմանէ։ Գիտունները մինչեւ ցարդ Նոր կտակարանի գրքերի իբր հազար վեց հարիւր ձեռագիր օրինակներ են գտած եւ քննած։ Ցիշեալ ձեռագիրներից շատ քիչերն են պարունակում Նոր կտակարանի բոլոր գրքերը։ Կէսք պարունակում են Աւետարանները միայն, այլք՝ առաքելոց գործքերն եւ ընդհանրական թղթերը միայն, եւ այլք Յայտնութեան գիրքը միայն։ Այս հազար վեց հարիւր ձեռագիր օրինակներից հարիւրը պահուած են Եգիպտոսում եւ Պաղեստինում, երեք հարիւր քսանը՝ Իտալիայում, երկու հարիւր յիսունը՝ Անգղիայում, երկու հարիւր երեսուն եւ ութը՝ Գաղղիայում, եւ սրանց մեծագոյն մասն գտնվում են Փարիզի ազգային գրատանը, եօթանասուն օրինակ Ռուսիայում, եւ մնացեալները ուրիշ տեղեր։

Այն դարն որում այս ձեռագիրներից իւրաքանչիւրը գրուած է գիտուններ կարող են որոշել նիւթիցը, որի վրայ գիրքերը գրուած են, նրանց գրերի ձեւերից, բառերի անջատեալ կամ միացեալ լինելուց, կէտադրութիւնից եւ երեսների ու լուսանցների վրայ գտնուած ուրիշ նշաններից։ Բանասէրների անաչառ քննութեամբը հաստատուած է որ այս ձեռագիրները վերաբերվում են մի միջոցի որ ձգվում է չորրորդ դարից մինչեւ հնգետասաներրորդ դարը։

Այլեւայլ երկիրներից հաւաքուած այս հին ձեռագիրները ցոյց են տալիս, նախ՝ թէ Աւետարանները կային այն ժամանակ. երկրորդ՝ թէ Աւետարաններն իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների այն ժամանակ ընդհանուր ընդունուած եւ յարգուած էին. եւ վերջապէս, ինչպէս յետոյ ցոյց պիտի տանք, այն ձեռագիրները ցոյց են տալիս թէ Աւետարանների մէջ ուրեւիցէ փոփոխութիւն տեղի ունեցած չէ չորրորդ դարից իվեր։

4. Հին հեղինակների գրութեանց մէջ Աւետարաններից բերուած վկայութիւններ։

Երրորդ եւ չորրորդ դարից կան աւելի քան հարիւր հեղինակներ որոնց գրուածները վկայում են թէ Աւետարաններն այն ժամանակ կային, եւ իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների ընդունուած եւ յարգուած էին։ Երկրորդ դարից երեսուն եւ վեց հեղինակներ կան որոնց գրուածքները վկայում են թէ այն դարում Աւետարանները կային, եւ իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածք ընդհանուր ընդունուած եւ յարգուած էին։ Նաեւ առաջին դարի հեղինակներից ոմանց գրուածների մէջ Աւետարաններից

բերուած աւելի քան երկու հարիւր վկայութիւններ կամ դիտողութիւններ կան որ հաստատում են թէ առաջին դարում Աւետարանները կային եւ իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների ընդհանուր ընդունուած եւ յարգուած էին։ Զենք կարող բոլոր այն հեղինակներին յիշել այս փոքր գրքի մէջ, ուստի նոցանից մի քանիսին միայն յիշել բաւական ենք համարում։

Տերտուղիանոս։ Տերտուղիանոս հեթանոս ծնողներից է ծնուել՝ Կարքեդոնում 160 թուականին։ Հայրը Հռոմայեցի հարիւրապետ էր։ Տերտուղիանոս լաւ դաստիարակուած էր։ Շատ գրուածներ ունի, եւ բոլոր իր գրուածների մէջ ասում է թէ Աւետարաններն եւ ուրիշ առաքելական գրութիւններն առանց վնասուելու այն ժամանակի Քրիստոնեաներին էին հասած իբրեւ սրբազան ժառանգութիւն։ Տերտուղիանոսի գրուածներից հասկանում ենք թէ նախնի քրիստոնեաները բոլորովին միաբան էին թէ որեւիցէ մի գիրք որ առաքեալների կամ նրանց ընկերների միից գրուած չէր՝ չէր կարող իբրեւ Աւետարան ընդունուել։ Տերտուղիանոս իր գրուածների մէջ վկայութիւններ է բերում իբրեւ աւետարանիչների գրուածներից, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննէսի Աւետարանների իւրաքանչիւր գլխից։

Կղեմէս Աղեքսանդրացի։ Կղեմէսը հեթանոս ծնողներից ծնուեց մօտ 150 թուականին։ Ուսեալ անձ էր, եւ իր դարի փիլիսոփայութեան եւ մատենագրութեան քաջ հմուտ։ Շատ գրքեր յօրինեց որոնց հինգը միայն մինչեւ ցարդ պահուած են։ Կղեմէսը Նոր Կտակարանը անուանում է Տէրոջ գիրքը,

եւ ասում է. «Թէ օրէնքը եւ թէ Աւետարանը զօրութիւն են մեր Տէրոջ (Յիսուսի Քրիստոսի), որ է Աստուծոյ զօրութիւնը եւ իմաստութիւնը։» Նկարագրում է այն կարգը, որով Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս գրեցին իրանց Աւետարանները, եւ յետոյ աւելացնում է թէ սրանք սովորած էին ծերագոյն երէցներից։

Երանոս։ Երանոսը Յոյն ծնողներից ծնուեց Փոքրը Ասիայում Փրկչական 140 թուականին։ Աշակերտ էր Պողիկարպոսի Յովհաննէս առաքեալի աշակերտին։ Ապրեց Աւետարաններն հրատարակուելուց ոչ աւելի քան հարիւր տարի յետոյ։ Գրեց այլեւայլ գրքեր որոնցից հինգը միայն ցարդ կան։ Երանոսի գրքերը չատ կարեւոր վկայութիւններ են տալիս Աւետարանների վրայ։ Երանոսը իր գրուածների մէջ Հին եւ Նոր կտակարանները անուանում է ՊԱՏԳԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ, եւ ասում է. «Մենք փրկութեան ճանապարհն սովորեցինք ոչ ուրիշներից, այլ նրանցից միայն որոնց միջոցով մեզ տրուեցան Աւետարանները, որ նրանք նախ քարոզեցին եւ ապա Աստուծոյ կամքովն գրի անցուցին, որպէսզի ապագայում մեզ համար հիմն եւ հաւատոյ սիւն լինի։ Քանզի նրանք մեր Տէրոջ յարութիւնից յետոյ վերուից զօրութիւն առին եւ ամեն բանի վրայ կատարեալ գիտութիւն ստացան Սուրբ Հոգուց որ իջաւ նրանց վրայ։ Յետոյ, Աստուծոյ Աւետարանը իրանց հետ ունենալով ցրուեցան երկրիս չորս ծայրերը քարոզել մարդկանց երկնային խաղաղութեան օրհնութիւնները։ Մատթէոս Հրէից մէջ գտնուելով գրեց Աւետարանը նրանց լեզուով. Մարկոս, աշակերտ եւ թարգման Պետրոսի, աւանդեց մեզ

գրով ինչ որ Պետրոս քարոզել էր. Ղուկաս, Պողոսի ընկեր, գրեց Աւետարանն Պողոսի քարոզութեան պէս. ամենից յետոյ Յովհաննէս, աշակերտ Յիսուսի, մինչդեռ Եփեսոսումն էր, հրատարակեց իւր Աւետարանը։»

Արդարեւ սրանից բացայայտ եւ համոզիչ փաստ չէ կարող լինել։

Պ ա պ ի ա ս։ Պապիասը երկրորդ դարի առաջին կիսում, եպիսկոպոս էր Փռիւգիոյ Հէրապոլսում։ Գրեց «Մեկնութիւն Տէրոջ պատգամների» անուն մի գիրք։ Այս գրքը մինչեւ ցարդ պահուած չէ. Եւսեբիոս պատմիչը մի քանի տեղեկութիւններ է տալիս այս գրքի նիւթին վրայ։ Պապիաս ասում է թէ՝ ինքը առաքելոց մօտադոյն աշակերտներից առաւ տեղեկութիւն Աւետարանների վրայ։

Յ ո ւ ս տ ի ն ո ս վ կ ա յ։ Հեթանոս փիլիսոփայ էր, Նէապոլիսումը յոյն հօրից Քրիստոնէական 90 թուականին կամ մի քիչ յետոյ ծնուած։ 132 ին ընդունեց Քրիստոնէութիւնը, եւ որովհետեւ ժամանակով մօտ լինելով առաքեալներին՝ պատեհութիւն ունէր խնամով եւ հաւաստեաւ Աւետարանները քննել, նրա վկայութիւնը մեծ կարեւորութիւն ունի։ Յուստինոս շատ գրքեր գրեց, որոնց երեքը միայն հասած են մեզ։ Այս գրուածների մէջ շատ վկայութիւններ է բերում Աւետարաններից որը անուանում է Յիսուսի Քրիստոսի համառօտ կենսագրութիւն առաքեալներից գրուած։

Պ ո ղ ի կ ա ր պ ո ս։ Յովհաննէս առաքեալի աշակերտ էր եւ սպանուեցաւ հաւատքի համար 147 թուականին։ Սրա գործքերից հասած է մեզ առ Փիլիպպեցիս գրուած համառօտ մի թուղթ միայն, այնպէս

լի վկայութիւններով Աւետարաններից եւ Նոր Կտակարանի ուրիշ գրքերից, որ բնաւ տարակոյս չէ թողում թէ Աւետարանները կային այն ժամանակ, եւ ընդհանուր ընդունուած եւ յարգուած էին իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածներ։

Ի գ ն ա տ ի ո ս։ Հաւանականապէս Յովհաննէս առաքեալի մի ուրիշ աշակերտն էր։ Ծնուեց Ասորիքումը կամ Փոքր Ասիայում եւ եպիսկոպոս եղաւ Անտիոքի 69 թուականում։ Մեռաւ մարտիրոսական մահուամբ 170 կամ 116 թուին։ Վենադատները Իգնատիոսին վերագրուած գրքերի բոլորը չեն ընդունում իբրեւ հարազատ։ Իբրեւ հարազատ ճանաչուածները լի են Աւետարաններից բերուած վկայութիւններով, եւ սրանով հաստատում են թէ Աւետարանները կային այն ժամանակ, եւ ընդհանուր ընդունուած էին իբրեւ աւետարանիչների հարազատ գրուածներ։

Կ ղ ե մ է ս Հ ռ ո մ ա յ ե ց ի։ Սա ծնուեց մօտ 30 թուականին եւ մեռաւ իբր 100ին։ Ոմանք կարծում են թէ այս այն Կղեմէսն է որ Պողոս առաքեալը յիշում է (Փիլիպ. Դ. 3.) իբրեւ իւր գործակիցներից մինն։ Կղեմէսի գրուածներից հասած է մեզ առ Կորընթացիս գրուած մի թուղթ ուր շատ վկայութիւններ կան Աւետարաններից։

5. Քրիստոնէութեան առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ դարումը հերետիկոսները եւ անհաւատները ճանաչում էին Աւետարանները իբրեւ հարազատ գործ աւետարանիչների։

Քրիստոնէութեան ամենից խիստ հակառակորդները, ինչպէս կեղծոս՝ երկրորդ դարում, Պորփիւր՝ երրորդ

դարում, Յուլիանոս ուրացողը՝ չորրորդ դարում, Բրիատոնէութեան դէմ շատ յարձակումներ են արած, բայց չեն ասած երբէք թէ Աւետարանները աւետարանիչների հարազատ գործը չեն։

Արդէն ցոյց տուինք պատմութենից թէ Աւետարանները կային անոյ ժամանակից սկսած որում ընդհանուր ընդունուած էին մինչեւ այն ժամանակը որում աւետարանիչներից ոմանք եւ նրանց աշակերտներից շատերը դեռ ապրում էին. ուստի եթէ ուրիշները գրեցին Աւետարաններն, եւ ոչ թէ աւետարանիչները, ապա պէտք է գրած լինեն այն ժամանակ երբ յիշեալ աւետարանիչները դեռ ողջ էին, բայց այն ժամանակ այս անձինքը կը հերքէին այն սուտ գրուածները եւ խաբէութիւնը կ'յայտնէին։ Նաեւ եթէ Աւետարաններն աւետարանիչների մահուանից մի քիչ յետոյ գրուած լինէին, անկարելի էր որ կեղծ գրուածներն ընդունէին իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների առանց հերքման նոյն իսկ աւետարանիչների աշակերտաց կողմանէ։ Աւետարանների ընդհանուր ընդունելութենից յայտնի է թէ աւետարանիչների բարեկամները եւ աշակերտները ընաւ չէին տարակուսում նորանց հարազատութեան վրայ։ Ո՞վ կարող էր համոզել աւետարանիչների բարեկամներին եւ աշակերտներին թէ աւետարանիչները գրեցին այն գրքերը՝ եթէ սուտ գիւ նրանք չէին գրողները։ Այն բարեկամները եւ աշակերտները անտարակոյս կը հերքէին այն գրուածները։ Ուստի եւ Աւետարանների իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների նրանց բարեկամների կողմանէ ընդունուած լինելը զօրաւոր ապացոյց է թէ այն գրքերն արդարեւ աւետարանիչներից գրուած են։

—Արդարեւ համոզիչ են պատմական փաստերը։ Այս փաստերն այլ եւ այլ աղբիւրներից առնուած այլ եւ այլ երկիրներից եւ ազգերից հաւաքուած, եւ բազմատեսակ են։

Նոր կտակարանի հին ցանկերը, հին թարգմանութիւնները, հին ձեռագիրները, Բրիատոնէութեան թէ բարեկամ եւ թէ թշնամի հին մատենագրաց մէջ գտնուած վկայութիւնները, սրանց ամենքն էլ ապացոյց են թէ Աւետարաններն առաջին դարում գրուեցան աւետարանիչներից, եւ որովհետեւ այս ապացոյցը հերքող ուրիշ փաստ չկայ, պարտ ենք ընդունել այն։ Ընտանի անկամ ասում է թէ բոլոր Աւետարանները գրուած են առաջին դարում, եւ են արդարեւ գործ այն հեղինակներին որոնց վերագրում են։

ԳԼՈՒԽ Է.

ԿԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ ԹԷ ՄԵՐ ԱՅԺՄԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԲՈՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻՑ ԳՐՈՒԱԾ ԱՒԵՏԱՐՆՆԵՐՆ ԵՆ։

Ի՞նչ ապացոյց կայ թէ անցեալ տասնեւութ դարերում աւետարանիչներից գրուած Աւետարանների վրայ բան ոչ ուելացրուեց եւ ոչ պակասացրուեց, եւ թէ մեր այժմեան Աւետարանները բուն աւետարանիչներից գրուածներն են։ Հարիւր տարուց հետէ Եւրոպայի մէջ շատ գիտուն մարդիկ զբաղուեցան այս խնդրով, եւ շատ տարիներ մանր քննութիւններ արին այս խնդիրը լուծելու համար։ Մենք հիմա ուզում ենք նրանց քննութիւնների արդիւնքը համառօտիւ ցոյց տալ։

Տպագրութեան արուեստը գտնուեցաւ ԺԵ. դարում, եւ առաջի տպագրուած գրեանքը Սուրբ Գրքերն եղան, որոնց մի քանիսը դեռ կան Եւրոպայի գրատուններում։ Գիտունք մեծ ուշադրութեամբ բաղդատած են այժմեան Աւետարաններն տպագրուած օրինակների հնագոյնների հետ։

Նախնեաց գլխում յիշեցինք թէ Նոր կտակարանի այլեւ այլ մասերից գտնուած են մինչեւ հիմայ, իբր 1,600 ձեռագիր օրինակներ, որ Քրիստոնէական թուականին Դ. դարուց մինչեւ ԺԵ. դար գրուած են։

Գիտունք այժմեան Աւետարաններն ուշադրութեամբ բաղդատել են բոլոր այն հին ձեռագիրների հետ։

Նախնեաց գլխում ասացինք նաեւ թէ երկրորդ եւ երրորդ դարում Աւետարանները թարգմանուեցան ուրիշ լեզուների։ Գիտունք այժմեան Աւետարանները բաղդատել են նաեւ բոլոր հին թարգմանութիւնների հետ, մանաւանդ Ասորական եւ հին Իտալական թարգմանութիւնների հետ, որ եղան յամի Տեառն իբր 150-ին եւ թերեւս էլ աւելի առաջ։

Ինչպէս արդէն ասուեցաւ, կան չորրորդ, երրորդ, երկրորդ, եւ նա մանաւանդ առաջին դարում անգամ տպրող շատ հեղինակների գրուածներ որոնց մէջ կան Նոր կտակարանից բերուած վկայութիւններ։ Այս վկայութիւններն այնչափ շատ են որ գրեթէ ամբողջ Նոր կտակարանը կարող են նորից կազմել։ Գիտունք մեր այժմեան Աւետարանները ուշադրութեամբ բաղդատել են նաեւ այն հին հեղինակներից բերուած վկայութիւնների հետ։

Արդ, երբ գիտունք այժմեան Աւետարանները Սուրբ գրոց տպագրուած օրինակների հնագոյնների, հին ձեռագիրների, հին թարգմանութիւնների եւ նախկին դարերի մատենագրաց մէջ Աւետարաններից բերուած վկայութիւնների հետ խնամով բաղդատեցին, նրանց անաչառ բաղդատութիւնից ի՞նչ արդիւնք յառաջ եկաւ։

Արդարեւ հազարաւոր տարբերութիւններ տեսնուեցան։ Ձեռագիրների, թարգմանութիւնների եւ վկայութիւնների մէջ տեսնուած բոլոր տարբերութիւնների թիւն 120,000ի է հասնում, բայց ի՞նչ տեսակ տարբերութիւններ են սրանք։ Միթէ այնպիսի՞ տար-

բերութիւններ որ կարող լինի տարակոյս յարուցանել Նոր կտակարանի մէջ պատմուած որեւիցէ դէպքի, կամ նրա մէջ պարունակուած որեւիցէ վարդապետութեան վրայ: Ո՛չ երբէք: Գրէթէ բոլորը չնչին տարբերութիւններ են, եւ օրինակողների անզգուշութենից սպրդուած գրչի սխալներ:

Վերոյիշեալ տարբերութիւնների մէկ մեծ մասն ուղղագրութեան է վերաբերում: Թէ ի՛նչպէս կարող են սպրդած լինել այսպիսի սխալներ՝ հասկանալը դիւրին է: Դիցուք թէ տասը Հայ դպիր Նոր կտակարանից մէկ մէկ օրինակ են գրում. ո՞րչափ տարբերութիւններ պիտի սպրդին այն՝ օրինակների մէջ: Մէկը՝ մի բառ այսինչ գրով է գրելու, միւսն այնինչ գրով, մէկը մի բառ սխալ է կարդալու, միւսն անզգուշութեամբ մի բառ զանց է անելու կամ աւելի գրելու:

Վերոյիշեալ տարբերութիւնների մէկ մասն էլ բառերի քերականական կարգին եւ ձեւին է վերաբերում. զոր օրինակ, Աւետարաններից մէկում մի տեղ ասուած է «Մեր Տէրը Յիսուս Քրիստոս.» մի ուրիշում ասուած է «Յիսուս Քրիստոս մեր Տէրը:» Մէկի մէջ մի տեղ ասուած է «Եսայի Մարգարէն.» մի ուրիշի մէջ ասուած է «Մարգարէն Եսայի:» Մի օրինակի մէջ անուն, մի ուրիշ օրինակի մէջ դերանուն է գրուած. զորօրինակ, մէկին մէջ ասուած է «Նա,» մի ուրիշի մէջ՝ «Յիսուս:» Երբեմն էլ բառերը փոխուած են նոյնանշան ուրիշ բառերի հետ, զորօրինակ, մի օրինակի մէջ գրուած է «Տէրոջը թագաւորութիւնը,» մի ուրիշ օրինակի մէջ ասուած է «Աստուծոյ թագաւորութիւնը:» Արդ,

յայտնի է թէ մինչեւ ցարդ յիշուածների նման տարբերութիւնները չեն այլայլել Աւետարանների իմաստը:

Մի երեւելի գիտուն որ տարիներով քննել էր այս տարբերութիւնները՝ ասում է. «Նոր կտակարանը կարդացող անուս անձինք թող ապահով լինին որ իրանց կարդացած Աւետարանները բնագիրներին հետ՝ նոյնն են, ինչպէս որ բազմահմուտ մարդիկ անխոնջ քննութիւններով եւ անաչառ դիտողութիւններով ստուգած են անթիւ հին օրինակներ այժմեան Աւետարանների հետ բաղդատելով:

Բոլոր հին ձեռագիրները, թարգմանութիւնները եւ վկայութիւնները, թէպէտ այլեւայլ դարերում գրուած, եւ իրարից շատ հեռու եւ բաժանեալ տեղերից հաւաքուած են, ըստ էութեան նոյնն են: Սրանցից ոչ մէկը տարակուսելի չէ անում Աւետարանների մէջ աւանդուած դէպքերից եւ վարդապետութիւններից ոչ մէկը: Բոլոր օրինակների եւ ոչ մէկի մէջ մի հոգեւոր ճշմարտութիւն կամ մի բարոյական սկզբունք պակասուած կամ այլայլուած չէ: Գիտուն մարդկանց հետազօտութիւնները վկայում են թէ մեր այժմեան Աւետարանները միեւնոյնն են ինչ որ էին գէթ երկրորդ դարի կիսում, այն է 150 թուականին երբ Նոր կտակարանը թարգմանուեցաւ հին Իտալական եւ Սորական լեզուների: Թէ մինչեւ այն 150 թուականը փոփոխութիւն չէր մացրուած Աւետարանների մէջ, այս ցոյց է տրվում այն՝ թուականից առաջ հին հեղինակների մէջ գտնուած վկայութիւններից: Այն թուականից յառաջ գրեթէ անհնարին էր փոփոխութիւն մացնել Աւետարանների մէջ վասնզի՝

1. Բաւական ժամանակ չկար որ փոփոխութիւններ մտցնէին Աւետարանների մէջ։ Փոփոխութիւնները ոչ թէ մի անգամից՝ այլ սակաւ առ սակաւ են սպրդում։ Գիտենք որ Յովհաննէս առաքեալի մահուանից մինչեւ այն ժամանակը որում Աւետարանները թարգմանուեցան Ասորերէնի եւ հին Իտալերէնի՝ ոչ աւելի քան յիսուն կամ վաթսուն տարի անցան եւ այսչափ կարճ միջոցի մէջ անհնար էր որ մեծամեծ փոփոխութիւններ մտցնէին Աւետարանների մէջ։

2. Առաքելոց ժամանակ եւ երկրորդ դարում Քրիստոնեաները սովոր էին հրապարակաւ կարդալ Աւետարանները ժողովուրդին հասկանալի լեզուով, ուստի եւ ժողովուրդը չուտով տեղեկացաւ Աւետարանների մէջ յիշուած կարեւոր ճշմարտութիւններին եւ դէպքերին, եւ չուտով պիտի խմանար եթէ մի փոքրիկ փոփոխութիւն գործուէր բնագրի մէջ։

3. Առաջին դարերի Քրիստոնեաները շատ էին յարգում Աւետարանները, եւ շատ նախանձաւոր էին որ՝ անարատ եւ անփոփոխ պահեն նրանց։ Իրանց բոլոր յոյսերին եւ ակնկալութիւններին հիմ էին ճանաչում Աւետարանները, եւ արիութեամբ կրեցին ամեն տեսակ հալածանք մինչեւ ի մահ այն ճշմարտութիւնների համար որ պարունակուած են Աւետարանների մէջ։ Եթէ խաբեբաներից ոմանք ուզէին փոփոխութիւն մտցնել Աւետարանների մէջ. անտարակոյս ժողովուրդը պիտի հակառակէր նրանց։ Արդարեւ Մարկիոն անուն մէկը ջանաց փոփոխութիւն մտցնել Աւետարանների մէջ, բայց նրա խարդախութիւնը յայտնուեցաւ, եւ նրա գրքերը մերժուեցան։

Աւետարաններից այնչափ օրինակներ գրուած եւ

այնպէս հեռաւոր տեղեր սփռուած էին որ, եթէ այնինչ երկրի մէջ մի քանի խաբեբաներ յաջողէին Աւետարանների մէջ որեւիցէ փոփոխութիւններ մտցնել, չէին կարող այն փոփոխութիւնն ընդունել տալ ուրիշ տեղեր գտնուած Քրիստոնեաներին։ Քրիստոսից յետոյ Աւետարանն այնպէս արագ քարոզուեցաւ Հռոմէական պետութեան մէջ եւ նոյն իսկ այն պետութեան սահմաններից դուրս, եւ Աւետարաններից այնչափ օրինակներ տարածուեցան աշխարհիս այլ եւ՝ այլ մասերում, որ որեւիցէ փոփոխութիւն բոլոր եկեղեցիներին ընդունել տալ չէր կարելի։ Իսկ եթէ որեւիցէ փոփոխութիւն իրօք եղած է, բոլոր եկեղեցիների կողմանէ ընդունուած պէտք է լինի, քանզի Աւետարանների բոլոր օրինակները որ մինչեւ հիմայ մեր ձեռքը հասած կամ աշխարհիս այլեւայլ մասերում գտնուած են՝ ըստ էութեան միեւնոյնն են։ Միեւնոյն Աւետարանից չգտնուեցան մինչեւ հիմայ՝ իրարից տարբեր վարդապետութիւններ պարունակող, կամ իրար հակառակ դէպքեր պատմող օրինակներ։ Զորս Աւետարաններից իւրաքանչիւրի մեզ ծանօթ բոլոր օրինակները միեւնոյն պատմական դէպքերն են յիշում եւ միեւնոյն ճշմարտութիւններն են սովորեցնում։

Սուտգիւ եթէ մի փոփոխութիւն գործուած լինէր, դիտուն քննիչները անտարակոյս նշմարած պիտի լինէին այն փոփոխութիւնը։ Ուրեմն, օգուտ քաղենք քննադատների անխոնջ քննութիւններից, եւ ուրախանանք երբ տեսնում ենք թէ մեր այժմեայ Աւետարանները բուն իսկ չորս աւետարանչներից գրուած Աւետարաններն են, եւ նրանց մէջ որեւիցէ փոփոխութիւն մտցրուած չէ։

ԳԼՈՒԽ Ը.

ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ ՀԱՒԱՏԱԼԻ ԵՆ։

Մեր ընթերցողներից ոմանք համոզուելով այն պատմական ապացոյցներից որ յիշուեցան նախընթաց երկու գլուխներում թերեւս ընդունում են Աւետարանները իբրեւ հարազատ գրուածք աւետարանիչների, բայց եւ այնպէս գուցէ տարակուսանք հարցնեն թէ, միթէ հաւատալի է՞ն այն բաները որը աւետարանիչները գրել են։ Թերեւս ոմանք հարցնեն թէ ինչպէս կարող ենք վստահ լինել որ նոյն իսկ աւետարանիչները խաբեայ չէին։ Այլք թերեւս համոզուած են աւետարանիչների ճշմարտախօսութեան եւ անկեղծութեանը, բայց եւ այնպէս հարցնեն թէ, ինչպէս կարող ենք վստահ լինել որ նոյն իսկ աւետարանիչները խաբուած չէին այն դէպքերի մասին՞ որ պատմում են իրանց գրքերում։ Այսպիսի խնդիրներ անտեղի՞ չեն, եւ խորին ուշադրութեան արժանի են։ Արդ, տեսնենք ինչ ապացոյց կայ թէ աւետարանիչները արժանահաւատ վկաներ էին այն դէպքերին որ պատմում են իրանց գրքերում։

1. Ապացոյց կայ թէ աւետարանիչները կարող էին ուղղութեամբ դիտել եւ ճշտիւ նկարագրել ինչ որ տեսին եւ լսեցին։

2. Ապացոյց կայ թէ աւետարանիչները անկեղծ եւ ճշմարտախօս մարդիկ էին, եւ յօժար՝ որ ճշմարտութեամբ եւ ճշտիւ նկարագրեն ինչ որ տեսին եւ լսեցին։

3. Ապացոյց կայ թէ աւետարանիչները այնպիսի տեղ եւ այնպիսի վիճակի մէջ էին որ կարողէին անձամբ լաւատեղեակ լինել այն դէպքերին որ գրած են իրանց գրքերումը։

4. Նաեւ ուրիշ աղբիւրներից կան շատ ապացոյցներ որ աւետարանիչների գրուածների ստուգութիւնը զօրաւոր կերպով հաստատում են։

Եթէ արդարեւ կան բաւական ապացոյցներ որ հաստատում են վերոյիշեալ չորս կէտերը, ուրեմն պարտենք ընդունել թէ Աւետարանները հաւատալի են։ Եթէ կան ապացոյցներ որ հաստատում են թէ աւետարանիչները ոչ խաբող էին եւ ոչ խաբուած, ուրեմն պարտենք ընդունել թէ նրանք արժանահաւատ վկաներ են այն դէպքերին որ գրել են իրանց գրքերումը։

1. Աւետարանիչները կարող էին ուղղութեամբ դիտել եւ ճշտիւ նկարագրել ինչ որ տեսին եւ լսեցին։

Նոյն իսկ Աւետարաններից յայտնի է թէ նրանց հեղինակները երազատես, մոլեռանդ եւ սքանչելիք հնարելու կամ փոքր դէպքերը ստուարացնելու յօժար մարդիկ չէին։ Սրանց գրուածների մէջ չափազանցութիւն չկայ։ Սրանց ոճը նշանաւոր է մանաւանդ պարզութեան կողմանէ։ Յիսուսի վարդապե-

տութիւնները պատմում են եւ նրա գործերը նկարագրում են առանձ զարմանք ցոյց տալու։ Արդարեւ եբրայեցոց եւ մոլեռանդներին չէր կարելի Քրիստոսի այլակերպութեան, յարութեան եւ համբարձման նման զարմանալի դէպքեր գրել այնպէս պարզ ինչպէս գրած են աւետարանիչները։ Աւետարաններն ուշի ուշով եւ անաչառ ոգով կարդացող ամեն խոհական մարդ կ'տեսնէ այս։

Նոյն իսկ Աւետարաններից յայտնի է նաեւ որ նրանց հեղինակներն անարժան բաների հաւատալու պատրաստ դիւրահաւատ մարդիկ չէին։ Նամանաւանդ այն գրուածներից յայտնի է թէ աւետարանիչները շատ անգամ դժուարաւ էին հաւատում, եւ այնպէս դժուարաւ էին հաւատում նրանք նոյն իսկ Յիսուսի ասած բաներին, որ երբեմն Քրիստոսից յանդիմանվում էին իրրեւ թերահաւատներ։ Յիսուս յայտնապէս ասել էր նրանց թէ յարութիւն պիտի առնէր, բայց նրանք դժուարաւ էին հաւատում (Ղուկ. ԻԴ. 25)։ Նոյն իսկ այն կանայք որ Յիսուսի գերեզմանը գնացին, այն տեղ գնացին ոչ թէ ողջունեն յարուցեալ Փրկչին, այլ օծեն իրանց թաղուած Վարդապետին. եւ երբ նրանք աշակերտներին պատմեցին Յիսուսի յարութիւնը, նրանց խօսքը չաղփաղփութիւն թուեցաւ աշակերտներին (Ղուկ. ԻԴ. 11)։ Առաքեալներից մէկն այնչափ դժուարահաւան էր որ ասաց թէ մինչեւ որ Յիսուսի ձեռքերին վրայ բեւեռների տեղը չտեսնէ, եւ ձեռքը նրա կողը չմիւռ, պիտի չհաւատայ (Յովհ. Ի. 25)։ Շատ ողջամիտ եւ արդարակորով մարդիկ ուշադրութեամբ կարդալով Աւետարանները համոզուած են թէ աւետարանիչները դիւրահաւան մարդիկ չէին։

Եթէ արդարեւ աւետարանիչները Աստուածանից ներշնչեալ էին ապա նրանց գրուածները հարկաւ հաւատալի են, իսկ եթէ նրանք ներշնչեալ չէին պէտք է խոստովանել թէ գերազանց ձիրքերի տէր էին։ Մատթէոսը մաքսաւոր էր, եւ Յովհաննէսը՝ ձկնորս, երկուսն էլ անուս, բայց եւ այնպէս նրանք, ինչպէս նաեւ մեւս աւետարանիչները, այնպիսի գրքեր գրեցին որ իրր տասնեւութ դար չարունակ գրաւեցին քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը։

Եթէ բաղդատութիւն անենք Սոկրատի, Պղատոնի, Արիստոտելի, ու Կիկերոնի գրուածների՝ եւ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի գրուածների մէջ տեղ, եւ քննենք թէ ո՞րչափ լեզուների թարգմանուեցին առաջինները՝ եւ ո՞րչափ լեզուների վերջինները. եթէ քննենք նաեւ թէ ո՞րչափ մեկնութիւններ գրուեցան առաջինների գրուածների՝ եւ ո՞րչափ վերջինների գրուածների վրայ. եւ վերջապէս, եթէ բաղդատենք այն փիլիսոփաների գրուածները կարդացողների թիւը եւ յատկութիւնն այն մարդկանց թւի եւ յատկութիւնների հետ որ Աւետարանները կարդում են մինչեւ այսօր, պիտի համոզուինք թէ քաղաքակիրթ աշխարհը տասնեւութ դարերից իվեր պատուած է եւ դեռ աւելի պատուում է Աւետարանները քան այն հռչակաւոր փիլիսոփաների գրուածները։ Հիմա շատ ընկերութիւններ կան որոնց մասնաւոր նպատակն է թարգմանել տալ Աւետարանները բոլոր լեզուների եւ տարածել բոլոր ազգերի մէջ։ Այս ընկերութիւններից մէկը միայն 1800 թուականից իվեր

թարգմանեց Աւետարանը 150 տարբեր լեզուների, եւ ապելով տարածեց միլիոնաւոր օրինակներ։ Սրանից լինչ պիտի հետեւցնենք։ Սրանից այս ենք հետեւցնում թէ, Աւետարանների հեղինակները ոչ ցնորամիտ մարդիկ էին եւ ոչ դիւրահաւան յիմարներ։ Կրթեալ աշխարհն այսպէս պատիւ չի անիլ մոլեռանդ կամ ցնորամիտ մարդկանց գրուածներին։ Այն մեծ պատիւը որը վայելեցին Աւետարանները տասնեւութ դարից ի վեր, եւ խորին տպաւորութիւնը որը արին աշխարհի վրայ, ցոյց են տալիս թէ այս գրքերի հեղինակները դերազանց ձիրքերի տէր էին, կամ դէթ կարող եւ յաջողակ էին խնամով դիտելու եւ ճշտիւ պատմելու ինչ որ տեսին եւ լսեցին։

2. Աւետարանիչները անկեղծ մարդիկ էին, եւ յօժար որ ճշմարտութեամբ եւ ճշտիւ նկարագրեն ինչ որ տեսին եւ լսեցին։

Ա. Աւետարանների անկեղծութիւնը յայտնի է այն եղանակից որով խօսում են իրանց վրայ։ Նորանք չեն գովում իրանց եւ չեն մեծացնում իրանց գործերը, այլ ընդհակառակն, պարզութեամբ յիշում են իրանց տկարութիւնները, սխալանքը եւ մեղքերը, զորօրինակ՝ որ վիճել են թէ իրանց մէջ ո՞վ էր մեծ, որ չեն կարողացել Յիսուսի հետ հակել Գեթսեմանի պարտիզումը, որ իրանցից մէկը մատնել է եւ մի ուրիշն ուրացել է Յիսուսին, եւ որ ամենքը իրանց վարդապետին թողել եւ փախել են։ Եթէ աւետարանիչները խաբեբայ լինէին, կ՚հրատարակէի՞ն այսպէս աշխարհի առաջ իրանց տկարութիւնները եւ մեղքերը։

Բ. Աւետարանիչների անկեղծութիւնը յայտնի է այն եղանակից որով խօսում են ժողովրդի հետ։ Եթէ խաբեբայ լինէին, հարկաւ պիտի գրէին ժողովրդին հաճելի բաներ։ Թիչ կամ շատ պիտի յարմարէին Հրէից նախապաշարումներին, եւ պիտի զգուէին նրանց ազգային փառասիրութիւնը։ Աւետարանիչները գրել են այնպիսի բաներ որ բոլորովին հակառակ էին ժողովուրդի գաղափարներին։ Նորանք գրել են թէ Հրէից ազգային եկեղեցին պիտի ջնջուէր, թէ նրանց եկեղեցական ծէսերն որոնց մեծ յարգ էր ընծայում ժողովուրդը՝ պիտի խափանուէին, թէ նրանց սուրբ քաղաքը պիտի կործանուէր, եւ որ աւելին է՝ աւետարանիչները մեղադրում են նաեւ Հրէից ազգը թէ սպանեցին ի վերոյ հետէ սպասած Մեսիային։ Մի՞թէ հաւանակա՞ն է որ աւետարանիչները հրատարակէին այսպիսի բաներ որ բոլորովին դէմ էին Հրէից գաղափարներին եւ նրանց կղայրացնէին, եթէ հաւատացած չլինէին այս բաների ճշմարտութեանը։

Գ. Աւետարանների անկեղծութիւնը յայտնի է նրանց բարոյական վարդապետութիւններից։ Եթէ աւետարանիչները խաբեբայ լինէին, կ՚հրատարակէի՞ն այնպիսի գրուածներ որոնց գլխաւոր նպատակն է հաստատել մաքուր բարոյականութիւն։ Մի՞թէ կեղծաւորները կգրէի՞ն մի այնպիսի գիրք, որ մանաւանդ դատապարտում է կեղծաւորութիւնը։ Սատանան մարդիկ յանձն կառնե՞ն ճշմարտութեան համար նեղութիւն եւ տանջանք կրել։ Արդարեւ ոչ, բայց գուցէ չանի համար արած լինեն, սակայն պիտի ցոյց տանք յետոյ թէ այսպիսի խաբէութիւնից ամենեւին չահ չունէին աւետարանիչները։ Նաեւ մի՞թէ կարելի էր խաբեբայ

եւ սահմանումներ որ ստեղծեն այնպիսի բարոյական սկզբունք եւ վարդապետութիւններ որ գտնվում են Աւետարանների մէջ։ Աւետարանների սկզբունքը դեր ի վերոյ են քան թէ աշխարհի ամեն բարոյական վարդապետութիւնները, եւ անհատներին իսկ զարմանք են պատճառած։ Ռուսոյ ասում է. «խոստովանում եմ որ Սուրբը գրոց վսեմութիւնը հիացնում է ինձ, եւ Աւետարանների սրբութիւնը խօսում է սրտիս։» Աւետարանիչներին յաջողուած է նկարագրել մէկը այնպիսի բարոյական կատարելութիւններով որին միլիոնաւոր մարդիկ ուրախութեամբ պաշտում են իբրեւ Աստուած, եւ որին Ռընանի պէս անհատները անգամ կոչում են աննման, պաշտելի, աստուածային եւ կատարեալ մարդ։ Մի՞թէ կարելի է որ խաբեբաները կարողանային նկարագրել ամենից կատարեալ յատկութիւններով զարդարուած մի անձ, եւ հրատարակել աշխարհի ամենից կատարեալ բարոյական օրինադիրքը։

Դ. Աւետարանների անկեղծութիւնն յայտնի է նոյնիսկ այն ժամանակից եւ տեղից որում, ըստ աւետարանիչների, Աւետարանների մէջ պատմուած դէպքերը ոչ թէ հեռաւոր ժամանակի մէջ պատահեցին, այնպէս որ մէկը չկարողանար հերքել նրանց, այլ պատահեցին այնպիսի ժամանակներում որ շատ վկաներ դեռ ողջ էին, եւ կարող էին հեշտութեամբ հերքել եթէ սխալ էին այն դէպքերը։

Ըստ Աւետարանիչների, Աւետարանների մէջ պատմուած դէպքերը չպատահեցին նաեւ հեռաւոր տեղեր, բայց հենց այն տեղերում ուր Աւետարանները հրատարակուեցին, եւ եթէ սխալ լինէին նրանց խօսքերը, շատ դիւրին էր հերքել նրանց։ Խաբեբաներ կարող են հրատարակել սխալ բաներ այնպիսի դէպքերի նկատմամբ որ պատահած են հեռաւոր ժամանակում եւ հեռաւոր տեղերում, բայց չեն կարող խեղաթիւրել դէպքերը որ պատահած են հրապարակաւ եւ այն դարում եւ ժամանակում որում հրատարակուած են գրքերը, վասնզի եթէ այնպէս անեն դիւրաւ կը յայտնուի նրանց խաբէութիւնը։

Ե. Աւետարանիչների անկեղծութիւնը յայտնի է այն եղանակից որով, ըստ աւետարանիչների, պատահեցին այն դէպքերը։ Աւետարանիչներից յիշուած դէպքերի մեծ մասը չպատահեցին դաղտնի տեղ որ բաց ի աւետարանիչներից ուրիշ ոչ ոք կարող չլինէր տեսնել նորանց, այլ այն դէպքերի մեծ մասը պատահեցին հրապարակաւ եւ շատ վկաների առաջեւ, որոնց սմանք թշնամի էին։ Եթէ աւետարանիչները խաբեբայ լինէին, անտարակոյս այնպէս չէին պատմիլ ինչպէս անում են, վասնզի դիւրին էր հերքել նրանց խօսքը եւ ցոյց տալ թէ այնպիսի դէպքեր հրապարակաւ չպատահեցին։

Զ. Աւետարանիչների անկեղծութիւնը սրանից է յայտնի որ մանր պարագաներով են պատմում դէպքերը։ Եթէ աւետարանիչները խաբեբայ լինէին, հաւանականապէս ամեն մանր պարագայ չէին յիշել, այլ քանի մի ընդհանուր բաներ միայն կ՚յիշէին եւ այն ժամանակ դժուարին կ՚լինէր հերքել նրանց խօսքը։ Աւետարանիչները որչափ աւելի մանր պարագաներ յիշէին իրանցից պատմուած դէպքերի տեղին եւ ժամանակին նկատմամբ, այնչափ աւելի դիւրին էր նրանց թշնամիներին հերքել նրանց խօսքն, ասելով թէ այս-

պիսի դէպքեր չպատահեցին այն ինչ տեղ եւ այն ինչ ժամանակ։ Աւետարանիչները նշանաւոր են մանաւանդ այս կողմանէ որ շատ մանր պարագաներ են յիշում իրանց գրքերին մէջ։ Պատմում են Յիսուսի ոչ միայն ծնունդն, այլ եւ ծննդեան տեղը, ժամանակը եւ ուրիշ պարագաները։ Յիսուսի ոչ միայն մահն են պատմում այլ եւ նրա մահուան տեղը, ժամանակը եւ ուրիշ պարագաները։ Յիսուսի ոչ միայն հրաշք գործելն այլ եւ հրաշալիքների գործուած տեղը, ժամանակն եւ ուրիշ պարագաներն են պատմում։ Աւետարաններն այնպէս լիքն են թուականներով եւ մարդկանց եւ տեղերի անուններով, որ եթէ սխալ լինէին, շատ դիւրին էր հերքել նրանց։ Խաբեբաները կ'զգուշանան իրանցից պատմուած դէպքերի տեղը, ժամանակն եւ ուրիշ պարագաները յիշել։

Է. Աւետարանիչների անկեղծութիւնն յայտնի է ընդհանուր համաձայնութիւնից եւ փոքր տարբերութիւններից որ տեսնւում են Աւետարանների մէջ։ Ոչ ոք կարող է ուրանալ թէ էական կէտերի մասին ընդհանուր համաձայնութիւն կայ աւետարանիչների մէջ տեղ։ Չորս աւետարանիչները միանգամայն համաձայն են Յիսուսի վարուց գլխաւոր կէտերի նկատմամբ, եւ էապէս միւնոյն վարդապետութիւններն են սովորեցնում։ Աւետարանիչների մէջ տեղ ունի համաձայնութիւն կայ քան թէ որեւիցէ մարդու կենսագրութիւնն անող այլ եւ այլ հեղինակների մէջ։

Սակայն Աւետարանից յայտնի է թէ աւետարանիչներն իրանց մէջ միաբանուած չէին միեւնոյն բանը գրելու, վասնզի Աւետարանների մէջ կան տարբերութիւններ եւ առերեւոյթ հակասութիւններ։ Արդարեւ

անհատներ ոմանք ջանացին, բայց ինչպէս յետոյ պիտի տեսնուի, իզուր, որ ցոյց տան թէ Աւետարանների մէջ կան հակասութիւններ որ ցոյց են տալիս թէ Աւետարանները հաւատալի չեն։ Սակայն այն տարբերութիւնները միայն սա են ցոյց տալիս թէ աւետարանիչների մէջ գաղտնի համաձայնութիւն չկար՝ սուտ գրուածներով ժողովուրդը խաբելու, վասնզի, եթէ այնպիսի նպատակ ունենային, իրանց գրքերը հրատարակելուց առաջ նրանց իրարու հետ կ'բաղդատէին եւ բոլորովին իրարու կ'համաձայնեցնէին։ Աւետարանիչները գրում են իրրեւ ճշմարտախօս եւ անկեղծ մարդիկ համարձակութեամբ եւ առանց վախենալու թէ հակասութիւն կ'գտնուի իրանց գրուածների մէջ տեղ։

Ը. Աւետարանիչների անկեղծութիւնը նաեւ սրանից է յայտնի որ եթէ նրանք խաբեբայ լինէին այս խաբէութիւնից օգուտ չէին կարող ակնկալել։ Մարդիկ ուրիշները խաբելու համար նեղութիւն եւ տանջանք չեն կրիլ առանց վարձքի ակնկալութեան։ Եթէ աւետարանիչները խաբեբայ էին, ի՞նչ բան կարող էին յուսալ թէ պիտի չհէին ստութիւն հրատարակելով։

Մի՞թէ հարստութի՞ւն ձեռք բերել էին յուսում։ Ո՛չ։ Նրանք իրանց արուեստներն անգամ որոնցով իրանց ապրուստը չհոգում էին թողելով, իրանք իրանց քարոզութեան գործին նուիրեցին։ Եւ ի՞նչ էին քարոզում։ Մի՞թէ քարոզում էին թէ մարդիկ իրրեւ վարձատրութիւն նրանց ստակ կամ ուրիշ պարգեւնե՞ր պիտի տային։ Ոչ երբէ՛ք։ Ընդհակառակն ասում էին թէ, ինչպէս որ իրանք ձրի առին

Տէրոջից, նոյնպէս ձրի տալիս են ուրիշներին։ Սովորցրին թէ մարդիկ երկրի վրայ պիտի գանձ չ'դիզեն, եւ գործով եւ օրինակով հաստատեցին իրանց վարդապետութիւնը։ Կամաւ յանձն էին առել աղքատութիւն։

Միթէ աւետարանիչները պատի՞ւ էին պտռում։ Եթէ պատիւ էին պտռում իրանց աղգա'լիցներից, ինչո՞ւ համար քարոզեցին եւ հրատարակեցին այնպիսի բաներ որ նրանց դէմ յարուցին բոլոր Հրէից ազգը. ինչո՞ւ համար այնպէս խստութեամբ խօսեցին իշխանների հպարտութեանը եւ ժողովուրդի նախապաշարումներին դէմ. ինչո՞ւ համար իրանց գրքերի մէջ այնպէս սաստկութեամբ յանդիմանեցին ժողովուրդի մեղքերն, եւ այնպէս բացայայտ գուշակեցին նրանց կրելու պատիժները։ Աւետարանիչներն իբրեւ հերետիկոս եւ մատնիչ ամբաստանուեցին, իբրեւ չարագործ ծեծուեցին եւ բանտարկուեցին, եւ արգիլուեցին սովորցնելուց ժողովուրդը Յիսուսի անունով, բայց եւ այնպէս բնաւ չ'դադարեցին Յիսուսի անունով սովորցնելուց։ Ապա յայտնի է թէ մարդկանցից պատիւ չէին պտռում։

Ուրեմն, հանգիստ եւ գիւրութի՞ւն էին պտռում։ Բայց նրանք կամաւ նեղութիւնների մատնեցին իրանց Ոտքով չրջեցին իրանց երկրին մէջ, եւ ապա երկար եւ տաժանելի ճանապարհորդութիւններ արին իրանց երկրից դուրս շատ հեռաւոր տեղեր։ Պօղոս առաքեալը Ա. Կորնթ. Դ. 11–13 համարներին մէջ հետեւեալ կերպով է նկարագրում Աւետարան քարոզողներին կեանքը։ «Մինչեւ այս օրուան ժամանակը սովում էլ ենք ծարաւում էլ, առանդական էլ չրջում,

եւ մեր ձեռքերովը գործելով աշխատում ենք. երբ մեզ նախատում են, մենք օրհնում ենք, երբ հալածում են, համբերում ենք. աշխարհի աղտեղութիւնը՝ ամենից անարգը լինելով մինչեւ հիմայ։» Ուր որ գնում էին հակառակութեան էին հանդիպում։ Քարկոծուեցին, ծեծուեցին, քաղաքից քաղաք հալածուեցին, բայց եւ այնպէս յարատեւեցին մինչեւ իմաստ։ Պատմական շատ վկայութիւններ կան հեթանոս հեղինակների գրքերի մէջ այն հալածմունքների եւ նեղութիւնների մասին որ կրեցին աւետարանիչները։

Եթէ աւետարանիչները անկեղծ մարդիկ չէին ինչո՞ւ համար այնպիսի նեղութիւններ կրեցին։ Սրանց վարքից յայտնի է թէ նրանք չէին պտրում եւ չէին յուսամ ստանալ հարստութիւն կամ պատիւ եւ կամ հանգիստ։ Բայց թերեւս ոմանք ասեն թէ նրանք յուսամ էին որ յետոյ փառք կստանան։ Սա'յն այս կարելի չէր վասնզ՝, եթէ նրանց գործը հիմնուած էր ստութեան վրայ, պատճառ չունէին յուսալու թէ վերջապէս պիտի յաջողուէին։

Աւետարանիչները աշխատեցին նեղուեցան եւ մեռան իվկայութիւն իրանց գրուածների ճշմարտութեանը։ Սրանց անկեղծութիւնը ցոյց տալու համար սրանից աւելի համոզիչ ինչ փաստ կարող է լինել։

Նաեւ միթէ կարելի՞ է որ սխալ լինին այն գրուածքն որոնց մէջ այնպիսի նուաստացուցիչ բաներ են ասուած մարդուս անկ'ալ բնութեանը նկատմամբ, եւ այնպիսի մեծ վարդապետութիւններ են յիշուած ամենուածային բնութեանը նկատմամբ, որոնց մէջ այնպէս հաստատութեամբ նկարագրուած են մարդկանց անկատարութիւնը եւ Յիսուս Քրիստոսի կատարելու-

թիւնը, որոնց մէջ արգիլուած չէ որ եւ իցէ բան որ մաքուր արդար եւ բարի է, եւ թոյլ տրուած չէ մի բան որ սուտ կամ մոլեկան է. որոնց մէջ բացայայտ ցոյց է տրուած մարդկանց իրանց կորուսեալ վիճակը, եւ մի կատարեալ Փրկչի միջոցով փրկուելու ճանապարհ։ Միթէ կարելի՞ է որ չար մարդիկ այսպիսի գրքեր գրեն։ Միթէ անձնասէր եւ չահախնդիր մարդիկ ամէն տեսակ նեղութիւն յանձն կառնե՞ն որ այսպիսի վարդապետութիւններ քարոզեն եւ մարդկանց իրար սիրել եւ սուրբ լինել սովորցնեն։ Ո՞վ կարող է հաւատալ սրան։ Ամենից երեւելի անհաւատներն իւր ընդունում են թէ այս կարելի չէ, եւ չեն ամբաստանիլ աւետարանիչներին իբրեւ կամաւ խաբեբաներ։

3. Աւետարանիչները այնպիսի տեղ եւ այնպիսի վիճակի մէջ էին որ կարող էին անձամբ քաջ տեղեակ լինել այն դէպքերին որ գրած են իրանց գրքերի մէջ։

Աւետարանիչներն այնպիսի պարագաների մէջ էին որ կարելի չէր որ նրանք խաբուէին։

Ա. Աւետարանիչները չեն պատմում այնպիսի դէպքեր որը աւանդութիւնից կամ ի լրոյ միայն կարող էին գիտենալ։ Աւետարանիչները կամ ականատես վկաներ էին իրանցից պատմուած դէպքերին, կամ այն դէպքերին վրայ իրանց տեղեկութիւններն առին ուղղակի ականատես անձերից։

Մարկոս թէեւ ականատես վկայ չէր իրանից պատմուած դէպքերին, բայց ընկեր էր Պետրոս առաքեալին, որ ականատես էր այն դէպքերին, եւ Մարկոս կարող էր նրանից ստուգել իր գրուածներին ճշմար-

տութիւնը։ Ղուկաս չէ պնդում թէ ականատես վկայ էր իր պատմած դէպքերին, բայց իր Աւետարանի ըսկիզբում ասում է թէ իր տեղեկութիւններն առաւ նրանցից «որ սկիզբից աչքով տեսած էին,» եւ թէ՝ քննեալ եւ ստուգել էր ինչ որ սկիզբից ճշմարտութեամբ տեղեկացած էր։» Բայց միւս երկու աւետարանիչները Մատթէոս եւ Յովհաննէս, անձամբ ականատես էին դէպքերի մեծ մասի որը յիշում են։

Որովհետեւ աւետարանիչներից երկուսն իրանց տեղեկութիւններն առին ուղղակի ականատես վկաներից եւ միւս երկուսն անձամբ ականատես էին պատմուած դէպքերին եւ կարող էին քաջ տեղեակ լինել նրանց, ապա յայտնի է թէ սուտ եւ ունայն զրոյցներից խաբուած չէին։

Բ. Աւետարանների մէջ յիշուած դէպքերն այնպէս բազմատեսակ եւ բազմաթիւ են, որ աւետարանիչների համար անհնար էր նրանց վրայով խաբուիլ։ Եթէ աւետարանիչները մէկ դէպք միայն յիշէին, կարելի էր ենթադրել թէ խաբուած էին։ Բայց աւետարանիչները յիշում են ոչ մէկ դէպք միայն, ոչ էլ մէկ օրուան, մէկ շաբաթուան կամ մէկ ամսուան դէպքեր, այլ շատ դէպքեր որ երեք տարուան մէջ պատահեցին։ Այս դէպքերի վրայով խաբուիլ կարելի չէր աւետարանիչներին։

Գ. Նաեւ Աւետարանների մէջ յիշուած դէպքերի մեծ մասն այնպէս էին, որ նրանց վրայով խաբուիլ անկարելի էր աւետարանիչներին։ Անկարելի էր նրանց խաբուիլ Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնների վրայով։ Աւետարանիչները, ինչպէս ցոյց տուինք, ոչ թէ ցնորամիտ, այլ կարող մարդիկ էին,

եւ այսպիսի մարդիկ չէին կարող սխալ հասկացած լինել Քրիստոսի խօսքերը. մանաւանդ երկուսը, որ երեք տարի միշտ նրա հետ էին, նրա հետ ճանապարհորդում էին, եւ ամեն օր մոտիկ էին անում նրա խօսքերը: Նաեւ Յիսուս շատ անգամ առանձին մեկնում էր նրանց ինչ որ հրապարակաւ ասում էր առակներով, եւ ինչ որ նրանք լաւ հասկացած չէին: Արդ, ինչպէ՞ս կարելի էր նրանց խաբուած լինել Յիսուսի վարդապետութիւնների վրայով: Նոյնպէս անկարելի էր նրանց խաբուիլ Յիսուսի գործքերին վրայով: Եթէ նրանք հասկանում էին նրա խօսքերը, հասկանում էին նաեւ նրա գործքերը, քանզի նրա խօսքերը շատ անգամ գործքերին էին վերաբերում եւ այն գործքերի մեկնութիւնն էին: Չենք կարող Յիսուսի գործքերը բաժանել նրա խօսքերից:

Դ. Այն զարմանալի գործքերը որ աւետարանիչները պատմում են, այնպիսի գործքեր էին որ աւետարանիչներին կարելի չէր նրանց վրայով խաբուիլ: Աւետարանիչները ասում էին թէ Յիսուս խօսքով բացեց կոյրի աչքը եւ կաղին գնալ տուաւ: Թերեւս ասուի թէ աւետարանիչները խաբուելով կարծեցին թէ Յիսուս մահ էր գալիս ծովի վրայ: Բայց երբ տեսան որ նաեւ իրանցից մէկը Յիսուսի հրամանով սկսեց ծովի վրայով նրա մօտ գնալ, մի՞թէ կարելի էր որ այն ժամանակ էլ խաբուէին: Ոչ, անկարելի էր: Աւետարանիչները գիտէին անտարակոյս թէ հազարաւոր մարդիկ մի քանի նկատակով կչտացին առնապատին մէջ, եւ թէ Ղազարոս մեռած՝ գերեզմանին մէջ էր եւ Քրիստոսի հրամանով գերեզմանից դուրս եկաւ: Անկարելի էր նրանց խաբուած լինել թէ Յիսուսի

յարութիւնից յետոյ նրա հետ նստեցին, դուրս եկան, խօսեցին եւ ճաշեցին: Կարելի չէր աւետարանիչներին խաբուելով իրական կարծել այն բաները որ առաջօք տեսել էին միայն եւ ոչ իր:

Թէ աւետարանիչները կարող եւ անկեղծ վկաներ էին, եւ թէ այնպիսի տեղ եւ այնպիսի վիճակի մէջ էին որ կարող էին լաւ քննել զէպքերը որ պատմում են, այս հաստատող ապացոյցները արդարեւ այնպէս զօրեղ են որ, թէեւ ուրիշ ապացոյցներ չլինէին, պարտ էինք աւետարանիչների գործերն իբրեւ հաւատալի պատմութիւն ընդունել:

4. Կանուրիշ ապացոյցներ որ հաստատում են թէ Աւետարանները հաւատալի են:

Ա. Հրէից գրքերից ապացոյցներ:

Թալմուդը, որ հաւաքածոյ է Հրէական աւանդութիւնների որոնց մէկ մասը ժողովուած է Քրիստոսի Թուականի երկրորդ դարում, պատմում է Քրիստոսի վրայով քանի մի բաներ եւ անուանով յիշում է նրա աշակերտներից մի քանիսին: Այս հրէական գրուածքը ընդունում է թէ Քրիստոս շատ եւ մեծամեծ հրաշքներ գործեց, բայց նրա սքանչելագործ զօրութեան պատճառը, ասում է, այս էր ու Յիսուս սովորած էր Աստուծոյ անճառելի անունը չիտակ արտաբերել, եւ ըստ Թալմուդի, Յիսուս այս գիտութիւնը գողացաւ տաճարից:

Անուանի Հրեայ պատմիչը, Յովսեփոս, որ իր պատմութիւնը Քրիստոսից քիչ յետոյ գրեց, կարեւոր վկայութիւններ է տալիս: Նրա պատմութեան մէջ Աւետարանների նկատմամբ ասուածները հաստատում են

թէ Աւետարանները հաւատալի են։ Յովսեպոս իր պատմութեան մէջ մի քանի բաներ է յիշում Հրէից ազգանունների, Հերովդեսի, Պիղատոսի, Փելիքսի, Դրուսիլլայի եւ Յովհաննէս Մկրտչի վրայով, եւ նրա խօսքերը համաձայն են Աւետարաններին։ Հերովդեսի մահուան վրայով Յովսեպոսի գրածը շատ նմանում է Ղուկասի գրածին։ Յովսեպոսի գրքին հինգերորդ գլխին մէջ Քրիստոսի վրայով նշանաւոր վկայութիւնը արդէն յիշեցինք։ Յովսեպոս ասում է Յիսուսի մահ դատապարտուեցաւ Պոնտացի Պիղատոսից, եւ երրորդ օրը յարութիւն առաւ։ Պատճառ չկայ Յովսեպոսի այս վկայութիւնն իբրեւ հարազատ վկայութիւն չընդունելու։

Բ. Հռոմայեցոց գրքերից ապացոյցներ։ Հռոմայեցի կուսակալները սովոր էին գրով իմացնել կայսրներին յիշուելու արժանի ինչ բան որ պատահում էր իրանց գաւառների մէջ։ Կուսակալներից տրուած տեղեկութիւնները չէին հրատարակվում, սակայն պահվում էին Հռոմէական պետութեան դիւանների մէջ իբրեւ Գործք Գաւառական Վարչութիւնների։ Եւսեբիոս պատմիչը Հռոմայեցի կուսակալների այս սովորութեան վրայ խօսելով ասում է. «Որովհետեւ մեր Տէրոջը յարութիւնն այնպիսի դէպք էր որի վրայ շատ էր խօսվում բոլոր Պաղեստինի մէջ, Պիղատոս այս դէպքի մասին տեղեկութիւն տուաւ կայսրին։

Յուստինոս վկայ իր առաջին ջատագովութեան մէջ որ մատոյց Անտոնիոս Պիոս կայսեր եւ հռոմէական ծերակոյտին Քրիստոսի մահուանից իբր հարիւր տարի յետոյ, Քրիստոսի խաչելիը պարագաների հետ

միասին յիշելով աւելացնում է. «Թէ այս բաներս այսպէս եղան, կարող էք Պոնտացի Պիղատոսի ժամանակի Գործքերից իմանալ։» Դարձեալ Քրիստոսի հրաշագործութիւնների վրայ խօսելով, նոյն խօսքերով ակնարկում է Պիղատոսի վերոյիշեալ Գործքերը։ Արդարեւ Յուստինոս վկան չէր յիշիլ կայսեր այն Գործքերը, եթէ նրանց մէջ պատմուած չլինէին Յիսուսի մահուան յարութեան եւ հրաշագործութիւնների վերաբերեալ դէպքեր, իսկ եթէ այս դէպքերը պատմուած են այն Գործքերին մէջ, ապա այն Գործքերը զօրաւոր ապացոյց են հաստատելու թէ հաւատալի են Աւետարանները։

Նաեւ Տերտուղիանոս խօսում է Պիղատոսի Գործքերին վրայ եւ մի քանի բան է յիշում որոնց մասին խօսուած է նրանց մէջ։

Տակիտոսից վկայութիւն։ Այս Հռոմայեցի մատիչը, որ Քրիստոսի մահուանից իբր 20 տարի յետոյ ծնուեց, պատմում է իր գրուածքներին մէջ թէ Քրիստոս իբրեւ չարագործ ի մահ դատապարտուեցաւ Պոնտացի Պիղատոսից, թէ Քրիստոնեայ կոչուած մարդիկ իրանց անունն առին Քրիստոսից, եւ թէ այս հաւատքը (որը անապաշտութիւն է անուանում) սարածուած է մինչեւ ի Հռոմ, որ մեծ բազմութիւն հաւատում է Քրիստոսին. պատմում է նաեւ վաղեմի Քրիստոնեաների սոսկալի հալածանքը եւ նեղութիւնները եւ ասում է. «Քրիստոնեաները պատժելու համար այնպիսի պատիժներ էին հնարուած որ նրանց ծաղրածութեան եւ նախատանաց նշանակ էին անում։ Ոմանց վայրի գազանների մորթեր էին հագցնում որ նորանց շուներին տան որ փարատեն. ոմանց էլ

դիրքաւոր նիւթերի մէջ թաթախելով այրում էին մինչեւ ի մահ։

Պլինիոսից վկայութիւն։ Կայ մի հռչակաւոր նամակ Պլինիոսից գրուած առ Տրայիանոս կայսեր Քրիստոսի խաչելութիւնից իբր 70 տարի յետոյ։ Պլինիոս կուսակալ էր Պոնտոսի եւ Բիւթանիոյ, որ Հրէաստանից հեռու Ասիական գաւառներ էին։ Պլինիոս այն նամակի մէջ մի քանի տրացեալ Քրիստոնեաների խոստովանքների մասին խօսելով ասում է. «Բոլորն էլ ասում են թէ նրանց յանցանքը նրանումն է որ սովոր են որոշեալ օր լուսանալուց առաջ մէկ տեղ ժողովուելով երգել մի մի երգ ի պատիւ Յիսուսի իբրեւ Աստուծոյ, եւ երդումով ուխտել որ բնաւ չարութիւն չգործեն, գողութիւն, աւազակութիւն եւ շնութիւն չանեն, սուտ չխօսեն եւ չուրանան այն աւանդն որ պահ է դրուած իրանց մօտ։» Այս խօսքն այնպէս տարօրինակ թուեցաւ Պլինիոսին որ տանջել սուտ երկու կանայք բայց չկարողացաւ մի աւելի բան երեւան հանել։ Պլինիոս այն նամակին մէջ խօսում է նաեւ Քրիստոնէից թշնամի վրայ եւ ասում է. բոլոր դատաստանական գործողութիւնները դադարեցնելով դիմում եմ ձեզ խրատի համար, քանզի ինձ թւում է թէ այս բանն արժանի է նկատողութեան առնելու, մանաւանդ նրա համար որ տանջուելու (այսինքն խարուելու) վտանգի մէջ եղողների թիւը շատ մեծ է, քանզի ամեն հասակից, ամեն կարգից եւ երկու սեռից բազմաթիւ մարդիկ ամբաստանուած են եւ պիտի ամբաստանուին իբրեւ Քրիստոնեայ։ Այս մեղադրութիւնը տարածուած է ոչ միայն քաղաքների այլեւ աւանների եւ գիւղերի մէջ։

Վերոյիշեալ հեթանոս մատենագիրները հաստատում են իբրեւ ճշմարիտ ինչ որ աւետարանիչները ասում են Քրիստոնէութեան սկզբանը արագ արագ տարածուելուն, առաջին Քրիստոնեաների յատկութիւնների եւ նրանց հալածանքների եւ չարչարանքների մասին։ Այսպիսի ազդեցիներ գտնվում են նաեւ Կեղոսոսի, Լուկիանոսի եւ Պորփիւրի գրքերի մէջ, որոնք Քրիստոնէութեան դէմ յարձակումներ արին։

Գ. Հին գրամների, միդալների եւ արձանագրութիւնների ապացոյցներ։ Այս գրամների, միդալների եւ արձանագրութիւնների մեծ մասը հաստատում է թէ Հին կտակարանը հաւատալի է, բայց եւ այնպէս նրանցից ոմանք հաստատում են նաեւ Նոր կտակարանի պատմական ճշմարտութիւնը։

Ղուկաս Կիպրոսի կառավարչին, Սերգիոս Պողոսին, տալիս է մի այնպիսի տիտղոս որ փոխանորդ ըղեչիի աստիճանից եղող պաշտօնականներին էր միայն տրվում, եւ պատմաբաններից ոմանք տարակուսում էին թէ Սերգիոս Պողոս այն աստիճանն ունէր։ Սակայն մօտերս մի միդալ գտնուեցաւ որ ցոյց է տալիս թէ Կիպրոսի կառավարիչն այս աստիճանն ունէր եւ այսպէս հաստատվում է Ղուկասու խօսքը։

Ղուկաս Կողովնիա (գաղթականաց տեղ) անուանում է Փիլիպպէ, եւ այս բառից հասկացվում է թէ Հռոմայեցի գաղթականաց տեղ էր այն։ Որովհետեւ ուրիշ պատմիչ իբրեւ գաղթականութիւն չէ յիշած Փիլիպպէ, ոմանք տարակուսուած էին Ղուկասու խօսքին ճշմարտութեան վրայ. բայց մօտերս նոյնպէս մի հին

միջալ գտնուեցաւ, որ ցոյց է տալիս թէ գողթակա-
նութեան պատիւ էր արուած Փիլիպպէին Յուլիոս Կե-
սարից։ Եւ այսպէս դարձեալ հաստատւում է Ղուկա-
սու խօսքի ճշմարտութիւնը։

Սրանք յիշում ենք ցոյց տալու համար միայն թէ
ինչպէս ամեն տեսակ ապացոյցներ միաբանում են
հաստատելու թէ Աւետարանները հաւատալի են,

Դ. Նախնի Քրիստոնեաների վկա-
յութիւնից ապացոյցներ։ Ամեն մարդ
ընդունում է թէ, եթէ ունենայինք Աւետարանների
հրատարակուած ժամանակ ապրող հազար անաչառ
մարդկանց վկայութիւնները որոնք ցոյց տային թէ
Աւետարանների մէջ պատմուած դէպքերն իրօք տեղի
ունեցան, Աւետարանների արժանահաւատութիւնը մե-
ծապէս հաստատութիւն կ'գտնէր։ Ամեն մարդ ընդու-
նում է նաեւ իբրեւ վաւերական վկայութիւն այն
մարդկանց վկայութիւնն, որ ապրեցին մօտ այն ժա-
մանակին եւ տեղին որում պատահեցին Աւետարան-
ների մէջ յ'չուած դէպքերն, եւ որ կարող էին
լաւ հետազօտել թէ արդար'ւ պատահեցին այն դէպ-
քերը կամ ոչ, եւ եթէ պատահեցին, ի'նչ կերպով
պատահեցին։ Ամեն մարդ ընդունում է նաեւ թէ, ե-
թէ այն վկայութիւնները տուողները կրած լինէին
յանդիմանութիւն, նախատինք, արհամարանք, հար-
ուած, բանտարկութիւն, նոյն իսկ մահ, ի հաստատու-
թիւն իրանց վկայութեանը, նրանց վկայութիւնը
կարող էր իբրեւ վաւերական ընդունուել։ Արդ, կան
այսպիսի վկայութիւններ որ նպաստաւոր են աւետա-
բանիչների արժանահաւատութեանը։ Այս վկաների
խօսքերն արդարեւ գրուած չեն, բայց այնպէս տոյգ

են որպէս թէ նրանց ձեռքով գրուած եւ ստորագրը-
ուած լինէին։

Սրանց գործերը ծանօթ են մեզ, եւ հարկաւ այս
գործերը համոզումից կարող է առաջ եկած լինել։ Հա-
զարաւոր մարդիկ որ, ինչպէս պատմութիւնը ստու-
գիւ ցոյց է տալիս, ընդունեցին Քրիստոնէութիւնը
Յիսուսի խաչելութիւնից քիչ տարիներ յետոյ, այն-
չափ չարչարանք եւ տանջանք չէին կրիլ, եթէ Աւետ-
արանների մէջ պատմուած դէպքերին ճշմարտութեան-
նը վրայ համոզուած չլինէին։ Բացի իրանց համոզում-
ից ուրիշ պատճառ չկար ստիպելու նրանց Քրիստոն-
եայ լինելու, քանզի յիշեալ մարդիկն այն ժամանակ
Քրիստոնէութիւնն ընդունելով ոչ հարստութիւն էին
ստանում, ոչ պատիւ եւ ոչ հանգստութիւն։ Ուստի
այն հազարաւոր մարդիկն որ թողեցին իրանց աղգն,
ազգականներն եւ բարեկամները Քրիստոնէութիւնն
ընդունելու համար, մանաւանդ ամեն նրանք որ մահ
անդամ յանձն առին Քրիստոսի սիրոյն համար, հենց
նոյն գործով վկայած են շատ համոզիչ կերպով թէ
արժանահաւատ էին համարում Աւետարանները, եւ
ցոյց են տուած թէ այնպէս համոզուած էին Քրիստո-
նէութեան ճշմարտութեանը որ պատրաստ էին զոհել
իրանց երկրաւոր գանձերը, միայն այս նպատակով որ
ընդունեն այն գանձերն որ խոստացուած են Աւետա-
բանների մէջ։ Այսպէս կան հազարք հազարաց եւ
բիւրք բիւրուց անկեղծ եւ խոհական վկաներ որ հաս-
տատում են Աւետարանների արժանահաւատութիւնը։

Ե. Նոյն իսկ Քրիստոնէութիւնից
ապացոյցներ։ Նոյն իսկ Քրիստոնէութեան
գոյութիւնը հաստատում է թէ Աւետարանները հաւա-

տալի են։ Եթէ ընդունենք Աւետարաններն իբրեւ ճշմարիտ եւ վաւերական պատմութիւն, այն ժամանակ կարելի է մեկնել Քրիստոնէութեան ծագման, արագ արագ տարածուելուն եւ աշխարհի վրայ գործած զօրաւոր եւ տեւական ազդեցութեան հետ կապակցեալ բոլոր դէպքերը։ Իսկ եթէ Աւետարանները մերժուին իբրեւ անհաւատալի, այն ժամանակ յիշեալ դէպքերը կ՚մնան անմեկնելի եւ աշխարհի վրայ ամենից մեծ իմացական եւ բարոյական շարժման ծագումը եւ յառաջդիմութիւնը կ՚լինեն առեղծուած որ ոչ լուծուած է եւ ոչ կարողէ լուծուել։

Շատերը որ ուրանում են Աւետարանների արժանահաւատութիւնը, ջանացել են ուրիշ կերպով մեկնել քաղաքակիրթ աշխարհի մէջ Քրիստոնէութեան արագ տարածումն եւ այն մեծ ազդեցութիւնը որ Քրիստոնէութիւնն ունեցել է տասնեւութ դարերէ ի վեր, բայց չեն յաջողուել։ Եթէ ընդունում ենք Աւետարանները իբրեւ ճշմարիտ պատմութիւն, այն ժամանակ ամեն բան բացորոշ է։ Եթէ Յիսուս Քրիստոս արդարեւ էր ինչ որ ասում են աւետարանիչները թէ էր, այն ժամանակ եւ միայն այն ժամանակ կարելի է ըմբռնել թէ ինչո՞ւ ամենից լուսաւորեալ եւ քաղաքակրթեալ ազգերից միլիոնաւոր մարդիկ աստուածային պատիւ են մատուցրել այն Գալիլիայի երիտասարդ դիւղացուն։ Եթէ արդարեւ Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից, ինչպէս պատմվում է Աւետարանների մէջ, այն ժամանակ եւ միայն այն ժամանակ կարող ենք հասկանալ թէ ինչպէս այնչափ շատ մարդիկ պատրաստ էին տանջուելու եւ սպանուելու նրա սիրոյն համար որ դատապարտուեցաւ նրանց

ազգից, իմաստ մատնուեցաւ իբրեւ չարագործ եւ խաչուեցաւ երկու աւազակների մէջ տեղ։ Եթէ արդարեւ Քրիստոնէութիւնն Աստուածանից է, ինչպէս ասվում է Աւետարանների մէջ, այն ժամանակ կարող ենք հասկանալ այն զարմանալի զօրութիւնը որը ունեցել է անցեալ դարերում։ Ուրիշ կրօնք երբէք չտարածուեցաւ այսպիսի միջոցներով, ոչ էլ յաղթական կանգնեց այնպիսի թշնամիների վրայ, ինչպէս Քրիստոնէութեան կրօնքը։ Արդ եթէ չընդունենք Աւետարանները իբրեւ հաւատալի գրքեր, չենք կարող բաւական կերպով մեկնել Քրիստոնէութեան պատմութիւնը։

Մինչեւ յարդ համառօտիւ մէջ բերինք ապացոյցներ հաստատելու համար թէ աւետարանիչները կարող եւ անկեղծ մարդիկ էին, եւ թէ՝ քա՛ջ տեղեակ էին այն դէպքերին որոնց պատմութիւնը անում են։ Ցոյց տուինք նաեւ, թէ աւետարանիչների արժանահաւատութիւնը հաստատվում է Հրեայ, հեթանոս եւ Քրիստոնեայ մատենագիրներից։ Այս այսպէս լինելով, մենք ինչ՞ պէտք է անենք։ Կամ պէտք է ընդունենք այն ապացոյցներն իբրեւ գոհացուցիչ, եւ կամ պէտք է հերքենք նրանց ուրիշ աւելի զօրեղ ապացոյցներով։

ԳԼՈՒԽ Թ.

ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՒԱՏՈՒԹԵԱՆԸ ԴԷՄ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ ԿԱ՞Ն։

—〓—

ԵԹԷ կան ապացոյցներ Աւետարանների արժանահաւատութեանը դէմ, որանք կամ աւետարանիչների անձերին կամ Աւետարանների պարունակութեանց դէմ պիտի լինեն։ Արդ, քննենք թէ կա՞ն մէկ կամ միւս տեսակից բաւական ապացոյցներ որ կարենան հերքել Աւետարանների արժանահաւատութիւնը։

Մի թէ կա՞ն ապացոյցներ աւետարանիչների անձերին դէմ։

Մենք պատրաստ ենք քննելու պատմական բոլոր ապացոյցները որ կարող են մէջ բերուիլ աւետարանիչների անձերի դէմ, բայց որովհետեւ նոյն իսկ անհաւատներն անկարող են մէջ բերել այս տեսակ ապացոյցներ, իրաւունք ունինք հետեւցնելու թէ այս տեսակ ապացոյցներ չկան։ Զկան վկաներ որ անձամբ ծանօթ լինելով աւետարանիչներին, կամ աւետարանիչների ծանօթներից նրանց վրայով տեղեկութիւն առած լինելով ասեն թէ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս անկարող եւ վատահութեան անարժան մարդիկ էին։ Այսպէս լինելով, եթէ կան ապացոյցներ Աւետարանների արժանահաւատութեան դէմ, ապա

այն ապացոյցներն Աւետարանների պարունակութեանը դէմ պիտի լինեն։ Ուրեմն,

Կա՞ն ապացոյցներ Աւետարանների պարունակութեանը դէմ։

Եթէ այսպիսի ապացոյցներ կան, որանք կամ բուն իսկ Աւետարաններից յառաջ եկած պիտի լինեն եւ կամ պատմութիւնից կամ գիտութիւնից. այսինքն, կամ Աւետարաններն իրար պէտք է հերքեն իրա՛ւ իրար հակասական, եւ կամ պատմութիւնը պէտք է հերքէ նրանց ցոյց տալով թէ նրանց մէջ գրուածները համաձայն չեն պատմական ծանօթ դէպքերին եւ կամ պէտք է գիտութիւնը հերքէ նրանց ցոյց տալով թէ ինչ որ Աւետարանների մէջ ասւում է հակառակ է մեզ ծանօթ բնական երեւոյթներին եւ օրինաց։ Բայց եթէ Աւետարանները չեն հերքում իրար, եւ ոչ պատմութիւնը եւ ոչ գիտութիւնն է հերքում նրանց, ապա Աւետարանները պէտք է ընդունենք իբրեւ արժանահաւատ գրքեր։

Ա. Արդեօք Աւետարանները իրար հերքո՞ւմ են իբրեւ իրար հակասական։

Այս խնդիրը քննելու ժամանակ հարկ է յիշել երեք բան։

Նախ Աւետարանները չեն ասում թէ Քրիստոսի կեանքի կատարեալ պատմութիւնն են։ Նոյն իսկ աւետարանիչներն ասում են թէ իրանք չգրեցին ամեն բան ինչ որ Յիսուս ասաց եւ արաւ (Յովհ. Ի. 30)։ Աւետարանիչները Յիսուսի կեանքի մի մի համառօտ պատմութիւնն են գրած, եւ նրանց չորսն էլ միեւնոյն բաները չեն յիշել։ Ուստի, իբր Աւետա-

բաններից մինը այս ինչ բանն է յիշում եւ միւսն այն ինչ բանը, սրանով իրար հակասական չեն համարուիլ, քանի որ մէկի յիշած բանը միւսը յայտնապէս կամ լռելով չէ հերքում։ Սակայն Աւետարանների մէջ այսպիսի հակասութիւն չկայ։

Երկրորդ, աւետարանիչները չեն ասում թէ բոլոր պարագաներովն հանդերձ գրում են այն բաները որ յիշում են իրանց գրուածներին մէջ։ Նրանց նկարագրութիւնները շատ համառօտ են։ Ուստի, երբ մի դէպքի պատմութեան մէջ իւրաքանչիւր աւետարանիչ միւսներից պարագաները չէ յիշում, սրանից ի հարկէ չի հետեւիլ թէ աւետարանիչները իրար հակառակ են խօսում, երբ մի դէպքի պատմութեան մէջ աւետարանիչների մէկից յիշուած մի պարագայ միւսից յիշուած ուրիշ մէկ պարագային անհամաձայն չէ գալիս։ Աւետարանների մէջ գտնուածների պէս տարբերութիւններ գտնվում են ուրիշ բոլոր արժանահաւատ պատմիչների գրուածներում։ Նաեւ ուրիշ մասնաւոր պատճառ կար որի համար բոլոր աւետարանիչները միեւնոյն պարագաները չեն յիշում։ Մատթէոս իր Աւետարանը գրեց մասնաւորապէս Հրէից համար, Ղուկաս գրեց իր Աւետարանը մասնաւորապէս հեթանոսաց համար, եւ Յովհաննէս գրեց իր Աւետարանը միւս երեք աւետարանիչների պակաս թողած կէտերը լրացնելու, եւ Քրիստոսի աստուածային բնութիւնն աւելի յայտնի ցոյց տալու համար, ուստի եւ իւրաքանչիւրը յիշեց այն դէպքերն եւ պարագաներն որ լաւ ծառայում էին իր նպատակին։ Այս զարմանալի չէ որ բոլոր աւետարանիչները միեւնոյն դէպքերն եւ միեւնոյն պարագաները չեն յիշում։

Երրորդ, աւետարանիչներն չեն պնդում թէ Աւետարանների մէջ պատմուած դէպքերը միշտ ժամանակի կարգով են գրել։ Արդարեւ աւետարանիչները ընդհանրապէս պատմում են դէպքերը ժամանակի կարգով, բայց որովհետեւ նրանց գլխաւոր նպատակը կանոնաւոր պատմութիւն գրել չէր, ոչ էլ որոշել ճշգիւ թէ իւրաքանչիւր հրաշք երբ գործուեցաւ, եւ իւրաքանչիւր խօսք երբ ասուեցաւ, այլ ուզում էին մանաւանդ մարդիկը կրթել նրանց ցոյց տալով ազգաւ խօսքերով Յիսուսի կարողութիւնը, խմաստութիւնը եւ շնորհքը երբեմն դէպքերը յիշում են ոչ ճշգիւ ժամանակագրական կարգով բայց սրանից չի հետեւիլ թէ հակասութիւն կայ նրանց պատմութեան մէջ, քանի որ աւետարանիչներից մէկը յայտնապէս չէ ասում թէ այս ինչ դէպքը տեղի ունեցաւ այս ինչ ժամանակ, միւսն էլ այնչափ յայտնապէս չէ պնդում թէ նոյն դէպքը տեղի ունեցաւ այն ինչ տարբեր ժամանակ։ Նաեւ երբ Աւետարանների մէջ գտնուած տարբեր պատմութիւնները քննութեան ենք առնում, պէտք է զգուշանանք չհամարել այլեւայլ դէպքերն իրարու միեւնոյն, որ ոչ թէ միեւնոյն այլ տարբեր դէպքեր են։

Այս գիտողութիւնները մտքի մէջ ունենալով համառօտիւ աչքից անցուցենք Աւետարանների մէջ գտնուած տարբերութիւնները։

Ա. Գլխաւոր դէպքերի եւ վարդապետութիւնների վերաբերեալ հակասութիւն ամենեւին չկայ Աւետարանների մէջ։

Յիսուսի յատկութիւնների վրայ, նրա նպատակին

վրայ, եւ միջոցներին վրայ՝ որոնցով այն նպատակն իրագործ հանեց, ամենեւին անհամաձայնութիւն չկայ աւետարանիչների մէջ։ Աւետարանիչները բոլորովին համաձայն են Քրիստոսի վարդապետութիւններին, նորա հրաշագործ զօրութեանը, խաչելութեանը եւ յարութեանը մասին։ Սրգալեւ աւետարանիչների մէջ աւելի մեծ համաձայնութիւն կայ քան օրինիցէ մի երեւելի անձի վարուց այլեւայլ պատմութիւնների մէջ։

Սոկրատ երկու համբաւաւոր փիլիսոփայ աշակերտ ունէր, Պղատոնը եւ Քսենոփոնը, որոնց երկուսն էլ գրած են Սոկրատի կենսագրութիւնը, բայց աւելի տարբերութիւն կայ Սոկրատի այս կենսագրութիւնների մէջ, քան Յիսուսի վարուց մասին աւետարանիչների կողմանէ գրուածների մէջ։ Բայց եւ այնպէս թէ Պղատոն եւ թէ Քսենոփոն համարվում են Սոկրատի արժանահաւատ կենսագիրներ։ Եթէ Աւետարանները մերժելի են իբրեւ անհաւատալի գրեանք վասնզի փոքր եւ անկարեւոր տարբերութիւններ կան նրանց մէջ, ապա պարտնք մերժել պատմական բոլոր գրքերը, քանզի այս տեսակ տարբերութիւններ նրանց մէջ աւելի շատ են գտնվում։

Բ. Աւետարանների մէջ գտնուած տարբերութիւնների մեծագոյն մասը դիւրաւ կարելի է համաձայնութեան բերուել։

Մատթէոս, Մարկոս եւ Յովհաննէս նկարագրում են մի դէպք որ Բեթանիոյ մէջ բորոտ Սիմոնի տանը տեղի ունեցաւ Քրիստոսի Յուդայից մատնուելուց քիչ ժամանակ առաջ։ Ով որ այս դէպքին վերաբերեալ

այլեւայլ տարբերութիւնները կարդայ (Մատթ. ԻՁ. 6—13 Մարկ. ԺԴ. 3—9 Յովհ. ԺԲ. 1—8) պիտի համոզուի թէ ընդհանուր համաձայնութիւն կայ նրանց մէջ։ Ամենքն էլ համաձայնում են գլխաւոր կէտերի մասին այսինքն յիշում են թէ երբ Յիսուս սեղան էր նստած, մի կին ծանրագին խունկի չիչով օծեց նրան, թէ առարկութիւններ եղան խունկի թափուելուն դէմ, եւ թէ ի՛նչ պատասխան տուաւ Յիսուս այն առարկութիւններին։ Բայց եթէ մարդ նուրբ քննէ այս երեք դէպքերի պատմութիւնները, կարելի է միքանի փոքր տարբերութիւններ գտնել նրանց մէջ։ Ոմանք կարող են ասել թէ աւետարանիչների պատմութեանը մէջ հակասութիւն կայ ճիշտ ժամանակին նկատմամբ երբ յիշեալ դէպքը տեղի ունեցաւ. բայց եթէ մարդ աւելի ուշադրութեամբ քննէ, պիտի տեսնէ թէ այսպէս չէ։ Վերոյիշեալ երեք աւետարանիչները ասում են թէ այս դէպքը տեղի ունեցաւ երբ Յիսուս Բեթանիա էր Յուդայից մատնուելուց քանի մի օր միայն առաջ, սակայն ոչ Մատթէոս, ոչ Մարկոս եւ ոչ Յովհաննէս յայտնապէս որոշում է օրը։

Մատթէոս եւ Մարկոս ասում են թէ կինը օծեց Յիսուսի գլուխը, մինչ դեռ Յովհաննէս ասում է թէ օծեց նրա ոտները, բայց միթէ սրա մէջ հակասութիւն կա՞յ։ Եթէ կինն օծեց Յիսուսի գլուխը եւ ոտները միանգամայն, որ շատ հաւանական է, հակասութիւն բնաւ չկայ։

Մարկոս ասում է. «կային ոմանք որ զժուարանում էին» խունկի կորստեանը մասին։ Մատթէոս ասում է. «Նրա աշակերտները տեսնելով զժուարացան։» Իսկ Յովհաննէս ասում է. «Յուդան որ պիտի մատնէր նո-

բան, ասայ. Ինչո՞ւ համար այդ իւղը չծախուեցաւ եւ-
րեք հարիւր դահեկանի, որ աղքատներին տրուէր։»
Բայց այս տարբեր խօսքերին մէջ միթէ էական տար-
բերութիւն կա՞յ։ Ոչ, վասնզի իրաւունք ունինք կար-
ծելու որ այնտեղ ներկայ եղողներից ոմանք զար-
ուարացան, եւ սրանց մէջ էին աշակերտներ-
ը ն, որոնցից մինը նաեւ Յուդան էր որ արաւ վեր-
ի հարցումը, եթէ այսպէս էր ապա որեւիցէ հակա-
սութիւն չկայ։ Սակայն անհաւատներից ոմանք ասում
են թէ երեք աւետարանիչների այս պատմութիւնը
բնաւ չի համաձայնում Ղուկասու Աւետարանի մէջ
գտնուած պատմութեան հետ։ Արդարեւ այսպէս է,
քանզի յայտնի երեւում է թէ Ղուկաս պատմում է մի
ուրիշ դէպք, որ մի քանի պարագաների կողմանէ նմանում է վերոյիշեալ դէպքին։ Ղուկասու Է.
36 – 50 համարների մէջ յիշուած դէպքը տեղի ունե-
ցաւ տարբեր ժամանակի մէջ, եւ այն կինը որ օծեց
Յիսուսի ոտները՝ Մարթայի քոյրը Մարիամը չէր, այլ
մի ուրիշ կին որ մեղաւոր էր, եւ այնտեղ գտնուող-
ների առարկութիւնները բոլորովին տարբեր էին,
ինչպէս էր նաեւ Յիսուսի պատասխանը։ Սակայն ան-
հաւատները ցոյց տալու համար թէ աւետարանիչները
իրար հակասական են, ասում են թէ պարտ ենք
ընդունել թէ բոլոր աւետարանիչները նկարագրում
են միեւնոյն դէպքը, քանզի ամենքն էլ ասում են թէ
այն դէպքը տեղի ունեցաւ մի մարդու տանը որի ա-
նունն էր Սիմոն, եւ անհաւանական է որ երկու կին
օծէին Յիսուսի ոտները։ Այս պատճառները եւ փաս-
տերն ամենեւին դոհացուցիչ չեն։

Սիմոն հասարակ անուն էր Հրէից մէջ, ինչպէս են

Կարապետ եւ Գրիգոր Հայոց մէջ. բայի սրանից նոյն
իսկ աւետարանիչները երեւի ուզել են ցոյց տալ թէ
այն դէպքը տեղի չունեցաւ միեւնոյն Սիմոնի՞ տանը,
քանզի Մատթէոս, Մարկոս եւ Յովհաննէս Սիմոն բո-
լոր են անուանում այն անձը, մինչդեռ Ղուկաս ա-
սում է թէ այն դէպքը փարիսեցի Սիմոնին տանը
տեղի ունեցաւ։ Նաեւ միթէ հնար չէ՞ր որ երկու կա-
նայք օծէին Յիսուսի ոտները։ Երբ իմացուեցաւ թէ
հաճոյ եղաւ Յիսուսին այն կնոջ գործը, այն է օծելն
Յիսուսի ոտներն, անհաւանական չէ որ մի ուրիշ կին
եւս համաձարկուեցաւ նոյնպէս անել։ Աւետարանիչ-
ների խօսքերին տրամաբանութեան եւ ուղղութեան
հակառակ մեկնութիւն տալով միայն կարելի է ասել
թէ աւետարանիչների գրուածներն իրար հակասական
են։

Նաեւ ոմանք ասում են թէ Պետրոսի Քրիստոսին
երկրորդ անգամ ուրանալուն պատմութեան մէջ հա-
կասութիւն կայ։ Ըստ Մարկոսի միեւնոյն աղախինն
արաւ երկրորդ հարցումը Պետրոսին, բայց Ղուկաս ա-
սում է թէ մի ուրիշը արաւ այն հարցումը։ Այս
տարբերութեան մեկնութիւնը կայ Յովհաննու Աւե-
տարանի մէջ, ուր ասվում է ոչ թէ միայն մի քանի
անձինք արին այն հարցումը Պետրոսին։ Արդ՝ Աւե-
տարանների այս պատմութեան մէջ իրօք հակասու-
թիւն չկայ, վասն զի կարելի է թէ նոյն աղախինը
երկրորդ անգամ հարցրեց Պետրոսին, եւ յետոյ մի ու-
րիշը, եւ վերջապէս ուրիշ մի քանի անձինք միեւնոյն
հարցումը արին Պետրոսին։ Շատ հաւանական է թէ
աղախնու հարցումից չարժուելով արին ուրիշները
նոյն հարցումը։ Հիմա էլ նոյնպիսի պարագաների՞ մէջ

կարող է այնպէս պատահել, ապա ի՞նչ անհաւանականութիւն կայ թէ այնպէս չեղաւ նաեւ այն ժամանակ։ Աւետարանների մէջ տեսնուած տարբերութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ պարագաների զանազանութիւն, եւ պարագաների զանազանութիւնը հակասութիւն չէ, քանզի զանազան պարագաների մէջ ամենքն էլ կարող են ճշմարիտ լինել։

Անհաւատներից ոմանք ասում են թէ աւետարանիչների մէջ հակասութիւն կայ Բրիտոսի խաչելութեան կողմանէ։ Ըստ Մատթէոսի՝ Բրիտոս խաչուեցաւ ժամը երեքին, ուր ըստ Յովհաննու, դեռ ժամը վեցն էր երբ Պիղատոս նստեց դատել Յիսուսին։ Այս տարբերութիւնը կարելի է մեկնել։ Յովհաննու Աւետարանի ուրիշ մասերից շատ հաւանական է երեւում թէ Յովհաննէս ըստ Հռոմայեցոց է հաշուում ժամերը կէս գիշերից սկսելով, մինչդեռ Մարկոս Հրէից սովորութեանն է հետեւում եւ ժամերը հաշվում է արեւի ծագումից։ Մի Գերմանացի նշանաւոր մեկնիչ նկատելով տարուայ այն եղանակին, այսինքն գարնան մէջ, արեւի ծագման ժամը, եւ թէ որչափ ժամանակ պէտք էր Պիղատոսին որ ըստ Հռոմէական սովորութեան աւարտէր Յիսուսի դատը, հետեւցնում է թէ վերը յիշուած մեկնութիւնը գոհացուցիչ է։ Մի թէ երկու անձինք իրարու կ'հակառակի՞ն, երբ մինը ժամանակն ըստ արեւելեաց հաշուելով իր գրքին մէջ կ'գրէ՞ թէ այսինչ դէպքը տեղի ունեցաւ Կոստանտնուպոլիս վեցերրորդ ժամին, եւ միւսն ըստ Եւրոպայեցոց հաշուելով ժամանակը գրէ թէ նոյն դէպքը տեղի ունեցաւ օրուան ժամը մէկին։

Մի ուրիշ օրինակ առնենք։ Մատթէոս ասում է

թէ Յիսուս բացաւ երկու կոյրերի աչքը Երիքովի մօտ, իսկ Մարկոսը եւ Ղուկասը ասում են թէ մէկ կոյրի աչքը բացուեցաւ։ Ըստ Մատթէոսի եւ ըստ Մարկոսի այս դէպքը տեղի ունեցաւ Յիսուսի Երիքովից դուրս գնալիս, ըստ Ղուկասու, ինչպէս գրում է՝ Երիքովին մօտենալիս։ Միթէ արդարեւ հակասութիւն կա՞յ այս երկու պատմութեան մէջ այնպէս որ կարելի չլինի նրանց համաձայնեցնել։ Ոչ։ Կարելի է համաձայնեցնել նրանց մի քանի կերպով։ Կարելի է թէ Յիսուս բացաւ մի կոյրի աչքը երբ Երիքով էր մտնում, ինչպէս ասում է Ղուկաս, եւ մի ուրիշ կոյրի աչքը բացաւ երբ Երիքովից դուրս էր գնում, ինչպէս ասում է Մարկոս. իսկ Մատթէոս համառօտիւ յիշում է թէ Յիսուս երկու կոյրերի աչքերը բացաւ։ Մի ուրիշ մեկնութիւն էլ դուցէ հանուի Ղուկասու Աւետարանի մէջ գործածուած բառից, որ կարող է նշանակել նաեւ թէ Յիսուս կոյրին աչքերը բացաւ քաղաքին մօտ, ոչ թէ քաղաքին մօտենալիս։ Արդարեւ չենք կարող ստուգիւ հաստատել թէ այս երկուսից որն է բառին բուն միտքը, բայց անհաւատներն էլ կարող չեն հաստատել թէ այս մեկնութիւնների երկուսն էլ սխալ են։ Բուն հակասութիւն չեն այն տարբերութիւններն որոնց կարելի է որեւիցէ կերպով իրար հետ համաձայնեցնել, թէ բաւական ապացոյց չլինի ստուգիւ հաստատելու թէ մեկնութիւնն որ տալիս ենք՝ ուղիղ է։

Մեր միջոցը չէ ներում մեզ աւելի ընդարձակօրէն քննել Աւետարանների մէջ գտնուած տարբերութիւնները, եւ ոչ իսկ կարեւոր ենք համարում մի այսպիսի քննութիւն, քանզի Նոր կտակարանի մէջ գտնուած

տարբերութիւնների մեծագոյն մասը վերեւ յիշուած տարբերութիւնների կարգից են։ Գրեթէ բոլոր տարտարբերութիւնները կարող են դիւրաՀամաձայնեցնել, եւ նոյն իսկ այն սակաւաթիւ անկարեւոր տարբերութիւնները որոնց համաձայնութիւնը չենք կարող ստուգիւ ցոյց տալ, բուն հակասութիւն չեն։ Սակայն հնար է նրանց եւս բերել համաձայնութեան։ Այն տարբերութիւնները հակառակն են թւում, վասն զի Աւետարանները շատ հարառօտ են, եւ նրանց մէջ պատմուած դէպքերին վրայ մեր տեղեկութիւնները շատ քիչ են։

Մի քանի տարի առաջ աստեղագէտներն ասում էին թէ անկարող էին Ուրանոս մոլորակին շարժումը համաձայնեցնել ծանրութեան օրէնքների հետ։ Այս պարագայն մէջ աստեղագէտները ի՞նչ արին։ Մի թէ տիեզերական ծանրութեան օրէնքը մերժեցի՞ն, ասելով թէ Ուրանոսի շարժման հետ չէ համաձայնում։ Ոչ երբէ՛ք։ Ընդհակառակն, ասեցին թէ դեռ մի անծանօթ բան կայ, որ երբ գտնուի՝ պիտի ցոյց տայ թէ Ուրանոսի շարժումն համաձայն է ծանրութեան օրէնքներին, եւ արդարեւ այսպէս էլ եղաւ, քանզի յետոյ գտան այն անծանօթ բանը որ ցոյց տուաւ թէ Ուրանոսի շարժումը համաձայն է ծանրութեան օրէնքներին հետ։ Մենք եւս երբ Աւետարանների մէջ տեսնուած տարբերութիւնները քննում ենք, պարտ ենք նոյն խմաստութիւնը ցոյց տալ. ոչ թէ թեթեւութեամբ հետեւցնել թէ, որովհետեւ չենք կարող այսօր որ չ կերպով ցոյց տալ թէ Աւետարանների իւրաքանչիւր համարն ի՛նչպէս է համաձայնում միւս համարներին հետ, ապա Աւետարանները

իրար հակասական են։ Մի այսպիսի հետեւութիւն բանաւոր չէ։ Աւետարանների մէջ գտնուած ընդհանուր համաձայնութիւնն ընդունուած է։ Այն համաձայնութիւնը՝ որ Աւետարանների մէջ տեսնվում է փոքրը դէպքերի եւ երկրորդական պարագաների նկատմամբ եւ է առանց դիտաւորութեան եւ ըստ պատահման շատ նշանաւոր եւ շատ հաւոլիչ է։ Բանաբերները որչափ աւելի ուշադրութեամբ քննում են Աւետարաններն եւ որչափ աւելի տեղեկութիւն բռնում այն ժամանակին վրայ որում գրուեցան Աւետարաններն այնչափ աւելի հաւոլվում են թէ նրանց մէջ կայ ընդհանուր համաձայնութիւն։ Վերջին քննութիւնները ցոյց են տուել թէ մի քանի տարբերութիւններ, որ առաջուց հակասական էին թւում հիմայ կարելի է որ միաբանութեան բերուեն։ Ուստի եւ զարմանալի չէ թէ երեւելի գիտուններից շատերն որ տարիներով քննած են Աւետարաններն՝ համոզուած են թէ իրօք եւ բացարձակ հակասութիւն չկայ նրանց մէջ, եւ թէ եթէ աւելի ընդարձակ տեղեկութիւն ունենայինք Աւետարանների մէջ պատմուած դէպքերի վրայ, հակասութիւն բնաւ պիտի չտեսնուէր նրանց մէջ։ Ապա Աւետարաններն իրար չեն հերքում իբրեւ հակասական, այլ, ընդհակառակն, իրանց էական համաձայնութեամբն եւ պատահական տարբերութիւններովը զօրաւոր կերպով հաստատում են իրար արժանահաւատութիւնը։

ԳԼՈՒԽ Ժ.

ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՒԱՏՈՒԹԵԱՆԸ ԴԷՄ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ ԿԱ.Ն։

(Շարունակութիւն)

—

Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԵՐՔՈ՞ՒՄ Է ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

—〓—

Մանաւորապէս չորս Աւետարանների արժանահաւատութեանը վրայ ենք խօսում. բայց որովհետեւ Աւետարանները Հին կտակարանի գրքերի արժանահաւատութեանը վրայ են հիմնուած, հարկ է քննել թէ արդեօք պատմութիւնը հերքո՞ւմ է Աստուածաշունչի որեւիցէ մէկ գիրքը։

Այս նիւթին վրայ ըստ արժանոյն խօսելու համար մի ամբողջ հատոր գիրք գրել պէտք էր, բայց մեր գրքի անձկութեան պատճառաւ հարկ է որ մի քանի էջի մէջ բովանդակենք մեր խօսքը։

Աստուածաշունչը բուն պատմութիւն չէ, քանզի նրա հեղինակների գլխաւոր նպատակը տիեզերական պատմութիւն, կամ որեւիցէ ազգի քաղաքական պատմութիւնը գրել չէր, բայց եւ այնպէս Աստուածաշունչը իրաւամբ կոչվում է պատմական գիրք, քանզի աստուածային Փրկչի միջոցով մարդկային ազգին մեղ-

քից ազատուելուն պատմութիւնն է, եւ այս փրկագործութիւնը նկարագրելիս պատմում է շատ պատմական դէպքեր որ այս փրկագործութեան հետ վերաբերութիւն ունին։ Աստուածաշունչը համառօտիւ նկարագրում է աշխարհիս եւ մարդկային ազգի ստեղծումը, եւ առաջի դարերի համառօտ մէկ պատմութիւնն է անում։ Պարունակում է մանաւոր գործերի համար Աստուածանից ընտրուած այլեւայլ անձերի համառօտ կենսագրութիւնը եւ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդի՝ Հրէից՝ պատմութիւնը, եւ շատ բան է յիշում ժամանակակից ազգերի նկատմամբ, այսինքն յիշում է նորանց թագաւորներից ոմանց անուններն եւ յատկութիւնները, եւ այն թագաւորների պատերազմներից մի քանիսը։ Պատմում է Աստուածորդու մարդեղութիւնն, նրա հրաշալի գործերը, երկնային վարդապետութիւններն եւ նրա յարութիւնը։ Բաց ի այս բաներից, յաճախ յիշատակութիւններ է անում ժամանակակից դէպքերի մասին եւ Հրէից եւ այլ ազգերի կրօնական եւ քաղաքական վիճակին վրայ։ Նկարագրում է թէ Քրիստոնէական Եկեղեցին առաջին անգամ ինչպէս հաստատուեցաւ, եւ յետոյ ինչպէս տարածուեցաւ։

Արդարեւ Քրիստոնէութիւնը միւս բոլոր կրօնքներից տարբերվում է սրանով որ հիմնուած է իրօք պատմական դէպքերի վրայ. միով բանիւ՝ Քրիստոնէութեան սրբազան գրքերը մեծ մասամբ պատմական գրքեր են։ Ուստի, կարող ենք պատմական հետազօտութեան ենթարկել նրանց, եւ քննել թէ արդի պատմական հետազօտութիւնները հերքո՞ւմ են թէ ոչ

Հին եւ Նոր կտակարանի մէջ գտնուած պատմական բազմաթիւ տեղեկութիւններից մինը։

1. Պատմութիւնը հերքո՞ւմ է Հին կտակարանը։

Ա. Հին կտակարանը, ինչպէս ասացինք, համառօտիւ նկարագրւում է աշխարհիս եւ մարդկային ազգի ստեղծումը։ Միթէ պատմութիւնը հերքո՞ւմ է այս նկարագիրը։ Ոչ, քանզի այն դէպքերին վերաբերեալ ուրիշ պատմական նկարագրութիւններ բնաւ չկան։ Այդ դէպքերը տեղի ունեցան նախապատմական ժամանակի մէջ, եւ նրանց վրայ ուրիշ տեղեկութիւն չունինք՝ բացի Աստուածաշունչի մէջ գտնուած տեղեկութիւններից, ուստի եւ չկայ պատմական ապացոյց Աստուածաշունչի նկարագիրը հերքելու։ Եթէ կայ որեւիցէ ապացոյց որ կարող է հերքել աշխարհիս եւ մարդկային ազգի ստեղծման նկատմամբ Հին կտակարանի մէջ գտնուած նկարագիրը, այն ապացոյցը ոչ թէ պատմական այլ ուրիշ տեսակ պիտի լինի։

Բ. Մովսէսի հինգ գրքերի մէջ համառօտ տեղեկութիւն կայ մարդկային ազգի նախնական ժամանակի մասին։ Կա՞յ ապացոյց հերքելու ինչոր գրուած է սորա համար այն գրքերի մէջ։

Այն նախնական ժամանակի մասին շատ քիչ պատմական տեղեկութիւն կայ։ Այն շատ հին ժամանակի մասին ամենից արժանահաւատ տեղեկութիւնները որ ունինք՝ առնուած են քաղաքակրթութեան ամենից հին կետրոններից, այսինքն Եգիպտոսից եւ Բաբելոնից, եւ գտնվում են Եգիպտացի պատմագրին Մանեթովսի եւ Քաղդէացի պատմիչ Բերոսոսի գրուածների, մի քանի Եգիպտական եւ Բաբելոնական արձանագրութիւնների եւ քանի մի կարեւոր ձեռագիրների մէջ որ պապիրոսի վրայ գրուած են։

Երբ բաղդատում ենք Մովսէսի գրքերն այն շատ հին գրուածների հետ, միթէ նրանց մէջ որեւիցէ անհամաձայնութիւն ենք գտնում։ Առաջին տեսութեամբ նրանց մէջ տեղ ժամանակագրական մեծ տարբերութիւն է նշմարվում։ Մանեթովսի ժամանակագրութիւնը պարունակում է 30,000 տարուան ժամանակ եւ՝ Բերոսոսի ժամանակագրութիւնը պարունակում է 460,000 տարի։ Բայց երբ աւելի ուշադրութեամբ քննում ենք այն ժամանակագրութիւնը, գտնում ենք որ երկուսն էլ երկերկու մաս են բաժանվում. առաջինը պարունակում է այն ժամանակը երբ, ըստ հեթանոսական կարծիքների, աստուածներ, կիսաաստուածներ եւ ոգիներ էին տիրում երկրիս վրայ. իւրաքանչիւրը 60ից մինչեւ 600 տարի, եւ յայտնի է թէ այս ժամանակն առասպելական կամ դիցաբանական է. երկրորդ մասը միայն, որ պարունակում է այն ժամանակն երբ մարդիկ սկսեցին տիրել երկրի վրայ, պատմական է։ Եթէ այս ժամանակագրութիւններից դուրս հանենք ինչ որ յայտնապէս առասպելական է. մնացեալ մասը շատ լաւ համաձայնում է Մովսէսի գրքերի ժամանակագրութեան հետ։ Այն ժամանակ Բաբելոնեան ժամանակագրութիւնը Քրիստոսից առաջ 2458 տարուց աւելի հնութիւն չէ պարունակում. եւ Եգիպտական ժամանակագրութիւնը, ըստ պատմանից ոմանց, Քրիստոնէական թուականից առաջ 2,660ից այն կողմը չէ անցնում։

Հոչակաւոր հնախոյզ Բոնսենն ասում է թէ Ասիական որեւիցէ երկրի ազգային ժամանակագրական

պատմութիւնը Քրիստոնէական թուականից առաջ 4,000 տարին այն կողմը չէ անցնում, թէեւ ամէն տեղ նախորդ ժամանակի (*) ցեղերի եւ քաղաքների հետքեր են տեսնվում։ Ցիշեալ հնախուզի հաշուի համեմատ երեք մեծ բուրգերը չինուեցան նախ քան զՔրիստոնէական թուականն 2,645 եւ 2,559 տարիների մէջ տեղ։

Սրանից յայտնի է թէ մեծ տարբերութիւն չկայ Սուրբ գրոց ժամանակագրութեան եւ մինչեւ հիմայ պահուած ամենից հին ժամանակագրութեանց մէջ

(*) Չինացիք, հնդկաց պէս, իրանց ժամանակագրութիւնը մի քանի հազար տարիներ յետ են տանում. բայց նրանց բուն ազգային պատմութիւնը ըսկսում է միայն 2 000 տարի նախ քան զՔրիստոս։ Բէմիւզա Ասիոյ վրայ գրած գրքին մէջ ասում է. «Չինաց արժանահաւատ պատմութիւնը նախ քան զՔրիստոնէական թուականն 22երրորդ դարն է միայն հասնում, եւ քանի մի աւանդութիւններ թոյլ են տալիս մեզ չորս դար եւս աւելի առաջ տանելով հասցնել մինչեւ 2,687 թուականն նախ քան զՔրիստոս» (Rémusat, Nouveaux Mélanges Asiatiques, Հատ. Ա. էջ 65). Բաղդատիր նաեւ Մալեայի Histoire générale de la Chine. «Ընդհանուր պատմութիւն Չինաստանի»։ Օքսֆորդի համալսարանի մէջ հին պատմութեան դասատուն Ռոլինսըն ասում է. «Ես տարակուսանքով եմ նայում նախ քան զՔրիստոնէական թուականն 550 տարուց առաջ գրուած Չինական բոլոր պատմութեան վրայ. եւ ինչպէս ընդհանուր ընդունուած է, ցիշեալ թուականից միայն խօսում է ժամանակակից պատմութիւնը։ Պրոֆ. Ռոլինսըն Չինաց աւանդութիւնները անուանում է «Անհանճար առասպելք»։

տեղ, ուստի եւ պատմական ապացոյց չկայ Սուրբ գրոց ժամանակագրութիւնը հերքելու։

Մարդկային ազգի հնութեան խնդրին գալով, դժուար է այս խնդիրը լուծել Հին կտակարանի ազգացանկերով, վասնզի այն ցանկերը չինուած են ոչ թէ տարիների թիւը ցոյց տալու համար կամ ամէն սերունդ կարդալ յիշելու համար, այլ ամէն ցեղի ուստի ծագում առնելը ցոյց տալու համար։ Մեկնիչները իրարից շատ են տարբերում այն ազգաբանութիւնների մեկնութեան մասին։ (Տես Գլ. ԺԲ. ուր աւելի ընդարձակօրէն պիտի խօսուի այս նիւթի վրայ։)

Պէտք է գիտել նաեւ թէ վերոյիշեալ Քալդէացի հեղինակի Բերոսոսի պատմութիւնն արարչագործութեան եւ Ջրհեղեղին մասին հաստատում է Սուրբ գրոց նկարագրութիւնը։

Ծննդոց գրքին տասներրորդ գլխին մէջ պատմական համառօտ նկարագրութիւն կայ նախկին ազգերի, նրանց ազգային խնամութեան եւ մինչեւ մի աստիճան նրանց աշխարհագրական գրքերի վրայ։ Զարմանալի է, ասում է Պրոֆ. Ռոլինսըն, թէ ատմական ուր հետազօտութիւնները ինչպէս զօրաւոր կերպով հաստատած են Սուրբ գրոց այն նկարագրութեան ճշտութիւնը, զոր օրինակ տասներրորդ գլխի երկրորդ համարին մէջ ասուած է. «Յարեթին որդիքը՝ Գոմեր, Մագ գ, Մադայ, Յաւան եւայլն։» Սրանով յայտնի ցոյց տուած է ազգակցութեան կապը որ կայ Յարեթեաններին մէջ, Մադայի այսինքն Մարաց, Գոմերի այն Կիմբրացոց, եւ Յաւանայ կամ Յունաց մէջ, ըստ Գերմանացի բանասէր Շլէգէլի, որ ցոյց տուաւ թէ

Եւրոպայի Արիական կամ Հնդեւրոպական գլխաւոր ցեղերը իրար համացեղ են։

Նաեւ Ծննդոց Ժ. գլխին 1—10 համարին մէջ ասուած է թէ Բաբելոնի նախկին բնակիչները Քուշեան էին։ Մինչեւ մօտ ժամանակներս երեւելի պատմաբաններից ոմանք մերժում էին Սուրբ գրոց այս խօսքը, բայց նրա ստուգութիւնը կատարեալապէս հաստատուած է Բաբելոնի հին արձանագրութիւնների ընթերցմամբ։ Առաջ Բունսէն ասել էր թէ բաց ի Աֆրիկայից ուրիշ տեղ Քուշեանք չկային, եւ թէ «Ասիայի Քուշեանք Սուրբ գրոց մեկնիչների երեւակայութեան մէջ միայն կային։» Սակայն մօտերս գրտնուած ապացոյցը թէ Բաբելոնի նախկին բնակիչները Քուշեան էին, այնպէս զօրաւոր է որ ամենից երեւելի պատմաբաններից մինը, Մ. Լէնորման, իր գրուածների մէջ ընդունում է թէ Բաբելոնի մէջ Սեմեան պատմութիւնը հաստատուելուց քանի մի դար առաջ Քուշեան պետութիւն կար այնտեղ։

Սըր Հէնրի Բոլինսէն որ իր կեանքն անցուցած է հին ազգերի պատմութիւնը քննելով, ասում է. Ծննդոց գրքին տասներորդ գլուխն ամենից հին պատմական հատուածն է եւ ազգերի նախնական համացեղութեան վրայ ամենից արժանահաւատ վկայութիւնն է։» Նոյն հեղինակն ասում է նաեւ. «Եթէ մի կողմ դնենք Աստուածաշունչը, եւ միայն մեր հետազօտութիւններին հետեւինք, պիտի համոզուինք թէ Սենարի դաշտն է այն տեղն որտեղից ցրուեցան երկրիս բոլոր ազգերը (Ծնող. ԺԱ. 1—9)։ (*)

(*) Journal of Royal Asiatic Soc. Հատ. Ժե., Մասն Բ., էջ 232։

Պրոֆ. Բոլինսէն, որ վերոյիշեալ անձին եղբայրն է, Մովսէսի հնգամատեանին նկատմամբ ասում է. «Մովսէսի գրոց պատմութիւնը համաձայն է արդի պատմական հետազօտութիւններին։ Ինչ որ այն գրքերի մէջ ասուած է տեղերի ազգերի եւ լեզուների մասին ճշմարիտ է. եւ որչափ աւելի ծանօթանում ենք այն հին դարերին, այնչափ աւելի հաստատւում է հնգամատեանի ճշմարտութիւնը։» Իբր 40 կամ 50 տարի առաջ Գերմանացի գիտուններից ոմանք ջանացին ցոյց տալ թէ ճիշտ չէ Եգիպտոսի այն նկարագրութիւնը որ գտնւում է Ծննդոց գրքի վերջի մասին մէջ, բայց Բերլինի համալսարանի դասատուներից մինը, Հէնկստէնբերգ, հաստատում է հինգ գրքերի մէջ Եգիպտոսի վրայ ասածների ստուգութիւնն, այնպէս որ անհաստատները իսկ չեն կարող ժխտել։

Գ. Սուրբ գրոց պատմական երկրորդ մեծ ժամանակը ձգւում է Մովսէսի մահուանից մինչեւ Դաւթի թագաւորութիւնը, եւ այս ժամանակին վերաբերեալ պատմական տեղեկութիւնները գտնւում են Դատաւորաց եւ Մնացորդաց գրքերի առաջին գլուխներումը։

Պրոֆ. Բոլինսէն այն գրքերի պատմական արժանահաւատութեանը համար ասում է. «Չկայ մի արժանահաւատ պատմութիւն որ հերքէ այն գրքերի մէջ գտնուած տեղեկութիւններից որեւիցէ մի բան։ Ընդհակառակն, նրանց արժանահաւատութիւնը հաստատում են Ասորեստանի արձանագրութիւններն, Ասորեստանի, Պարսկաստանի պալատները, Փիւնիկեցոց պատմութիւնը եւ դրամները եւ Յունաց հին երգերը։ Ոմանք կարծեցին թէ Հին կտակարանի գրքերի արժանահաւատութիւնը

ժանահատութիւնը հերքող ապացոյցներ գտան. բայց աւելի ճիշտ պատմական հետազօտութիւնները միշտ ցոյց տուին թէ այն առարկութիւններն առողջ հիման վրայ չէին կենում։

Դ. Սուրբ գրոց պատմական երրորդ մեծ ժամանակը ձգվում է Յերոբոամի ապստամբութիւնից մինչեւ Երուսաղեմի կործանումն Բաբելացոց Նաբուզոդոնոսոր արքայի տասներեւներորդ տարին։ Այս ժամանակը որ իբր չորս դարուց է բաղկանում՝ շատ կարեւոր է, քանզի այս միջոցին տեղի ունեցան Ասորեստանի թագաւորութեան կանգնումն եւ անկումը, Մարաստանի եւ Բաբելոնի յանկարծ բարգաւաճումը, Փիւնիկեցոց քաղաքների ծաղկելը, Յունաստանի մէջ Աթէնքի եւ Սպարտայի գերազանցութեան հասնիլը, Կարքեդոնի եւ Հռոմի հիմնուիլը, եւ Յունական ու Փիւնիկեան գաղթականութեանց միջոցով քաղաքակրթութեան ծաւալումը։

Այս ժամանակի մասին անընդհատ պատմութիւն չկայ բայց ի նրանից որ գտնվում է Սուրբ գրոց մէջ։ Սակայն Բերոսոսի եւ Մանեթովի գրուածներից կան քաղուածներ որ պարունակում են Բաբելոնի եւ Եգիպտոսի այն ժամանակուայ տարեգրութիւնները, Տիւրացոց պատմութեան մի քանի մասերը, եւ այն ժամանակ Ասորեստանի վրայ իշխող մեծ թագաւորների ժամանակակից պատմութիւնը, նաեւ մի քանի պատմական տեղեկութիւններ Եգիպտական յիշատակարաններից։ Բոլոր այս պատմական աղբիւրները խնամով քննուած են, եւ Պրոֆ. Ռոլինսըն վկայում է թէ ամենքն էլ լուսաւորում եւ հաստատում են Սուրբ գիրքը։ Մի քանի անկարեւոր տարբերութիւն-

ներ միայն կան. յիշեալ պատմական տեղեկութիւնների մեծագոյն մասը ժամանակի են վերաբերում. գլխաւոր դէպքերի մասին ամենքն էլ կատարելապէս համաձայն են։ Անուանի Գերմանացի պատմիչ Նիբուր ասում է. «Զարմանալի համաձայնութիւն կայ ուրիշ հին պատմական գրուածների եւ Աստուածաշունչի մէջ տեղ։ (*)

Ե. Սուրբ գրոց պատմական վերջի մեծ ժամանակը պարունակում է Բաբելոնի գերութիւնը եւ Հրէից դարձն իրանց հայրենի երկիրը։

Ոչ ոք չէ ուրացած Հրէից գերութիւնից դարձը պատմող Եզրի եւ Նէեմիայի արժանահաւատութիւնը։

Բաբելոնի գերութիւնը նկարագրուած է Դանիէլի գրքին մէջ։ Ոմանք ասում են թէ այս գրքին մէջ պատմական շատ սխալներ կան, բայց պատմական ապացոյց չունին իրանց խօսքը հաստատելու։ Այն գրքին մէջ պատմուած գլխաւոր դէպքն է Բաբելոնի գերութիւնը որը ոչով չէ կարող ուրանալ։ Ասորեստանի յիշատակարաններն եւ Պարսից պատմութիւնը հաստատում եւ թէ այն ժամանակներն ամբողջ ժողովուրդներ շատ անգամ մէկ երկրից մի ուրիշ երկիր գերի էին տարվում։ Յովսեպոս գրում է թէ Քաղդէացի պատմիչ՝ Բերոսոս գրեց Հրէից գերութեան վրայ եւ նոյն իսկ Հրէաները չէին պատմիլ թէ գերի տարուեցան եթէ արդարեւ գերի տարուած չլինէին։

Նաբուզոդոնոսորի վարքը ու բարքը, նրա ջերմ դիցապաշտութիւնը, իր Բաբելոնում կատարած մեծագործութիւնների վրայ ամբարտաւանելը, ինչպէս

(*)Vortraege ueber Alte geschichte. Հատ. Ա. էջ 126։

նաև աշխարհակալութիւնը, յիշուած են Բերոսոսից եւ Արիւդենոսից որոնք այս բաները յիշելով հաստատում են Դանիելի պատմութիւնը; Բերոսոս, Ազեքսանդր Բազմալէպ, Պրաղոմէոս եւ Բաբելոնեան բեւեռագիրք, բոլորը միաբան Դանիելի հետ հաստատում են թէ Նաբուգոդոնոսոր թագաւորեց 43 տարի։ Ինչ որ Դանիէլ պատմում է՝ համաձայն է բոլոր արժանահաւատ տեղեկութիւններին որ ունինք այն ժամանակուայ Բաբելոնի վրայ։ Քանի մի տարի առաջ ոմանք ասում էին թէ Բաղդասարի վրայով Դանիելի մէջ ասուածները չինծաւ են եւ հակառակ Բերոսոսի պատմութեան, որ ասում է թէ Բաբելոնի վերջին թագաւորի անունն էր Նաբոնադիոս, որ Բաբելոն չէր երբ այն քաղաքն առնուեցաւ Պարսիկներից։ Ըսկիզբից դժուարին էր պատասխանել այս առարկութեան, քանզի Բաղդասարի անունը յիշուած չէր ուրիշ պատմական գրքի մէջ։ Բայց 1854-ին Սըր Հ. Բոլինսըն Միջագետաց մէջ իր խուզարկութիւնների ժամանակ Մուղայիր քաղաքին մօտ գտանից հանեց մի քանի մնացորդներ որ հաստատեցին թէ Բերոսոսի եւ թէ Դանիելի նկարագրութեան ճշտութիւնը։ Այս նոր գտնուած մնացորդներից հասկացուեցաւ թէ արդարեւ Բաբելոնի վերջին թագաւորի անունն էր Նաբոնադիոս, բայց նա իր թագաւորութեան վերջին տարիներումն իրան դահակից արաւ իր որդին Բիլշար-ուզար (Բաղ-դա-սար), եւ թագաւորական տիտղոս տուաւ նրան։ Սոյդ է թէ Դանիելի գրքումը Բաղդասարը Նաբուգոդոնոսորի որդի է կոչվում, բայց Սուրբ գրքի լեզուով որդի բառն յաճախ նշանակում է նաև թոռն, եւ շատ հաւանական է թէ, ինչպէս բա-

նասէրները ցոյց են տալիս, Նաբոնադիոս էր փեսայ Նաբուգոդոնոսորի։ Դանիէլ պատմում է թէ խնջոյքի ժամանակ Բաբելոն անակնկալ կերպով եւ յանկարծ ընկաւ Մարաց եւ Պարսից ձերքը, եւ այսպէս Բաբելոնի տէրութիւնն անցաւ Մարաց։ Այս դէպքն վերայ զարմանալի համաձայնութիւն կայ Դանիելի եւ արտաքին պատմութիւնների մէջ։

Հարկ չենք համարում աւելի առաջ տանել մեր քննութիւններն Հին կտակարանի արժանահաւատութիւնը ցոյց տալու, եւ բավանդակում ենք մեր խօսքը Պրոֆ. Բոլինսընի վեայութեամբ թէ՝

«Բոլոր կարեւոր եւ արժանահաւատ վկայութիւնները որ մեզ հասած են ուրիշ աղբիւրներից՝ հաստատում են Հին կտակարանի պատմական ճշմարտութիւնը, Ասորեստանցոց, Բաբելացոց, Եգիպտացոց, Պարսից եւ Փիւնիկեցոց ժամանակից մնացած հին գրուածներ, իրանց պատմութիւնները հին ժամանակից տարեգիրներից քաղող պատմաբաններ ինչպէս Մանեթովս, Բերոսոս, Դիոդորոս, նաև ականատես անձերի վկայութիւնները արեւելեան ազգերի բարքի եւ սովորութիւնների մասին ամենքը միաբան լուսաւորում են եւ հաստատում են Հին կտակարանի պատմական ճշտութիւնը։» Ուստի պիտի հետեւցնենք թէ պատմութիւնը ոչ միայն չէ հերքում, այլ եւ զօրաւոր կերպով հաստատում է Սուրբ գրքերի արժանահաւատութիւնը։

2. Պատմութիւնը հերքում է Նոր կտակարանը։

Նոր կտակարանը Հին կտակարանից նրանով է տարբերվում որ ոչ թէ ժողովուրդի այլ մի անձի սրբա-

զան պատմութիւնն է։ Նոր կտակարանը գլխաւորապէս տեղեկութիւն է տալիս Յիսուս Քրիստոսի, նրա ծննդեան, վարդապետութիւնների, հրաշքների, մահուան եւ յարութեան վրայ. պատմում է թէ ինչպէս հիմնուեցաւ Քրիստոնէական եկեղեցին, եւ տարածուեցաւ Քրիստոսի աշակերտների միջոցով. մեկնում է Քրիստոսի թագաւորութեան հանդերձեալ վիճակը. ուստի եւ շատ չէ խօսում քաղաքական դէպքերի վրայ։

Որովհետեւ Աւետարանը գլխաւորապէս Քրիստոսի կենսագրութիւնն է, եւ Քրիստոս մերժուեցաւ Հրէաներից, հաւանական չէր որ Հրէից եւ Հեթանոսաց ժամանակակից պատմագիրները շատ բան գրէին նրա վրայ։ Եւ որովհետեւ Նոր կտակարանը գրողներն եւ նրանց ժամանակակից հեթանոս եւ Հրեայ պատմիչները շատ բան չեն գրած այս նիւթին վրայ, չեն կարող մեծաւ մասամբ ոչ հերքել եւ ոչ հաստատել իւրաքանչիւր գրուածները։

Սակայն Աւետարանները համառօտիւ յիշում են ժամանակակից քանի մի դէպքեր, եւ իրանց գրուածների մէջ յաճախ ակնարկութիւններ են անում Պաղեստինի քաղաքական, ընկերական եւ կրօնական վիճակին, Հռոմէական պետութեան եւ նրա պաշտօնակալաց, նաեւ գրացի ազգերի վրայ։ Իսկ Հռոմայեցի եւ Հրեայ մատենագիրներից ոմանք գրում են ինչ ինչ Քրիստոսի եւ Քրիստոնէական եկեղեցոյ վրայ։

Արդ քննենք թէ Հռոմայեցի եւ Հրեայ մատենագիրները հերքո՞ւմ են Նոր կտակարանի մէջ գտնուած պատմական տեղեկութիւնները։ Նախ, գիտել արժան է թէ Նոր կտակարանը մէկ գիրք չէ, եւ ոչ մի մա-

տենագրի գրութիւն, այլ Նոր կտակարանը բաղկանում է հօթն կամ ութ տարբեր անձերից եւ տարբեր ժամանակների ու տարբեր պարագաների ներքեւ գրուած 27 գրքից։ Ուրեմն այս գրքերի վկայութիւնը, ոչ մէկ անձի միայն, այլ շատ անձերի միանգամայն վկայութիւնն է, եւ բոլոր այս վկաները, Պօղոս, Պետրոս, Յակոբոս, Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս հաստատում են իրար վկայութիւնը։

Սակայն պարտ ենք քննել թէ արդիօք կայ պատմական ապացոյց որ հերքէ նրանց արժանահաւատութիւնը։

Ա. Յիսուս Քրիստոսի ժամանակ Հրէաստանի քաղաքական վիճակը տարօրինակ եւ խառնակ էր։ Հրէաստանը հպատակած էր Հռոմին ոչ միայն Հռոմէական զօրքերի միջոցով, այլ եւ իր բնակիչներից շատերի գործակցութեամբը, եւ այս պատճառաւ Հռոմէական կառավարութիւնը շատ արտօնութիւններ տրուած էր Հրէից։ Հրէաստան մասամբ հպատակ էր Հռոմայ, եւ մասամբ էլ անկախ։ Երկու կերպ վարչութիւն կար այնտեղ, Հռոմէական եւ Հրէական. տուրքերն երկու եղանակաւ էին տրվում եւ հաւաքվում, արդարութիւնն երկու եղանակաւ էր մատակարարվում, զինուորական ծառայութիւնն անգամ երկու կերպ էր։ Յովսեպոս եւ ուրիշ մատենագիրներ ասում են նաեւ թէ յաճախ փոփոխութիւններ էին լինում վարչութեան մէջ, եւ թէ քաղաքական կարգերն ու կանոններն այնպէս խառն եւ շփոթ էին որ նոյն իսկ Տակիտոս երբեմն սխալվում է երբ խօսում է նրանց վրայ։ Սակայն Նոր կտակարանի մատենագիրները քաղաքական գործերի նկատմամբ սխալ բան չեն յիշած։

Շատ անգամ յիշում են այն յաճախ փոփոխութիւնները որ երկրին վարչութեան մէջ տեղի ունեցան (Մատթ. Բ. 1. 2. ԺԴ. 1., Ղուկ. Ա. 5. Գ. 1. ԺԴ 1. ԻԳ. 24), երկու կերպ վարչութիւնը (Մատթ. ԻԷ. 1, 2), երկու տեսակ տուրքը (Մատթ. ԺԷ. 23, ԻԲ. 17), երկու կերը դատարանները, պատժելու երկու կերպը, եւ զինուորական երկու տեսակ ծառայութիւնները (Յովհ. ԺԲ. 28, 31, Մատթ. ԻԷ. 64, 65), եւ այս ամենը բոլորովին համաձայն է ուրիշ պատմական տեղեկութիւններին որը ունինք Հրէաստանի այն ժամանակուայ քաղաքական գործերի մասին։

Յովսեփոս եւ այլ մատենագիրներ նկարագրում են այն ժամանակուայ Հրէից ոգին, նրանց զգացումները դէպի Հռոմայեցիքը եւ դէպի դրացի ազգերը, նորանց ներքին բաժանումներն եւ երկպառակութիւններն եւ կառավարիչների ընդհանուր կաշառակրծութիւնը, եւ այս ամենը ճշգիւ համաձայն է Նոր կտակարանի մէջ գրուածներին։

Ինչ որ գրուած է Նոր կտակարանի մէջ Հրէից, Յունաց եւ Հռոմայեցոց մասին՝ ճշգիւ համաձայն է ուրիշ պատմական տեղեկութիւններին որ նրանց մասին ունինք։ Աւետարանիչները անուամբ յիշում են Հռոմայեցի կայսերներն, Օգոստոս, Տիբերիոս, Կղոդիոս, նաեւ Հրէից թագաւորներն եւ իշխաններն, Հերովդէս Մեծ, Արքելայոս, Հերովդէս Չորրորդապետ, Փիլիպպոս Չորրորդապետ, Հերովդէս Ագրիպպաս առաջին եւ Հերովդէս Ագրիպպաս երկրորդ, նաեւ Հռոմայեցի կուսակալները, Կիւրենիոս, Պոնտացի Պիղատոս, Սերգիոս Պօղոս, Գալիոն, Փեստոս, Փելիքս։ Ուրիշ ապացոյցներ կան որ հաստատում են թէ յիշեալ անձինք արդարեւ ապրեցան այն ժամանակ, եւ գտնուեցան այն պաշտօնին եւ աստիճանին մէջ որ Աւետարանիչները վերագրում են նրանց, եւ նրանց գործերի վրայ Աւետարանների մէջ տրուած տեղեկութիւններից եւ ոչ մէկը հակառակ չէ արտաքին պատմութեան։

Նաեւ յիշեցնում ենք մեր ընթերցողներին թէ Յովսեպոս, Տակիտոս եւ Պլինիոս, ինչպէս արդէն ցոյց տուինք ուրիշ գլխում, հաստատում են աւետարանների պատմական արժանահաւատութիւնը։

Բայց չկա՞ն բնաւ պատմական վկայութիւններ որ հերքեն Նոր կտակարանի արժանահաւատութիւնը։

Գիտուն անհաւատները երկու կամ երեք պատմական առարկութիւններ են միայն մէջ բերած բոլոր Նոր կտակարանի դէմ, եւ այս առարկութիւններն, հմուտ հնագէտների ասելով, հաստատ հիմ չունեն։

Շտրաուս չէ ընդունում թէ Օգոստոս կայսր երբէք հրաման հանեց աշխարհագիր անելու, ինչպէս պատմուած է Ղուկասու Բ. 1 համարում, բայց որովհետեւ Հռոմէական հնութեանց ամենից հմուտ խուզարկուն Սաւինի, հաստատում է թէ Օգոստոս կայսրն իրօք այնպիսի հրաման հանեց, երեւում է որ Շտրաուսի առարկութիւնը բնաւ հիմ չունի։

Շտրաուս ասում է նաեւ թէ Ղուկասու Բ. գլխի երկրորդ համարը պատմութեան հակառակ է, քանզի Կիւրենիոս Ասորոց կուսակալ չէր Հռոմի չինութեան 758երրորդ տարուց առաջ, որ գոնէ ութ տարի յետոյ է քան Քրիստոսի ծնունդն։ Սակայն Գերմանացի Մ. Ցումբտ իր պատմական քննութիւններովը ցոյց տուեց

թէ շատ հաւանական է որ Կիւրենիոս երկուանգամ կուսակալ եղաւ Ասորոց։ Մ. Ցումբաի խուզարկութիւններից երեւում է թէ Կիւրենիոս առաջին անգամ կուսակալ եղաւ Ասորոց երկրին չորսից մինչեւ մէկ տարի յառաջ Քրիստոսի ծնունդից, այսպէս հաստատվում է Ղուկասի պատմական ճշտութիւնը։

Շտրաուս ասում է թէ արտաքին պատմութիւնը հերքում է Ղուկասի Գ. 1 համարը, ուր գրուած է թէ Լիւսանիաս Չորրորդապետ էր Տիբեր կայսեր հընդեռասաներրորդ տարին։ Շտրաուս ջանում է ցոյց տալ թէ Լիւսանիաս այն թուականից 60 տարի առաջ մեռած էր, եւ պնդում է թէ անհնար է ցոյց տալ թէ նոյն անուամբ ուրիշ չորրորդապետ եղաւ Լիւսանիասից յետոյ։ Բայց եւ այնպէս Շտրաուսից անհնարին համարուածն հիմա հաստատուեցաւ։ Մօտերս Պաալպէքի մօտ գտնուեցաւ հին արձանագրութիւն որ ցոյց է տալիս թէ Լիւսանիաս անուամբ երկու անձինք կային-հայր եւ որդի, ուստի եւ շատ հաւանական է թէ որդին յաջորդեց հօրը իշխանութեանը։ (*)

Պրոֆ. Բոլինսըն ասում է. «Նոր կտակարանի արժանահաւատութեանը դէմ բաց ի վերոյիշեալ առարկութիւններից ուշադրութեան արժանի ուրիշ պատմական առարկութիւն չկայ.» եւ աւելացնում է թէ անհաւատները մանրախոյզ դիտողութեամբ քննած են Աւետարանների եւ Գործք առաքելոցի մէջ յիշուած ամեն դէպք, եւ նախանձախնդրութեամբ ջանացել են սխալ գտնել նրանց մէջ, բայց բոլոր այս խիստ հետազօտութիւնները ուրիշ արդիւնք չեն ունեցած

(*) Krafft, „Topographie Jerusalems“ Jnscription 29.

եթէ ոչ հաստատել Աւետարանների ոչ միայն գլխաւոր պատմութիւնների այլ եւ նրանց մէջ յիշուած մանրը մանր պարագաների ստուգութիւնը։ Անհաւատները չեն կարողացել ցոյց տալ թէ աւետարանիչները որ եւ իցէ պատմական սխալման մէջ ընկան։ Եթէ անցեալ դէպքերի հարեւանցի քննութիւնը եւ անկատար տեղեկութիւնը երբէք կարծել տուին մարդկանց թէ սխալ կար Աւետարանների պատմութեան մէջ, աւելի ճիշտ հետազօտութիւնները միշտ հաստատեցին այն սրբազան գրքերի ճշտութիւնը, եւ հակառակորդների տգիտութիւնը խայտառակեցին։ Նոր կտակարանի պատմական արժանահաւատութիւնը բոլոր պատմագէտ քննիչների առջեւ հաստատուած է։

Մինչ նոյն իսկ պատմութեան մասնագէտները հաստատում են Սուրբ գրոց պատմական ճշտութիւնն, ո՞վ կարող է ասել թէ պատմութիւնը հերքում է Սուրբ գրքերի արժանահաւատութիւնը։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՏՈՒԹԵԱՆԸ ԴԷՄ ԱՊԱՑՈՑՑՆԵՐ ԿԱՆ։

(Շարունակութիւն)

—

Գ. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ։

—

Ի՞նչ է գիտութիւնը։ Երբ մի բանի վրայ ծանօթութիւններ դրութեան վերածուին՝ գիտութիւն կ'լինի։ Առանց գիտութեան ծանօթութիւն կ'լինի, բայց առանց ծանօթութեան գիտութիւն չի լինիլ։ Ամեն ճշմարիտ գիտութիւն ոչ թէ կազմվում է մարդկանց կարծիքներից, այլ գոյութիւն ունեցող իրերի վրայ գիտացուած ստոյգ եւ ապացուցուած վկայութիւններից։ Մի բանի վրայ կարող ենք կարծիք կամ հնթադրութիւններ անել, բայց սրանք եթէ յայտնի եւ ծանօթ իրերի վրայ հիմնուած չեն, ճշմարիտ գիտութիւն չեն կազմիլ։ Գիտուն մարդը կարող է իր մտքին մէջ կարծել թէ այսինչ բանն այսպէս կամ այնպէս է, բայց այս վերացեալ մտածութիւնները գիտութիւն չեն։ Այսպիսի մտածութիւնները կարող են առաջնորդել ճշմարիտ գիտութեան եւ կամ հեռու տա-

նել նրանից։ Ամեն ճշմարիտ գիտութիւն հիմնուած է ճիշտ գիտողութիւնների եւ ստոյգ տեղեկութիւնների վրայ, եւ պարտ է ի նպաստ իրան ունենալ բաւական ապացոյցներ։

Գիտութեան նպատակն է մեկնել, որչափ որ հնար է ամեն իր եւ ամեն երեւոյթ, ուստի եւ նիւթական աշխարհի իրերի կամ երեւոյթների սահմանին մէջ փակուած չէ գիտութիւնն։ Սխալ է կարծել թէ բաց ի բնական կոչուած գիտութիւններից ուրիշ գիտութիւններ չ'կան։ Ամեն տեսակ երեւոյթ կամ իր առարկայ է գիտութեան, ուստի եւ գիտութեան այնչափ ճիւղեր կարող են լինել՝ որչափ իրեր եւ երեւոյթներ կան որ քննութեան տակ կարող են ընկնել։ Բայց եւ այնպէս գիտութիւնները չորս ընդհանուր դասի են բաժանվում։

Ա. Նիւթական գիտութիւն, որ իրան առարկայ ունի նիւթական աշխարհս։ Նիւթական աշխարհի երեւոյթներն է քննում եւ գիտում, եւ նորանց միջոցով երեւան հանում այն օրէնքները որոնց հպատակ է նիւթական աշխարհս։ Այս գիտութիւնը երբեմն բնական գիտութիւն է կոչվում, բայց աւելի յարմար է նիւթական գիտութիւն կոչել, որովհետեւ բնութիւնն աւելի բան է պարունակում քան թէ նիւթական աշխարհը։ Ուրեմն, նիւթական գիտութիւնը նիւթական աշխարհի օրէնքների եւ երեւոյթների թարգմանն է։

Բ. Իմացական գիտութիւն, որ եւ մարտաւորական փիլիսոփայութիւն է կոչվում։ Այս գիտութիւնն իրան քննութեան առարկայ

ունի մտաւորական աշխարհի գործողութիւններն եւ երեւոյթները որ այնպէս իրական եւ բաղմատեսակ են ինչպէս բնական աշխարհի երեւոյթները, եւ այս գործողութիւններն ու երեւոյթները քննելով երեւան է հանում այն օրէնքներն որոնց հպատակ է մարդկային միտքը։ Ապա, իմացական գիտութիւնը թարգման է մարդկային մտքին։

Գ. Բարոյական գիտութիւն որ եւ երբեմն կոչվում է բարոյական փիլիսոփայութիւն։ Այս գիտութիւնն իրան առարկայ ունի բարոյական աշխարհը, եւ քննում է մարդուս բարոյական բնութիւնը, եւ այն հիմնական բարոյական օրէնքներն որոնց ներքեւ գտնվում է մարդս։ Քննում է այն յարաբերութիւններն որ ունի մարդ Աստուծոյ եւ իր նմաններին հետ, եւ այս յարաբերութիւններից սովորում է թէ ի՛նչ են մարդուս պարտաւորութիւնները։ Ապա ուրեմն, բարոյական գիտութիւնը թարգման է բարոյական աշխարհի։

Դ. Աստուածային գիտութիւն, որ եւ երբեմն աստուածաբանութիւն է կոչվում։ Այս գիտութիւնը քննում է Աստուծոյ բոլոր յայտնութիւնները, եւ որչափ հնար է նրանցից հետեւցնում է թէ ի՛նչ է աստուածային բնութիւնն եւ ի՛նչ են աստուածային ստորոգելիքը։ Որովհետեւ Սուրբ գիրքն է գլխաւոր աղբիւր այն ամեն տեղեկութիւնների որոնց վրայ հաստատուած է այս գիտութիւնը, ուստի եւ աստուածաբանութիւնը կարող է կոչուել թարգման Սուրբ գրոց։

Մեր որոշելու գլխաւոր եւ հիմնական խնդիրն այն

չէ թէ վերոյիշեալ չորս թարգմաններն, այսինքն գիտութիւնները, հակասական են իրարու, քանզի բոլորն էլ մարդկային, ուստի եւ սխալական են, այլ խնդիրը սա է թէ բուն իրերը, որոնց թարգման են միայն գիտութիւնները, ե՞ն հակասական իրար։ Այսինքն, բնական երեւոյթներն եւ նրանց օրէնքները հակառա՞կ են Սուրբ գրոց վարդապետութիւններին։

1. Մարդկային մտքի փիլիսոփայութիւնը կամ մտաւորական փիլիսոփայութիւնը հե՞րքում է Սուրբ գիրքը։

Առաջիկայի թողելով քննել թէ բնական գիտութիւնը հերքո՞ւմ է կամ ոչ Սուրբ գիրքը, քննենք նախ թէ մարդկային մտքի կազմութեան եւ օրէնքների ուղիղ թարգմանութիւնը, այսինքն ճշմարիտ իմացական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է Սուրբ գիրքը։

Իմացական փիլիսոփայութիւնը ի՞նչպէս կարող է հերքել Սուրբ գիրքը։ Եթէ Սուրբ գրքի և իմացական փիլիսոփայութեան առարկաները միեւնոյն լինէին, եւ երկուսն էլ միեւնոյն նիւթին վրայ խօսէին, կարելի էր կարծել թէ նրանց վարդապետութիւնները կարող էին իրար հակասական լինել։ Բայց այսպէս չէ բանը։ Սուրբ գիրքը իմացական փիլիսոփայութիւն չէ, եւ իմացական փիլիսոփաների կարծիքներն եւ ու ենթադրութիւնները ոչ ընդունում է եւ ոչ մերժում։ Սուրբ գիրքը մարդկային միտքը չէ լուծում իր մասերին, նրա կարողութիւնները դաս դաս չէ բաժանում, ոչ էլ սահմանում է այն կարողութեանց գործողութիւնների օրէնքները, ինչպէս անում է իմա-

ցական փիլիսոփայութիւնը։ Սուրբ գիրքը ասում է միայն թէ մարդ ստեղծուեցաւ իմացական եւ բարոյական բնութեամբ, թէ այս բնութիւնը ապականուեցաւ մեղքով, եւ թէ մեղքից ուրիշ կերպով ազատութիւն չկայ եթէ ոչ աստուածային Քրիստի միջոցով։ Իմացական փիլիսոփայութիւնը ի՞նչպէս կարող է մերժել Սուրբ գրքի այս բարոյական եւ հոգեւոր վարդապետութիւնները։ Իմացական փիլիսոփայութիւնն իրան առարկայ ունի մի տեսակ խնդիրներ, Սուրբ գիրքը իրան առարկայ ունի ուրիշ տեսակ խնդիրներ։ Ապա ի՞նչպէս կարող են այս երկուսը դուրս գալ իրար հակառակ։ Այս բանը մէկ կերպ միայն կարելի է։ Որովհետեւ իմացական փիլիսոփայութեան առարկան մարդկային մտքի բնութիւնն է. եթէ այս գիտութիւնը կարենար ցոյց տալ թէ ինչ բաներ որ Սուրբ գիրքը սովորեցնում է այնպէս հակառակ են մարդկային մտքի բնութեան, որ նրանց ընդունել անհնար է, այն ժամանակ հակառակ եղած եւ հերքած կ՚լինէր Սուրբ գիրքը։ Եթէ իմացական փիլիսոփայութիւնը կարենար ցոյց տալ թէ մարդ այնպէս ստեղծուեցաւ, եւ նրա միտքը այնպիսի օրէնքների ներքեւ է որ չէ կարող ընդունել ինչ որ Սուրբ գիրքը սովորեցնում է, այն ժամանակ միայն փիլիսոփայութիւնը կունենար իրաւունք հետեւցնելու թէ Աստուածաշունչի միտքը ստեղծողիցը տրուած կամ յայտնուած չէ։

Բայց ի՞նչպէս կարող է ցոյց տալ թէ ինչ որ Սուրբ գիրքը սովորեցնում է՝ հակառակ է բուն մարդկային մտքի բնութեանը։ Ինչ որ Սուրբ գիրքը սովորեցնում է՝ կարող է ոմանց կարծիքներին կամ նաեւ համոզ-

մունքներին հակառակ լինել. բայց՝ սրանից չենք կարող հետեւցնել թէ մարդկային մտքի բնութեանն էլ հակառակ է. քանզի եթէ այնպէս լինէր, այլ եւ այլ իրերի վերաբերեալ վարդապետութիւններ որ առհասարակ իբրեւ ճշմարիտ ընդունուած են՝ մարդկային մտքի բնութեանը հակառակ եղած պիտի լինէին, վասնզի ժամանակով հակառակ էին շատ մարդկանց համոզմունքներին։ Դրեթէ ամեն նոր գիւտ, եւ ամեն նոր բարեկարգութիւն սկիզբից մերժուած է մարդկանցից իբրեւ հակառակ իրանց համոզմունքներին։ Գիտութիւնների պատմութիւնը բացայայտ ցոյց է տալիս թէ շատ վարդապետութիւններ կարող են հակառակ դալ շատերի կարծիքներին եւ համոզմունքներին, թէեւ՝ իրօք հակառակ չեն մարդկային մտքի բնութեանը։ Քանի վարդապետութիւններ այսպէս սկիզբից հակառակութիւն կրեցին, բայց ճշտագոյն հետազօտութիւնները յետոյ հաստատեցին նրանց իբրեւ ճշմարիտ, ուստի եւ բոլորովին համաձայն մարդկային մտքի բնութեանը։

Դարձեալ ուրիշ վարդապետութիւններ կարող են հրաշալի եւ խորհրդաւոր եւ այնպէս վեր լինել քան մարդկային միտքը, որ մարդի միտքը նրանց չէ կարող սկիզբից հասկանալ, թէպեա այն վարդապետութիւններն իրօք հակառակ չեն մարդկային մտքի բնութեանը։ Բնական աշխարհի վերաբերեալ վարդապետութիւններից էլ ոչ սակաւը խորհրդաւոր են։ Ի՞նչ է որ զարկում է սիրտը եւ մարմնի բոլոր գործարաններին կանոնաւոր շարժում տալիս։ Ի՞նչ է որ ծառին հիւթը ծառի արմատից մինչեւ նրա հեռաւոր ճիւղերի ծայրը է հանում։ Արեգակն ի՞նչպէս կարող

է դէպի իրան քաշել երկիրս որ նրանից միլիոնաւոր ժամերով հեռու է։ Գիտունները ասում են թէ այս բաները գործվում են կենսական զօրութեամբ, կամ քիմիական զօրութեամբ, կամ ձգողական զօրութեամբ։ Բայց սա բուն մեկնութիւն չէ։ Բնագէտները միայն անուններ են տալիս այս զօրութիւններին, բայց նրանց ոչ կարող են մեկնել եւ ոչ էլ հասկանալ։ Այս զօրութիւնների գործողութիւնները մնում են խորհրդաւոր եւ անիմանալի։ Ապա բնական գիտութիւնները ցոյց են տալիս թէ կարող են լինել չատ վարդապետութիւններ որ չեն կարող մեկնուիլ, բայց եւ այնպէս հաւատալի են, ուստի եւ հակառակ չեն մարդկային մտքի բնութեանը։ Եթէ արարածների վերաբերեալ վարդապետութիւնները, թէեւ գաղտնիք՝ հաւատալի են, ո՞րչափ եւս առաւել հաւատալի պիտի լինէին Արարչին վերաբերեալ վարդապետութիւնները, թէպէտ խորհրդաւոր կամ գաղտնիք են։

Մարդկային բնութեանը ստուգիւ հակառակ կարելի է համարուիլ այն վարդապետութիւնները միայն որ ընդդէմ են գալիս մարդկային ազգի ընդհանուր համոզմունքներին։ Եթէ մտաւորական փիլիսոփայութիւնը կարենար ցոյց տալ թէ Սուրբ գրքում կան այնպիսի վարդապետութիւններ որ հակառակ են մաթեմատիկական սկզբունքներին կամ ուրիշ ինքնայայտ ճշմարտութիւններին, այն ժամանակ կարող կը լինէր հերքել Սուրբ գիրքը իբրեւ անհաւատալի։ Միթէ Սուրբ գիրքը սովորեցնո՞ւմ է այնպիսի վարդապետութիւն որ հակառակ է մարդկային ազգի ընդհանուր եւ բացարձակ համոզմունքներին։ Սուրբ գրքի մէջ կա՞յ այնպիսի վարդապետութիւն որը ամեն

մարդ միաբերան մերժում է իբրեւ անկարելի կամ անհաւատալի։ Ո՛չ. վասնզի առողջ մտքի տէր միլիոնաւոր մարդիկ ընդունած են Սուրբ գրքի վարդապետութիւններն իբրեւ ճշմարիտ։ Զենք ասում թէ Սուրբ գրքի վարդապետութիւնները ճշմարիտ են՝ վասնզի միլիոնաւոր մարդիկ ընդունած են նրանց. բայց իրաւունք ունենք ասելու թէ որովհետեւ միլիոնաւոր մարդիկ հաւատացած են նրանց, ապա նրանք անհաւատալի չեն, այսինքն չեն կարող համարուիլ իբրեւ անհաւատալի կամ հակառակ մարդկային ազգի ընդհանուր եւ բացարձակ համոզմունքներին. եւ որովհետեւ իմացական փիլիսոփայութիւնը չէ կարող հերքել Սուրբ գիրքն ուրիշ կերպով բայց եթէ ցոյց տալով թէ ինչ որ Սուրբ գիրքը սովորեցնում է հակառակ է մարդկային մտքի բնութեանը, ուստի պարտ ենք հետեւցնել թէ մտքի գիտութիւնը կամ իմացականութիւնը եւ կամ իմացական փիլիսոփայութիւնը չէ հերքում Սուրբ գիրքը։

2. Բարոյական գիտութիւնը կամ բարոյական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է Սուրբ գիրքը։

Սուրբ գիրքը բարոյական փիլիսոփայութիւն չէ։ Բարոյական պարտականութիւնների հիման կամ առաքինութեան բնութեան վրայ փիլիսոփայական տեսութիւններ չէ անում, ինչպէս անում է բարոյական փիլիսոփայութիւնը։ Բայց պարունակում է չատ բարոյական սկզբունքներ եւ վարդապետութիւններ եւ ցոյց է տալիս բարոյական օրէնք։ Եթէ արդարեւ Սուրբ գիրքը աստուածային յայտնութիւն է. ապա նրա բարոյական վարդապետութիւնները մաքուր եւ

մարդուս բնութեանը ու վիճակին յարմար պիտի լինեն։ Եթէ բարոյական փիլիսոփայութիւնը կարող է ցոյց տալ թէ Սուրբ գրքի մէջ ցոյց արուած բարոյական օրէնքը եւ վարդապետութիւններն անմաքուր կամ թերի են եւ կամ նրանց ազդեցութիւնը վնասակար է. ապա հզօր վկայութիւն տուած պիտի լինի թէ Սուրբ գիրքը Աստուածանից արուած չէ։ Բայց բարոյական փիլիսոփայութիւնը ապացուցանո՞ւմ է այս։ Ոչ։

Սուրբ գրքի բարոյական վարդապետութիւնները գտնվում են Սուրբ գրքի բոլոր մասերի մէջ, բայց կարող ենք ասել թէ գլխաւոր բարոյական վարդապետութիւնները գտնվում են աստուածաշունչ պատուէրների, Քրիստոսի այն վարդապետութիւններումը ուր որ այն պատուէրները մեկնվում են, եւ Յիսուսի վարքի մէջ, Յիսուսի, որ իր գործերովը ցոյց տուաւ այն պատուէրների ոգին։

Բարոյական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է այս ամենը իբրեւ սուտ, կամ մերժո՞ւմ է իբրեւ անարժան կամ թերի եւ կամ վնասակար։

Մի՞թէ բարոյական փիլիսոփայութիւնը հերքում է աստուածաշունչ պատուէրները։ Կարո՞ղ է ցոյց տալ թէ այն պատուէրները արգիլում են ինչ որ ուղիղ, արդար, բարի եւ օգտակար է, կամ հրամայում են անել ինչ որ չար եւ վնասակար է։ Բարոյական փիլիսոփայութեան համեմատ աստուածաշունչ պատուէրներից ո՞րը պիտի մերժուի։ Եւ ոչ մինը։ Ընդհակառակն, բարոյական փիլիսոփայութիւնը սովորեցնում է թէ այն պատուէրների բոլորն էլ բարի, արդար եւ հարկաւոր են, հաստատում է նաեւ թէ նրանց

բոլորն էլ համաձայն են մարդկանց բնական իրաւունքներին, եւ յարմար են յառաջ տանելու անհատների եւ ժողովուրդների բարձրագոյն շահերը, եւ թէ այն պատուէրների բոլորն էլ պէտք է կատարուին որ մարդիկ, ժողովուրդներ եւ ազգեր հասնեն ֆիզիքական, իմացական եւ բարոյական երջանկութեան։ Ուրեմն, բարոյական փիլիսոփայութիւնն ոչ միայն չէ հերքում աստուածաշունչ պատուէրներն, այլ եւ հաստատում է նրանց իբրեւ զերազանց բարոյական պատուէրներ։

Բարոյական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է այն մեկնութիւնը որը Յիսուս Քրիստոս տուաւ աստուածաշունչ պատուէրներին Մատթէոսի Ե. Զ. եւ Է. գլուխներում։ Ի՞նչ պատճառ կայ որ բարոյական փիլիսոփայութիւնը հերքէ Քրիստոսի մեկնութիւնը աստուածաշունչի մասին։ Կարո՞ղ է հերքել զայն իբրեւ վերի՛ վերոյ մի բան։ Ոչ. վասնզի Քրիստոսի մեկնութիւնը վերաբերում է ոչ միայն մարդկանց արտաքին գործերին, այլ եւ այն գործքերն յառաջ բերող ուրիթներին։ Դատապարտում է ոչ միայն սպանութիւնը, այլ եւ ատելութիւնը որ սպանութեան է տանում. դատապարտում է ոչ միայն շնութիւնը, այլ եւ անմաքուր խորհուրդներն որ մարդուն տանում են շնութեան։ Քրիստոսի մեկնութեան համեմատ, աստուածաշունչ պատուէրները վերաբերում են մարդկանց ոչ միայն բոլոր գործերին, այլ եւ բոլոր խորհուրդներին, բաղձանքներին եւ նպատակներին, եւ խըստութեամբ դատապարտում են ինչ որ անմաքուր եւ անիրաւ է մարդկանց մէջ։

Բարոյական փիլիսոփայութիւնը մերժո՞ւմ է Քրիս-

տոսի մեկնութիւնը իբրեւ ոչ անաչառ։ Բարոյական փիլիսոփայութիւնը չէ կարող այն մեկնութիւնը իբրեւ ոչ անաչառ հերքել, վասնզի այն մեկնութիւնը վերաբերում է բոլոր ազգերին ինչպէս Հրէից նոյնպէս եւ հեթանոսներին։ Միեւնոյն կերպով խօսում է է թագաւորներին եւ հպատակներին, գիտուններին եւ տգէտներին, եւ ամենից պահանջում է միեւնոյն արդարութիւնը, միեւնոյն սրբութիւնը եւ միեւնոյն բարեպաշտութիւնը։

Բարոյական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է Քրիստոսի մեկնութիւնն իբրեւ անիրաւ։ Ոչ. վասնզի այն մեկնութիւնը պահանջում է իւրաքանչիւր անձից ոչ թէ ինչ որ նրա կարողութիւնից վեր է, այլ ինչքան որ նրա կարողութիւնը ներում է (Ղուկ. ԺԲ. 48, Բ Կորնթ. Ը. 12)։ Մարդկանցից չէ պահանջում այնպիսի գործ որը հրեշտակները միայն կարող են կատարել, աղքատներից եւ տգէտներից չէ պահանջում ինչ որ հարուստները եւ գիտուններին միայն կարող են անել։ Իւրաքանչիւր անձից պահանջում է այն գործը միայն որ ճշիւ համաձայն է նրա վիճակին եւ կարողութեանը։ Իւրաքանչիւր անձից պահանջում է այն գործը միայն որ կարող եւ պարտաւոր է անել, եւ արգիլում է այն բանը որ ոչ ով պարտաւոր չէ անելու։ Մի այսպիսի օրէնք բնաւ չէ կարելի որ մերժուի իբրեւ անիրաւ։

Բարոյական փիլիսոփայութիւնը մերժո՞ւմ է Քրիստոսի մեկնութիւնը իբրեւ անկատար կամ թերի եւ կամ վնասակար։ Քրիստոսի մեկնութեան համեմատ, օրէնքը բովանդակվում է այս խօսքին մէջ. «Սիրիր քո քո Տէր Աստուածը քո բոլոր

սրտովը, քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը։ Սա է առաջին եւ մեծ պատուիրանը։ Երկրորդն էլ սրա նման. Սիրիր քո ընկերը քո անձի պէս։ Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէքը։» (Մատթ. ԻԲ. 37—40)։ Յիսուս Քրիստոս միւս բոլոր բարոյական վարդապետներից տարբերվում է սրանով որ սովորեցնում է մեզ որ ոչ թէ մեր հայրենակիցները կամ մեր ազգակիցները միայն, այլ եւ բոլոր մարդիկ մեր ընկերներն են (Ղուկ. Ժ. 30—37)։ Քրիստոս մարդկանց սովորեցրեց նաեւ սիրել իրանց թշնամիները, օրհնել իրանց անիծողներին, բարի անել իրանց ատողներին եւ աղօթք անել իրանց չարչարողներին եւ հալածողներին համար (Մատթ. Է. 44)։ Քրիստոս պատուիրում է մարդկանց կատարեալ լինել, ինչպէս նրանց երկնաւոր Հայրը կատարեալ է (Մատթ. Է. 48)։ Նոր կտակարանի բարոյականը պահանջում է ամեն մարդուց կատարեալ սէր։ Այսպիսի մեկնութիւններ նաեւ գտնվում են Հին կտակարանի մէջ։ «Սիրիր քո Տէր Աստուածոյն բոլոր սրտովդ, բոլոր հոգովդ եւ բոլոր զօրութիւնովդ» (Բ Օրին. Զ. 5, Ժ. 12, ԺԱ. 1, 13, 22, ԺԹ. 9)։ «Քո ընկերն սիրես քո անձի պէս» (Ղեւտ. ԺԹ. 18)։ Միթէ բարոյական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է այսպիսի վարդապետութիւնները։ Ոչ, երբէ՛ք. ընդհակառակն, բարոյական փիլիսոփայութիւնը ընդունում եւ պատվում է նրանց իբրեւ կատարեալ։ Բարոյական փիլիսոփայութիւնը համաձայնում է Բակոն փիլիսոփայի հետ որը ասում է. «Աշխարհի վրայ չկաւ երբէք մի կրօնք կամ օ-

բէնք այնպէս նպաստաւոր հասարակաց բարքին ինչպէս Քրիստոնէական կրօնը։

Բարոյական փիլիսոփայութիւնը ձայնակից է Մոնթէսքիէօ անուն նշանաւոր Գաղղիացի մատենագրի հետ, որ իր «Ոգի օրինաց» կոչուած գրքին մէջ ասում է, «Աւետարանների բարոյականութիւնն Աստուածանից մարդուս տրուած պարգեւներից ազնուագոյնն է։» Ձայնակից է նաեւ Ամերիկացի ամենից մեծ քաղաքագէտի՝ Ուէպստէրի հետ, որ ասում է. «Լեռան քարոզն այնպէս սքանչելի է որ չէ կարող մարդու մտքի ծնունդն լինել։

Բարոյական փիլիսոփայութիւնը հերքո՞ւմ է Սուրբ գրքի այն բարոյականը որ տեսնվում է Քրիստոսի վարքի մէջ։ Մերժո՞ւմ է Քրիստոսի օրինակն իբրեւ անկատար կամ վնասակար։ Ի՞նչ թերութիւն է գտնում Քրիստոսի անձի վրայ, եւ ի՞նչ արատ՝ նորա վարքի մէջ։ Եւ ոչ մէկը։ Այս գլխի մէջ չենք խօսիլ Յիսուս Քրիստոսի բարոյական կատարելութեան մասին քանզի այս նիւթին վրայ ընդարձակօրէն պիտի խօսենք ԺԴ. գլխին մէջ։ Այստեղ բաւական ենք համարում յիշել մի քանի երեւելի մարդկանց վկայութիւնները Քրիստոսի մասին։

Ֆրանսա անուն պատմիչը Քրիստոսի համար ասում է. «Երկրիս մէջ ապրող էակների մէջ ամենից կատարեալն էր։» Գերմանացի փիլիսոփան Տը Վէտէ կոչում է Քրիստոսին «Անսպիտա եւ անմեղ։» Մի ուրիշ Գերմանացի փիլիսոփայ ասում է նոյնպէս Քրիստոսի մասին. «Աշխարհիս պատմութեան մէջ միակ եւ անմեղն է, եւ նրանում միայն միացած են աստուածային եւ մարդկային բնութիւնները։» Գերմանացի անհաւատ՝ Շտրաուս ասում է. «Քրիստոս իր վարքովը տալիս է կրօնի մասին ամենից բարձր գաղափարը որ մարդու միտքը կարող է ըմբռնել։» Ռենան ասում է. «Աննման եւ երկրպագելի անձ է։» Եւ արդարեւ Յիսուս Քրիստոսի բարոյականի աննման գերազանցութիւնն ինքն ըստ ինքեան հզօր ապացոյց է թէ Քրիստոս իրօք Որդի Աստուծոյ էր, եւ թէ նրա Աւետարանն աստուածային է։

Սակայն ոմանք Սուրբ գրոց բարոյականին իբրեւ արատ են համարում Նոյի, Դաւթի, Սողոմոնի եւ այլոց ամօթալի մեղքերն յիշելը։ Բայց եթէ այն անձինք այնպիսի մեղքեր իրօք գործեցին, Սուրբ գիրքը ինչո՞ւ համար չյիշէ նրանց։ Սուրբ գիրքը ուղիղ եւ անաչառ գիրք է, եւ նկարագրում է մարդիկը ճիշտ այնպէս ինչպէս որ էին։ Սուրբ գիրքն անաչառ եւ վստահութեան արժանի չէր լինել, եթէ մարդկանց բարի գործերը միայն յայտնելով նրանց չար գործքերը ծածկէր։ Բայց Սուրբ գիրքը երբէք չէ գովում յիշեալ անձերի չար գործքերը, այլ ընդհակառակն, խստիւ դատապարտում է նրանց։ Երբէք չէ ներկայացնում այն մարդկանց յանցանքները իբրեւ հետեւելու արժանի օրինակներ, ընդհակառակն, շատ անգամ յիշում է նրանց իբր խրատ զգուշութեան, եւ ցոյց է տալիս թէ ի՛նչպէս այն մեղքերը գործող անձինք խոնարհութեամբ զղջացին, կամ չարաչար պատժուեցան։ Սուրբ գրքի մէջ կա՞յ մի համար միայն որ մի ապիրատ գործ գովէ եւ կամ քաջալերէ մարդիկը պիղծ եւ անօրէն լինելու։ Ո՛չ, չկայ։ Զարագործութեանց պատմութիւնների ամենն էլ որ Սուրբ գրքի մէջ գտնվում են, մարդկանց սրտերի մէջ պիղծ

եւ մեղանչական գործերի դէմ զզուանք, իսկ բարի եւ սուրբ գործերի վրայ սէր յառաջ բերելու նպատակաւ են գրուած։

Ոմանք ասում են թէ Հին կտակարանի մէջ կան գլուխներ որ տղայոց կարդալու յարմար չեն։ Բայց ո՞րչափ են այսպիսի գլուխներ բոլոր Սուրբ գրքի մէջ։ Շատ քիչ, եւ դարձեալ Սուրբ գրքի մէջ այնպիսի գլուխներ գտնուելուն լաւ պատճառներ կան։ Այսպիսի գլուխներից ոմանք գրուած են ցոյց տալու համար թէ նահապետները եւ մարգարէները անդամ մեղ նման կիրքերի տէր անձինք էին, բայց եւ այնպէս յարատեւեցին, եւ հաւատքով հասան բարձր աստիճանի սրբութեան, եւ թէ մենք էլ ապաշխարութեամբ եւ հաւատքով կարող ենք նրանց օրինակին նմանել։ Նրանց մեղքերից ոմանց պարագաները պատմուած են ցոյց տալու համար աշխարհին թէ ո՛րչափ մեծ էին այն մեղքերը, որպէս զի ոչ ոք, որչափ մեծ եւ շատ լինեն նրա մեղքերը, չյուսահատի իր ներում գտնելուն, երբ սրտանց զղջայ իրան մեղքերի վրայ։

Ուրիշ մեղքեր յիշուած են Սուրբ գրքի մէջ իբրեւ զզուչութիւն չար ընկերների եւ չար ավորութիւնների դէմ, եւ այս կողմանէ շատ օգտակար եւ ազգու խրատ են։ Դարձեալ, ուրիշ մեղքեր յիշուած են իբրեւ պատմական կարեւոր տեղեկութիւն, եւ իբրեւ մեկնութիւն ուրիշ տեղ պատմուած դէպքերի։ Օրինակ առնենք Ծննդոց ԺԹ. գլխին մէջ պատմուած դէպքերը։ Մի՞թէ կարող էինք լաւ հասկնալ թէ ինչու համար Աստուած այսպէս խստութեամբ պատժեց Սոդոմ եւ Գոմոր քաղաքները, եթէ նրանց սոսկալի

պղծութիւնն այնպէս յայտնի գրուած չլինէր Սուրբ գրքի մէջ։

Ոմանք հարցնում են թէ Քանանացոց կոտորածը որ եղաւ Իսրայելացոց ձեռքով ի՞նչպէս կարող է արդարանալ։ Կ'պատասխանենք թէ Իսրայելացիք ջնջեցին Քանանացիներին Աստուծոյ յայտնի հրամանովը, եւ միթէ մէկը կարո՞ղ է ասել թէ Աստուած որ սրուող է կեանքի՝ իրաւունք չունի առնել զայն։ Աստուած ամեն տարի միլիոնաւոր մարդկանց կեանք է տալիս, եւ ուրիշ միլիոնաւոր մարդկանց էլ կեանքը առնում։ Այն միլիոնաւորները որ ծնվում են եւ մեռնում՝ բոլորն էլ կատարվում են Աստուծոյ հրամանով, եւ ոչ ոք չի ասիլ թէ այս հրամանն անիրաւ է։ Կայ սակայն իրաւացի պատճառ թէ ինչու համար Աստուած այսպիսի նօրանչան եւ անեղ կերպով ջնջել տուաւ Քանանացոց ազգերը։ Քանանացիք կռապաշտ էին, եւ եթէ չ'ջնջուէին, կարող էին խոտորեցնել Իսրայելացիներին ճշմարիտ աստուածապաշտութիւնից։ Աստուած ստեղծեց երկրիս բոլոր ազգերը, եւ անդադար խնամում է նրանց։ Աստուած պարգեւում է նրանց անթիւ օրհնութիւններ եւ շնորհքներ։ Բայց երբ ազգերը դադարում են Աստուած պաշտելուց, կռապաշտութեան մէջ են ընկնում եւ իրանց գարշութիւններովը ապականում են ուրիշ ազգեր, այն ժամանակ իրաւունք կունենայ Աստուած նրանց ջնջելու՝ ջրհեղեղով ինչպէս արաւ Նոյի ժամանակ, կամ կրակով ինչպէս արաւ Սոդոմին եւ Գոմորին, կամ սրով ինչպէս արաւ Քանանացոց։ Արդարեւ Աստուած երկայնամիտ է եւ բազումողորմ, բայց նաեւ արդար

Տէր է եւ պատժում է նրանց որ անօրէնութեան ճանապարհում անդադար յառաջ են գնում։

Ուստի, յայտնի է թէ վերոյիշեալ առարկութիւնները եւ ուրիշ նմանները հաստատուած չեն առողջ հիման վրայ, եւ թէ բարոյական գիտութիւնը ոչ միայն չէ հերքում Սուրբ գիրքը, այլ մանաւանդ հաստատում է այն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՒԱՏՈՒԹԵԱՆԸ ԴԷՄ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ ԿԱ՞Ն։

(Շարունակութիւն)

3. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՐՔՈ՞ՒՄ ԵՆ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ։

Նախ, քննենք թէ բնական գիտութիւնները հակառա՞կ են Աւետարանի վարդապետութիւններին. ուստի եւ հերքո՞ւմ են նրանց արժանահաւատութիւնը։

Կարելի չէ որ երկու հեղինակ իրար հակառակ լինեն, եթէ միեւնոյն նիւթերի վրայ չեն խօսում, եւ կամ նրանց գրուածքներն ուղղակի կամ անուղղակի միեւնոյն նիւթերի վերաբերեալ չեն։ Երկու քերականութիւններ կարող են իրար հակառակ լինել, քանզի միեւնոյն նիւթերի վրայ են խօսում. նմանապէս երկու աշխարհագրութիւններ կամ երկու թուաբանութիւններ կարող են հակառակ լինել իրար, բայց քերականութիւնը չէ կարող հակառակ լինել աշխարհագրութեան կամ թուաբանութեան, քանզի այս գիտութիւնները միեւնոյն նիւթի վրայ չեն խօսում։ Արդ, բնական գիտութիւնները եւ Աւետարանները

խօսո՞ւմ են այնպիսի նիւթերի վրայ որ միեւնոյն են, կամ այնչափ մօտ կապակցութիւն ունի՞ն իրար հետ որ կարելի լինէր նրանց հակառակ լինել իրար։

Բնական գիտութիւնները ի՞նչ նիւթերի վրայ են խօսում։ Բնական գիտութիւնները խօսում են բնական աշխարհի վրայ միայն։ Զորօրինակ, աստեղագիտութիւնը խօսում է արեգական, լուսնի եւ աստղների վրայ, երկրաբանութիւնը խօսում է երկրի վրայ, հանքաբանութիւնը՝ հանքերի վրայ, բուսաբանութիւնը՝ բոյսերի վրայ, կենդանաբանութիւնը՝ կենդանիների վրայ, մարդակազմութիւնը՝ մարդկային մարմնի վրայ, քիմիաբանութիւնը՝ նիւթական մարմինների բաղադրութեան վրայ, բնագիտութիւնը՝ նիւթական աշխարհի զօրութիւնների վրայ։ Թողելով այժմ Աստուածաշունչի ուրիշ գրքերը, Աւետարանների համար կասենք թէ, որանք վերոյիշեալ գիտութիւնների եւ ոչ մէկի նիւթին վրայ չեն խօսում։ Աւետարաններն ոչ աստեղագիտութիւն են սովորեցնում, ոչ երկրաբանութիւն, ոչ բուսաբանութիւն, ոչ քիմիաբանութիւն եւ ոչ բնագիտութիւն եւ այս բաներից եւ ոչ մէկի վրայ կարծիք չեն յայտնում։ Եթէ երբեմն երկնքի կամ երկրի, բոյսերի կամ անասունների վրայ խօսում են, գիտունների լեզուն չեն գործածում, այլ ժողովուրդի սովորական լեզուն։ Երբէք չեն ջանում այն գիտութիւնների մասին մի բան սովորեցնել մարդկանց, ուստի եւ այն ճշմարտութիւնները որ սովորեցնում են բնական գիտութիւնները, ինչ որ էլ լինեն, չեն կարող հակառակ լինել Աւետարանների վարդապետութիւններին։ Աւետարանները խօսում են բարոյական եւ հոգեւոր ճշմարտութիւնների

վրայ։ Սովորեցնում են թէ մարդիկ ի՞նչպէս պարտ են վարուել իրար հետ, եւ իրանց Աստուծոյն հետ, թէ ի՞նչպէս կարող են նրանց մեղքերը թողուել եւ նրանց սրտերը մաքրուել։ Արդ աստեղագիտութիւնը կամ երկրաբանութիւնը կամ բուսաբանութիւնը եւ կամ մարդակազմութիւնը ի՞նչպէս կարող են հակառակ լինել Աւետարանների վարդապետութիւններին։ Աստեղագիտութիւնն աստեղների վերաբերեալ բաներ է սովորեցնում, բայց մեղաց թողութեան վրայ ի՞նչ կարող է սովորեցնել։ Ոչինչ։ Երկրաբանութիւնը սովորեցնում է երկրիս խաւերին վերաբերեալ գիտելիք, բայց ի՞նչ կարող է սովորեցնել վերստին ծննդեան վրայ։ Ոչինչ։ Հնար չէ այդ գիտութիւններին, որ խօսում են բնական աշխարհի վրայ, հաստատել կամ ժխտել ինչ որ Աւետարանները ասում են բարոյական եւ հոգեւոր բաների մասին։ Եթէ Աւետարանները բնական աշխարհի վերաբերեալ վարդապետութիւններ մէջ բերած լինէին, բնական գիտութիւններն կարող էին քննել այն վարդապետութիւններն, եւ եթէ նրանց մէջ սխալ կար՝ հերքել, բայց Աւետարանների մէջ աստեղագիտութեան, կենդանաբանութեան երկրաբանութեան, բուսաբանութեան եւ քիմիաբանութեան վերաբերեալ ի՞նչ վարդապետութիւններ կան։ Ոչինչ։

Աւետարանները պատմում են թէ Յիսուս Քրիստոս հրաշք գործեց. բայց ոմանք ուզում են հաստատել թէ բնական գիտութիւնները հերքում են հրաշքները իբրեւ անհնարաւոր։ Բնական գիտութիւնները ստուգիւ կարո՞ղ են հերքել Աւետարանների մէջ յիշուած հրաշքները։ Բնական գիտութիւններից ո՞րը կարող է հեր-

քել նրանց։ Աստեղագիտութիւնը։ Աստեղագիտութիւնը բաց ի երկնային մարմինների մասին խօսելուց ուրիշ բանի մասին չէ խօսում։ Աստեղագիտութիւնը թող խօսի աստեղների վրայ ինչ որ կարող է, բայց ի՞նչպէս կարող է ապացուցանել թէ Քրիստոս մեռելներից յարութիւն չառաւ։ Երբէք չէ կարող։ Երկրաբանութիւնը հերքո՞ւմ է Աւետարանների մէջ յիշուած հրաշքները։ Ի՞նչպէս կարելի է լինել այս։ Երկրաբանութիւնը հողագունդիս վերաբերեալ բաներ է միայն սովորեցնում։ Արդ, երկրաբանութիւնը կարո՞ղ է ապացուցանել թէ Յիսուս մեռած Ղազարոսը գերեզմանից չ'կանչեց։ Չէ կարող ապացուցանել։ Մի քանի նկանակով 5,000 մարդկանց հրաշքով կերակրելուն դեմ բուսաբանութիւնը ի՞նչ կարող է ասել։ Կենդանաբանութիւնը ի՞նչ կարող է ասել բորոտին բժշկուելուն դէմ։ Ոչինչ։ Մարդակազմութիւնը ի՞նչ կարող է ասել Յիսուսի Քրիստոսի յարութեան դէմ։ Կարո՞ղ է ապացուցանել թէ Քրիստոսի յարութիւնն անկարելի էր։ Ի՞նչպէս պիտի կարենայ։ Մարդակազմութիւնը կարո՞ղ է հետազօտել թէ այնպիսի դէպք ինչպէս է յարութիւնը, հասարակօրէն պատահում է կամ կարող է պատահել մեզ ծանօթ բնական զօրութիւններով եւ կամ նիւթական օրէնքների համեմատ որ մեզ ծանօթ են։ Թող այս հետազօտութիւնները անէ, եւ թող ցոյց տայ թէ Յիսուսի յարութիւնը չէ կարող մեզ ծանօթ բնական զօրութեամբ կատարուած լինել։ Բայց սրանից ի՞նչ կարող է հետեւացնել։ Չէ կարող ստուգիւ հետեւացնել թէ այնպիսի դէպք երբէք տեղի չունեցաւ. քանզի բաց ի բնական օրէնքներից եւ զօրութիւններից, աշխարհիս վը-

բայ ուրիշ օրէնքներ եւ զօրութիւններ էլ կարող են լինել։ Մարդակազմութիւնն իր հետազօտութիւններից սա միայն կարող է հետեւացնել թէ, եթէ յարութիւն արդարեւ տեղի ունեցաւ, մարմնի բնական զօրութեամբը չէր այն։ Բայց այսպիսի հետեւութիւնը ոչ միայն չէ հերքում Աւետարանները, այլ ընդհակառակն մինչեւ մի աստիճան հաստատում է նրանց։ Քանզի Աւետարաններն էլ ասում են թէ Քրիստոսի յարութիւնը ոչ թէ հասարակ, այլ բոլորովին արտաքոյ կարգի դէպք էր, որ չկատարուեցաւ բնական զօրութիւններով այլ գերբնական զօրութիւններով։ Բայց բնական գիտութիւններից մինն, ինչպէս է մարմարգակազմութիւնը, ի՞նչ կարող է ասել գերբնական դէպքերի եւ գերբնական զօրութիւնների մասին։ Եւ ոչինչ։ Բնական գիտութիւնները հարկաւ չեն կարող անցնել իրանց սահմանը, որ է նիւթական աշխարհն։ Երբ այս գիտութիւնները կը թողեն բնական զօրութիւններն եւ բնական օրէնքներն, եւ կրսկսեն խօսել գերբնական զօրութիւնների եւ գերբնական օրէնքների վրայ, կ'դադարին բնական գիտութիւն լինելուց եւ գերբնական գիտութիւն կ'դառնան, եւ այլեւս իրաւունք չեն ունենալ յանուն բնական գիտութիւնների խօսելու։

Մարդակազմութիւնն ի՞նչպէս կարող է հերքել յարութեան վարդապետութիւնն իբրեւ անկարելի։ Մարդակազմութիւնն այս բանը անելու համար պարտաւոր է ապացուցանել թէ աշխարհի մէջ բաց ի բնական զօրութիւններից ուրիշ զօրութիւններ չկան, այսինքն բնութիւնից դուրս եւ ջոկ Աստուած չըկայ, կամ թէ Աստուած, եթէ Աստուած կայ, չէ

կարող կամ չուզիլ բաց ի մարմնոյ կենդանական զօրութիւններից ուրիշ զօրութիւններ ի գործ դնել։ Բայց մարդակազմութիւնն ինչպէս կարող է ապացուցանել թէ Աստուած չկայ։ Մարդակազմութիւնը խօսում է միայն մամնոյ մորթին եւ ոսկորների, ջղերի եւ մկանների եւ այլ մասերի վրայ, նաեւ այն օրէնքների վրայ որոնց հպատակ է մարմինը։ Բայց մ՝ այս պիսի գիտութիւն ինչպէս կարող է ապացուցանել թէ Աստուած չկայ։ Երբէք չէ կարող։ Ընդհակառակն մարմնոյ զարմանալի կազմուածը զօրաւոր ապացոյց է թէ ամենիմաստ արարիչ կայ։

Կամ մարդակազմութիւնն ինչպէս կարող է ապացուցացանել թէ Աստուած երբէք զերբնական զօրութիւն պիտի չգործածէ մեռելներն յարուցանելու։ Մարդակազմութիւնն ինչպէս կարող է ապացուցանել այս։ Մարդակազմութիւնն ինչ կարող է ասել ստուգիւ աստուածային կամաց վրայ։ Մարդակազմութիւնն աստուածային կամաց վրայ ուրիշ բան չէ կարող ասել, բայց եթէ ինչ որ տեսնում է մարմնոյ կազմութեան եւ գործողութիւններին մէջ։ Մարդակազմութիւնն Աստուծոյ կամաց վրայ այսչափ բան միայն գիտէ, եւ սրանից աւելի մի բան կարող չէ ցոյց տալ։ Մարդակազմութիւնն արդարեւ կարող է ցոյց տալ թէ Աստուած ընդհանրապէս արտաքոյ կարգի զօրութիւններ չէ գործածում մեռելներն յարուցանելու, քանզի մարդակազմութիւնն իր հետազօտութիւնների մէջ այս է միայն տեսնում, բայց ինչպէս կարող է ապացուցանել թէ Աստուած չի ուզիլ նաեւ որ եւ իցէ պարագայի մէջ որ եւ իցէ նպատակով երբէք զերբնական զօրութիւններ գործածել։

Մարդակազմութիւնը մարդկային մարմնոյ օրէնքները եւ կազմութիւնը քննելով ասացաւ երբէք այսպիսի գիտութիւն Աստուծոյ կամքի վրայ։ Ոչ երբէք Սպա կարող չէ ասել թէ Աստուած զերբնական զօրութիւն չի ուզիլ գործածել։

Ոմանք ասում են մարդակազմութիւնը հաստատում է թէ մեռելների յարութիւնը հակառակ է մարմնոյ նիւթական օրէնքներին. արդ, որովհետեւ Աստուած դրած է մարմինն այն նիւթական օրէնքների ներքեւ, ապա հաւանական չէ թէ ուզէ ջնջել կամ բրոնաբարել այն օրէնքները որ ինքը դրած է։ Սա եւս ասում են. բնագէտների հետազօտութիւնները ցոյց են տալիս թէ բոլոր նիւթական աշխարհը բնական օրէնքների տակ է, եւ թէ տիեզերքի մէջ ամեն բնական գործ տեղի է ունենում այն օրէնքների համեմատ. եւ անհաւատալի է թէ այն օրէնքները ջնջուին կամ բռնաբարուին, ապա իրրեւ անհաւատալի պէտք է մերժել Ս. Եւտարանների մէջ պատմուած հրաշքները, որ արտաքոյ բնական օրէնքների գործուածներ են։ Բայց այս եզրակացութիւնն հաստատ հիման վրայ չէ կայանում։ Արդարեւ պարտ ենք իրրեւ ճշմարիտ ընդունել ինչ բան որ բնական գիտութիւնները հաստատում են նիւթական աշխարհի վրայ. պարտ ենք նաեւ իրրեւ Աստուածանից հաստատուած ճանաչել ամեն օրէնք որոնց ներքեւ է նիւթական աշխարհը. բայց ամենեւին չենք ընդունիլ թէ բնական գիտութիւնները կարող են ցոյց տալ թէ Աւետարանների մէջ պատմուած հրաշագործութիւնները եղծանում են կամ ջնջում են բնական օրէնքներն այնպէս որ այն հրաշագործութիւնները պէտք էին մերժուել իրրեւ

անհաստատալի։ Այս յայտնի է հետեւեալ իրողութիւններից։

Ա. Բնական գիտութիւնները ցոյց չեն տալիս թէ բնական օրէնքներ եւ զօրութիւններ որ կան հարկաւոր կամ բացարձակ, եւ իրենք կամ էապէս անայլայլելի են։

Բնական գիտութիւնները ցոյց չեն տալիս թէ նիւթական օրէնք եւ զօրութիւնք չեն կախուած Արարչին կամքիցը, եւ թէ այնպէս յաւիտենական են ինչպէս Աստուած, եւ այնպէս անայլայլելի ինչպէս Աստուածային բնութիւնը, քանզի եթէ բնական գիտութիւնները ապացուցանէին այս, ապացուցած կ'լինէին թէ իրանց ներկայ կարգն ի յաւիտենից է։ Եթէ նիւթական աշխարհի օրէնքներն եւ զօրութիւնները ի բնէ կամ էապէս հարկաւոր եւ բացարձակ են, ապա հարկաւոր է որ նաեւ ի յաւիտենից եղած լինին, այն օրէնքների եւ զօրութիւնների արդիւնքը կամ հետեւանքն էլ ի յաւիտենից եղած լինին, այսինքն աշխարհի մէջ իրերի ներկայ կարգն էլ ի յաւիտենից եղած լինի։ Սակայն գիտութիւնը ցո՞յց է տալիս թէ այսպէս է։ Գիտութիւնն ընդհակառակն, ցոյց է տալիս թէ կար մի ժամանակ որ ոչ աստղեր ոչ անասուններ եւ ոչ մարդիկ կային երկրի վրայ, եւ այսպէս հաստատում է թէ նիւթական աշխարհի այժմեայ կարգն ի յաւիտենից չէ, ուստի եւ բնական օրէնքները եւ զօրութիւնները ինքնին հարկաւոր չեն, եւ ոչ ի բնէ կամ էապէս անայլայլելիք։

Բ. Բնական գիտութիւնները չեն ցոյց տալիս թէ Աստուած երբ այս

աշխարհքը սահմանեց, թէեւ ուզէր չէր կարող նրան այժմեայ բնական օրէնքներից եւ զօրութիւններից տարբեր օրէնքների եւ զօրութիւնների ներքեւ դնել։

Բնական գիտութիւնները ի՞նչպէս կարող են ապացուցանել թէ Արարիչը չէր կարող բոլորովին տարբեր յատկութիւններ տալ նիւթական աշխարհին։ Բնական գիտութիւնները չեն կարող ապացուցանել այս, վասն զի նրանց առարկան արդի աշխարհն է միայն, եւ արդի աշխարհն քննելով միայն ստացել են այս ստոյգ ծանօթութիւններն որոնց վրայ հիմնուած են։ Բնական գիտութիւնների առարկայ չեն տրիչ կարելի կամ անկարելի աշխարհներ, եւ այս բաների վրայ գիտունները կարծիք միայն կարող են ունենալ, բայց ոչ ստոյգ գիտութիւն։ Բնական գիտութիւնները քննում են այն օրէնքները եւ զօրութիւնները միայն, որ մինչեւ հիմա գործեցին, եւ որ արդ եւս գործում են, եւ որոնց գործողութիւնները տեսնվում են, բայց չեն քննում որ եւ իցէ անծանօթ, կարելի կամ անկարելի օրէնքներ եւ զօրութիւններ որոնց գործողութիւնները կարող չեն տեսնել։ Նաեւ անհնար է բնական գիտութիւններին ապացուցանել թէ արդի օրէնքները եւ զօրութիւնները բացարձակապէս անհրաժեշտելի են աշխարհս կազմող նիւթերի էութիւնից, վասն զի բնական գիտութիւնները չեն կարողացել որոշել թէ ի՞նչ է նիւթի էութիւնը։ Նիւթի էութեան մասին այնքան քիչ բան գիտեն բնական գիտութիւնները, որ կարող չեն սահմանել նիւթը բայց եթէ նկարագրելով նրա յատկութիւնները, բայց թէ նիւ-

թը կարո՞ղ էր թէ չէր կարող ուրիշ յատկութիւններ ունենալ, սրա վրայ բնական գիտութիւնները բան չգիտեն։ Այս այսպէս լինելով, բնական գիտութիւնները կարող չեն հաստատել թէ արդի բնական օրէնքները եւ զօրութիւնները անբաժանելի են նիւթական աշխարհից, ուստի եւ անայլայլելի։

Գ. Բնական գիտութիւնները չեն ցոյց տալիս թէ արդի բնական օրէնքները եւ զօրութիւնները այնպէս սրբազան են որ ներելի չէ որ եւ իցէ նպատակի համար կանգնեցնել կամ փոփոխել նրանց ներգործութիւնը։

Բարոյական օրէնքները ուրիշ են եւ նիւթական օրէնքները ուրիշ։ Բարոյական օրէնքները որ բարոյական անփոփոխելի սկզբունքների վրայ հիմնուած են, անայլայլելի են. բայց բնական օրէնքները որ բարոյական յատկութիւն չունին, կարող են փոխուել, երբ այսպիսի փոփոխութեան համար բուսական պատճառ կայ։ Նոյն իսկ Աստուծոյ բարոյական կատարելութեան դէմ է ենթադրել թէ Աստուած կարող է մարդկանց համար բարի անել իրար ատելը, եւ չար անել՝ իրար սիրելը, բայց Արարչին եւ արարածների կողմանէ ի՞նչ զօրաւոր պատճառ կայ որ թոյլ չ'տայ մեզ ենթադրել թէ Աստուած կարող է լոյսի կամ օդի եւ կամ ջերմութեան օրէնքները տարբեր անել նրանց այժմեայ օրէնքներից։ Ամենեւին պատճառ չկայ։ Այս օրէնքները կապակցութիւն կամ վերաբերութիւն չունին իրաւունքների յաւիտենական եւ անփոփոխելի սկզբունքների հետ, ուստի եւ Աստուած, ուրեմն, ինքնագիրն, ազատ է փոխել բնական օրէնքները, երբ եւ ինչպէս որ նրան լաւ թուի։

Դ. Թէեւ ենթադրենք թէ նիւթական աշխարհի արդի օրէնքներն անայլայլելի են, տակաւին բնական գիտութիւնները չեն ցոյց տալիս թէ Աստուածաշունչի մէջ պատմուածները աշխարհները եղծանումներ կամ ջնջումներ են կամ բռնաբարումներ են այն օրէնքներից մէկը։

Շատ բնական զօրութիւններ կան որ տարբեր օրէնքների համեմատ են գործում։ Այս զօրութիւնները երբեմն գործակցում են իրար, բայց երբեմն էլ իրար հակառակ են գործում։ Մի բնական զօրութիւն քաշում է երկիրս դէպի արեգակը, բայց կայ մի ուրիշ զօրութիւն որ նրան արեգակից հեռու է մղում։ Այս զօրութիւնները իրար հակառակ են գործում, բայց իրար չեն եղծանում կամ ջնջում կամ բռնաբարում։ Քիմիական զօրութեան ազդեցութեամբ միւսը սկսում է չուտով նստել, բայց եթէ ազի ջրի մէջ դրուի, ուրիշ քիմիական զօրութիւն կ'ընդդիմանայ առաջի զօրութեան ներգործութեանը։ Քիմիական զօրութեան ներգործութեամբ խաղողի հիւթը չուտով սկսում է խմորուել, բայց երբ մանանեխի սերմը նետւում է այն հիւթին մէջ մի ուրիշ քիմիական զօրութիւն հակառակ է գործում առաջին զօրութեան ներգործութեանը։ Բայց այս վերջին զօրութիւնը չէ եղծանում եւ չէ ջնջում կամ բռնաբարում բնութեան կարգը։ Այս դէպքին մէջ մի աւելի ուժեղ զօրութիւն հակառակ է գործում տկարագոյն զօրութեան։ Երբ

այս երկու զօրութիւնների վրայ խօսում ենք կարող ենք ասել թէ ուժգնագոյն զօրութեան ներգործութիւնը հակառակ է տկարագոյն զօրութեանը, բայց չենք կարող ասել թէ հակառակ է ընդհանուր բնութեան որ բոլոր քիմիական զօրութիւններն իր մէջ է պարունակում։

Եթէ ասուի թէ վերոյիշեալ զօրութիւնների բոլորն էլ բնական օրէնքների ներքեւ են, կ'պատասխանենք թէ կան ուրիշ զօրութիւններ որ բնական օրէնքների ներքեւ չեն, բայց եւ այնպէս նիւթական աշխարհի զօրութիւններին հակառակ են գործում։ Զօրօրինակ, մարդ մի գունտ ունի ձեռքում։ Գունտ բնութեան օրէնքի ներգործութեան համեմատ այն գունտը գետին պիտի ընկնէր, բայց մարդը չէ թողում որ գունտը ընկնի. ընդհակառակն նետում է նոյն վեր օդի մէջ, եւ ինչքան որ գունտը վեր է բարձրանում այնպիսի բան է անում որ հակառակն չէ ծանրութեան օրէնքին։ Ի՞նչ զօրութիւն է որ հակառակ է գործում եւ յաղթում ծանրութեան օրէնքին։ Այս հակառակ ներգործող զօրութիւնը յառաջ է գալիս մարդի կամքից կամ մտքից, որ իր որոշումների եւ գործողութիւնների մէջ ազատ է եւ ոչ թէ նիւթական աշխարհի օրէնքով։ Բայց մարդ այսպէս գործելով եղծանո՞ւմ է կամ ջնջո՞ւմ է կամ բռնաբարո՞ւմ է ծանրութեան զօրութիւնը։ Ոչ բնաւ։ Այս զօրութիւնը շարունակում է գործել, բայց մի ուժգնագոյն զօրութիւն միջամտում է լինում, այնպէս որ առաջի զօրութեան սովորական արդիւնքը յառաջ չէ գալիս։ Միթէ այդպիսի միջամտութիւնը հակառա՞կ է բնութեան կամ բնական օրէնքներին։ Կարելի է ասուել

թէ հակառակ է ծանրութեան օրէնքին, կամ նիւթական աշխարհի բնութեանը, բայց չէ կարելի ասուել թէ հակառակ է այն բնութեան որ ազատ գործող մարդիկ եւ նիւթական գոյացութիւններ է միանգամայն պարունակում իր մէջ, ոչ էլ կարելի է ասուել թէ այն միջամտութիւնը եղծանում է կամ ջնջում է կամ բռնաբարում է բնութեան օրէնքները։

Արդ, եթէ մարդիկ կարող են բարձրագոյն զօրութեամբ այնպէս գործել որ սովորական դէպքեր չը հետեւին բնական օրէնքների եւ զօրութիւնների ներգործութիւնից, եւ այսպէս անելով ոչ կեղծանեն, ոչ կջնջեն եւ ոչ կբռնաբարեն բնական օրէնքները եւ զօրութիւնները, միթէ Աստուած կարող չէ անել նոյն բանը։

Շատերը սխալվում են կարծելով թէ բնութիւնը բաց ի նիւթական օրէնքներից եւ զօրութիւններից ուրիշ օրէնքներ եւ զօրութիւններ չունի։ Այս կարծիքը սխալ է։ Բնութիւնը նիւթական աշխարհից ջոկ ուրիշ շատ բաներ է պարունակում։ Պարունակում է մարդը որ կարողութիւն ունի նիւթական աշխարհի վրայ գործելու եւ մինչեւ մի աստիճան խափանելու եւ ըստ հաճոյս ուղղելու նրա զօրութիւնները, եւ մի այսպիսի միջամտութիւն հակառակ չէ այն բնութեան որ պարունակում է իր մէջը մարդ եւ նիւթը միանգամայն։

Սակայն բնութիւնը նիւթից եւ մարդից ջոկ ուրիշ բաներ էլ է պարունակում։ Եթէ բնութիւն բառն իր ընդարձակ նշանակութեամբ առնենք, նորան վերաբերում է նաեւ Աստուած, վասնզի բնութիւն բառը նշանակում է՝ ինչ որ է, այսինքն ինչ որ կայ,

թէ նիւթական լինի եւ թէ մտաւոր, թէ երկնային լինի եւ թէ Աստուածային։ Սրանից հետեւում է թէ ինչ որ թուում է հակառակ լինել այն բնութեան որ պարունակում է նիւթ եւ մարդ միայն՝ կարող է երբէք հակառակ չլինել այն բնութեան որ պարունակում է ամեն բան, նիւթական եւ մտաւորական, մարդկային եւ աստուածային, ժամանակաւոր եւ յաւիտենական։ Ուստի, շատ յայտնի է թէ բնական գիտութիւնները կամ աւելի ճշտիւ խօսելով բնական գիտութիւնները, ցոյց չեն տալիս թէ Աւետարանների մէջ պատմուած հրաշքները հակառակ են բնութեան կամ եղծանում են կամ ջնջում եւ կամ բանաբարում են բնութեան օրէնքներից մէկը։ Վերոյիշեալ իրողութիւններից յայտնի է թէ բնական գիտութիւնները Աւետարաններին մէջ յիշուած հրաշքներին վերոյալ բան չ'գիտեն, ուստի եւ չեն կարող մի բան ասել ի նպաստ կամ ընդդէմ այն հրաշքներին։

Սակայն Աւետարանները հաստատում են թէ ճշմարիտ է Հին կտակարանը, որի մէջ նիւթական աշխարհին վերաբերեալ քանի մի բան է պատմուած, զորօրինակ, երկրիս ստեղծումը եւ մարդկային ազգի ծագումը։ Ուրեմն աւելի յառաջ տանենք մեր հետազօտութիւններն եւ քննենք թէ բնական գիտութիւնները հերքո՞ւմ են Սուրբ գրքի որ եւ իցէ մէկ մասը։

Որպէսզի կարող լինենք այս խնդիրն ուղիղ լուծել, հարկ է որ Սուրբ գիրքը եւ բնութիւնը միանգամայն ուղիղ մեկնենք, քանզի եթէ մէկը կամ միւսը ծուռ մեկնենք, գուցէ երկուսն էլ իրար հակառական երեւան՝ առանց ստուգիւ հակառական լինելու։

Նախ քան զամենայն հարկ է ուղիղ մեկնել Սրուբ գիրքը։ բայց հետեւեալ պատճառներից յայտնի է որ գիրքն բան չէ սա։

Ա. Սուրբ գիրքը բաղկանում է այլեւայլ տեսակ, այսինքն պատմական, բանաստեղծական, մարգարէական եւ ուրիշ տեսակ գրքերից, եւ սրանց ամեն մինը պիտի մեկնուի իր մասնաւոր ոճին եւ կանոններին համաձայն։ Պատմական գրքերը պիտի մեկնուին պատմական գրութիւնների կանոններին համեմատ, եւ բանաստեղծական գրքերը պիտի մեկնուին բանաստեղծական գրութիւնների կանոններին համաձայն։ Մարդիկ շատ անգամ սխալվում են, մարգարէական կամ բանաստեղծական մի գիրք իբրեւ պատմական գիրք մեկնելով։

Բ. Սուրբ գիրքը խօսում է շատ խորին նիւթերի եւ բարձր ճշմարտութիւնների վրայ։ Խօսում է բոլոր բաների անստեղծ պատճառին վրայ որ է Աստուած. խօսում է աշխարհի արարչագործութեան վրայ. ամենակալ եւ ամենիմաստ Աստուծոյ նախախնամութեան վրայ եւ մարդկանց փրկութեան համար Աստուծոյ Որդու մարդեղութեան վրայ։ Մեր՝ տկար կարողութիւնների միջոցով դժուարաւ կարող ենք հասկանալ այս բաները, ուստի եւ շատ անգամ ընկնում ենք սխալման մէջ երբ ջանում ենք նրանց մեկնել։

Գ. Սուրբ գիրքը քիչ խօսելով շատ բան է հասկացնում։ Աստուածաշունչի բոլոր գրքերը միանգամայն մի միջակ հատոր են կազմում, բայց ո՞րչափ շատ տեղեկութիւն է պարունակում այն միջակ հատոր գիրքը։ Սուրբ գիրքը բաց ի վերոյիշեալ բաներից պարունակում է մարդկային ազգի համառօտ պատմու-

թիւնը, մի աստուածային օրէնք, այն օրէնքի բացատրութիւնը, չատ հրամանդիչ կենսագրութիւններ, կարեւոր բարոյական սկզբունքներ եւ չատ մարգարէութիւններ։ Սուրբ գիրքը, ինչպէս ասացինք, պատմում է Աստուածորդու մարգեղութիւնը, վարդապետութիւնները եւ հրաշքները, եւ նկարագրում է Փրկչանէական եկեղեցու հիմնելն եւ տարածուելը։ Արդ, որովհետեւ Սուրբ գիրքն բնագրաձեւօրէն չէ բացատրում իր վարդապետութիւնները, այլ որչափ հնար է համառօտ ամի փուտ է նրանց, դարմանալի չէ որ մարդիկ չատ անգամ սխալվում են երբ դուրս են գալիս նրա իմաստը մեկնելու։

Դ. Սուրբ գիրքը գիտուն մարդկանց համար գրուած փիլիսոփայական գիրք չէ, այլ հոգիները հրահանգող գիրք է որ գրուած է բոլոր ազգերի համար, թէ քաղաքակրթեալների, եւ թէ ոչ քաղաքակրթեալների, բոլոր մարդկանց համար, թէ ուսեալների եւ թէ անուսների, եւ գրուած է ոչ թէ մարդկանց բնական գիտութիւն սովորեցնելու՝ այլ փրկութեան ճանապարհը ցոյց տալու։ Ուստի, Սուրբ գիրքը նիւթական աշխարհի վրայ չէր կարող խօսել գիտական ճշտութեամբ, վասն զի եթէ այսպէս անէր, չքաղաքակրթուած եւ անուս մարդիկ կմերժէին նրան իբրեւ գժուարիմաց կամ անտարոյգ։ Դեցուք թէ Հին կտակարանն այնպէս նկարագրէր աշխարհի ստեղծումը ինչպէս արդի աստեղագէտները նկարագրում են նրան մոլորակների կազմութեան եւ բաղադրութեան վրայ տարբեր տարբեր կարծիքներ յայտնելով, կամ ինչպէս արդի երկրաբանները նկարագրում են երկրաբանական խաւերը. հասարակ մարդիկ, որ ոչ աստեղագի-

տութեան տեղեակ են եւ ոչ երկրաբանութեան, ինչպէս կարող էին իբրեւ ճշմարիտ ընդունել այն նկարագրութիւնը։ Սուրբ գիրքն այնպէս հակառակ պիտի թուէր մարդկանց կարծիքներին եւ համոզմունքներին, որ խոյսն պիտի մերժէին նրան։

Ուստի, հարկ էր որ Սուրբ գիրքը սխալ վարդապետութիւն չսորվեցնելուց ցոկ, ամէն ազգի եւ ամէն կարգի մարդկանց դիւրահասկանալի լեզուով գրուածէր, եւ նիւթական աշխարհի երեւոյթները նկարագրէր ոչ թէ գիտնական ճշտութեամբ, այլ այնպէս ինչ էս երեւում էին մարդկանց։ Ուրեմն, սխալվում են նրանք որ Սուրբ գիրքը մեկնում են այնպէս ինչպէս մեկնվում է աստեղագիտական կամ երկրաբանական մի գրուած, եւ կամ Սուրբ գրքից պահանջում են գիտնական խնդիրների մէջ բասի ճշտութիւն։

Ե. Մի երրորդ պատճառ էլ կայ թէ ինչու համար մարդիկ չատ անգամ սխալվում են երբ մեկնում են Սուրբ գիրքը եւ պատճառը սա է թէ մարդիկ իրանց յատուկ կարծիքները եւ տեսութիւններն անին, եւ երբեմն ուզում են այնպէս մեկնել Սուրբ գիրքը որ համաձայն լինի իրանց կարծիքներին եւ տեսութիւններին։

Վերոյիշեալ պատճառներին նայելով զարմանալի չէ որ մարդիկ չատ անգամ սխալ են մեկնել Սուրբ գիրքը։ Մի ժամանակով կարծվում էր թէ Սուրբ գիրքը սովորեցնում է որ երկիրս կանգնած է եւ արեգակը դառնում է. նաեւ կարծվում էր թէ Սուրբ գիրքը երկիրս գնդաձեւ չէ համարում այլ եւ հարթաձեւ։ Դարձեալ կարծվում էր թէ Սուրբ գրքին համեմատ իբր 6,000 տարի է այն ժամանակից որ Աստուած ոչ-

ինչից ստեղծեց երկիրս։ Բնական գիտութիւնները հերքեցին այս կարծիքները կամ մեկնութիւնները, բայց նրանց հերքելով հերքած չեղան Սուրբ գիրքը, քանզի Սուրբ գիրքը իրօք չէր սովորեցնում այն սխալ կարծիքները։ Բնական գիտութիւնները հերքեցին Սուրբ գրքի մասին տրուած սխալ մեկնութիւնները միայն։ Սուրբ գրքի տուած արդի մեկնութիւններից ոմանք էլ կարող են ճիշտ չլինել, եւ բնական գիտութիւնները կարող են հերքել նրանցից մի քանիսը, բայց պէտք է գիտենալ թէ բնական գիտութիւնները Սուրբ գրքի տուած քանի մի սխալ մեկնութիւնները հերքելով նոյն իսկ Սուրբ գիրքը հերքած չեն լինել։

Այս այսպէս լինելով կարող են ոմանք հարցնել. Միթէ կարելի չէ Սուրբ գրքի որեւ իցէ մեկնութիւնը ընդունել կատարեալ վստահութեամբ. եւ եթէ կարելի չէ, ապա ի՞նչ օգուտ Աստուածային յայտնութիւնից որի բուն նշանակութիւնը վրայ չենք կարող վստահ լինել։ Այս հարցման կ'պատասխանենք թէ Սուրբ գրքի մէջ պատմուած գլխաւոր զէպքերն եւ կարեւոր ճշմարտութիւնները կարող են գիրութեամբ մեկնուել։ Մարդկանց ժամանակաւոր եւ յաւիտենական երջանկութիւնը վերաբերեալ վարդապետութիւնները այնպէս պարզ են որ մի երեխայ իսկ կարող է հասկանալ նրանց։ Փրկութեան ճանապարհը այնպէս է ցոյց տուած որ ամենից պարզամիտ մարդն իսկ կարող է գտնել նրան։ Դժուարահասկանալի կէտերն այնպիսի կէտեր են որոնց ուղիղ հասկանալը կարեւոր չեն փրկութեան համար. այնպիսի բաներն որը Սուրբ գիրքը ոչ թէ ընդարձակօրէն այլ համառօտիւ է պատմում։ Ընթերցողը միշտ պիտի յիշէ թէ մարդիկ շատ անգամ սխալ են մեկնում Սուրբ գիրքը. եւ թէ Սուրբ գրքի մէկ սխալ մեկնութեան հերքումը բուն Սուրբ գրքի հերքում չէ։ Որպէսզի բնական գիտութիւններն կարենան հերքել Սուրբ գիրքն, նորա ուղիղ մեկնութիւնը հերքելու կարող պիտի լինին։

Նախ նախ քան մեր ասելը թէ բնական գիտութիւններն հերքում են Սուրբ գիրքը, հարկ է բնութիւնն ուղիղ մեկնել։ Բնութեան մէկ սխալ մեկնութիւնը կարող է հակառակ երեւալ Սուրբ գրքին, մինչ ուղիղ մէկ մեկնութիւնը կարող է համաձայն լինել, եւ հետեւեալ իրողութիւններից յայտնի է թէ գիտերին չէ ուղիղ մեկնել բնութիւնը

Ա. Բնութիւնը հեշտութեամբ չէ մեկնվում, վասնզի շատ ընդարձակ է։ Որչափ դժուարին է կենդանաբաններին իբր 300,000 տեսակ տարբեր անասունները ճանաչել, կամ անկարաններին իբր 250,000 տեսակ տունկերը գիտենալ, կամ ասեղագէտներին գիտենալ անթիւ անհամար աստղերը։ Գիտուն մարդիկ նիւթական աշխարհի վերաբերեալ անբաւ տեղեկութիւններ են հաւաքել, բայց դեռ շատ աւելի բան է մնում նրանց սովորելու։ Շատ գիւտեր են արած, բայց դեռ շատ գիւտեր ունին անելու։ Սրանց գիտութիւնը նիւթական աշխարհի վրայ անկատար է, ուստի եւ այն մեկնութիւնները որ տալիս են գիտունները նիւթական աշխարհի հարկաւ անկատար են։ Նիւթական աշխարհի երեւոյթներին վրայ մի քանի բան են սովորում եւ մեկնութիւն տալ են ուզում այն բաներին, այսինքն նրանց վրայ հիպոթեզներ են անում, բայց յետոյ ուրիշ բաներ են սովորում,

եւ շատ անգամ ստիպվում են փոխել իրանց ենթադրութիւնները, որպէսզի կարող լինեն համաձայնեցնել այն ենթադրութիւնները նոր սովորած բաների հետ։

Բ. Բնութիւնը դիւրին չէ մեկնվում, վասն զի բնութեան մէջ կան բաներ որոնցից ոմանք այնպէս հեռու են, ոմանք էլ այնպէս մանր են որ աչքով չեն տեսնվում։ Ո՛րչափ դժուարին է որոշել թէ ի՛նչ բաներից են կազմուած երկնային մարմինները որ միլիոնաւոր մղոններ հեռու են մեզանից։ Ո՛րչափ դժուարին է ցոյց տալ թէ ի՛նչպէս են գոյանում այն ճճիները որոնք այնչափ փոքր են որ մի կաթիլ ջրի մէջ նրանցից հազարաւորներ կարող են պարունակուել։

Դ. Բնութիւնը մեկնել դժուարին է, քանզի նրան մեկնելու համար պէտք է դիտենալ նիւթական աշխարհի ոչ միայն այժմեայ այլ եւ անցեալ վիճակը, եւ ո՛րչափ դժուարին է երկրաբաններին որոշել ճշտիւ թերեւս միլիոնաւոր տարիներ առաջ կատարուած դէպքերի ժամանակն եւ կարգը. դէպքեր՝ որոնց վրայ մենք այնչափ բան միայն գիտենք, որչափ երկրիս խաւերն անկասար կերպով մեզ իմացնում են։

Դ. Բնութիւնը մեկնել դժուարին է նրա համար որ բնութիւնն էլ իր սքանչելիքն ունի։ Նրա զօրութիւններից ոմանք՝ զորօրինակ ելեքտրական եւ գալուանական զօրութիւնները, այնպէս նուրբ են որ չենք կարող միշտ դիտել եւ ստուգել նրանց գործողութիւնները, այնպէս գաղտնի են որ չենք կարող հասկանալ եւ հասկացնել նրանց գործողութիւնները։

Ե. Ինչպէս երբեմն դժուարին է աստուածաբաններին ուղիղ մեկնել Սուրբ գիրքն իրանց նախապա-

չարութիւնների պատճառաւ, նոյնպէս էլ երբեմն դժուարին է բնագէտներին ուղիղ մեկնել բնութիւնը։ Ունին յատուկ կարծիքներ եւ ենթադրութիւններ նիւթական աշխարհի վրայ, եւ հակամտութիւն ունին այնպէս մեկնել բնութիւնը որ իրանց ենթադրութիւնները հաստատուին։ Թերեւս նպատակ չունին խաբել ուրիշները կամ իրանց, բայց յայտնի է որ չեն կարող միշտ իրանց ազատել նախապաշարումներից, ուստի եւ շատ անգամ ուղիղ չեն մեկնում բնութիւնը։

Ապա զարմանք չէ որ բնագէտները շատ անգամ սխալուած են նիւթական աշխարհը մեկնելով։ Արդարեւ բնագէտները աւելի եւ մեծագոյն սխալներ են արած բնութիւնը մեկնելով, քան աստուածաբանները Սուրբ գիրքը մեկնելով։ Զարմանալի չէ սա, վասն զի Սուրբ գիրքը աւելի բացայայտ է քան նիւթական աշխարհը։ Եթէ մէկը բնական գիտութիւնների պատմութիւնը կարդայ, պիտի զարմանայ տեսնելով թէ գիտունները որչափ շատ եւ մեծ սխալներ են արած մեկնելով նիւթական աշխարհը։ Պիտի զարմանայ տեսնելով պէս պէս գիտնական ենթադրութիւններ կամ կարծիքներ որոնք ժամանակով գիտունները ընդունած էին իբրեւ հաւանական, բայց յետոյ աւելի լաւ քննելով մերժեցին իբրեւ սխալ։ Հաւատարմութեան արժանի մի անձ պատմում է թէ 1808-ին Գալլիոյ գիտութիւնների ճեմարանը 80 այլ եւ այլ երկրաբանական դրութիւններ հաշուեց, բայց այդ 80 դրութիւնների եւ ոչ մինը հիմա չէ ընդունվում իբրեւ ճշմարիտ։ Այս ինչ դարի բնագէտները իբրեւ անհիմն հերքում են նախորդ դարի ենթադրութիւն-

ների եւ կարծիքների եթէ ոչ ամենը, գէթ մեծագոյն մասը։ ԺԹ. դարի բնագէտները ԺԸ. դարի գիտնական կարծիքների չատը մերժում են. ապա ի՞նչպէս կարող ենք ասել թէ Ի. դարի գիտուններն էլ ԺԹ. դարի գիտուններին կարծիքները պիտի չ'մերժեն։

Յայտնի է թէ Աստուածաշունչը չէ կարող համաձայնուել բոլոր դարերի գիտնական կարծիքների հետ։ Եթէ ԺԸ. դարի բոլոր գիտնական կարծիքների հետ համաձայն լինէր, ԺԹ. դարի բոլոր գիտնական կարծիքների հետ համաձայն կարող չէր լինել. եթէ ԺԹ. դարի բոլոր գիտնական կարծիքների հետ համաձայն լինի, հաւանական չէ թէ Ի. դարի բոլոր գիտնական կարծիքների հետ էլ համաձայն պիտի լինի։

Այս դարի իրար հակառակ գիտնական կարծիքներից յայտնի է նաեւ թէ բնագէտները չատ անգամ սխալվում են նիւթական աշխարհը մեկնելով։ Շատ է սխալվում ով որ կարծում է թէ բոլոր բնագէտները ամեն գիտնական խնդրի վրայ միեւնոյն կարծիքն ունին, քանզի գիտուններին մեծապէս տարբերվում են իրարից նոյն իսկ կարեւոր եւ հիմնական խնդիրների մէջ. զոր օրինակ, թէ ի՞նչ է նիւթը կամ ի՞նչ է զօրութիւնը։ Մի ուրիշ օրինակ բերենք. կան գիտուններ, ինչպէս Դարուին եւ Բիւխներ, որ յան են բնական գիտութիւններում ասում են թէ բոլոր տունկերը, անասունները եւ մարդիկ բնական զօրութիւնների ազդեցութեամբ զարգանալով են յառաջ եկած մէկ սերմից եւ կամ մէկ նախնական ճճիից։ Ուրիշ գիտուններ, ինչպէս Ակազիս, Դոսըն, Հիւ Միլլեր, Բիւվիէ, Ֆլուրէնս, Քոսթ եւ ուրիշները պնդում են

նոյնպէս յանուն բնական գիտութիւնների թէ այն բնական զարգացումն անկարելի է, եւ կան բուսաբանական եւ երկրաբանական փաստեր վերոյիշեալ դրութեան դէմ։ Արդ այս երկու կարծիքների կամ ենթադրութիւնների որն էլ ուղիղ լինի յայտնի է թէ այս երկու դաս գիտուններին մէկը կամ միւսը սխալուած է. երկուսն էլ ուղիղ չեն կարող լինել, ուստի եւ անհնարին է որ Աստուածաշունչը երկուսի հետ էլ միանգամայն համաձայնի։

Նախ բնագէտները չատ անգամ փոխում են իրանց կարծիքը։ Երբ 1844-ին Դարուինի դրութեան աւելի կամ նուազ նման դրութիւն հրատարակուեցաւ «Հեաք արարչագործութեան» անուն գրքի մէջ, զրեթէ բոլոր բնագէտներն հերքեցին այն դրութիւնն իբրեւ անհիմն. բայց հիմա ամենք իրանց կարծիքը փոխած են, եւ իբրեւ հաւանական ընդունում են այն դրութիւնը։ Յայտնի է թէ բնութեան տրուած այս մեկնութիւնները սխալ էին կամ 1844-ին կամ 1899-ին, եւ չէր կարելի Աստուածաշունչին համաձայն լինել թէ առաջ եւ թէ յետոյ տրուած մեկնութիւններին, որ հակառակն են։ Սրբ Զարլըս Լայէլ, ամենից հռչակեալ երկրաբաններից մէկը, իր «Սկզբունք երկրաբանութեան» կոչուած գիրքը տասն անգամ տպագրել է տուել, եւ այս այլ եւ այլ տպագրութիւնների մէջ տարբեր գիտնական կարծիք եւ ենթադրութիւններ է յառաջ բերել եւ պաշտպանել։ Լայէլ հարկաւ սխալուած է իր կարծիքների ոմանց մէջ, քանզի իրար հակասական են։

Թերեւս հարցնուի. Մի՞թէ անկարելի է տոյգ բան գիտնալ բնագէտների հետազօտութիւններից։ Ոչ եր-

բէք։ Բնագէտների հետազօտութիւնների միջոցով ստացուած ենք նիւթական աշխարհի վրայ շատ բաներ, որոնք այնչափ շատ փաստերով ապացուցուած են որ բնաւ տարակոյս չկայ նրանց ստուգութեանը, եւ բոլոր գիտունները իբրեւ ճշմարիտ ընդունում են նոքանց։ Սակայն միաբան ասում են. «Այո, այս այսպէս է, ուղիղ է այս մեկնութիւնը եւ պիտի ընդունուի իբրեւ ճշմարիտ։» Եթէ նիւթական աշխարհի վրայ այսպիսի ուղիղ մեկնութիւններ, որոնք բնագէտները միաբերան ընդունում են եւ հաստատում, եւ որ հերքում են Սուրբ գրքի մէկ ուղիղ մեկնութիւնը, այն ժամանակ Սուրբ գիրքը մերժելի է իբրեւ անհաւատալի։ Բայց կարող է լինել գիտնական կարծիք կամ ենթադրութիւններ որ այսպէս բաւական ապացոյցներով հաստատուած եւ բնագէտներից առհասարակ ընդունուած չլինելով հակառակ թուին Սուրբ գրքի վարդապետութիւններին. այս տեսակ կարծիքներ կամ ենթադրութիւններ չեն կարող հերքել Սուրբ գիրքը մինչեւ որ բնագէտների ընդհանուր վկայութեամբը չհաստատուի թէ այն մեկնութիւնները ճշմարիտ եւ ընդունելի են։

Գիտենք ուրեմն, թէ բնութեան վրայ կա՞յ ուղիղ մեկնութիւն որ հերքում է Սուրբ գրքի որեւիցէ մէկ ուղիղ մեկնութիւնը։ Սուրբ գրքի ո՞ր խօսքի համար կարող է ասուել թէ հերքվում է բնական գիտութիւններից։ Այսպիսի բան կարող է ասուել միայն այն խօսքերին համար որ նիւթական աշխարհին է վերաբերում, եւ որ գլխաւորապէս գտնվում են Ծնընդոց Ա. գլխին մէջ յիշուած արարչագործութեան պատմութեան մէջ։ Գիտենք ուրեմն, այն գլխին մէջ ասուածները, եւ տեսնենք թէ կա՞յ մի բան որ հերքուած է բնական գիտութիւններից։

Դրեթէ բոլոր հին կրօնքները, զոր օրինակ, Եորուբացոց, Եգիպտացոց, Փիւնիկեցոց, Բաբելացոց եւ Աքանդինաւեան ազգերի կրօնքներն, ինչպէս նաեւ գլխաւոր կրօնքներից ամենք որ գոյ կան, զոր օրինակ, Պուդդայականութիւնը, Պրահմինականութիւնը, եւ կրակապաշտութիւնը նկարագրում են աշխարհս ստեղծումը։ Յիշեալ կրօնքների սրբազան գրքերը պարունակում են շատ ասեղգրական, աշխարհագրական եւ երկրաբանական տեղեկութիւններ իբրեւ կարեւոր մասունք այն կրօնների. բայց ոչ մի ուսեալ մարդ կարող չէ ընդունել նրանց իբրեւ ճշմարիտ։ Պրահմինականութիւնը սովորեցնում է թէ երկրիս տրամագիծը հազարաւոր միլիոն մղոն երկայն է, եւ թէ կան շատ ովկիանոսներ որոնցից մէկն ալի ջուր է, միւսն շաքարի եղեգան հիւթ է, մի ուրիշը արբեցուցիչ ըմպելիք է, մի ուրիշը հալած կարագ է եւ մի ուրիշն էլ մածունից է։ Պրահմինականութեան վարդապետութեան համեմատ բոլոր երկնային մարմիններից արեգակը մերձաւորագոյնն է երկրիս, լուսինն արեգակից կրկնապատիկ աւելի հեռու է երկրից, եւ մոլորակներն ամենից հեռաւոր են։ Մի՞թէ այսպիսի սխալներ կա՞ն Ծննդոց գրքին մէջ։

Պուդդայականութիւնը սովորեցնում է թէ արեգակն տրամագիծն 400 մղոն է, եւ թէ կան ձուկեր որ հազարաւոր մղոն երկայն են. կան ծառեր որ 400 մղոն բարձրութիւն ունին, կան ասիւներ որ կարող են են երգել եւ կարող են մէկ ոստումով երկու

մզոն տեղ ցատկել։ Միթէ այսպիսի սխալներ գըտնվում են Ծննդոց գրքին մէջ։

Հին Տեւտոնեանց կրօնքի վարդապետութիւններին նայելով Ոսկին չաստուածն եւ նրա եղբայրները ստեղծեցին Իմիր անուն առաջին մեծ հսկան եւ նրա արիւնից կազմեցին ծովերը, գետերը եւ լիճերը, նրա ոսկորներից լեռները, նրա ատամներից եւ ծնօտներից ապառները, եւ նրա ուղեղից՝ որը նետեցին օդի մէջ, շինուեցան ամպերը։ Միթէ այսպիսի սխալներ կը գտնուին Սուրբ գրքի մէջ։

Արդ գանք այս խնդրին թէ Ծննդոց Ա. գլխին մէջ աստուածները հերքուած են բնակ ն գիտութիւններից։

Նախ, պարտք ենք գիտել արարչագործութեան վերայ Սուրբ գրքի նկարագրութեան համառօտութիւնը։ Բոլոր այս նկարագրութիւնը գտնվում է Ծննդոց գրքին առաջի գլխի առաջի 27 համարների եւ երկրորդ գլխի եօթներրորդ համարին մէջ։ Սուրբ գրքի աստուածաբանական, երկրաբանական եւ կենդանաբանական բոլոր վարդապետութիւնները պարունակվում են յիշեալ 28 համարներին մէջ միայն, որ մի լրագրի մէկ սիւնակից աւել տեղ չեն բռնիլ։ Նոյն իսկ այս նկարագրութեան համառօտութիւնից յայտնի չէ՞ որ Սուրբ գրքի նպատակն աստեղագիտութիւն կամ երկրաբանութիւն սովորեցնել չէր։

Երկրորդ, պարտ ենք նկատել այն եղանակն որով նրա նկարագրուած է Սուրբ գրքի մէջ բոյսերի, անասունների եւ մարդի ստեղծումը։ Սուրբ գիրքը համարեա թէ մի բան չէ ասում այն կերպին վերայ որով ստեղծուեցան նրանք, այլ ամենահամառօտ կերպով յիշում է

արդիւնքը միայն։ Սուրբ գրքի նկարագրութեան ոճից յայտնի է թէ այս գրքին նպատակը աստեղագիտութիւն կամ երկրաբանութիւն սովորեցնել չէր։

Երրորդ, պարտ ենք գիտել թէ այս նկարագրութեան մէջ բոլոր աստուածները, նոյն իսկ նրանք որ նիւթական իրերի են վերաբերում, բարոյական եւ հոգեւոր նշանակութիւն ունին։ Յայտնի է թէ Ծննդոց գրքի առաջին գլխի գլխաւոր նպատակն էր սովորեցնել այս բարձր բարոյական եւ հոգեւոր ինչպէս նաեւ փիլիսոփայական ճշմարտութիւնը, թէ Աստուած ստեղծեց աշխարհը եւ ինչ որ աշխարհումն է, թէ Աստուած տիրում է ամենին եւ ամեն բան նրանից կախում ունի, եւ թէ ամեն բան նրա հպատակ է։

Ա. աշխարհիս արգի կարգ եւ կազմուածին վրայ ի՞նչ է սովորեցնում Աստուածաշունչը։

Սովորեցնում է թէ տունկերի եւ անասունների եւ մարդկանց արդի տեսակները կամ ցեղերը չկային 'ի յաւիտենից, եւ թէ իրարից յառաջ եկած չեն անհուն յաջորդութեամբ։ Բնական գիտութիւնները հերքո՞ւմ են այս վարդապետութիւնը։

Իբր մի դար առաջ Հրդէրն անուն երեւելի մի երկրաբան ասաց. «Ես ոչ սկզբնաւորութեան հետք եմ գտնում բնութեան մէջ, եւ ոչ կատարածի նշմարանք։» Բայց վերջին հարիւր տարուան մէջ երկրաբանական հետազօտութիւններով գտնուեցան հետքեր որ ցոյց տուին թէ աշխարհս սկիզբ ունէր։ Երկրաբանութիւնը հիմա բացայայտ ցոյց է տալիս թէ աշխարհիս արդի կարգն եւ կազմուածն 'ի յաւիտենից չէ, այլինքն կար մի ժամանակ որում այժմեայ տունկերի, անա-

սունների եւ մարդկանց տեսակներից եւ ոչ մէկը կար։ Երեւելի երկրաբան Միլլրը իր «Ապառաժից վկայութիւնը» կոչուած գրքի մէջ ասում է. «Ժամանակով չնչաւոր եւ բոյս չկար մեր մոլորակին վրայ, եւ երկրիս կեարտնից մինչեւ նրա երեսը մնաց նիւթ էր միայն,» այսինքն նիւթ առանց կենդանի սերմի։ Ամերիկայի Ամէրդ գոլէճ կոչուած վարժարանի երկրաբանութեան դասատու՝ Հիչքոք ասում է. «Երկրաբանութիւնը ապացուցնում է թէ կար ժամանակ որ երկիրս իբրեւ հալած նիւթի զանգուած էր, ուստի պէտք է որ բոլոր չնչաւորները եւ բոյսերը որ հիմա կան երկրիս երեսին վրայ եւ բոլոր այն բանները որ նրա ապառաժոտ խաւերի մէջ թաղուած են, սկիզբ ունեցած լինին, այսինքն ստեղծուած լինին։» Ուրեմն յայտնի է թէ երկրաբանութիւնն այս մասին հաստատում է Սուրբ գիրքը։

Բ. Ի՞նչ է ապացուցնում Աստուածաշունչը սկզբնական նիւթին վրայ որից կազմուեցան երկինք եւ երկիրն իր բոյսերովն ու չնչաւորներովը։

Աստուածաշունչը (Ծննդ. Ա. 1) ապացուցնում է թէ Աստուած ստեղծեց նիւթը, ուստի եւ նիւթն էլ յաւիտենական չէ։

Բնական գիտութիւնները հերքո՞ւմ են այս վարդապետութիւնը, եւ ցոյց տալի՞ս են թէ նիւթը յաւիտենական է։ Ոչ։ Այն բնագէտները անդամ որ, ինչպէս Հերբերտ Սպենսէր, աշխարհի ստեղծման նկատմամբ Աստուածաշունչի պատմութիւնը չեն ընդունում, ասում են թէ բնական գիտութիւնները չեն ապացուցանում թէ նիւթն որից կազմուած է աշխարհը՝ յաւիտենական է։ Բնագէտների մէջ երեւելիները խոստովանում են թէ նիւթին սկզբնատութիւնը քննել եւ որոշելը բնական գիտութիւնների գործը չէ։ Գազիայի անուանի բնագէտ Գոնթ, որ հիմնադիր է դրական փիլիսոփայութեան, ասում է. «Նիւթի սկիզբը փնտռել ընդունայն է. մարդիկ պիտի բաւական համարեն նիւթի երեւոյթները միայն քննելով։» Թէ նիւթն սկիզբից որտեղից յառաջ եկաւ, բնագէտները այս խնդիրը չեն կարող լուծել։

Հիշեցնն երկրաբանն ասում է թէ նիւթի սկզբան խնդիրը երկրաբանութեան չէ վերաբերում. երկրաբանութիւնը բաւական պէտք է համարէ նիւթական աշխարհի երեւոյթները քննել, եւ մեկնել նրանց բնական օրէնքով։

Մի ուրիշ երկրաբան, Լայէլ՝ երկրաբանութիւնը սահմանում է այսպէս. «Գիտութիւնը որ քննում է այն փոփոխութիւնները, որ հետզհետէ կատարուած են երկրիս գործարանաւոր եւ անգործարան էակների մէջ։» Լայէլ այս հեշտ սահմանը տալով երկրաբանութեան, դուրս է հանում նիւթի սկզբան խնդիրն իբրեւ այնպիսի խնդիր որը երկրաբանութիւնը կարող չէ հետազօտել եւ որոշել։

Անգլիայի փիլիսոփան Հերբերտ Սպենսէր, խոստովանում է թէ բնական գիտութիւնները անձեռնհաս են որոշ բան ասելու նիւթի սկզբան վրայ. չէ ընդունում թէ նիւթը յաւիտենական է, այլ ասում է թէ պարտ է մի պատճառ ունենալ, բայց թէ ի՞նչ է այն պատճառը չգիտենք։

Ուրեմն, քանի որ բնագէտներն էլ վկայում են թէ բնական գիտութիւնները չեն կարող մի որոշ բան

ասել նիւթի սկզբան վրայ, յայտնի է թէ այս դիտութիւնները չեն հերքում Աստուածաշունչը որ սովորեցնում է թէ Աստուած ստեղծեց նիւթը։

Գ. Աստուածաշունչը ի՞նչ է սովորեցնում այն եղանակին նկատմամբ որով Աստուած ստեղծեց երկինքն եւ երկիրը, աստղերն եւ շնչաւորներն սկզբնական նիւթից։

Աստուածաշունչը ճշգիւ չէ նկարագրում թէ Աստուած ի՞նչ եղանակաւ ստեղծեց նրանց։ Երկնքի ստեղծման վրայ ասում է. «Սկիզբից Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց.» բայց թէ ի՞նչպէս եւ ի՞նչ կերպով ստեղծեց՝ չէ ասում։ «Աստուած,» ասում է «ասաց. Լոյս լինի ու լոյս եղաւ.» «Եւ Աստուած երկու մեծ լուսաւորներն արաւ,» բայց չէ ասում թէ ի՞նչպէս արաւ նրանց։ Բոյսերի ստեղծման վրայ սա է միայն ասում. «Երկիրը կանանչ խոտ, իր սեռակին պէս սերմ տուող խոտ, եւ իր սեռակին պէս սերմ ունեցող պտղաբեր ծառ հանեց։» Ծովային եւ ցամաքային անասունների համար էլ ասում է թէ ջրերը կենդանութեան շունչ ունեցող շատ սողուններ հանեցին, եւ երկիրը հանեց շնչաւոր կենդանի իր սեռակին պէս, անասուններ, սողուններ ու գազաններ իրանց սեռակին պէս։ Մարդի ստեղծման համար էլ ասում է թէ Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին եւ նմանութեանը պէս, թէ հողից չինեց մարդը եւ նրա ոգնդացը մէջ փչեց կենդանութեան շունչ, այսինքն թէ Աստուած մարդի մարմինն երկրի հողից արաւ, եւ տուաւ նրան բարոյական եւ խելացական բնութիւն որ նմանութիւն ունի Աստուծոյ բնութեանը։ Բայց զա-

լով մասնաւոր եղանակին եւ գործողութիւններին որ նրանցով Աստուած ստեղծեց աստղերը, անասունները եւ մարդը, Սուրբ գիրքը մի բան չէ ասում, եւ չի նկարագրում թէ նրանց ստեղծման գործողութիւնները քի՞չ թէ շատ, պա՞րզ թէ խառն էին, եւ ինչպէս մի քիչ յետոյ պիտի տեսնենք, Սուրբ գիրքը ճշգիւ չէ ցոյց տալիս թէ ո՞րչափ ժամանակի մէջ ստեղծուեցան նրանք։ Ոմանց կարծմանէ Սուրբ գրքին տուած մեկնութեան դէմ գալով, Աստուածաշունչը շատ բան է ասում ստեղծագործութեան վրայ. բայց այն պէս չէ։ Բնագէտները հիմա քննելու վրայ են այս խնդիրը թէ Աստուած բուն ի՞նչ կերպով ստեղծեց աստղերն, անասունները եւ մարդիկ։ Դեռ միաբան չեն այս խնդրի վրայ, բայց վերջապէս ինչ որ էլ ապացուցանեն, աստուածագործութեան բուն եւ մասնաւոր եղանակին վրայ Սուրբ գիրքը մի որոշ բան ասած չէ։

Դ. Աստուածաշունչն ի՞նչ է սովորեցնում այն ժամանակին նկատմամբ որում Աստուած ստեղծեց սկզբնական նիւթը որից յետոյ երկիրս պատրաստուեցաւ մարդկային ազգի բնակութեան համար։

Սուրբ գիրքը սկզբնական նիւթի ստեղծման ժամանակն չէ յայտնում, միայն ասում է. «Սկիզբից Աստուած երկինքն եւ երկիրը ստեղծեց։» Բայց թէ երբ էր այս սկիզբը՝ սրա վրայ բան չէ ասում։ Ծննդոց Ա. գլխի առաջի համարին մէջ ասում է թէ Աստուած սկիզբից ստեղծեց երկիրս եւ նոյն գլխին մեայեալ համարներին մէջ ցոյց է տրվում թէ երկիրս ի՞նչպէս յարգարուեցաւ որ մարդկան բնակութեան

տեղ լինի։ Սակայն երկրիս ստեղծմանն ու յարդարմանը մէջ տեղ կարելի է հազարաւոր եւ գուցէ միլիոնաւոր տարիներ անցած լինի։ Ծննդոց 1 եւ 2 համարները կազմող Եբրայեցերէն շաղկապի նշանակութիւնը հարկ չէ դնում մեր վրայ հասկանալու թէ այն երկու համարներին մէջ յիշուած դէպքերն, այսինքն երկրիս ստեղծումն ու յարդարումը, շուտով յաջորդեցին իրար։ Բանի որ երկրաբանական հետազօտութիւնները՝ դեռ ապացուցած չէին երկրիս ամբողջութիւնը, Սուրբ գրքի հին մեկնիչներից ոմանք ասողներին թէ Ծննդոց Ա. գլխին առաջին երկու համարներին մէջ յիշուած դէպքերն անմիջապէս իրար չեն յաջորդած։ Օգոստինոսի, Թէոդորետոսի, Յուստինեայ վկայի, Բասիլեի եւ Որոգինեայ մեկնութիւններին համեմատ Ծննդոց գրքի Ա. գլխին առաջին համարին մէջ յիշուած նախկին երկրի ստեղծման եւ մարդի բնակութեան համար նրա յարդարման մէջ տեղ անորոշ ժամանակ անցաւ։ Եթէ այս հին մեկնութիւնը, որ հիմայ ընդունուած է Սուրբ գրքի մեկնիչների շատերից, ուղիղ է, երկրաբանութիւնը թէեւ կարենայ ապացուցանել թէ միլիոնաւոր տարիք անցան նրանից յետոյ երբ Աստուած ստեղծեց երկինքն եւ երկիրը, չէ կարող հակառակ դալ Աստուածաշունչի խօսքին։

Ե. Սուրբ գիրքը ի՞նչ է սովորեցնում այն ժամանակի նկատմամբ որում, եւ այն կարգին նկատմամբ որով, բոյսերը եւ անասունները եւ մարդը ստեղծուեցան։

Առաջի ընթերցմամբ թւում է թէ Սուրբ գիրքը

սովորեցնում է որ այս բաները ստեղծուեցան միմիայն 24 ժամերից բաղկացած 6 ժամանակի միջոցների մէջ, եւ գիտուններից ոմանք ասում են եթէ ընդունենք որ անքան ժամանակ անցաւ նիւթի առաջին ստեղծման եւ մարդկանց բնակութեան համար երկրիս յարդարման մէջ տեղ, այն ժամանակ երկրաբանութիւնը հակառակ չի դալ Ծննդոց խօսքին որ ասուած այս մեկնութեան թէ երկիրս միմիայն 24 ժամերից բաղկացած 6 օրերի մէջ պատրաստուեցաւ մարդկանց բնակութեան համար։ Երկրաբանութեան ուսուցիչ Հիչքոք ասում է. «Այս մեկնութիւնը Ծննդոց գրքի եւ արդի երկրաբանութեան մէջ տեղ բոլոր հակասութիւնը վերցնում է։ Այս մեկնութեան համեմատ ամբողջ ժամանակ կար երկրիս բոլոր խաւերին կազմութեանը։»

Բայց ոմանք ասում են թէ այս մեկնութիւնը հաճայն չէ Ծննդոց գրքին որ ասում է թէ երկնային մարմինները ստեղծուեցան միմիայն 24 ժամից բաղկացած երեք օրերի մէջ մինչեւ մարդի ստեղծումն, եւ սա անհաւատալի է։ Մր. Հիչքոք այս առարկութեան այսպէս է պատասխանում. «Ծննդոց գիրքը չէ ասում թէ արեգակը, լուսինն եւ աստղերը չորրորդ օրը ստեղծուեցան։ Բնագրին այսինքն Եբրայեցերէնի մէջ, բուն ստեղծել նշանակող բառը որ Ա. գլխին առաջի համարին մէջ գործածուած է՝ նոյն գլխի 16երրորդ համարին մէջ գործածուած չէ, այլ մի ուրիշ բառ է գործածուել որ անել կամ լինել է միայն նշանակում, եւ այս բառի միտքն ուրշվում է յաջորդ խօսքերից որ ասում է. «Աստուած երկնքի հաստատութեան մէջ գրաւ նորանց որ

երկրիս վրայ լոյս տան։» Մր. Հիշքոքի մեկնութեան համեմատ, արեգակը, լուսինն եւ աստղերը թէեւ չորս առաջ ստեղծուած էին, բայց չորրորդ օրից առաջ ծագած չէին երկրիս վրայ թանձրացած շղթի կամ մառախուղի պարճառով որ պատել էր երկիրը։ Չորրորդ օրը միայն սկսեցին երեւալ, եւ Սուրբ գիրքը ստեղծագործութիւնը պատմում է ոչ թէ գիտական ճշտութեամբ այլ այնպէս ինչպէս երեւում էր երկրիս վրայ։

Իսկ նրանց որ առարկում են թէ Ծննդոց Ա. գլխին մէջ երեկոյ եւ առաւօտ են յիշուած չորրորդ օրից առաջ, պատասխան է տրվում թէ, թէպէտ մինչեւ չորրորդ օրը արեգակը, լուսինն եւ աստղերը երեւացած չէին երկրիս վրայ սակայն նրանց աղօտ լոյսը թափանցում էր թանձրացած մառախուղից, եւ որովհետեւ երկիրս սկիզբից պտտում էր իր առանցքի վրայ, ցերեկ եւ գիշերը կարող էին բաս բաս ականին որոշուել։

Մենք չենք ասում թէ Ծննդոց Ա. գլխին արուած այս մեկնութիւնն ուղիղ է ոչ էլ՝ եթէ ուղիղ է, կարող ենք ճշտիւ ապացուցանել թէկատարելապէս համաձայն է երկրաբանութեան եւ աստեղագիտութեան նորը եւ մանր տեղեկութիւններին։ Բայց մէջ ենք բերում իբրեւ կարելի միջոց որով Ծննդոցի մէջ ասուածը կարող է համաձայնել երկրաբանութեան։ Մէջ ենք բերում այդ նաեւ իբրեւ վկայութիւն մի երեւելի երկրաբանութեան ուսուցչի, թէ երկրաբանութիւնը չէ հերքում Ծննդոց մէջ ասուածը, եւ թէ կան կարելի եւ հաւանական մեկնութիւններ, որոնց համեմատ այն երկուսն իրար հետ համաձայնում են.

Կայ սակայն Ծննդոց վրայ ուրիշ եւ հաւանականագոյն մեկնութիւն որ չատ գիտուններից ընդունուած է։ Այս մեկնութեան նայելով օր թարգմանուած Եբրայեցերէն բառը միշտ չի նշանակում 24 ժամերից բաղկացած միջոց ժամանակի, այլ երբեմն նշանակում է նաեւ մի անորոշ ճամանակ։ Յայտնի է թէ օր թարգմանուած բառը Սուրբ գրքի Եբրայեցերէն բնագրին մէջ տեղ տեղ գործածուած է ժամանակի այլ եւ այլ երկար միջոցներ նշանակելու։ Այն բառը երբեմն նշանակում է բնական օր կամ ութ, այսինքն այն միջոցը որի մէջ արեգակը մի տեղի հորիզոնից վեր է։ Երբեմն էլ նշանակում է 24 ժամի միջոց, նաեւ երբեմն ամբողջ տարի։ Ծննդոց Բ. 4 համարին մէջ այն բառը նշանակում է բոլոր այն միջոցը որի մէջ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը։ Երբեմն նշանակում է նաեւ անորոշ ժամանակ, ինչպէս Երեմ. ԺԶ. 21 եւ Աբդ. 13 համարներին մէջ կարասան օրը, Ա. Կորն. Զ. 2 համարին մէջ Քրիստոսեան օրը, Յովհ. Ը. 56 համարին մէջ Քրիստոսի օրը, Եւ. ԺԴ. 6 համարին մէջ Տէրոջը օրը, Մատթ. Ժ. 15 եւ Բ. Պետր. Բ. 9 համարներին մէջ դատաստանի օրը։ Այս օրինակներից յայտնի է որ Ծննդոց Ա. գլխին մէջ թարգմանուած Եբրայեցերէն «օր» բառը կարող է նշանակել ոչ միայն 24 ժամերից բաղկացեալ օր, այլ եւ անորոշ միջոց ժամանակի, որ կարող է միլիոնաւոր տարիներ լինել։ Այս մեկնութիւնը տուած են Օգոստինոս եւ ուրիշ առաջին դարից Քրիստոնեայ մատենագիրներ։ Այս մեկնութեան համեմատ Ծննդոց առաջին գլուխը կարելի է համառօտիւ նկարագրած լինի աշխարհիս ստեղծման միջոցներն որչափ եւ եր-

կայն եղած լինին, եւ եթէ այս մեկնութիւնը չիտակ է, այն ժամանակ ընդհանուր համաձայնութիւն է տեսնվում Ծննդոց Ա. գլխի մէջ աստուածների եւ երկրաբանութեան մէջ տեղ։ Զինք ասում որ Ծննդոց առաջին գլխին մէջ յիշուած ստեղծագործութեան համառօտ պատմութեան եւ երկրաբանութեան մանր բացատրութիւններին մէջ տեղ բուսական համաձայնութիւն կայ, վասնզի Աստուածաշունչի պատմութիւնը, ինչպէս առաջուց ասացինք, երկրաբանական ճշմարտութիւններ սովորեցնելու նպատակով գրուած չէ, բայց իրաւունք ունինք ասելու թէ զարմանալի համաձայնութիւն կայ Աստուածաշունչի եւ երկրաբանութեան մէջ տեղ։

Մր. Դէյնա, Լէյլ վարժարանի ուսուցիչն, որի գիտական գրքերը մեծ պատուով ընդունուած են Գերմանական համալսարանների մէջ, ասում է. Ստեղծագործութեան կարգն Աստուածաշունչին համեմատ, ինչպէս պատմվում է Ծննդոց առաջին գլխի մէջ, բաժանվում է ընդհանրապէս երկու մեծ շրջանի կամ ժամանակամիջոցի, այսինքն անդործարան էակների ստեղծման ժամանակ, եւ գործարանաւոր էակների ստեղծման ժամանակ, եւ այս երկու բաժանմունքները ունին իրանց երկրորդական բաժանումները։

Ա. Անդործարան էակների ստեղծման ժամանակը։

1. Օր — Նախնական նիւթը եւ (արեգակի շինուելուց առաջ եղած) լոյսն է տեղվում։

2. Օր — Երկիրը բաժանվում է նրան շրջապատող հեղուկից, այսինքն երկիրս բաժանվում եւ ջոկվում

է տիեզերքի մնացեալ մասերից։

3. Օր — Ա. Ցամաքը բաժանվում է ջրերից։

Բ. Գործարանաւոր էակների ստեղծման ժամանակը։

3. Օր — Բ. Ստեղծվում են նաեւ բոյսերն։

4. Օր — Լոյսն է ծագում արեգակից։

5. Օր — Ստորին կարգի անասուններն են ստեղծվում։

6. Օր — Ա. Ցամաքային անասուններն են ստեղծվում. Բ. Մարդն է ստեղծվում։

Մր. Դէյնա ասում է նաեւ թէ Աստուածաշունչի մէջ յիշուած ստեղծագործութեան պատմութիւնը ճշմարիտ եւ խորին փիլիսոփայական է, եւ թէ այն պատմութեան եւ երկրաբանական նորագոյն հետազօտութիւնների հետեւանքների մէջ այնպիսի զարմանալի ընդհանուր համաձայնութիւն կայ որ հարկ է ասել թէ այն պատմութիւնն Աստուածանից է։ Մր. Դէյնա ասում է նաեւ թէ ոչ ներշնչեալ մարդի չէր կարելի այնչափ դարեր առաջ չարագրել ստեղծագործութեան պատմութիւնը որ այնպէս ճշգիւ համաձայն լինի արդի գիտութիւնների հետազօտութիւններին։ Բնական գիտութիւնների վերոյիշեալ անուանի ուսուցիչը վերջացնում է այս ազդու խօսքերով. «Սուրբ գրքի առաջին էջն ինքն ըստ ինքեան ապացոյց է նրա աստուածային ծագմանը։»

Նաեւ բնական գիտութիւնների մի ուրիշ ուսուցիչ Մր. Գիլոյ, ասում է թէ չներշնչուած մի մարդ չէ կարող գրած լինել Ծննդոց գրքի առաջին գլուխը, վասնզի այն գլուխը շատ սքանչելի կերպով համա-

ձայնում է գիտական նորագոյն հետազօտութիւնների հետ։

Անգղիացի երեւելի երկրաբան Մր. Հիւ Միլլեր «Աղտոտաժից վկայութիւնը» կոչուած գրքին մէջ ցոյց է տալիս Ծննդոց առաջին գլխի համառօտ պատմութեանն ու երկրաբանութեան մէջ տեղ եղած զարմանալի համաձայնութիւնը։ Մր. Միլլերի կարծիքներին նայելով, Մովսէս իր տեղեկութիւնն առաւ Աստուածանից տեսիլքով, եւ ապա նկարագրեց արարչագործութեան մեծ եւ նուրբ տեսարանը որ նրա առաջեւ բացուած էր այն տեսիլքի մէջ։ Բայց Մովսէս ստեղծագործութեան բոլոր մանր պարտզանները չ'պատմեց, այլ ամենից նշանաւոր մասերը միայն, եւ սրանք չը նկարագրեց գիտական ճշտութեամբ, այլ այնպէս ինչպէս պիտի երեւէին այն բանները մէկին որ կենում էր երկրիս վրայ։ Մովսէս այնպէս խօսեց ինչպէս խօսում են հիմա մարդիկ առհասարակ, նոյն իսկ բնագէտները. բնական աշխարհիս երեւոյթներին վերայ։ Ամեն մարդ գիտէ թէ արեգակը ոչ դուրս է գալիս եւ ոչ մտնում է, սակայն նոյն իսկ փիլիսոփաները եւ աստեղագէտները ասում են արեգակի համար թէ «դուրս է գալիս» եւ «մտնում է»։ Այսպէս Մովսէս նկարագրեց արարչագործութիւնն ոչ թէ գիտական ճշտութեամբ, այլ այնպէս ինչպէս երեւեցաւ նորան։ Յայտնի է թէ մի այսպիսի նկարագրութիւն միայն կարող է հասկանալի լինել բոլոր ազգերին, թէ քաղաքակրթեալներին եւ թէ բարբարոսներին։ Անուանի աստեղագէտ Կէպլէր ասում է. «Մենք աստեղագէտներս անգամ հասարակ մարդկանց պէս ասում ենք երկնային մարմինների համար թէ դուրս են գալիս

լիս եւ մտնում են։ Սրանով պարզապէս ասել ենք ուզում թէ նրանք մեզ այնպէս են երեւում։ Ապա որչափ նոյն պատճառ չ'ունենինք Սրբազան գրքից պահանջելու, որ խօսելու սովորական կերպը թողելով գրէր գիտական ճշտութեամբ, եւ այնպէս անելով մութ եւ անյարմար բառերով չփոթէր մարդկանց։»

Գանք հիմա քննել Մր. Միլլերի կարծիքն արարչագործութեան վրայ։ Մր. Միլլեր, ինչպէս սրանից առաջ յիշեցինք, ենթադրում է թէ Մովսէս աշխարհիս ստեղծման վերաբերեալ տեղեկութիւններն առաւ տեսիլքի մէջ, եւ ինչ որ տեսաւ այն տեսիլքին մէջ, նկարագրեց այնպէս ինչպէս որ երեւեցան նրան։ Մր. Միլլեր Ծննդոց առաջին գլխին մէջ արարչագործութեան վրայ յառաջ բերուած նկարագրութիւնը բաղդատելով արարչագործուած իրերի կարգին մէջ եօթն նշանաւոր դէպքերի հետ, որոնց վրայ խօսում է երկրաբանութիւնը, Մովսիսական նկարագրութեան եւ երկրաբանական գիտութիւնների մէջ տեղ զարմանալի համաձայնութիւն է գտնում։ Ասում է թէ եթէ մարդ երկրաբանական մեծամեծ փոփոխութիւնների ժամանակները երկրիս վրայ եղած լինէր եւ գիտէր կատարուած բանները, նրա ուշադրութիւնը գրաւող աւելից նշանաւոր դէպքերը պիտի լինէին այն բանները որը Մովսէս յիշում է իր նկարագրութեան մէջ։

Առաջին տեսիլ։ Մովսէս նախ տեսաւ երկիրս պարապ, անձեւ ջրով ծածկուած եւ մութ։

Երկրաբաններին վկայութեան համեմատ այսպէս է եղած հաւանականապէս երկրիս վիճակը երկրաբանական ամենից հին ժամանակը։ Երկրիս կեղեւն այն ժամանակ դեռ տաք էր, եւ նրա երեսը ծածկող ջուրն

էլ տաք լինելով յառաջ էր բերում խիտ չոգի այնպէս որ խաւարը պատում էր անդունդը։ Եթէ այն հին ժամանակը մի մարդ գտնուէր երկրիս վրայ, երկիրս նոքան այնպէս պիտի երեւէր ինչպէս նկարագրուած է Ծննդոց Ա. գլխի 2. համարին մէջ։

Երկրորդ տեսիլ։ Այս տեսիլի մէջ Մովսէս լուսաւորութիւն տեսաւ։

Երկրաբաններին կարծեաց համեմատ, երկիրս գնալով պաղում էր, ոստի եւ ջուրն էլ պաղելով չոգին էլ ցանցառանում էր, այնպէս որ արեգակի ճառագայթներից ոմանք սկսում էին թափանցել չոգիի միջից երկրիս վրայ, մինչ արեգակն եւ լուսինը դեռ տեսանելի չէին, ինչպէս որ ամպոտ օրերը լոյս կայ՝ թէեւ արեգակը չէ տեսնվում։ Երկրիս թաւալումն իր առանցքին վրայ պատճառ էր որ այն աղօտ լոյսը մերթ ծագում էր եւ մերթ անհետանում էր, այնպէս որ կարելի է ասել թէ տիւ եւ գիշեր էր լինում։ Եթէ մարդ գտնուած լինէր երկրիս վրայ երկրաբանական այս երկրորդ ժամանակին, նրա համար ամենից նշանաւոր բանը պիտի լինէր լոյսի երեւումն ինչպէս որ նկարագրուած է Ծննդոց Ա. գլխին 3., 4. եւ 5. համարներին մէջ։

Երրորդ տեսիլ։ Մովսէս այս տեսիլի մէջ ջրերի բաժանումը տեսաւ։

Երկրաբաններին կարծեաց համեմատ երկրիս պաղելը երկար տեւից, եւ չոգին բարձրանում էր երկրիս երեսից վեր, կամ աւելի ճշտիւ խօսելով ջրերի երեսից վեր, եւ իբրեւ խոնաւ գոլորշի էր տեսնվում վերը թանձր ամպերի նմանութեամբ, բոլորովին ջոկուած ներքեւի ջրերից։ Ծննդոց Ա. գլխին 6., 7. եւ 8.

համարներին մէջ ասուածը թէ, «Աստուած հաստատութիւնը արաւ, ու հաստատութեանը տակ եղած ջրերը՝ հաստատութեանը վրայ եղած ջրերից բաժանեց.» համաձայն է երկրաբանութեան, որ սովորեցնում է թէ ջրերի բաժանումն այս երրորդ ժամանակի ամենից նշանաւոր դէպքն էր։

Չորրորդ տեսիլ։ Մովսէս այս տեսիլի մէջ տունկերի բուսնիլը տեսաւ։

Այս տեսիլը պատասխանում է երկրաբանութեան ածխային ժամանակին որ երկրիս ուրիշ ժամանակներից տարբերվում է իբրեւ առատութեամբ բոյսեր յառաջ բերող ժամանակ։ Հանքային ածուխի անագին մթերներն, որ հիմա առատ նիւթ են մատակարարում քաղաքակրթեալ աշխարհին, այն ժամանակի զարմանալի ծառերի եւ տունկերի մնացորդներն են։ Երկրաբանութիւնը վկայում է թէ բոյսերն այն ժամանակի ամենից նշանաւոր բանն էին, եւ թէ եթէ մարդ այն միջոցին գտնուած լինէր երկրիս վրայ, ամենն բանից աւելի զիտողութեան արժանի պիտի համարէր այն զարմանալի ծառերը։ Այսպէս երկրաբանութիւնը համաձայն է Ծննդոց Ա. գլխին 11. եւ 12. համարներին մէջ ասուածներին։

Հինգերորդ տեսիլ։ Մովսէս այս տեսիլի մէջ տեսաւ արեգակի, լուսնի եւ աստղերի ծագումը։

Երկրաբանների կարծեաց համեմատ երկրիս պաղելը տեւից մինչեւ որ արեգակը կարողացաւ փարատել ամպերը, եւ արեգակը, լուսինն ու աստղերն առաջին անգամ տեսանելի եղան։ Երկրաբանական այս ժամանակը, ասում է երկրաբանութեան դասատուն, Մը-

Ցորբս, այնչափ քիչ անասուններ եւ բոյսեր կային որ գիտողութեան արժանի չէին։ Ամենից նշանաւոր բանն այս ժամանակի մէջ արեգակի, լուսնի եւ աստղերի երեւալն էր, ուստի եւ սրանց է միայն յիշում Մովսէս Ծննդոց Ա. 14—19 համարներին մէջ, հինգերրորդ տեսիլի պատմութեան մէջ։

Վեցերորդ տեսիլ։ Մովսէս այս տեսիլի մէջ մեծամեծ թռչուններ եւ ծովային անասուններ տեսաւ։

Այս տեսիլը լաւ պատասխանում է երկրաբանութեան այն ժամանակին որ երեւելի է ծովային հրեչից եւ վիթխարի թռչունների կողմանէ։ Երկրաբանական հետազօտութիւններից յայտնի է թէ, եթէ այն ժամանակ մարդ գտնուած լինէր երկրիս վրայ, նրա համար ամենից նշանաւոր բաները պիտի լինէին մեծամեծ սողունները եւ վիթխարի թռչունները։ Այսպէս երկրաբանութիւնը համաձայն է Ծննդոց Ա. գլխին 20—23 համարներին մէջ ասուածներին։

Եօթներորդ տեսիլ։ Մովսէս այս տեսիլի մէջ ցամաքային անասունները տեսաւ։

Այս տեսիլը պատասխանում է երկրաբանութեան այն ժամանակին որ մեծամեծ ցամաքային անասունների բազմութեանը կողմանէ նշանաւոր է։ Երկրաբանութիւնը սովորեցնում է նաեւ թէ այս ժամանակի վերջերումը տեսնւում է մարդը, եւ այսպէս այն պատութիւնը հաստատում է ինչ որ Ծննդոց Ա. գլխին 24—27 համարներին մէջ ասուած է։

Վերոյիշեալ երկրաբան Միլլերը հաստատում է թէ այս մեկնութեան նայելով չկայ գիտական ճշմարտութիւն որ հակառակ գայ Ծննդոց մէջ ասուածներին։

Մր. Միլլերի մեկնութիւնը, թէպէտ բան ամենայ-

նի միեւնոյնը չէ, շատ նման է սակայն երկրաբանութեան ուսուցչի Մր. Դէյնայի մեկնութեան։ Չենք կարող ասել թէ այս մեկնութիւններից մէկը կամ միւսը բոլորովին հեշտ է, եւ թէ մէկը կամ միւսը հաստատում է Ծննդոց Ա. գլխին համառօտ նկարագրութիւնը եւ երկրաբանութեան մանր տեղեկութիւնները բոլորովին համաձայն են իրար։ ասում ենք սակայն թէ վերոյիշեալ երկրաբանների մեկնութիւնները յայտնի ցոյց են տալիս որ Ծննդոց գրքի եւ երկրաբանութեան մէջ տեղ այնպիսի հակասութիւններ չկան որ չկարողանան համաձայնել իրար։(*)

Երբ Միլլերը, Դասին, Հիչքոք, Դէյնա, Փիւզ եւ բնական գիտութիւնների ուրիշ անուանի ուսուցիչներ վկայում են թէ բնական գիտութիւնները չեն հերքում ինչ որ Ծննդոց գրքին մէջ ասուած է թէ՝ ժամանակի նկատմամբ՝ որում, եւ թէ կարգին նկատմամբ՝ որով ստեղծուեցաւ աշխարհս, այլ թէ մանաւանդ հաստատում են թէ այն գրքին եւ բնական գիտութիւնների մէջ տեղ կայ զարմանալի համաձայնութիւն եւ երբ այս անուանի երկրաբանները ցոյց են տալիս նաեւ այլ եւ այլ հաւանական կերպեր որ նորանցով Ծննդոց գրքի խօսքերը եւ երկրաբանութիւնը կարող են համաձայնուել, ո՞վ կարող է ասել թէ բնական գիտութիւնները հերքած են Ծննդոց առաջին գլխին մէջ ասուածները։ Ոչ ոք։

(*) Երկրաբանութիւնը դեռ մի նոր գիտութիւն է եւ իր քննելի նիւթի մի շատ փոքրիկ մասն է հետազօտել, ուստի հաւանական է որ երկրաբանները իրանց ստացած անկատար տեղեկութիւններից իրար անհա-

Զ. Սուրբ գիրքը մարդկային հնութեանը վրայ ի՞նչ է սովորեցուցեր։

Սուրբ գիրքը սովորեցնում է թէ բոլոր արարածների մէջ մարդն ամենից յետոյ ստեղծուեցաւ։ Ասում է թէ բոյսերը եւ շնչաւորները նախ ստեղծուեցան, եւ ապա մարդկային ազգը։ Երկրաբանութիւնը միթէ հերքո՞ւմ է այս վարդապետութիւնը։

Երկրաբանները երկրիս խորագոյն խաւերի մէջ գտնում են ոչ սակաւ տնկային մնացորդներ բրածոյ կամ քարացեալ վիճակի մէջ, բայց նրանց մէջ մարդկանց մնացորդներ չեն գտած, եւ այսպէս երկրաբանութիւնը ցոյց է տալիս թէ բոյսերը ստեղծուեցան երկար ժամանակ առաջ քան մարդը։ Ուրիշ խաւերի մէջ, որ աւելի մօտ են երկրիս երեսին, այսինքն նուազ խոր են քան այն խաւերը որոնց մէջ բոյսերն են գտնվում, երկրաբանները գտնում են ցամաքային անասունների քարացեալ նշխարներ, բայց այն խաւերին մէջ էլ չեն գտնում մարդկային մնացորդներ։ Մարդկային մնացորդներ գտնվում են ամենից նոր խաւերի մէջ միայն, եւ այսպէս երկրաբանութիւնը հաստատում է Սուրբ գրքի խօսքը թէ մարդս արարածների կարգին մէջ ամենից յետոյ ստեղծուեցաւ։

Աստուածաշունչի խօսքից այսպէս է երեւում թէ վեց հազար կամ ութ հազար տարի է միայն անցած

մաձայն հետեւանքների են հանում եւ տեղ տեղ էլ Աստուածաշունչին հետ չեն համաձայնում։ Սակայն որքան որ այս նոր գիտութիւնը մինչեւ այժմ գիտնականորէն քննել է, զարմանալի կերպով հաստատում է Ծննդոց Ա. գլխի ստեղծագործութեան նկարագիրը։

այն ժամանակից յետոյ երբ մարդկային ազգն ստեղծուեցաւ։ Երկրաբանութիւնը հերքո՞ւմ է այս խօսքը։ Երկրաբանութիւնը չատ ապացոյց է ընծայում թէ մարդկային ազգին ստեղծումն նոր է՝ համեմատութեամբ երկրաբանական երկար ժամանակներին որում կազմուեցան երկրիս այլ եւ այլ խաւերը։ Տունկերի եւ անասունների քարացեալ մնացորդները, որ երկրիս խաւերից ամենից մէջ գտնուած են, ցոյց են տալիս թէ երկիրս կար գուցէ միլիոնաւոր տարիներ յառաջ քան մարդկանց ստեղծումը. բայց ապացոյց չ'կայ թէ երկրիս այն ժամանակի միջոցը որ նրանից յետոյ մարդը ստեղծուեցաւ չատ երկար է համեմատութեամբ նախընթաց ժամանակի միջոցների հետ, վասնզի մարդկային մնացորդներն ամենից նոր եւ երկրիս վերին երեսը կազմող խաւերի մէջ են միայն գտնվում։ Սրանից յայտնի է թէ ընդհանուր համաձայնութիւն կայ Աստուածաշունչին եւ երկրաբանութեան մէջ տեղ մարդկային ազգի հնութեան վրայ՝ համեմատութեամբ երկրիս, բոյսերի եւ անասունների հնութեանը հետ։

Երբ գալիս ենք աւելի ճշգիւ որոշելու թէ ո՛րչափ տարիներ անցած են մարդկային ազգի ստեղծուելուց ի վեր, միթէ անհամաձայնութիւն է դուրս գալի՞ս Աստուածաշունչի խօսքին եւ երկրաբանութեան մէջ տեղ։ Այս խնդրին կ'պատասխանենք թէ չատ դժուարին է ճշգիւ որոշել Սուրբ գրքից թէ ո՛րչափ տարիներ են անցած մարդկային ազգի ստեղծուելուց ի վեր։

Ա. Մովսէսի հնդամատեանն երեք հին լեզուով է մեզ հասել. այսինքն Եբրայեցերէն, Յունարէն եւ Սամա-

ռերէն, բայց այս երեքի էլ ժամանակագրութիւնները տարբեր են իրարից։ Եբրայեցերէնի ժամանակագրութեանը նայելով Ջրհեղեղից մինչև Աբրահամի կոչումը 292 տարի էր, Սամարերէնի հակագրութեան նայելով 942, իսկ Յունարէնին նայելով 1.072 կամ 1,172 տարի։ Սրանից յայտնի է թէ թիւերը օրինակելու ժամանակ հին ձեռագիրների մէջ սխալ ապրված է։ Գրէթէ բոլոր հին ձեռագիրների թիւերը չէին գրվում թուանշաններով այլ ուրիշ նշանագիրներով որ շատ նման էին իրար, այնպէս որ՝ օրինակուած ժամանակ շատ անգամ սխալներ էին ապրվում։ Օքսֆորդի համալսարանին դասատուն, Մր. Բոլինքն ասում է թէ այսպիսի սխալներ պատահում էին այնպէս յաճախ, որ ամեն տեսակ հին գրութիւնների մէջ յիշուած թիւերը չեն կարող իբրև հաւատարմութեան արժանի ընդունուել։ Հին կտակարանի վերոյիշեալ երեք հնագոյն օրինակներին մէջ գտնուած տարբերութիւններից իսկ յայտնի է թէ, գէթ նրանց երկուսին մէջ սխալում եղած է օրինակելու ժամանակ, եւ որովհետեւ օրինակողները ներշնչեալ մարդիկ չէին, սխալում երեք օրինակների մէջ էլ կարող էր պատահել. այս պատճառով Աստուածաշունչի բնագրի ժամանակագրութիւնը հիմա չէ կարող ճշտիւ որոշուել։

Բ. Ուրիշ պատճառ էլ կայ թէ ինչու հաւոր դժուար է Սուրբ գրքից ճշտիւ որոշել թէ ո՞րչափ տարիներ են անցած մարդի ստեղծուելուց յետոյ։ Սուրբ գրքի ժամանակագրութիւնը գլխաւորապէս որոշվում է Հին կտակարանի ազգահամարներից. բայց որովհետեւ այս ազգահամարների նպատակը ոչ տարիների թիւը ցոյց տալ է, եւ ոչ էլ յիշել կարող է իրաքանչիւր

ծնունդ, այլ նրա բուն նպատակն է ցոյց տալ նրանց ցեղային ծագումը, այս պատճառով Սուրբ գրքի ժամանակագրութիւնը չէ կարող որոշուել ճշտիւ այն ազգահամարներից։ Բոլոր մեկնիչներն ընդունում են թէ Սուրբ գրքի ազգահամարներն իրաքանչիւր ծնունդ չեն յիշում կարգաւ։ Երբեմն ոչ սակաւ ծնունդ զանց են անում, եւ «ծնաւ» բառը Սուրբ գրքի մէջ գործ է ածվում ոչ միայն անմիջական ծնունդ այլ նաեւ ուրիշ ծնունդներ ցոյց տալու համար։ Զորօրինակ Ծննդոց ԺԶ. գլխին 16—18 համարներին մէջ Զեղփայի որդիների եւ թոռների եւ թոռնորդիների յիշուելուց յետոյ, ընդ ամենը տասն եւ վեց հոգի, ասվում է թէ «սրանք են Զեղփայի որդիքը ..... եւ նա ծնաւ սրանք Յակոբին, տասն եւ վեց հոգի։

Մատթ. Ա. գլուխ 11երրորդ համարի մէջ ասուած է թէ Յովսիան ծնաւ Յեքոնիային, բայց Յեքոնիան Յովսիային թոռն էր։ Դարձեալ Մատթ. Ա. գլխի 8. համարին մէջ ասուած է թէ Յովրամը ծնաւ Ոզիային, որ, ինչպէս Հին կտակարանից սովորում ենք, նրա թոռան որդին էր։ Ծննդոց Ժ. գլխին 15—18 համարներին մէջ ասուած է թէ Քանան այլ եւ այլ ազգեր ծնաւ, ինչպէս. Յեբուսացիք, Ամորհացիք Գերգեսացիք, Խեւացիք, Արուկեցիք եւ այլն։ Սրանից յայտնի է թէ չէ կարելի ասել թէ Սուրբ գրքի ազգահամարին մէջ գործածուած ծնաւ բառն անմիջական կամ մօտակայն սերունդ է միայն նշանակում։ Եւ այս զարմանալի չէ, վասն զի այն ազգահամարների նպատակը ոչ այնչափ որոշել էր տարիների թիւը, որչափ ցոյց տալ Մեսիայի ծագումն Ադամից, Սեմից, Աբրահամից, Դաւթից եւ ուրիշներից, եւ այսպէս ցոյց տալ

Մեսիայի երկրաւոր նախնեաց վերաբերեալ մարդաբանութիւնը։

Ամեն մարդ պիտի հասկանայ թէ ի՛նչ մեծ դժուարութեամբ մեկնուած են այն աղդահամարները, երբէ յիշենք որ այլ եւ այլ Հրեայ եւ Քրիստոնեայ գիտուն մատենագիրներ 108 տարբեր հաշիւներ են արած Ադամից մինչեւ Քրիստոս սեւող ժամանակի երկայնութեան վրայ։ Ըստ ոմանց 3,433 տարի է Ադամից մինչեւ Քրիստոս, բայց ըստ այլոց 6,984, այսինքն 8,863 տարի է Ադամից մինչեւ հիմա։

Թէպէտ ժամանակը Սուրբ գրքից ճշտիւ կարող չէ որոշուել, երեւում է սակայն թէ Սուրբ գրքին համեմատ ոչ աւելի քան վեց կամ ութ հազար տարի է անցած մարդկային ազգի ստեղծումից մինչեւ հիմա։ Արդ միթէ բնական գիտութիւնները ցոյց են տալի՞ս թէ մարդի ստեղծումից ի վեր աւելի քան վեց կամ ութ հազար տարի է անցած։ Այս նիւթին վրայ այլ եւ այլ կարծիքներ կան, բայց որովհետեւ այսպիսի կարծիքներ սրանից առաջ իբրեւ անտեղի ապացուցուած եւ մերժուած են, խոհական մարդիկ ընդհանրապէս յօժար չեն առանց համոզիչ փաստերի ընդունել արդի կարծիքները։ Արդ քննենք թէ բնական գիտութիւնները համոզիչ փաստեր ունի՞ն ցոյց տալու թէ մարդկային ազգը վեց կամ ութ հազար տարուց շատ առաջ կար երկրի վրայ։

Ա. Զուիցերիոյ լճերից ոմանց մէջ մի քանի հին բնակարանների մնացորդներ են գտնուած, բայց սրանք, հակառակ ոմանց խօսքերին, չեն ցոյց տալիս թէ մարդկային ազգը աւելի քան 6 000 կամ 8,000 տարի հին է։ Այս բնակարանների մէջ գտնուած առարկաների ոսկորները հնագոյն անասունների ոսկորներ չեն որոնց տեսակները հիմա չկան, այլ հիմա աշխարհիս վրայ ապրող անասունների տեսակների ոսկորներ են։ Այս բանը ցոյց է տալիս թէ յիշեալ չէնքերն էլ հաւանականաբար շատ հին չեն։ Սակայն ասվում է թէ այն բնակարանների մէջ քարից շինուած գործիքներ են գտնվում, եւ թէ սրանից կարելի է հետեւացնել թէ այն տեղերը բնակող մարդիկ վերաբերում էին այն ժամանակին որ քարեղէն ժամանակ էր կոչվում։ Այս առարկութեան կ'պատասխանենք թէ ապացոյց չկայ որ քարեղէն ժամանակը միեւնոյն տեւողութիւնը ունեցած է երկրիս բոլոր մասերի մէջ։ Կան ցեղեր որ քարէ գործիքներ էին գործածում մինչեւ մօտ ժամանակներս. կան նաեւ ցեղեր որ մինչեւ ցարդ գործածում են քարեղէն գործիք։ Քարեղէն գործիքների կիրառութիւնը ստուգիւ ցոյց չէ տալիս մի ազգի կամ մի ցեղի հնութիւնը, այլ միայն նրա քաղաքակրթութեան աստիճանը։ Նաեւ Մր. Լայէլ ասում է թէ Մ. Մարլոյ եւ ուրիշ Զուիցերիացի երկրաբանները այն երկրի քարեղէն ժամանակը 5000 կամ 7000 տարուց աւելի հնագոյն չեն համարում։ Ուստի սրանից յայտնի է թէ Զուիցերիայի լճերին մէջ գտնուած բնակարանները չեն հերքում Սուրբ գրքի ժամանակագրութիւնը։

Բ. Ասվում է թէ կան տեղեր ուր մարդի ոսկորներ խառն գտնվում են այնպիսի անասունների ոսկորների հետ որոնց տեսակները շատուց ջնջուած են։ Բայց այս էլ մարդկային ազգի հնութեան նկատմամբ ստոյգ բան ցոյց չէ տալիս։ Մարդի ոսկորներ եւ հնագոյն անասունների ոսկորներ կարող են միեւնոյն տեղ գտա-

նուել, բայց սրանից ամենևին չի հետևիլ թէ այն մարդիկն եւ անասունները միևնոյն ժամանակ էին ապրում։ Ասում է Միլլըր երկրաբանը. «Քարայրներ որ մի ժամանակ գազանների որջ էին՝ լեռոյ մարդկանց ապաստանարան եղան՝ քանի որ ապրում էին, եւ գերեզման եղան՝ երբ նրանք մեռան. այս պատճառաւ մարդկանց ոսկորներն եւ գործիները նրանից շատ առաջ մեռած անասունների ոսկորներին հետ խառն կարող են գտնուել։» Նոյնպէս ասում է Լայէլ երկրաբանը. «Թէպէտ մարդի ոսկորներ անասունների շատ հին տեսակաց ոսկորներին հետ խառն են գտնվում, բայց սրանից չենք կարող հետևեցնել թէ մարդկային ազգը շատ հին է։» Մր. Սէճուիք ժայռերի մէջ մի քանի բնական ճեղքուածներ է յիշում, որոնցից ոսկորներ են ընկած երկրիս շատ խորունկ տեղեր, եւ աւելացնում է թէ, երբ այսպիսի մի ճեղքուած հաղորդակցութիւն ունի սարերկրեայ մի խոռոչի հետ, թէ անասունների եւ թէ մարդկանց ոսկորներ կարող են հեղեղներից սարուիլ այն խոռոչին մէջը։ Երկրաբանութեան ուսուցիչ, Մր. Շմէրլինգ, մի խոռոչ գտաւ որի մէջ գտնվում էին շատ տեսակ անասունների ոսկորները խառն։ Մր. Շմէրլինգ կարծում է թէ այն ոսկորները յիշեալ խոռոչին մէջ սարուած են գետերի միջոցով, որ հոսում էին երկրիս երեսից։ Այս կերպով այլ եւ այլ ժամանակ եւ այլ եւ այլ տեղեր ապրող մարդկանց եւ անասունների ոսկորները կարող են միևնոյն տեղ գտնուել։ Արդ, նոյն իսկ երկրաբանները վկայում են թէ թէպէտեւ մի քանի տեղեր տեսնուած են մարդկանց ոսկորներ անասունների հին տեսակների ոսկորների հետ խառնուած, սակայն որանից չենք կարող հետևացնել թէ մարդկային ազգը եւ այն հին անասունները մէկ տեղ էին ապրում։

Գ. Ասվում է թէ մարդկանց ոսկորներ գտնուած են երկրիս խոր մասերի մէջ թաղուած։ Բայց թող որ այս շատ քիչ կ'պատահի, երկրիս խորերին մէջ մարդկանց ոսկորների գտնուելը չէ հերքում Սուրբ գրքի ժամանակագրութիւնը։

Ասեն գաստիարակուած մարդ գիտէ թէ երկրիս երեսում մեծամեծ փոփոխութիւններ կատարուած են պատմական ժամանակի մէջ։ Այս փոփոխութիւններից սմանք կատարուած են կամաց կամաց այն զորութիւնների գործելովը, որոնցով հին քաղաքների ինչպէս Հռոմայ եւ Երուսաղեմի, հիմերը երկրիս այժմեայ երեսից ցած խորը թաղուած են։ Այսպիսի փոփոխութիւնների վրայ Մր. Լայելի վկայութիւնը գիտողութեան արժանի է։ Այս ընդդէմը ասում է. Անգլիայում եւ Գալլիայում երկրի փտած փայտերից բաղադրեալ խառների մէջ գտնուած բոլոր դրամները, կացիները, զէնքերը եւ անօթները հին Հռոմէացոց ժամանակի գործեր են։ Սրանից յայտնի է թէ յիշեալ խառների մէջ գտնուած մարդկային անթիւ մնացորդները չեն հերքում Սուրբ գրքի ժամանակագրութիւնը։»

Երկրիս երեսին վրայ ուրիշ փոփոխութիւններ կատարուած են յանկարծ, երկրիս նախկին զորութիւնների հոգոր ազդեցութեամբը։ Ամերիկա ապրած Շոեմարան գիտելեաց (Encyclopedia Americana) անուն գիրքը ասում է թէ այսպիսի փոփոխութիւններ կատարուած են երկրիս ամեն կողմը։

1692-ին Եամայքայի մայրաքաղաք՝ Պորտ-Ռոյալ,

թաղուեցաւ ջրին տակ։ 1775-ին Լիսաբոն քաղաքի մէկ մասը ծովի երեսից 600 ոտք խոր ընկղմեցաւ։ 1811-ին Ամերիկայի մէջ իբր 300 քառակ. մղոն տարածութիւն ունեցող մի երկիր նախ բարձրացաւ եւ ապա կրկին ընկաւ եւ երկրի երեսը չատ տեղերից ճեղքուեցաւ, եւ տեղ տեղ ճեղքուածներն կէս մղոնից աւելի երկայն էին։ 1819-ին Հնդկաստանի մէջ 2,000 քառակուսի մղոն երկիր խոր իջնելով եղաւ լիճ, եւ նրանից մի քանի մղոն հեռու մի ուրիշ երկիր բարձրացաւ։ 1822-ին Չիլի կոչուած երկրի մէկ մասն՝ 100,000 քառակուսի մղոն տարածութիւն ունեցող որ Անդեան լեռների եւ ովկիանոսի մէջ տեղ է՝ 2—7 ոտնաչափ բարձրացաւ։

Որովհետեւ այսպիսի սասսիկ զօրութիւններ գործում են երկրիս մէջ, եւ ուրեմն յաճախ են բերում այսպիսի յանկարծ փոփոխութիւններ, եւ որովհետեւ երկրիս վրայ չկայ մի տեղ որ այսպիսի փոփոխութիւնից բոլորովին ազատ լինի, զարմանք չէ որ երբեմն մարդկանց ոսկորներ են գտնվում երկրիս երեսին տակ խոր թաղուած։

Գիտուններին հաշիւները չատ են տարբերվում իրարից այս մասին թէ որչափ ժամանակ հարկաւոր էր երկրիս երեսին վրայ կատարուած փոփոխութիւններին համար։ Մր. Լայէլ ասում է. «Միսիսիպպի գետի դելտան կազմելու համար գոնէ 100,000 տարի էր հարկաւոր։» Սակայն Միացեալ Նահանգների կառավարութեան երկրաչափների միջոցով կատարուած նորագոյն քննութիւններին նայելով յիշեալ դելտայի կազմութեան համար 4,000 կամ 5,000 տարի միայն բաւական էր։ Մր. Լայէլ եւ այս երկրաչափները ամենքն էլ գիտուն մարդիկ են, բայց ի՞նչ մեծ տարբերութիւն կայ նրանց հաշիւների մէջ։

Մի ժամանակ մարդի ոսկոր գտնուեցաւ Անգղիոյ մէջ մի այնպիսի տեղ, որ ոմանք կարծեցին թէ այն ոսկորը 10,000 կամ 15,000 տարուան պիտի լինի։ Յետոյ նոյն տեղ գտնուեցաւ ծանօթ դրամ, որից յայտնի եղաւ թէ այն ոսկորը փոխանակ հազարաւոր տարի հին լինելու, հազիւ մի քանի տարի միայն հին էր։

Նաեւ մի հողէ տան Նեղոս գետի աւազի տակ այնպիսի խոր թաղուած գտնուեցաւ, որ ոմանք կարծեցին թէ այն տանն աւելի քան 6,000 կամ 8,000 տարի հին էր, բայց յետոյ յայտնապէս ցոյց տրուեցաւ որ այն տանը Հռոմայեցոց գործ էր։

Ամերիկայի Բրինտոն կոչուած երեւելի վարժարանի բնական գիտութեանց դասատուն՝ Մր. Գիլոյ ասում է թէ բաւական յայտնի ապացոյց չկայ հաստատելու թէ մարդ կար երկրիս վրայ աւելի քան 7,000 կամ 8,000 տարի առաջ։ Բնական գիտութեանց ուրիշ երեւելի դասատուներ միւսնոյն կարծիքն ունին։ «Լը Մոնդ» անուն գաղիերէն գիտական թերթին հեղինակը մօտերս ասաց թէ «մարդկային ազգի չատ հին լինելու վերաբերեալ ապացոյցները քննելով նրանց բոլորն էլ անբաւական գտայ։» Այս այսպէս լինելով, ի՞նչպէս կարելի է ասել ուրեմն թէ բնական գիտութիւնները հերքում են Սուրբ Գրքի ժամանակագրութիւնը, քանի որ գիտութիւնների երեւելի դասատուներն անդամ սրա հակառակն են պնդում։

Է. Սուրբ Գիրքը մարդկային ազգի ծագմանը վրայ ի՞նչ է սովորեցնում։

Սուրբ գիրքը սովորեցնում է թէ բոլոր մարդիկ յառաջ եկան միևնոյն նախնիներից, այսինքն Ադամից եւ Եւայից։ Բնական գիտութիւնները հերքում են այս վարդապետութիւնը։

Սմեն մարդ գիտէ թէ մեծ տարբերութիւն կայ այլ եւ այլ ցեղի մարդկանց բնական երեւոյթի, խմացական կարողութիւնների եւ առաքինութիւնների մէջ տեղ։ Բայց միթէ ապացուցուած է թէ այս տարբերութիւնները այնպէս մեծ են որ անհնար է բոլոր մարդկանց որ միևնոյն նախնիներից յառաջացած լինեն։ Այս խնդիրը կարող են լուծել այն գիտնական մարդիկ որ իրանց մանրադրութիւնով ուսած են սովորելու մարդկային այլ եւ այլ ցեղերի բնական, խմացական եւ բարոյական բնութիւնը։ Ուստի մեր ընթերցողներին պիտի ցոյց տանք ամենից նշանաւոր բնագէտների ոմանց կարծիքներն եւ համոզումներն այս նիւթին վրայ։ Բայց այս անելուց առաջ մեր ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում ենք մի քանի բաների վրայ, որը իւրաքանչիւր ոք կարող է անձամբ դիտել եւ նկատել։

Նախ. Տարբերութիւնները որ կան այլ եւ այլ ցեղերի մէջ տեղ՝ աւելի քիչ են քան նրանց նմանութիւնները իրար հետ։ Եթէ մէկ բանի մէջ իրար նման չեն այլ եւ այլ ցեղեր, ասոր, մինչեւ իսկ հարիւր բանի մէջ իրար նմանում են։ Բոլոր ցեղերը մարմնի կազմանէ ունին միևնոյն կազմութիւնը։ Ամենքն էլ ունին միևնոյն թաւալ սակրներ, մկանուններ եւ ջղեր եւ ուրիշ մարմնաւոր գործարաններ։ Այլ եւ այլ ցեղերի մարմնաւոր գործարանները կազմուած են միևնոյն կերպով, ունին միևնոյն յատկութիւնները եւ կատարում են միևնոյն գործերը։

Այլ եւ այլ ցեղերից ամենքին էլ շնորհուած է խմացական բնութիւն որ միևնոյն էական յատկութիւններն ունի։ Արդարեւ այլ եւ այլ ցեղերի մտաւոր կարողութիւնները միևնոյն չափով եւ աստիճանով զարգացած չեն, բայց բոլոր ցեղերն էլ նոյնչափ եւ նոյնպէս զարգանալու կարողութիւն եւ յարմարութիւն ունին։ Ամենքն էլ ըմբռնելու, յիշելու, բաղդատելու, դատելու, երեւակայելու եւ իրանց միտքը յայտնելու կարողութիւններ ունին։ Բոլոր մարդկանց միտքերը միևնոյն օրէնքների ներքեւ են, եւ նոյն պաշտօններն են կատարում միևնոյն պայմանների ներքեւ եւ այսպէս ցոյց են տալիս թէ միևնոյն բնութիւնն ունին։

Նաեւ բոլոր մարդիկ ունին բարոյական բնութիւն որով զանազանվում են ուրիշ կենդանիներից։ Արդարեւ բարոյականի կողմանէ մեծ տարբերութիւն կայ այլ եւ այլ ցեղերի մէջ, բայց թերեւս այս տարբերութիւնն աւելի մեծ չէ քան զայն որ երբեմն տեսնվում է միևնոյն ազգի մէջ այլ եւ այլ ժամանակ, կամ միևնոյն ազգի եւ դարու անհատ մարդկանց մէջ։ Շատ ազգերի խիղճը լուսաւորուած չէ, բայց ամենքն էլ ունին խիղճ որ կարող է լուսաւորուել։ Շատերը բարոյականի վրայ սխալ դատողութիւններ են անում, բայց եւ այնպէս ամենքն էլ իրանց գործերի վրայ անում են բարոյական դատողութիւններ։

Երկրորդ. Նմանութիւնները որ կան այլ եւ այլ մարդկային ցեղերի մէջ տեղ՝ արմատական են, իսկ նրանց տարբերութիւնները թեթեւ եւ հարեւանցի են։

Այլ եւ այլ մարդկային ցեղերը նման են իրար մարմնի գրէթէ բոլոր գործարանների ձեւին, կազմութեան եւ պաշտօնի կողմանէ, բայց իրարից տարբերվում են մորթի, գոյնի եւ մազերի ձեւին եւ քիչ շատ գլխի ձեւին կողմանէ։ Իրար նմանում են իրանց իմացական եւ բարոյական կարողութիւնների կողմանէ, իսկ նորանց տարբերութիւնն այն կարողութիւնների զարգացման չափին կամ աստիճանին մէջ է միայն։

Երրորդ. Նմանութիւններն որ կան այլ եւ այլ ցեղերի մէջ տեղ այնպէս էական են որ չեն կարող դիպուածի կամ արտաքին պարագաների արդիւնք լինել. ընդհակառակն տարբերութիւններն այնպէս թեթեւ եւ հարեւանցի են որ, ամենից հմուտ բնագէտների մեծ մասի [դիտողութեանը նայելով], կարող է յառաջ եկած լինել երկար միջոցի տարբեր կլիմաներից, ապրելու եղանակներից եւ սովորութիւններից։ Դարուինի եւ ուրիշ բնագէտների քննութիւններն ցոյց են տալիս թէ բնական պատճառները ի՛նչ զարմանալի փոփոխութիւններ կարող են գործել բոյսերի եւ անասունների նաեւ մարդկանց ձեւին եւ երեւոյթին վրայ։ Այս խնդրի վրայ այս տեղ մի քանի նշանաւոր բնագէտների վկայութիւնները մէջ բերենք։

Բնախօսութեան ամենից անուանի դասախօսներից ոմանք, ինչպէս Գարպէնտերը անգլիոյ մէջ եւ Դրէյպերը Ամերիկայի մէջ, ասում են թէ բոլոր մարդկային ցեղերի միւնոյն նախնիներից յառաջ եկած լինելը հնարաւոր է, եւ թէ ոմանց այժմեայ բոլոր տարբերութիւնները կարող են յառաջ եկած լինել տակաւ տակաւ, դարերի միջոցին կլիմայի ազդեցութիւնից եւ ուրիշ բնական պատճառներից։

Հըմբոլդ ասում է թէ «Մարդկային այլ եւ այլ ցեղերը բոլորն էլ միւնոյն նախնական սերունդից են։»

Գերմանացի բնագէտ, Միլլերը, միւնոյն բանը հաստատում է։

Ուրիշ անուանի բնագէտ, Ռիվիէ, ասում է. «Բոլոր մարդկային ցեղերը երեւում են յառաջ են եկած մի աղբիւրից։» Մի ուրիշ երեւելի բնագէտ՝ Պրիչարդ, ասում է. «Երբ քննում ենք ի՛նչ որ կարողացել ենք սովորել մարդկային այլ եւ այլ ցեղերի նկատմամբ, իրաւունք ունինք հետեւցնելու թէ բոլոր ազգերը միւնոյն սերունդից են։»

Լեզուաբանութեան ամենից երեւելի ուսուցիչը, Մաքս Միլլերը, ասում է թէ բանասիրութիւնը կամ լեզուների գիտութիւնը ցոյց է տալիս թէ Ասիոյ եւ Եւրոպայի լեզուները միւնոյն արմատից են։

Բունսըն ասում է թէ Եգիպտական լեզուն ցոյց է տալիս թէ Եգիպտացիք Ասիոյ մեծամեծ ցեղերի հետ միւնոյն ծագումն ունին, եւ թէ Ամերիկայի բնիկ ցեղերի լեզուն ցուցնում է թէ այն բնիկ ցեղերն Ասիական սերունդից են։

Հիւ Միլլերը ասում է. «Պատմութիւնը եւ աւանդութիւնը ցոյց են տալիս թէ կենդրոնական տեղն ուր մարդկային ազգն երեւեցաւ սկիզբից՝ կարող չէ հեռու եղած լինել Կովկասեան լեռներից։»

Այս համառօտ գրքին մէջ տեղ չունինք մէջ բերելու այս կարեւոր նիւթին վերաբերեալ բոլոր ապացոյցները, բայց կարծում ենք որ մինչեւ ցարդ բերուած ապացոյցները բաւական են մեր ընթերցողները համոզելու թէ բնական գիտութիւնները չեն հերքում ինչ որ Աստուածաշունչը սովորեցնում է, 1. Այժմեայ

կարգին եւ կազմուածքին վրայ, 2. Սկզբնական նիւթին վրայ որից երկինք եւ երկիր կազմուեցան, 3. Եղանակին վրայ որով Աստուած ստեղծեց երկինք եւ երկիր, տունկերն եւ շնչաւորներն սկզբնական նիւթից, 4. Ժամանակին վրայ որում Աստուած ստեղծեց սկզբնական նիւթը որից յետոյ երկիրս պատրաստուեցաւ բնակութիւն լինելու մարդկային ազգին համար, 5. Ժամանակին վրայ որում, եւ կարգին նը-կատմամբ որով բոյսերը, անասունները եւ մարդը ստեղծուեցան, 6. Մարդկային ազգի հնութեանը վրայ, եւ 7. Բոլոր մարդկային ցեղերի միւնոյն նախնիներից յառաջ գալուն վրայ:

Արդ, եթէ բնական գիտութիւնները չեն հերքում Աստուածաշունչի այս վարդապետութիւնները, ապա նրա ո՞ր վարդապետութիւններն են հերքում: Եւ ոչ մինը:

Այս գլուխը վերջացնելուց առաջ համառօտիւ յիշենք նախընթաց գլուխների մէջ յառաջ բերուած ապացոյցները, որոնք երբեմն կոչվում են Քրիստոնէութեան արտաքին ապացոյցներ, եւ ապա տեսնենք մէջ բերել ուրիշ տեսակ ապացոյցներ որ երբեմն կոչվում են ներքին ապացոյցներ Քրիստոնէութեան:

ՆԱԽՆԸԹԱՑ ԳԼՈՒԽՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Նախ ցոյց տուինք թէ այս խնդիրն այնպիսի պատմական կարեւորութիւն ունի, որ մի խելացի մարդ չէ կարող արհամարհել նրան, եւ թէ խնդրի ուղիղ լուծումն այն աստիճան կարեւորութիւն ունի նաեւ իւրաքանչիւր մարդի անձին, որ ոչ ոք կարող չէ անվտանգ զանց անել նրան: Դարձեալ ցոյց տուեցաւ թէ այս խնդիրը պիտի լուծուի ոչ ըստ հաճոյից կամ

նախապաշարումների այլ եւ այլ ապացոյցներով, եւ թէ այս ապացոյցները պիտի քննուին անաչառ, անկեղծ եւ բարեպաշտ ոգով:

Յետոյ ցոյց տուինք թէ ոչ ոք կարող չէ հաստատել թէ անկարելի էր Աստուծոյ մասնաւոր յայտնութիւն տալ մարդկանց, կամ անկարելի էր մարդկանց ընդունել մի այսպիսի յայտնութիւն Աստուածանից. նաեւ ցոյց տուինք թէ անհաւատալի չէ, եւ ոչ էլ անկարելի, թէ Աստուած տուաւ այնպիսի յայտնութիւն մարդկանց: Յետոյ մէջ բերուեցան հաստատիչ պատճառներ թէ աշխարհք Քրիստոսի ժամանակ յետին կարօտութիւն ունէր Աստուածային յայտնութեան նաեւ թէ աշխարհք ԺԹ. դարուն մէջ ոչ ինչ նուազ կարօտութիւն ունի այսպիսի յայտնութեան:

Այսպէս պատրաստուեցինք անկողմնապար քննելու այս խնդիրը թէ արդեօք այսպիսի յայտնութիւն արդարեւ տրուա՞ծ է, այսինքն թէ Քրիստոսի Աւետարանն Աստուածանից է թէ ոչ: Ապա մէջ բերուեցան պատմական ապացոյցներ Հրեայ, Հոմէացի եւ Քրիստոնեայ հեղինակներից թէ Քրիստոսի պէս մի անձ արդարեւ ապրում էր Պաղեստինի մէջ իբր 18 դար առաջ, եւ տեսնուեցաւ թէ այս ապացոյցներն այնպէս հաստատիչ են որ անհաւատներն անդամ ընդունում են նրանց: Յիշենք նաեւ թէ Քրիստոսի գերազանց յատկութիւններին եւ հրաշալի գործերին շատ այլ եւ այլ ապացոյցներ կան, որոնցից շատերն Աւետարան կոչուած պատմական չորս գրքերի մէջ պահուած են, եւ տեսանք որ, եթէ այն գրքերն արդարեւ արժանահաւատ են, նրանց վկայութիւնը հաստատիչ եւ բաւական պիտի համարուի: Ուստի սկսեցինք քննել թէ

արդեօք Աւետարաններն արդարեւ արժանահաւատ են, եւ համառօտիւ մէջ բերինք ապացոյցներ հաստատելու համար թէ այն գրքերը ստուգիւ գրուեցան առաջին դարուն մէջ, եւ են հարազատ գրութիւններ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի։ Յիշեալ ապացոյցները բղխում են նոյն իսկ Աւետարանների լեզուից եւ պարունակութիւնից նաեւ հին ձեռագիրներից եւ հին մատենագրերի մէջ յիշուած վկայութիւններից։ Յետոյ պատմական ապացոյցներով հաստատեցինք թէ մեր այժմեայ Աւետարանները չորս աւետարանիչներից գրուածներն են, եւ թէ ըստ նորագոյն քննութիւնների այն գրքերն ամենեւին փոխուած չեն անցեալ 18 դարերի մէջ։

Ցոյց տալու համար թէ աւետարանիչները արժանահաւատ վկաներ են այն դէպքերին, որ պատմում են Աւետարանների մէջ, հաստատեցինք նախ թէ նրանք կարող էին ճշտիւ գտնելու եւ հաւատարմութեամբ պատմելու ինչ որ տեսած եւ լսած էին. եւ երկրորդ, թէ նրանք նաեւ անկեղծ եւ ճշմարտախօս էին, եւ պատրաստ ճշմարտութեամբ գրելու ինչ որ տեսած եւ լսած էին։ Նրանց անկեղծութիւնը յայտնի է այն խոնարհութիւնից որով խօսում են իրանց վրայ, անաչառութիւնից որով յանդիմանում են ժողովրդեան մեղքերը, նաեւ նորանց անկեղծութիւնը յայտնի է իրանց բարոյական վարդապետութիւնից, եւ սրանից որ նրանք չէին կարող յուսալ թէ Աւետարանների համար պատիւ, հարստութիւն եւ հանգիստ պիտի ստանային, այլ ընդհակառակն, գիտէին թէ նեղութիւն, հալածանք եւ մահ անգամ պիտի կրէին։ Ցոյց տուինք նաեւ թէ աւետարանիչները այնպիսի տեղեր եւ այն-

պիսի վիճակի մէջ էին որ չէին կարող խաբուել այն բաներին վրայ որ գրեցին Աւետարաններին մէջ։

Վերջապէս յայտնի եղաւ որ Աւետարանների աստուածաշունչ լինելուն ապացոյցները այնպէս զանազան եւ շատ են որ պարտ ենք ընդունել նրանց իբրեւ համոզիչ, եւ կամ հերքել նրանց ուժգի զօրեղ եւ համոզիչ փաստերով։ Ուստի սկսեցինք քննել թէ արդեօք Աւետարանների արժանահաւատութեանը դէմ ապացոյներ կա՞ն։ Եթէ այնպիսի ապացոյցներ կան, նորանք պէտք է որ կամ նոյն իսկ Աւետարաններից կամ պատմութիւնից եւ կամ գիտութիւնից յառաջ գան։

Սրա վրայ քննեցինք նախ թէ կայի՞ն արդեօք Աւետարանների մէջ նրանց արժանահաւատութիւնը հերքելու բաւական հակասութիւններ, եւ համոզուեցինք որ այնպիսի հակասութիւններ չեն գտնվում Աւետարանների մէջ։ Յետոյ քննեցինք թէ արդեօք պատմութիւնը հերքո՞ւմ է Հին եւ Նոր կտակարանների մէջ ասուած բաները, եւ երեւելի պատմագիրների վկայութիւնից տեսինք որ Սուրբ գրքի պատմական արժանահաւատութիւնն արդէն հաստատուած է։ Յետոյ քննեցինք թէ արդեօք գիտութիւններն հերքո՞ւմ են Աստուածաշունչի արժանահաւատութիւնը, այսինքն թէ Աստուածաշունչի մէջ կա՞ն բաներ որ հակառակ են մեզ ծանօթ բնական երեւոյթներին եւ ապացուցուած բնական օրէնքներին։ Գիտունների նորագոյն հետազօտութիւններին հետ բաղդատեցինք Աստուածաշունչի այն խօսքերը որ գիտական բաների են վերաբերում, եւ գտինք թէ գիտութիւնները արդարեւ հերքած են Աստուածաշունչի խօսքերին տրուած մի քանի սխալ մեկնութիւնները, եւ թէ Սուրբ

գրքի մէջ կան բաներ որ հակառակ են արդի գիտունների ոմանց կարծիքներին, բայց այս կարծիքները բաւական փաստերով հաստատուած եւ գիտուններից առ հասարակ իբրեւ ճշմարիտ ընդունուած չեն, այլ ընդհակառակն, տեսնենք որ նոյն իսկ գիտունների շատերի վկայութեանը նայելով, Աստուածաշունչի ճշմարիտ մեկնութիւններից եւ ոչ մէկն երբէք հերքուած չէ գիտութիւնների ապացուցած որ եւ իցէ մէկ վարդապետութենից։

Այս այպէս լինելով, պարտ ենք իբրեւ ճշմարիտ ընդունել Աւետարանների արժանահաւատութիւնը հաստատող զանազան եւ բազմաթիւ փաստերը։

Բայց կան նաեւ ուրիշ տեսակ ապացոյցներ որ շատերի կարծիքներին նայելով, աւելի համոզիչ են, եւ այս ապացոյցները են նոյն իսկ Աւետարաններից ծագած ապացոյցները։ Այս ապացոյցներից ոմանք այսուհետեւ մէջ պիտի բերենք համառօտիւ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԵՍԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԲՈԼՈՐ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԱՅ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՆ։

Գիտողութեան արժանի է այս կէտը թէ Հին կտակարանի չատ խօսքերը չարունակ ժողովրդեան ուշադրութիւնը գրաւում էին դէպի մի ապագայ Փրկչի։ Հրէից ոչ միայն մարգարէութիւններն այլ եւ Հրէական եկեղեցու ծէսերն եւ արարողութիւններն նայում էին մի Մեսիայի։ Արդարեւ այս մարգարէութիւնները չ'ասուեցան այն զարդութեամբ որով պատմութիւնը նկարագրում է անցեալ դէպքեր. ոչ էլ այնպէս որոշ էին որ նրանց նշանակութիւնը, մարգարէութիւնները կատարուելուց առաջ, ճշտիւ հասկացուէր ամեն զարդանքով. բայց մարգարէութիւնները գնալով աւելի յստակ եւ որոշ եղան, եւ վերջապէս երբ կատարուեցան, նրանց նշանակութիւնը բոլորովին յայտնի եղաւ։

Յայտնի է որ Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւններն ասուեցան զարերով յառաջ քան Քրիստոսի աշխարհք գալը։ Քրիստոսին չընդունող Հրեայք անգամ հաստատում են այս։ Հրէից վկայութեանը նայելով այս մարգարէութիւնների վերջինը գրուեցաւ

Յիսուսի ծնունդից մի քանի դար առաջ։ Նաև գիտացուած է որ Հին կտակարանի բոլոր գրքերը Քրիստոսի ծնունդից աւելի քան 200 տարի առաջ Յունարէնի թարգմանուեցան։

Արդ, քննենք համառօտիւ այն մարգարէութիւններից ոմանք որ Քրիստոսի ծնունդից առաջ ասուեցան, եւ տեսնենք թէ ի՞նչպէս ճշգիւ կատարուեցան Քրիստոսի վրայ։

1. Ապագայ Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւնները շատ են։ Հարիւրի հասնում է նրանց թիւը, եւ Հին կտակարանին գրեթէ ամեն մասին մէջ կան։ Մովսէսի հինգ գրքերին մէջ գտնվում են մարգարէութիւններ կնոջ սերունդին վերաբերեալ որ օձին գլուխը պիտի ջախջախէր (Ծնունդ. Գ. 15.), նաև Աբրահամի սերունդին վերաբերեալ որով երկրիս բոլոր ազգերը պիտի օրհնուէին (Ծնունդ. ԻԲ. 18.)։ Մովսէս որ Իսրայէլի ժողովուրդն ազատեց Եգիպտոսի ծառայութենից՝ իրան նման մի մարգարէի մասին է խօսում որին Աստուած պիտի յարուցանէր (Բ. Օր. ԺԸ. 18)։ Դաւիթ իր սաղմոսներին մէջ ինքն իրան ցոյց է տալիս իբրեւ տիպ եւ օրինակ նրան որի թագաւորութիւնը պիտի տարածուէր աշխարհի մի ծայրից մինչեւ միւս ծայրը (Սաղմ. Բ. եւ ԽԵ.)։ Սաղմոսն առաջուց պատմում է նրա փառքը (Սաղմ. ՀԲ.)։ Մարգարէները Յովսէէ, Յովէլ, Ամոս, Եսայի, Երեմիա, Դանիէլ, Մաղաքիա, բոլորն էլ մարգարէացան Մեսիայի վրայ։ Նրանցից եւ ոչ մէկն լի եւ կատարեալ տեղեկութիւն չեն տալիս ապագայ Մեսիայի վրայ, բայց իւրաքանչիւրը ցոյց է տալիս այն բաները միայն որ յարմար էին իրանց ժամանակի մարդկանց պա-

րագաներին եւ կարօտութիւններին։ Այս մարգարէութիւնները ասուեցան շատ դարեր առաջ, եւ իրարից շատ հեռու ապրող մարգարէների միջոցով, եւ այս մարգարէութիւնների մէջ յիշուած են ապագայ Փրկչի այլ եւ այլ տարբեր յատկութիւնները եւ պաշտօնները, եւ բոլոր այս մարգարէութիւնները արդեամբ կատարուեցան Քրիստոսի վրայ։

2. Այս մարգարէութիւնները շատ մանր պարագաներ են յիշում։ Ի սկզբան ընդհանուր էին, եւ մինչեւ մի ասելիքան մթին, բայց յետոյ ուսեցին մանրապատում եւ յստակ լինել։ Հարկ չէ մեզ յիշել այս մարգարէութիւնները կարգով Ծննդոց գրքից մինչեւ Մաղաքիա, բայց բաւական է նրանցից մի քանիսն յիշել՝ ցոյց տալու համար թէ ի՞նչ զարմանալի ճշգութեամբ կանխաւ պատմուեցաւ Մեսիայի կեանքը, այսինքն թէ ե՞րբ եւ ո՞ւր պիտի գար Մեսիան, եւ ի՞նչ պիտի լինէին նրա ծննդեան պարագաները, ի՞նչ գործքեր պիտի կատարէր ի՞նչ կերպով պիտի ընդունուէր Հրէից ազգից, ի՞նչ մահուամբ պիտի մեռնէր, եւ ի՞նչ պիտի լինէր նրա ապագայ թագաւորութիւնը։

Մեսիայի գալստեան ժամանակը ճշգիւ ասուած է։ Ըստ Ծննդոց ԽԹ. 10. համարին, թէեւ Իսրայէլի միւս ցեղերը ցրուէին, Յուդայի ցեղը պիտի մնար եւ իր առանձին ցեղային իշխանութիւնը պիտի վարէր մինչեւ Մեսիայի գալուստը, եւ արդարեւ այս ցեղն իր ցեղային ամբողջութիւնը պահեց մինչեւ Քրիստոսի գալուստը։

Ըստ Անգեայ (Անգ. Բ. 3, 7, 8) Մեսիա պիտի գար դեռ քանի որ երկրորդ տաճարը կանգուն էր։ Հրեա-

ները այսպէս էին հասկանում յիշեալ մարգարէութիւնը, եւ համոզուած էին թէ տաճարը պիտի չ'կործանուէր մինչեւ Մեսիայի գալուստը, եւ նրանց այս համոզումն այսպէս զօրաւոր էր որ չ'ուզեցին որ եւ իցէ պայմաններով յանձնել Երուսաղէմը Տիտոսին, որ յամի Տեառն 70—71 պաշարեց յիշեալ քաղաքը:

Դանիէլի (Թ. 20—27 մարգարէութիւն կայ ճիշտ այն ժամանակին նկատմամբ թէ ե'րբ պիտի երեւէր Մեսիան եւ ե'րբ պիտի կորուէր: Թող ընթերցողները մտադրութեամբ կարդան այս մարգարէութիւնը: Այս մարգարէութեան համեմատ, Քրիստոսի գալստեան ժամանակն էր 70 եօթնեակ, այսինքն 490 տարի, որ երեք մասի է բաժանվում: Առաջին մասն է 7 եօթնեակ, այսինքն 49 տարի, եւ այս միջոցին երկրորդ տաճարը պիտի չինուէր: Երկրորդ մասն է 62 եօթնեակ այսինքն առաջի մասից յետոյ 434 տարի, եւ այս միջոցին Մեսիան պիտի երեւէր: Երրորդ մասն է մէկ եօթնեակ, այսինքն 7 տարի, որոյ կիսատն պիտի կորուէր Մեսիան: 70 եօթնեկայ կամ 490 տարիների ժամանակը պիտի սկսէր «Երուսաղէմը վերստին չինուելու հրամանը դուրս գալուց»: Այսպիսի հրաման ե՞րբ դուրս եկաւ: Կիւրոս հրաման տուաւ տաճարը չինելու, բայց Երուսաղէմը չինելու յատուկ հրամանը արուեցաւ Արտաշէսից, նրա թագաւորութեանը 20երորդ տարին: Այս հրամանի մասնաւոր պարագաները յիշվում են Նէեմիայ երկրորդ գլխին մէջ: Արդի պատմագէտները մեծ ճշտութեամբ եւ զարմանալի համաձայնութեամբ որոշում են ժամանակը որում արուեցաւ այ հրամանը: Եան Հէնդատէնբէրգ, Հէյլզ, Գարմէդ եւ Ըշբը անուն երեւելի հնագէտների

հաշիւների մէջ չ'կայ տարբերութիւն աւելի քան մի տասն տարիի այն ժամանակին վրայ որում արուեցաւ Երուսաղէմը վերստին չինուելու հրամանը: Ըստ Եանի այն հրամանը արուեցաւ 444 տարի Քրիստոսից առաջ. ըստ Հէնդատէնբէրգի 454 տարի Քրիստոսից առաջ, ըստ Հէյլզի 444 տարի Քրիստոսից առաջ. ըստ Գարմէդի 449 տարի Քրիստոսից առաջ. եւ ըստ Ըշբրի 454 տարի Քրիստոսից առաջ: Արդ եթէ այս թուականները հանենք 69 մարգարէական եօթնեակներով ցոյց տուած 483 տարիների թուից, այն ժամանակ Մեսիայի երեւման տարին կ'լինի ըստ Եանի եւ Հէյլզի Քրիստոնէական թուականի 39երորդ տարին, ըստ Գարմէդի 34երորդ տարին, եւ ըստ Հէնդատէնբէրգի եւ Ըշբրի 29երորդ տարին, եւ Աւետարաններից գիտենք որ Քրիստոս իր ծնունդից իրր 30 տարի յետոյ իրրեւ Մեսիա արդարեւ յայտնեց իրան հրապարակաւ աշխարհին: Շատ դժուարին է նոյն իսկ գիտուններին ճշտիւ որոշել մի հին դէպքի բուն տարին, ինչպէս է Երուսաղէմի չինութեան հրաման տուելու դէպքը, բայց սոյգ է որ մի քանի երեւելի հնագէտների նորագոյն հետազօտութեանց նայելով Քրիստոս ինքն իրան հրապարակաւ յայտնեց աշխարհին իբրեւ Մեսիա բուն իսկ այն տարին որ յիշուած է Քրիստոսից 600 տարի առաջ գրուած Դանիէլեան մարգարէութեան մէջ, եւ ուրիշ հնագէտների հաշիւներն, ինչպէս տեսանք, նրանից երեք կամ չորս տարի են միայն տարբերվում: Նոյն իսկ մարգարէութեան մէջ կանխաւ ասուած է նաեւ թէ, ժամանակի առաջին երկու մասերից, այսինքն 7 եւ 62 եօթնեակներից, յետոյ Մեսիան պիտի կորուէր վերջին մասին, այսին-

քըն վերջին մարգարէական եօթնեկին մէջ տեղը։ Այս ժամանակը պատասխանում է ճիշտ Քրիստոսի կեանքի այն տարիներին, որոնց մէջ Քրիստոս յայտնելով ինքն իրան աշխարհի իրրեւ Մեսիա, շարունակեց իր պաշտօնն երեք կամ չորս տարի եւ կատարեցաւ մատուցանելով ինքն իրան պատարագ աշխարհի մեղաց համար զոգարեցրեց ուրիշ ամէն պատարագ եւ ողջակէզ, ինչպէս որ կանխաւ ասուած։

Այս մեկնութիւնը հաստատւում է իրրեւ ճշմարիտ այս բանով որ նոյն իսկ Հրեայները այս կերպով էին մեկնում յիշեալ մարգարէութիւնը, եւ ապասում էին Մեսիայի երեւման ճիշտ այն ժամանակ որ Քրիստոս երեւեցաւ։ Ոչ թէ Հրեաները միայն այլ եւ ուրիշ ազգեր եւս ունէին այս ակնկալութիւնը։ Այն դարի Հռոմայեցի մատենագիրներից, ինչպէս Տակիտոսից եւ Սուետոնիոսից տեղեկում ենք որ այն ժամանակներն մի արտաքոյ կարգի անձի երեւալուն առ հասարակ սպասում էր։ Այսպէս յայտնի է թէ Յիսուս Քրիստոս երեւեցաւ երկրի վրայ ճիշտ այն ժամանակ որ Մեսիան պիտի երեւէր մարգարէների ասածին պէս։

Մարգարէութիւնների մէջ կանխաւ ասուած էր թէ Մեսիան պիտի ունենար մի կարապետ որ ճանապարհ պիտի պատրաստէր նրա համար։ Տես Եսայ. Խ. 3. Մաղ. Գ. 1. Դ. 5։ Ընթերցողները այս մարգարէութիւնները թող բաղդատեն Մատթէոսի Գ. Գլխի հետ, եւ պիտի տեսնեն թէ ինչպէս կատարուեցան նրանք Յովհաննէս մկրտչի վրայ, որ իւր վարքով եւ ոգով շատ նման էր Եղիա մարգարէին։ Յովհաննէս Մկրտիչ քարոզեց անապատին մէջ եւ իր քարոզութեամբը պատրաստեց ժողովուրդը Քրիստոսի գալստեանը։

Մարգարէութեանց մէջ կանխաւ ասուած էր նաեւ թէ Մեսիան պիտի ծնուէր Յուդայի Բեթլէհէմ գիւղում, եւ արդարեւ Յիսուս յիշեալ գիւղում ծնուեց։ Բաղդատիր Միք. Ե. 2. եւ Մատթ. Բ. 1.

Կանխաւ ասուած էր նաեւ Մեսիայի ծննդեան կից զարմանալի զէպքերն որ նոյն պէս կատարուեցան Յիսուս Քրիստոսի ծննդեան ժամանակը։ Բաղդատի՛ր Ես. Է. 14 եւ Մատթ. Ա. 18—25 հատուածները։

Մարգարէութիւնների մէջ կանխաւ ասուած էր նաեւ թէ Մեսիան պիտի ծագէր Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Յուդայի եւ Դաւթի սերունդից, եւ Յիսուս արդարեւ մարմնոյ կողմանէ ծագեց յիշեալ նահապետների սերունդից։

Մեսիայի կատարելու պաշտօնն էլ ասուած էր մարգարէութիւնների մէջ։

Ասուած էր թէ Մեսիան պիտի լինէր մարգարէ կամ ուսուցիչ, Տես Բ. Օր. ԺԸ. 15, Ես. ԺԱ. 1—4։ Այս մարգարէութիւնները ճշտիւ կատարուեցան Քրիստոսի անձին վրայ, որ խօսում էր այնպէս ինչպէս մարդ երբէք խօսած չէր (Յովհ. Է. 46), որ ավետեցնում էր իրրեւ իշխանութիւն ունեցող (Մատթ. Է. 29), որ խստութեամբ յանդիմանեց դպիրներին եւ փարիսեցոց կեղծաւորութիւնը եւ ամբարշտութիւնը (Մատթ. ԻԳ.), եւ խօսում էր քաղցր եւ մխիթարական խօսքեր զկղզի ասուածաբանները (Մատթ. ԺԱ. 28, ԺԸ. 6)

Մարգարէութիւնների մէջ կանխաւ ասուած էր նաեւ թէ Մեսիան պիտի լինէր քահանայ (Սաղմ.

ՃԺ. 4.)։ Յիսուս Քրիստոս զարմանալի կերպով կատարեց այս մարգարէութիւնը, երբ իրան տուաւ կատարեալ պատարագ մեր մեղաց համար։

Կանխաւ ասուած էր նաեւ թէ Մեսիան պիտի լինէր թագաւոր, թէ նրա թագաւորութիւնը պիտի տարածուէր հեթանոսների վրայ, եւ թէ այս թագաւորութիւնը պիտի լինէր խաղաղութեան թագաւորութիւն։ Տես Սաղմ. Բ. 9, ՃԺ. 2, Ես. Թ. 6, 7, ԽԹ. 6, Կ. 3, 5։

Ի՞նչ զարմանալի կերպով կատարուեցան այս մարմարգարէութիւնները Քրիստոնէական կրօնքին ուժ եւ տան դարերի մէջ տարածուելով մինչեւ երկրիս ծայրերը։ Նաեւ առաքեալների օրից ի վեր չեղաւ մի ժամանակ որում այս մարգարէութիւնների կատարումն այնպէս արագ լինէր՝ որչափ ներկայ դարուս մէջ եղաւ, քանզի Քրիստոսի Աւետարանը հիմա թարգմանուած է գրեթէ երկրիս բոլոր լեզուներին, Ովկիանոսի կղզիները փրկութեան համար դարձած են դէպի Քրիստոս, եւ Չինաս, Եապոնի եւ Հնդկաստանի մէջ բազմութիւններ սկսել են Տէր ճանչել Քրիստոսը։

Մարգարէութիւնների մէջ կանխաւ ասուած էր թէ Մեսիան պիտի մերժուէր Հրեաներից, չարագործների կարգը պիտի դասուէր, պիտի հայհոյուէր եւ վերջապէս պիտի սպանուէր։ Տես Ես. ԾԳ. եւ Դան. Թ. 26։ Մեր ընթերցողները գիտեն թէ այս մարգարէութիւնները ճշտիւ կատարուեցան Յիսուս Քրիստոսի վրայ։ Սովոր է թէ Լորդ Բոլինգբրոք, Անգլիացի անուանի անհաւատը, զարմացաւ երբ ուշադրութեամբ կարդաց Եսայեայ ԾԳ. գլուխը եւ ասաց թէ. թէպէտ այս գիրքը Քրիստոսի ծնունդից 700 տարի առաջ

գրուած է, նրա չարչարանքն այնպէս ճշտիւ է պատմում ինչպէս Մատթէոս աւետարանիչը։

Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւններից ոմանք այնպէս հակասական են թուում, որ կարող է մարդ ասել թէ անհնար է որ նրանք միեւնոյն անձին վրայ կատարուէին, բայց եւ այնպէս նրանց բոլորն էլ կատարուեցան Քրիստոսի վրայ։

Կանխաւ ասուած էր թէ Մեսիան մի աշխարհակալ պիտի լինէր, պիտի նստէր Դաւթի աթոռի վրայ եւ պիտի կառավարէր բոլոր ազգերը. բայց ասուած էր նաեւ թէ պիտի չարչարուէր անարգուէր եւ մերժուէր մարդկանցից։

Մեսիայի վրայ ասուած էր կանխաւ թէ նրա թագաւորութիւնը սահման պիտի չունենար, բայց ասուած էր նաեւ թէ Մեսիան պիտի կարուէր. Բաղդատիր Ես. Թ 7. եւ ԾԹ. գլուխը նաեւ Դան. Է. 13. եւ 14. համարները Դան. Թ. 26. համարին հետ։ Մեսիան ի՞նչպէս կարող էր թագաւորել փառքով եւ միանգամայն լինել անարգուած եւ մերժուած մարդկանցից։ Ի՞նչպէս կարող էր սպանուել եւ միանգամայն յաւիտեան թագաւորել։

Կանխաւ ասուած էր թէ Մեսիան պիտի երեւէր իբրեւ ողոյ կուսածին, բայց եւ այնպէս կոչուած է «Աքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան։» Բաղդատիր Ես. Է. 14, Ես. Թ. 6. համարին հետ։ Այս մարգարէութիւնների կատարուելուց առաջ անհնարին էր թուում նրանց կատարումը միեւնոյն անձին վրայ. բայց հիմա յայտնի է թէ բոլորն էլ կատարուեցան Քրիստոսի վրայ։

Ուրեմն ի՞նչպէս կարելի է մեկնել Հին կտակարանի մարգարէութիւնների եւ Քրիստոսի կեանքի պատմութեան մէջ տեղ եղած զարմանալի համաձայնութիւնը։

Կարո՞ղ է ասուել թէ այս համաձայնութիւնը դիպուածական է։ Այսպէս կարող է լինել, եթէ Հին կտակարանի մէջ միայն մի քանի ընդհանուր մարգարէութիւններ լինէին։ Բայց այնպէս չէ կարող լինել, քանզի այն գրոց մէջ աւելի քան հարիւր մարգարէութիւններ կան Մեսիայի վերաբերեալ, որոնցից ոմանք ընդհանուր են, բայց ուրիշները մասնաւոր են։ Մասնաւոր մարգարէութիւնների մէջ յիշւում են Քրիստոսի ծննդեան տեղը, ժամանակը եւ պարագաները, նրա կեանքի եւ մահուան բոլոր հանգամանքները։ Շատ դիւրահաւան պիտի լինի մարդս որ հաւատայ թէ բոլոր այս կանխասացութիւնների կատարուելը Քրիստոսի վրայ դիպուածական էր։ Մի այսպիսի բան հաւատալը բոլորովին անտեղի է։

Կարո՞ղ է ասուել թէ Քրիստոս եւ նրա աշակերտներն այս մարգարէութիւնները գիտենալով, դիտմամբ կատարեցին այն մարգարէութիւնների գուշակութիւնները։ Սրան կ'պատասխանենք որ եթէ Քրիստոս լոկ մարդ էր, ոչ ինքն եւ ոչ աշակերտները կարող էին որոշել նրա ծննդեան ժամանակը եւ տեղը. ոչ էլ կատարել այն գուշակութիւններն որ կը վերաբերին Մեսիայի Հրէից ազգից մերժուելուն եւ խաչուելուն եւ նրա թագաւորութեան ապագայ փառացը։ Այս խօսքն էլ անտեղի է։ Աշխարհք եկող բոլոր մարդկանց մէջ չեղաւ մէկը որի վրայ այս մարգարէութիւնների ոմանորդ մասը կատարուած լինի։ Քրիստոսն է միայն անձը որի վրայ կատարուեցան բոլոր այն մարգարէութիւնները լիովին։ Այս ճշմարիտ է ոչ միայն Հին կտակարանի գրաւոր մարգարէութիւնների, այլ եւ ծէսերի, նուէրների եւ զոհերի նկատմամբ։ Նրանց բոլորին էլ իմաստը, մեկնութիւնը եւ հոգեւոր նշանակութիւնը յայտնի եղան Քրիստոսի վրայ։ Ուստի եւ առանց հակառակութեան կ'հետեւի թէ Քրիստոս էր արդարեւ Մեսիան որ այնչափ դարեր խոստացուած էր Հրէից ազգին, եւ թէ նա է արդարեւ խաղաղութեան Իշխանը որ փրկութիւն պիտի բերէր մեր կորուսեալ աշխարհին։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ։

—〓—

Ով որ ուշադրութեամբ կարդայ Քրիստոսի վարքը որ յայտնուած է Աւետարանների մէջ, կ'համոզուի թէ Յիսուս արդարեւ մի գերազանց անձ էր։

Աշխարհի մէջ երեւեցան շատ մարդիկ որ ձիրքերի եւ առաքինութիւնների կողմանէ նշանաւոր էին, բայց նրանցից ոչ մինն ունէր ամեն գերազանց յատկութիւն՝ բարձր աստիճանով։

Ուրիշ բոլոր մարդիկ որչափ նշանաւոր ձիրքերի եւ առաքինութիւնների տէր որ էին, շատ թերութիւններ էլ ունէին. բայց Քրիստոսի անձին՝ վրայ մէկ հատ միայն եւ փոքր աստիճանի թերութիւն չը գտնուեցաւ։

Կան առաքինութիւններ որ շատ քիչ անգամ միւս-նոյն անձի վրայ բարձր աստիճանով գտնուին, զորօրինակ արիութիւն եւ խոնարհութիւն, ուժգնութիւն եւ քաղցրութիւն, մաքրութիւն եւ գութ դէպի անկեալն, բայց Քրիստոսի վրայ սրանց բոլորն էլ միացած էին, եւ նոյն իսկ բարձրագոյն աստիճանով։ Այստեղ Քրիստոսի գերազանց յատկութիւններից մի քանիսը յիշենք։

1. Քրիստոսի գերազանցութիւնը տեսնվում է սրանում որ մինչ բարձր ճշմարտութիւններ վարդապետելու զբաղուած եւ մի լեռ զբրի ձեւնարկած ժամանակ էլ ամենօրեայ կեանքի չնչին պարտականութիւնները չ'թողուց, ոչ էլ զանց արաւ մատուցանել մարդոց ամենաչնչին ծառայութիւններ։ Մեծ բազմութիւններ էր քարոզում, բայց միանգամայն չմերժեց եւ ողորմեցնել մի անհատ անձի որ գիշերով եկաւ նորա մօտ, կամ խեղճ Սամարացի կինը որին հանդիպեցաւ մի ջրհորի մօտ (Յովհ. Գ. 1—21, Դ. 5—26)։ Բազմութիւններին խօսեց երկնային իմաստութեան խօսքերը, բայց չ'մոռացաւ միանգամայն նրանց անօթութիւնը, ուստի եւ հոգաց նրանց ուտելու հաց հայթայթել (Մատթ. ԺԴ. 14—21 ԺԵ. 31)։ Իր ամենակարող զօրութիւնովը կերակուր պատրաստեց հաղարաւորների համար, բայց հրամայեց նաեւ իր աշակերտներին հացի կտորտանքը ժողովել որպէս զի բան չ'կորչէր (Յովհ. Զ. 5—12)։

2. Քրիստոսի գերազանցութիւնը տեսնվում է նաեւ նրա սիրոյ մէջ դէպի ամենները։ Քրիստոս սիրում էր իր մայրը, իր եղբայրները եւ իր ազգը, բայց նորա սէրն ազգականութեան կապով միայն կապուած չէր, ոչ էլ ազգութեան սահմանին մէջ միայն փակուած էր։ Իր մահուան տագնապին մէջ յայտնեց իր մայրը սիրելի աշակերտին խնամքը (Յովհ. ԺԹ. 25—27), բայց ասել էր նաեւ թէ ով որ իր Հօր կամքը կատարէ, իր եղբայրը, քոյրը եւ մայրն է (Մատթ. ԺԲ. 46—50)։

Ինքը գնաց, եւ իր աշակերտներին էլ պատուիրեց գնալ նախ իր ազգի, Իսրայէլի տունը կորած ոչ-

խարներին մօտ (Մատթ. Ժ. 6), բայց իրրեւ վերջին պատուէր հրամայեց նաեւ իր աշակերտներին. «Գնացէք բոլոր աշխարհք, ու Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներին» (Մարկ. ԺԶ. 15)։

3. Քրիստոսի գերազանցութիւնը տեսնվում է նաեւ նրա թէ պարզութիւնից եւ թէ ազնուութիւնից։ Քրիստոս չի պտտեց մեծատունների կամ դիտուններին եւ կամ մեծամեծների բարեկամութիւնն եւ շնորհքը։ Սիրում էր հասարակ ժողովուրդը, նրանց ընկերութիւնից ախորժում էր, եւ մասնակից էր լինում նրանց նեղութիւններին, ուրախութիւններին եւ տրտմութիւններին։ Արդարեւ Քրիստոս եղաւ իրրեւ նրանցից մինը, բայց եւ այնպէս բոլորովին ազատ էր դժգոհութեան եւ նախանձի ոգուց որ շատ անդամ տեսնվում է հասարակ մարդկանց մէջ։ Թէպէտ Քրիստոս աղքատ էր, հակառակ չէր մեծատուններին. թէպէտ հպատակ էր, իշխանութեան տէր անձինք չէր անարգում. թէպէտ հասարակ ժողովրդի մէջ էր գտնվում, նրա բարքը շատ գերազանց էր քան թէ նրանցը. թէպէտ նրա երկրաւոր վիճակը խոնարհ էր, նրա ոգին երկնային էր։ Պարզամիտ էր, միանգամայն եւ աղնուամիտ։

4. Քրիստոսի վրայ ուրիշ գերազանց յատկութիւններ էլ կային։ Քրիստոս գործունեայ էր, եռանդուն եւ բոլորովին անձնատուր իր գործին, միանգամայն արդարախոհ եւ մարդասէր։ Միշտ հրահանգում էր ժողովուրդը, միանգամայն եւ միշտ խօսում էր ճիշտը եւ ճիշտ ժամանակին։ Նրա կնանքը լի էր բարերարական գործերով, միանգամայն այն գործերի իւրաքանչիւրը յարմար էր եւ ժամանակին։ Պատմութիւնը վկայում է թէ շատ դժուարին է եռանդոտ մարդոց խոհեմ լինել, բայց այս երկու յատկութիւնները կատարեալ գտնվում էին Քրիստոսի վրայ։

5. Նմանապէս Քրիստոս աներկիւղ էր միանգամայն եւ զգուշաւոր։ Քրիստոս մարդկանցից չէր վախենում, եւ հոգ չէր անում թէ նրանցից վնաս կարող է հասնել իրան։ Երուսաղէմ գնաց, գիտենալով իրան դէմ նիւթուած թշնամութիւնը, եւ աներկիւղութեամբ յանձն առաւ մատնուել եւ իմաստ դատապարտուել։ Բայց միշտ զգուշանում էր թշնամութիւն չ'գրգռել զուր տեղը։ Նրա հակառակորդների չարութիւնը չէր կարող ամենեւին խոտորեցնել նրան իր նպատակն ի գլուխ հանելուց։ Բոլոր թշնամիները միանալով չէին կարող գոցել նրա բերանը, մինչեւ որ կխօսէր ինչ որ պէտք էր խօսել. ոչ էլ կարող էին արգիլել նրա ջանքերը, մինչեւ որ ամեն հարկաւոր մարդասիրական գործ կատարէր. բայց եւ այնպէս Քրիստոս իշխանները զայրացնող խօսք ամենեւին չէր ասում, ոչ էլ ուզում էր որ իր փառաւոր գործը հրատարակուէր ժամանակից առաջ։ Նրա թշնամիների չարութիւնը չէր կարող ոչ վախեցնել եւ ոչ գրգռել Քրիստոսը։

6. Քրիստոսի գլխաւոր նպատակն էր յայտնել մարդոց հանդերձեալ աշխարհի անհուն գերազանցութիւնը, եւ յորդորել նորանց երկնային ժառանգութիւն որոնելու, բայց եւ այնպէս երբէք չ'արհամարհեց այս աշխարհս, ոչ էլ ինքն իրան հակառակ ցոյց տուեց աշխարհի իրական չահերին։ Երբէք անձնատուր չեղաւ աշխարհային հեշտութիւններին եւ պատուի, բայց խոյս չ'տուաւ մարդոց ընկերութիւններից։ Մարդկանց պատ-

ւիրում էր զանձ չ՝դիզել երկրի վրայ այլ երկնքում, բայց եւ նրանց ամենօրեայ գործերը կամ աշխատութիւնը չ՝պարսաւեց իբրեւ անօգուտ, ոչ էլ նրանց ընկերական զուարճութիւնը մերժեց իբրեւ մեղանչական։ Մինչ իրատում էր իր աշակերտներին երկնաւոր փառքը նկատելու, ըստ արժանոյն յարգում էր նաեւ ինչ որ բարի, օգտակար եւ սուրբ բան կար ներկայ կեանքի սկզբունքների եւ յարաբերութիւնների մէջ։ Մինչ հրաւիրում էր մարդկանց Գառի հարսանեաց ընթրիքին (Յայտ. ԺԹ. 9), չ՝զլացաւ անձամբ գնալ Գալիլեայի Կանա քաղաքին հարսանիքը։

Անկատար մարդկանց շատ դժուարին է մանաւանդ այս բանի մէջ Քրիստոսին նմանել։ Ոմանք տեսնելով թէ որչափ շատ եւ որչափ մեծ են չարիքն աշխարհիս մէջ՝ ուզում են բոլորովին հրաժարուել մարդոց ընկերութիւնից. Մինչ ուրիշները տեսնելով թէ կայ քիչ մի բարի բան աշխարհիս մէջ՝ անձնատուր են լինում բոլորովին աշխարհային հեշտութիւններին, պատիւներին, եւ երկնային ժառանգութիւն չեն որոնում։

Մարդարէացուած էր Մեսան պիտի նմանէր գառի եւ առիւծի միանգամայն (Ես. ԾԳ. եւ Ծննդ. ԽԹ. 9, 10, Յայտ. Ե. 5)։ Զէ՞ որ Քրիստոս միանգամայն առիւծի զօրութիւն եւ քաջութիւն ունէր։ Աշխարհիս վրայ ոչ հարստութիւն ունէր, ոչ ազդեցութիւն եւ ոչ բարձր աստիճան, մի քանի խոնարհ բարեկամներ միայն ունէր, նրանք էլ անկարող էին նրա կեանքի միջոցին լիովին հասկանալ նրա նպատակը, կամ օգնական լինել նրան իր ձեռնարկութիւններին մէջ, բայց եւ այնպէս Քրիստոս ձեռնարկեց այնպիսի ընդարձակ եւ դժուարին մի գործի որ ի վեր էր քան մարդկային կարողութիւնն եւ իմաստութիւնը։ Այս աշխարհիս բոլոր զօրութիւնները, մարդկանց կիրքերը, իշխանների նախանձը եւ քահանաների մոլի եռանդը, բոլորն էլ բարձրացին Քրիստոսի եւ նրա գործի դէմ, բայց եւ այնպէս Քրիստոս ինչ հաստատամտութեամբ եւ արիութեամբ յառաջ տարաւ գործը։ Առանձին էր բայց չ՝շուարուեց երբէք։ Դպիրների եւ փարիսեցիների կողմից հակառակութիւն տեսաւ, բայց յարատեւեց իր գործին մէջ։ Որ եւ իցէ դժուարութիւն որչափ եւ մեծ լինէր, չէր կարող վհատեցնել նրան։ Խօսեց իշխանութեամբ, ինքն իրան ասենին վրայ տէր ցոյց տուեց. փոթորիկին սաստեց եւ խաղաղութիւն եղաւ. պիղծ ոգիներին հրամայեց, եւ նրանք հնազանդեցին նրան։ Արդարեւ Ցուդայի առիւծն էր։

Թէպէտ այսպէս մեծ անձն էր եւ հզօր զօրութեամբ, սրտով հեզ եւ խոնարհ էր։ Ո՛րպիսի քաղցրութեամբ էր ընդունում նրանց որ գալիս էին դէպի նրան, եւ ի՛նչ համբերութեամբ տանում էր նրանց թերութիւնները։ Դիմամ էր ժողովրդեան եւ դէպի իրան էր հրաւիրում բեռնաւորուածները։ Ի՛նչ քաղցրութեամբ յանդիմանեց իր աշակերտներին երբ նրանք չ՝հակեցին նրա հետ վերջի ապդնապին մէջ։ Ո՛րպիսի խանդաղատանօք նայեցաւ Պետրոսին նրա ուրացութեան ժամանակը, եւ յետոյ ի՛նչ քաղցրութեամբ յանդիմանեց նրան։ Երբ զրպարտութեամբ ամբաստանուեցաւ, եւ դատապարտուեցաւ սուտ վկայութեամբ, գանգատանայ խօսք չ՝լսուեցաւ նրա բերանից։ Նոյնպէս բոլոր նախատինքներին եւ ծաղրարանութիւններին ամենե-

ին պատասխան չ'տուեց։ «Նա անիրաւութիւն կրեց եւ չարչարուեցաւ, բայց իր բերանը չ'բացաւ, մորթուելու տարուող ոչխարի պէս, եւ իր խուզողներին առջեւ մունջ կացող մաքիի պէս՝ այնպէս իր բերանը չ'բացաւ» Ես. ԾԳ. 7.)։ Արդարեւ քաւութեան համար կարգուած Գառն Աստուծոյ էր։

8. Քրիստոսի առաքինութիւնների ամենից երեւելին էր նրա կատարեալ մաքրութիւնը եւ անմաքուրների վրայ ունեցած կարեկցութիւնը։

Քրիստոս իր վսեմ բարոյական յատկութեամբը աւելի քան բոլոր մարդիկ գերազանց եղաւ։ Սաստիկ հակառակութիւն ցոյց տուեց միշտ անմաքուրների եւ անարդարների դէմ։ Արդարութիւնն եւ սրբութիւնը սիրում էր վերջին աստիճան եւ անիրաւութեան դէմ նրա սաստիկ զզուանքն էր, որ նրան այնպէս խստութեամբ յանդիմանել ստիպեց դպիրների եւ եւ փարիսեցիների կեղծաւորութիւնը, եւ ազահ լոմայափոխներին վանտել տուեց տաճարից։ Նրա բարկութիւնը սուրբ բարկութիւն էր անիրաւութեան դէմ։ Եթէ այսպիսի գործքերի դէմ բարկութիւն չ'զգար, նրա բարոյական բնութիւնը կատարեալ եղած չէր լինել։ Քրիստոս միշտ եւ ամեն տեղ հակառակ կացաւ չարութեան։ Միւս կողմանէ մեղաւորների համար միշտ կարեկցութիւն ցոյց տուեց, եւ նրանցից ետ չ'կեցաւ։ Զ'մերժեց խօսել Սամարացի կնոջ հետ, թէպէտ այս կինը մի մարդի հետ էր ապրում, որը նրա ամուսինը չէր։ Շնութեան յանցանքով բռնուած կնոջ զութ ցոյց տուեց, պատուիրելով նրան գնալ եւ այլեւս չ'մեղանչել. մաքսաւորների հետ ուտում եւ խմում էր։ Անառակ որդու առակը խօսեց, ցոյց տալու համար թէ

ո՛րչափ յօժար էր ընդունել եւ օրհնել ամենից ապականուած մարդիկ որ դարձի գալով ապաշխարում են։ Պատրաստ էր ներել զղջացած աւազակին։ Քրիստոսի վերջին ազօթքն իրան խաչ հանողների համար էր։ «Հայր, թողութիւն տուր դրանց, ինչու որ չեն գիտում թէ ի՛նչ են անում.»։(Ղուկ. ԻԳ. 34)։

Համառօտ կերպով յիշեցինք Քրիստոսի գերազանց յատկութիւններից ոմանք. հիմա պիտի ցոյց տանք թէ Քրիստոս ոչ միայն գերազանց յատկութեան տէր էր, այլ եւ բոլորովին կատարեալ էր բարոյականի կողմանէ։

1. Քրիստոս կատարեալ էր իր բոլոր յատկութիւնների մէջ ուրիշ մարդոց հետ։

Աւետարանները նկարագրում են Քրիստոսի վարմունքը մարդկային կեանքի գրէթէ բոլոր յարաբերութիւնների մէջ։ Քրիստոս շատ բաներ խօսեց, եւ շատ բաներ գործեց. ամեն տեսակ մարդոց հետ տեսնուեցաւ, բարեկամների եւ թշնամիների, հարուստների եւ աքլատների, գիտունների եւ ապէտների, բարիների եւ չարների հետ, բայց ամեն անգամ ասաց եւ արաւ ինչ որ վայելչագոյն եւ լաւագոյն էր։ Քրիստոս միշտ համբերութեամբ սովորեցնում էր նրանց որ փափաքում էին անկեղծութեամբ սովորել, իսկ նորանք որ ջանում էին նրա խօսքը որոգայթի մէջ ձգել՝ խայտառակվում էին։ Կարօտեալներին օգնում էր զբաւարթութեամբ։ Ո՛րչափ եւ յոգնած լինէր չէր զլանում իր օգնութիւնն նրան որ խնդրում էր։ Խրատում եւ յանդիմանում էր նրանց որ յարատեւում էին մեղքի մէջ. բայց եւ այնպէս ողբում էր նրանց կորստեան վրայ (Ղուկ. ԺԹ. 41)։ Տառապեալներին

կարեկից էր լինում եւ բոլոր ծանրաբեռնուածներին հրաւիրում էր իրան մօտ գալ որ հանգիստ տանեն։ Տգէտներին խոստանում էր տալ իմաստութիւն, տըկարներին զօրութիւն, ապաշխարողներին թողութիւն եւ յաւիտենական կեանք նրանց որ սրտանց ընդունում-էին Քրիստոսին։ Իր անձի հոգը չէր քաշում այլ ինքն իրան նուիրել էր բոլորովին մարդկային մեղաւորաց ազգին։ Միշտ նպաստում էր ուրիշներին, մինչ ինքն իր գլուխն անգամ դնելու տեղ չ'ունէր։ Իր սքանչելագործ զօրութիւնը դուրս չէր ածում երբէք իր պէտքերին եւ զուարճութեանը համար, այլ միշտ ուրիշների օգտին։ Նախատինք, յանդիմանութիւն եւ չարչարանք համբերութեամբ կրելուց յետոյ ինքն իրան մատնեց մահի «արդարը անարդարներին վրայ։»

Քրիստոս այնպէս սիրեց մարդիկը ինչպէս մէկը սիրած չէր նրանց։ Մարդիկ սիրում են նրանց որ իրանց ընտանիքից կամ ցեղից կամ ազգից են, բայց Յիսուս սիրեց նրանց որ ոչ նրա ազգից ոչ նրա ցեղից եւ ոչ էլ նրա ընտանիքից էին։ Յիսուս սիրեց բոլոր մարդիկ առանց խտրելու ազգ կամ ցեղ։ Ուրիշները սիրում են ազնիւ, խոնարհ եւ առաքինի մարդիկ, բայց Յիսուս սիրեց նաեւ մեղաւորները։ Սյլք սիրում են իրանց բարեկամները, բայց Յիսուս սիրեց նաեւ իր թշնամիները։ Շատերը սիրում են իրանց ընկերները աչառութեամբ, նրանց թերութիւնները ծածկելով, եւ մոլութիւններն անմեղադրելի անելով, բայց Յիսուս սիրեց մարդիկ անկեղծ սիրով, ոչ նրանց թերութիւնները ծածկելով ոչ էլ նրանց չար գործքերն արդարացնելով։ Ընդհակառակն, յայտնեց նրանց իրանց մեղքերը եւ խստութեամբ յանդիմանեց նրանց որպէս զի ազատուէին այն մեղքերից։ Սյլք սիրում են բարեկամները այնչափ որ յանձն են առնում նրանց սիրոյն համար նիւթական մի բան զոհել, բայց Յիսուս այնպէս սիրեց իր թշնամիները որ կեանքը տուաւ նրանց համար։

Այսպէս Յիսուս կատարեալ էր իր բոլոր յարաբերութիւնների մէջ դէպի մարդիկ, վասն զ' նրա սէրը մարդոց համար կատարեալ էր։

2. Յիսուս կատարեալ էր իր բոլոր յարաբերութիւնների մէջ դէպի Հայր Աստուած։

Նրա հնազանդութիւնն առ Աստուած կատարեալ էր։ Հնազանդ էր ոչ միայն մանաւոր բանի մէջ, այլ ամեն բանի մէջ, ի՛նչ որ ասում էր այնէլ անում էր։ Երբէք չտարակուսուեց հնազանդելու, թէպէտ հնազանդութեան չափը դէպի Գեթսեմանի եւ դէպի Գողգոթա էր տանում։

Յիսուսի այս կատարեալ հնազանդութիւնը յառաջ էր գալիս նրա կատարեալ սէրից առ Հայր Աստուած, եւ արդարեւ նրա դերազանց սէրն առ Հայրն էր որ յառաջ էր բերում նրա զարմանալի սէրն առ մարդիկ։

Յիսուս Քրիստոս արդարեւ կատարեալ էր, վասնզի առ Աստուած եւ առ մարդիկ կատարեալ սէրը նրա մէջ էր գտնվում, եւ վասն զի նրա բոլոր կեանքի մէջ նոյն սէրը յայտնուեցաւ արդեամբ։

Ահա այսպէս էր Քրիստոս Աւետարանների նկարագրութեան համեմատ։ Նրա բարքի եւ վարքի մէջ ի՞նչ թերութիւն կարող է գտնուել, կամ մանաւանդ ի՞նչ

կատարելութիւն է պակաս։ Միթէ նրա բարքն ու վարքը կատարեալ չէ՞ն։ Կարող է մէկը ասել թէ աւետարանիչները հնարեցին Յիսուսի կեանքի պատմութիւնը։ Այնպիսոյն կ'յիշեցնենք այս զօրաւոր եւ անհերքելի ապացոյցը թէ աւետարանիչներն արժանահաւատ վկաներ են։ Այնպիսոյն կարող ենք տալ նաեւ անհաւատ Բուսոյի այս պատասխանը. «Աւելի դիւրին է հաւատալ թէ Քրիստոսի պէս մի անձ ապրեցաւ, քան հաւատալ թէ չորս մարդիկ միաբանելով Յիսուսի պատմութեան պէս մի պատմութիւն չի՛նեցին»։ Մինչեւ ցարդ մի պատմիչ նկարագրած եւ մի վիպասան երեւակայած չէ մի այնպիսի մարդի նկարագիրը։

Դիտողութեան արժանի է նաեւ այն կերպը որով աւետարանիչները նկարագրում Յիսուսի վարքը։ Աւետարանիչները ոչ թէ չատ առաքինութիւններ են յիշում, եւ ապա հաստատում թէ Քրիստոս այն առաքինութիւնների տէր էր։ Աւետարանիչները Յիսուսի կատարելութիւնները ուրիշ կերպով չեն յայտնում եթէ ոչ յիշելով ինչ որ Յիսուս խօսեց գործեց։ Բոլորովին անհաւատալի չէ՞ թէ Մատթէոս որ մաքսաւոր էր, եւ Յովհաննէս որ ձկնորս էր, երկուսն էլ անուս մարդիկ, կարող եղան ստեղծել մի այնպիսի վարուց նկարագիր որի վրայ հիացաւ 1,800 տարի բոլոր քաղաքակիրթ աշխարհ։ Արդի անհաւատները ընդունում են թէ այս անհաւատալի է։ Նոյն իսկ Շարաուս ընդունում է թէ Յիսուսի վարքի պատմութիւնը բաց ի հրաշքներից, ճիշտ այնպէս էր ինչպէս նկարագրում են աւետարանիչները։

Կարո՞ղ է մէկը ասել թէ, եթէ ընդունենք իսկ

Քրիստոսի նկարագիրն Աւետարաններին համեմատ իբրեւ հաւատարմութեան արժանի, դարձեալ իրաւունք չունինք նրանից հետեւացնել թէ արդարեւ Յիսուս կատարեալ մարդ էր։ Այնպիսոյն կ'պատասխանենք թէ Յիսուս Քրիստոս ամենից նշանաւոր անձն է պատմութեան մէջ։ Քան ուրիշ որ եւ իցէ մարդ աւելի գրաւած է աշխարհի ուշադրութիւնը։ Հարիւրաւոր հատոր գրքեր գրուած են ի նպաստ եւ հակառակ Յիսուսի։ Թշնամիները սատիկ քննութեան տակ են ձգած նրա բարքի եւ վարքի նկարագիրը, սակայն հակառակ այն խիստ, թշնամական եւ չատ անգամ նախապաշարուած քննադատութիւններին որ եղան երկրորդ դարուց ըսկսելով մինչեւ տասնիններորդ դար, տակաւին հազարք հազարաց եւ բիւրք բիւրաց ընդունել են նրա բարոյական կատարելութիւնը։ Գրեթէ ամեն երկրի մէջ բազմութիւններ վկայեցին թէ նրա նման մարդ չկար։ Ոչ միայն բարբարոս եւ անկիրթ մարդիկ, այլ եւ անուանի բանաստեղծների, փիլիսոփաների եւ պատմագրաց բազմութիւններ մատուցին պատիւ եւ մեծարանք նրա անհամեմատ եւ գերազանց բարոյականին։

Կարո՞ղ է մէկը ասել թէ յիշեալ կարծիքները Յիսուսի բարեկամների եւ հետեւողների կոմիակալ դատաստանն են։ Այսպէս ասողին կ'պատասխանենք թէ այն մարդոց չատերը ժամանակով թշնամի էին Յիսուսին, ուրիշ չատերն էլ ոչ ի ծննդենէ եւ ոչ դասակարգութեամբ նրա բարեկամ էին, այլ նրան բարեկամ եւ հետեւող եղան երբ համոզուեցան թէ Յիսուս արդարեւ կատարեալ մարդ էր։

Ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում ենք ոչ

թէ աստուածաբանների վկայութեանը, որոնց համար ոչ ոք կարող չէ ասել թէ նախապաշարուած էին ի նըպաստ Յիսուսի Քրիստոսի։

Բայրըն, իր բանաստեղծական մեծ ձիրքերի եւ միանգամայն զեղծ վարքի կողմանէ նշանաւոր Անգղիացին, ասում է. «Եթէ մի ժամանակ մարդ Աստուած եղաւ, կամ Աստուած՝ մարդ, Յիսուսը մարդ եւ միանգամայն Աստուած էր։»

Ֆրուդ անուանի Անգղիացի պատմիչն ասում է. «Յիսուս ամենից կատարեալ էակն է որ երբ եւ է մի ժամանակ ոտ կոխեց մեր երկրագունդի վրայ։»

Եւրոպայի ամենից երեւելի փիլիսոփաներն էլ նոյն վկայութիւնն են տուել։ Դէ Վէտտէ կոչում է Յիսուսին «անպարտաւ եւ անմեղ»։

Հէգէլ ասում է. «Յիսուս անմոռան եւ անհամեմատ կը մնայ աշխարհի պատմութեան մէջ եւ նրա վրայ միացած գտնում ենք աստուածային եւ մարդկային մեծութիւնը։»

Կարլայլ կոչում է Յիսուսին «Աստուածային մարդ։»

Ցայտնի է թէ մեծն Նաբոլիոն մարդկանց բնաւորութիւնը ճանաչելու կողմանէ երեւելի էր։ Այս անձը Սուրբ Հեղինէ կղզուն մէջ խօսակցութեան ժամանակ Յիսուսի համար ասաց. «Բայց ի Քրիստոսից ուրիշ որ եւ իցէ անձի վրայ ո՞րչափ թերութիւն եմ զրանում։ Ո՞ր մարդն է որ երբէք չ՝վարուեցաւ տեղի եւ պարագաների համեմատ, որ տեղի չ՝տուաւ ժամանակի ազդեցութեանը, եւ որ չ՝յարմարեցաւ երբէք սովորութիւններին եւ կրքերին։ Յիսուս իր կեանքի սկիզբից մինչեւ վերջը նոյն էր, միշտ միեւնոյն, վեհանձն եւ պարզ, բոլորովին հաստատուն եւ բոլորովին քաղցրաբարոյ։ Հարեւանցի խորհող միտքեր նմանութիւն են տեսնում Քրիստոսի եւ ուրիշ մարդկանց մէջ տեղ, բայց այսպիսի նմանութիւն իրօք չ՝կայ։ Հընդկաց, Չինաց, Հռոմայեցոց եւ ուրիշ ազգերի օրէնսդիրք ինձ չեն կարող զարմացնել։ Նրանց անիրաւութիւն չեմ անիլ։ Գիտեմ նրանց արժէքը եւ կը յարգեմ նրանց։ Լիկուրգոս, Նումա, Կոմիսկիոս եւ այլք մեծ մարդիկ էին, բայց նրանց եւ իմ մէջ տեղ նմանութիւն կայ։ Նրանց սակարութիւնները եւ սխալմունները ցոյց են տալիս թէ այն անձինք լոկ մարդ էին։ Բայց Յիսուս այնպէս չէ։ Նրա վրայ ասեն բան հիանալի է՝ իմ ուզածին պէս։ Նրա միտքը ապշեցնում է ինձ, եւ կամքը ամաչեցնում։ Յիսուսին ուրիշ որ եւ իցէ մահկանացուի հետ բաղդատել անհնար է։ Ես ճանաչում եմ մարդիկ եւ կ՝վկայեմ թէ Յիսուս լոկ մարդ չէր։

Արդ համառօտաբար մէջ բերենք ոմանց կարծիքներն որ խստիւ քննադատել են Քրիստոնէութիւնը, որոնք յարձակած են Քրիստոնէական եկեղեցու վրայ եւ ուրացած են Յիսուսի Քրիստոսի աստուածութիւնը։

Բուսայ, Գաղղիացի անհաւատն, ասել է. «Եթէ Սոկրատայ կեանքն եւ մահն իմաստունի կեանք ու մահ էին, Յիսուսի կեանքն ու մահը Աստուծոյ կեանքն եւ մահն են։»

Դէյոսէ, Գերմանացի փիլիսոփան, ասում է. «Մինչեւ ժամանակի լրումն, բոլոր ողջամիտ մարդիկ պիտի խոնարհին Նազովրեցի Յիսուսի առջեւ։»

Շարաուս ասում է. «Աստուծոյ ճշմարիտ որդոց մեծ

գերդաստանին մէջ առաջին տեղը պիտի տանք Յիսուսին։ Յիսուս աչքի երեւացող տեսիլներ չունեցաւ։ Աստուած նրա հետ դրսից չ'խօսեց. Աստուած նրա ներսումն էր։ Յիսուս Աստուծոյ ծոցին մէջն էր ապրում, եւ անմիջական հաղորդութիւն ունէր նրա հետ։ Ամենաբարձր աստուածագիտութիւնն որ երբ եւ է զբաղուեցաւ մարդու կուրծքի մէջ Յիսուսինն է։ Յիսուս աննման եւ պաշտելի է, որին աշխարհը ընծայել է „Որդի Աստուծոյ" տիտղոսը։»

Որովհետեւ մենք չենք կարող թերութիւնն գտնել Յիսուսի վրայ, եւ որովհետեւ քաղաքակիրթ աշխարհը գրեթէ միաձայն վկայում է թէ Յիսուսի վրայ ամենեւին յանցանք կամ թերութիւն չ'գտնուեցաւ, եւ Քրիստոսի եկեղեցու թշնամիներն անգամ ստիպուեցան խոստովանել թէ Յիսուս արդարեւ անհամեմատ եւ երկրպագելի անձ էր, պարտենք ընդունել թէ Յիսուս կատարեալ մարդ էր, եւ պարտենք քննել թէ Քրիստոսի բարոյական կատարելութիւնն ո՞րտեղից յառաջ եկաւ։ Իբրեւ ողջամիտ մարդիկ պարտենք որոնել թէ ի՞նչպէս պատահեցաւ որ Նազովրեցի Յիսուս բոլոր մահկանացուների մէջ այսպէս նշանաւոր եղաւ, որ բոլոր քաղաքակիրթ աշխարհը յարգանք եւ պատիւ է ընծայում նրան իր բարոյականի կատարելութեան համար։ Այս կատարելութեան խնդիրը լուծման կարօտ է։ Այս կատարելութիւնը որտեղից յառաջ եկաւ։ Այն դարո՞ւց որում ապրում էր Քրիստոս։ Սակայն սա անկարելի է վանդի հին մատենագրաց չատերի, զոր օրինակ Լուկիանոսի, Յոբնաղի եւ Պերսէոսի վկայութիւնները ցոյց են տալիս թէ այն դարը որում Քրիստոս ապրեց՝ երեւելի էր բարոյական ապականութեան

կողմանէ։ Որնան ասում է. «Քրիստոնէական թուականին առաջին դարուն միջոցը հին պատմութեան վատթարագոյն ժամանակներից մէկն էր։»

Քրիստոսի բարոյական կատարելութիւնը նրա ազգի՞ց յառաջ եկաւ։ Շատ յայտնի է թէ Հրեաները ամենեւին նշանաւոր չէին որ եւ իցէ առաքինութեան կողմանէ, ընդհակառակն երեւելի էին ամբարտաւանութեամբ եւ մոլեռանդութեամբ։

Քրիստոսի բարոյական կատարելութիւնը կարո՞ղ է ընծայուել Նազարեթի ազգեցութեանը, ուր սնաւ Յիսուս։ Նազարեթ գիւղ էր որի բնակիչների ագիտութիւնը եւ չարութիւնը յայտնի են այս հարցումից. «Կարելի՞ է Նազարեթից մի բարի բան լինել» (Յովհ. Ա. 46)։ Յիսուս իր կեանքի մինչեւ երեսներորդ տարին ապրեցաւ այն ապականեալ գիւղին մէջ։ Շտրաուս անգամ վկայում է թէ Քրիստոս Նազարեթ գիւղում վատ եւ ապականեալ ազդեցութեան ներքեւ սնաւ։ Ուրեմն Յիսուսի բարոյական կատարելութիւնն նրա սրտից բղխեց։ Եթէ լոկ մարդ էր, պիտի մասնակից եղած լինէր մարդկային ընդհանուր ապականութիւններին։

Յայտնի է ուրեմն, թէ այն բարոյական կատարելութիւնը որ զարերով դէպի իրան քաշեց աշխարհս մեծարանքը՝ չէր կարող լինել պտուղ այն դարուն որում ապրեցաւ Քրիստոս, չէր կարող յառաջ գալ այն ազգից, որին վերաբերում էր Քրիստոս մարմնոյ կողմանէ եւ ոչ էլ այն գիւղից՝ որ ծնուած էր։ Ուրեմն ի՞նչ բանի պիտի ընծայուի նրա բարոյական կատարելութիւնը։ Հարկաւ աստուածային ծագման պիտի ընծայուի։ Նաեւ եթէ Քրիստոս յիրաւի մարդոց մէջ միմիայն կատարեալ անձն էր, իբրեւ ճշմարիտ, եւ

հաւատարմութեան արժանի պիտի ընդունենք ինչ որ նա ասաց իրան համար։ Բոլորովին անհաւատալի է թէ այսպիսի կատարեալ եւ պաշտելի անձ աշխարհին խաբէ իր անձին եւ իր գործին նկատմամբ. եւ եթէ Յիսուս խարեբայ չէր, ապա կ'հետեւի թէ, ինչպէս յաջորդ գլխին մէջ պիտի ցոյց տանք, ի վեր էր քան կատարեալ մարդ, արդարեւ Աստուծոյ Որդի էր։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԻՍՈՒՍ ԻՐԱՆ ՀԱՄԱՐ Ո՞Վ ԱՍԱՑ ԹԷ ԷՐ.

—⊨—

Որովհետեւ Յիսուս, նրան լաւ ճանաչողների վկայութեան նայելով, անարատ էր. որովհետեւ քաղաքակիրթ աշխարհի դատաստանի համեմատ կատարելութեան տէր անձ էր. եւ որովհետեւ երեւելի անհաւատների վկայութեան համեմատ, ինչպէս են Շարաուս եւ Ռընան, անհամեմատ գերազանց եւ պաշտելի անձ էր, պարտ ենք ընդունել նրա խօսքերն իբրեւ ճշմարիտ։ Որովհետեւ գրեթէ ամեն օր համաձայն է Ռընանի այս խօսքին թէ Աստուծոյ որդոց մեծ գերդաստանին մէջ առաջին կարգը պիտի դանենք Յիսուսին, ապա պարտ ենք հետեւցնել թէ ինչ որ մի այսպիսի անձ ասել է իրան համար՝ հաւատարմութեան արժանի է։ Արդ, Քրիստոս իրան համար ո՞վ ասաց թէ էր։ Յիսուս չ'թողեց որ մարդիկ տարակուսանքի մէջ մնային իր անձին վրայ, կամ նրա բնութեան եւ ծագմանը վրայ ենթադրութիւններ անէին։ Հաստատէս եւ ուղղակի ասաց իրան համար թէ ո՛վ էր։

1. Յիսուս իրան համար ասաց թէ մարգարէներից դուշակուած Մեսիան էր։

«Գրքերը քննեցէք» ասաց. «որ դուք կարծում էք թէ նոքանցով ունիք յաւիտենական կեանք եւ նոքանք են, որ ինձ համար վկայում են։» Վասն զի եթէ դուք Մովսէսին հաւատայիք, ինձ էլ կ'հաւատայիք. քանզի նա ինձ համար գրեց» (Յովհ. Ե. 36, 46.)։ «Եւ նա ասաց նոքանց, Ով անմիտներ եւ թուլասիրտներ, հաւատալու այն բոլոր բաներին, որ մարգարէները խօսեցան։ Չէ՞ որ պէտք էր՝ որ Քրիստոսը այս չարչարանքները քաշէր եւ իր փառքը մտնէր։ Եւ սկսեց Մովսէսից եւ բոլոր մարգարէներից, մեկնում էր նոքանց ինչ որ գրքերի մէջ գրուած էր իր մասին» (Ղուկ. ԻԴ. 25—27)։ «Եւ ասաց նոքանց, Այս այն բաներն են՝ որ ձեզ հետ խօսեցի, քանի որ ձեզ հետ էի, թէ պէտք է կատարուի Մովսէսի օրէնքումն եւ մարգարէներումն եւ սաղմոսներումը բոլոր ինձ համար գրուածները» (Ղուկ. ԻԴ. 44.)։

Երբոր Յիսուս Սամարացի կնոջ հետ խօսում էր կինն ասաց նոքան. «Գիտեմ որ Մեսիան պիտի գայ, (որ Քրիստոս է կոչվում) երբոր նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ մեզ։» Յիսուսը նոքան ասաց. «Ես եմ որ քեզ հետ խօսում եմ» (Յովհ. Դ. 25, 26.)։

Որդի մարդոյ տիտղոսը Հին կտակարանին մէջ Մեսիային տրուած տիտղոսներից մին էր, ինչպէս Դան. Է. 13. համարին մէջ ասուած է. «Ես տեսնում էի գիշերուայ տեսիլքներում, եւ ահա երկնից ամպերով գալիս էր մարդու Որդոյ նման . . . . . .։ Եւ նոքան տրուեցաւ իշխանութիւն եւ պատիւ եւ թագաւորութիւն։» Յիսուս իրան սեպհականեց այս տիտղոսը կոչելով ինքն իրան Որդի մարդոյ, եւ յայտնի է նրա իմաստը հետեւեալ համարներին մէջ։ «Քահանայապետը դարձեալ նոքան հարցնում էր եւ ասում. Դո՞ւ ես Քրիստոսը՝ որդի օրհնելոյն։ Յիսուսն էլ պատասխանեց, ես եմ. եւ կը տեսնէք Որդին մարդոյ զօրութեան աջ կողմը նստած, եւ երկնքի ամպերովն եկած» (Մարկ. ԺԴ. 61, 62, Մատթ. ԻՁ. 63, 65)։ Քահանայապետը հասկանալով նրա խօսքը գոչեց ասելով, Հայհոյեց։ Հրեաներն էլ հասկացան նրա խօսքը, քանզի նրանք էլ գոչեցին թէ մահապարտ է։ (Մատ. ԻՁ. 66 – 69)։

Յիսուս հրատարակեց ինքն իրան արդարեւ Մեսիա, բայց ոչ այն Մեսիան որին Հրեաները սպասում էին թէ պիտի գար։ Հրէից մոլար կարծիքների համեմատ Մեսիան պիտի հաստատէր երկրաւոր թագաւորութիւն, բայց Յիսուս յայտնապէս ասաց թէ իր թագաւորութիւնը այս աշխարհքից չէր (Յովհ. ԺԸ 36)։ Հրեաների ակնկալութեան համեմատ Մեսիան պիտի դար Հրէից ազգն ազատելու, եւ իր աթոռը դնելով Երուսաղէմ պիտի տիրէր ուրիշ ազգերին 'ի փառս Հրէից։ Բայց Յիսուս ասաց թէ ինքն Աստուածանից ուղարկուած է, ոչ թէ Հրէից քաղաքական ազատութեանը, այլ բոլոր մարդկային ազգի հոգեւոր փրկութեանը համար։

2. Յիսուս իրան համար ասաց թէ աստանց մեղքի էր։

Յիսուս այս բանն արաւ այլ եւ այլ կերպով։ Երբէք չընդունեց թէ մեղաւոր էր։ Այս կողմանէ, այսինքն մեղքից զերծ եւ ազատ մնալու կողմանէ, գերազանց էր Յիսուս քան մարգարէները, առաքեալները եւ քան ամեն սուրբ մարդիկ բոլոր դարերի։ Մարգարէները եւ առաքեալները բոլորն էլ խոստո-

վանում են թէ անկատար եւ մեղաւոր մարդիկ էին։

Եսային տեսաւ Տէրոջը փառքը, բայց խոկոյն գոչեց անձկութեամբ. «Վա՛յ ինձ, վասն զի կորած եմ. որովհետեւ պիղծ շրթունքով մարդ եմ ես» (Ես. Զ. 5)։

Պօղոս առաքեալ իրան մեղաւորների գլուխ է կոչում (Ա. Տիմ. Ա. 15)։ Նաեւ ողբամ է ասելով «Բանզի ինչ որ գործում եմ չեմ գիտում. որովհետեւ ոչ թէ ինչ որ կամենում եմ այն եմ գործում, այլ ինչ որ ատում եմ, այն եմ գործում։ Ուրեմն գտնում եմ այդ օրէնքը, որ երբ ես կամենում եմ բարին անել. չարն իմ առջեւ կայ։ Ես խղճալի՜ մարդս. ո՞վ կ'ազատեցնէ ինձ այս մահի մարմնից» Հռոմ. Է. 15, 21, 24)։

Յովհաննէս առաքեալը ասում է. «Եթէ ասենք թէ մեղք չունինք, մեր անձերը խաբում ենք եւ ճշմարտութիւնը չ'կայ մեզանում։ Ապա թէ մեր մեղքերը խոստովանենք, հաւատարիմ է եւ արդար որ մեր մեղքերը թողէ մեզ, եւ սրբէ մեզ ամեն անիրաւութիւնից» (Ա. Յովհ. Ա. 8, 9)։

Սակայն Յիսուս երբէք չ'խոստովանեց թէ ինքն մեղաւոր էր, եւ երբէք չ'աղօթեց Աստուծուն թողել իր մեղքերը։ Բոլոր մարդոց համար ասաց թէ մեղաւոր են եւ յորդորեց նրանց ապաշխարել. բայց ինքն երբէք չ'ընդունեց թէ մեղանչած էր, կամ թէ կարօտ էր ապաշխարութեան։ Յիսուս Քրիստոս երբէք ցոյց չ'տուեց թէ մեղք է սեւնում իր վրայ։ Նաեւ յայտնապէս ասաց. «Ձեզանից ո՞վ կարող ինձ մեղաց համար յանդիմանել» (Յովհ. Ը. 46)։ Վկայեց թէ ինքն փառաւորել է Աստուծուն երկրի վրայ, եւ կատարել է Աստուածանից իրան յանձնուած գործը (Յովհ. ԺԷ. 4)։

Ասաց նաեւ թէ ինքն միայն Աստուծոյ հաճելի բաներ է ասել (Յովհ. Ը. 29)։

Յիսուս իր մեղքից զերծ լինելը հաստատեց նաեւ այն գործով որը կատարելու համար ասաց թէ եկել է այսինքն մարդկանց մեղքից ազատելու։ Եթէ մեղաւոր լինէր, ի՞նչպէս կարող էր ուրիշներին մեղքից ազատել։ Եթէ մեղքից ազատ չէր, ինքն կարօտ կ'լինէր մի փրկչի։ Բաց ի անմեղ էակից մի ուրիշի հնարաւոր չէ մեղաւորները ազատելու։

3. Յիսուս ասաց թէ կարողութիւն ունէր հրաշք գործելու։

Թէ Յիսուս իրան համար ասաց թէ կարողութիւն ունէր հրաշք գործելու ոչ ոք կարող է ուրանալ առանց ուրանալու Աւետարանի բոլոր պատմութիւնը։ Աւետարանի վկայութեան համեմատ, Յիսուս քանի որ ողորմեցնում էր ժողովուրդին, այնչափ յաճախ ասաց թէ կարողութիւն ունի հրաշք գործելու, որ կարող չենք Աւետարանի վկայութիւնը մերժել առանց մերժելու Քրիստոսին վերաբերեալ միւս բոլոր վկայութիւնները։ Յիսուս իր պաշտօնը սկսելուց յետոյ Յովհաննէս Մկրտիչ իր աշակերտներից երկուսը ուղարկեց Յիսուսին հարցնելու. «Դո՞ն ես այն որ գալու էիր, թէ ուրիշի սպասենք։ Եւ Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Գնացէք Յովհաննէսին պատմեցէք ինչ որ լսում էք եւ տեսնում էք. Կոյրերը տեսնում են, եւ կաղերը գնում են, բորոտները սրբվում են, եւ խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առնում եւ աղքատներին Աւետարան է քարոզվում» (Մատթա ԺԱ. 3, 4, 5)։

Յիսուս առաջուց շատ անգամ ասաց իր ամենից

մեծ հրաչքը, այսինքն յարութիւնը (Մարկ. Թ. 30, Ժ. 34), եւ այնպէս յայտնի արաւ այս կանխատացութիւնը որ նրա թշնամիները նոյա միտքը հասկացան (Մատթ. ԻԷ. 63)։ Յիսուս չատ անգամ յիշեց նաեւ իր հրաչալի գործքերն իրրեւ ապացոյց իր Աստուածային իշխանութեանը. Եթէ իմ Հօր գործքը չեմ գործում, մի հաւատաք ինձ. Սակայն եթէ գործում եմ, թէեւ ինձ էլ չհաւատաք, գոնէ գործքերին հաւատացէք, որ ճանաչէք եւ հաւատաք, թէ Հայրն ինձանում է եւ ես նրա մէջ» (Յովհ. Ժ. 37, 38)։ Եթէ այն գործքերը չէի գործել նորանց միջումն, որ մէկ ուրիշը չ'գործեց, մեղք չէին ունենալ. բայց հիմա տեսան էլ, եւ ատեցին ինձ էլ եւ իմ Հօրն էլ» (Յովհ. ԺԵ. 24)։

Յիսուս ասաց թէ ամեն իշխանութիւն իրան տրուեցաւ երկնքումն եւ երկրումս (Մատթ. ԻԸ. 18)։

4. Յիսուս իրան համար ասաց թէ աշխարհի լոյսն էր։

Յիսուս մի քանի ճշմարտութիւններ միայն հրատարակելու համար աշխարհ չ'եկաւ, այլ իմացրեց թէ ինքն իսկ էր ճշմարտութիւնը (Յովհ. ԺԴ. 6)։

Յիսուս մարդկանց լուսաւորելու համար միայն աշխարհ չ'եկաւ. իմացրեց նաեւ թէ ինքն աշխարհի լոյսն էր։ «Ես եմ աշխարհքի լոյսը, ով որ իմ ետեւից գայ նա խաւարումն չի գնալ, այլ կենաց լոյսն կընդունի» (Յովհ. Ը. 12.)։

Ի՞նչ խօսքեր են սրանք լոկ մարդու համար։ Երեւելի գիտուններից կամ փիլիսոփաներից ո՞ր համարձակեցաւ երբէք իրան աշխարհի լոյս կոչել։ Սոկրատ, Պղատոն եւ Արիստոտել ասացի՞ն երբէք իրանց

աշակերտներին. «Մեզ հետեւեցէ՛ք, վասն զի մենք աշխարհի լոյսն ենք»։ Ոչ։ Բայց Յիսուս ասաց «Քանի որ աշխարհքումն եմ, լոյս եմ աշխարհքի» (Յովհ. Թ. 5)։

5. Յիսուս ասաց իրան համար թէ մէկ հատ աղբիւրն էր ամենայն բարոյական գերանցութեան եւ ամեն հոգեւոր զօրութեան։

Փիլոսոս ասաց. «Կացէք ինձանում եւ ես՝ ձեզանում. ինչպէս որ ճիւղն իրանից կարող չէ պտուղ բերել, եթէ որթումը չ'մնայ, այսպէս էլ դուք՝ եթէ ինձանում չ'մնաք։ Ես որթն եմ եւ դուք՝ ճիւղերը. [նա որ ինձանում է մնում, եւ ես նորանում, նա չատ պտուղ է բերում. որովհետեւ առանց ինձ չէք կարող ոչինչ անել» (Յովհ. ԺԵ. 4, 5)։

6. Յիսուս ասաց իրան համար թէ աշխարհիս կեանքն էր։

Յիսուս ասաց. «Ես եմ կենաց հացն։ Ես եմ կենդանի հացն, որ երկինքից էջել։ Եթէ մէկն այս հացից ուտէ, յաւիտեան կ'ապրի. եւ այն հացն որ որ ես կ'տամ՝ իմ մարմինն է, որ ես նորան աշխարհքի կենաց համար կ'տամ» (Յովհ. Զ. 48, 51, 52)։ «Յիսուսն նրանց՞ ասաց. ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, Եթէ Որդոյ մարդոյ մարմինն չ'ուտէք եւ նորա արիւնն չ'խմէք, կեանք չ'ունիք Ձեր անձերումը։ Իմ մարմինը ուտողը եւ իմ արիւնը խմողը յաւիտեան կեանք ունի» (Յովհ. Զ. 54, 55)։ «Ես եմ յարութիւնը եւ կեանքը։ ինձ հաւատացողը թէ եւ մեռնի էլ, կ'ապրի, եւ ամեն ով որ կենդանի է եւ

ինձ հաւատում է յաւիտեան չի մեռնիլ. հաւատո՞ւմ ես սրան» (Յովհ. ԺԱ. 25, 26)։

7. Յիսուս իրան համար ասաց թէ դատաւոր էր աշխարհի։ Յիսուս խմացնում է թէ կրկին պիտի գայ աշխարհ հրեշտակների բազմութեամբ, թէ բոլոր ազգերը պիտի ժողվէ իր առջեւ, եւ թէ պիտի որոշէ ամեն մարդու յաւիտենական վիճակը» (Մատթ. Ի՛. 32—46, Յովհ. Ե. 22, 57)։

8. Յիսուս ասաց թէ ինքն աշխարհիս վրայ երեւալուց առաջ կար։

Յիսուս ասաց թէ ինքն է Որդին մարդոյ որ երկրնքից իջաւ (Յովհ. Գ. 13)։ Դարձեալ ասաց. «Ապա ....եթէ Որդին մարդոյ տեսնէք՝ վեր գնալիս, ուր առաջ էր» (Յովհ. Զ. 63)։ Նոյն իսկ Շարատոս ընդունում է թէ այս խօսքերը ցոյց են տալիս որ Յիսուս աշխարհի վրայ երեւելուց առաջ կար։ Յիսուս ասաց նաեւ. «Հօրից ելայ աշխարհք. դարձեալ թողում եմ աշխարհքը եւ Հօր մօտ գնում» (Յովհ. ԺԶ. 28)։ Յիսուս յիշում է այն փառքը, որը վայելում էր Հօրը մօտ աշխարհքը ստեղծուելուց առաջ (Յովհ. ԺԷ. 5։ Ասում է նաեւ թէ ինքն յաւիտենից հետէ կար։ Յիսուս ասել էր Հրեաներին. «Եթէ մէկն իմ խօսքը պահէ, նա մահ չի տեսնիլ յաւիտեան»։ Հրեաները այս խօսքին համար բարկանալով հարցրին։ «Մի թէ դու աւելի՞ մեծ ես քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ եւ մարգրէներն էլ մեռան, դու քեզ ո՞վ ես անում»։ Յիսուս նորանց ասաց. «Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ Ձեզ. Աբրահամի լինելուցն առաջ եմ ես» (Յոհ. Ը. 51, 53, 58)։

Զ'ասեց թէ Աբրահամի լինելուցն առաջ էի ես,

այլ ասաց, Աբրահամի լինելուց առաջ եմ ես։ Աբրանով հաստատում է թէ ինքն ուրիշ մարդոց պէս գոյութիւն առած չէ այլ անսկիզբն եւ անվախճան է։

9. Յիսուս ասում է թէ իրան եւ Հօրը մէջ սեղ յատուկ եւ առանձին յարաբերութիւններ կան, եւ թէ մասնաւոր մաքով Որդի Աստուծոյ է։

Երբ Փիլիպպոս Յիսուսին ասաց. Տէ՛ր, Հայրը ցոյց տուր մեզ, եւ բաւական է մեզ. Յիսուս նորան ասաց. «Այսքան ժամանակ քեզ հետ եմ, եւ ինձ չը ճանաչեցի՞ր, Փի՛լիպպոս. ինձ տեսնողը Հօրը տեսաւ. եւ դու ինչպէս ես ասում. Հայրը ցոյց տուր մեզ» (Յովհ. ԺԴ. 8, 9)։ Երբ Յուդա առաքեալը հարցրեց Յիսուսին թէ ինչպէս իրան պիտի յայտնի աշակերտներին, Յիսուս նորան պատասխանեց. եթէ մէկն ինձ սիրում է, իմ խօսքը կ'պահէ եւ իմ Հայրը կ'սիրէ նորան, եւ նորա մօտը կ'գանք եւ բնակութիւն կանենք նորա մօտ (Յովհ. ԺԴ. 23)։ Մենք, այսինքն Հայրն եւ Յիսուս նրա մօտը կ'գանք, այսինքն բնակութիւն Հօր եւ Յիսուսի։ Այսպէս Յիսուս իրան ամենից մտերիմ կերպով ընկեր է անում Հօր։

Յիսուս յայտնապէս ասում է. «Ես եւ Հայրը մէկ ենք» (Յովհ. Ժ. 30)։ Հրեաները հասկացան նրա խօսքի նշանակութիւնը, եւ քարեր վեր առին նրան քարկոծելու։ Ինչո՞ւ համար։ Վասն զի Հրէից կարծիքին համեմատ լոկ մարդ էր, բայց ինքն իրան Աստուած է անում (Յովհ. Ժ. 31—33)։ Եթէ Հրեաները ուղիղ հասկացած չ'լինէին Յիսուսի խօսքը. Յիսուս յիրաւի կ'ուզէր նրանց սխալը, բայց այնպէս չ'արեց, այլ

ընդհակառակն ասաց։ «Ապա նորան որ Հայրը սրբեց եւ ուղարկեց աշխարհք, դուք ասում է՞ք թէ հայհոյում ես, որ ասացի, թէ Աստուծոյ Որդին եմ։ Եթէ իմ Հօր գործքը չեմ գործում, մի հաւատաք ինձ. ապա եթէ գործում եմ, թէ եւ ինձ էլ չ՚հաւատաք, գոնէ գործքերին հաւատացէք, որ ճանաչէք եւ հաւատաք, թէ Հայրն ինձանումն է եւ՝ ես նորա մէջ» (Յովհ. Ժ. 36–39)։

Շատ յայտնի եւ ճշմարիտ է որ Յիսուս բռնուեցաւ, դատուեցաւ եւ դատապարտուեցաւ Հրէից ժողովրդ՚ցը, վասն զի իրան համար ասել էր՝ թէ Աստուածային է։ Հրէից ժողովի անդամները որ Յիսուսին Պիղատոսին մօտ բերին եւ նորան ասացին. «Մենք օրէնք ունինք, եւ մեր օրէնքին համեմատ՚ պէտք է մեռնի վասն զի իր անձն Աստուծոյ Որդի՝ արաւ» (Յովհ. ԺԹ. 7)։ Դատաստանի ժամանակ էլ քահանայապետը նրանց ասաց. «Երդում եմ տալիս քեզ կենդանի Աստուածովը որ մեզ ասես, թէ դո՞ւ ես Քրիստոս Աստուծոյ որդին» Մատթ. ԻԶ. 63)։ Եթէ Յիսուսի վարդապետութիւնն այս՚մասին սխալ հասկացուած լինէր, Յիսուս չուտով կ՚ուղղէր այն սխալը։ Եթէ՝ լոկ մարդ էր, մանաւանդ, ինչպէս երեւելի անհաւատները անդամ ընդունում են, սուրբ քան հազարակ մարդ, անհուն առաւելութեամբ գերազանց մի մարդ, իսկոյն կ՚ասէր Հրէից ժողովին. «Լոկ մարդ եմ ես, եւ ոչ Աստուծոյ Որդի»։ Սակայն Յիսուս պատասխանեց քահանայապետին. «Դու ասացիր. սակայն ասում եմ ձեզ, հիմիկուց յետոյ կ՚տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած» (Մատթ. ԻԶ. 64) Քահանայապետը հասկացաւ նրա խօսքը եւ իր հանդերձները պատառեց եւ ասաց թէ «Հայհոյեց» (Մատթ. ԻԶ. 65)։

10. Յիսուս բոլոր մարդկանց հրաւիրում էր որ իրան գան։

Յիսուս ազգէտներն իրան մօտ է կոչում գիտութեան, յիմարներն՝ իմաստութեան, տկարները՝ զօրութեան, մեղաւորները՝ թողութեան, եւ մահուան մօտ եղողները յաւիտենական կեանքի համար (Յովհ. Ը. 12, ԺԲ. 46, ԺԶ. 33 Գ. 14–21)։ Պատուիրում է մարդկանց թողել ամէն բան, որպէս զի իրան աշակերտ լինեն (Ղուկ. ԺԴ. 26, Մատթ. 37)։ Հրամայում է մարդկանց, որ հարկը պահանջած ժամանակ իրան համար մեռնեն (Մատթ. Ժ. 38, 39)։ Պատուիրում է ամէն մարդու իր բոլոր վստահութիւնը նրա վրայ դնել, յանձնել իրան նրա կամացը, նուիրել իրան նրա ծառայութեանը, եւ պատուել նրան ինչպէս որ պատուում են Հօրը (Մարկ. Ը. 34–38, Յովհ. Գ. 18, 36, Ե. 23)։

Արդարեւ կան Աւետարանների մէջ ուրիշ համարներ ուր Քրիստոս ցոյց է տալիս իրան իբրեւ հպատակ Հօր կամաց։ Սակայն նրա խօսքերին մէջ բնաւ հակասութիւն չ՚կայ։ Յիսուսի խօսքերից մի քանիսը վերաբերում են այն յաւիտենական եւ փառաւոր վիճակին որ ունէր Հօր մօտ, իսկ միւս խօսքերը վերաբերում են այն վիճակին՝ որ ունեցաւ երբ որ երկնային փառքը մէկ կողմ դնելով խոնարհեցաւ, եւ օրէնքին տակ լինողներին փրկելու համար օրէնքին հպատակ եղաւ։ Այս մեկնութիւնը համաձայնում է Հին եւ Նոր կտակարանի բոլոր վարդապետութիւնների հետ։

Արդ, մինչեւ հիմա համառօտաբար յիշեցինք այն պահանջումներն որ Յիսուս իրան համար արաւ։ Յիսուսի այս պահանջումներին համար ի՞նչ ասենք։ Ընդունե՞նք թէ Յիսուս արդարեւ այնպիսի մի անձ էր, ինչպէս որ իրան համար ասաց թէ էր։ Եթէ այսպէս ընդունենք, նրա աստուածութեան վերաբերեալ խնդիրն արդէն լուծուած է, եւ պարտ ենք ընդունել թէ Յիսուս արդարեւ Աստուծոյ որդի էր, մարդկային մեղապարտ ազգին համար Աստուածառաք Փրկիչ, ուստի պիտի խոստովանենք թէ Քրիստոնէութիւնն իսկապէս Աստուածանից է։ Ընդհակառակն, եթէ չենք ընդունիլ թէ Յիսուս իսկապէս էր այն ինչ որ իրան համար ասաց, պարտ ենք նրան բոլորովին մերժել։ Ի՞նչպէս կարելի է որ եւ իցէ կերպով պատուել Յիսուսին, եթէ նա անլիրաւաբար այնպիսի զերազանց պատիւներ պահանջեց իրան համար։ Ի՞նչպէս կարելի է մի չնչին պատիւ իսկ ստոյգ անել նրա, եթէ իր կարողութիւնների եւ արժանաւորութիւնների մասին կա՛մ ինքն այնպիսի սխալ բաներ ասաց, եւ կամ թողց որ ուրիշները սխալ բաներ ասեն։ Անկարելի է։ Եթէ Յիսուս լոկ մարդ էր, եւ մարդկանցից պահանջեց որ իրան պատուեն, ինչպէս պատուում են Աստուծոյն, միթէ կարո՞ղ ենք այնպիսոյն պատուել իբրեւ մէկ խոնարհին։ Չենք կարող։ Այսպիսի պարագայի մէջ մէջ պարտ ենք մերժել նրան իբրեւ վատ, խաբեբայ եւ խարդախ եւ որ եւ իցէ պատուոյ անարժան մէկը։ Եթէ նրա զարմանալի պահանջումներն անհիմն էին, կարո՞ղ ենք անհամեմատ զերազանց համարել նրան։ Եթէ այնպէս էր, պարտ ենք ասել թէ նրա յանձնապատութիւնն անհամեմատ էր։ Եթէ Յիսուս արդարեւ չէր լոյս եւ կեանք աշխարհի, եթէ Մեսիա չէր, ոչ Աստուծոյ որդի եւ ոչ աշխարհի Դատաւոր, ինչպէս ինքն ասել էր թէ էր, ապա նրա վարդապետութիւնը խաբէական, եւ նրա կեանքը նենգաստ կեղծաւորութիւն էր։ Ի՞նչպէս կարելի է մի այսպիսոյն պաշտելի անուանել։ Սակայն Իրենան եւ իր աշակերտները ստիպուած են նրան այսպէս անուանել։ Չեն կարող ուրանալ Յիսուս Քրիստոսի բարոյական վերազանցութիւնը, քանզի եթէ սա ուրանան, չեն կարող բնաւ բացատրել նրա զարմանալի բարոյական ազդեցութիւնն աշխարհի վրայ, անցեալ տասն եւ ութ դարերի մէջ։ Ստիպուած են նաեւ խոստովանիլ թէ Յիսուս արաւ այնպիսի պահանջումներ որը վերեւ յիշեցինք, քանզի պատմական փաստերն այնպէս հզօր են որ չենք կարող մերժել նրանց։ Սակայն չեն ընդունում թէ նրա պահանջումներն ճշմարիտ են, ուստի եւ ստիպուած են գովել եւ փառաւորել իբրեւ անհման եւ պաշտելի մարդ նրան, որ եթէ նրա պահանջումներն չ'ընդունենք, պիտի համարինք իբրեւ ամենից մեծ խաբեբայ մարդն որ երեւեցաւ աշխարհի վրայ։

Յիսուս Քրիստոս իր զարմանալի պահանջումներովը ստիպում է մեզ կամ ընդունել նրան իբրեւ աստուածային փրկիչ եւ կամ բոլորովին մերժել նրան իբրեւ վատ եւ խաբեբայ։ Բայց Քրիստոսին իբրեւ խաբեբայ մերժել անհնար է։

Իրենան ասում է թէ Քրիստոսի պաշտօնը պիտի չ'դադարի, թէ նրա չարչարանքն աղնուազոյն սրտեր պիտի յուզէ, թէ բոլոր դարեր պիտի հրատարակեն թէ մարդոց որդուց մէջ Յիսուսից աւելի մեծ մէկը

ծնուած չէ։ Շարունակ ասում է թէ աշխարհը բնաւ պիտի չ'մերժէ Յիսուսին։

Այս այսպէս լինելով պարտ ենք իբրեւ ճշմարիտ ընդունել ինչ որ Յիսուս ասաց իրան համար, եւ ոչ այն որ ոմանք նրա նկատմամբ երեւակայել եւ հնարել են, այլ պարտ ենք հաւատալ թէ նա է աշխարհի աստուածային Փրկիչն ինչպէս ինքն ասաց։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԷՐ.

—⁜—

Քրիստոս իրան համար ասաց թէ աշխարհքը լուսաւորելու համար երկնքից ուղարկուած աստուածային վարդապետ էր։ Քանի որ աշխարհի վրայ էր, իր հայրենիքի քաղաքներն ու գիւղերն շրջեց ժողովուրդը սովորցնելու (Մատթ. Թ. 35), եւ կեանքի վերջին պատուիրեց իր աշակերտներին որ սովորեցնեն բոլոր ազգերը՝ (Մատթ. ԻԸ. 19)։ Ուստի հաստատ գիտենալու համար թէ ո՞վ էր Յիսուս Քրիստոս, հարկ է քննել թէ ի՞նչ տեսակ վարդապետ էր եւ ի՞նչ վարդապետութիւն սովորեցրեց։ Ով որ այս նիւթը քննէ խնամով կ'համոզուի թէ Յիսուս Քրիստոս այնպէս տարբեր էր աշխարհիս ուրիշ վարդապետներից, որ արժանի է աստուածային վարդապետ անուանուելու։

1. Յիսուս տարբեր էր ուրիշ երեւելի վարդապետներից այն կերպին կ'ողմանէ որով ինքն իրան վարդապետ լինելու պատրաստեց։

Յայտնի է թէ հին ժամանակներում ամենից երեւելի վարդապետներն ի՞նչպէս պատրաստեցին իրանց

որ վարդապետ լինեն։ Նրանք ուրիշներին սովորեցնել սկսելուց առաջ տարիներ անցուցին իրանց ժամանակի ամենից երևելի վարդապետների մօտ։ Սոկրատ թերևս քան զամենայն հին վարդապետներն աւելի քիչ բան է սովորած ուրիշներից, բայց Սոկրատ նախ ներկայացաւ աշխարհին իբրև ուսանող։ Ուրիշներին սովորեցնել սկսելուց առաջ գնաց նրանց մօտ, որոնց իրանից աւելի խմաստուն էր համարում, և սերտ հաղորդակցութիւն ունէր այն ժամանակի հռչակաւոր փիլիսոփաների հետ։ Սոկրատի համար սա էլ պիտի սուած որ, Սոկրատ հանդերձեալ աշխարհին վերաբերեալ ճշմարտութիւններին հասու լինելուցը յուսատուելով, բաւականացաւ միայն այս աշխարհի վերաբերեալ ճշմարտութիւնները սովորեցնելու։

Պղատոն հրապարակաւ վարդապետել սկսելուց առաջ, ութ կամ ինը տարի աշակերտեց Սոկրատայ, և իբր տասը տարի օտար երկիրներ ման եկաւ։ Մեգարայի մէջ Եւկլիդեսի դպրոցն այցելեց, յետոյ գնաց Կիւրինէ, Եգիպտոս և Սիկիլիա, և ապա ստորին Իտալիոյ Յունական քաղաքներին մէջ սովորեց Պիւթագորեան փիլիսոփայութիւնն, և այսպէս պատրաստեց իրան ուրիշները սովորցնելու։

Արիստոտել մի կարճ ժամանակ սովորեց Փոքր Ասիայում, բայց յետոյ գնաց Աթէնք և աշակերտեց Պղատոնին, և այսպէս պատրաստեց իր վարդապետ լինելու։

Արդ, Յիսուս ի՞նչպէս պատրաստեց իրան աշխարհիս վարդապետ լինելու։ Յիսուս Հրեայ էր և Հրեաները նշանաւոր չէին ուսմամբ, և ոչ էլ ունէին մտաւոր բարձր ձիրքեր և ընդարձակ հմտութիւն ո-

բով միայն կարող էին յարմար լինել բոլոր աշխարհ ուսուցանելու։ Յիսուս մինչև այն ժամանակը որ ըսկըսեց հրապարակաւ վարդապետել՝ ապրեց Նազարէթում, որը նշանաւոր էր իր բնակիչների տգիտութեան կողմանէ, և ապացոյց կայ թէ Յիսուս, բաց ի իր մանկութեան ժամանակից, իր մնացեալ կեանքի մէջ Պաղեստինի սահմաններից դուրս չ'եկաւ։ Բայց եթէ Յիսուս ուրիշ երկիրներ էլ գացած լինէր, նրանց և ոչ մինի մէջ էլ չ'պիտի կարողանար սովորիլ այն մտաւոր վարդապետութիւններն որոնք ինքն ուսոյց, վասն զի այն բաները չէին ուսուցանվում ոչ Յունաստանում, ոչ Հռոմում և ոչ էլ Եգիպտոսում։

Այս նիւթը խնամով քննուած է, և գիտունները ընդհանրապէս չեն կարծում թէ Յիսուս Քրիստոս իր վարդապետութիւններից որ և իցէ մէկն առած է Աթէնքից, կամ Աղէքսանդրիայից, կամ Հնդկաստանից և կամ Զրադաշտայ և Կոմփուկիոսի աշակերտներից։ Նոյն իսկ Ռենան ընդունում է սա, և չ'կարողանալով մեկնել թէ ո՞ր տեղից էր Յիսուսի զարմանալի իմաստութիւնը, ասում է, բայց ոչ առանց տարակուսի, թէ գուցէ Յիսուսի վարդապետն Հիլլէլ անուն մի գիտուն Հրեայ բաբունի էր։ Տոգ Շլէգել անուն գիտնական Գերմանացին ցոյց է տուել թէ Ռենանի այս կարծիքը հաստատող պատմական մի չնչին փաստ էլ չ'կայ։ Նախ զօրաւոր ապացոյց կայ թէ Յիսուս մինչև այն ժամանակը որ սկսեց վարդապետել, իր կեանքը անցրուց Յովսեփայ գործին մէջ։ Իր վարդապետութեան առաջին տարին գնաց իր ծննդեան քաղաքը, և սկսեց ժողովանոցներում սովորեցնել։ Ժողովուրդը զարմանալով ասում էր. «Սորան ո՞ր տեղից

է այս բանները, կամ սա ի՞նչ խմաստութիւն է՝ որ արուած է սրան, որ այսպիսի զօրութիւններ էլ են լինում սրա ձեռքովը։ Չէ՞ որ սա է հիւսը՝ Մարիամի որդին, Յակոբի եւ Յովսէի եւ Յուդայի եւ Սիմոնի եղբայրը. եւ չէ՞ որ զորա քոյրերը այստեղ մեզ մօտ են. եւ նորա վրայ դայթակղում էին» (Մարկ. Զ. 2, 3, Մատթ. ԺԳ. 54—57)։ Յիսուսի զրայիները եւ ծանօթները ինչո՞ւ համար դայթակղում էին նրա վրայ։ Վասն զի նրա մանկութիւնից ի վեր նրա ճանաչելով գիտէին թէ երբէք բան «սովորած չէր» (Յովհ. Է. 15)։ Իրանց պէս հասարակ մարդ էին համարում նրան, ուստի եւ զարմանում էին նրա վարդապետութեան վրայ։ Եթէ Յիսուս արդարեւ հիւսնութիւն արած չլինէր, նրա զրայիները նրա հիւսն չէին կոչել։ Եթէ իր հայրենիքը թողած եւ ուրիշ երկիրներ գնացած լինէր բան սովորելու, նրա վերադառնալուց յետոյ ծանօթները եւ բարեկամները զարմանալով չէին ասել. «Սա ի՞նչպէս է գիտում գրքերը, առանց սովորած լինելու» (Յովհ. Է. 15)։ Սրանից կարող ենք հետեւացնել թէ Յիսուս Նազարէթում սընաւ եւ մեծացաւ։

Սակայն այն քաղաքում ոչ հռչակաւոր դպրոցներ եւ ոչ անուանի ուսուցիչներ կային։ Այնտեղ չ՝կային երեւելի մարդիկ որոնց հետ Յիսուս կարենար հաղորդակցութիւն ունենալ եւ կարենար օգտակար հրահանգներ առնել նրանցից։ Ուրեմն Յիսուս Քրիստոս առանց գրքի բայց ի Հին կտակարանից, եւ առանց երեւելի ուսուցիչների, ի՞նչպէս պատրաստուեցաւ աշխարհի վարդապետ լինելու։ Զար—մանալի՜ պատրաստութիւն։

2. Յիսուս ուրիշ վարդապետներից տարբեր էր նաեւ այն եղանակի կողմանէ որով սովորցրեց աշխարհին։

Ա. Յիսուսի վարդապետութիւնը ուրիշներից չէր, այլ բուն իսկ նրա մտքից էր բղխում։ Յիսուս ընդունում էր Հին կտակարանի վարդապետութիւններն, բայց մեկնութիւնը որը այն վարդապետութիւններին տալիս էր՝ գրիչների եւ փարիսեցիների մեկնութեանը չէր նմանում. Յիսուսին միայն յատուկ էր այն մեկնութիւնը։ Արդարեւ եթէ որոնենք հին փիլիսոփաների բոլոր գրուածների մէջ՝ կարող ենք գտնել բարոյական պատուէրներ Յիսուսի պատուէրների նման. բայց երբ՝ ոչ թէ մի քանի բարոյական պատուէրներ, այլ գլխաւոր հոգեւոր ճշմարտութիւնները որ Յիսուս սովորեցրեց՝ բաղդատենք բոլոր փիլիսոփաների գրուածների հետ, չենք կարող նրանց մէջ նմանութիւն գտնել։ Յիսուսի վարդապետութիւնների մէջ ի զուր կ՝որոնենք մարդկային ուսման եւ գիտութեան հետքեր։ Յիսուս խօսում էր իբրեւ այնպիսի ոք որ Աստուածանից եկած էր, եւ պէտք չ՝ունէր մարդկանցից բան սովորելու։

Բ. Յիսուսի վարդապետութիւնն անկախ էր իր դարուց եւ ազգից։ Ուրիշ որ եւ իցէ վարդապետ բոլորովին ազատ եղած չէ իր դարու ազդեցութիւնից, ընդհակառակն ուրիշ որ եւ իցէ վարդապետ իր դարու բարոյական եւ խմացական դաղափարների եւ կարծիքների աւելի կամ նուազ ազդեցութեան ներքեւ է գտնուել. բոլոր վարդապետների մէջ Յիսուս միակը եղաւ որ իր դարու սխալմունքների, նախապաշարումների եւ սնապաշտութիւնների մինն էլ չ՝ընդունեց։ Նոյն իսկ Սոկրատէս

մանուանից քիչ մի առաջ խնդրեց իր բարեկամներից որ իրան համար մի աքաղաղ զոհեն Ասկղեպեայ։ Սակայն աւետարանները, որ Հրէաստանի մէջ գրուեցան աւելի քան տասն եւ ութ դար առաջ, այնպէս ազատ են ամեն տեսակ նախապաշարումներից ինչպէս ներկայ դարուս փիլիսոփայական գրուածները։ Տասն եւ ութ դարերի պատմութիւնը ցոյց է տուել թէ Յիսուս Քրիստոս արդարեւ վարդապետ էր ոչ միայն իր ազգին, այլ եւ բոլոր ազգերի, ոչ միայն իր դարուն այլ եւ բոլոր դարերի։ Ուրովհետեւ այսպէս է, իրաւունք ունինք հետեւացնելու թէ թէ Յիսուսի վարդապետութիւնների աղբիւրը բարձր էր քան ազգը եւ դարը որի մէջ ապրեց նա։

Գ. Յիսուս ուրիշ վարդապետներից տարբեր էր նաեւ այս կողմանէ որ ամենաբարձր ճշմարտութիւնները սովորեցրեց ամենապարզ կերպով։ Ոչ ով չէ կարող ուրանալ թէ Յիսուս բարձր ճշմարտութիւններ սովորեցրեց, վասն զի քաղաքակիրթ աշխարհ տասն եւ ութ դարուց ի վեր սովորում է նրանց, եւ նոյն իսկ այս մեր դարուս մէջ գիտուն մարդիկ աւելի գրքեր գրեցին մեկնելու եւ լուսաւորելու Յիսուսի վարդապետութիւնները քան բոլոր Յոյն եւ Հռոմայեցի փիլիսոփաների գրուածները։ Անցեալ հարիւր տարուայ մէջ հարիւրաւոր մեկնութիւններ գրուեցան Աւետարանների վրայ, մինչեւ Պղատոնի, Արիստոտելի եւ այլոց գործքերին վերայ հազիւ թէ մեկնութիւն կ'տեսնուի։ Ինչպէս արդի Գերմանացի խմաստունը ասում է. «Յիսուսի վարդապետութիւնները կենդանի եւ յաւիտենական խօսք են»։ Բայց Յիսուս այն մեծամեծ ճշմարտութիւնները

սովորեցրեց այնպիսի պարզ կերպով, որ բոլոր ժողովուրդը կարող էր հասկանալ նրանց։ Նախնի եւ արդի փիլիսոփաներից չատերը փոյթ չ'ունին հասարակ ժողովուրդը կրթելու, բայց Յիսուս սիրում էր հասարակ ժողովուրդը, եւ քարոզում էր նրանց իր երկնային վարդապետութիւնները այնպիսի կերպով որ կարող էին հասկանալ նրանց։ Եթէ մեկը Յիսուսի սարի քարոզը կամ առակները բաղդատէ Պղատոնի եւ Արիստոտելի գրուածներին հետ՝ պիտի համոզուի թէ ինչպէս է։ Լոկ մի Նազարեթցի մարդու որ իբրեւ հիւսն մեծացաւ, ի՞նչպէս հնար էր սովորցնել այնպիսի մեծամեծ ճշմարտութիւններ որոնցով դեռ զբաղում է քաղաքակիրթ աշխարհը, մանաւանդ սովորեցնել այնպիսի պարզ կերպով որ ամեն մարդ կարող է հասկանալ նրանց։ Այս հնար էր միայն աստուածային իմաստութեան օգնութեամբ։

Դ. Յիսուս ուրիշ վարդապետներից տարբեր էր նաեւ այս կողմանէ որ վճռողաբար եւ իշխանութեամբ էր սովորեցնում։ Գիտուն մարդիկ ճշմարտութեան վրայ միայն խորհում էին, խօսում էին եւ վիճում էին, բայց Յիսուսի ճշմարտութիւնը յայտնում էր եւ հաստատում։ Ուրիշները դրութիւններ էին շինում, փաստեր էին բերում եւ հետեւութիւններ էին հանում, բայց Յիսուս ոչ դրութիւն էր ստեղծում, եւ ոչ փիլիսոփայական փաստեր էր բերում իր վարդապետութիւնները հաստատելու համար։ Յիսուս իշխանաբար էր խօսում։ Այս կողմանէ տարբերվում էր Մովսէսից եւ ուրիշ մարգարէներից։ Նրանք խօսում էին Աստուծոյ անունով, Յիսուս խօսում էր իր անունով։ Սովոր էր ասել «ճըշ-

մարխան ճշմարիտն ասում եմ ձեզ» «Լսել էք որ առաջիններին ասուեցաւ..... բայց ես ասում եմ ձեզ» (Մատթ Ե. 21—44)։ «Ժողովուրդները զարմանում էին նրա վարդապետութեան վրայ, վասն զի իշխանութիւն ունեցողի պէս էր սովորեցնում նորանց, եւ ոչ թէ դպիրների պէս» (Մատթ. Է. 28, 29)։ Ով որ անաչառաբար նկատում է այն արտաքոյ կարգի եղանակը որով Յիսուս սովորեցնում էր ժողովուրդին՝ պիտի ասէ ինչ որ ասացին նրան բռնելու համար ուղարկուած պաշտօնակալները. «Երբէք մի մարդ այսպէս չ՝խօսեց ինչպէս այս մարդը« (Յովհ. Է. 46)։

3. Վարդապետութիւններն որ Քրիստոս սովորցրեց՝ աւելի զարմանալի էին քան եղանակն որով սովորցրեց նրանց։

Մի ըստ միոջէ պիտի չ՝քննենք Յիսուսի վարդապետութիւնները, նրա գերազանց բարոյական հրահանգը, զարմանալի մեկնութիւնը որը տուաւ քաղաքային, ընկերական եւ ընտանեկան պարտականութիւնների վերաբերեալ, այլ պիտի բաւականանանք միայն ցոյց տալով այն մեծամեծ եւ հիմնական ճշմարտութիւնները որոնք սովորեցրեց Յիսուս, եւ յիշենք թէ այն ճշմարտութիւններն ինչպէս տարբեր են ուրիշ բոլոր հին խմաստունների վարդապետութիւններից։

Ա. Յիսուս Քրիստոս ուրիշ բոլոր վարդապետներից տարբեր էր սրանում որ նա միայն յայտնեց թէ ամեն մարդ պատուական է ո՛ր ազգի կամ վիճակի էլ վերաբերի։

Յիսուս սովորցրեց թէ մարդու առաւելութիւնն ու յարգը գլխաւորապէս ոչ նրա ազգութիւնից է, ոչ

աստիճանից եւ կարգից, ոչ որպիսութիւնից եւ ոչ իսկ նրա գիտութիւնից, այլ բուն նրա բնութիւնից։ Սովորեցրեց թէ մարդու արժէքը չէ կայանում նրանում որ ունի, այլ նրանում՝ որ է, եւ նրա առաւելութիւնը չէ ծագում նրա աստիճանից այլ բարքի որպիսութիւնից։ Սակայն այս ճշմարտութիւնն այն ժամանակ որոշուած չէր ոչ Երուսաղէմում, ոչ Աթէնքում եւ ոչ Հռոմում։

Հրէից դպիրները պատուում էին նրանց՝ միայն որ Հրէից ազգից էին, իբրեւ Աբրահամու որդիներ. բայց Յիսուս ասաց նրանց. «Մի սկսիք ասել ձեր միջումը մենք Աբրահամն ունինք հայր, քանզի ասում եմ ձեզ, թէ Աստուած կարող է այս քարերիցը որդիք հանել Աբրահամի համար» (Ղուկ. Գ. 8)։ Յոյները պատուում էին միայն ուսեալ եւ քաղաքակիրթ մարդկանց, իսկ արհամարհում էին ռամիկներին եւ ոգէներին, եւ փոյթ չունէին նրանց լուսաւորելու։ Բայց Յիսուս խօսքով եւ գործքով սովորեցրեց թէ մարդ որչափ եւ ռամիկ եւ անուս լինի, սակայն այնչափ մեծ յարգ ունի, որ խնամով եւ յարատեւութեամբ ջանքեր պիտի լինին նրան լուսաւորելու։ Հռոմայեցի օրէնսդիրները չէին պատուում բոլոր մարդկանց, այլ միայն Հռոմէական քաղաքացիներին. բարբարոս էին ասում բոլոր ուրիշ մարդկանց, եւ նրանց յարմար էին համարում որ միայն Հռոմայեցիներին գերի լինեն։

Երուսաղէմի, Աթէնքի եւ Հռոմայ բոլոր վարդապետների մէջ Յիսուսը միայն սովորեցրեց թէ ամեն մարդ, գերի եւ ազատ, ծառայ եւ տէր, միեւնոյն յարգն ունի։ Յիսուս առաջինը եղաւ սովորեցնելու այն մեծ ճշմարտութիւնը՝ որ այնպիսի փառաւոր ար-

գիւնք յառաջ՝ բերաւ անցեալ տասն եւ ութ դարուց մէջ. այսինքն Յիսուս առաջինը եղաւ որ սովորեցրեց թէ ամեն մարդ անպատմելի յարգ ունի, վասն զի մարդ է, վասն զի ունի մարդկային այն բնութիւնն որ սկիզբից ստեղծուեցաւ Աստուծոյ պատկերի պէս, եւ որ կարող է բարձրանալ հասնել այն աստուածային նմանութեան. ուստի եւ մարդ որչափ աղքատ եւ արգէօ՞կամ նուաստացած լինի, հարկ է որ յարատեւութեամբ ջանացուի նրան աղնուացնելու, մաքրելու եւ փրկելու համար։ Եթէ Յիսուս այս ճշմարտութիւնը միայն սովորեցրած լինէր, պէտք էր իրաւունքով պատուել նրա իբրեւ մեծագոյն բարերար մարդկային ազգի։

Բ. Յիսուս բոլոր ուրիշ վարդապետներից տարբեր էր նաեւ սրանում որ սովորեցրեց թէ՝ ինչումն է կայանում մարդկային բնութեան պատուականութիւնը։

Յիսուս չ՝արհամարեց մարմինը նրա զարմանալի կազմութիւնով, ոչ էլ միայն նրա սքանչելի ձիրքերով. այլ ուսոյց թէ մարդուս գերազանցութիւնը կայանում է ամենից առաւել նրա բարոյական եւ հոգեւոր բնութեանը մէջ։ Յիսուս եկաւ յայտնել՝ մարդոյ՝ ինչ որ պարտ էր նրանց գիտենալ, այսինքն, թէ մարդ ունի բարոյական բնութիւն։ Եկաւ յիշեցնել մարդոյ ինչ որ մարդիկ մոռանալու չէին երբէք, այսինքն՝ թէ մարդ հոգի ունի։

Երբ Քրիստոս երեւեցաւ աշխարհի վրայ, այս մեծ ճշմարտութիւնը համարեայ թէ անծանօթ էր, կամ մոռացուած էր։ Մարդիկ այնպէս զբաղուած էին հոգ տանելու իրանց մարմիններին եւ մշակել իրանց մրաքերը, որ նրանց հոգիները գրեթէ խպառ անտես

առնուած էին։ Մարդոյ մեծ մասն այնպէս անճնատուր էր եղած իրանից դուրս բաներին, որ բուն իրան վերաբերեալ բանին չատ քիչ փոյթ եւ խնամ ունէր։ Փիլիսոփաներից ոմանք արդարեւ խորհեցան հոգոյ վրայ, բայց կարող չէին հոգոյ վերաբերեալ մի որոշ գիտութիւն ստանալ, ուստի եւ նրանց վարդապետութիւնները ոչ պատուրութիւն չ՝արին ժողովրդի վրայ, որ ապրում էր այնպէս որպէս թէ հոգի չունէր։ Քրիստոս եկաւ հանել մարդիկը այս հոգեւոր անզգայութիւնից։ Եկաւ զոչելով, հոգի՛ն, հոգի՛ն։ Հռչակեց հոգոյ գերագոյն արժէքը, յայտնեց այն վտանգը որին նշանակ էր եղած հոգին, եւ մեծ հոգ անելով հարցրեց. «Ի՞նչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհքն ստանայ ու իր անձը կորցնէ. կամ ի՞նչ գին կ՝տայ մարդ իր անձը փրկելու համար» (Մատթ. ԺԶ. 26)։

Յիսուս Քրիստոս քարոզեց հոգու անմահութիւնը։ Այս նիւթին վրայ փիլիսոփաները չատ վիճաբանեցան, բայց իրանց վիճաբանութիւններովը չկարողացան իրանք իրանց համոզել, ուրեմն անկարող էին ուրիշները համոզել։

Քրիստոս յայտնեց նաեւ ուրիշ ճշմարտութիւն ոչ պակաս կարեւոր եւ զարթուցիչ, այսինքն հոգոյ պատասխանատուութիւնն առ Աստուած իր բոլոր գործերին, խօսքերին եւ խորհուրդներին համար։ Ամերիկայի երեւելի քաղաքագէտներից մինը, Դանիել Ուէբստէր, հարցնելով իր բարեկամների մինից թէ ամենից կարեւոր ճշմարտութիւն ո՞րն է, պատասխանեց. «Մարդուս պատասխանատուութիւնն առ Աստուած։ Յիսուս այս ճշմարտութիւնը սովորեցրեց չատ յատակ եւ հաստատուն

կերպով։ Միշտ ջանայ տպաւորել մարդոց միտքերին մէջ թէ տիեզերքայ վարիչը գիտէ նրանց բոլոր գործքերը, եւ քննում է նրանց ծածուկ խորհուրդները։ Սովորեցրեց թէ Աստուած դատաստանի պիտի բերէ մարդոց բոլոր գործքերը, խօսքերը եւ խորհուրդները, եւ թէ մարդոց վերջին եւ յաւիտենական վիճակը պիտի որոշուի այս դատաստանին համեմատ (Մատթ. ԺԲ. 36, Ե. 14–46)։

Գ. Քրիստոս բոլոր ուրիշ վարդապետներից տարբեր էր նաեւ սրանում որ յայտնեց երկնաւոր Հայրը աշխարհի։

Աշխարհքը այն ժամանակ Աստուծոյ վրայ ոգէտ չէր։ Բայց Աստուածը որ Յիսուս Քրիստոս յայտնեց՝ չէր Հրէից դպիրների եւ ոչ էլ Յոյն փիլիսոփաների Աստուածը։ Հրեաներն ունէին Մովսէսի եւ մարգարէների գրքերն որոնցից կարող էին տեղեկութիւն ըստանալ ճշմարիտ Աստուծոյ վրայ, բայց նրանց սխալ մեկնութիւններ էին տուած։ Նաեւ հեթանոս փիլիսոփաներից ոմանք մի քանի ճիշտ գաղափարներ էին ստացել Աստուծոյ բնութեանը եւ յատկութիւններին վրայ բայց նրանց գաղափարները շատ թերի էին, եւ ազգերն ու ցեղերը ընդհանրապէս հեթանոսական խաւարի մէջ էին, ճնշվում էին վոտթար մնապաշտութիւնների տակ։

Սոկրատ իսկ ընդունում էր այն կարծիքը թէ շատ աստուածներ կային, բայց Յիսուս յայտ ապէս ասաց թէ միայն մէկ Աստուած կայ։ Պղատոն ասաց. «Բոլոր իրերի հայրը եւ արարիչը գտնելը դիւրին չէ, եւ եթէ գտնուի, անհնար է ամենին ճանաչեցնել նրան։»

Բայց Յիսուս յայտնեց ճշմարիտ Աստուածն այնպէս պարզ կերպով որ ամեն մարդ կարող է ճանաչել նրան։

Յիսուս Հրէից դպիրներից տարբերվում էր նաեւ սրանով որ քարոզեց թէ միմիայն ճշմարիտ Աստուածը ոչ միայն Հրէից այլ եւ հեթանոսների Աստուած է, եւ ամենից պահանջում է հաղեւոր պաշտօն։

Աստուած որը Յիսուս սովորեցրեց՝ չէ նմանում ամենեին Յունաց եւ Հռոմայեցոց աստուածներին որ ոկար եւ սահմանաւոր էին իբրեւ մարդիկ, եւ նշաւակ մարդկային կրքերի։ Յիսուս բոլորովին կատարեալ Աստուածը յայտնեց աշխարհին, այն Աստուածը որ բոլորովին արժանի է բոլոր աշխարհի սիրոյն, վրս տահութեանը եւ հնազանդութեանը, այն Աստուածը որ նրան ամեն մարդու սիրտը, միտքը եւ խիղճը սիրով կարող են ընդունել։ Յիսուս յայտնեց մարդոց ճշմարտութեան, արդարութեան եւ սիրոյ Աստուածը։

Միթէ հնա՞ր էր Հրէաստանի ոգէտ մէկ գիւղի մէջ ծնած եւ մեծացած Յիսուսին, եթէ լոկ մարդ էր, գերազոյն էակին վրայ յայտնել այնպիսի գաղափարներ որ գերազանց էին քան բոլոր նախնի փիլիսոփաների գաղափարները, եւ որոնցից բարձր եւ փառաւոր գաղափարներ ստեղծել որ արդի լուսաւորուած դարս անդամ կարող եղած չէ։ Անհնար էր. եւ մենք չենք կարող բացատրել Յիսուսի զարմանալի իմաստութիւնը, եթէ ոչ իր այս խօսքովը «Հօրիցը դուրս եկայ» (Յովհ. ԺԶ. 28)։

Դ. Յիսուս ուրիշ վարդապետներից տարբերվում էր նաեւ սրանով որ պարզ կերպով յայտնեց աշխարհին այն աղբիւրը որից բղխում

են մարդոց բոլոր թշուառութիւնները եւ չարիքը։

Ամեն դարի մէջ չատերը դուրս են եկած նկարագրելու մարդկային ազգի թշուառութիւնները։ Բանաստեղծները ողբագին ոտներով նկարեցին մարդկութեան վիշտերը, երգիծաբանները ծաղրեցին մարդկային ազգի յիմարութիւնները եւ մոլութիւնները, պատմագիրները յիշեցին այն չարիքները որ անցեալ դարերի մարդիկը կրեցին, եւ քաղաքագէտներն ու բարեկարգիչները քննեցին եւ ցոյց տուին ներկայ դարուս չարիքը, բայց Յիսուս նրանց ամենից տարբերվում է սրանով, որ յայտնեց բուն ապրիւրը ոչիչ յառաջ էր գալիս բոլոր այն չարիքը։ Յիսուս թափանցեց մարդկային կեանքի եւ հասատութիւնների խորը, եւ տեսաւ թէ մարդկանց ապականող եւ կործանող չարեաց գլխաւոր ապրիւրը ոչ թէ մարդոց քաղաքական հասատութիւնների կամ ընկերական կարգագրութիւնների եւ կամ նրանց արտաքին պարագաների մէջ էր, այլ նրանց սիտերին մէջ. հարուստ եւ աղքատ, գիտուն եւ տգէտ, թագաւոր եւ հպատակ, ամեն մի մարդու սրտի մէջ էր։ Յիսուս յայտնեց նաեւ թէ այն ամեն չարիքը յառաջ են գալիս ոչ թէ նրա համար որ մարդիկ աղքատ կամ տգէտ են այլ նրա համար որ խզել են այն կապը որը նրանց միացնում էր Աստուծոյ հետ, եւ հեռացած են են նրանից որ ապրիւր է ամեն բարիքների։

Յիսուս յայտնեց նաեւ այս ահեղ ճշմարտութիւնը թէ մարդիկ ոչ միայն իրանք իրանց բաժանուած էին Աստուածանից, այլ եւ Աստուծուն ընդդիմացել էին, եւ այս պատճառաւ ենկած էին նրա արդար դատապարտութեան ներքեւ։ Յիսուսի վարդապետութեանը նայելով, կառավարութիւնները հարստահարողներ են, հպատակները՝ ապստամբ, ծնողները՝ անտանելի, որդիք՝ անհնազանդ, մարդիկ ընդհանրապէս նախանձոտ, ագահներ եւ արհամարհոտ, վատն զի մարդուս բոլոր բնութիւնն ապականուած եւ վատթարացած է։

Միթէ զարմանալի չէ՞ որ իբրու հիւսն մնացած մի երիտասարդ կարողացել էր հասկանալ ինչ որ փիլիսոփաները չէին կարողացել հասկանալ բայայայա։ Զարմանալի չէ՞ որ նա միայն կարող եղաւ տեսնել թէ մեղքն էր մի միայն ապրիւր բոլոր չարիքների որ ապականում են, ճնշում են եւ կործանում են բոլոր մարդկանց, եւ Աստուծոյ դէմ մեղքը նոյն իսկ մահ է, յաւիտենական մահ,, յաւիտենական ատելութիւն։ Մարդկային կրթութեան եւ թշուառութեան, արտաքին եւ վիշտերի պատճառին համար այս զարմանալի, մանաւանդ թէ անսուտ յայտնութիւնն արդարեւ ատուածային յայտնութիւն է։

Ե։ Յիսուս ուրիշ վարդապետներից տարբեր էր մանաւանդ սրանով, որ մարդոց յայտնեց թէ ինչպէս կարող են ազատուել իրանց մեղքերից եւ չարիքներից։ Նա մանաւանդ յայտնեց թէ ինչպէս այն չարիքների բուն իսկ պատճառը կարելի է վերցնուել մէջտեղից։ Այս մասին ամենեին չէ կարող բաղդատութիւն լինել Յիսուսի եւ ուրիշ ուրիշ հին եւ նոր վարդապետների մէջտեղ։

Յիսուս իրան համար ասաց թէ այս չարչարեալ եւ կորստեան ենթարկեալ աշխարհի ազատիչն է, թէ Աստուածանից բաժանուած մարդկային ազգը կրկին առ Աստուած պիտի դարձնէ, եւ եւ թէ միւս անգամ պիտի

միացնէ մարդիկը Աստուծոյ հետ։ Որովհետեւ մարդիկ իրանց մեղքերին պատճառաւ օտարացած էին Աստուածանից, Յիսուս Քրիստոս եկաւ մարդոց մեղքը վերցնելու եւ այսպէս նրանց հաշտեցնելու Աստուծոյ հետ։ Սովորեցրեց թէ, որովհետեւ մարդիկ ոտնակոխ էին արել Աստուծոյ արդար օրէնքը, եւ այս պատճառաւ դատապարտուած էին մահուան, նրանց տեղ ինքը պիտի կրէր պատիժը, եւ այնպէս ճանապարհ պիտի բանար որով արդար Աստուածը արդարացնէր անարդարներին։ Սովորեցրեց թէ ինքը պիտի մեռնէր փոխանակ մեղաւորների համար, որպէս զի Աստուած ներէր նրանց իրանց մեղքերը։ Սովորեցրեց թէ, որովհետեւ մարդիկ իրանց բնութեան ապականութեան պատճառաւ հոգեւորապէս մեռած էին, պիտի տար նրանց Հոգին Սուրբ, որ իւր ամենակարող զօրութեամբ կարող էր փոխել նրանց ապականուած բնութիւնը, եւ նորոգել այն արդարութիւնն, եւ այնպէս պատրաստել նրանց՝ որ Աստուծոյ հետ հաղորդակից եւ յաւիտեան երանելի լինեն։ Յիսուս յայտնեց նաեւ թէ աշխարհը ոչ իսաստութիւն ունէր եւ ոչ զօրութիւն ինքն իրան փրկելու, այլ իր ձեռքով միայն պիտի գործուէր ազատութիւն մեղքի ապականութիւնից եւ դատապարտութիւնից միանգամայն։ Իմացրեց թէ աշխարհը մեռած էր մեղքի մէջ, եւ ինքն եկած էր աշխարհին կեանք տալու իր մահուամբը։

Ահա այսպիսի վարդապետութիւններ քարոզեց Յիսուս, բայց մի ուրիշն այսպիսի վարդապետութիւններ երբէք քարոզո՞ւ էր Հռոմում կամ Ասիէնքում եւ կամ Եղիպտոսում։ Նախնի փիլիսոփաներից ո՞վ սովորեցրեց՝ այսպիսի բարձր վարդապետութիւններ իւրաքանչիւր

մարդի, բարբարոսին եւ կրթուածին, հոգու անմահութեան, պատասխանատուութեան եւ պատուակալութեանը վրայ։ Ո՞վ նրանից առաջ քարոզեց այնպիսի ճշմարտութիւններ Աստուծոյ միութեանը, հոգեղինութեանը եւ Հայրական սիրոյ վրայ։ Ո՞ւր լսուած էր առաջ այնպիսի պարզ յայտնութիւն մարդկային ազգի բոլոր չարիքների գլխաւոր աղբիւրին վրայ։ Ուրիշ ո՞վ երբէք խորհեց մի այսպիսի կատարեալ փրկութիւն չարիքներից։ Ո՞ւմ միտքն եկաւ երբէք թէ Աստուած ինքը մարդ պիտի լինէր չարչարուելու եւ մեռնելու համար մեղաւորների փոխանակ։ Ո՞վ երբէք խորհեց յառաջագոյն թէ մարդոց ապականեալ բնութիւնը կարող է նորոգուիլ եւ վերակենդանանալ Աստուծոյ հոգու միջոցով։ Արդարեւ մենք էլ պարտ ենք ասելու ինչպէս ասացին նրանք որ Յիսուսին բռնելու ուղարկուեցան. «Երբէք մի մարդ այսպէս չ'խօսեց ինչպէս այս մարդը։» (Յովհ. Է. 46)։ Պարտ ենք հարցնելու նաեւ «Ո՞ր տեղից է, սորան այս իմաստութիւնը»։

Ի՞նչպէս հնար էր Նազարէթի պէս Հրէաստանի մէկ աննշան գիւղի մէջ կրթուած մարդու վարդապետել ոչ միայն մի քանի սքանչելի բարոյական պատուէրներ, այլ եւ հոգեւոր ճշմարտութիւնների դրութիւն, ճշմարտութիւններ այնպէս կարեւոր՝ որ դարերով անդադար իրանց վրայ են դարձրած քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը, այնպէս խորին՝ որ ամենից գիտուն մարդիկ խոստովանել են թէ չեն կարող լիովին հասկանալ նրանց, եւ այնպէս ազդու՝ որ բոլոր ազգերը փոխվում են նրանց միջոցով։ Հնա՞ր էր որ այսպիսի իմաստութիւն յառաջ գար Նազարէթից։ Ոչ, երբէք հնար չէր։ Ուրեմն Քրիստոսի գերբնական իմաստութիւնը ցոյց է տալիս թէ Քրիստոս ոչ միայն մարդոյ այլ եւ Աստուծոյ որդի էր։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ.

—〓—

Յիսուս ոչ միայն ասաց իրան համար թէ որդի Աստուծոյ է, այլ եւ ասաց թէ իր գործքերը հաստատում էին իր աստուածային ծագումը։ Ուստի հարկ է քննել թէ Յիսուս արդարեւ գործե՞ց հրաշքներ։ Եթէ հրաշք չգործեց, պարտ ենք մերժել Նրա խօսքն իրրեւ սուտ, բայց եթէ գործեց, պարտ ենք ընդունել Նրա խօսքն իրրեւ ճշմարիտ։

Արդ, Յիսուս հրաշք գործե՞ց իր աստուածութիւնը հաստատելու համար։ Ողջամիտ մարդիկ ընդունում են թէ այս խնդիրը լոկ պատմական է, ուստի եւ պատմական ապացոյցներով ստուգելու է։ Արդարեւ անտեղի է առանց բաւական պատմական ապացոյցներ ունենալու պնդել թէ Յիսուս հրաշքներ գործեց։ Անտեղի է նաեւ ասել թէ Յիսուս հրաշք չը գործեց, եթէ Նրա հրաշագործութիւնը հաստատող ապացոյցներ կան։ Սակայն արդի անհաւատներից ոմանք գործում են այս անտեղութիւնը եւ չեն ուզում քննել Քրիստոսի հրաշագործութեան փաստերը։

Շարաուս ասում է. «Մենք միանգամից (այսինքն

առանց քննութեան) մերժում ենք հրաշքները իբրեւ անկարելի եւ հակառակ տիեզերքը վարող յաւտնի եւ ընդհանուր օրէնքներին»։ Այս է ահա արդի անհաւատների իմաստութիւնը։ Ուրիշ անհաւատներ որ չեն կարող ընդունել Շարաուսի յիմարութիւնը՝ տակաւին ասում են թէ հրաշքներն անհաւատալի են։

Նաեւ ուրիշ անհաւատներ ասում են թէ Յիսուսի գործերն իրօք հրաշք չէին։ Հիմա քննե՛ք համառօտապար անհաւատների այս առարկութիւնները։

Ա. Մի թէ հրաշքներն անկարելի՞ են։

Կ՚ընդունենք թէ քանի մի ենթադրութամբ հրաշքներն անկարելի են։

ա. Եթէ Աստուած չկայ, չէ կարող հրաշք լինել, վասն զի հրաշքը գերբնական ապացոյց է աստուածային զօրութեան։ Բայց եթէ աստուածային էակ չկայ, չկայ նաեւ աշխարհ որից կարենայ յառաջ գալ այնպիսի զօրութիւն։ Այս ենթադրութիւնը տակայն չէ կարող ընդունուել, քանզի կայ Աստուած։ Անդգամը միայն իր սրտին մէջ ասում է թէ Աստուած չկայ, եւ չատ քիչ մարդիկ կ՚գտնուեն որ խոստովանին թէ այս անզգամութեան տէր են։ Անթիւ եւ անհերքելի փաստեր կան թէ կայ մի արարիչ, եւ եթէ կայ արարիչ, ինչո՞ւ հրաշքներն անկարելի լինեն։ Նա որ ստեղծեց աշխարհը, պէտք է որ ազատ լինի անել ինչ որ կ՚ուզէ այն բանը որը ստեղծել է։ Ինչպէս ազատ էր երբ ստեղծեց աշխարհը, նոյնպէս պէտք է որ ազատ լինի կառավարել Նրան իր կատարեալ՝ իմաստութեան համեմատ։

Ամենամեծ յիմարութիւն է պնդել թէ Արարիչը հրաժարակ է այն բանին որ ինքը ստեղծել է, եւ թէ

ստիպուած է հպատակել այն բանի յատկութիւններին որ բոլորովին կախուած է նրա կամքից։

Յիմարութիւն է պնդել թէ Արարիչը որ ստեղծեց բոլոր մասերը որոնցից բաղկանում է աշխարհը եւ բոլոր բնական զօրութիւններն որ գործում են այն մասերի մէջ՝ չէ կարող ուղղել նրանց ներգործութիւնն իր կատարեալ իմաստութեան համեմատ։ Յայտնի է թէ մի ուրիշ բան չէ կարող սահմանափակել Աստուծոյ գործունէութիւնը, եթէ ոչ նոյն իսկ աստուածային բնութիւնը եւ նրա կատարելութիւնները։

բ. Կ՚ընդունենք սակայն թէ, թէեւ Աստուած կայ, բայց եւ այնպէս պէտք է հրաշքներն անկարելի համարուեն, եթէ կարող է ապացուցուել թէ հրաշքները հակառակ են Աստուծոյ բնութեանը եւ կատարելութիւններին, վասն զի չէ կարող ենթադրուել թէ Աստուած անում է ինչ որ հակառակ է իր կատարելութիւններին։ Կ՚ընդունենք նաեւ թէ կարելի է երեւակայել հրաշքներ որ հակառակ են աստուածային կատարելութիւններին, բայց ո՞վ կարող է ապացուցանել թէ բոլոր հրաշքները հակառակ են Աստուծոյ կատարելութիւններին։ Ոչ ոք։ Ճշմարիտ է թէ Աստուած ընդհանրապէս իր կատարելութիւնները յայտնում է բարոյական զօրութիւնների եւ օրէնքների սովորական կամ կանոնաւոր գործողութիւնով, որոնց հնազանդեցրած է նիւթական աշխարհս, բայց մեծ յանդգնութիւն է մարդոյ ասել թէ այս է միակ միջոցը որով Աստուած կարող է յայտնել ինքն իրան, նաեւ աւելի մեծ յանդգնութիւն է ասել թէ Աստուծոյ համար անպատուութիւն է իր զօրութիւնն եւ իմաստութիւնը յայտնել ուրիշ միջոցով եթէ ոչ նիւ-

թական աշխարհի սովորական օրէնքների եւ զօրութիւնների միջոցով։ Մարդոց անկարելի է ապացուցանել թէ հրաշքները՝ որ Աստուծոյ բարոյական կատարելութիւնները, եւ մանաւանդ նրա սէրն առ մարդիկ յայտնելու համար գործուած են՝ հակառակ են Աստուծոյ բնութեանը։ Ուստի եւ մարդիկ կարող չեն այս կերպով ապացուցանել թէ հրաշքներն անկարելի են։

գ. Կ՚ընդունինք նաեւ թէ եթէ հրաշքները հակառակ են Աստուծոյ յաւիտենական խորհրդին, կամ եթէ հրաշքներն այն խորհրդի իբր թէ թերութիւնները լցնելու համար պէտք է յաւելուած համարուեն, այն ժամանակ պարտ ենք մերժել հրաշքները։ Նաեւ եթէ հրաշքները նկատենք իբրեւ միջոցներ, որ Աստուած ստիպուեցաւ նրանց ձեռք առնել իր յաւիտենական խորհուրդը կատարելու, վասն զի կարող չեղաւ կատարել այն իր յառաջագոյն կարգադրած միջոցներով, այն է բնական օրէնքների եւ զօրութիւնների միջոցով, այն ժամանակ էլ չենք կարող հրաշքներն ընդունել իբրեւ կարելի, վասն զի պարտ ենք ընդունել թէ Աստուծոյ խորհուրդն բոլոր պարագաներով ի յաւիտենից կատարեալ էր։ Բայց ո՞վ կարող է ապացուցանել թէ Աստուծոյ յաւիտենական խորհրդին մէկ մասը չէր գործել բուն այն հրաշքներն որ պատմվում են Աստուածաշունչին մէջ։ Ոչ ոք։ Աստուծոյ յաւիտենական խորհրդին վրայ մենք այնչափ բան միայն կարող ենք գիտենալ որչափ Աստուած հաճեցաւ մեզ յայտնել իր խօսքին եւ գործքերին մէջ։ Եւ ինչ ապացոյց կարող ենք գտնել Աստուծոյ խօսքին եւ գործքերին մէջ թէ Աստուած ի յաւիտենից սահ-

մանուած էր բնաւ հրաչք չգործել։ Միթէ ունի՞նք մի այսպիսի ապացոյց։ Ոչ ամենեւին։

Ճշմարիտ է թէ Աստուած, իր յաւիտենական խորհրդին համեմատ, ընդհանրապէս գործում է բնական օրէնքների միջոցով, բայց ո՞ր տեղ է յայտնած թէ իր խորհուրդն երբէք ուրիշ կերպով չի գործիլ։ Ոչ ուրեք։ Ուստի եթէ Աստուած իրան համար սահման չէ դրած, ո՞վ ի զուր պիտի ջանայ նրա համար սահման դնել։ «Ո՞վ քննեց Տէրոջ հոգին, եւ իբրեւ նրա խորհրդական նորան հասկացրե՞ց» (Էս. Խ. 13)։ Եթէ Աստուած ընտրեցել է այս նիւթական աշխարհքիս աւելի ազնիւ աղտոյն աշխարհներ, այսինքն հոգեւոր էակներ, եթէ ի գործ է դրած օրէնքներ որ փառաւորագոյն են քան այն օրէնքները որոնց ենթարկուած է նիւթական աշխարհը, եթէ նրա խորհուրդն է յայտնել մի զօրութիւն որ փառաւորագոյն է քան այն զօրութիւնն որ գործում է նիւթական աշխարհի մէջ, եթէ ապականացու նիւթական աշխարհս կարդը պահելու վախճանից շատ աւելի մեծ վախճան ունի, այսինքն իմացական էակները յաւիտենական ստուգութիւնից փրկելու վախճանը. ո՞վ է մարդս որ Աստուծոյ խորհուրդին սահման դնէ եւ ասէ թէ հրաշքներն անկարելի են։ Այսպիսի մի մտածութիւն ոչ միայն ցիմարական այլ եւ ամբարշտական է։

Բ. Միթէ հրաշքներն անհաւատալի՞ են։

ա. Բոլոր հրաշքներ անհաւատալի չեն։

Եթէ հրաշքների եւ գերբնական յայտնութիւններին հաւատալը հակառակ լինէր մարդկային մտքի հիմնական օրէնքներին, հրաշքներն անհաւատալի կը լինէին. այսինքն եթէ մարդկային միտքն այնպէս

կազմուած լինէր որ ի հարկէ մերժէր ամեն տեսակ հրաշալի յայտնութիւն, այն ժամանակ հրաշքներն անհաւատալի կ'լինէին։ Մարդկային ազգի պատմութիւնը սակայն ցոյց է տալիս թէ մարդոս միտքն այնպէս կազմուած չէ։ Սակաւաթիւ անձանց կարծիքն այս մասին ինչ որ էլ լինի, ընդհանրապէս բարբարոս եւ քաղաքակիրթ ամեն ազգի մարդիկ հրաշքների հաւատացած են։ Սա յայտնապէս ցոյց է տալիս թէ մի այսպիսի հաւատք հակառակ չէ մարդկային մտքին։

Մ. Գիզոյ, երեւելի Գալիացի պատմագիրն եւ փիլիսոփան, ասում է թէ հրաշքների կամ գերբնական յայտնութիւններին հաւատալը բնական նաեւ վաղուց է եւ ընդհանուր։ Սուտ հրաշքների հաւատալն իսկ հաստատում է մարդկային մտքին այս հակումն։

Ուստի խմաստութիւն չէ մի անգամից եւ առանց հետազօտութեան մերժել բոլոր հրաշքներն իբրեւ անհաւատալի։ Եթէ բաւական ապացոյց կայ, պէտք է հաւատալ հրաշքներին, եւ որովհետեւ հնարաւոր է Աստուծոյ համար հրաշք գործել, հնարաւոր է նրա համար նաեւ հրաշքների հետ տալ ամեն անաչառ միտք համոզելու բաւական ապացոյց։ Թէ կան բաւական ապացոյց Սուրբ գրոց մէջ յիշուած հրաշքները հաստատելու, այս ուրիշ խնդիր է որ առանձին պէտք է քննուի։

բ. Բոլոր հրաշքները հաւատալի չեն։

Թէպէտ սխալուած չենք մերժել բոլոր հրաշքներն իբրեւ անհաւատալի, որանից չի հետեւիլ սակայն թէ պարտ ենք ամեն պատմուած հրաշք ընդունել իբրեւ ճշմարիտ։ Անցեալի հասարակ դէպքերն անգամ ըն-

զունուած չեն եթէ ոչ պատմական ապացոյցներով հաստատելով։ Սակայն հրաշքներն արտաքոյ կարգի դէպքեր են, ուստի եւ արտաքոյ կարգի ապացոյցներով պէտք է հաստատուին։ Այլ եւ այլ ազգերի եւ կրօնների աւանդութիւնները լի են սքանչելիքներով որոնց համար ասւում է թէ գործուած են անցեալ ժամանակներում։ Սակայն այս դարուս մէջ այն հրաշքներին եւ ոչ մինն էլ չէ ընդունվում առանց քննադատական հետազօտութեան, եւ նրանց շատերը մերժուած են իբրեւ առասպելական, եւ այս ուղիղ է։ Ոչ ոք չպիտի վախենայ այսպիսի պատմական խիստ հետազօտութիւններից, վասն զի այսպիսի հետազօտութիւնների արդիւնքն սա է միայն որ սուտ հրաշքները մերժվում են եւ ճշմարիտները բանաւոր կերպով ընդունվում են։ Թող մերժուի ամեն հրաշք որ հաստատուած չէ ըստ բաւականին պատմական ապացոյցներով։

գ. Աւետարանների մէջ յիշուած հրաշքներն հաւատալի՞ են թէ անհաւատալի։

Այս խնդիրն ապացոյցներով պէտք է լուծուի։ Եթէ այն հրաշքները հաստատելու բաւական ապացոյց կայ, ապա հաւատալի են հրաշքները, իսկ եթէ չկայ, անհաւատալի են։

Աւետարանների մէջ պատմուած հրաշքները հաստատող ապացոյցը կրկին է։ Նախ, կայ ապացոյց որ նոյն իսկ հրաշքների բնութիւնից է ծագում. երկրորդ, կայ նաեւ ապացոյց որ ծագում է հրաշքների ականատես մարդոց վկայութիւնից։

1. Այն ապացոյցը որ ծագում է նոյն իսկ հրաշքներից։

ա. Որովհետեւ հրաշքներն աստուածային կարողութեան արտաքոյ կարգի յայտնութիւններ են, պէտք է որ աստուածային յատկութիւններ ունենան, եւ Աւետարանների մէջ պատմուած հրաշքներն ունին այնպիսի յատկութիւններ։ Այն հրաշքները նշանաւոր կերպով տարբերվում են ուրիշներից որ հրաշք կոչուած են։

Որովհետեւ հրաշքներն աստուածային կարողութեան եւ իմաստութեան արտաքոյ կարգի յայտնութիւններ են, պարտ ենք հետեւացնել թէ նրանք պիտի լինին, ոչ չնչին եւ աննշան, այլ արտաքոյ կարգի պատճառների համար։ Սուրբ գրքերի մէջ պատմուած հրաշքները չգործուեցան ընդհանրապէս հասարակ պատճառների համար այսինքն լոկ մարդոց զարմանք պատճառելու կամ նրանց հետաքրքրութիւնը յագեցնելու համար, այլ գործուեցան մարդկային ազգի պատմութեան մէջ կարեւոր եւ ծանր ժամանակներում։ Հրաշքները շատ չեն Սուրբ գրոց մէջ։ Սուրբ գրոց ամեն երեսին մէջ հրաշքի պատմութիւն չկայ։ Հին ենթադրութեան ժամանակ երեւելի անձանց շատերը հրաշք չգործեցին։ Սուրբ գրոց մէջ յիշուած գրեթէ բոլոր հրաշքները գործուած են Աստուծոյ եկեղեցոյ պատմութեան հետեւեալ երեք կարեւորագոյն ժամանակներումը։

Նախ, հրաշքներ գործուեցան երբ Աստուած Մովսէսի ձեռամբ աստուածապետական կառավարութիւն հաստատեց երկրի վրայ։

Երկրորդ, հրաշքներ գործուեցան երբ Աստուծոյ

ընտրեալ ժողովուրդը, Իսրայէլացիք մատուցուած էին բոլորովին թողել ճշմարիտ Աստուծոյ պաշտօնը եւ կռապաշտութեան յարել։ Այն ժամանակ Իսրայէլի աստուածուրաց թագաւորները ջնջել էին զեւտական քահանայութիւնը, մոցրել էին սուտ աստուածների պաշտօնը, եւ շատ քիչ մարդ էր հաւատարիմ մնացած ճշմարիտ Աստուծոյն։ Այս կարեւոր ժամանակն Աստուած յայտնեց իր փառքը հրաշքներով որ գործեց, եւ սրանով համոզեց ժողովուրդը թէ ինքն է միայն կենդանի եւ ճշմարիտ Աստուած։

Երրորդ, հրաշքներ գործուեցան այն ժամանակ որի համար մարգարէները խօսել էին, եւ որում կատարուեցաւ մարդկային ազգի պատմութեան մէջ ամենից մեծ դէպքը. այսինքն այն ժամանակ որ Աստուածորդին մարդ եղաւ, եւ չարչարուեցաւ ու մեռաւ մեղքից ազատելու համար։

Այս երեք ժամանակներն էլ արտաքոյ կարգի ժամանակներ էին եւ պահանջում էին աստուածային զօրութեան եւ փառքի արտաքոյ կարգի եղանակով յայտնուելը։

Արդ, Սուրբ գրքի մէջ պատմուած հրաշքները գործուեցան ոչ աննշան պատճառների համար, ոչ մարդոց հետաքրքրութիւնը միայն յագեցնելու համար, ոչ ի պատիւ միայն այն մարդոց որոնց միջոցով գործուեցան, եւ ոչ անհաւատների կասկածութիւնները լուծելու համար, այլ գործուեցան ամենակարեւոր պարագաների մէջ եւ մարդկային ազգի ամենաբարձր օգտին համար, այսինքն երկրի վրայ աստուծոյ թագաւորութեան հաստատութեան համար։ Աստուածային կարողութեան այն արտաքոյ կարգի յայտնութիւնները

ը տեղի ունեցան վասն զի պարագաներն արտաքոյ կարգի էին, եւ այսպիսի արտաքոյ կարգի յայտնութիւնների անհրաժեշտ հարկաւորութիւն կայ։

բ. Որովհետեւ հրաշքներն արտաքոյ կարգի ապացոյցներ են Աստուծոյ կարողութեանը, պէտք է որ պատշաճ եւ վայելուչ լինեն Աստուծոյ յատկութիւններին։

Արդարեւ չէ կարող ընդունուիլ մի հրաշք որ մարդու կիրքը կամ փառասիրութիւնը յագեցնելու համար գործուած է։ Բայց Քրիստոսի հրաշքները հաւատալի են, վասն զի ամենքն էլ աստուածավայել են, այսինքն գործուած են ոչ թէ ի նպաստ մարդկային կրքերի, նախապաշարումների եւ յիմարութեան, այլ Աստուծոյ փառքը յայտնելու համար։

Նոր կտակարանի բոլոր հրաշքները բարերար նպատակով գործուած են։ բոլորն էլ հաստատում են Քրիստոսի այս խօսքը թէ եկաւ մարդիկը ոչ թէ կորցնելու այլ փրկելու։ բոլորն էլ ցոյց են տալիս այն երկնաւոր Հօրը ողորմելիքը, որ տալիս է արեգակին ծագել, անձրեւներին տեղալ, երկրին պտղաբերել առատութեամբ, այն Հօրը որ անհամար կերպով գործում է մարդկանց օգտին եւ բարիքին համար։

Աւետարաններին մէջ պատմուած հրաշքները ոչ միայն բարերար այլ եւ կրթական նպատակով են։ Նրանք գործուած են ոչ թէ մարդկանց միայն մարմնաւոր վիշտերից եւ նիւթական կասկածութիւններից ազատելու համար, այլ եւ ցոյց տալու համար թէ ինչպէս կարող է լցուիլ նրանց հոգեւոր պիտոյքը։ Հրաշքներն փառաւոր ապացոյցներ են ոչ միայն Աստուծոյ կարողութեանն, այլ եւ նրա սիրոյն եւ ողոր-

մութեանը. բոլորն էլ գործուած են յայտնելու եւ բացատրելու այն մեծ հոգեւոր փրկութիւնը որը Յիսուս եկաւ կատարել կորած մարդկային ազգին համար։

Նաեւ Քրիստոսի հրաշքները բացարձակապէս հարկաւոր էին ցոյց տալու համար նրա աստուածային ծագումը։ Քրիստոս մարդկային ազգը մեղքից ազատելու համար երեւեցաւ իբրեւ մարդ, եւ երեւոյթով ամենեւին տարբեր չէր ուրիշ մարդկանցից, բայց եւ այնպէս ասաց թէ Աստուածանից եկաւ։ Ամեն մարդ գիտէր թէ Մարիամի որդին էր, բայց Քրիստոս ասաց նաեւ թէ Աստուծոյ Որդի էր։ Արդ ինչպէս կարող էին հաւատալ մարդիկ թէ Յիսուս արդարեւ էր ինչ որ ասում էր թէ էր։ Ի՞նչ ապացոյց կարող էր տալ մարդկանց համոզելու համար։ Մարդիկ իրրեւ բանաւոր էակներ իրաւունք ունէին պահանջել նրա եւ ապացոյց թէ Քրիստոս Աստուածանից ուղարկուած էր, եւ ինքն էլ իսկ չպահանջեց որ ժողովուրդն առանց ապացոյցի ընդունէր նրա խօսքերը։ «Եթէ իմ Հօր գործը չեմ գործում, մի հաւատաք ինձ. ապա եւ թէ գործում եմ. թէեւ ինձ էլ չհաւատաք, գոնէ գործքերին հաւատացէք» (Յովհ. ժ. 37, 38)։

Ուրիշ ի՞նչ կերպով կարող էր Յիսուս ապացուցանել թէ աստուածային էր, եթէ ոչ աստուածային զօրութիւն ցոյց տալով։ Ուրիշ որեւ իցէ կերպով չէր կարող անել այս, ուստի եւ նրա հրաշքները հարկաւոր էին փրկութեան գործին կատարման համար։ Սա այսպէս լինելով ինչպէս որ հաւատալի է թէ երկնաւոր Հայրը գթաց իր կորած զաւակների վրայ, հոգաց նրանց փրկութեան միջոցը, նոյնպէս եւ հաւատալի է նաեւ թէ տուաւ մարդկանց բաւական ապա-

ցոյց նրանց համոզելու համար թէ արդարեւ ուղարկեց իր որդին մարդկային ազգի փրկութեան համար։

Սակայն այս ամենը բաւական չէր մարդկանց համոզելու, եթէ զօրաւոր ապացոյց չլինէր թէ Քրիստոս հրաշք գործեց։ Հիմա համառօտաբար քննենք երկրորդ տեսակ ապացոյցները թէ Քրիստոս հրաշք գործե՞ց։

2. Ապացոյց որ ծագում է ականատես անձանց վկայութիւնից։

ա. Բուն Քրիստոսի վկայութիւնը։

Այս վկայութիւնը համոզիչ է, նախ, վասն զի Քրիստոս չէր կարող խաբուած լինել իր հրաշագործութեան վրայ։ Քրիստոս գիտէր անտարակոյս թէ արդարեւ Ղազարոսին յարոյց մեռելներից, թէ մի քանի նկանակով հազարաւոր մարդիկ կշտացրեց, թէ կոյրերի աչքերը բացեց, ու ուրիշ հրաշքներ։ Կարելի չէ որ Քրիստոս խաբուած լինէր այս մասին, եւ իր քարոզութեան երեք տարուան միջոցին կարծէր թէ հրաշք էր գործում, մինչ իրօք բնաւ չէր գործում։ Այս բոլորովին անհաւատալի է։

Քրիստոսի վկայութիւնը համոզիչ է, երկրորդ, որովհետեւ Քրիստոս բնաւ չէր ուզում մարդկանց խաբել։ Արդէն ցոյց տրուեց Քրիստոսի կատարելութիւնը, ու տեսնուեցաւ թէ բոլոր քաղաքակիրթ աշխարհ ընդունում է Քրիստոսի բարոյական գերազանցութիւնը, եւ արդի անհաւատներն անգամ ընդունում են թէ Յիսուս իր բարոյական յատկութիւններովը գերազանց է քան թէ ամեն մարդիկ։ Ուստի անհաւատալի է, որ այնպիսի բարոյական կատարելութեան տէր մի անձ խաբէր մարդկանց, եւ պնդէր ունենալ

մի զօրութիւն, որը գիտէր թէ չունէր։ Այսպիսի մէկն անարգ խաբեբայ եղած պիտի լինէր, եւ բոլորովին պէտք էր մերժուէր աշխարքից։ Ապա ուրեմն պարտենք ընդունել Յիսուսի վկայութիւնն այս մասին, եւ ինչպէս ցոյց տուինք նախընթաց գլուխներից մէկի մէջ, Յիսուս իր կեանքում շարունակ եւ շատ անգամ ասաց թէ հրաշք գործեց, եւ թէ այս հրաշքներն ապացոյց էին նրա աստուածային ծագմանը։

բ. Յիսուսի հրաշքներն անձամբ տեսնող եւ գրի մէջ աւանդող անձանց վկայութիւնը։

Նախընթաց գլուխների մէջ ցոյց տրուեց թէ այս վկաները խոհական եւ ուղիղ անձինք էին։ Նոյն իսկ նրանց գրուածները բաւական ապացոյց են նրանց մտաւոր կարողութեանն եւ անկեղծութեանը։ Քրիստոսի Աւետարանը մարդկանց քարոզելու համար նրանց արած ջանքերը, կրած չարչարանքը եւ վնասներն ապացոյց են թէ նրանք խաբեբայ մարդիկ չէին։ Նրանց չարչարանքն ու կրած վնասները զոնէ նրանց անկեղծութիւնն են ապացուցանում։ Անհաւատալի է որ աւետարանիչները եւ առաքեալները, որ ամեն բան զոհեցին որ Քրիստոսը քարոզեն, համոզուած չլինէին թէ Քրիստոս արդարեւ գործեց այն հրաշքները որ պատմում են իրանց գրուածների մէջ։

Յայտնի է նաեւ որ այս ականատես վկաները չէին կարող խաբուած լինել Քրիստոսի հրաշքների վրայով, քանզի Քրիստոս ոչ մէկ՝ այլ շատ, ոչ մէկ տեսակ միայն՝ այլ տեսակ տեսակ հրաշքներ գործեց, եւ ոչ մէկ անգամ միայն՝ այլ երեք տարուան մէջ շատ անգամ հրաշք գործեց։ Արդ, այս ականատես

անձինք վկայում են թէ Յիսուս կոյրերին տեսնել տուաւ, խուլերին՝ լսել, կաղերին՝ գնալ ու համրներին՝ խօսել. թէ բորոտներին սրբեց, հիւանդներին բժշկեց եւ մեռելներին յարոյց. թէ կերակրեց հազարաւոր մարդիկ մի քանի նկանակով, եւ թէ մէկ խօսքով հանդարտացրեց մրրիկը։ Վկայում են թէ Յիսուս այս հրաշքները գործեց ոչ թէ մասնաւոր տեղ այլ շատ տեղեր։ Պտրտում էր, ասում են, քաղաքից քաղաք եւ գիւղից գիւղ, եւ ամեն տեղ հրաշք էր գործում։ Վկայում են թէ Յիսուս հրաշքներ գործեց ոչ առանձին տեղ, այլ հրապարակաւ, ոչ լոկ իր բարեկամների առջեւ, այլ եւ իր թշնամիների ներկայութիւնում որ կարող չեղան ուրանալ նրա հրաշագործ զօրութիւնը։ Ուստի եւ անհաւատալի է թէ առաքեալները կարող էին խաբուած լինել բոլոր այս հրաշքների մասին։

Նաեւ առաքեալների եւ աւետարանիչների գրուածները Յիսուսի այն հրաշքները գործելից քիչ ժամանակ յետոյ հրատարակուեցան բոլոր աշխարհի վրայ, մանաւանդ-այն տեղերը ուր գործուած էին այն հրաշքները։ Քրիստոսի հրաշքները պատմում են այն ժամանակի, տեղի եւ ուրիշ պարագաների որոնց մէջ գործուեցին՝ այնպիսի մանր հանգամանքով որ թշնամիները հեշտութեամբ կարող էին հերքել նրանց, եթէ նրանց պատմութիւնը սուտ եւ սխալ լինէր։

Առաքեալների եւ աւետարանիչների վկայութեան արժանահաւատութիւնը հաստատւում է նաեւ սրանով, որ ոչ ով մինչեւ հիմա չկարողացաւ ցոյց տալ թէ Քրիստոսի ձեռքով գործուած հրաշքները կարող էին գործուել բնական զօրութիւնների միջոցով։ Այժմ

գիտունները նորանոր հետազօտութիւններով ցոյց տուած են, թէ շատ բաներ որ ժամանակով հրաշալի կամ գերբնական էին համարուում՝ սոսկ բնական դէպքեր էին։ Այսպէս գիտունները մեծ ծառայութիւն արին աշխարհն ազատելով մարդկանց շատ ունայն յոյսերից եւ սնապաշտական երկիւղներից։ Սակայն գիտունները չը կարողացան երբէք ցոյց տալ թէ Քրիստոս կարողացաւ իր հրաշքները գործել բնական զօրութիւնների միջոցով։ Այժմեան գիտունները մինչեւ հիմա չեն կարողացած մի ի ծնէ կոյրին տեսնել տալ լոկ նրա աչքին դպչելով, կամ մի հիւանդ առողջացնել լոկ խօսքով, եւ կամ մի մեռել յարուցանել։ Ընդհակառակն գիտունները վկայում են թէ ամենեւին ճանաչուած չէ բնութեան մէջ մի զօրութիւն որ կարողանայ գործել այն հրաշքները որը գործեց Յիսուս։

Ընթերցողները պէտք է յիշեն նաեւ թէ նախընթաց գլուխներից ոմանց մէջ արդէն երկարօրէն քննուեց եւ ապացուցուեց թէ աւետարանիչների վկայութիւնը հերքող մի հակառակ վկայութիւն չկայ։

Արդ, երբ նկատում ենք այն ժամանակը որում գործուեցին հրաշքները, այսինքն այն ժամանակը երբ մի աստուածային Փրկիչ երեւեցաւ աշխարհի վրայ, երբ նկատում ենք հրաշքների յատկութիւնները, այսինքն երբ նկատում ենք թէ հրաշքները գործուեցին բարեբար նպատակով եւ մարդկանց կըրթութեանը համար եւ հարկաւոր էին Քրիստոսի աստուածային ծագումը հաստատելու, եւ երբ նկատում ենք այն ականատես անձանց վկայութիւնը

որոնք չէին կարող խաբուած լինել այն հրաշքների վրայով, պարտ ենք հետեւացնել թէ Քրիստոս արդարեւ գործեց այն հրաշքները որ պատմվում են աւետարանների մէջ, ուստի եւ էր ինչ որ ասաց իրան համար թէ էր, այսինքն Լոյս եւ Կեանք աշխարհի։

ԳԼՈՒԽ ԺԸ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԸ

Մի գիտուն գերմանացի Քրիստոսի գերբնական անձ լինելուն վրայ զօրեղ ապացոյցներ է հանած այն բաներից որը Քրիստոս արաւ. եւ որ կարող են կոչուել Քրիստոսի նպատակը կամ խորհուրդը եւ կամ գործը։

Այս խորհուրդն այնպէս զարմանալի էր որ անհաւատալի է թէ լոկ մի մարդ կարող է յղանալ այն, եւ մանաւանդ աւելի անհաւատալի է թէ լոկ մի մարդ, Նազովրեցի Յիսուսի վիճակն եւ պարագաներն ունենալով, կարող է յղանալ մի այնպիսի խորհուրդ։ Յիսուս իր կեանքը անցրեց մի աննշան գիւղի մէջ եւ հիւանի մօտ, եւ այնպէս յղացաւ մի խորհուրդ որ աւելի քան մեծագոյնը երեւակայած չէին երբէք աշխարհիս ամենից հռչակաւոր օրէնսդիրները, փիլիսոփաները կամ աշխարհակալները։ Ուստի ի՞նչ էր Յիսուսի այս խորհուրդը եւ գործը։

1 Յիսուս ասաց թէ մի թագաւորութիւն պիտի հիմներ որի թագաւորն ինքը պիտի լինէր։

Իր այս խորհուրդը հրատարակեց երբ պարագաներն ամենեւին նպաստաւոր չէին մի այնպիսի ձեռնարկութեան յաջողութեան համար։ Յիսուս ինքնակոչ դուրս եկաւ ասպարէզ մի այնպիսի ժամանակ երբ որ եւիցէ կերպով երեւելի եղած չէր իր հայրենակիցների մէջ։ Ժողովուրդը չէր նկատում նրան իբրեւ ազգին ներկայացուցիչը եւ չէր վստահում նրա վրայ իբրեւ ազգի ազատարարին։ Ոչ ազգային ժողովի մէջ տեղ կամ աստիճան, եւ ոչ իր իշխանութեանը տակ բանակ ունէր, եւ ոչ էլ զօրաւոր բարեկամների պաշտպանութիւնը վայելում էր, բայց եւ այնպէս ներկայացրեց իրան իբրեւ մի թագաւորութեան հիմնադիր, եւ արքայական պատիւ պահանջեց իրան համար։

2 Յիսուս հրատարակեց թէ իր թագաւորութիւնը պիտի լինի հոգեւոր թագաւորութիւն։

Յիսուս ձեռնարկեց հաստատել, ոչ թէ մի հասարակ թագաւորութիւն, այլ մի թագաւորութիւն որ պիտի տարբերուէր ուրիշ բոլոր թագաւորութիւններից որանով որ պիտի լինէր բոլորովին հոգեւոր եւ մարդոց սրտերին մէջ միայն հաստատուած։ Յիսուս պահանջեց մարդկանցից ոչ թէ արտաքին կերպով միայն ճանաչել իր իշխանութիւնը եւ արտաքուստ միայն հնազանդել իր օրէնքներին, այլ բոլորովին հրատարակուել իր կամքին։ Յիսուս յայտնեց թէ իր նպատակն էր բոլոր աշխարհի վրայ ոչ թէ քաղաքական այլ հոգեւոր վերանորոգութիւն անել. ոչ թէ նիւթական այլ բարոյական թագաւորութիւն, արդարութեան, սրբութեան եւ սիրոյ թագաւորութիւն հիմնել։ Ասաց թէ այնպէս մաքուր պիտի լինէր այն թագաւորութիւնը որ մարդկանց բարոյական բնութիւնը փոխուելու էր որպէսզի այն թագաւորութեան հպատակ լինէին մարդիկ, եւ թէ այնպէս բարձր պիտի լինէր այն թագաւորութիւնը

որ մարդկանց սիրտը բոլորովին նորոգուելու էր որպէսզի մարդիկ կարողանային մասն եւ բաժին ունենալ այն թագաւորութեան մէջ։ Միով բանիւ Յիսուս ձեռնարկեց հաստատել Աստուծոյ թագաւորութիւնը մարդկանց սրտի մէջ։ Զարմանալի՜ ձեռնարկութիւն։

3 Յիսուս ասաց թէ իր թագաւորութիւնը տիեզերական թագաւորութիւն պիտի լինէր։

Երկրորդ դարու անհաւատ փիլիսոփան կեղծաւոր տիեզերական թագաւորութեան գաղափարը ծաղրեց իբրեւ յիմարական գաղափար։ Սակայն Յիսուս ասաց թէ պիտի հաստատէր այնպիսի թագաւորութիւն, որի մէջ բոլոր մարդիկ միացած պիտի լինէին եղբայրական սիրոյ կապերով եւ ամենքը պիտի լինէին հպատակ երկնաւոր Հօրն։

Մի թէ հաւատալի՞ է որ Գալիլիայի Նազարէթ քաղաքում մեծացած լոկ մի մայդ կարողանար յղանալ այսպիսի թագաւորութեան գաղափարը, կամ ձեռնարկել իրօք հաստատել այնպիսի թագաւորութիւն, եւ ինքն իրան հրատարակել թագաւոր այն թագաւորութեանն։ Ոչ երբէք։

4 Յիսուս ասաց թէ պիտի հաստատէր ոչ միայն տիեզերական այլ եւ մշտնջենաւոր թագաւորութիւն։

Մի թէ Սղէքսանդր Մեծն երիւակայե՞ց երբէք թէ իր մահուանից յետոյ էլ կարող պիտի լինէր շարունակել երկիրներին տիրել իր զօրքի եւ զօրապետների միջոցով։ Մի թէ երբէք երիւակայե՞ց կեսար թէ պիտի լինէր մշտնջենաւոր կայսր Հռոմայ, եւ թէ

իր գերեզմանի խորքից պիտի շարունակէր կառավարել այն ապագայ դարերում։ Այժմեայ թագաւորներից մէկն, որչափ եւ զօրաւոր լինի, որչափ եւ սիրելի իր ժողովրդեան, կարո՞ղ է յուսալ թէ իր մահից յետոյ ազգը պիտի պատուէ նրան դարուց ի դար իբրեւ իրօք տիրող թագաւոր, յառաջ պիտի տանի նրա աշխարհավարութիւնը եւ պիտի պահէ նրա օրէնքները։ Չկայ երկրաւոր իշխան որ ունենայ այս յոյսը։ Սակայն Յիսուս ձեռնարկեց հաստատել մի թագաւորութիւն որ երբէք պիտի չ'ընկնէր, եւ երբէք պիտի չ'փոխուէր, այլ միշտ միեւնոյն նպատակին պիտի դիմէր, միշտ միեւնոյն օրէնքը պիտի ունենար, եւ բոլոր ապագայ դարերի մէջ իսպառ հաւատարիմ պիտի մնար Յիսուսին։ Զարմանալի՜ ձեռնարկութիւն։

5 Յիսուս ասաց թէ պիտի հիմներ, ընդարձակէր եւ յաւերժացնէր իր թագաւորութիւնը անսովոր եւ բոլորովին արտաքոյ կարգի եղանակով։

Իմացրեց թէ պիտի չգործածէր այն միջոցներից եւ ոչ մէկն որով հաստատուեցին երկրաւոր թագաւորութիւնները։ Պիտի չապաւինէր հարստութեան, եւ պիտի չը որոնէր օգնութիւն հարուստներից։ Ինքն իսկ աղքատ էր, եւ սիրով ընկերանում էր աղքատների հետ։ Նրա առաջին աշակերտներն էլ աղքատ մարդիկ էին։

Յիսուս պիտի չը որոնէր նաեւ օգնութիւն փիլիսոփաների գիտութիւնից, եւ ատենախօսների ճարտարախօսութիւնից։ Չյաճախեց փիլիսոփաների դպրոցները, ոչ էլ նրանց գործակցութիւնը խնդրեց։

Ուսուցանում էր հասարակ ժողովուրդին եւ նրանց միջից ընտրեց իր պաշտօնեաներին։

Յիսուս իր թագաւորութիւնը հաստատելու կամ տարածելու համար ոչ ինքը գործածեց սուր, ոչ էլ իր աշակերտներին թոյլ տուաւ գործածել։ Ճշմարիտ է թէ նրա հետեւողներից ոմանք երբեմն սուր առին Քրիստոնէութեան համար, բայց այսպիսիները Յիսուսի հրամանին դէմ գործած եղան։ Յիսուս ասաց. «բոլոր սուր վեր առնողները սրով պիտի կորչեն» (Մատթ. ԻՁ. 52)։ Վերջապէս Յիսուս ձեռնարկեց, հաստատել հոգեւոր թագաւորութիւն մարդկանց մտքի, սրտերի եւ խղճի մէջ, եւ ասաց թէ այն գործը պիտի կատարուէր հոգեւոր միջոցներով միայն։

6 Քրիստոսի խորհուրդը կատարեալ էր երբ առաջին անգամ այն հրատարակեց աշխարհին։

Քրիստոս չպատեց փորձ անել եւ տեսնել թէ իր խորհուրդն ինչպէս պիտի ընդունուէր աշխարհքից։ Ժամանակ ժամանակ չփոխեց այն խորհուրդը պարագաներին յարմարեցնելու համար։ Եթէ Յիսուս լոկ իմաստուն մարդ լինէր, ստուգիւ աւելի ուշադրութեամբ կը խորհէր թէ ինչպէս պիտի յայտնէր իր խորհուրդը։ Նախ, չէր խօսել այնպէս բացարձակ կերպով այն խորհուրդին վրայ, եւ իր անձը բոլորովին չէր տալ նրան։ Երկրորդ, ուշադրութեամբ կը դիտէր թէ ինչպէս է ընդունում ժողովուրդն այն խորհուրդը, եւ կը փոխէր այն, որչափ հնար էր, յարմարեցնելու համար ազգի ոգուն եւ բաղձանքներին։ Իմաստուն բարեկարգիչները միշտ մեղմ կերպով են

յառաջ գնում, նկատում են բոլոր արգելքները, յարմարում են պարագաներին, եւ ժամանակ առ ժամանակ փոխում են իրանց գործելու եղանակը։ Նապոլէոն Բոնապարդ շատ լաւ է ասում. «Ո՞ր մարդն է որ տեղի տուած չէ արգելքների. ո՞ր մարդն է որ պարագաները նկատած չէ, ժամանակի ազդեցութեան տակ երբէք. ինկած չէ, եւ սովորութեան զօրութիւնից ընկճուած չէ։» «Յիսուս միայն,» աւելացնում է Նապոլէոն, Յիսուս միայն էր միշտ միեւնոյն անհուն քաղցր, անսուն հաստատուն։»

Սրդարեւ Յիսուս տակաւ տակաւ յայտնեց իր խորհուրդը իր աշակերտներին, բայց նրա յայտնութիւնները միեւնոյն նպատակի մասերն էին որը յղացած էր սկզբից, եւ որը ամենեւին չփոխեց արգելքների պատճառով։

7 Դիտողութեան արժանի է նաեւ հանդարտ եւ վստահ ոգին որով Յիսուս իգործդրեց իր խորհուրդը։

Այս կողմանէ մանաւանդ տարբերւում է բոլոր այն մոլեռանդ մարդկանցից որ ջանացին աշխարհը տակն-ու-վրայ անել։

Քրիստոս ձեռնարկեց մի այնպիսի գործի որը դժուարին եւ մեծ, երբէք մարդու մտքից անցած չէր, բայց եւ այնպէս երբէք չճապարեց։ Ձեռնարկել էր աշխարհքը նուաճել հոգեւորապէս, բայց միշտ ունեցաւ ժամանակ վշտացածներին մխիթարելու, տգէտներին կրթելու, եւ օգնելու նրանց որ նրա ձեռնտուութիւնը խնդրում էին։ Թշնամիներից պաշարուած էր, որ ջանում էին նրա բերանից դուրս եկած խօսքերով նրան որոգայթի մէջ ձգել, եւ նրա

բարերարութիւնները ընծայում էին Բէեղզեբուղի, բայց նա իր նպատակին լիուլի կատարուելուն նկատմամբ թերեւ տարակոյս անգամ չյայտնեց։ Հանդարտութեամբ կանխաւ ասաց թէ իր թշնամիներից մահի պիտի մատնուէր, բայց եւ այնպէս կատարեալ վստահութեամբ խօսեց միանգամայն իր ապագայ թագաւորութեան վրայ։

Ընթերցողներից խնդրում ենք խորհել Յիսուսի այս խնդրի վրայ, նկատել նրա օգտակարութիւնը, ընդհանրականութիւնը եւ հոգեւոր մեծութիւնը. նկատել նաեւ այն միջոցները որոնցով ի գործ պիտի դրուէր այն խորհուրդը, եւ թէ որչափ դարեր պէտք էին նրա լիուլի կատարմանը համար, նկատել դարձեալ հանդարտութիւնը եւ վստահութիւնը որոնցով Յիսուս յառաջ տարաւ իր գործը. սրանց նկատելուց ետ թող դատեն թէ հաւատալի՞ է որ Նազարէթի մէջ ապրող լոկ մարդ կարողանար յղանալ մի այնպիսի խորհուրդ, և ներկայացնէր իրան աշխարհին այնպիսի խոնարհութեամբ ու այնպիսի համարձակութեամբ, մինչեւ իր մահուան ժամն անգամ ցոյց տար թէ վստահ էր նպատակին յաջողութեամբ գլուխ դուրս գալուն։ Այս հաւատալի՞ է։ Ոչ երբէք։

Ասվում է թէ հզան մոլեռանդ մարդիկ որ մեծամեծ գործերի ձեռք զարկեցին։ Ուղիղ է։ Բայց նրանց ձեռնարկութիւններին ունայնութիւնը միշտ յայտնի էր նրանց դատարկ խօսքերից եւ նրանց ամբարտաւանութիւնից։ Եթէ նկատենք Յիսուսի խորհուրդը միմիայն նրա վարքից, կարող ենք տարակուսել այն խորհուրդին աստուածային լինելուն համար, բայց երբ նրա գործը բաղդատենք նրա վար-

քի հանդարտութեան չափաւորութեան եւ խմաստութեան հետ, պիտի համոզուինք թէ արդարեւ գերբնական էր այն խորհուրդը, եւ արդարեւ աստուածային։

Այս համոզումն էլ աւելի զօրաւոր կը լինի, երբ կը նկատենք թէ անցեալ 1000 տարուան պատմութիւնը Յիսուսի խորհուրդի կատարման պատմութիւնն է, թէ թագաւորութիւնը որը Յիսուս խորհեց եւ ձեռնարկեց հաստատել մարդկանց սրտերում հաստատուեց արեամբ եւ այնպէս ճշդիւ, որ այս 1800 տարուան մէջ բնաւ մի զօրութիւն չը կարողացաւ եղծանել այն, եւ թէ այս թագաւորութիւնը, թէպէտ նրա թագաւորը խաչուեց 18 դար առաջ, տակաւին տարածւում է, եւ Յիսուսին սրտանց եւ ուրախութեամբ իբրեւ թագաւոր իրան սրտերին մէջ ընդունողներին թիւը դարէ ի դար աճելու վրայ է։ Քրիստոսի գործն աստուածային գործ էր, եւ եթէ այս գործը բաղդատուի անցեալ տասն եւ ութ դարերի պատմութեան հետ, յայտնի ցոյց կըտայ թէ Քրիստոս արդարեւ թագաւորաց թագաւոր էր։

ԳԼՈՒԽ ԺԹ

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՑԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Նախնթաց գլխին մէջ ցոյց տուինք թէ Քրիստոսի ձեռնարկութիւնը կամ խորհուրդն ամեն կողմանէ այնպէս տարօրինակ էր որ բուն իսկ այն ձեռնարկութեան եւ խորհուրդին մէջ գտնում ենք ապացոյց նրա գերբնական յատկութեանը համար։ Եթէ նրա խորհուրդն իսկ ապացոյց է նրա աստուածութեանը, եւս առաւել զօրաւոր ապացոյց պիտի լինի նրա խորհուրդի յաջողուելը։

Տեսնենք, նախ, միջոցներն որոնցով Յիսուս յուսամ էր կատարել իր խորհուրդը. երկրորդ, Յիսուսի խորհուրդին դէմ մաքառող զօրութիւնները. երրորդ հետեւանքը։

1. Միջոցներն որոնցով Յիսուս յուսամ էր հիմնել հոգեւոր ընդհանուր եւ յաւիտենական թագաւորութիւն։

Եթէ աւելի քան տասն եւ ութ տարի առաջ նայինք մի անգամ Յիսուսի խաչելութեան հետեւեալ օրուան վրայ, եւ տեսնենք թէ այն ժամանակ Յիսուսի գործն ինչ վիճակի մէջ էր, եւ Յիսուս ինչ միջոցներ ունէր ընդհանուր թագաւորութիւն հաստատելու մարդոց սրտերին մէջ, պիտի համոզուինք թէ երբէք մի ձեռնարկութիւն երեւեցած չէ այնպէս

անյոյս ինչպէս այն, որը Յիսուս յանձն էր առած կատարել։

Յիսուս մեռած էր, մեռած էր նախատական մահով։ Արդարեւ նրա աշակերտները կը մնային, բայց ցրուած, վհատած եւ համարեա թէ յուսահատած էր։

Թուով սակաւ էին. ուստի միթէ կարելի՞ էր որ նրանց միջոցով միլիոնաւոր մարդիկ հնազանդէին նրանց խաչուած Տիրոջը։

Հրեայ էին. ուստի եւ ի՞նչպէս կարող էին յուսալ թէ հեթանոսներն որ արհամարում էին հրեաներին, պիտի ընդունէին նրանց խօսքը։

Ազգային եկեղեցուց նզովուած հրեաներ էին, եւ այս պատճառաւ նրանց հայրենակիցները յոժար եւ պատրաստ պիտի չլինէին նրանց քարոզութիւններն ընդունելու։

Աղքատ էին. ուրեմն, ո՞րտեղից կարող էին գտնել իրանց գործը յառաջ տանելու հարկաւոր միջոցները։

Անուս էին. որտեղից եւ ի՞նչպէս կարող էին յուսալ թէ քաղաքակրթեալ աշխարհը պիտի ընդունէր նրանց վարդապետութիւնները։

Զինուորական հանճարից անմասն եւ պատերազմական միջոցներից զուրկ էին, որտեղի՞ց եւ ի՞նչպէս կարող էին յուսալ նուաճել երկրիս մեծամեծ թագաւորութիւնները։

Նրանց համար ուրիշ միջոց չկար ընդհանուր թագաւորութիւն հաստատելու, եթէ ոչ պարզապէս քարոզել խաչեալ Յիսուսը։ Ի հարկէ, աշխարհի դատաստանին համար, մեծ ձեռնարկութիւն երբէք ունեցած չէ այսպիսի անբաւական միջոցներ։ Մարդկային կարծեաց համեմատ որ եւ իցէ յոյս չկար թէ

Յիսուսի ձեռնարկութիւնը պիտի յաջողուէր, եւ այս կարծիքն առաւել եւս կը հաստատուի եթէ Քրիստոսի ձեռնարկութեան հակառակող զօրութիւններն եւս ի նկատի առնենք։

2. Քրիստոսի ձեռնարկութեան յաջողութեան դէմ մաքառող զօրութիւնները։

Եթէ աշխարհքը սպասէր Քրիստոսի նման մի փրկչի, Քրիստոսի ձեռնարկութիւնն թերեւս աւելի դիւրակը կատարուէր. բայց հրեաները սպասում էին այսպիսի՞ փրկչի։ Ոչ երբէք։ Հրեաները սպասում էին մի Մեսիայի որ պիտի նրանց ազատէր Հռոմայեցոց լուծից, պիտի հաստատէր հրէական փառաւոր թագաւորութիւն, պիտի բարձրացնէր Հրէից ազգն աւելի քան բոլոր ազգերը, եւ հրեաները պատրաստ էին ուրախութեամբ ընդունել այսպիսի փրկիչ, բայց բնաւ պատրաստ չէին իբրեւ Մեսիա ընդունել Յիսուսին, որ պատուիրեց նրանց ինչոր կայսերինն է կայսերին տալ, ասաց յայտնապէս թէ ինքը չէր եկած աշխարհային թագաւորութիւն հաստատելու, եւ հրատարակեց ինքն իրան իբրեւ բարերար եւ ազատիչ ոչ թէ միայն հրէից, այլ եւ հեթանոսների։ Հրեաները այսպիսի Մեսիայի չէին սպասում, եւ երբ Յիսուս երեւեցաւ, չէին ուզում ընդունել նրան։ Յիսուս այնպէս յայտնի կերպով յանդիմանեց հրէից գպիրների մոլոր ուսմունքն, որ նրանք պատրաստ էին, ոչ թէ պատուել նրան իբրեւ Մեսիա, այլ ամբաստանել իբրեւ հայհոյիչ։ Այնպէս խստութեամբ յանդիմանեց հրէից երեւելիների կեղծաւորութիւնն եւ ապերախտութիւնը, որ նրանք պատրաստ էին նրան,

ոչ թէ իբրեւ ատուածային փրկիչ ընդունել այլ հալածել մինչեւ ի մահ։ Յիսուս այնպէս ընդդիմացաւ Հրէից ազգային նախապաշարմունքներին, որ ազգն նրա դէմ ելաւ, եւ «խաչիր, խաչիր դորան» աղաղակեց, եւ հրեաները հակառակ կացին Յիսուսի աշակերտներին ինչպէս հակառակ էին կացել նոյն իսկ Յիսուսին։ Հրեաները չուզեցին մոլեկ անել նրանց որ քարոզում էին թէ Յիսուսը որին խաչեցին՝ Աստուածանից նրանց խոստացուած Մեսիան էր։ Պատուիրեցին նրա աշակերտներին այլեւս չքարոզել նրա անունով։ Պետրոսին եւ Յովհաննէսին բանդը դրին, եւ Ստեփաննոսին սպանեցին քարկոծելով։ Երուսաղէմի մէջ մի այնպիսի սաստիկ հալածումն վերկացրին որ Յիսուսի աշակերտներից շատերը այնտեղից փախան, եւ ուր որ էլ գնում էին՝ ազգը պատրաստ էր նրանց քարկոծել եւ սուտ ամբաստանութիւններով Հռովմայեցի կառավարիչներին զրգռել նրանց դէմ։ Գրեթէ ամեն տեղ ուր որ գնում էին, կրում էին բուռն հալածմունք, եւ շատ անգամ սպանուում էին դառն մահով։ Որովհետեւ հրէից ազգն եւ նրանց հոգեւոր գլխաւորներն մինչ այս աստիճան հակառակ էին Քրիստոսի վարդապետութեանը, ի՞նչպէս հնար էր Քրիստոսի թագաւորութեան նրանց մէջ հաստատուիլ։

Յիսուս պատուիրեց սակայն իր աշակերտներին գնալ նաեւ հեթանոսների մէջ։ Արդ, տեսնենք թէ հեթանոսները աւելի պատրա՞ստ էին ընդունելու Յիսուսին եւ նրա պաշտօնեաներին, քան հրեաները։ Արդարեւ հեթանոս աշխարհը մեծ կարօտութիւն ունէր բարոյական եւ հոգեւոր ազատչի, բայց միթէ

պատրաստ էր ընդունել Յիսուսին իբրեւ այնպիսի ազատիչ։ Մի դիտուն պատմիչ ասում է թէ հեթանոս աշխարհը այն ժամանակ երեք դասի էր բաժանուած, այսինքն՝ հասարակ ժողովուրդը, որ հաւատում էր թէ բոլոր կրօնքները ճշմարիտ էին, դիտունները՝ որ հաւատում էին թէ բոլոր կրօնքները սուտ էին, եւ իշխանութեան տէր անձինք՝ որ հաւատում էին թէ բոլոր կրօնքներն օգտակար էին կառավարութիւններին։ Եթէ Քրիստոսի Աւետարանը հրատարակէր միայն թէ մի աստուած էլ պէտք էր աւելացնել միւս աստուածների վրայ, եւ բաւականանար սովորցնել որ այն աստուածն էլ միւս աստուածների պէս պաշտուէր, Քրիստոնէութիւնը կարող էր անուանով դիւրաւ ընդունուել հասարակ ժողովուրդից, եւ թէպէտ դիտուններից լուութեամբ արհամարուէր, բայց կը պաշտպանուէր իշխանութեան տէր անձերից. ուստի եւ Սուրբ Գրքի Աստուածը կարող էր մի տեղ բռնել հեթանոսների աստուածների կարգում։ Բայց Քրիստոս հրատարակեց թէ մէկ Աստուած միայն կայ եւ մէկ Փրկիչ, եւ թէ բոլոր մարդիկ պարտ են թողուլ իրանց սուտ աստուածները եւ ճշմարիտ Աստուածը միայն պաշտել, եւ փրկութեան համար Քրիստոսին միայն ապաւինել։ Արդ, հեթանոսները պարտաստ էին թողուլ իրանց բոլոր մոլորութիւններն եւ ընդունել Յիսուսին իբրեւ մի միայն եւ ամենաբաւական Փրկիչ աշխարհի։

Յոյն եւ հռոմայեցի փիլիսոփաները պատրաստ էին իրանց վարդապետ ընդունել մի հրեայի, որ երբէք չէր տեսել նրանց հռչակաւոր դպրոցները, եւ գուցէ սովորած էլ չէր նրանց փիլիսոփայական մեծամեծ դրութիւնները։ Կիկերոն հրապարակաւ ծաղրել էր հանդերձեալ աշխարհի վարդապետութիւնը։ Յուլիոս Կեսար հռոմէական ծերակուտին մէջ յայտնապէս ասել էր թէ մահից ետ հոգին գոյութիւն չունի։ Տակիտոս ուրացել էր Աստուծոյ նախախնամութիւնը, եւ Ովիդիոս ընդունել էր էպիկուրեան անաստուածութիւնը։ Այսպիսի մարդիկ պարտ էին թողուլ իրանց բոլոր կարծիքներն, եւ Իրանց համար ընդունել բոլորովին անծանօթ հրեայի վարդապետութիւններն։ Մարդկային իմաստութեան եւ դիտութեան պարծանքն եւ գոռոզութիւնն անտարակոյս մերժել պիտի տային Յիսուսի վարդապետութիւնները։

Կամ հեթանոսների բարոյական վիճակն այնպէս էր որ ուրախութեամբ ընդունէին Քրիստոսի բարոյական վարդապետութիւնները։ Այժմեան պատմաբանները հեթանոսների բարոյական խանգարումն այնպիսի մութ գոյներով են նկարագրում ինչպէս նկարագրում է Պօղոս առաքեալը հռոմայեցոց թղթի առաջի երեք գլուխներին մէջ։ Ըստ ասում է թէ Հռոմ անառակութեան եւ անազնուութեան աղբիւր էր, եւ այս բարոյական ապականութիւնը հռոմէական կայսրութեան մայրաքաղաքին միայն յատուկ չէր, այլ ամեն դաւառ ապականած էր։ Դարձեալ Ընան ասում է թէ Քրիստոսից յետոյ առաջի դարուն կէսն էր արդարեւ հին պատմութեան վատթարագոյն ժամանակներից մին։ Մի այսպիսի ապականուած ժողովուրդ պարտաստ էր ընդունել Յիսուսին որը պատուիրում էր կարել, դէն գցել որեւ իցէ ազտեղի խորհուրդ եւ որեւիցէ զեղխութիւն։ Ոչ,

ընդհակառակն մարդկային սրտի բոլոր ցանկութիւնները պիտի միաբանէին հակառակել Քրիստոսի վարդապետութեան երկնային մաքրութեանը։

Հռոմայեցոց կառավարութիւնը պատրաստ էր ընդունել Յիսուսին իբրեւ իր թագաւորը։ Այն թագաւորութիւնն որ ինքն իրան պարծանքով աշխարհի տէր էր անուանում, եւ պարծենում էր իր մեծամեծ յաղթութիւններովը եւ տիեզերական իշխանութիւնովը՝ պատրաստ էր իբրեւ իրան հոգեւոր թագաւոր ճանաչել իր արհամարհած հպատակներից մէկը, որ իբրեւ չարագործ խաչուած էր։ Հռոմէական կառավարութիւնը կարող էր սկիզբից առ ոչինչ դրել նրա սակաւաւոր հետեւողները եւ նրանց աննշան եւ տկար լինելուն պատճառաւ չհալածել նրանց, բայց միթէ կարո՞ղ էր անտարբեր մնալ երբ Քրիստոսի հետեւողները զօրացան թուով, ու ջանացին կործանել հեթանոսների կրօնական դրութիւնը, որը կառավարութիւնը հարկաւոր էր համարում իր պաշտպանութեան համար։ Միթէ հռոմէական իշխանները պատրաստ էին ընդունել Քրիստոսի վարդապետութիւնները, որ խստիւ դատապարտում էին նրանց աղգային գոռոզութիւնը, նրանց անիրաւ յաղթութիւնները եւ անգութ զբօսանքները։ Ոչ երբէք։

Պատմութիւնը վկայում է թէ հեթանոսները աւելի պատրաստ չէին ընդունելու Քրիստոսի Աւետարանը քան թէ հրեաները։ Երբ Քրիստոսի թագաւորութիւնը հրատարակուեց հեթանոսների մէջ, եւ նրա յաջողութիւնը ճանաչուեց, սաստիկ եւ կատաղի հակառակութիւն ծագեց նրա դէմ հեթանոսների մէջ, ինչպէս ծագել էր հրեաների մէջ։ Հեթանոս աշխարհի

խմաստութիւնն իբրեւ յիմարութիւն արհամարհեց Քրիստոսի կրօնքը, եւ գիտունները դատարկաբանութիւն համարեցին այն։ Ազգականուած հեթանոսութեան բոլոր կիրքերը միացրեցին իրանց զօրութիւնները դէմ դնել նրան, եւ հռոմէական կառավարութիւնը որոշեց ջնջել այն։ Քրիստոսից յետոյ առաջի երեք դարուց մէջ Ներոն, Դոմետիանոս, Տրայիանոս, Մարկոս, Սեւերիգոս, Դեկոս, Վալերիանոս, Դիոկղետիանոս եւ ուրիշ հռոմայեցի կայսերները չատ ջանք արին խափանելու Քրիստոնէութեան ծաւալումը։ Այս կայսերների ժամանակը սոսկալի տանջանքներ հնարուեցին եւ բազմաթիւ քրիստոնեաներ կրտամահ սպանուեցան։ Հռոմէական հզօր կայսրութիւնը չատ անգամ իր բոլոր զօրութեամբ ջանաց ջնջել Քրիստոնէական հաւատքը։ Առաջի երեք տարուց մէջ Քրիստոսից յետոյ խնդիր էր թէ արդեօք քրիստոնեաները կարող պիտի լինէի՞ն այնչափ երկար ժամանակ դիմանալ որչափ ժամանակ հռոմէական կառավարութիւնը տանջում էր նրանց։

Պատմութիւնը ցոյց է տալիս թէ բոլոր աշխարհքը հակառակ էր հոգեւոր թագաւորութեանը որը հաստատելու համար ձեռնարկել էր Քրիստոս։ Այն ժամանակ հրեաները եւ հեթանոսները միաբան զօրութեամբ ընդդիմացան այս թագաւորութեան։ Ցունաց փիլիսոփաներն եւ Երուսաղէմի դպիրները միաձայն աղաղակեցին թէ յիմարութիւն էր Քրիստոսի կրօնքը։ Զեղծ հեթանոսները եւ կեղծաւոր փարիսեցիները միանգամայն հակառակեցին Յիսուսի խորհուրդի կատարմանը։ Հռոմայեցոց ծերակոյտը հաստատել էր հրեաների սինեդրիոնին վճիռը թէ քրիստոնեաների

կրոնքը պէտք է ջնջուի։ Հռոմայեցի կայսերները եւ հրեաների քահանայապետները միանգամայն պատրաստ էին իրանց բոլոր զօրութեամբն ընդդիմանալ Յիսուսի ձեռնարկութեան։ Արդ, ի՞նչպէս հնար էր Յիսուսին յաջողել այնչափ իմացական, եկեղեցական եւ քաղաքական զօրութիւնների դէմ։ Մարդկօրէն խորհելով անհնար էր։

3. Բրիստոս կարող եղա՞ւ իգործ դնել իր խորհուրդը, եւ արդեամբ հիմնել մի ընդհանուր հոգեւոր թագաւորութիւն։

Կարող եղա՞ւ յաջողութիւն գտնել Երուսաղէմի մէջ, ուր հրեաների սինեդրիոնը դատապարտել էր նրան իբրեւ հայհոյիչ, եւ հռոմէական կառավարութիւնը խաչել էր նրան իբրեւ չարագործ։ Այո՛ նրա մահից քիչ յետոյ Աւետարանի քարոզութեամբ միայն արանց եւ կանանց բազմութիւններ, քահանաներից շատերն անգամ, հաւատացին Յիսուսին, եւ աւելի քան 5000 անձինք ճանաչեցին Յիսուսին իրանց Տէր եւ Փրկիչ։ Յետոյ նրա հետեւողները սաստիկ հալածանքի պատճառաւ ստիպուեցին դուրս գնալ Երուսաղէմից, բայց գնալով այլուայլ տեղեր քարոզում էին Աւետարանը եւ նրանց քարոզութիւնով Բրիստոսի թագաւորութիւնն արագութիւնով տարածուեց Հրէաստան, Գալիլիա, Սամարիա, Փոքր-Ասիոյ գրեթէ բոլոր գաւառները, Յունաստան, Եգէական ծովի կղզիները, Ափրիկէի ծովեզերքը, Իտալիա եւ մինչ իսկ Հռոմ։ Քիչ ժամանակի մէջ Անտիոք, Յոպպէ, Եփեսոս, Կորնթոս, Թեսաղոնիկէ, Բերէա, Իկոնիոն եւ Դերբէ գտնուեցին շատ մարդիկ որ ճանաչում էին Յիսուսին իբրեւ իրանց հոգեւոր Տէրը։ Նրան հետեւողներ գտնուեցին նաեւ Տիւրոս, Կեսարիա, Տրոադա, Ասիէնք, Լիւստրա եւ Դամասկոս։

Այս նիւթին վրայ հռոմայեցի մատենագիրների վկայութիւնը համոզիչ է։

Տակիտոս վկայում է թէ Բրիստոնէական հաւատքը տարածուած էր ոչ միայն Հրէաստան, այլ եւ նոյն իսկ Հռոմ։

Բիւթանիոյ եւ Պոնտոսի մէջ այնչափ շատ մարդիկ ընդունել էին Բրիստոնէութիւնը որ հռոմայեցի կուսակալը, Պլինիոս, այս մասին գիր գրեց Տրայիանոս կայսրին, եւ հարցրեց թէ ինչ անել պէտք էր նոա կայսրին, եւ հարցրեց թէ ինչ անել պէտք էր Բրիստոնէական հաւատոյ ծաւալման առաջն առնելու համար։

Յուստինոս վկայ յամի Տ. 106 ասում է. «Չկայ մի ազգ, որ չաղօթէ առ Արարիչն Խաչուած Յիսուսի անունով։»

Տերտուլիանոս Բրիստոսից յետ երկրորդ դարու քրիստոնեայ մատենագիր այսպէս գրեց հռոմէական կայսրութեան մէկ կուսակալին. «Մենք Բրիստոնեաներս, դեռ երեկուան ենք, բայց եւ այնպէս լեցնում ենք ձեր բոլոր հրապարակները, ձեր գիւղաքաղաքները, քաղաքները, կղզիները, դատարանները, նոյն իսկ ձեր բանակները, ձեր պալատները, ձեր ծերակոյտը, ձեր շուկաները, ձեր մեհեանները միայն թողել ենք ձեզ։» Նոյն մատենագիրը ասում է թէ այն ժամանակ Բրիստոսի թագաւորութիւնը տարածուած էր Սպանիա, Գաղղիա եւ Բրիտանիա։

Բրիստոնէութեան այս ընդհանուր ծաւալումից ի հարկէ սա հետեւեց որ կռապաշտութիւնն ընկաւ, նրա ստուգանները մերժուեցին եւ մեհեանները թո-

զուեցին, Քրիստոնէութիւնն եղաւ հռոմէական կայսրութեան կրօնք, եւ Յիսուս Քրիստոս արդեամբ հիմնեց հոգեւոր թագաւորութիւն հռոմէական պետութեան երկրի մէջ։

Կը հարցնենք թէ այս բաներն ի՞նչպէս գործուեցին։ Բռնութեամբ գործուեցին։ Ոչ։ Խաչեալ Քրիստի անունով հեզութեամբ կրելով ամէն մի տանջանք որ մի հզօր կայսրութիւն կարող էր տալ։

Նենգութիւնով կամ խաբէութիւնո՞վ գործուեցին։ Ոչ, այլ այնպիսի մարդոց հաւատարմութիւնովը որ ընտրում էին մանաւանդ մեռնել քան թէ խաբել։ մարդկային իմաստութիւնով կամ աշխարհային հնարներո՞վ գործուեցին։ Ոչ։ Քրիստոսի հետեւողների միջոցն հնարքը կայանում էր նրանում որ հաւատարմութիւնով քարոզեցին խաչուած Քրիստոսը իբրեւ Աստուծոյ իմաստութիւնը փրկութեան համար։ Արդարեւ այս յաղթութիւնն ոչ թէ մարդոց, այլ Աստուծոյ էր։

Իմաստութիւնը որի համար հռոմէական կայսրութիւնը մերժեց Սոկրատայ, Պղատոնի, եւ Արիստոտելի վարդապետութիւններն իբրեւ անպիտան, պէտք է աւելի եղած լինի քան մարդկային իմաստութիւնը։ Այն իմաստութիւնն արդարեւ աստուածային իմաստութիւն էր։

Ճարտարախօսութիւնը, որի համար նոյն կայսրութիւնը եւ դարձաւ իր ատենաբանների ճառերից, մարդկային շրթունքների ճարտարախօսութիւն չէր, Աստուծոյ ճշմարտութեան ճարտարախօսութիւնն էր։

Ազդեցութիւնը որ մարդանդ Հրէին, հեշտաւէր Յոյնին եւ հպարտ Հռոմայեցուն մէջ ծնուեց սէր

դէպի հեզ եւ անարգ Յիսուսը՝ երկրաւոր ազդեցութիւն չէր այլ երկնաւոր։

Զօրութիւնը որ զօրեղ էր քան թէ սուրը, քան թէ խարոյկը, քան թէ վայրի գազանները զօրեղ էր, քան թէ հռոմէական կայսրութեան բոլոր զօրութիւնն արդարեւ Աստուծոյ զօրութիւնն էր։

Պատմութիւնը վկայում է թէ Քրիստոսի խորհուրդը զարմանալի յաջողութիւն գտաւ նրա մահուց յետոյ առաջի 300 տարուան մէջ։ Արդարեւ Քրիստոս հոգեւոր թագաւորութիւն հաստատեց հռոմէական կայսրութեան բոլոր երկիրների մէջ։ Պատմութիւնը վկայում է նաեւ թէ այս դեռ սկիզբն էր Յիսուսի թագաւորութեան ծաւալման։ Այն թագաւորութիւնն գնալով տարածուեց նաեւ հռոմէական կայսրութեան սահմաններից դուրս, մինչեւ որ բոլոր Եւրոպա զոնէ արտաքին կերպով հպատակուեց Քրիստոսի հոգեւոր թագաւորութեանը։ Յետոյ այն թագաւորութիւնը իր իշխանութիւնը տարածեց Ովկիանոսից միւս կողմը մինչեւ Ամերիկա եւ Մեծ Ովկիանոսի կղզիները, եւ տակաւին տարածում է Ափրիկէի վայրենիներին մէջ մինչեւ Ասիայի կեդրոնը։

Ճշմարիտ է որ Քրիստոսի թագաւորութեան յառաջադիմութիւնը միշտ միեւնոյն արագութեամբ եղած չէ։ Հզօր զօրութիւններ միշտ ընդդիմացել են նրա տարածմանը. եւ հակառակութիւններն երբեմն այնպէս սաստիկ են եղել որ նրա տարածումը մի ժամանակ խափանուել է, բայց միմիայն մի ժամանակ։ Բացի սրանից, եւ որ սրանից աւելի ողբալին է, Քրիստոսի հետեւողները միշտ այնպէս ժիր ու հաւատարիմ չեն գտնուել ինչպէս որ պէտք է։ Երբեմն

սնապաշտութիւններն այնպէս ակարեցրին նրանց զօրութիւնը, որ քրիստոնեաները չատ քիչ բան կարողացին անել ի նպաստ Քրիստոսի հոգեւոր թագաւորութեան տարածման, երբեմն եւս անհաւատութեան ոգին մի ժամանակ ջլատեց նրանց զօրութիւնները, եւ երբեմն կուռ ոգին եւ նրանց ներքին երկպառակութիւններն ի զուր վատնել տուին նրանց ոյժը եւ ազդեցութիւնը:

Արդ, թէպէտ երբեմն սնապաշտութիւնները Քրիստոսի Աւետարանի փառաւոր ճշմարտութիւնները ծածկեցին, թէպէտ անհաւատութիւնը տարակոյս յարուցեց Քրիստոնէութեան աստուածային ծագման վրայ, թէպէտ ներքին վէճեր սպառեցին քրիստոնեաների զօրութիւնը, թէպէտ աշխարհասիրութիւնը չատ անգամ գերի առաւ քրիստոնեաներին, սակայն եւ այնպէս Քրիստոսի թագաւորութիւնը հաստատութեամբ յառաջ գնաց իր թագաւորի մահից յետոյ մինչեւ հիմայ: Նրանից յետոյ ամեն դարու մէջ Քրիստոս ընդհանուր հոգեւոր թագաւորութիւն հաստատելու խորհուրդը կատարելու վրայ է: Քրիստոսի սէրութիւնը գոնէ արտաքուստ ճանաչողներին թիւը դարէ ի դար աւելացած է եւ նրա ճշմարիտ աշակերտների բազմութիւնն երբէք այնչափ մեծ չեղան որչափ հիմայ: Հաւատարմութեան արժանի հաշիւներին նայելով, Քրիստոսից յետոյ առաջի դարու վերջը 500,000 անձինք կային որ ընդունում էին Քրիստոսին իբրեւ տէր. երրորդ դարու վերջը՝ 5 միլիոնի էր հասնում սրանց թիւը. տասներորդ դարու վերջը՝ 50 միլիոնի, տասնհինգերորդ դարու վերջը՝ 100 միլիոնի, եւ հիմա այս թուում 500 միլիոնի է հասնում:

Մի զօրութիւն կարող չեղաւ երբէք երկար ժամանակ դէմ դնել Աւետարանի հաւատարիմ քարոզութեանը: Աւետարանն ուր որ հաւատով, աղօթքով եւ սիրով քարոզուեց, ընդունուեց թէ՛ բարբարոս եւ թէ՛ քաղաքակիրթ ազգերից: Ուր որ անկեղծորէն ու սրտանց ընդունուեց, խիստ բարձր երեւաց քան ամեն երկրաւոր զօրութիւն: Ամեն տեսակ զէնք գործածուեց նրա դէմ, բայց իզուր: Անհաւատութիւնը չատ անգամ պարծեցաւ թէ կործանեց այս հոգեւոր թագաւորութեան հիմերը, բայց այս թագաւորութիւնը մինչեւ այսօր անշարժ կենում է: Անհաւատութիւնը հազար անգամ հրատարակեց թէ Աւետարանի ստութիւնն յայտնուած է, բայց աշխարհը տակաւին հաւատում է Աւետարանի ուրախութեան աւետիքին: Փիլիսոփայութիւնը չատ անգամ ծաղր արաւ Աւետարանի վարդապետութիւններին իբրեւ յիմարութիւն, բայց քրիստոնէութիւնը տակաւին ցոյց է տալիս թէ ինքն Աստուծոյ իմաստութիւնն է:

Աւելի քան 1800 տարիներ անցան երբ որ Յիսուս Նազովրեցին յայտնեց իր աշակերտներին թէ նպատակ ունէր հաստատել մի հոգեւոր թագաւորութիւն, որին հպատակ լինէին մարդիկ ամեն ազգից, եւ որ պիտի տեւեր բոլոր ապագայ դարերի մէջ: Ճշմարիտ է թէ Քրիստոսի խորհուրդը դեռ բոլորովին չկատարուեց. բայց երբ նկատենք թէ մինչեւ որ աստիճան տարածուած է Քրիստոնէութիւնը մինչեւ հիմայ, չենք կարող բնաւ տարակուսուել ապագայում Քրիստոսի խորհուրդի լիուլի կատարելուն վրայ: Ուրեմն Գ՚ովի չի համաձայնուել (Գաղղիացի պատմագիր, Մ. Կիզո՝ վ չի համաձայնուել

յի հետ, որ ասում է թէ Քրիստոս նուաճեց Յունաստանը եւ Հռոմը, նուաճեց հեթանոսութիւնը, եւ հիմա բոլոր աշխարհ նուաճելու վրայ է։

Ընթերցող, եթէ արդարեւ Քրիստոս բոլոր աշխարհքը նուաճում է, ո՞վ է ուրեմն նա։ Պէտք է որ լինի թագաւորաց թագաւոր եւ տէրերի Տէր։

ԳԼՈՒԽ Ի

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Նոյն ինքն Քրիստոս ասաց թէ ծառն իր պտուղից է ճանաչւում, այսինքն թէ լաւ ծառը չէ կարող վատ պտուղ բերել, ոչ էլ վատ ծառը կարող է լաւ պտուղ բերել։ Ուրեմն, քրիստոնէութիւնը դատելու ենք իր պտուղներից։ Եթէ վատ պտուղներ է բերած, մերժելու ենք նրան իբրեւ անարգ սնապաշտութիւն. բայց եթէ լաւ պտուղներ է բերած, հարկ է չնորհակալութեամբ ընդունել նրան իբրեւ աստուածատուր կրօնք։

Ուրեմն, ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ քրիստոնէութիւնը մարդկանց վրայ։ Այս հարցմունքին պատասխանում ենք թէ քրիստոնէութեան ազդեցութիւնը բարի եղաւ, միշտ բարի եւ բարի միայն։

Սակայն գուցէ ոմանք ասեն թէ քրիստոնէութիւնը դաւանողները ոչ միայն բարի այլ եւ չար են գործել, եւ թէ շատ չարիք գործած են քրիստոնէութեան անունով։ Ընդունում ենք այս։ Այո՛ մեծ եւ ողբալի չարիք գործած են. անիրաւ պատերազմներ մղած անողորմ տանջանք տրուած, եւ դազանային անգթութիւններ գործուած են Քրիստոնէութեան սուրբ անունով։ Տխուր ճշմարտութիւն է թէ մարդիկ ջանացել են քրիստոնէութեան սուրբ անունով քաղաքական իշխանութիւն յափշտակել, ուրիշների խղճին վրայ գրոհանալ, ճշմարիտ քաղաքակրթութեան յառաջդիմ-

մութիւնն ալգիլել, եւ բռնութիւնով սիրել ազգերի վրայ։ Այս բոլորը սխալ ճշմարտութիւն է։

Բայց միթէ քրիստոնէութիւնը պատասխանատո՞ւ է այս չարիքների համար։ Քրիստոնէական հաւատքը դաւանողների մէջ գտնուել են շատ կեղծաւորներ որ բաց ի իրանց անձնի փառքից ուրիշ նպատակ չեն ունեցել, եւ քրիստոնէութիւնը դաւանել են սոսկ իրանց շահի համար։ Այսպիսի կեղծաւորների չար գործքերին համար միթէ քրիստոնէութիւնը պատասխանատո՞ւ է։

Գտնվում են նաեւ մարդիկ որ անուանվում են միայն ընդունել քրիստոնէութիւնը առանց անկեղծօրէն ընդունած լինելու նրա վարդապետութիւնները, եւ առանց համաձայնեցնելու իրանց վարքը Քրիստոսի օրէնքներին եւ ոգուն։ Միթէ քրիստոնէութիւնը պատասխանատո՞ւ է այսպիսի մարդոց գործերին համար։

Նաեւ ուրիշները անկեղծարար ընդունել են քրիստոնէութիւնը, բայց սխալ հասկանալով նրա վարդապետութիւնները ընկած են մոլորութիւնների մէջ։ Սակայն միթէ քրիստոնէութիւնը պատասխանատո՞ւ է այսպիսիների սխալների եւ մոլորութիւնների համար։

Կան նաեւ ուրիշները, որ ընդունել են քրիստոնէութիւնը, բայց բոլորովին ազատ չեն եղել մարդկային ազգին բնական ազատութեան զօրութիւնից, ուստի եւ կատարելապէս չեն ցոյց տուած իրանց վարքի մէջ Քրիստոսի Աւետարանին ճշմարիտ ոգին։ Միթէ քրիստոնէութիւնը պատասխանատո՞ւ է սրանց թերութիւնների համար։ Ոչ։

Քրիստոնէութիւնը պատասխանատու չէ այն բաների համար որ նրա վարդապետութիւններին հակառակ գործվում են։ Քրիստոնէութիւնը պատասխանատու է այնպիսի գործերի համար միայն որ նրա վարդապետութիւններին եւ ոգուն համաձայն կատարում են։ Ազդեցութիւնը որ քրիստոնէութիւնը ունեցել է, եւ որի համար պատասխանատու է՝ կրկին է, առանձին կամ մասնաւոր, եւ ազգային կամ ընդհանուր։ Քրիստոնէական ազդեցութիւնը տեսնուած է թէ՛ մարդկանց սիրտերի եւ վարքի մէջ, եւ թէ՛ ազգերի օրէնքների եւ հաստատութիւնների մէջ. եւ ոչ ով չէ կարող ուրանալ թէ ինչ որ գործուել է Քրիստոսի Աւետարանի վարդապետութիւններին եւ ոգուն համաձայն՝ օրհնութիւն է բերել մարդկանց եւ ազգերին միանգամայն։

Ա. Քրիստոնէական ընդհանուր ազդեցութիւնն ազգերի վրայ։

Այս խնդիրն օրինաւոր կերպով քննողներից շատերը համոզուել են թէ այն բաների մեծ մասը որ արդի քաղաքակրթութեան պարծանքն է համարվում Քրիստոսի Աւետարանի արդիւնքն է։ Արդարեւ երեւելի պատմիչներից ոմանք հաստատում են թէ արդի քաղաքակրթութիւնը, բառին զուտ եւ վսեմ նշանակութիւնով առնուելով, պտուղ է քրիստոնէութեան, եւ եթէ նկատենք այն տարրերից մի քանիսին որ արդի քաղաքակրթութեան փառք ու պարծանք են, մենք էլ պիտի համոզուինք թէ այն տարրերին համար մեծապէս պարտական ենք Քրիստոսի Աւետարանին։

1. Սկսենք յիշեալ տարրերի աւելի ստորիններից

որ է հարստութիւնը։ Հարստութիւնը ինքն իրան բարի բան է, եւ շատ հարկաւոր է որպէսզի մի ազգ բարձրագոյն աստիճանի բարգաւաճման հասնի։ Ստոյգ է թէ աղքատութիւնը միշտ անպատուութիւն չէ, յայտնի է սակայն թէ առանց հարստութեան ոչ վարժարաններ եւ ոչ հանրոցարաններ կարող են հաստատուիլ, ոչ դասագրքեր կը յօրինուին եւ ոչ մատենագարաններ կը բացուին, ոչ էլ անհատ մարդիկ կարող նրանց կեանքը նուիրել ազգերի ընդհանուր լուսաւորութեան։ Հարստութիւնն այնպիսի օգտակար վախճանների է ծառայում, որ առանց չափաւոր հարստութեան բարձր քաղաքակրթութեան հասնել անհնար է։ Այս պատճառով արդի քաղաքակրթութիւնն իր նիւթական գանձերին վրայ ուրախանում է, եւ յայտնի է թէ քրիստոնէութիւնը մեծապէս օգնել է հարստութեան աճման։ Քրիստոսի Աւետարանն, եթէ անկեղծօրէն եւ սրտանց ընդունուի, մարդկանց եւ կանանց կանէ միանգամայն ժուժկալ աշխատասէր, ուստի մեծապէս օգնում է նիւթական բարգաւաճում ունենալու եւ պահելու։ Արդարեւ եղել են հարուստ ազգեր որ քրիստոնեայ չէին, բայց սրանք անկարող եղան երկար ժամանակ պահել իրանց հարստութիւնը։ Այն ազգերի անդամները շուտով անձնատուր եղան ամեն տեսակ զեղծումների, իրանց հարստութիւնը վատնեցին զեղխութեան մէջ, եւ ամօթալի ապականութեան մէջ ընկղմուեցան։ Դարձեալ, մաքուր բարոյականը որ Աւետարանը յառաջ է բերում նրան, սրտանց ընդունողների վարքին մէջ միմիայն ապահով խարիսխ է այն մեծամեծ առեւտրական ձեռնարկութիւնների, որոնցով միայն կարելի է արդիւնաւորել մի ազգի հարստութեան աղբիւրները։ Մարդիկ իրար վրայ վստահութիւն ունենալու են որպէսզի կարող լինեն ընկերութիւններ կազմել եւ իրար օգնել մեծամեծ ձեռնարկութիւնների մէջ։ Աւետարանը՝ նրան սրտանց ընդունողներին ուղիղ եւ արդարասէր անելով՝ տալիս է այս փոխադարձ վստահութիւնը, եւ այսպէս հնարաւոր է անում մեծամեծ ձեռնարկութիւնները։ Ճշմարիտ քաղաքակրթութիւնը սակայն պարծենում է ոչ այնչափ բուն իր հարստութեամբ, որչափ նրան ազնիւ ու գովելի գործածելուն համար։ Ճշմարիտ քաղաքակրթութիւնը պարծենում է մանաւանդ իր բարենպատակ եւ մարդասիրական անթիւ հարստութիւնների համար որ հիմնուած են ամեն տեսակ թշուառների համար։

Հարստութիւնը օրհնուած է երբ ազնիւ նպատակների է գործածվում։ բայց անիծուած է, երբ մարդիկ նրան անում են միջոց իրանց հեշտութիւնները յագեցնելու։ Ազգերը շատ անգամ զեղխութեան միջոց են արել իրանց հարստութիւնն, սպասել են ազգի զօրութիւնը, ազգային առաքինութիւնը խանդարել են, ու այնպէս կործանել են իրանք իրանց։ Արդի քաղաքակրթութեան հարստութիւնը նախատինք պիտի լինէր մանաւանդ քան թէ փառք, եթէ մերժեր Քրիստոսի այս երկնային վարդապետութիւնը թէ «Աւելի երանելի է տալը քան թէ առնելը», եւ վատնէր իր հարստութիւնը զեղխութեամբ, եւ կամ ագահութեան համար ծածկէր նրան։ Քրիստոնէութիւնն է այն զօրութիւնը որ այսօր ազգերը պահում է մեծ հարստութեան

գեղծումներից, որով հին դարերի մէջ ազգերը կոր-
ծանուեցին։ Փա՛ռք Աստուծոյ, արդի քաղաքակրթու-
թիւնը օր օրից ընդունում է Քրիստոսի վարդապետու-
թիւնը, ու ամեն երկրի մէջ հաստատում է իր բարե-
սիրական հաստատութիւնները եւ բազմացնում է իր
օգտակար գործերը։

2. Ինչպէս արդի քաղաքակրթութեան մէկ ուրիշ
առաքը, որ է գաստիարակութիւնը։ Արդի քա-
ղաքակրթութիւնը պարծենում է գաստիարակութեամբ,
եւ Քրիստոսի Աւետարանը, երբ որ ուղիղ հասկացուեց
եւ սրանից ընդունուեց, օգնեց միշտ ազգային լուսա-
ւորութեան եւ մտաւորական զարգացման գործին։ Քրիս-
տոսի Աւետարանն այս բանն անում է այլ եւ այլ կերպով։

ա. Աւետարանը միտքը ազատում է այն կիրքերի
բռնութիւնից որ խմացողութիւնը մթնացնում են, ե-
բեւակայութիւնը խանգարում են եւ բոլոր մտաւոր
կարողութիւնները ակարացնում են։ Եւ հին Յոյնք եւ
Հռոմայեցիք ազատանուեցին, նրանց խմացական կա-
րողութիւնները ակարացան, եւ ուսմունքի եւ գիտու-
թիւնների մէջ իրանց առաջնութիւնը կորցրին։ Ճշմա-
րիտ լուսաւորութեան եւ մտաւորական զարգացման ա-
մենամեծ թշնամիներն են մոլութիւնները, եւ Աւե-
տարանն, որ, երբ սրտանց ընդունվում է, մարդկանց
ազատում է մոլութիւններից, ճշմարիտ ազգային լու-
սաւորութեան հաստատմագոյն բարեկամն եւ օգնա-
կանն է։

բ. Աւետարանն ընծայում է ամեն մարդու ամենից
մեծ խնդիրներ որ կարող են զբաղեցնել մարդկանց
մտաւոր կարողութիւնները։ Դարձնում է միտքը դէպի

յետ, դէպի ժամանակի սկիզբը, երբ Աստուած դրաւ
երկրիս հիմերը, տանում է նաեւ միտքը յաւաջ դէպի
այն ժամն երբ այլեւս ժամանակ պիտի չլինի։ Բարձ-
բանում է միտքն այս աշխարհի չնչին հոգսերից եւ
անձկութիւններից և ներկայ կեանքի կարճատեւ ու-
բախութիւններից եւ տրտմութիւններից վեր, որպէս զի
մարդ կարողանայ տեսնել Աստուծոյ զարմանալի նա-
խախնամութիւնն անցեալի մէջ, եւ նրա յաւիտենա-
կան նպատակների փառաւորապէս կատարուիլն՝ ապա-
գային մէջ։ Տանում է միտքը ժամանակաւոր իրերի
փոփոխականութիւնից յաւիտենական իրերի անփոփո-
խութեանը, սահմանաւոր իրերի անկատարութիւնից՝
անսահման էակին կատարելութեանը, ստեղծուածներից՝
առ ստեղծողն։ Այսպէս Քրիստոսի Աւետարանը զարգա-
ցնում է մտքի կարողութիւնները՝ մէջ բերելով քննե-
լու եւ նկատելու մեծամեծ խնդիրներ։

գ. Աւետարանը յայտնում է մարդկանց նրանց ան-
մահութիւնը, ու այսպէս մեծ գրգիռ է տալիս նրանց
իրանց միտքը զարգացնելու։

Հին կրթուած ազգերից ոմանք արդարեւ նշանաւոր
եղան մտքի գործունէութեան կողմանէ, բայց այս
գործունէութիւնն երկար չտեւեց, ու չէր կարող տեւել
առանց Քրիստոնէութեան մտքին աղեցութեան։ Այժմ-
եայ հեթանոս ազգերը կարող չեն բարձր քաղաքակրթ-
թութեան հասնել։ Մինչեւ մի ասուիճան զարգանում
են, բայց այնուհետեւ կամ մնում են այնտեղ ուր են,
եւ կամ սկսում են ընկնել։ Արդի քաղաքակրթութիւնը
Քրիստոնեայ ազգերի մէջ է միայն, եւ եթէ սրանք
մերժեն Քրիստոսի Աւետարանը, շատ հաւանական է թէ
պիտի կորչին ընդհանուր ապականութիւնից, ինչպէս
կորան հին ազգերը։

Արդի քաղաքակրթութիւնը տարբերվում է հինից նաեւ սրանով որ պարծենում է ոչ թէ գիտութիւնների եւ գեղարուեստների մի քանի կեդրոններն ունենալուն համար, այլ մանաւանդ «դատխարակութեան ընդհանուր ծաւալման համար»։ Չէ պարծենում մի քանի անձանց միայն մտաւորական գերազանցութեան համար, այլ պարծենում է մանաւանդ բոլոր ժողովրդեան ընդհանուր լուսաւորութեան համար։ Արդի քաղաքակրթութիւնը ուրախանում է արդարեւ իր վարժարանների եւ համալսարանների համար, բայց էլ աւելի ուրախանում է իր հասարակ դպրոցների համար որ իւրաքանչիւր գիւղի մէջ գտնվում են։ Այս բանի համար մեծապէս պարտական ենք Քրիստոնէութեան, որ, ոչ թէ ազնուականների միայն, այլ եւ բոլոր ժողովրդեան լուսաւորութիւնը պարծանք է համարում իրան։ Քրիստոս հասարակ ժողովրդի վարդապետ էր, եւ իր աշակերտներին պատուիրեց աշխատել բոլոր ժողովրդեան հոգեւոր լուսաւորութեան համար, եւ արդի քաղաքակրթութեան առաւելութիւններից մին էլ այս է որ սրանում հետեւում է Քրիստոսի օրինակին, եւ ջանում է ամեն գիւղի մէջ դպրոց բանալ, եւ ամեն ընտանիք գիտութեան գանձի մէկ մասովը հարստացնել։

3. Արդի քաղաքակրթութեան մէկ ուրիշ տարբն է ազգային հաստատութիւններ։ Արդի քաղաքակիրթ ազգերն ունին թագաւորներ եւ թագաւորական ցեղեր, թագաւորական պալատներ, պատրաստ զօրքեր, եւ արել են արիւնահեղ պատերազմներ։ Եթէ այս բաները լինէին այս ազգերի փառքն ու պարծանքը պիտի ասէինք արդարեւ թէ այս բաներն ուրիշ ազգերից են յառաջ գալիս, եւ ոչ թէ Քրիստոսի Աւետարանից։ Բայց արդի քաղաքակիրթ ազգերը չիչ են պարծենում այս բանով, նրանց պարծանքն են մանաւանդ հաւատարիմ թագաւորներ, իմաստուն օրէնսդիրներ, անկաշառ դատաւորներ, եւ մանաւանդ հնազանդ, բարենչան, հանճարեղ եւ առաքինի հպատակներ։ Արդի քաղաքակիրթ ազգերն այնչափ չեն պարծենում իրանց թագաւորների հոյակապ պալատների համար։ Արդի քաղաքակիրթ ազգերն այնչափ չեն պարծենում պատերազմի յաղթութիւնների համար որչափ պարծենում են խաղաղութեան պտուղների եւ օրհնութիւնների համար։ Այս յառաջ է գալիս մեծ մասամբ Աւետարանի ազդեցութիւնից։ Այս մասին արդի քաղաքակրթութիւնը մինչեւ մի աստիճան համաձայնում է Քրիստոսի վարդապետութիւններին եւ ցոյց է տալիս նրա ոգին։

Հին քաղաքակիրթ ազգերն անբարոյականացած էին, ուստի եւ չկարողացան երկար տեւել։ Անիրաւ եւ միանգամայն անմաքուր էին, ագահ եւ կաշառակեր էին ուստի եւ ակար էին, եւ շուտով ընկան։ Արդի քաղաքակիրթ ազգերն աւելի զօրաւոր են քան հինները, որովհետեւ մասամբ ընդունել են Սուրբ Գրոց բարոյական սկզբունքները։ Եթէ բոլորովին ընդունեն այն սկզբունքներն, այն ժամանակ այնպէս հաստատուն պիտի լինեն որ՝ որեւ իցէ մարդկային զօրութիւն կարող պիտի չլինի կործանել նրանց։ Իսկ եթէ, ընդհակառակն, մերժեն այն սկզբունքները, նրանց կործանումը այնպէս ստոյգ պիտի լինի ինչպէս եղաւ Յունացը եւ Հռոմայեցոցը։

Հին քաղաքակրթութիւնն, իր ոգուն կողմանէ, անգութ էր։ Օրէնքները որոնք հրատարակում էր, բռնութեան օրէնքներ էին։ Այս օրէնքներին նայելով

տակարը ծառայում էր հզօրին, աչխարհակալութեան համար անիրաւ պատերազմներ էին լինում, պատերազմի մէջ բռնուողները վաճառվում էին իբրեւ գերի, ու մարդիկ բռնաչատվում էին իբրեւ գազան կռուիլ իրար հետ թագաւորների զբօսանքների համար:

Քրիստոնէութիւնն եկաւ ջնջել հին քաղաքակրթութեան բարբարոսական օրէնքները, եւ փոխանակ նրանց հրատարակել սիրոյ օրէնքը, որին նայելով զօրաւորն օգնելու է ռկարին, լուսաւորուածը կրթելու է չլուսաւորուածներին, եւ առաջինին աչխատելու է մոլին ուղղելու, ինչպէս որ նոյնիսկ Քրիստոս չեկաւ ուրիշներից սպասաւորութիւն ընդունելու, այլ ուրիշներին սպասաւորութիւն անելու: Երբ Քրիստոնէութիւնը տիրեց, կրօնական արարողութիւնների հետ այլեւս չկատարուեցին անառակ զարշութիւններ, ոչ էլ սուղանները պղծուեցին մարդազոհերի արիւնով, ու բանտարկեալները այլեւս չդարձուեցին գազանների առաջը, ոչ էլ բռնադատուեցին իրար հետ մենամարտելով իրար սպանել:

Աւետարանը դատապարտեց Յունաց ամբարտաւանութիւնը եւ Հռոմայեցոց անիրաւ յաղթութիւնները: Հրատարակեց թէ Աստուած մէկ արիւնից արաւ երկրիս բոլոր ազգերը, եւ թէ մարդիկ այլեւս սովորելու չէին պատերազմ անել: Ոմանք գուցէ հարցնեն. Եթէ այսպէս է ինչպէս է լինում որ Քրիստոնեայ ազգերն այսչափ պատերազմներ են անում: Այս մասին պատասխանում ենք թէ այս ազգերն դեռ մասամբ են միայն ընդունել Աւետարանը, եւ մասամբ մնում են տակաւին հին քաղաքակրթութեան բարբարոս օրէնքներին տակ: Հետեւեալ իրողութիւններից յայտնի է սակայն թէ որ-

դի Քրիստոնեայ ազգերը օր օրից ընդունում են պատերազմի նկատմամբ Աւետարանի սկզբունքները: Այս ազգերը չեն հաւանում իրանց այժմեայ ընթացքին, եւ ամենները խոստանում են թէ պատերազմը մեծ չարիք է, եւ նրանց այն համոզումը տարուց տարի զօրանում է: Հիմա կարմռելու վրայ է մի այնպիսի զօրութիւն որ մեծ է եւ հզօր քան թէ թագաւորների զինուորական զօրութիւնը, այն է լուսաւորուած ժողովրդների հասարակաց կարծիքը, եւ այս կարծիքը տարուց տարի աւելի ընդդիմութիւն է ցոյց տալիս պատերազմին: Այժմեայ հասարակաց կարծիքը չէ հաւանում երկիրներ նուաճելու համար միայն պատերազմներ անել, ինչպէս Հռոմայեցի կայսրները անում էին: Քրիստոնեայ ազգերը համոզուած են թէ ազգերի մէջտեղ ծագած խնդիրները կարող են լուծուիլ աւելի լաւ կերպով քան պատերազմը: Վերջին մի քանի տարիների մէջ Եւրոպա մի քանի անգամ հանդգուգային ժողովներ եղան միջոց գտնելու ազգերի մէջտեղ ծագած դժուարութիւնները լուծել առանց արիւնահեղութեան, այս ժողովների խորհուրդներն լաւ ընդունելութիւն են գտել Եւրոպացի եւ Ամերիկացի ազգերից եւ իշխաններից: Քրիստոնեայ ազգերը գնալով աւելի հոգում են պատերազմի աղէտները սահմանի մէջ փակել, ջանալով որ պատերազմը կռուող տերութիւնների մէջ մնայ, ու չեն թողնում անօգուտ արիւն թափուի եւ կորուստ լինի կայքի ու ստացուածքի: Քրիստոնեայ ազգերն այլեւս իբրեւ գերիների հետ չեն վարվում պատերազմի մէջ բռնուողներին հետ, այլ նրանց մարդասիրաբար խնամում են, եւ որչափ հնար է շուտով յետ են տալիս:

Եթէ բաղդատենք անցեալը ներկային հետ, պիտի տեսնենք թէ այս մասին մանաւանդ զարմանալի փոփոխութիւն է եղած ազգերի մէջ։ Հին ազգերի մէջ Տիտոս երեւելի էր իր մարդասիրութեան համար, բայց եւ այնպէս երբ Երուսաղէմը առաւ առաջին տարուայ մէջ, քաղաքը պաշտպանողներից այնչափ մարդ խաչը հանեց որ, ինչպէս ասում է պատմիչը, «բաւական փայտ չգտնուեց խաչ շինելու ոչ էլ խաչերը կանգնեցնելու բաւական տեղ»։ Բաղդասի, այս եւ ինչ որ արին Գերմանացիք երբ երկար պաշարմանից յետոյ Փարիզ քաղաքն առին 1871ին։ Գերմանական բանակի առաջին գործն եղաւ ոչ թէ չարչարել կամ սպանել, այլ կերակուր հայթայթել քաղաքի սոված բնակիչների համար։

Եթէ մեզ յիշեցնեն ոմանք այն սոսկալի անդթութիւնները որ հասարակականները (կոմիւնիստ) գործեցին Փարիզի մէջ, կասենք թէ այն բարբարոսութիւններ անողներն ասում էին Քրիստոնէութիւնը եւ ասում էին իրանց համար թէ անաստուած են։ Հասարակականների օրինակը զօրաւոր կերպով ցոյց է տալիս թէ եթէ այժմեայ քաղաքակրթութիւնը մերժէ Քրիստոնէութիւնը, կարող է բարբարոսութեան անդունդը գահավիժել չար ջան նախնի հեթանոսները։

Արդարեւ Քրիստոնեայ ազգերի պատերազմները նախատինք են այժմեայ քաղաքակրթութեան եւ հակառակ Քրիստոնէութեան հաւատի, բայց եւ այնպէս յայտնի է թէ քրիստոնէութեան խաղաղասիրական ազդեցութիւնը գնալով աւելի զգացվում է եւ նրա մարդասիրական սկզբունքները հետզհետէ աւելի ընդունվում են քրիստոնեայ ազգերից, ու պատճառ ունինք յուսալու թէ քիչ ժամանակից յետոյ այնպէս լիովին եւ անկեղծօրէն պիտի ընդունուին, որ ազգերն այլեւս պատերազմ պիտի չսովորեն։ Քրիստոնէութիւնն արդէն նուազեցրել է պատերազմների թիւը, եւ շատ մեղմացրել է պատերազմների ազէանները։ Լինէր թէ շուտով եւ բոլորովին ազատուէր ամեն երկիր այս սոսկալի հարուածից։

Քրիստոնէութիւնը վերցրեց նաեւ կանանց սեռն այն նուաստութիւնից որի մէջ իջեցրել էր նրան հեթանոսութիւնը, եւ տուաւ կնոջ այն պատուաւոր դիրքը որ նրան սահմանուած էր Արարչից։

Քրիստոնէութիւնն այնպէս զարգացրեց եւ սնուցեց ընտանեկան առաքինութիւնները որ ազայք կարող են լաւ կրթուիլ, եւ այն երջանկութիւնն որ այս առաքինութիւններից է բղխում՝ չէ կարող ուրացուիլ։

Քրիստոնէութիւնը հաստատել է հիւանդների եւ խելագարների համար անթիւ դարմաններ։ եւ համարեայ թէ անհունապէս՝ բազմացրել է իր բարոյական հաստատութիւններն ամեն տեսակ թշուառների համար։

Իսկ, ընդհակառակն, միթէ Քրիստոնէութիւնը չարիք է գործե՞լ որեւիցէ անձի, ընտանիքի եւ ազգի դէմ։ Սովորցրե՞լ է երբէք ազգերին կամ անհատներին իրար տալ, խաբել եւ ջնջել։ Քրիստոնէութիւնը պատւիրում է բոլոր մարդկանց իրար սիրել, եւ անել ուրիշներին ինչ որ ուզում են որ ուրիշներն իրանց անեն։ Քրիստոնէութիւնը բազմացրե՞լ է արբեցողութիւնից յառաջ եկած անհամար չարիքը։ Քրիստոնէութիւնը դատապարտում է նրանց որ իրանց ընկերներին գինի են խմեցնում։ Քրիստոնէութիւնը քաջալերե՞լ է անառակութիւնը։ Ընդհակառակն, անմաքուր խոր-

հուրդն անգամ դատապարտում է։ Քրիստոնէութիւնը խանդարե՞լ է ընտանեաց խաղաղութիւնն եւ երջանկութիւնը։ Քրիստոնէութիւնը հրամայում է որանց սիրել իրանց կանանց եւ կանանց՝ պատուել իրանց արանցը. պատուիրում է ծնողաց չզայրացնել իրանց որդոցը եւ որդոցը պատուիրում է մեծարել իրանց ծընողացը։ Քրիստոնէութիւնը հակառակե՞լ է երբէք մի ժողովուրդի կամ ազգի բարգաւաճման։ Արգիլում է մանաւանդ ամեն տեսակ մոլութիւններ որ ժողովուրդներին թշուառ են անում, եւ սնուցանում է բոլոր այն առաքինութիւնները որոնցով միայն ժողովուրդները կարող են լինել ճշմարտապէս բարգաւաճ եւ բարենչան։ Քրիստոնէութիւնը թոյլատուութիւն անո՞ւմ է ընտանեաց եւ հարստահարութեան։ Ոչ, նա մանաւանդ պատուիրում է թագաւորներին իշխել Աստուծոյ երկիւղով եւ յիշեցնում է թէ կայ մի թագաւոր, որին թագաւորներն էլ համար պիտի տան, եւ նրանց բոլոր հպատակներն Աստուծոյ որդիք են։ Քրիստոնէութիւնը քաջալերո՞ւմ է տանց պատճառի ապստամբութիւններ եւ յեղափոխութիւններ։ Քրիստոնէութիւնը պատուիրում է մարդոց հպատակուել իշխաններին իբրեւ Աստուածանից կարգուածներին։ Քրիստոնէութիւնը ատո՞ւմ է ազգային հարստութիւնը, եւ սնուցանում է՞ ատելութիւն երկրիս այլեւայլ տեղերի մէջտեղ։ Ծանուցանում է մանաւանդ թէ բոլոր մարդիկ մէկ արիւնից են։ Քրիստոնէութիւնը խրախուսում է՞ պատերազմ եւ արիւնահեղութիւն։ Պատուիրում է բոլոր մարդկանց այլեւս պատերազմ չսովորել, եւ ծանուցանում է թէ բոլոր մարդիկ եղբայր են, եւ Աստուած ամենին հայրն է։

Այժմեան քաղաքակրթութիւնը մինչեւ մի աստիճան ընդունել է այս երկրային վարդապետութիւնները, եւ այս պատճառաւ շատ երեւելի պատմիչներ հաստատում են թէ ինչ մաքուր եւ բարի բան որ կայ արդի քաղաքակրթութեան մէջ՝ պտուղ է Քրիստոնէութեան։

բ. Քրիստոնէութեան ազդեցութիւնը մարդոց սրտերի մէջ։

Քրիստոսի մեծ նպատակն այնչափ ժողովրդների ու ազգերի բարեկարգութիւնը չէր որչափ իւրաքանչիւր մարդի ազատումը մեղքի ապականութիւնից ու դատապարտութիւնից։ Քրիստոս գիտէր թէ մարդկային ազգը տառապեցնող եւ ապականող չարիքների գլխաւոր աղբիւրը մարդկանց նիւթական վիճակին կամ նրանց բնակարանային կարգերին եւ յարաբերութիւններին կամ քաղաքային վարչութեան մէջ չէր։ Քրիստոս գիտէր թէ ժողովուրդները չէին կարող մաքրուիլ, ոչ էլ ազգերը կարող էին բարձրանալ միայն թէ այն ժողովուրդներն եւ ազգերը բաղկացնող անհատ մարդկանց լուսաւորուելով եւ մաքրուելովը։ Եւ նրա մեծ նպատակն էր լուսաւորել եւ սրբացնել իւրաքանչիւր մարդ։ Գիտէր թէ չարիքների գլխաւոր աղբիւրը մարդկային սրտին մէջ է, եւ թէ մարդիկ սուտ են, խարեբայ, հպարտ, չարասիրտ, անձնասէր, ամբարիշտ, ոչ թէ նրա համար որ աղքատ են կամ հարուստ, այլ նրա համար որ նրանից ամեն մինն ունի ապականուած սիրտ։ Ուստի Քրիստոս ձեռք զարկեց փոխել մարդկանց սիրտը, փրկել նրանց իրանց ցանկութիւնների գերութիւնից, կամաւ եւ ուրախութեամբ հնազանդեցնել նրանց Աստուծոյ օրէնքներին, եւ վերջին ստեղծել նրանց Աստուծոյ պատկերի պէս, որպէսզի սիրեն Աստուած ամենին հայրն է։

աստուծուն իրանց բոլոր սրտով, սիրեն նաեւ իրանց ընկերներին իրանց անձին պէս։

Մարդկանց սրտին մէջ Քրիստոնէութեան ազդեցութիւնը նշմարել արդարեւ դժուարին է, որովհետեւ այս ազդեցութիւնը մինչեւ մի աստիճան ծածկում է։ Քրիստոսի հոգեւոր թագաւորութիւնը արտաքուստ երեւացած բաներով չի գալ։ Բայց եւ այնպէս անցեալ տասնեւհինգ դարերի մէջ առատ ապացոյցներ կան Քրիստոնէութեան ազդեցութեան փառաւոր արդիւնքներին։ Եթէ կարելի լինէր մէկ տեղ բերել բոլոր այն անձինքներին որ ուրախութեամբ վկայում են թէ Քրիստոսի Աւետարանն իրանց սրտերին մէջ եղաւ արդարեւ Աստուծոյ զօրութիւն, ինչ մեծ բազմութիւն պէտք է լինէր մեր առաջին։ Քրիստոնէութեան առաջին դարից պիտի գտնուէին չատերը այն բազմութեան մէջ։ Առաջին դարուց պիտի միացնէին Առաքեալները, հայրերը ու մարտիրոսները իրանց ձայները նրանց ձայներին հետ որ մեր օրերում հալածվում են արդարութեան համար։ Այժմեան քաղաքակիրթ երկիրների գիտուն եւ աղնուական անձինք հեթանոս երկիրների նուաստութիւնից եւ ապականութիւնից ազատուած մարդկանց մօտ պիտի գտնուէին։ Այնտեղ պիտի գտնուէին մարդիկ հիւսիսից եւ հարաւից, արեւելքից եւ արեւմուտքից, Եւրոպայի համալսարաններից եւ Աֆրիկայի վայրենիների անտառներից, Ամերիկայի ազատ կառավարութիւնից եւ Ասիոյ խախուտ թագաւորութիւնից։ Ցոյները, Հռոմայեցիները եւ բարբարոսները, իշխանները եւ հպատակները, ամեն դարից, ամեն երկրից եւ ամեն աստիճանի մարդիկ որ անկեղծաբար եւ սրտանց ընդունել եւ Քրիստոսի Աւետարանը, պիտի

վկայէին թէ այն Աւետարանն եղաւ զօրութիւն, ճշմարիտ զօրութիւն, գերբնական զօրութիւն նրանց սրտերի մէջ։ Պիտի ուրախութեամբ վկայէին թէ Աւետարանը կատարեց նրանց սրտերին մէջ ինչ որ ոչ հարստութիւն, ոչ գիտութիւն եւ ոչ քաղաքակրթութիւն կարող էին կատարել, այսինքն թէ Աւետարանը փոխեց նրանց ապականուած բնութիւնը։ Հպարտները պիտի վկայէին թէ Աւետարանի ազդեցութեամբ եղան խոնարհ. պղծագործները պիտի վկայէին թէ նոյն ազդեցութիւնով նրանց սիրտերն այնպէս մաքրուեցին որ գարշվում են իրանց առաջի անմաքրութիւնից. անձնասէրները պիտի վկայէին թէ Աւետարանով կարող եղան գթած լինել, կուսասէրները՝ խոզաղասէր, եւ տիրակալները ներող։

Սրանք ամենքը պիտի վկայէին թէ Աւետարանի ներգործելովն նրանց սրտերին մէջ այլեւս կայր հեռեւողներ չէին սատանային եւ կամաւոր մեղքի գերիներ, եւ թէ՝ այլեւս հաճութիւն չէին զգում իրանց ապականութեան մէջ, եւ ոչ էլ պարծանք էին համարում իրանց ամօթալի գործերը։ Ամենքն էլ պիտի ասէին թէ իրանց աչքերը բացուած էին տեսնելու մեղքի սոսկալի բնութիւնը, սրբութեան գեղեցկութիւնը եւ ճշմարտութեան ու արդարութեան գերազանցութիւնը, եւ թէ իրանց սրտերի մէջ գոյացել էր ատելութիւն ամեն բանի դէմ որ սուտ, անմաքուր եւ անուրբ է, եւ գերագոյն սէր՝ ճշմարտութեան եւ արդարութեան համար եւ ամենից առաւել Յիսուսի համար, որ է մարդկանց միմիայն ասուածային Փրկիչ մեղքերից։

Արդարեւ ամենքն էլ պիտի ցուցէին թէ այս բարոյական եւ հոգեւոր փոփոխութիւնը դեռ բոլորովին

կատարեալ չէր նրանց սրտերում, եւ թէ տակաւին ամբողջապէս ազատուած չէին մեղքի զօրութիւնից եւ ապականութիւնից, բայց ամենքն էլ պիտի վկայէին թէ իրանց սրտերը օրից օր մաքրւում էին, թէ նրանց բարքն գնալով դառնում էր դէպի լաւն եւ թէ այլ եւս չէին տարակուսում թէ սրբացմանը գործը փոքր առ փոքր պիտի հասնէր կատարման։

Անցեալ տասնեւմէկը դարի մէջ ամեն տեղից եւ ամեն առաքեանից մարդիկ այսպիսի վկայութիւններ են տուած։ Նաեւ այսօր հազարաւոր մարդիկ պատրաստ են վկայելու թէ Քրիստոսի Աւետարանը նրանց համար անհունապէս աւելի է, քան թէ սրբազան պատմութիւն, կամ վաղեմի աւանդութիւն կամ ազգային հաստատութիւն եւ կամ եկեղեցական ծէսերի դրութիւն, եւ թէ Աւետարանը նրանց համար զօրութիւն է, միշտ գործող եւ միշտ հզօր զօրութիւն։ Թէ՛ Եւրոպայի ազգերից եւ թէ Աֆրիկայի ցեղերից հարիւր հազարաւոր անձինք փորձով համոզուած են որ Քրիստոսի Աւետարանը բուն իսկ Աստուծոյ զօրութիւնն է նրանց սրտերի մէջ։ Կան բիւրաւոր մարդիկ որ բացի Քրիստոսի Աւետարանից ուրիշ բանի չեն ընծայել այն զօրութիւնը որով կարողացել են դէմ դնել իրանց ցանկութիւններին եւ հնազանդել Աստուծոյ օրէնքին։

Ամեն ողջամիտ մարդ պարտ է հարցնել թէ ո՞րտեղից եկաւ այն զօրութիւնն որ ոչ միայն նուաճեց Հռոմը, այլեւ ազատեց մեծ մասամբ Հռոմի քաղաքացիներին իրանց հպարտութիւնից, անգթութիւնից եւ անառակութիւնից։ Որտեղից եկաւ այն զօրութիւնն որ ոչ թէ մէկ դարի մէջ միայն գործեց, այլ յաւաջ տարաւ իր գործը բոլոր դարերի մէջ։ Որտեղից եկաւ

այն զօրութիւնը որ միեւնոյն ազդեցութիւնն ունեցաւ ամենաբարձր քաղաքակրթութեան եւ ամենաստոր ին բարբարոսութեան մէջ, եւ որ իր հզօր կարողութեամբ կարողանայ հասնել ամենից բարձր կարգի եւ ամենից յետին աստիճան նուաստացած մարդկանց։ Որտեղից է այն զօրութիւնը որ կարողանայ յեղափոխել ազգեր, քարեկարգել ժողովուրդներ, եւ նորոգել առանձին մարդկանց եւ որ է միշտ եւ յաւիտեան օրհնեալ իր ազդեցութեան մէջ։ Արդարեւ պէտք է որ մի այսպիսի զօրութիւն Աստուածանից լինի։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԱՊԱՅՈՅՑ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Քրիստոնէութիւնը զանազանւում է ուրիշ կրօնքներից նաեւ նրանով որ մարգարէութիւններից եւ նրանց կատարումից բղխող ապացոյցներով հաստատում է իր աստուածային ծագումը։ Ներկայ դարում գիտնական մարդիկ կարող են դիւրաւ քննել այս ապացոյցները բաղդատելով Սուրբ Գրոց նախնի մարգարէութիւնները նրանց այժմեան կատարման հետ, եւ այսպէս կարող են ուսուցել Քրիստոնէութեան աստուածային ծագումը։ Սուրբ Գրոց մարգարէութիւններն օգնում են նաեւ ապացուցանել թէ Հին եւ Նոր Կտակարանները միեւնոյն յայտնութեան մասերն են, եւ թէ երկուսն էլ Աստուածանից են բղխում։

Մարգարէութիւնների ապացոյցները կարող են բաժանուել հետեւեալ չորս կէտերի։

1. Սուրբ Գրոց մէջ ապագայ դէպքերի վրայ շատ մարգարէութիւններ են գտնւում, եւ պատմական համոզիչ փաստեր կան թէ այն մարգարէութիւնները դէպքերի կատարուելուց շատ տարիներ, ոմանք նաեւ շատ դարեր առաջ, հրատարակուեցին։

2. Այն մարգարէութիւնների շատերը թւում էին այն ժամանակ. երբ հրատարակուեցին, այնպէս հաւանական որ լոկ մարդկային հեռատեսութիւնը չէր կարող նրանց կատարումը կանխաւ տեսնել, նաեւ այնչափ շատ էին եւ այնպիսի ոմանք պարագաներով նկարագրուած էին, որ նրանց կատարումը չէ կարող դիպուածով եղած լինել։

3. Մարգարէութիւնների շատերն արդէն կատարուած են իրանց բոլոր պարագաներովը, մէկ մասն էլ հիմա կատարուելու վրայ են։

4. Ապագայ դէպքերն առաջուց գիտենալը վեր է քան մարդկային մտքի կարողութիւնը։ Ամենազէտ Աստուծուն է միայն կանխագէտ լինել, ուստի եւ Սուրբ Գրքերի մարգարէութիւններն անող մարդիկ, ինչպէս իրանք էլ ասում են, հարկաւ Աստուածանից ներշնչեալ լինելու էին։

Թէ՛ Հին Կտակարանի եւ թէ՛ Նորի մէջ կան շատ մարգարէութիւններ, սակայն այս մարգարէութիւնների շատերը կարող են չորս ընդհանուր դասի բաժանուիլ։

ա) Մեսիային վերաբերեալ մարգարէութիւններ։

բ) Հրէից ազգին եւ Երուսաղէմի կոլոնման վերաբերեալ մարգարէութիւններ,

գ) Քրիստոսի թագաւորութեան տարածման եւ ապագայ փառացը վերաբերեալ մարգարէութիւններ,

դ) Այլ եւ այլ ազգերի, քաղաքների եւ թագաւորութիւնների վրայ մարգարէութիւններ։

Ա. Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւններ.— ԺԴ. գլխին մէջ արդէն տեսանք Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւններն ու նրանց կատարումը։ Այստեղ տեսանք որ Հին Կտակարանի մէջ կային մարգարէութիւններ որ վերաբերւում էին ժամանակին որում պիտի գար Քրիստոս, տեղին՝ ուր պիտի ծնուէր, ցեղին՝ որից պիտի յառաջ գար։ Մարգա-

բէութիւնները որ վերաբերում էին նրա գործերին, չարչարանքներին, մահին եւ յարութեանը։ Տեսանք նաեւ որ բոլոր այս մարգարէութիւնները ճշմարիտ կատարուեցին Քրիստոսի վրայ։

Բ. Հրէից ազգին վերաբերեալ մարգարէութիւններ.— Այս մարգարէութիւնները կարող են չորսի բաժանուիլ, այսինքն՝ 1. Մարգարէութիւններ դէպքին վերաբերեալ որ պիտի կատարուէին Մեսիայի գալուց յառաջ, 2. մարգարէութիւններ եղանակին վերաբերեալ որով Հրեաները պիտի վարուէին Մեսիայի հետ, 3. մարգարէութիւններ Երուսաղէմի կործանման վերաբերեալ, եւ 4. մարգարէութիւններ նրանից յետոյ Հրէից վիճակին վերաբերեալ։

1. Մարգարէութիւններ վերաբերեալ այն դէպքերին որ պիտի կատարուէին Մեսիայի գալուց յառաջ.— Այս կարգի մարգարէութիւններից պիտի քննենք միայն այն որ վերաբերում են «Բաբիլոնեան գերութեան»։

713 թուականին Քրիստոսից առաջ, Եզեկիայի թագաւորութեան ժամանակը, Եսային մարգարէացաւ թագաւորին թէ օր պիտի գար որ թագաւորի տանը մէջ գտնուած բոլոր բաները եւ ինչ որ նրա հայրերը ժողովուած էին՝ պիտի տարուէին Բաբիլոն, նրա որդիները գերի պիտի տարուէին, եւ պիտի լինէին ներքինիներ Բաբիլոնի թագաւորի պալատի մէջ (Դ. Թագ. Ի. 1–18)։ Երեմիայի մարգարէութեան մէջ (Եր. Լ.Բ. 28) գերեվարի անունն էլ այսինքն Նաբուզոդոնոսոր, յիշուած է, նաեւ գերութեան տեւողութիւնը, այսինքն 70 տարի, եւ Հրէից դարձը Երուսաղէմ (Եր. ԻԹ. 10)։ Եսայեայ մարգարէութեան մէջ յիշուած է

նոյնիսկ Կիւրոս թագաւորը, որի հրամանով Հրեաները պիտի դառնային իրենց երկիրը եւ տաճարը կրկին պիտի շինուէր (Եսայ. ԽԴ. 28, ԽԵ. 1–5)։ Այս մարգարէութիւնը գրուած էր գոնէ 150 տարի առաջ քան դէպքերի կատարուիլն ու տարի առաջ քան Կիւրոսի ծնունդը։

Պատմութիւնը վկայում է թէ այս մարգարէութիւնների բոլորն էլ կատարուեցին։ Նաբուզոդոնոսոր առաւ Երուսաղէմը եւ Հրեաներին գերի տարաւ Բաբիլոն, որտեղ մնացին գերութեան մէջ իբր 70 տարի. եւ յետոյ Կիւրոս հրաման տուաւ նրանց դառնալ Երուսաղէմ եւ տաճարը շինել։

2. Մարգարէութիւններ եղանակին վերաբերեալ որով պիտի վարուէին Հրեաները Քրիստոսի հետ։

Եսայի մարգարէն Քրիստոսի գալուց 700 տարի յառաջ մարգարէացել էր թէ Հրեաները պիտի մերժէին Մեսիային, ու մահի պիտի մատնէին նրան «Ես. ԾԳ. 8»։ Նաեւ Դանիէլ մարգարէն աւելի քան 500 տարի Քրիստոսից յառաջ, մարգարէացել էր թէ Մեսիան պիտի կըտրուէր, (Տես Դ. ԺԳ)։

Այս մարգարէութիւններն այն ժամանակ շատ անհաւանական էին, ու գրեթէ անհաւատալի։ Հրեաները պիտի կարէին Մեսիան որին այնչափ դարերից իվեր սպասում էին։ Բայց եւ այնպէս կարեցին, եւ մարգարէութիւնը կատարուեց։

3. Երուսաղէմի կործանման վերաբերեալ մարգարէութիւններ։

Քրիստոս մարգարէացաւ թէ Երուսաղէմ չուտով պիտի կործանուէր, եւ բոլորովին աւերակ պիտի լինէր

«Մատթ. ԻԳ. 37, 38, Մարկ. ԺԳ. 2, 4, 30»։ Յովսեփոսի եւ ուրիշ մատենագիրների անելով Երուսաղէմը առնուեց եւ տաճարը կործանուեց Քրիստոսի մարգարէութիւնից իբր 38 տարի յետոյ։

Քրիստոս մարգարէացաւ թէ Երուսաղէմը պիտի պաշարուէր զօրքերով «Մատթ. ԻԴ. 15. Ղուկ. ԻԱ. 20»։ Յովսեփոս եւ ուրիշ պատմիչներ պատմում են թէ հռոմայեցի զօրապետը Տիտոս պաշարեց Երուսաղէմը։

Քրիստոս մարգարէացաւ թէ Քրիստոնեաները պատնէշ պիտի ունենային քաղաքից փախչելու «Մատթ. ԻԴ. 16–20, Ղուկ. ԻԱ. 20–22» պատմութիւնից, յայտնի է թէ Քրիստոնեաները Քրիստոսից տրուած նշանը տեսնելով խոյս տուին քաղաքից դէպի Պէլլա, եւ այսպէս ազատուեցին։

Քրիստոս մարգարէացաւ թէ Երուսաղէմի բնակիչներն այնպիսի նեղութեան մէջ պիտի ընկնէին որի նմանը տեսնուած չէր աշխարհիս վրայ (Մատթ. ԻԵ. 21)։ Յովսեփոսի ասելով պաշարուած Հրէից նեղութիւնները սոսկալի էին։ Յովսեփոս ասում է. «Աշխարհիս սկզբից որ եւիցէ թշուառութիւն ոչինչ է թւում ինձ Հրէից թշուառութեան մօտ։»

Քրիստոս մարգարէացաւ նաեւ թէ Երուսաղէմի բնակիչները «Բոլոր ազգերի մէջ գերի պիտի տարուէին» (Ղուկ. ԻԱ, 24)։ Յովսեփոս պատմում է թէ Հռոմայեցիք այն պատերազմի ժամանակ 97,000 մարդ գերի տարին եւ նրանք որ 17 տարուց ցած էին իբրեւ տարուկ վաճառուեցին, եւ ցրուեցին Հռոմայեցոց կայսերութեան բոլոր գաւառների մէջ։

Քրիստոս մարգարէացաւ թէ տաճարն այնպէս հիմնայատակ պիտի լինէր որ քար քարի վրայ պիտի չմնար (Մատթ. ԻԴ. 2)։

Տաճարն հոյակապ շէնք էր, եւ նրա հիմնայատակ կործանման վերաբերեալ այս մարգարէութիւնը բոլորովին անհաւանական էր թւում։ Հռոմայեցի զօրավարը Տիտոս ուզում էր պահել այն շէնքը, եւ շատ անգամ խրատ տուեց Հրէից անձնատուր լինել տաճարն աւերումից ազատելու համար, բայց նրանք մտիկ չարին։ Երբ քաղաքն առնուեց, զինուորներից ոմանք կրակի տուին տաճարը։ Տիտոս ջանաց հանգցնել կրակը, բայց անկարելի եղաւ։ Յետոյ, նրա հրամանին համեմատ, տաճարի պատերը քանդուեցին մինչեւ հիմը, այնպէս որ ճշմարտապէս քար քարի վրայ չմնաց։

Քրիստոս մարգարէացաւ թէ Երուսաղէմը ոտնակոխ պիտի լինէր հեթանոսներից մինչեւ որ հեթանոսների ժամանակները լրանային (Ղուկ. ԻԱ. 24)։ Այս մարգարէութիւնը բառ առ բառ կատարուեց։ Երուսաղէմը այն ժամանակից մինչեւ հիմա հեթանոսների կոխան է եղած։

Ընթերցողները սա էլ նկատելու են թէ Քրիստոսի մարգարէութիւնների այս բառ առ բառ կատարումն եղաւ ոչ թէ Քրիստոնեայ այլ հեթանոս զօրքերի ձեռքով, եւ պատմուեց ոչ թէ Քրիստոնեայ այլ մի Հրեայ պատմիչից։ Այսպիսի ապացոյցները բաւական են ամենից աւելի թերահաւատ մարդկանց անգամ համոզել թէ Յիսուս գերմարդկային գիտութիւն ունէր։

4. Հրէից ապագայ վիճակին վերաբերեալ մարգարէութիւններ։

Մովսէս մարգարէացաւ Հրէից ապագայ վիճակին համար, «Պիտի ջնջուի այն երկրի վերայից ուր որ հիմա գնում էք նրանց ժառանգելու։ Եւ Տէրը երկրիս մէկ ծայրից մինչեւ միւս ծայրը բոլոր ժողովուրդների մէջ պիտի ցրուէ քեզ» (Բ. օր. ԻԸ 63, 64)։ Այս մարգարէու-

թիւնը ճշդութեամբ կատարուեց։ Նախ Իսրայէլի տասը ցեղերը գերի տարուեցին Ասորեստանի թագաւորից, եւ յետոյ միւս երկու ցեղերը գերի տարուեց Բաբիլոն։ Գերի տարուած Հրեաներից չատերը իբրեւ ստրուկ եւ իբրեւ փախստական գտնվում էին Մարաստանային տերութեան աւելի հեռաւոր գաւառների մէջ, Փոքր Ասիա, Հայաստան, Արաբիա, Եգիպտոս, Յունաստան եւ Իտալիա։ Կիւրոս գերի տարուած Հրեաներից չատերին դարձրեց իրանց հայրենի երկիրը, բայց յետոյ Հռոմայեցիք նուաճեցին նրանց երկիրը, եւ նրանք դարձեալ ցրուեցին երկրիս ամեն կողմերը ուր գտնվումեն մինչեւ այսօր, Մովսէսի մարգարէութեան պէս, երկրիս մէջ ծայրից մինչեւ միւս ծայրը։

Մարգարէացուած էր սակայն թէ Հրեաները պիտի մնային իբրեւ առանձին ժողովուրդ. «Այսու ամենայնիւ երբոր իրանց թշնամիների երկրումը լինեն, նրանց չեմ մերժիլ, եւ նրանցից չեմ զզուիլ նրանց բոլորովին կորցնելու՝ եւ նրանց հետ արած ուխտս ջնջելու չափ. որովհետեւ ես եմ Եհովան նրանց Աստուածը» (Ղեւտ. ԻԶ. 44)։ Մի՞թէ զարմանալի չէ որ, թէպէտ Հրեաները այսչափ դարերից ի վեր ցրուած են բոլոր ազգերի մէջ, տակաւին մնում են ուրոյն ժողովուրդ։ Իրանց ազգայնութիւնը կորցրած չեն։

Այս ազգի նկատմամբ մարգարէացուած էր նաեւ. «Եւ այն ազգերի մէջ հանգստութիւն չես գտնիլ, եւ ոտքիդ թաթին հանգչելու տեղ չի լինիլ. եւ Եհովան քեզ այնտեղ զողացող սիրտ կ'տայ, աչքի նուազում ու հոգուտրամութիւն. եւ կեանքդ քո առաջիդ կախման մէջ կը լինի, եւ գիշեր ցերեկ կ'վախենաս, եւ կեանքիդ ապահով չես լինել. առաւօտը կասես. Երանի թէ իրիկունը լինէր, եւ իրիկունը կասես. երանի թէ առաւօտ լինէր. սրտիդ ահ ու զողիցը եւ աչքերիդ տեսած բաներիցը» (Բ. Օր. ԻԸ. 65—67)։

Հրէից ազգի տառապանքն այս վերջին 1800 տարուան մէջ ի՜նչ ճշդութեամբ կատարուած ցոյց է տալիս այս մարգարէութիւնը։ Ո՛րչափ ողբալի եղաւ Հրէից վիճակն Եւրոպայի բոլոր կողմերը։ Ո՛րչափ անարգանք եւ վիշտ կրեցին։ Ո՛րպիսի արիւնահեղ հալածման նշանակ եղան։ Զեղաւ մի ալգ որ Հրեաներից աւելի տանջուեց։ Անգղիոյ մէջ 1189 թուականին հալածուեցին անխնայ, եւ 1290 թուականին բոլորովին արտաքսուեցին այն երկրից։ 1395 թուականին արտաքսուեցին Գաղղիայից։ Սոսկալի հալածում կրեցին Գերմանիա 1348ից մինչեւ 1350 թուականը։ Նրանցից չատերը մեռցուեցին Սպանիոյ մէջ. 1392 թուականին. 1492 թուականին 70000 Հրեայ ընտանիք աքսորուեցին այն երկրից, եւ 1493 թուականին 20000 Հրեայ ընտանիք աքսորուեցին Սիկիլիայից։ Յաջորդ դարուն մէջ չարաչար հալածմունք կրեցին Գերմանիայի եւ Իտալիայի մէջ։ Հրէից պատմութիւնից յայտնի է թէ այս մարգարէութիւնը ճշդութեամբ կատարուեց։

Մովսէս մարգարէացաւ թէ Հրեաները «զարմանքի ու առակի եւ կատակի ենթակայ» պիտի լինէին բոլոր ազգերի մէջ ուր Տէրը պիտի ցրուէր նրանց (Բ Օր. ԻԸ. 37)։ Ոչ ոք կարող չէ ուրանալ թէ Հրէից վերաբերեալ բոլոր այս մարգարէութիւնները կատարուեցին զարմանալի կերպով։

Գ. Քրիստոսի թագաւորութեան ծաւալման եւ փառացը վերաբերեալ մարգարէութիւններ։

«Երկրի ամեն ծայրերը կ'յիշեն եւ Տիրոջ մօտ կ'դառնան» (Սաղմ. ԻԲ. 27)։

Ոչ ոք կարող չէ ուրանալ թէ երկրի ազգերն հիմայ փոքր առ փոքր Տիրոջը մօտ դառնալու վրայ են։

«Եթէովպացիքը իրանց ձեռքերը կ'մեկնեն դէպի Աստուած» (Սաղմ. ԿԸ 31)։ Աֆրիկան արդէն սկսել է ընդունել Քրիստոսի Աւետարանը։

Եւ շատ ժողովուրդներ կ'գնան եւ կասեն, Եկէք վերգնանք Եհովայի սարը Յակոբի Աստուծոյ տունը, եւ նա կ'սովորեցնէ մեզ իր ճանապարհները, եւ մենք կ'գնանք նրա շաւիղներումը» (Ես. Բ. 3։)։

Եւրոպայի եւ Ամերիկայի ազգերը մի ըստ միոջէ աստին այս անցեալ դարերի մէջ. Ասիոյ եւ Աֆրիկայի ազգերն էլ մինը միւսի ետեւից ասում են նոյն խոսքն այս դարիս մէջ։

«Երկիրը պիտի լցուի Տիրոջ փառաց գիտութեամբը, ինչպէս որ ջուրերը ծածկում են ծովը» (Ամբակ. Բ 14)։ Աստուծոյ խօսքը թարգմանուելու վրայ է երկրիս բոլոր լեզուներին, Քրիստոսի Աւետարանը հիմայ քարոզվում է գրեթէ բոլոր ազգերին, եւ երկիրս փոքր առ փոքր լցուելու վրայ է Աստուծոյ գիտութեամբ։

«Կղզիները սպասում են նրա օրէնքին» (Ես. ԽԲ. 4)։

Այս մարգարէութիւնն ի՞նչ զարմանալի կերպով կատարուեց այս դարիս մէջ, մինչ այնչափ կղզիներ կոապստութիւնը թողին եւ ընդունեցին քրիստոնէութիւնը։

«Եւ դժոխքի դռները չեն յաղթել նրան» (Մատթ. ԺԶ. 18)։

Դժոխքի դռները արդարեւ ջանացին անցեալ տասն եւ ութ տարիների մէջ յաղթել Քրիստոսի եկեղեցին,

բայց չ'կարողացան. ինչ զօրութիւն կարող չեղաւ կործանել Քրիստոսի եկեղեցին։

Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մէջ, որ յաւիտենական աւետիք ունէր որ քարոզէր երկրի վրայ բնակողներին եւ ամեն ազգերի եւ ցեղերի եւ լեզուների եւ ժողովուրդի» (Յայտ. ԺԴ. 6)։

Յաւիտենական աւետիքը, Քրիստոսի Աւետարանը, հիմա քարոզվում է գրեթէ ամեն լեզուով եւ բոլոր ազգերին։

Կարող էինք յիշել ուրիշ շատ մարգարէութիւններ Քրիստոսի թագաւորութեան տարածման վերաբերեալ, եւ կարող էինք մէջ բերել ապացոյցներ թէ ճշդիւ կատարուած են եւ կատարվումեն հիմայ, բայց սրա վրայ ընդարձակ խօսել հարկաւոր չենք համարում։

Գ. Մասնաւոր քաղաքների եւ ազգերի վերաբերեալ մարգարէութիւններ։

Այսպիսի մարգարէութիւններ քիչ չկան Սուրբ Գրոց մէջ, բայց այսպիսի մարգարէութիւններից կ'յիշենք այստեղ Տիրոսի, Նինուէի եւ Բաբիլոնի վերաբերեալ մարգարէութիւնները միայն։

1. Տիրոսի վերաբերեալ մարգարէութիւններ։

Տիրոս Միջերկրական ծովի վրայ ամենից անուանի քաղաքն էր։ Այս հարուստ եւ անհամ քաղաքի վրայ մարգարէները շատ բան են ասած։

Ա. Եզեկիել մարգարէացաւ թէ Տէրը Տիրոսի դէմ պիտի բերէր Բաբիլոնի թագաւոր Նաբուգոդոնոսորին, որ Տիրոսի դէմ կռիւ աշտարակ պիտի չինէր, եւ հողաբլուրներ պիտի կանգնեցնէր եւ նրա դէմ վահան պիտի բարձրացնէր (Եզեկ. ԻԶ. 7, 8, 9)։ Այս մարգա-

թիւնը կատարուեց երբ Նաբուգոդոնոսոր Տիւրոսը 13 տարի պաշարելուց յետոյ առաւ։ Փիւնիկեցոց պատմութիւնը հաստատում է այս։

Բ. Եսայի մարգարէացաւ թէ Տիւրոս կ'մոռացուի եօթանասուն տարի, բայց յետ այնօրիկ պիտի հաստատուէր իր առաջին յաջողութեան մէջ (Եսայ. ԻԳ. 15–18)։ Գիտացուած է թէ Տիւրոսի առաջին կործանումից յետոյ քաղաքի բնակիչները գնացին մի կղզի իբր 30 ասպարէզ, այսինքն իբր մէկ ժամ հեռու ցամաքից, եւ այնտեղ շինեցին մի քաղաք որ հարստացաւ եւ զօրացաւ, եւ մեծամեծ բերդերով ամրացաւ։ Այս մարգարէութիւնը եղաւ նրա կատարուելուց աւելի քան հարիւր տարի առաջ։

Գ. Զաքարիա մարգարէացաւ թէ նոր քաղաքը, որ իբր թէ ծովի մէջ շինուեց կրակով պիտի կործանուէր (Զաք. Թ. 3, 4)։ Եզեկիէլ մարգարէացաւ թէ Տիւրոսի երկրորդ աւերումը պիտի լինէր կրակով (Եզեկ. ԻԸ. 18)։ Այս մարգարէութիւնները կատարուեցին նրանց յայտնուելուց աւելի քան 200 տարի յետոյ. երբ Աղեքսանդր Մեծն պաշարեց քաղաքը. եւ առնելով այրեց։ Կուինտոս Կուրտիոս հաստատում է թէ այսպէս եղաւ։

Ե. Եզեկիէլ մարգարէացաւ թէ Տիւրոսի քարերը փայտերը եւ հողը պիտի ջրի մէջը թափուէին (Եզեկ. ԻՁ. 12)։ Այս մարգարէութիւնը զարմանալի կերպով կատարուեց երբ Աղեքսանդրը, քանի որ Տիւրոսը պաշարում էր, հին քաղաքի քարերն եւ փլատակներն առաւ ծովը ցամաքից մինչեւ կղզին լեցնելու եւ ճանապարհ շինելու համար։ Այս գործը շատ դժուարին էր, եւ զօրքը եօթն ամիս զբաղուեց այն ճանապարհը շինելու։

Ե. Եզեկիէլ մարգարէացաւ Տիւրոսի ամայութիւնը «Եւ ես քեզ պիտի չոր ապառաժ շինեմ. ուրկան փռելու տեղ պիտի դառնաս, այլեւս պիտի չշինուիս. որովհետեւ ես Տէրս եմ խօսել, ասում է Տէր Եհովան» (Եզեկ. ԻՁ. 14)։ Այս մարգարէութիւնը Եզեկիէլի մահից մի քանի դար յետոյ կատարուեց, եւ մարգարէութեան ամբողջ կատարումն եղաւ Բրիտոսի թուականին 1291-ին, երբ Եգիպտոսի սուլթանն առաւ քաղաքը։ Այն ժամանակ բնակիչներն իրանց նաւերը մտան եւ բոլորովին թողեցին քաղաքը յաղթողների ձեռքը։ Տիւրոսի վերաբերեալ այս մարգարէութեան կատարումը հաստատումն ճամբորդները, որ ասումն թէ Տիւրոսը աւերակների կոյտ է միայն։

Մանաւանդ անուն մի ճանապարհորդ 1694 թուականին մի ամբողջ տուն անգամ չգտաւ այնտեղ։ 1738 թուականին միայն մի քանի ընտանիք կային այնտեղ։ Մի ճանապարհորդ ասում է «Երբ ծովից մօտենում ես քաղաքին, նրա հին փառաւորութիւնից մի բան չես տեսնում։ Բոլոր բնակիչներն են մի քանի ձկնորսներ։» Նոյն հեղինակը աւելացնում է. «Ժայռի գագաթի պէս է, մի տեղ ուր ձկնորսներն իրանց ուռկանները չորացնում են։» Նոյն իսկ անհաւատ Վոլնէյ, Տիւրոսի հին փառաւորութիւնը այժմեայ ամայութեան հետ բաղդատելուց յետոյ, ասում է «Քաղաքի գիւղ է իբր 50 կամ 60 ընտանիքից բաղկացած որ մասամբ ձկնորսութեամբ են ապրում։» Մի ուրիշ ճանապարհորդ նկարագրում է Տիւրոսը իբր «մի ապառաժ ուր ձկնորսները չորացնում են իրանց ուռկանները»։

Այս մարգարէութիւնները տուին երբ Տիւրոս հոյակապ քաղաք էր, բայց մենք այնչափ զարերից յետոյ ենք տեսնում այն մարգարէութիւնների ամբողջապէս կատարուելը։

2 Նինուէի վերաբերեալ մարգարէութիւններ։

Նինուէ քաղաքն, որ Տիգրիսի արեւելեան եզերքին վրայ շինուած էր, հին Ասորեստանի մայրաքաղաքն էր եւ իբրեւ 600,000 բնակիչ ունէր։ Ասւում է թէ Նինուէի պատերը 100 ոտք բարձր էին, շրջապատը 60 մղոն էր, եւ 1,500 աշտարակներով պաշտպանվում էր, որոնց իւրաքանչիւրը 200 ոտք բարձր էր։ Այս քաղաքը երկար ժամանակ արեւելքին տէր եղաւ։ Ունէր բազմաթիւ անտառակներ եւ գեղեցիկ պարտէզներ։ Բնակիչները հարուստ ու պատերազմող էին, բայց այս քաղաքի մէջ զեղխութիւն ու ընդհանուր ապականութիւն։

Նինուէացիների չարութեան համար Տէրն ուղարկեց Յոնան մարգարէին, իբր 860 թուականին Քրիստոսից առաջ, նրանց ազդարարութիւն անելու։ Նրանք զըղջացին մարգարէի քարոզութիւնը լսելով, եւ նրանց պատիժը մի առ ժամանակ ուշացաւ։

700 թուականի ժամանակներում Քրիստոսից առաջ Տէրը ուղարկեց Նաւում մարգարէին այս քաղաքի կործանումն իմացնելու Նինուէացիներին. Այս մարգարէութիւնը գտնվում է Նաւումի գրքին մէջ։ Այս գրքի առաջին գլխին մէջ Տիրոջը մեծափառութեան եւ անդիմադրելի զօրութեան նկարագիրը կայ, նաեւ նոյն գլխին մէջ ցոյց է տրուած Ատուծոյ նպատակը Նինուէն բոլորովին ջնջելու։ Երկրորդ գլխին մէջ նկարագրուած է ապագայ կործանումը որ օտար զօրքերի արձակմամբ պիտի լինէր։ Երրորդ գլխի մէջ էլ նկարագրուած է Նինուէի ապագայ ամայութիւնը նաեւ պատճառները թէ ինչու համար Տէրը պիտի կործանէր Նինուէն։

ուած են, «Բո գերեզմանը պիտի չինեմ, որովհետեւ թերեւ եղար» (Նաւ. Ա. 14)։ «Վա՛յ արիւնահեղութեան քաղաքին, բոլորը լիքն է սուտութեամբ՝ յափշտակութեամբ» (Նաւ. Գ. 1)։

Մարգարէն գուշակում է թէ ինչ կերպով պիտի առնուէր քաղաքը, «Յորդանոս հեղեղով պիտի վերջ տանի նրա տեղին» (Նաւում Ա. 8)։ Գետերի դռները պիտի բացուին. եւ պալատը պիտի հալուի» (Նաւում. Բ. 6)։ Դիոդորոս պատմիչը պատմում է թէ Մարաց եւ Պարսից զօրքով Նինուէի պաշարման երրորդ տարին յորդ անձրեւներից գետը բարձրանալով պարիսպների մէկ մասը տարաւ, այնպէս որ թշնամու զօրքը կարողացաւ ներս մտնել եւ առնել քաղաքը, եւ այսպէս մարգարէութիւնն կատարուեց։

Մարգարէն յիշում է նաեւ թէ ինչ պատճառաւ քաղաքը պիտի առնուէր. «Մինչեւ որ նրանք փուշերի պէս իրար ճճուած են, եւ իրը իրանց գինիով արբածներ, պիտի ապառուին բոլորովին չոր յարդի պէս» (Նաւ. Ա. 10)։ Նոյն պատմիչը, Դիոդորոս պատմում է թէ երբ պաշարողները վերջին եւ յաջող յարձակումն արին, Նինուէացիք իրանց տուած էին ուտել խմելու եւ արբած էին։

Այս մարգարէութեան երրորդ գլխի առաջին համարներին մէջ նկարագրութիւն կայ քաղաքի առման համար, եւ նկարագրութիւնը որը անում են արդի հնագէտները, որ սկսել են փորել Նինուէի աւերակները, յայտնի ցոյց է տալիս թէ բառ առ բառ կատարուած մարգարէութիւնը։

Մարգարէն գուշակեց որ քաղաքը պիտի քանդուի ոչ միայն հեղեղով, այլ եւ կրակով (Նաւ. Գ. 15)։ Վերջիչեալ պատմագիրը ցոյց է տալիս թէ այս մարգարէութիւնն էլ ճիշդիւ կատարուեց։

Մարգարէացուած էր թէ Նինուէն առնուելուց յետոյ պիտի լինէր «դարսակ եւ դարսակուած ու դատարկացրուած» (Նաւ. Բ. 10)։ «Եւ պիտի լինի որ ամէն քեզ տեսնողը պիտի փախչէ քեզանից եւ պիտի ասէ. Աւերակ եղաւ Նինուէն» (Նաւ. Գ. 7)։

Մարգարէացուած էր թէ Նինուէի աւերումը կատարեալ եւ յաւիտենական պիտի լինէր. «Ի՞նչ էք մտածում Տիրոջ դէմ. վերջ տուողը նա է, նեղութիւնը երկու անգամ վեր չի կենալ» (Նաւ. Ա. 9)։ Ցրուած է քո ժողովուրդը լեռանց վրայ, եւ ժողովող չկայ։ Ամոքումն չկայ քո կոտրուածքի համար» (Նաւ. Գ. 18 19)։ Ընթերցողները նայելու են որ այս մանր պարագաների մէջ երեւելի տարբերութիւն կայ Տիւրոսի վերաբերեալ մարգարէութիւնների եւ Նինուէի վերաբերեալների մէջ տեղ։ Մարգարէների խոսքին նայելով Տիւրոս պիտի նորոգուէր իր անկումից եաքը, բայց Նինուէն պիտի չի նորոգուէր, եւ արդարեւ այսպէս եղաւ։

Նինուէի ապագայ ամայութեան ամենից մանրամասն նկարագրութիւնը գտնվում է Սոփոնիայի մարգարէութեան մէջ, «Նինուէն ամայի է անելու, չոր երկիր՝ ինչպէս անապատը։ Եւ նորա մէջ պիտի հօտերով մակաղեն ազգաց բոլոր գազանները, հաւալուսն էլ, ոզնին էլ պիտի օթեւանեն նորա խոյակներումը. երգողի ձայնը պատուհանումը, աւերմունքը չէմքումը, ... ։ Սա է ցնծացող քաղաքը, որ ապահով բնակել էր, որ իր սրտումն ասում էր. Ես եմ, եւ ինձանից ջոկ էլ չկայ։ Ի՞նչպէս աւերակ եւ գազանների մակաղատեղի եղաւ. ամէն նրա մօտով անցնողը պիտի սուլէ ու ձեռքը շարժէ» (Սոփոն. Բ. 13–15)։ Թող ընթերցողը բաղդատէ այս մարգարէութիւնն այն ժամանակից մինչեւ այսօր Նինուէի պատմութեան հետ։ Պատմութիւնը հաստատում է թէ Նինուէի աւերումը կատարեալ էր, Նինուէն բոլորովին կործանուած էր, նրա վերքերին բժշկութիւն չըկար, ինչպէս մարգարէն գուշակել էր, եւ այն քաղաքը երբէք կրկին չշինուեց։ Նրա նախկին պայծառութիւնին ուրիշ հետքեր չմնացին բայց միայն նրանք որ աւերակներից փորուելով հանվում են, ջրանցքներն որ ժամանակով ջրում էին ու պտղաբեր էին անուամայն երկիրն՝ աւերուած են. եւ թէ՛ քաղաքին տեղը եւ թէ՛ շրջակայ երկիրը, մարգարէի գուշակութեան համեմատ, անապատ է գրեթէ մինչ, բացի քիչ ժամանակից տարբերեալ անձրեւներից յետոյ։ Ղուկիանոս որ Բ. դարում մէջ էր ապրում վկայում է թէ Նինուէն բոլորովին կորուած է. նաեւ արդի ճանապարհորդները հաստատուն են թէ նրա աւերումը կատարեալ է, եւ թէ Սոփոնեայ մարգարէի գուշակութիւնը բոլորովին կատարուած է։

3 Բաբիլոնի վերաբերեալ մարգարէութիւնները։

Բաբիլոն հին աշխարհի ամենից երեւելի քաղաքներից մէկն էր, շինուած էր մի ընդարձակ եւ պտղաբեր դաշտի մէջ տեղ, Եփրատ գետի երկու եզերքը։ Հին պատմիչներն ասում են թէ նրա պարիսպների շրջապատը 60 մղոն էր, բարձրութիւնը 300 ոտք, եւ լայնութիւնը 75 ոտնաչափ։ Բաբիլոն Նաբուգոդոնոսորի թագաւորութեան ժամանակում հասաւ մեծութեան եւ փառաց կատարը։ Այս քաղաքն անուանի էր գիտութեան եւ վաճառականութեան կողմանէ եւ կոչվում էր «մեծ», բոլոր աշխարհի պարծանքը։ Իր բնակիչների հարստութեան եւ զեղխութեան պատճառով եղաւ յետին ասիացոց անուանակ։ Բաբիլոնի բնակիչները Բէլ–Ներոյ՝ եւ ուրիշ աստուածներ էին պաշտում պիղծ եւ գարշելի արարողութիւններով։

Նրա չարութեան համար Աստուած իր մարգարէների բերանով վճռեց անաւոր կերպով պատուհասել այս մեծ քաղաքը, եւ նոյն իսկ մեր ժամանակում այն մարգարէութիւնների զարմանալի կատարումը ամրոցիչ փաստ է թէ այն մարգարէութիւնների դրողներն Աստուածանից ներշնչեալ մարդիկ էին։ Արդարեւ հնար էր չներշնչեալ մարդոց գուշակել թէ մի օր Բաբիլոնի պիտի կործանուէր, բայց հնար չէր ոչ ներշնչեալ մարդոց անդէպ ժանր պարագաներով եւ ճշգիւ գուշակել նրա կործանումն եւ ապագայ ամայի թիւնը։

Բաբիլոնը առնուեցաւ 538 կամ 539 թուականին մինչեւ Քրիստոսը, բայց Երեմիան իր մարգարէութիւնները խօսեց այս քաղաքին վրայ 588 թուականին մինչեւ Քրիստոսը, այսինքն այս դէպքից 50 տարի առաջ, եւ Եսային իր մարգարէութիւնները խօսեց 712 տարի Քրիստոսից առաջ, այսինքն այս դէպքից 174 տարի առաջ։ Ցիշենք այն մարգարէութիւնների մէկ քանի կէտերը։

Ս.ղգը որ պիտի կործանէր Բաբիլոնը՝ անուանով յիշուած էր կանխաւ. «Տէրը զարթեցրեց Մարաց թագաւորների հոգին. որովհետեւ նրա մտածմունքը Բաբիլոնի վրայ է նրան փչացնելու համար» (Երեմ. ԾԱ. 11)։

Նաեւ Եսայ. ԽԵ. 1 ից տեսնւում է թէ Կիւրոս անուն մի զօրագլուխ պիտի առնէր այն քաղաքը։ Այս մարգարէութիւնն ասուեց Կիւրոսի ծնունդից աւելի քան 100 տարի առաջ, եւ սա կատարուեց երբ Դարեհ եւ Կիւրոս Մարաց զօրքով ճանապարհուեցին եւ Երեմիայի մարգարէութեան համեմատ (Ծ. 14) գնացին Բաբիլոնի վրայ։

Բաբիլեցոց երկչոտութիւնը մարգարէացուած է.

«Դադարեցին Բաբիլոնի զորամարդիկը պատերազմելու, բերդում բնակեցին, նրանց ոյժը կորուեց։ Կանայք դարձան» (Երեմ. ԾԱ. 30) Յոյն պատմիչը, Քսենեփոն, պատմում է այս մարգարէութեան կատարումը, ասելով թէ պաշարուածները երկիւղից մնացին իրանց ամրոցների մէջ, եւ ամրոցներից դուրս գալով ամենեւին յարձակում չարին պաշարողների վրայ։

Երեմիան մարգարէացաւ նաեւ թէ Բաբիլոնի թագաւորի ձեռքերը պիտի թուլանային, տաղնապը պիտի բռնէր նրան իբրեւ ծննդականի երկունք։ (Երեմ. Ծ. 43) Կիւրոս հրաւիրեց Բաբելոնի թագաւորին մենամարտութեամբ որոշել պատերազմը, բայց թագաւորը յանձն չառաւ։ Ինչպէս մարգարէն գուշակել էր Բաբելոնի թագաւորի ձեռքերը թուլացած էին։

Մարգարէն գուշակեց թէ քաղաքը պիտի առնուէր յանկարծ զինուորական հնարքներով, քանի որ Բաբելացիք անձնատուր էին եղած կերուխումի եւ արբեցութեան. «Ն. որպայթ լարեցի քեզ համար, դու էլ բռնուեցար, ով Բաբելոն, բայց դու չգիտացիր» (Երեմ. Ծ. 24)։ «Սուրհանդակ սուրհանդակի դէմ է վազում, եւ լրաբեր լրաբերի դէմ, Բաբելոնի թագաւորին խմացնելու համար, թէ նրա քաղաքը առնուեցաւ մէկ կողմից» (Երեմ. ԾԱ. 31)։ «Նրանք տաքանալիս կոչունք պիտի անեմ նրանց, եւ նրանց պիտի արբեցնեմ որ զուարճանան, եւ քնանան յաւիտենական քնով, եւ չզարթնեն՝ ասում է Տէրը» (Երեմ. ԾԱ. 39)։

Այս մարգարէութեան կատարումը հաստատուած է Հերոդոտոսի եւ Քսենոփոնի գրուածներով։ Ցիշեալ պատ-

միջները պատմում են թէ Կիւրոս, երբ անկարող եղաւ հարձակմամբ առնել քաղաքը, հնարքի դիմեց, եւ որոգայթ լարեց նրա համար։ Կիւրոս գաղտնի պատրաստութիւններ արաւ Եփրատ գետն որ քաղաքի միջով անցնում էր՝ դարձնել իր ճանապարհից, այնպէս որ զօրքը կարողանար գետի ցամաքած տեղից մտնել քաղաքը։ Կիւրոսի պատրաստութիւնները յաջողեցան, եւ Բաբելացոց մէկ մեծ տօնին գիշերը, մինչդեռ թագաւորը բոլոր իշխանները եւ ժողովուրդն անձնատուր եղած էին կերուխումի եւ շուայտութեան, Կիւրոս դարձրեց գետն իր ջրանցքից, եւ այնպէս անցրեց այնտեղից իր զօրքը քաղաքին մէջ։ Ինչպէս մարգարէացեր էր Եսային (Եսայ. ԽԵ. 1) քաղաքին դռները զոցուած չէին։ Թագաւորն աղմուկը լսելով մարդ ուղարկեց իմանալ թէ, ինչ էր աղմուկը, բայց պալատի դռները բացուելուն պէս խուսկոյն Պարսիկները ներս խուժեցին, եւ այն գիշերը Քաղդէացիների թագաւորը՝ Բաղդասար սպանուեց։ Այսպէս ճշգիւ կատարուեցին մարգարէի գուշակութիւնները Բաբելոնի առման վրայ։

Հիմա տեսնենք Բաբելոնի վերաբերեալ մարգարէութիւններից ոմանք որ կատարուեցան մի քանի դար յետոյ։

Եսային մարգարէացաւ «Եւ Բաբելոնը՝ թագաւորութիւնների զարդը, Քաղդէացոց փառաւորութեան պարծանքը պիտի դառնայ Աստուծոյ կործանման պէս «որ արաւ» Սոդոմին եւ Գոմորին։ Երբէք չէ շէնանալու, եւ չէ բնակելու ազգէ յազգ, եւ Արաբացին այնտեղ պիտի չկանդնեցնէ վրանը, եւ հովիւները այնտեղ պիտի չտնտեցնեն իրանց խաշինքը. այլ այնտեղ վայրի գազաններն են մակաղ տալու, եւ բուերն են լցնելու

նրանց տունները, եւ այնտեղ ջայլամները՝ բնակելու, եւ յուշկապարիկներն են այնտեղ պար գալու. եւ չգալները են ոռնալու նրա պալատներումը, եւ վայրի շունները նրա զուարճանաց տներումը» (Եսայ. ԺԳ. 19-22)։

Այս մարգարէութիւնների չարը, մարդկօրէն խորհելով, բոլորովին անհաւանական էր նրանց գրուած ժամանակը։ Բոլորովին անհաւանական էր թէ՝ որ Բաբելոն խոպան ամայի եւ անբնակեալ լինէր։ Անհաւանական էր մանաւանդ որ Բաբելոն առանց մարդի լինէր, մինչ նրա տունները եւ զուարճալի պալատները տակաւին կային։ Սակայն այս մարգարէութիւնն իրօք կատարուեց։ Պատմութիւնը ցոյց է տալիս որ մի ժամանակից յետոյ Բաբելոն դադարեց մայրաքաղաք լինելուց։ Արքունիքը փոխուեց մօտերը չինուած քաղաքները, Սելեւկիա եւ Կտեսիփոն։ Հարուստ ազնուականները թողեցին իրանց պալատներն արքունեայ տեւեից գնալու համար, եւ վաճառականները եւ արուեստաւորները գնացին նրանց տեւեից, եւ Բաբելոնը գրեթէ անբնակ թողուեցաւ։ Սակայն քիչերը մնացին հին քաղաքում, այնպէս, որ վայրենի գազանները դեռ չկարողացին բնակել նրանց պալատների մէջ, բայց Քրիստոսից ետ չորրորդ դարում Բաբելոնի պարիսպները նորոգուեցան եւ քաղաքն եղաւ որսի տեղ Պարսից թագաւորների համար։ Այն ժամանակ տները լեցուեցին ջայլամներով, եւ վայրի գազանները աղաղակում էին նրա անբնակ տների մէջ։

Սակայն Բաբելոն չմնաց միշտ թագաւորական որսի տեղ։ Այսու ամենայնիւ հովիւները կարող չէին իրանց հօտերն այնտեղ տանել, որովհետեւ երբ պալատներն աւերակ եղան, բորենիները եւ գայլերը իրանց համար

տեղ արին այն պալատներն եւ չտեմարաններն, ուստի եւ հովիւները վախենում էին այն տեղ տանել իրանց հօտերը։ Բայց Սրաբացիք որ տեղից տեղ թաղուսրում են եւ սիրում են վայրի անասուններ որսալ, միթէ այնտեղ պիտի չկանգնեցնէի՞ն իրանց վրանները։ Ոչ, այնպէս չարին, որովհետեւ վախենում էին այն տեղ քնանալ աւերակների մէջ պահուած կարիճների եւ թունաւոր օձերի պատճառով։

Մարգարէացուած էր նաեւ թէ Բաբելոնի մէջ ողնիներ պիտի բնակէին. «Եւ նորան չինելու եմ ողնիների ժառանգութեան եւ ջրերի լճակներ» (Եսայ. ԺԴ. 23)։ Այլ եւս կատարուե՞ց։ Այ՛ո, Բաբելոնի մեծագոյն մասն, ինչպէս վկայում են ճանապարհորդները, հիմա ջրի լճակ է, եւ ողնիներ են բնակվում այնտեղ։ Շատ դարերից իվեր կատարուեցին այս մարգարէութիւնները թէ Բաբելոնի մէջ «Երբէք չէ չինանալու, եւ չէ բնակվելու ազգէ յազգ. եւ Սրաբացին այնտեղ պիտի չկանգնեցնէ վրանը, եւ հովիւները այնտեղ պիտի չընտեցնեն իրանց խաչինքը» (Եսայ. ԺԳ. 20)։

Սրդի ճանապարհորդների վկայութիւնը հաստատում է աւելի քան 2,000 տարի առաջ գրուած մարգարէութիւնների այսօր ճիշդ կատարումը։ Մի երեւելի ճանապարհորդ, Մր. Բորդէր, գրում է. «Մի գերեզմանի լռութեան նման լռութիւն է տիրում Բաբելոնի աւերակների մէջ։» Մի ուրիշ ճանապարհորդ Մր. Թաւվոլֆ, ասում է. «Հին Բաբելոնի սահմաններում չկայ մի տեղ ուր մարդ բնակվի»։ Մր. Բէրբէլ, մի ուրիշ ճանապարհորդ, ասում է «ամեն մարդ որ տեսնում է. այս տեղը յիշում է թէ ինչպէս ճշդիւ կատարուած են Երեմիայի եւ Եսայի մարգարէութիւնները»։ Մի ուրիշ ճանապար-

հորդ, Մր. Միկէան, գրում է թէ վայրենի Սրաբացիք անգամ չեն համոզվում գիշերը մնալ Բաբելոնի գըլխաւոր աւերակների մօտ։ Ցիշեալ ճանապարհորդը լաւ զինեալ եւ անապատներում պտտելու վարժվեց Սրաբացիներով գնաց այնտեղ, բայց չկարողացաւ համոզել նրանց գիշերն այնտեղ անցուցանել։ Ճանապարհորդներն ասում են թէ վայրենի գազաններ բուն են դրած այն աւերակների մէջ։ Մր. Բորդեր այնտեղ երեք առիւծ տեսաւ։

Մարգարէացուած էր թէ Բաբելոն պիտի լինէր անապատ, եւ պիտի ծածկուէր ջրով։ Ի՞նչպէս կարելի էր այս երկու մարգարէութիւններին եւս կատարուել։ Բայց նրանք կատարուեցին հետեւեալ կերպով։ Բաբելոն Եփրատ գետի երկու ափերի վրայ շինուած էր, բայց քաղաքին մէկ մասը, գետի մէկ կողմը անապատ է, իսկ միւս մասը որ գետի միւս կողմն է՝ ջրով ծածկուած է. այսպէս երկու մարգրէութիւններն էլ կատարուած են։

Մարգարէացուած էր թէ Բաբելոն «Զարմանքի ենթակայ» պիտի լինի (Երեմ. ԾԱ. 37)։ Բոլոր ճանապարհորդներն-որ այն քաղաքին այցելութիւն են անում, զարմանում են նրա աւերակների՝ եւ նրա համար եղած մարգարէութիւնների հիանալի կատարման վրայ։

Պիտի ծածկենք այդ գլուխը վերոյիշեալ մարգարէութիւնների վրայ մի քանի համառօտ դիտողութիւններ անելով։

1. Պատմական ապացոյցները բաւական են հաստատել թէ այն մարգարէութիւնները տրուած են դէպքերի կատարուելուց առաջ։ Դիտացուած է թէ այն մարգարէութիւնների չատերը գրուեցին դարերով առաջ քան դէպքերի կատարումը, եւ նրանցից ոմանք կատարուե-

գին Քրիստոսի ծննդից յետոյ, ոմանք էլ մեր ժամանակում կատարուելու վրայ են։

2. Վիրոյիշեալ քաղաքների վրայ մարգարէութիւններն ընդհանուր գուշակութիւններ միայն չեն. այլ շատ եւ մասնաւոր պարագաների վերաբերեալ կանխասացութիւններ են։ Աւելի քան քսան որոշ մարգարէութիւններ կան Բաբելոնի վրայ միայն։

3. Այս մարգարէութիւնները հաւանական չէին թողուած մարգարէութիւնների տուած ժամանակը։

4. Այս քաղաքներից ամէն մէկին վերաբերեալ մարգարէութիւնները ասուած լինէին Տիւրոսի կամ Նինուէի վրայ կամ եթէ Տիւրոսի վերաբերեալ մարգարէութիւնները ասուած լինէին միւս քաղաքների վրայ, այն ժամանակ այն քաղաքների յետագայ պատմութիւնը չէր կարող համաձայն լինել մարգարէութիւնների հետ։ Մի տեղի նկատմամբ ասուած մարգարէութեան կատարումը միշտ համաձայն եղած է ոչ թէ ուրիշ տեղի վրայ ասուած մարգարէութիւնների այլ այն մարգարէութիւնների միայն որ այնտեղի համար ասուած են։

5. Այն մարգարէութիւնների կատարման վկայել են հեթանոս եւ Հրեայ, նաեւ անհաւատ մատենագիրներ, եւս եւ հաւատարմութեան արժանի ճանապարհորդներ։

Ուրեմն ինչ է մնում մեզ հետեւացնել։ Իբրեւ առողջ մտքի տէր մարդիկ ուրիշ բան չենք կարող անել եթէ ոչ հետեւացնել թէ ամենագեան Աստուած միայն ապագայ դէպքերի վրայ այն տեղեկութիւնները կարող է հաղորդել մարդկանց, ուստի եւ այն մարդիկ որ յիշեալ մարգարէութիւններն արին՝ հարկաւ Աստուածանից ներշնչեալ անձինք էին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԲՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Բնութիւն բառը շատ նշանակութիւն ունի։ Երբեմն նշանակում է միակ առարկայի կամ մի դաս առարկաների յատկութիւնները, զորօրինակ կը խօսինք լոյսի կամ ջերմութեան բնութեան վրայ, եւ կամ բոյսերի կամ անասունների բնութեան վրայ։ Երբեմն բնութիւն բառը գործ է ածւում ցոյց տալու բոլոր նիւթական աշխարհն, այսինքն նրա գոյացութիւններն եւ զօրութիւնները։ Բայց երբեմն այս բառը նշանակում է որ միայն նիւթական այլեւ իմացական եւ բարոյական աշխարհը եւ այն օրէնքները որոնց ենթակայ է աշխարհը։ Այս գլխին մէջ բնութիւն բառը պիտի գործածենք այս վերջին իմաստով։

Բնութիւնն Աստուծոյ գործն է. գրուած է նաեւ թէ Սուրբ Գիրքն Աստուծոյ շունչն է (Բ. Տիմ. Գ. 16)։ Եթէ այս այսպէս է, ապա այս երկուքը, բնութիւնն ու Աստուծոյ խօսքը, իրար հակասակ չեն, որովհետեւ մտքի դէմ է կարծել թէ Աստուծոյ խօսքը հակասական է Աստուծոյ գործքերին։ Եթէ Սուրբ Գիրքը իսկապէս եւ յայտնի հակառակէր Աստուծոյ գործքերին, պարտ էինք հետեւացնել թէ Աստուծոյ խօսքը չէ։ Ընդհակառակն, եթէ զարմանալի համաձայնութիւն գտնում ենք Սուրբ Գրոց վարդապետութիւնների եւ այն ճշմարտութիւնների մէջ տեղ որը սովորում ենք բնութիւնից, այս համաձայնութիւնը հաստատութիւն տալիս է Սուրբ Գրոց աստուածային ծագման ուրիշ ապացոյցներին։

Բայց Սուրբ Գրոց վարդապետութիւնները բնութեան վարդապետութիւններն հետ բաղդատելուց առաջ, ուզում ենք մի քանի դիտողութիւն անել։

Նախ. կան ճշմարտութիւններ որոնք Սուրբ Գրքից միայն կարող ենք սովորել եւ ոչ բնութիւնից։ Եթէ այսպէս չլինէր, Սուրբ Գիրքն աւելորդ կլինէր։ Արդ, մարդիկ Սուրբ Գրոց գլխաւոր վարդապետութիւնները չեն կարող սովորել բնութիւնից, եւ այս է պատճառը որ Աստուած յայտնեց նրանց մարդկանց մանաւոր յայտնութեամբ։ Կան նաեւ ուրիշ ճշմարտութիւններ որոնք կարող ենք աւելի յարմարութեամբ, աւելի ճշգրիտ եւ հաստատ սովորել Սուրբ Գրքից քան բնութիւնից։ Սրանից չի հետեւում սակայն թէ բնութեան եւ Սուրբ Գրոց մէջ հակասութիւն կայ։ Համալսարանի դասատուն չի հերքում այն բաները որը նախնական դպրոցի դասատուն սովորեցնում է, բայց չէ սովորեցնում այնպիսի բաներ որ հակառակ են այն վարդապետութիւններին որոնք վերջինը սովորեցնում քան թէ որոնք մենք բնութիւնից կարող ենք ասվորել, բայց սրանից չը հետեւիլ թէ Սուրբ Գրոց եւ բնութեան վարդապետութիւններն իրար հակառակ են։

Երկրորդ. կան ճշմարտութիւններ որոնք բնութիւնից կարող ենք սովորել, բայց ոչ Սուրբ Գրքից։ Կան նաեւ ուրիշ ճշմարտութիւններ որոնք աւելի դիւրաւ եւ բացայայտ կարող ենք սովորել բնութիւնից քան թէ Սուրբ Գրքից։ Հարկ չէր որ Սուրբ Գիրքը յայտնէր այնպիսի ճշմարտութիւններ որոնք մարդիկ կարող են ինքն իրանց սովորել բնութիւնից։

Երրորդ. կան սակայն ճշմարտութիւններ որոնք կարող ենք սովորել թէ՝ բնութիւնից եւ թէ Սուրբ

Գրքից, եւ կարող ենք այս ճշմարտութիւնները բաղդատել իրար հետ եւ տեսնել թէ ինչ նմանութիւն կամ հաւասարութիւն կայ նրանց մէջ։ Ուրեմն, բնութիւնն եւ Սուրբ Գիրքը երկու վարդապետ կոչելով, տեսնենք թէ արանք համաձայնում են իրար հետ, եւ մինչեւ որ աստիճան են համաձայնում։

Ա. Սուրբ Գիրքը եւ բնութիւնն իրար նըմանում են հետեւանակին կողմանէ որով ուսուցանում են մարդկանց։

1. Սուրբ Գիրքն եւ բնութիւնն երկուսն էլ սովորեցնում են շատ բաներ որ էապէս հարկաւոր են մարդոց։ Բնութիւնը շատ կանուխ սովորեցնում է մանկան չուն չառնել եւ տալ, կաթ ծծել դնալ գալ եւ խօսել. եւ խնդրել ինչ որ հարկաւոր է իրան։ Բոլոր մարդիկ կարող են հեշտութեամբ սովորել բնութիւնից ինչ որ պէտք է իրանց ամենօրեայ կենաց համար։

Նոյնպէս եւ Սուրբ Գիրքը յայտնի սովորեցնում է մարդկանց այն մեծ ճշմարտութիւնները որ բացարձակապէս հարկաւոր են նրանց հոգեւոր կեանքին։ Սուրբ Գիրքը յայտնապէս սովորեցնում է թէ մի սուրբ Աստուած կայ, թէ բոլոր մարդիկ մեղաւոր են, եւ թէ ամենքը պէտք է զղջան եւ ապաշխարեն իրանց մեղքերից եւ հաւատան Քրիստոսին, Սուրբ Գիրքը շատ որոշ կերպով սովորեցնում է բոլոր մարդկանց թէ ինչպէս պարտ են վարուիլ իրար հետ, թէ պարտ են ոչ թէ իրար առնել, իրար նախանձել, իրար խարել, ալ սիրել իրար եւ օգնել իրար։ Սուրբ Գիրքը այնպէս բացայայտ եւ որոշ կերպով սովորեցնում է ինչ որ իրօք կարեւոր է մարդկանց հոգեւոր երջանկութեանը, որ բոլոր մարդիկ կարող են դիւրաւ հասկանալ այդ։ Այս մասին մանա-

ուանդ իրար նմանում են Սուրբ Գիրքը եւ բնութիւնը։

2. Բնութիւնն աւելի բարձր ճշմարտութիւններ յայտնում է՝ նրանց որ փութով ջանում են քննել եւ գտնել նրանց։ Բնութիւնը վարձատրում է իր փութաջան աշակերտներին աւելի փառաւոր յայտնութիւններով - որչափ ժամանակ որ մարդիկ ջանում են սովորել բնութիւնից, բնութիւնը միշտ նորանոր բաներ է սովորեցնում նրանց։

Նաեւ Սուրբ Գիրքը այսպէս ուսուցանում է մարդկանց։ Սուրբ Գրոց մէջ կան միշտ նոր եւ փառաւոր գաղափար եւ յայտնութիւններ նրանց համար որ ջանում են սովորել նրանց, Սուրբ Գիրքը շարունակում է երկնային իմաստութեան գանձերովհարստացնել նրանց որ շարունակում են ծածկուած գանձեր որոնել նրա մէջ։ Ինչպէս բնութիւնը նոյնպէս Սուրբ Գիրքը անսպառ հանք է, Սուրբ Գիրքը բնութեան նմանում է նաեւ այս կողմանէ որ մարդիկ նրա գանձերը սեփականացնելու համար աշխատելու են նրա խորը թափանցել։

Եթէ մէկն ասէ թէ Սուրբ Գիրքը այնչափ բացայայտ չէ որ ամէն մարդ կարողանայ հասկանալ առանց ուշադրութեան եւ առանց աշխատութեան ինչ որ գրուած է նրա մէջ, նոյն առարկութիւնը կարող է մարդ նաեւ բնութեան հարար անել, որովհետեւ բնութիւնն էլ ամէն բան պարզ ու գիրքին արած չէ անուշադիր եւ ծոյլ մարդկանց համար։ Այս երկու վարժարաններն էլ, Սուրբ Գիրքը եւ բնութիւնն, իրանց աշակերտներից պահանջում են աշխատութիւն եւ ջանք, եւ երկուսն էլ վարձատրում են փութաջան աշակերտներին։

Սուրբ Գիրքը յայտնում է մի քանի ճշմարտութիւններ որոնց չեն կարող հասու լինել մարդկանց

սահմանաւոր միտքը, եւ որոնք մարդիկ ընդունելու են հաւատքով։ Սակայն այս հաւատքը կոյր կամ մտքի դէմ չէ, այլ հիմնուած է այս համոզման վրայ թէ կան բաւական ապացոյցներ որ այն ճշմարտութիւնները յայտնուած են նոյն իսկ Աստուածանից, ուստի եւ իմաստութեամբ կը գտնենք երբ իրրեւ ճշմարիտ կընդունինք նրանց, թէեւ մեր սահմանաւոր միտքերը կարող չեն կատարել պէս հասկանալ։

Եթէ մէկն այս պատճառով Սուրբ Գրոց դէմ առարկութիւն է անում, առարկութիւն անելու է նաեւ բնութեան դէմ, որովհետեւ նաեւ բնութիւնը յայտնում է այնպիսի ճշմարտութիւններ որ լիքն են դաղտնիքներով։ Նիւթական աշխարհի զօրութիւններից եւ օրէնքներից շատերն այնպէս դժուարաւ են բացատրվում ինչպէս Սուրբ Գրոց մէջ յայտնուած հոգեւոր օրէնքները։ Ուստի եւ նրանք որ առարկում են Սուրբ Գրոց դէմ ասելով թէ պարունակում է այնպիսի ճշմարտութիւններ որոնք ճշգրիտ հասկանալ վեր է քան մարդկանց կարողութիւնը, նոյն առարկութիւնն անելու են նաեւ բնութեան դէմ, քանզի բնութեան մէջ էլ կան նրանց մեան ճշմարտութիւններ։

4. Սուրբ Գիրքը եւ բնութիւնն իրար նմանում են նաեւ այս կողմանէ որ երկուսն էլ իրանց աշակերտներից հոլս ոգի են պահանջում։ Երկուսն էլ ծածկում են իրանց իմաստութեան գանձն նրանցից որ հպարտ են եւ իմաստուն են համարում իրանց։ Քրիստոս ասաց թէ մարդ Աստուծոյ թագաւորութիւնը մտնելու համար փոքր աղու պէս պիտի լինի, եւ Պաւղոս, որ բնական աշխարհի ամենից նշանաւոր թարգմանիչներից մէկն է եղել, ասել է. «Ինչպէս Աստուծոյ թագաւորութիւնը

նոյնպէս բնական գիտութեանց թագաւորութիւնը մրոնել ուրիշ կերպով կարելի չէ բայց եթէ փոքր աղայի պէս լինելով»։ Բնական գիտութիւնների պատմութիւնը հաստատում է այս խօսքի ճշմարտութիւնը։ Որչափ մարդիկ վստահեցին իրանց իմաստութեան եւ մտաւորական վարդապետութիւններին բնական աշխարհի ստեղծման եւ կարգաւորութեան վրայ, մոլորութեան մէջ ընկան, եւ չատ անտեղի գաղափարներ ընդունեցան։ Սակայն երբ յօժար եղան բաց թողել իրանց անձնական գաղափարները թէ Աստուած ինչպէս ստեղծելու էր աշխարհը, եւ խոնարհութեամբ սկսեցին մտնել եւ սովորել ինչ որ Աստուած իրօք արած էր, այն ժամանակ սկսեցին ճշմարիտ գիտութիւն ստանալ նիւթական աշխարհի վրայ, եւ յառաջ գնալ բնական գիտութիւնների մէջ։

Եթէ մէկն առարկում է Սուրբ Գրոց դէմ ասելով թէ Սուրբ Գիրքը պահանջում է մարդկանցից 'ի բաց թողնել իրանց հպարտութիւնն եւ բարձրամտութիւնը եւ իր վարդապետութիւններն ընդունել խոնարհ ոգով, նոյն առարկութիւնը անելու է նաեւ բնութեան դէմ, որովհետեւ, ինչպէս ասում է Պագան, բնութիւնն էլ նոյն խոնարհ ոգին է պահանջում։

Արդ, վերի ասուածներից յայտնի է թէ Սուրբ Գիրքը եւ բնութիւնն իրար չատ են նմանում։ Եղանակին կողմանէ որով ուսուցանում են մարդկանց։

Բ. Նոյն իսկ Սուրբ Գրոց եւ բնութեան վարդապետութիւնների մէջ համաձայնութիւն կայ չատ բաների նկատմամբ։

1. Սուրբ Գրքի եւ ոչ մի խօսքը հակասական չէ բնութեան։

Ոչ ով չէ կարողացել ցոյց տալ թէ բնութեան որեւ-

իցէ մէկ վարդապետութիւնը յայտնապէս եւ ստուգիւ հակառակ է Սուրբ Գրոց վարդապետութիւններին։ Արդարեւ երբեմն բնութեան այս ինչ երեւոյթը Սուրբ Գրոց այն ինչ վարդապետութեան հակառակ կարծուած է մի առ ժամանակ, բայց այս կարծիքը յառաջ եկած է կամ Սուրբ Գրոց վարդապետութեան եւ կամ բնութեան երեւոյթին սխալ մեկնութիւն տրուելուց։ Բայց որովհետեւ այս նիւթին վրայ ԺԲ. գլխին մէջ բաւական խօսուեց, այստեղ աւելորդ ենք համարում սրա վրայ երկար խօսել։

2. Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ կայ մի Աստուած։ Նաեւ բնութիւնը սովորեցընում է նոյնը։

Բնութիւնը քննող որ եւ իցէ ողջամիտ մարդ չէ կարող ասել թէ այս զարմանալի աշխարհը գոյացած է առանց Արարչի։ Եթէ ասում ենք գիտակը չինող ունի, որչափ եւս առաւել պարտ ենք ասել թէ մարդուս աչքը, որ անհունապէս զարմանալի է քան գիտակն, ուղեղնալու է մի չինող։ Եթէ պարտ ենք ընդունել թէ այլ եւ այլ գործերի համար գործածուած ճարտար մեքենաները իմացական գտնող եւ չինող ունին, որչափ եւս առաւել պարտ ենք ընդունել թէ մարդկային մարմնոյ զարմանալի գործարաններն էլ ունեցած են իմացական չինող մը։

Երբ մի գործարան մտնելով տեսնում ենք նրա մէջ տեսակ տեսակ մեքենաներ, եւ գիտում ենք թէ ինչպէս նրանց բոլոր մասերն համեմատ են իրար ու գործ յառաջ բերելու յարմար, ստիպվում ենք հետեւացնել թէ մի միտք խորհել ու կատարել է բոլոր այն բաները։ Ռատի եթէ յիմարութիւն կը լինէր ասել թէ գործա-

բանի մէջ գտնուած մեքենաների բոլոր անիւները, փոկերը եւ ուրիշ մասերը գիպուածով են եկեր իրար մօտ, եթէ, նմանապէս, յիմարութիւն կը լինէր ասել թէ բոլոր այն խառն յօրինուածը գոյացած է երկաթի եւ փայտի եւ մորթոյ բնական յատկութիւնների գործողութիւնովը, եւ թէ գործարանը երկաթի եւ փայտի եւ ուրիշ նիւթերի բնական զօրութիւնների զարգանալովը միայն յառաջ եկած է, որչափ եւս աւելի քան մեծ յիմարութիւն է ասել թէ սիեզերքը իր զարմանալի յօրինուածութեամբ, իր մեծամեծ զօրութիւններին հաստատուն գործողութիւնով, եւ նրանց գործակցութիւնից յառաջ եկած զարմանալի եւ բարերար արդասիներով, գիպուածոյ գործ է, կամ թէ մի իմացական էակի առաջնորդութեան ներքեւ չգտնուող բնական զօրութիւնների արդիւնք է միայն։ Սրանից աւելի մեծ յիմարութիւն երեւակայել դժուարին է։ Արդարեւ անդգամն է որ առում էր իր սրտին մէջ թէ Աստուած չկայ։ Բնութիւնը ցոյց է տալիս թէ մի Արարիչ լինելու է, եւ որչափ աւելի արդի հետազօտութիւնները յայտնում են բնական աշխարհի մեծութիւնն եւ վսեմութիւնն, նոյնչափ աւելի շառանում են ապացոյցները թէ կայ մի Արարիչ։

3. Սուրբ Գիրքը յայտնում է մարդկանց մի փառաւորեալ Արարիչ։ Բնութիւնը յայտնում է նոյնը։

Բնական գիտութեանց հետազօտութիւնները արամաբանօրէն հետեւացնում են թէ բնական աշխարհի Արարիչը պարտ է լինել մի փառաւորեալ էակ, եւ մենք չենք կարող ուրիշ կերպով ինչպէս որ պատշաճ է նկարագրել բնական աշխարհի Արարիչը որ գիտութիւնը

հիմա յայտնում է մեզ, բացի այն խօսքերը գործածելով որոնցով նկարագրում է Սուրբ Գիրքը այն Արարիչին։

Երբ գիտութիւնը սիստակի միջոցով յայտնում է մեզ անհուն միջոցին բարձրութիւնն եւ խորութիւնը, եւ ցոյց է տալիս արեգակները եւ արեգակների դրութիւններն որ կան այն անհուն միջոցին մէջ, մեր զգացմունքները բացատրելու համար չենք գտնիլ աւելի յարմար խօսքեր քան հետեւեալներն որ բուն Սուրբ Գրոց խօսքերն են։ «Վեր բարձրացրէք ձեր աչքերը եւ նայեցէք, ով է ստեղծել սրանց, նրանց զօրքերը թըւով հանողը, որ նրանց ամենին կանչում է անունովը, մեծ իշխանութեամբը ու ստոյգ զօրութեամբը։ Մէկը չի կորչիլ» (Եսայ. Խ. 26)։ «Ո՞վ քննեց Տիրոջ Հոգին, եւ իբրեւ նրա խորհրդական հասկացրեց նրան» (Եսայ. Խ. 13)։ «Նա է երկրի շրջանի վրայ նստողը, որի բնակիչները մարախների պէս են» (Եսայ. Խ. 22)։ «Երկինքները պատմում են Աստուծոյ փառքը, եւ հաստատութիւնը իմացնում է նրա ձեռաց գործքերը» (Սաղմ. ԺԹ. 1)։

Երբ գիտութիւնը մանրացուցիչ միջոցով յայտնում է մեզ տունկերի և անասունների զարմանալի կազմութիւնը, այն բանների յօրինողին վրայ չենք կարող աւելի յարմար կերպով խօսիլ քան այն որ խօսում է Սուրբ Գիրքը։ «Որի խորհուրդն սքանչելի, հանճարը գերազանց է»։ «Նորա հանճարը անքննելի է» (Եսայ. ԻԸ. 29, Խ. 28)։

Երբ գիտութիւնը յայտնում է մեզ անթիւ գարերը որ անցան քանի որ աշխարհքը ստեղծուեց եւ հզօր զօրութիւններն որով աշխարհքը պահպանուեց եւ կա-

ռավարուեց բոլոր այն դարերի մէջ, այն ժամանակ ստիպվում ենք դարձեալ Սուրբ Գրոց խօսքերը գործածել. «Մ՞իթէ չգիտես կամ չես լսել, որ յաւիտենական Աստուած է Եհովան, երկրի ծայրերի ստեղծողը, նա չի յոգնել, եւ չի վաստակել» (Եսայ. Խ. 28)։

Սուրբ Գիրքն եւ բնութիւնը միանգամայն վկայում են թէ Արարիչը փառաւոր էակ է, եւ միայն կարող է մեծամեծ սքանչելիք գործելու։

4. Սուրբ Գիրքը մերժելով գրեթէ բոլոր հին կրօնքների վարդապետութիւններն, եւ այս մասին նախնի փիլիսոփաների կարծիքները, հաստատում է թէ մի Աստուած միայն կայ։ Բնութիւնը հաստատում է նոյնը։

Արդի գիտութեան հետազօտութիւնները, թէ դիտակի եւ թէ մանրացոյցի միջոցով, երկնքից, երկրից, ջրերից, բոյսերից, անասուններից եւ հանքերից բերում են փաստեր, որ ցոյց են տալիս թէ բոլոր արարչագործութիւնը մէկ Արարչի գործ է, թէ երկինք եւ երկիր եւ նրանց բոլոր մասերը, չնչաւորները եւ անչունչները, բանաւորները եւ անբանները, բոլորը միեւնոյն ընդհանուր գրութեան մասունք են, եւ թէ բոլոր այս մասերը չինուած են իրար համար եւ իրար յարմարցրուած են։ Գիտութիւնը ցոյց է տալիս թէ զարմանալի համեմատութիւն կայ մարդկանց եւ անասունների աչքերի եւ արեգական լուսի մէջտեղ, բոյսերի կեանքին եւ երկրիս չրջանին մէջտեղ արեգակի չորս կողմովը։

Արդի գիտութիւնը ցոյց է տալիս թէ բնական զօրութիւնների բոլոր տեսակները հաւանականապէս մի-

միեւնոյն զօրութիւնն են տարբեր տարբեր եղանակով յայտնուած, եւ բոլորը բղխում են միեւնոյն աղբիւրից։ Գիտութիւնը ցուցնում է թէ համաձայնութիւն կայ բովանդակ արարչագործութեան այլեւայլ մասերի մէջ, թէ տիեզերքի բոլոր մասերը վերաբերում են մէկ գրութեան, եւ բոլոր բնական զօրութիւնները գործում են կատարեալ համաձայնութեամբ, ուստի եւ պարտ ենք հաստատել թէ նրանց բոլորը բղխում են միեւնոյն աղբիւրից, եւ են միեւնոյն կառավարութեան ներքեւ։ Այսպէս բնութիւնը համաձայնում է Սուրբ Գրոց հետ, եւ երկուսն էլ միանգամից յայտնում են թէ աշխարհս ստեղծող Աստուածը մի միայն է։

5. Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ աշխարհի Արարիչը մինչեւ այսօր կառավարում է նրան։ Բնութիւնը սովորեցնում է նոյնը։

Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ Արարիչը ստեղծելուց ետ ձեռքից չթողուց նրան, այլ ընդհակառակն շարունակում է խնամել, պահպանել եւ կառավարել նրան։ Բնութիւնը հաստատում է այս վարդապետութիւնը։

Բնական գիտութեանց հետազօտութիւնները ցոյց են տալիս թէ՝ Արարիչը ձեռքից թողած չէ աշխարհը, եւ հաստատում են թէ աշխարհը մինչեւ հիմայ օրէնքներով է կառավարվում, այսինքն թէ աշխարհը դեռ Արարչին կառավարութեան ներքեւ է։ Բնական գիտութիւնները ամեն օր նորանոր ապացոյցներով հաստատում են թէ նիւթական աշխարհի մէջ որեւիցէ բան

դիպուածոյ արդիւնք չէ։ Ցիշեալ գիտութիւնները ցոյց են տալիս թէ ոչ հոմն է դիպուածով փչում եւ ոչ անձրեւը դիպուածով տեղում, այլ թէ հոմն եւ անձրեւն եւ նիւթական աշխարհի բոլոր դէպքերը յատուկ օրինաց համաձայն տեղի են ունենում, եւ աշխարհի այլ եւ այլ կողմերը գիտուն մարդիկ դիտարաններ հաստատելով զգոյշ ղննութիւններ են անում սովորելու համար թէ որոնք են այն օրէնքներն որոնց համաձայն հոմը փչում է եւ անձրեւը տեղում է։ Գիտունները բոլորովին համոզուած են թէ բոլոր նիւթական աշխարհը մինչեւ հիմայ պահպանվում եւ կառավարվում է օրէնքներով որ իրանց ներգործութեան մէջ կանոնաւոր եւ ներդաշնակ են, ուստի եւ պարտ ենք հետեւացնել թէ Արարիչը դեռ կառավարում է աշխարհը։ Այսպէս բնութիւնը հաստատում է Սուրբ Գրոց վարդապետութիւնը։

6 Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ Արարիչը ոչ միայն ընդհանուր այլ եւ մասնաւոր կերպով կառավարում է աշխարհը։ Բնութիւնը հաստատում է այդ

Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ ինչպէս ամենամեծ դէպքերն Աստուծոյ նախախնամութեամբ տեղի են ունենում, այսինքն թէ անհատներն եւ ազգերը միանգամայն Աստուծոյ նախախնամութեան ներքեւ են։ Սուրբ Գիրքը ասում է թէ մեր գլխի մազերն անգամ համրուած են, եւ առանց Աստուծոյ ճնճղուկ անգամ գետին չի ընկնում։

Արդի գիտութիւնն իր զարմանալի հետազօտութիւններովը նոյն ճշմարտութիւնն ելեւէջ է հանում։ Գիտութիւնը ցոյց է տալիս թէ կառավարութիւնն

որին ենթակայ է աշխարհը՝ տարածվում է ինչպէս ամենից աննշան նաեւ ամենից մեծ բաների վրայ։ Գիտութիւնը ցոյց է տալիս թէ չկայ որեւիցէ փոքր եւ աննշան բան որ օրէնքների ենթակայ չէ, եւ յայտնում է որ թէ՛ աւազի հատն եւ թէ՛ լեռը, թէ մանրախիզ քարն եւ թէ մոլորակը, ամենեքեան ընդհանուր դրութեան մէջ իրանց յատուկ տեղն ունին։ Գիտութիւնն ամենափոքր ճճի կազմութեան մէջ նշմարում է իմաստութիւն որ նման է մարդու կազմութեան մէջ տեսնուած իմաստութեանը։ Այսպէս բնութիւնը հաստատում է Սուրբ Գրոց վարդապետութիւնը, ցոյց տալով թէ Արարիչը հոգ է տանում փոքր բաներին ինչպէս նաեւ մեծերին։

7. Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ Արարչի կառավարութիւնը ոչ միայն նիւթական այլ եւ բարոյական է։ Բնութիւնն էլ նոյնն է սովորեցնում։

Բնութեան մէջ նիւթից եւ նիւթական օրէնքից զատ ուրիշ բան կայ։ Բնութեան մէջ կայ նաեւ մարդ, որ իւր իմացական եւ բարոյական բնութիւնով նիւթական օրէնքներից տարբեր օրէնքների, այսինքն բարոյական օրէնքների ենթակայ է։

Ամեն մարդ գիտէ թէ ինքը նիւթական բնութիւնից զատ ուրիշ բնութիւն էլ ունի։ Ամեն մարդ գիտէ թէ ինքը միայն մարմնից, ջղերից, մկաններից ու ոսկորներից բաղկացած չէ, գիտէ թէ ինքը բանականութիւն եւ խիղճ ունի։ Գիտէ թէ ինքը քանի մի մասնաւոր բաների մէջ նմանում է ջրի, քարի եւ ծառի, բայց ուրիշ շատ բաների մէջ բնաւ չի նմանում նրանց։ Ամեն մարդ գիտէ թէ ինքը ջրի եւ քարի պէս

բոլորովին նիւթական օրէնքներին ենթարկուած չէ, այլ ազատ կամք ունի, ուստի եւ պատասխանատու է ամեն բանի համար որ անում է: Ամեն մարդ գիտէ թէ բարու եւ չարի մէջտեղ տարբերութիւն կայ: Սոյգ է թէ մարդիկ շատ անգամ կարող են կարծիքների տարբերութիւն ունենալ այս կէտին վրայ թէ ինչ է բարին, բայց բոլոր մարդիկ ընդունում են թէ կայ բան որ բարի է, եւ կայ բան որ չար է, եւ թէ ամեն մարդու խիղճը հաւանում է բարուն եւ դատապարտում չարը: Թէեւ կարող է լինել որ մարդիկ չգիտենան կամ սխալ ըմբռնեն թէ ինչ բան բարի է, բայց եւ այնպէս ամեն մարդու խիղճը հաւանում է այն բանին որ բարի է երեւում նրան, եւ դատապարտում է այն բանն որ չար է երեւում նրան:

Ամեն մարդ փորձով գիտէ թէ չէ կարող չար բան անել առանց նրա ցաւալի հետեւանքը կրելու: Ամեն մարդ տեսնում է որ բարոյական աշխարհը, օրի մէկ մասն է ինքը, այնպէս կազմուած է որ յանցաւորը պատժվում է: Մարդ նոյն իսկ բնութիւնից սովորում է թէ ով որ ոտնակոխ է անում բարոյական օրէնքն անպատիժ պիտի չմնայ. թէ ծոյլը, գինեմոլը, անառակը նախանձոտն եւ անձնասէրը պիտի հնձեն ինչ որ սերմանել են: Ամեն մարդ տեսնում է որ ժողովուրդներն եւ ազգերն էլ նոյնպիսի օրինաց ներքեւ են: Բարոյական աշխարհի պատմութիւնը ցոյց է տալիս թէ ինչպէս որ ամենից աննշան անձը չէ կարող խուսափել բարոյական օրէնքների ազդեցութիւնից, նոյնպէս եւ աշխարհի ամենից զօրաւոր թագաւորները չեն կարող խափանել այն օրէնքները:

Ամեն մարդու խիղճը, փորձառութիւնը եւ դիտո-

ղութիւնն, ինչպէս նաեւ ազգերի պատմութիւնը հաստատում են Սուրբ Գրոց այս վարդապետութիւնը թէ մարդկային ազգն ենթակայ է բարոյական կառավարութեան որ տարածում է թէ անհատների եւ թէ ազգերի վրայ:

8. «Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ հանդերձեալ աշխարհի մէջ մարդոց վիճակը պիտի որոշուի կեանքից որ վարում են մարդիկ այն աշխարհի մէջ»:

Բարոյական օրինաց ներգործութիւնները համաձայն են այս վարդապետութեան եւ զօրաւոր կերպով հաստատում են: Զատիանաս մարդոց վիճակը որոշուելու է մեծ մասամբ կեանքից որը վարել են երիտասարդութեան ժամանակ: Մարդ իր երիտասարդական տարիների մէջ ինչ որ սերմանում է, նոյնը պիտի հնձէ իր ծերութեան ժամանակ: Եթէ մարդ երիտասարդութեան ժամանակ իւր ստացուածքը չռայլութեամբ վատնէ, ընդհանրապէս ծերութեան ժամանակ նեղութիւն պիտի կրէ: Եթէ կանուխ զզջում է, զուցէ մասամբ ձեռք բերէ վատնուած հաստատութիւնը. իսկ եթէ յարատեւում է իր չռայլութեան մէջ, ժամանակ պիտի դայ որ իւր առջի չռայլութեան վրայ պիտի զըզջայ, բայց ի զուր: Եթէ աբրեցողութիւնով եւ ուրիշ մոլութիւններով իր մարմինը տկարացնում է, ընդհանրապէս մարմնաւոր ցաւ պիտի կրէ, եւ թերեւս վաղահաս մահ պիտի ճաշակէ: Եթէ երիտասարդութեան ժամանակ գէշ սովորութիւններ է ստանում, յետոյ նրանց գժնդակ ազդեցութիւնից պիտի նեղուի: Եթէ երիտասարդութեան ժամանակ մարմնոյ ցանկութիւններին է տալիս իրան, ծերութեան ժամանակ մարմնոյ ապականութիւն պիտի հնձէ:

Ազգերը նաեւ ենթակայ են այս օրէնքին։ Նրանց ապագան պիտի որոշուի մեծ մասամբ այն ընթացքից որը ունեցել են իրանց երիտասարդութեան ժամանակը։ Եթէ մէկ ազգ աշխատասէր, ժուժկալ եւ ողջախոհ է եղել իր երիտասարդութեան ժամանակ, ապագային մէջ յաջողութիւն պիտի հնձէ, ընդհակառակն եթէ անժուժկալ եւ զեղծ կեանք է վարել, ապագային մէջ ամօթ եւ նախատինք պիտի հնձէ։

Արդ որովհետեւ Սուրբ Գիրքը յայտնում է որ մեր վիճակը հանդերձեալ կենաց մէջ պիտի որոշուի այս աշխարհի մէջ մեր ունեցած ընթացքից, թող մէկն առարկութիւն չանէ Սուրբ Գրոց դէմ, որովհետեւ յայտնի է թէ այսպիսի խիստ եւ անաչառ օրէնք նոյն իսկ հիմայ տիրում է բարոյական աշխարհի մէջ։

9. «Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ մարդկա-»
«յին ազգը մեղաւոր է։ Բնութիւնը նաեւ հաս-»
«տատում է այս ճշմարտութիւնը»։

Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ մարդկային ազգը չպահեց իր սկզբնական մաքրութիւնը, այլ ընկաւ մեղքի մէջ, ապականեցաւ եւ եղաւ անաւորը եւ անձնասէր։ Այս վարդապետութիւնը հաստատելու ինչ զօրաւոր փաստ կայ մարդկային ազգի անցեալ պատմութեան եւ արդի վիճակի մէջ։

Նախ, ամեն մարդ զգում է թէ չէ այնպիսի ինչպիսի պարտ է լինել։ Ամեն մարդ գիտէ թէ միշտ անում է ինչ որ անելու չէր, եւ չէ անում ինչ որ անելու էր։ Իւրաքանչիւր մարդոց խիղճը յանդիմանում է եւ դատապարտում է նրան իր մեղքերի համար։

Երկրորդ, եթէ իւրաքանչիւր անհատ անձնասէր, մեղաւոր եւ ապականուած է, ինչպէս կարող են ժողովուրդներ եւ ազգեր, որ այն անհատներից են բաղկանում, լինել մաքուր, արդար եւ սուրբ։ Թող այս, ամեն կողմից փաստեր ունինք թէ երկրիս ազգերը հիմայ արդարեւ ապականուած են։

Բոլոր ազգերի օրէնքներն նրանց դէմ վկայութիւն են տալիս։ Որովհետեւ կան օրէնքներ որ ամեն տեսակ ոճիր արգիլում են, ցոյց են տալիս թէ կան մարդիկ որ միտեալ հակամիտութիւն ունին այսպիսի ոճիրներ գործելու։ Ի՞նչ խիստ օրէնքներ դնել, ստիպուած են տէրութիւնները պահելու համար իրանց հպատակները իրար զրկելուց եւ իրար վնասելուց։

Արդարութեան ամեն տեսան դատաստանալուն նոյնպէս վկայ է եւ հաստատում է թէ մարդկային ազգն ապականուած է։ Ի՞նչ ոճիրների համար դատապարտուած են մարդիկ, եւ ի՞նչ պատիժներ հարկ է դնել որպէս զի ընկերութիւնը պահուի։ Ամեն մի սուր եւ թնդանօթ առանձնապէս վկաներ են մարդկային ազգի ապականութեան դէմ։ Ի՞նչ զօրաւոր վկայութիւն են տալիս մարդկային ազգի դէմ Եւրոպայի միլիոնաւոր զինուորները որ արդի քաղաքակրթութեան կեդրոնն է։ Ո՞ր կողմը որ նայինք բազմանում են վկայութիւնները որ հաստատում են մարդկային ազգի ապականութիւնը։

Եթէ պատմութիւնը կոչենք վկայութեան համար, միեւնոյն վկայութիւնն է տալիս։ Մարդկային ազգի պատմութեան մեծ մասն արդարեւ արշաւանքի, հարստահարութեան եւ անիրաւութեան պատմութիւն է։ Ո՞րչափ անգամ մարդոց հարստահարութիւնը միջոց է եղել միայն նրանց մոլութիւններն աւելացնելու, եւ ո՞րչափ անգամ մարդիկ իրանց արուեստներն իսկ ծա-

ստեղծել են իրանց չարութեան եւ անզգամութեան։

Ներկայ դարուս մարդոց խիղճն եւ անցեալ դարերի մէջ ապրող մարդոց պատմութիւնը հաստատում է մարդկային ազգի ապականութիւնը։

10. Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ մարդիկ չեն կարող ազատել իրանց այս ապականուած վիճակից։ Աշխարհի ներկայ վիճակը նաեւ հաստատում է այս։

Ինչպէս որ իւրաքանչիւր անձի խիղճը վկայում է թէ իր բնութիւնն ապականուած է, նոյնպէս եւ ամեն մարդու փորձը ցոյց է տալիս թէ ինքն անձամբ բաւական չէ իւր այս ապականեալ բնութիւնը փոխելու։

Մարդ կարող է արդարեւ պահել ինքն իրան շատ մոլութիւններից, կարող է ազատ լինել շատ չարիքներից, բայց չէ կարող արմատից խլել իւր հակամիտութիւնը դէպի չարն։ Անձնասիրութիւն, փառասիրութիւն եւ հեշտասիրութիւն միշտ տիրում են նրա սրտի մէջ, թէեւ մարդ շատ ջանայ ծածկել նրանց, կամ խլել նրանց իւր սրտից։ Մարդ կարող է ստանալ մեծ հարստութիւն, բայց սրանով չէ կարող յագեցնել իւր ընչասիրութիւնը։ Կարող է երեւելի լինել իր գիտութեան համար, բայց սովորած չլինի թէ ինչպէս ազատէ՝ ինքն իրան հպարտութեան եւ նախանձու բնութիւնից։

Այսպէս է նաեւ մարդկային ազգի պատմութիւնը։ Որչափ ջանք է գործ դրել մարդկային ազգը բարւոքել իւր վիճակը։ Երկիրներ է մշակել, քաղաքներ է շինել, հանքեր է բանեցրել եւ ամեն կարելի կերպով ջանացել է աճեցնել իր հարստութիւնը, եւ շատ անգամ յաջողել է, բայց չէ կարողացել իւր հարստութեան

միջոցով ազատուել իր բարոյական ապականութիւնից։ Մարդիկ շատ բան սովորել են երկրիս, ծովերի եւ առուտղների վրայ, բայց պատմութիւնը ցոյց է տալիս թէ մարդոց բոլոր տնաճութիւնը չկարողացաւ յառաջ բերել սրտի մարրութիւն կամ եղբայրասիրութիւն։ Մարքի լուսաւորութիւնը էլ աւելի յայտնի ցոյց է տուած ընկերութեան անկումը, բայց կարողացած չէ ցոյց տալ թէ ընկերութիւնն ինչպէս կարող է ազատուել իր բարոյական նուաստութիւնից։ Մարդիկ ազգային կառավարութիւններ հաստատեցին իրար պաշտպանելու, բայց նոյնիսկ այն կառավարութիւնները շատ անգամ ապականուեցան եւ եղան հարստահարողներ։ Եւ նոյնիսկ այն ժամանակ երբ կառավարութիւնները ուղիղ եւ ողջամիտ էին, անկարող եղան փոխել իրանց հպատակների բարոյական բնութիւնը։ Կարողացան լաւ օրէնքներ դնել, բայց չը կարողացան արգիլել մարդոց այն օրէնքները եղծանելուց։ Կարողացան շատ անգամ խափանել ապօրինաւոր գործքեր, բայց անկարող էին դէպի չարն հակամիտութիւնը խլել մարդոց սրտից։ Պատմութեանները ասում են թէ քաղաքակրթութեան մէջ ամենից յառաջացում իրան հետ ունեցել է ապականութեան նոր ցոյցեր։ Վերջապէս, թէ՛ ազգերի պատմութիւնը եւ թէ իւրաքանչիւր անձի փորձը ցոյց է տալիս թէ մարդիկ չեն կարող փրկել իրանք իրանց բարոյական ապականութիւնից, եւ այսպէս հաստատում են Սուրբ Գրոց վարդապետութիւնը։

11. «Սուրբ Գիրքը սովորեցնում է նաեւ թէ պիտի լինի տնաւոր դատաստան որում ամեն մարդ պիտի ընդունի իւր գործերին համեմատ վարձ կամ պատիժ։ Ամեն մարդու խիղճը նոյնը ասում է»։

Մարդիկ կարող են ջանալ լռեցնել իրենց խղճին ձայնը, կարող են մերժել խղճին անաւոր ազդարարութիւնները, կարող են լեցուցանել իրանց ականջներն աւելի ախորժելի ձայներով, բայց խղճին ձայնը ասում է թէ մարդիկ յանցաւոր են Աստուծոյ առջեւ եւ թէ իրանց գործերին համար հաշիւ պիտի տան Աստուծուն։

Վերը ասուածներից յայտնի է որ Սուրբ Գրոց վարդապետութիւնները զօրաւոր կերպով հաստատւում են բնական աշխարհի օրէնքների ներգործութիւններից, իւրաքանչիւր մարդոց խղճին եւ փորձից եւ մարդկային ազգի պատմութիւնից։ Ուստի եւ իրաւունքով հետեւացնում ենք թէ Սուրբ կիրքը յառաջ է եկել Նրանից որ ստեղծեց աշխարհը, եւ որին հպատակ են բոլոր մարդիկ եւ բոլոր ազգեր։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՆՈՑՆ ԻՍԿ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՆՐԱ ԱՍՏՈՒԱԾԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Երբ այս նիւթին վրայ խօսում ենք, հարկ է զանազանել Քրիստոնէութիւնը նրան դաւանողներից։ Քրիստոնէութիւնը դաւանողների խիստ լաւերն իսկ արբութեան մէջ կատարեալ չեն։ Քրիստոնէութիւնը անհունապէս գերազանց է քան որ եւ իցէ Քրիստոսի հետեւող։ Հարկ է նաեւ զանազանել Քրիստոնէութիւնը Քրիստոնէական եկեղեցուց։

Քրիստոնէական եկեղեցին արդար եւ Աստուածանից հաստատուած է, սակայն որովհետեւ յիշեալ եկեղեցին բաղկանում է անկատար մարդերից, Քրիստոնէութեան բարոյական կատարեալ գերազանցութիւնը ցոյց չէ տալիս աշխարհին։ Սակայն երբ զանազանում ենք Քրիստոնէութիւնը Քրիստոնէական եկեղեցուց, եւ Քրիստոնէութիւնը նկատում ենք պարզապէս իբրեւ աստուածային յայտնութիւն բարոյական եւ կրօնական ճշմարտութիւնների, այն ժամանակ կարող կը լինենք հաստատել թէ Քրիստոնէութիւնն ունի այնպիսի կատարելութիւն որ հաստատում է նրա աստուածային ծագումը։

Քրիստոնէութիւնը հիմնուած է Սուրբ Գրոց վրայ իբրեւ Աստուծոյ ճշմարիտ խօսքին վրայ։ Եթէ արդարեւ Սուրբ գիրքը Աստուծոյ խօսքն է, նրա յատկութիւնները համաձայն լինելու են նրա աստուածային ծագմանը։

Ուրեմն քննենք տեսնելու համար թէ Սուրբ Գիրքը աստուածային յատկութիւններ պարունակո՞ւմ է։

Սուրբ Գրոց պարունակութիւնն աւելի մանրամասն քննելուց առաջ, հրաւիրում ենք ընթերցողներին նկատողութեան առնել նախ հետեւեալ կէտերը։

1. «Սուրբ Գրոց մէջ բնաւ սխալմունք կամ մո-»
«լորութիւններ չկան»։

Այս կէտին մէջ Սուրբ Գիրքը մասնաւորապէս տարբերվում է սրբազան կոչուած ուրիշ գրքերից, եւ թէ՛ հին եւ թէ՛ նոր փիլիսոփայական բոլոր դրութիւններից։ Յիշեալ գրքերն եւ դրութիւններն ինչ ճշմարտութիւններ էլ պարունակեն, ոչ ոք չէ ուրանում թէ իրանց մէջ ունին նաեւ սխալներ եւ մոլութիւններ։ Յայտնի է նաեւ թէ փիլիսոփայական հին դրութիւններից եւ ոչ մէկը մոլորութիւններից ազատ չէ։ Այսօր յիշեալ դրութիւնից եւ ոչ մէկն իրրեւ զուտ ճշմարտութիւն չէ ընդունվում։ Նոյնը կարելի է ասուիլ նաեւ փիլիսոփայական նոր դրութիւնների համար։ Յիշեալ դրութիւնների հեղինակներն իսկ չեն պնդում թէ իրանց դրութիւնները մոլորութիւններից զերծ են, եւ ամենքն էլ ընդունում են թէ իրանց դրութիւնները դեռ կատարելագործելի են։ Սակայն որեւ իցէ մոլորութիւն դեռ գտնուած չէ Սուրբ Գրոց մէջ։

Յայտնի է թէ Սուրբ Գրոց թշնամիները շատ անգամ ասել են որ Սուրբ Գրոց մէջ սխալներ գտել են, բայց երբէք չեն կարողացած իրանց խօսքը հաստատել գոհացուցիչ ապացոյցներով։

Ուրեմն Սուրբ Գիրքը այս նշանաւոր յատկութիւնն ունի թէ որեւ իցէ սխալ կամ մոլութիւն չէ պարունակում։ Երբ նկատում ենք թէ Սուրբ Գիրքը բաղկա-

նում է պատմական, մարգարէական եւ վարդապետական շատ տարբեր գրքերից որ 1500 տարու միջոցում գրուած են բնական ձիրքերի, դաստիարակութեան եւ արտաքին պարագաների կողմանէ շատ տարբեր մարդերից, երբ նկատում ենք նաեւ թէ այն գրքերից ոմանք աշխարհի մէջ ամենից հին գրքերն են, եւ թէ շատ սաստիկ եւ մանր քննութիւնների ենթարկուած են, բայց եւ այնպէս ոչ մի սխալ գտնուած չէ նրանց մէջ, ապա իրաւունք ունինք հետեւցնելու թէ Սուրբ Գիրքն են ոչ թէ սխալական մարդոց այլ անսխալական Աստուծոյ խօսքեր։

1. «Ինչ բարոյական եւ կրօնական ճշմարտութիւն»
«որ գտնվում է ուրիշ որեւ իցէ կրօնական կամ»
«փիլիսոփայական դրութեան մէջ, գտնվում են»
«նաեւ Սուրբ Գրքի մէջ։»

Ոմանք ասում են թէ նաեւ ուրիշ կրօնքներ ունին ճշմարտութիւններ։ Այո, այնպէս է, չկայ թերեւս աշխարհիս վրայ կրօնք որ միայն մոլութիւն սովորեցնէ։ Ամեն կրօնք քիչ կամ շատ պարունակում է ճշմարիտ սկզբունք, եւ կրօնքի ազդեցութիւնը կախուած է ճշմարտութիւններից որոնք սովորեցնում է կրօնքը։ Հին եւ նոր փիլիսոփայական դրութիւնների շատերի համար էլ նոյնպէս կարող ենք ասել։ Սոկրատ, Պղատոն եւ ուրիշ նախնի եւ արդի փիլիսոփաները սովորեցնում են քանի մը ճշմարտութիւններ, բայց սրանք ամբողջ ճշմարտութիւն չեն։ Քանի մը յարաբերութիւնների վերաբերեալ ճշմարտութիւն են միայն պարունակում, եւ այս ճշմարտութիւնն էլ չեն սովորեցնում հաստատութեամբ եւ լիով, այնպէս որ մարդիկ կարող լինին ընդունել նրան կատարեալ վստահութեամբ, եւ որի վրայ

կարենան խարսխել իրանց յոյսերը։

Մինչ մէկ կողմանէ կ'ընդունինք այն ճշմարտութիւնները որ գտնվում են ուրիշ գրութիւնների մէջ, միւս կողմանէ պնդում ենք թէ այն գրութիւնների մէջ չէ գտնվում բարոյական սկզբունք կամ կրօնական ճշմարտութիւն որ չգտնուի նաեւ Սուրբ Գրոց մէջ։

Ո՞ր բարոյական ճշմարտութիւնն է որ հին կրօնքների կամ փիլիսոփայական գրութիւնների մէջ կար, եւ Սուրբ Գրոց մէջ չի գտնվում։ Այսպիսի ճշմարտութիւն չկայ։ Կամ արդի փիլիսոփայութեան հետազօտութիւններն ի՞նչ բարոյական կամ հոգեւոր ճշմարտութիւններ կարողացան յաւելացնել Սուրբ Գրոց մէջ յայտնուածների վրայ։ Դարձեալ պատասխանում ենք թէ բնաւ եւ ոչ մի։ Թէպէտ զարմանալի յառաջադիմութիւն արաւ ախարհքը անցեալ տասնեւութ դարուց մէջ, չկարողացաւ սակայն գտնել Սուրբ Գրոց մէջ չյայտնուած նոր ճշմարտութիւն Աստուծոյ եւ նրա ստեղծուածոց վրայ, մարդկային ազգի այժմեայ բարոյական վիճակին եւ նրա հանդերձելուն վրայ, մարդոց բարոյական պարտականութիւններին վրայ առ Աստուած եւ առ միմեանս եւ մարդկային ազգի աղատութեան վրայ նրան ապականող չարիքներից։

3. «Սուրբ Գրքը պարունակում է ոչ միայն բո-»
«լոր բարոյական եւ հոգեւոր ճշմարտութիւնները»
«որ ուրիշ գրքերի մէջ գտնվում են, պարունա-»
«կում է նաեւ շատ ճշմարտութիւններ որ ուրիշ»
«որեւիցէ կրօնական կամ փիլիսոփայական գրու-»
«թեան մէջ չեն գտնվում։»

Սուրբ Գրքի գլխաւոր վարդապետութիւնները Սուրբ Գրքին են միայն սեփհական։ Այս գլխաւոր վարդա-

պետութիւններն առնված չեն ուրիշ որեւիցէ կրօնական եւ փիլիսոփայական գրութիւններից, եւ ոչ իրանց գլխաւոր կէտերի մէջ նմանում են ուրիշ գրութեանց վարդապետութիւններին։ Սուրբ Գիրքը ուրիշ բոլոր գրքերից տարբերվում է սրանով եւս որ նա միայն յայտնում է այն ճշմարտութիւններն որ փրկվել հասկացուած է թէ բացարձակապէս հարկաւոր են մարդոց երջանկութեան համար։

4. «Սուրբ Գիրքը պարունակում է բոլոր բարոյա-»
«կան եւ հոգեւոր ճշմարտութիւնները որոնց կա-»
«րօտ են մարդիկ»։

Սուրբ Գիրքը չի յայտնում այնպիսի ճշմարտութիւնները որոնք մարդիկ անձամբ գտնել կարող են, եւ կամ որոնք մարդոց հետաքրքրութիւնը միայն հաճեցնող ճշմարտութիւններ են։ Կան շատ բաներ որոնք ուզում ենք գիտենալ, բայց նրանց գիտենալը չօգնում մեր ոչ ժամանակաւոր եւ ոչ յաւիտենական երջանկութեան։ Սուրբ Գիրքը այնպիսի ճշմարտութիւններ չի յայտնում։ Քանի բաների վրայ Սուրբ Գրոց լռութիւնն արդարեւ այնչափ նշանաւոր է որչափ նշանաւոր են իրերի վրայ եղած յայտնութիւնները բոլորովին համաձայն են մարդուս բնութեանը եւ վիճակին եւ բուն դարման են նրա կարօտութիւններին։

Կա՞յ բարոյական կամ կրօնական ճշմարտութիւն որ բուն հարկաւոր է մեր հոգեւոր երջանկութեան, եւ Սուրբ Գիրքը զանց է արել յայտնել քեզ այն։

Չկայ եւ ոչ մէկը։

5. «Սուրբ Գիրքը բոլոր փիլիսոփայական գրքե-»
«րից սրանում եւս տարբերվում է, որ մեզ կա-»
«րեւոր եւ պիտանի ճշմարտութիւնները յայտ-»

«Նում է այնպիսի պարզ կերպով, որ ամեն»
«մարդ կարող է հասկանալ»։

Ամեն ողջամիտ ընթերցող դատելու է թէ աստուածային լինելու չէ՞ այն գիրքն որի մէջ չկայ որևիցէ սիալ, եւ պարունակում է բոլոր կրօնական ճշմարտութիւնները որ կան ուրիշ կրօնքների կամ փիլիսոփայական դրութիւնների մէջ, եւ սրանից առաւել բարձր ճշմարտութիւններ. պարունակում է նաեւ բոլոր ճշմարտութիւնները որ կարեւոր են մարդուս բոլոր երջանկութեանն համար։

Հիմա քննենք աւելի մանրամասնօրէն բուն Սուրբ Գրքի նիւթը, եւ տեսնենք մի՞թէ կատարեալ յայտնութիւն չէ։

ա) «Սուրբ Գիրքը յայտնում է մարդոց կատար-»
«եալ Աստուած»։

Մարդիկ այնպէս կազմուած են որ նրանց ընութիւնը պահանջում է գերագոյն էակ որին պաշտեն եւ նրան ապաւինին։ Տգիտութիւնը չէ կարող մարդկանց այն աստիճան նուաստացնել մինչեւ որ զգան իրանց կարօտութիւնն Աստուծոյ իմաստութեանը, օգնութեանը եւ շնորհացը. ոչ էլ դիտութիւնը եւ քաղաքակրթութիւնն այն աստիճան բարձրացնում են մարդուն որ այլեւս կարօտութիւն չլինի լուսաւորիչ մաքրիչ եւ փրկիչ Աստուծոյ։

Սակայն պատմութիւնը սովորեցնում է մեզ որ այն իրերի մեծ մասը որոնց մարդիկ պաշտել են իբրեւ Աստուած՝ բոլորովին անարժան էին պաշտօն կամ երկրպագութիւն ընդունելու մարդկանցից։ Յունաց եւ Հռոմայեցոց աստուածների շատերը մոլի եւ պիղծ էին։ Արդարեւ կարծվում էր թէ այն աստուածներն ունէին

քանի առաքինութիւններ, բայց նաեւ մարդկային մոլութիւններ ընծայում էին նրանց։ Նոյնը կարող ենք ասել նաեւ հեթանոսների աստուածների համար։ Սրանից շատերը բարոյական հրէշներ էին։ Չենք կարող պաշտել այնպիսի էակներ առանց նուաստացնելոյ մեր բնութիւնը։

Անհաւատները նաեւ չեն կարող յայտնել մեզ սիրոյ եւ ողորմութեան մի արժանի Աստուած։ Անհաւատները երբեմն բոլորովին ուրանում են Աստուծոյ գոյութիւնը, եւ այսպէս զրկում են հոգին այն բանից որը մանաւանդ պահանջում են հոգու բնութիւնը ու վիճակը։ Երբեմն էլ ընդունում են թէ կայ Աստուած, եւ անուն են տալիս նրան, բայց միանգամայն ասում են անծանօթ է եւ չէ կարող ծանօթանալ։ Ուստի անհաւատութեան աստուածը լոկ մի անուն է, մի աստուած որին ոչ ոք կարող չէ ճանաչել կամ սիրել, ոչ էլ կարող է ապաւինել նրան։ Բայց Սուրբ Գիրքը յայտնում է մեզ բուն Աստուծուն որ է Աստուած անձնաւոր, որ տեսնում է մեզ եւ որին մենք կարող ենք ճանաչել եւ սիրել։ Սուրբ Գիրքը յայտնում է մեզ այնպիսի Աստուած որ բոլորովին արժանի է բոլոր մարդկային ազգից պատիւ, սէր եւ ծառայութիւն ընդունելու, որովհետեւ նրան են բոլոր բնական եւ բարոյական կատարելութիւնները։ Սուրբ Գրքի մէջ յայտնուած Աստուածը սուրբ է, եւ ամեն մարդուց պահանջում է սուրբ լինել, այսու ամենայնիւ երկայնամիտ է դէպ ի անսուրբերը։ Բոլորովին արդար է, բայց միանգամայն գթած եւ ողորմած է դէպի անարդարները։ Պիտի

դատէ մարդկանց, բայց եւ այնպէս իր սիրելի սրտուն մատնեց մահի յանցաւորների փոխանակ։ Սուրբ Գրքի Աստուածը ճշմարտութեան, սրբութեան եւ սիրոյ Աստուած է. ուստի եւ մարդուս ամենամեծ իմաստութիւնն է նրան ապաւինել, նրա ամենամեծ արտօնութիւնն է սիրել նրան, եւ ամենամեծ փառքն է պաշտել նրան։ Ողջախոհ ընթերցողը թող բաղդատէ հին կռապաշտութեան կամ արդի անհաւատութեան աստուածներս մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուծուն եւ Հօրը հետ, եւ ապա թող դատէ թէ Սուրբ Գիրքը որ յայտնում է մեզ այսպիսի Աստուած մի՞թէ չունի աստուածային յատկութիւններ։

բ «Սուրբ Գիրքը մեկնում է աշխարհը, պատմում է աշխարհի վերաբերեալ ամենակարեւոր հարցմունքներին»։

Բոլոր հին կրօնական գրութիւնները ջանացին բացատրել մարդոց սկիզբն եւ աշխարհի վախճանը, բայց նրանից եւ ոչ մէկը յաջողութիւն չգտաւ սրանում։ Հիմա մի խելացի մարդ չի ընդունում հին կրօնական գրութիւնների ոչ դիցաբանութիւններն եւ ոչ նրանց բարոյական թերի վարդապետութիւնները։ Արդի գիտութիւնը հիմա ջանում է մեկնել աշխարհիս ծագումը, բայց սա էլ կարող եղած չէ յաջողուել։ Նոյն իսկ գիտունների շատերը ասում են. «Սահմաններ կան որից դէպի միւս կողմը չենք կարող անցնել. խնդիրներ կան որոնք չենք կարող լուծել»։ Աշխարհիս ծագման վրայ գիտունների տեսութեանց եւ ոչ մէկը մինչեւ հիմայ ընդհանուր ընդունելութիւն գտած չէ. իսկ աշխարհիս վախճանին գալով, բոլոր գիտունները խոստովանում են թէ անկարող են բան ասելու։

Բայց Սուրբ Գիրքը պարզ եւ բանաւոր մեկնութիւն եւ բացատրութիւն է տալիս աշխարհիս վրայ. թէպէտ բոլոր գաղտնիքը յայտնելու չէ ձեռնարկում, բացայայտ պատասխան է տալիս այն հարցմունքներին որոնք մարդիկ իրանց բնութիւնից եւ պարագաներից ստիպուած են անել։

Երբ նկատում ենք նիւթական աշխարհի մեծութիւնը, երբ մանրացուցով եւ դիտակով յայտնուած բաների վրայ լեցվում ենք զարմանքով՝ եւ հարցնում ենք, որտեղի՞ց են այս բաներ, Սուրբ Գրքի առաջին գլխում մէջ իսկ գտնում ենք զոհացուցիչ պատասխան մեր այս հարցման. «Սկզբում Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը։» Մինչեւ ո՞րչափ հեռու որ հասցնեն մարդիկ իրանց հետազօտութիւնները, եւ նիւթական աշխարհի մեծութեան վրայ ինչ նոր բաներ որ գտնեն, Սուրբ Գիրքը յայտնում է մեզ անհուն զօրութեան մի տէր Աստուած որին կարող ենք իրաւունքով ընծայել բոլոր այն զարմանալի գործերը։

Երբ գիտութիւնը յայտնում է մեզ նիւթական աշխարհի բոլոր մասերի զարմանալի յարմարութիւնը դէպի իրարու եւ դէպի մարդիկ, զոր օրինակ թէ ինչպէս երկնային մարմինների մեծութիւնը, դիրքը եւ շարժումները, ցամաքն ու ծովը, հողմերը եւ ամպերը, բոլորը միանգամայն կազմում են կատարեալ դրութիւն եւ մենք հարցնում ենք, ո՞րտեղից է այս կարգադրութիւնը, Սուրբ Գիրքը պատասխանում է այն հարցման, յայտնելով մի Աստուած այնպէս կատարեալ իմաստութեան մէջ է, ինչպէս է հզօր կարողութիւնում։

Երբ հարցնում ենք. ո՞րտեղից են այս բնական

օրէնքները, այսպէս հաստատուն, այսպէս համաձայն եւ այսպէս բարերար իրանց գործողութեան մէջ, դարձեալ Սուրբ Գիրքը պատասխանում է մեր այս հարցման, ասելով մեզ թէ ամենազօր եւ ամենիմաստ Արարիչը տակաւին վարում է աշխարհը, եւ թէ նրանից է բղխում եւ նրանով է պահվում բնական օրէնքների այս ընդհանուր դրութիւնը։

Դարձեալ երբ նկատում ենք մարդոց, այսինքն նրանց բնութիւնը, կարողութիւնները եւ գործքերը լեցվում ենք հիացմունքով։ Թէպէտ մարդիկ ծնվում են իբրեւ անկարող տղաներ, թէպէտ փիչ տարիներ են միայն ապրում երկրի վրայ, ընդունակ են սակայն զարմանալի զօրութիւն ստանալու եւ սքանչելի գործեր կատարելու։ Թէպէտ մարդս երկրի սահմանին մէջ փակուած է, բայց եւ այնպէս քննում է երկինքը, դիտում է գիսաւորները նրանց ընդարձակ շրջանի մէջ, եւ մոլորակներն երբ կչռով կչռում է։ Թէպէտ մարդ անասուններին չատերից տկար է, բայց եւ այնպէս զարմանալի հնարքով նուաճել է բնութեան բուսական զօրութիւններից ոմանք։ Երբ մարդոց զարմանալի գործերը տեսնում ենք, ստիպվում ենք հարցնել. Ո՞վ կամ ի՞նչ է մարդս, եւ ո՞րտեղից է որ այսպէս իշխում է բնական աշխարհի վրայ, Սուրբ Գիրքը միայն գոհացուցիչ պատասխան է տալիս այս հարցման ասելով. «Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը»։ Սովորեցնում է թէ նոյն իսկ Արարիչը տուաւ մարդուս այնպիսի բարձր կարողութիւններ եւ բնական աշխարհքս հնազանդեցրեց նրա հրամանին։ Սուրբ Գրքի մէջ միայն բաւականաչափ բացատրուած է մարդոց զարմանալի կարողութիւններն եւ գործերն։

Բայց մարդուս վերաբերեալ ուրիշ հարցում էլ կայ, որին պէտք է պատասխանել։ Թէպէտ մարդս զարդարուած է այսպիսի ձիրքերով, չատ անգամ անարդ գործերի է ծառայեցնում նրանց։ Շատ անգամ մարդիկ իրանց կարողութիւնները գործ են ածում ոչ թէ իրարու ծառայելու, այլ իրարու վնասելու ու իրար կորցնելու։ Մարդկային ազգի պատմութիւնը իւր մէկ էջին մէջ պատմում է մարդոց փառաւոր յառաջադիմութիւնները, մինչ միւս էջին մէջ յիշում է նրանց ամօթալի եւ անողորմ գործքերը։ Պատմութեան գրեթէ ամեն էջը լիքն է հպարտութիւնից, բարկութիւնից ու հեչտութիւններից թելադրուած ոճիրներով։ Ի՜նչ խաբէութիւններ, որպիսի՜ զրկանք են գործուել, ի՜նչ տանջանքներ են տրուել մարդոց։ Եւ ո՜ր չափ պատերազմներ տեղի են աշխարհը։ Ի՞նչպէս կարող ենք մեկնել այս բաները։ Իրաւ այս բաները բնական չեն մարդուս, իրաւ մարդս ստեղծուած չէ այսպէս տանջելու, խաբելու եւ կորցնելու իրան նման մարդիկ։ Ի՞նչպէս ուրեմն կարող ենք մեկնել մարդուս խարդախութիւններն, անիրաւութիւններն եւ ընդհանուր ապականութիւնը։ Այս բաները տգիտութիւնից յառաջ չեն գալիս. որովհետեւ ոչ միայն տգէտները այլ եւ գիտուն մարդիկ իսկ գործում են այս չարիքները։ Այն չարիքներն աղքատութեան կամ թշուառութեան պատճառաւ չեն գործվում, որովհետեւ աղնուական եւ հարուստ մարդիկ էլ գործում են այնպիսի ոճիրներ։ Փիլիսոփայութիւնը չէ կարող մեկնել այս բաները, եւ ոչ գիտութիւնը կարող է ցոյց տալ նրանց պատճառը։ Սուրբ Գիրքը միայն պատասխանում է մեզ համար այս

հարցման։ Սուրբ Գիրքը սովորեցնում է թէ մարդկային ազգի այժմեայ բարոյական վիճակը սկզբնական չէ մարդուս, եւ թէ մարդկային ազգն ստեղծուած չէ այնպէս ապականուած, եւ այսպիսի ոճիրներ գործելու համար։ Սուրբ Գիրքը յայտնում է մեզ թէ մարդը սկիզբից ստեղծուեց Աստուծոյ պատկերի պէս, բայց յետոյ մեղքի մէջ ընկնելով ապականուեց, եւ թէ այս ապականութիւնն անցաւ բոլոր մարդկային ազգին, եւ այստեղից յառաջ եկան ամէն չարիք որ այսպէս սոսկալի կերպով տիրում են բոլոր ազգերի մէջ, բարբարոսների եւ կրթուածների։

Վերջապէս Սուրբ Գիրքն է միայն լուծում մարդկային կեանքի առեղծուածը պատասխանելով մարդկային ազգի վերաբերեալ հարցման եւ Սուրբ Գրքի պատասխանը գոհացուցիչ է։ Սուրբ Գիրքը յայտնելով թէ մարդկային ազգը ստեղծուեց Աստուծոյ նմանութեան պէս, մեկնում է մեզ թէ ինչու համար այնչափ մեծամեծ եւ փառաւոր գործքեր կան մարդկային ազգի պատմութեան մէջ։ Նոյնպէս յայտնելով մեզ թէ մարդկային ազգն իր սկզբնական վիճակից ընկած եւ այսպէս ընդհանուր կերպով ապականուած է, մեկնում է մեզ թէ ինչու համար այնչափ անարգ եւ վատ բաներ են գործուած։

Որովհետեւ Սուրբ Գրոց վարդապետութիւններով է միայն հասկանվում մարդկային ազգի պատմութիւնը, հարկաւ հետեւում է թէ այս վարդապետութիւնները յառաջ են եկել Նրանից որ սկիզբից ստեղծեց եւ տակաւին վարում է մարդկային ազգը։

գ) «Սուրբ Գիրքը յայտնում է մարդոց մի կատարեալ փրկութիւն»։

Փրկութիւնը որը Սուրբ Գիրքը խոստանում է տալ նրանց որ անկեղծաբար ընդունում են այն՝ է արդարեւ զարմանալի ազատութիւն։ որովհետեւ ոչ թէ այս կամ այն չարիքից, այլ բոլոր չարիքներից ազատութիւն է նա մանաւանդ բուն իսկ աղբիւրից ուրտեղից այն ամէն չարիքը բղխում են, այսինքն մեղքից։ Սուրբ Գիրքը ոչ թէ մասնաւոր կամ ժամանակաւոր, այլ լիուլի, բովանդակ եւ իսպառ ազատութիւն է խոստանում։ Սուրբ Գրքի մէջ Աստուած խոստանում է ազատել մարդկանց իրանց դժուարին դիրքից՝ ազատելով նրանց իրանց ապականուած վիճակից։ Խոստանում է ազատել մարդկանց իրանց բոլոր թշուառութիւններից, ազատելով նրանց այն մեղանչական յօժարութիւնից որոնցից բղխում են նրանց թշուառութիւնները։ Սուրբ Գիրքը խմացնում է թէ մեղքը պատճառում է ժամանակաւոր թշուառութիւն եւ յաւիտենական մահ, եւ Սուրբ Գրոց մէջ Աստուած խոստանում է ազատել մարդկանց նրանց մեղքերից, եւ այնպէս իսպառ գոցել թշուառութեան եւ մահուան աղբիւրը։ Միով բանիւ Աստուած խոստանում է Սուրբ Գրոց մէջ այնպէս կատարեալ ազատել մարդոց իրանց մեղքերից, որ մեղք անգամ չմնայ պղծել սիրտը, տանջել խիղճը եւ կորուստներ հոգին։

Բացի այս ազատումից ուրիշ ազատութիւն կատարեալ չէր կարող լինել։ Մարդիկ կարող էին տեղից ուրիշ տեղ, նոյնիսկ երկրից երկինք փոխադրուիլ, բայց այսպիսի փոխոխութիւնը չէր կարող ազատել հոգին իր թշուառութիւնից, քանի որ նրա բնութիւնը մնում էր ապականուած։ Հոգին ինչ որ էր երկրում, նոյնը պիտի լինէր երբ երկինքը փոխուէր, եւ եր-

կինքը հոգու համար տանջանքի տեղ պիտի լինէր, եթէ նրա ապականուած բնութիւնը չփաքրուէր։ Հոգին որ դեռ անձնասիրութեան եւ հեշտասիրութեան տակ է, չէ կարող զուարճանալ սուրբերի եւ հրեշտակների ընկերութեան մէջ, եւ առանց ուրախութեան մօտենալ սուրբ Աստուծուն։ Ապականուած մարդիկ եթէ փոխադրուին երկինք, պիտի փախչին այն տեղից իբր տանջանքի տեղից։ Մխիթարեալ ազատումն որ հնար է մարդոց համար՝ մարդկային ապականուած բնութիւնից եւ այն ապականութեան հետեւանքից, այսինքն արդար դատապարտութիւնից ազատումն է։ Այսպիսի ազատութիւնը կատարեալ ազատութիւն է մարդուս համար, որովհետեւ սրանով մարդիկ ազատւում են բոլոր չարիքներից եւ բուն այս ազատութիւնը խոստացուած է մարդուս Սուրբ Գրոց մէջ։

Նաեւ Սուրբ Գրոց մէջ Աստուած խոստանում է ապաշխարող մարդոց ոչ միայն փրկել նրանց կատարեալ բոլոր չարիքներից, այլ եւ տալ նրանց կատարեալ երանութիւն։ Մարդը սկիզբից ստեղծուեց Աստուծոյ նմանութեան պէս, եւ այն բարոյական գերազանցութեան մէջ էր կայանում նրա իրականութիւնը։ Սակայն մարդ ընկաւ մեղքի մէջ, եւ այնպէս կորցրեց այն նմանութիւնը, եւ այս բարոյական անկման մէջ կայանում է մարդուս բուն թշուառութիւնը։ Արդ, Աստուած Սուրբ Գրոց մէջ խոստանում է ամեն ապաշխարող մարդու վերստին տալ այն բարոյական Աստուծոյ նմանութիւնը. կրկին ստեղծել մարդը արքութեան մէջ եւ փոխել նրա բնութիւնը Աստուծոյ պատկերին։ Խոստանում է վերցնել այն բանը որ բաժանում է մարդկանց Աստուածանից, այսինքն նրանց մեղքերը, եւ

Յիսուս Քրիստոսով կրկին բերել նրանց դէպի ինքն, անել նրանց դարձեալ աստուածանման, եւ միւս անգամ հաստատել նրանց Աստուծոյ սիրոյ եւ շնորհքի մէջ այնպէս որ կարող լինին լիուլի եւ ձրի ընդունել նրանց որ ամեն երանութեան միմիայն աղբիւրն է։

Երանութիւնը որը Աստուած Սուրբ Գրոց մէջ խոստանում է՝ ոչ այնչափ այն երանութիւնն է որ հաճելի տեղից, այսինքն երկնքից է բղխում, որչափ այն երանութիւնն է որ բղխում է սուրբ սրտից։ Ուրախութիւնը որը Աստուած խոստանում է՝ մարմնաւոր զուարճութեան ուրախութիւն չէ, այլ սուրբ սիրոյ եւ շնորհալի գործերի ուրախութիւն։ Աստուած սուրբ սիրոյ մէջ խոստանում է երջանիկ անել մարդկանց՝ աստուածանման անելով նրանց. բարձրացնել եւ ազնուացընել մարդկանց՝ միացնելով նրանց իւր հետ, նրանց երկնաւոր Հօրը հետ։

Սուրբ Գիրքը չէ՞ որ կատարեալ ազատութիւն է յայտնում։ Չէ՞ որ խոստանում է տալ մարդոց փրկութիւն, որ իր կատարելութեանը նայելով աստուածային է։

դ) «Սուրբ Գիրքը յայտնում է նաեւ միջոցներ որոնցով կարելի է ձեռք բերուել այս կատարեալ փրկութիւնը»։

Որչափ եւ փառաւոր լինի փրկութիւնը որ Սուրբ Գիրքը յայտնում է, եթէ Սուրբ Գիրքը չյայտնէր նաեւ այն փրկութիւնը ձեռք բերելու միջոցները, կատարեալ յայտնութիւն չէր լինել։ Բայց Սուրբ Գրոց յայտնութիւնն էլ կատարեալ է. որովհետեւ ցոյց է տալիս այն միջոցները որոնցով կարելի է այն մեծ փրկութիւնը ձեռք բերուել։

Միջոցները որոնց Սուրբ Գիրքը յայտնում է մարդոց փրկութեանը համար՝ կրկին են. այսինքն միջոցները որոնք մարդիկ անձամբ գործադրելու են իրանց փրկութեանը համար, եւ միջոցները որոնք Աստուած պիտի գործադրէ մարդոց փրկութեանը համար. եւ Սուրբ Գրոց կատարելութիւնը կայանում է նաեւ սրանում, որ առաջիններն, այսինքն՝ այն միջոցները որոնք մարդիկ անձամբ գործադրելու են, այնպիսի են որ ամեն մարդ կարող է գործադրել նրանց եւ վերջիններն, այսինքն այն միջոցները որոնք Աստուած պիտի գործադրէ, կատարեալ եւ բաւական են գործել մարդոց փրկութիւնը: Արդ առանձին առանձին քննենք այս միջոցները:

1. «Ամեն մարդ կարող է Աւետարանի մէջ գոյց»
«տուած միջոցները գործադրել, որպէս զի խ-»
«պաս ազատուի մեղքից եւ կատարեալ օրհնու-»
«թիւն վայելէ»:

Այս օրհնութեան հասնելու համար երկար ճանապարհորդութիւն պէտք չէ. որովհետեւ այս օրհնութիւնս տրվում է մարդոց ուր որ լինեն, իւրանց հայրենիքում իրանց ծննդեան քաղաքում կամ գիւղում եւ նոյն իսկ իրանց տների մէջ: Երկրաւոր գանձ պէտք չէ այն օրհնութիւնը ստանալու համար, որովհետեւ առանց արծաթի եւ առանց գնի է տրվում ամեն մարդու: Աշխարհային պատիւ կամ աստիճան էլ հարկաւոր չէ այն օրհնութիւնը ստանալու համար, որովհետեւ ամեն մարդու տրվում է անխտիր առանց աչառութեան: Խորին գիտութիւն կամ բարձր փիլիսոփայութիւն էլ հարկաւոր չէ այն օրհնութիւնը ճանաչելու համար, որովհետեւ տղաներն եւ ամենակ մարդիկն անգամ կարող են հասկանալ Աւետարանի փրկարար վարդապետութիւնները: Բարոյական գերազանցութիւնն էլ հարկաւոր չէ այն օրհնութեան արժանաւոր լինելու համար: որ Քրիստոս չեկաւ արդարները փրկելու այլ մեղաւորները:

Աւետարանի մէջ յայտնուած օրհնութիւններն ստանալու համար ուրիշ բան չէ մնում որ մարդիկ անեն, բայց եթէ խոնարհութեամբ. հնազանդութեամբ եւ սրտանց ընդունեն նրանց. «Այս է բոլորը»: Այս է պահանջվում նրանցից: Եթէ մի մարդ փափագի ճշմարտապէս իր մեղքերից ազատուել, նրան ուրիշ բան անել պէտք չէ եթէ ոչ թողնել իր մեղքերն եւ ընդունել Յիսուս Քրիստոսին իրրեւ իր փրկիչը: Եթէ բաղձամ է ունենալ սուրբ սիրտ, թող յանձնէ իր սիրտը Քրիստոսին, Քրիստոս կը մաքրէ նրան: Քրիստոս մարդկանցից չէ պահանջում իրանք իրանց փրկելն, ինքն է խոստանում լինել նրանց փրկիչ, մարդոց մնում է միայն իրանց յանձնել նրան հաւատով, եւ ապաւինել նրան որ գործէ նրանց փրկութիւնը: Ո՞վ այնպէս աղքատ է որ չէ կարող ընդունել ինչ որ Քրիստոս տալիս է ձրի: Ո՞վ այնպէս տգար է որ չէ կարող ընդունել զօրութիւնը որ Քրիստոս շնորհում է նրան: Ո՞վ այնպէս ազէտ է որ չէ կարող ընդունել Քրիստոսին իրան վարդապետ: Ո՞վ այնպէս մեղաւոր է որ չէ կարող ընդունել Սուրբ Հոգին որ պիտի նորոգէ եւ մաքրէ նրա սիրտը: Ո՞վ այնպէս տգար կամ այն աստիճան մեղաւոր է որ չէ կարող ընդունել Յիսուս Քրիստոսին իրրեւ ամենարատական փրկիչ, եւ յանձնել իրան բոլորովին նրան որ պատրաստ է առաջնորդել եւ կանգնեցնել նրան: Ո՞վ անկարող է իր բոլոր վստահութիւնը դնել Քրիստոսի վրայ որ պիտի ազատէ

նրան իր մեղքերից, պիտի մաքրէ նրա սիրտը եւ յաւիտենական կեանք պիտի պարգեւէ նրան։

Ցայտնի է թէ փրկութեան միջոցներն որ ցոյց են տրված Աստուծոյ մէջ մարդոց անձամբ գործադրելու համար՝ կատարեալ են, որովհետեւ բոլորովին յարմար են մարդոց տկար եւ մեղաւոր վիճակին։

2. «Միջոցները որոնք Աստուած պիտի գործադ-» «րէ մարդոց այս զարմանալի փրկութիւնը գոր-» «ծելու բաւական են»։

Մարդիկ ազատել մեղքից՝ արդարեւ մեծ գործ է։ Զենք կարող երեւակայել աւելի դժուարին գործ քան փրկել կորած հոգիները, ազատել յանցաւորներն արդար օրէնքի դատապարտութիւնից, մաքրել բոլորովին ապականուած սիրտերը եւ վերստին կենդանացնել մեղքի մէջ արդէն մեռած հոգիները։ Այսպիսի գործը վեր է քան մարդոց կարողութիւնն եւ իմաստութիւնը, նոյն իսկ Աստուծոյ կարողութիւնն ու իմաստութիւնը պէտք է սրա համար։ Տես միջոցներն որոնցով պիտի կատարէ Աստուծոյ այս մեծ գործը։

Ա. Կատարեալ բարոյական օրէնք։

Սուրբ գրքի մէջ ցոյց տուած բարոյական օրէնքի կատարելութեան վրայ արդէն խօսեցանք ժ.Ա. գլխին մէջ։ Այս օրէնքը զօրաւոր միջոց է մարդոց փրկութեան։ Ցայտնում է մարդոց թէ ինչպէս պարտ են ապրիլ։ Ցոյց է տալիս մարդոց իրանց մեղքերը, եւ յայտնում է նրանց թէ ո՛րչափ վայր ընկած են։ Այս կատարեալ օրէնքը աւելի քան երկայրի սուր կտրուկ է, եւ ծակելով անցնում է ամէն ծածկոյթները որոնցով մարդիկ ջանում են ծածկել իրանց մեղքերն Աստուածանից եւ աչխարհից։ Պատռում է դիմակը զոր մարդիկ ախորժում

են կրել։ յայտնում է նրանց օրինազանցութիւններն եւ մեղքերն, եւ այսպէս պատրաստում է նրանց ուրախութեամբ ընդունել աստուածային Փրկիչը։

Բ. «Կատարեալ բարոյական օրինակ»։

Աւելի բացայայտ անելու համար այս օրէնքին նշանակութիւնը, աւելի լաւ ցոյց տալու համար նրա ոգին Աստուծոյ Որդին մարդ եղաւ, հնազանդեցաւ այն օրէնքին եւ ըստ ամենայնի կատարեց այն։ Ապա Աստուած տուեց մարդոց ոչ միայն գրաւոր օրէնք, այլ եւ ցոյց տուեց նրանց Քրիստոսի վարուց միջոցով, թէ ինչպէս պիտի պահուէր այն օրէնքը, եւ այնպէս մարդիկ բաղդատելով իրանց վարքը Քրիստոսի վարուց հետ, կարող են որոշել թէ ճշգիւ պահում է՞ն այն օրէնքը։ Քրիստոսի կատարեալ բարոյական օրէնքն արդարեւ զօրաւոր միջոց է մարդոց փրկութեան մեղքից։ Նրա Սուրբ վարքն ունեցել է եւ դեռ ունի աշխարհի վրայ մեծ ազդեցութիւն։ Շատերն իրանց ազնարժանութիւնը հասկացել եւ խոստովանել են նրա կատարեալ արժանաւորութեան միջոցով։ Նա դարուց դար անդադար յանդիմանել է մարդոց անիրաւութիւնը եւ անձնասիրութիւնը։

Միշտ սովորեցնում է նրանց թէ ինչպէս են լինելու, եւ համոզում է նրանց թէ չեն այնպիսի որպիսի պարտ էին լինել։ Քանի որ մարդիկ իրարու են միայնում, կարող են պարծենալ եւ չնորհակալ լինել Աստուածանից թէ չեն այնպէս չար ինչպէս են ոմանք, որովհետեւ ամէն մարդ գտնում է թէ ուրիշները իրանց կարծեաց համեմատ չար են քան թէ ինքն։ Բայց երբ մարդիկ նայում են Քրիստոսի կատարեալ վարքին, այլ եւս չեն կարողանալ անմեղադրելի անել իրանց

այլ ապրվում են խոստովանել աստչի Աստուծոյ իրանց մեղքերն եւ ճանաչել թէ կարօտ են մի փրկչի որ կարողանայ բառնալ նրանց մեղքերը։

գ. «Մի կատարեալ Փրկիչ»։

Աստուծոյ Որդին մարդացաւ եւ մաւ օրէնքի տակ, կատարեց օրէնքի բոլոր պատուէրները, եւ պատիժները կրեց փոխանակ յանցաւորների։ Որ արդարն էր՝ չարչարուեց փոխանակ անարդարների, եւ որ սուրբն էր՝ առաւ անսուրբների դատապարտութիւնը եւ այսպէս ջնջեց օրէնքի անէծքը եւ աշխարհի մեղքերը վերցրեց։ Աստուածորդին չարչարուեց փոխանակ յանցաւորների, ուստի եւ Հայրն Աստուած կարող է ներել նրանց որ միամտութեամբ եւ սրտանց ընդունում են ինչ որ Աստուածորդին արել է իրանց տեղ եւ իրանց համար։ Քրիստոսի հնազանդութիւնով եւ մահով լցուեց Աստուծոյ օրէնքն եւ կատարուեց նրա արդար պահանջները։ Քրիստոս կատարեց եւ կրեց ինչ որ պահանջում է օրէնքը, ուստի եւ կատարեալ թողութիւն գտնել կարելի է նրանց համար որ ճշմարտապէս ընդունում են ինչ որ Քրիստոս կատարել է նրանց տեղ Զարմանալի՛ ազատումն Աստուծոյ սուրբ օրէնքի արդար պատասխանից։

դ. «Կատարեալ սրբացուցիչ»։

Սակայն բաւական չէ որ մարդոց անցեալ յանցանքը միայն ներուած են, եթէ նրանք տակաւին հակամիտուած են մեղանչելու։ Հարկաւոր է նաեւ որ նրանց ապականուած սրտերը մաքրուին, որպէսզի այն մեղքի հակամիտումը վերանայ։ Սրդ, մարդոց սրտերն ի՛նչպէս պիտի մաքրուին։ Աստուած այս բաների միջոցներն էլ հոգացել է։ Հոգին Սուրբ որ Քրիստոսի միջ-

նորդութիւնով տրվում է նրանց որ խնդրում են նրան, նորոգում է նրանց սրտերը, բառնում է նրանց կարծր անձնասէր եւ չար միտքերը եւ յառաջ է բերում նրանց մէջ նոր զգացումներ, արդար փափագներ եւ սուրբ միտքեր։ Դաւիթ աղօթում էր. «Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում, ով Աստուած, եւ ուղիղ հոգի նորոգիր իմ ներսումս» (Սաղմ. ԽԱ. 10)։ Աստուած եէզեկիել մարգարէի միջոցով խոստացաւ. «Ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, եւ նոր հոգի պիտի գնեմ ձեր միջումը, եւ վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղէն սիրտը եւ ձեզ մարմնեղէն սիրտ պիտի տամ» (Եէզեկ. Լ.Զ. 24)։ Յիսուս սովորեցրեց, «ճշմարիտն ճշմարտն ասում եմ քեզ, եթէ որ մէկը վերստին չ'ծնուի՝ կարող չէ Աստուծոյ արքայութիւնը տեսնել» (Յովհ. Գ. 3) Նաեւ Պօղոս վկայում է. «Եւ դուք, որ մեռած էիք յանցանքներումը եւ մեղքերումը ինքը քեզ կենդանացրեց» (Եփես Բ. 1)։

Հոգին Սուրբ այնպէս նորոգում է նրանց սրտերն եւ բարքը որ հաւատով ընդունում են այն, որ ասում են ինչ որ անսուրբ է եւ անարդար, եւ սիրում են ինչ որ բարի է եւ սուրբ։ Սուրբ Հոգին յայտնում է մարդոց Քրիստոսը իբրեւ նրանց ամենաբաւական ազատիչը, եւ կարող եւ յարմար է անում նրանց ընդունել նրան իբրեւ իրանց փրկիչը, եւ Աստուծուն նուիրել իրանց անձերը հաւատով եւ սիրով։ Առաջնորդ է լինում նրանց իրանց երկրաւոր պանդխտութեան բոլոր ժամանակը, շնորհում է նրանց հոգեւոր զօրութիւն փորձութիւնների դէմ գնելու համար, ամուր միացնում է նրանց Քրիստոսի հետ այնպէս որ նրանք խոսան ազատուին իրանց բոլոր մեղքերից, եւ հաստատում է նրանց արքութեան մէջ։

Աստուած արդարեւ տուել է Քրիստոսի Աւետարանի մէջ միջոցներ որ բոլորովին բաւական են ազատել մարդոց իրանց կորստեան վիճակից։ Այս միջոցները փորձել են միլիոնաւոր մարդիկ, եւ որոնք որ հաւատարմութեամբ փորձել են նրանց Աւետարանի պահանջմունքներին համեմատ, վկայում են թէ այն միջոցներն աստուածային զօրութիւն ունին։ Նրանք որ այս միջոցների զօրութիւնը ուրանում են, երբէք արժանաւոր կերպով չեն փորձել նրանց։ Այս կիսները թերեւս կարդացել են Քրիստոսի Աւետարանը, բայց երբէք համաձայնեցրած չեն իրանց վարքն Աւետարանի վարդապետութիւններին։ Այսպիսիները դուցէ ընդունել են Քրիստոնէութիւնն լոկ իբրեւ ազգային կրօնք, բայց երբէք չեն ընդունել նրան իրանց սրտերին մէջ։ Թերեւս անուանով ճանաչել են Քրիստոսին, բայց երբէք հպատակած չեն Քրիստոսի կամքին, ուստի եւ երբէք զգացած չեն նրա զօրութիւնն իրանց սրտերի մէջ։ Բայց նրանք որ անցեալ տասն եւ ութ դարուց մէջ անկեղծութեամբ եւ ի սրտէ ը դունել են Քրիստոսին իբրեւ իրանց Տէրը եւ Փրկիչը՝ պիտի վկայեն, ինչպէս վկայում է առաքեալը, թէ Յիսուս Քրիստոս արդարեւ է զօրութիւն եւ իմաստութիւն Աստուծոյ։

Արդ, յայտնի է թէ Սուրբ Գիրքը որ յայտնում է այնպիսի փառաւոր Աստուած եւ բացատրում է եւ մեկնում է այնպէս պարզ կերպով աշխարհը, ընծայում է մարդոց կատարեալ փրկութիւն, եւ յայտնում է միանգամայն միջոցներն որոնցով կարելի է մարդկանց ընդունել այն փրկութիւնը, այն Սուրբ Գիրքը, ասում ենք, չէ կարող մարդոց գործ լինել։ Նոյն իսկ Քրիստոնէութեան կատարելութիւնն իբրեւ կրօնական շրջութիւն զօրաւոր կերպով հաստատում է իր աստուածային ծագման պատմական ապացոյցները։

ԳԼՈՒԽ ԻԴ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինչ որ մինչեւ այստեղ ասուեց հաստատելու՝ Քրիստոնէութեան աստուածային ծագումը ցուցանող փաստերը մէկ մասն է միայն, սակայն խնդրում ենք ամբողջամիտ ընթերցողից դատել թէ այն փաստերը բաւական չէ՞ն ցոյց տալու Քրիստոնէութեան աստուածային ծագումը։

Այս փաստերը քիչ չեն այլ շատ։ Ոչ թէ մէկ տեսակ են այլ բազմատեսակ, եւ այնչափ բազմատեսակ որչափ նիւթը ներում է կամ պահանջում է։ Արդարեւ Քրիստոնէութեան աստուածային ծագումը գիտենալու համար իրաւունքով պահանջուած փաստ կամ ապացոյց չի կայ որ ցոյց տուած չէ։ Այս փաստերն արդարեւ այնպիսի զօրաւոր չեն մինչեւ ընդունել մարդկանց հաւատը կամաւ եւ ակամայ. բայց այնչափ զօրաւոր են որ կարող են համոզել որ եւ իցէ ողջամիտ եւ անաչառ ընթերցող։ Քրիստոնէութիւնը պատմական դէպքերի վրայ հիմնուած է, եւ կան բաւական պատմական ապացոյցներ որ հաստատում են թէ այն դէպքերն արդարեւ տեղի ունեցած են։ Պատմական վկաները ոչ թէ միայն մէկն՝ այլ շատ են։ Ոչ միայն Քրիստոնեաներից այլ Հրեաներից եւ Հռոմայեցիներից կան այնպիսի վկաներ։ Ոչ միայն բարեկամներ, այլ եւ թշնամիներ վկայում են նրա համար։ Անհաւատները այս վկաները խնդրութեան ներքեւ առին, բայց եւ այնպէս չկարողացան հերքել նրանց արժանահաւատութիւնը,

տեղից եւ մնում են անհերքելի։ Քրիստոնէութիւնը իրան համար ասում է թէ ամենագէտ Աստուածանից յայտնուած է, եւ Հին եւ Նոր Կտակարանների մարգարէութիւնների զարմանալի կատարումը հաստատում է թէ արդարեւ Քրիստոնէութիւնը աստուածուստ յայտնուած է։

Քրիստոնէութիւնը պնդում է թէ ինքն ամենակարողին յայտնութիւնն է, եւ Հին եւ Նոր Կտակարանների հրաշքները հաստատում են այս։ Քրիստոս ասում է իրան համար թէ Աստուծոյ Որդի է, եւ ահա նոյն իսկ անհաւատները ստիպուած են ընդունել թէ արդարեւ Յիսուս տարբերվում է բոլոր մարդկանցից գերբնական, մտաւոր եւ բարոյական կատարելութիւններով։ Քրիստոս ասում է թէ ինքն է աշխարհի լոյսն, եւ ահա բոլոր ողջամիտ մարդիկ ընդունում են թէ երբէք մի մարդ նրա պէս չխօսեց։

Քրիստոս ձեւնարկեց հիմնել ընդհանուր հոգեւոր թագաւորութիւն որ պիտի պարունակէր բոլոր ազգերը եւ պիտի լինէր մշտատեւ, եւ ահա անցեալ ութեւտասն դարուց մէջ աշխարհիս պատմութիւնը ցոյց է տալիս թէ Քրիստոս այս ձեռնարկութիւնը գլուխ հանելու վրայ է։

Քրիստոս ասաց իրան համար թէ փրկիչ է մարդկանց ազատելու մեղքից որ կորցնում է նրանց, եւ նրանք որ միամտութեամբ եւ սրտանց ընդունել են Քրիստոսին փորձով տեսել են որ Քրիստոս է արդարեւ զօրութիւն Աստուծոյ փրկութեան համար։

Սուրբ Գիրքը ասում է իրան համար թէ բնութեան Աստուածանից է գալիս, եւ ահա ճշգիւ քննելով ապացուցուած է թէ արդարեւ զարմանալի համաձայնու-

թիւն կայ բնական, իմացական եւ բարոյական աշխարհիս երեւոյթների եւ Սուրբ Գրքի վարդապետութիւնների մէջ տեղ։

Սուրբ Գիրքը ասում է իրան համար թէ աստուածային յայտնութիւն է, եւ նրա վարդապետութիւնները ճշգիւ հետազօտելով տեսնուած է թէ Սուրբ Գիրքը անշի արդարեւ աստուածային յայտնութիւն լինելու ապացոյցներ։

Ընթերցողը գիտելու է նաեւ որ, այս այլեւայլ տեսակ ապացոյցներն իրարու հետ այնպէս կապած եւ իրարից այնպէս կախուած չեն որ, երբ մէկ տեսակը բաւական չէ համոզելու, միւս տեսակներն էլ հարկաւոր համոզիչ չլինին։ Այն ապացոյցների չատերն անկախ են միւսներից, եւ իրաքանչիւր տեսակ ապացոյց այնպէս զօրեղ է որ, եթէ անհերքելի մնայ, ինքն իրան բաւական է հաստատել Քրիստոնէութեան աստուածային ծագումը։ Ուստի երբ տեսնում ենք այսչափ զանազան եւ իրարից անկախ ապացոյցներ, նրանց միացեալ զօրութիւնը կը լինի բոլորովին համոզիչ։ Ուրիշ ի՞նչ ապացոյց հարկաւոր է։ Սակայն խնդրում ենք մեր ընթերցողներից որ չբաւականան այն ապացոյցներով միայն որ յիշուեցան մինչեւ այստեղ։ Եթէ ոչ այս բոլոր ապացոյցները կարդալուց ետ տակաւին տարակուսի Քրիստոնէութեան աստուածային ծագման վերայ, յառաջ տանի իր հետազօտութիւններն եւ որոնէ ուրիշ ապացոյցներ սրանք գիտուն մարդիկ ժողովել են ի հաստատութիւն Քրիստոնէութեան ճշմարտութեանը։ Այս խնդիրը աւելի կարեւոր է բոլոր խնդիրներից որ յուզում են մարդոց միտքերը, ուստի եւ պահանջում է ամենաճիշդ քննութիւններ, քանզի եթէ Քրիստոնէ-

ութիւնը արդարեւ Աստուածանից է, ապա նրա աստուածային ծագման վրայ տարակուսիլն անգամ վտանգաւոր է, Դա մանաւանդ Քրիստոնէութեան աստուածային վարդապետութիւնները չընդունել յաւիտենական մահ է։

Մենք մանրամասն չքննեցինք բոլոր առարկութիւններն որ եղել են Սուրբ Գրքի դէմ։ Առարկութիւն անել հեշտ է, եւ այնպէս բաղմացնել նրանց որ նրանց պատասխանել անվախճան գործ լինի։ Բայց մենք քննեցինք աւելի զօրաւոր առարկութիւնները, եւ ցոյց տուինք թէ նրանք հաստատ հիմ չունին։ Սուրբ Գրքի դէմ ամեն առարկութիւն յառաջ է գալիս հեռաւեալ քանի պատճառներից, այսինքն մարդկային մտքի սահմանաւորութիւնից կամ մարդոց ապիտութիւնից, եւ կամ Սուրբ Գրքին կամ բնութեան սխալ մեկնութիւն տալուց. բայց ամեն մարդ կարող է տեսնել թէ այս պատճառներից յառաջ եկած առարկութիւնը չէ կարող առողջ առարկութիւն լինել։

Ուստի ոչ ոք չէ պզտորելու անհաւատների առարկութիւններից։ Առարկութիւնները որ մեզ կարող են դժուարին թուել՝ գիտուն Քրիստոնեաներից չատ դիւրաւ կարող են հերքուիլ։ Թող յիշեն նաեւ ընթերցողները, որ բնական աշխարհի ապացուցուած ճշմարտութիւններին դէմ իսկ առարկութիւն կարող են հանուիլ։ Ընթերցողները թող քննեն թէ արդեօք անհաւատները կարողացե՞լ են հերքել Քրիստոնէութեան աստուածային ծագման պատմական. գործնական եւ փիլիսոփայական անթիւ ապացոյցները։ Եթէ Քրիստոնէութիւնը խաբէութիւն լինէր, ութեւտասն դարուց սրամիտ անհաւատները կարողացած պիտի լինէին

նրա աստուածային ծագման ապացոյցները հերքել։ Եթէ այնչափ նրբամիտ մարդիկ չկարողացան անել այս բանը, ապա կարող ենք հետեւացնել թէ այն ապացոյցներն անհերքելի են, ուստի եւ Քրիստոնէութիւնն ինչպէս որ ինքը պնդում է, արդարեւ Աստուածանից է։ Արդ, անհաւատները կարողացա՞ն հերքել այն ապացոյցները։ Համարձակ պատասխանում ենք թէ, Ոչ։

Ընթերցողներից խնդրում ենք մանաւանդ որ Քրիստոնէութեան աստուածային ծագման մտօք միայն համոզուելով չբաւականանան, այլ եւ հաւատով ընդունին Քրիստոսին իբրեւ իրանց աստուածային Փրկիչը, եւ սիրով նուիրեն իրանց նրան։ Մտքով միայն համոզուիլ թէ Քրիստոս Աստուծոյ որդի է, չփրկիլ մեզ յաւիտենական մահուանից, քանզի դեւերն էլ հաւատում են սրան։ Պարտ ենք գործով հնազանդիլ Աւետարանի պատուէրներին, պարտ ենք ընդունել ինչ որ սովորեցնում է Աւետարանը, եւ նուիրել մեզ բոլորովին Տէր Յիսուս Քրիստոսին։ Աղօթենք ջերմ եռանդով եւ ամէն դէպի Աստուած լուսաւորել մեր միտքերը, յայտնել մեզ Յիսուս Քրիստոսը իբրեւ մեր անձի փրկիչը, եւ կարող անել մեզ բոլորովին նրան ապաւինուս, որպէս զի մեր մեղքերից թողութիւն գտնելով հաշտուինք Աստուծոյ հետ, եւ յաւիտենական կեանքը ժառանգել։

ԱՄԷՆ

ԳԼՈՒԽ Ա. — Մի կարեւոր խնդիր։

ԳԼՈՒԽ Բ. — Այս խնդիրն ինչպէս լուծուի։

ԳԼՈՒԽ Գ. — Միթէ անկարելի կամ անհաւատալի կամ անհաւանակա՞ն է թէ Աստուած մասնաւոր յայտնութիւն տուած լինի մարդկանց։

ԳԼՈՒԽ Դ. — Մարդիկ Աստուածանից մասնաւոր յայտնութեան կարո՞ղ են։

ԳԼՈՒԽ Ե. — Ինչ տեսակ ապացոյցներ կան որ Աստուած մասնաւոր յայտնութիւն է տուած մարդկանց։

ԳԼՈՒԽ Զ. — Կա՞ն ապացոյցները թէ զորս Աւետարաններն արդարեւ գրուած են առաջին դարում Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս անուն աւետարանիչներից։

ԳԼՈՒԽ Է. — Կան ապացոյցներ թէ մեր այժմեան Աւետարանները բուն աւետարանիչներից գրուած Աւետարաններն են։

ԳԼՈՒԽ Ը. — Աւետարանները հաւատալի են։

ԳԼՈՒԽ Թ. — Աւետարանի արժանահաւատութեանը դէմ ապացոյցներ կա՞ն։

ա. Արդեօք Աւետարանները հերքո՞ւմ են իրար։ իրար հակասական։

ԳԼՈՒԽ Ժ. — Աւետարանների արժանահաւատութեան դէմ ապացոյցներ կա՞ն։
(չարունակութիւն)

բ. Պատմութիւնը հերքո՞ւմ է Աստուածաշունչը։

ԳԼՈՒԽ ԺԱ. — Աւետարանների արժանահաւատութեան

դէմ ապացոյցներ կա՞ն.
(շարունակութիւն)
Գիտութիւնը հերքո՞ւմ է Սուրբ Գիրքը։
ԺԵ. — Աշխարհաններին արժանահաւատութիւնը դէմ ապացոյցներ կա՞ն։
(շարունակութիւն)
Բնական գիտութիւնները հերքո՞ւմ են Սուրբ Գիրքը
ԺԳ. — Հին կտակարանին Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւնները Յիսուս Քրիստոսի վրայ կատարուեցան,
ԺԴ. — Յիսուս Քրիստոսի բարոյական կատարելութիւնը։
ԺԵ. — Յիսուս իրան համար ո՞վ ասաց թէ էր։
ԺԶ. — Քրիստոս Աստուածային վարդապետ էր։
ԺԷ. — Քրիստոսի հրաշքները։
ԺԸ. — Քրիստոսի աստուածային գործը։
ԺԹ. — Քրիստոսի խորհուրդի զարմանալի յաջողութիւնը։
Ի. — Քրիստոնէութեան ազդեցութիւնը։
ԻԱ. — Ապացոյց մարգարէութիւններից։
ԻԲ. — Բնութիւնը հաստատում է Սուրբ Գրոց Աստուածային ծագումը։
ԻԳ. — Նոյն իսկ Քրիստոնէութեան կատարելութիւնը հաստատում է նրա աստուածային ծագումը։
ԻԴ. — Եզրակացութիւն։

ՀԱՅԿ-ՀՐ

3147

<< Ազգային գրադարան
NL0030142

30 8